



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

7369

91(47.925)

u-20

Ն-դա.

Հարկ. քիմիկատի և Երզրումի  
Վերջնական

Երևան 1912թ.

~~Հ. Կ. Ց~~  
303

Ս. - 7. 0

W

ՎԱՆԻ, ԲԻԹԼԻՍԻ  
ԵՒ ԷՐԶՐՈՒՄԻ  
ՎԻՎԱՅԵԹՆԵՐԸ

Ուսումնասիրութեան մի փորձ այդ երկրի աշխարհագրա-  
կան, վիճակագրական, իրաւական և սնտեսական  
գրութեան

932  
113

2012

Ե Ր Ե Ի Ա Ն  
ՏՊԱՐԱՆ «ՎՈՒՆՈՒՐ»  
1912

APM  
2-5042

Ա. - 70 *Արժանաբան*

91(47.925)  
Ա-20

*Նշանակող*  
12/14 1925

*249-*

# ՎԱՆԻ, ԲԻԹԼԻՍԻ ԵՒ ԷՐԶՐՈՒՄԻ ՎԻՂԱՅԷԹՆԵՐԸ

Ուսումնասիրութեան մի փորձ այդ երկրի աշխարհագրական, վիճակագրական, իրաւական և տնտեսական դրութեան



*Handwritten scribble*

Ե Ր Ե Ի Ա Ն  
Տ Պ Ա Ր Ա Ն « Կ Ո Ւ Ն Ո Ւ Ր Ա »  
1912

Handwritten text at the top of the left page, including the number "10/11/1917" and other illegible markings.

Faint, mirrored text from the reverse side of the page, appearing as bleed-through.



Additional faint, mirrored text from the reverse side of the page, appearing as bleed-through.

ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՌԵՐԻ ԳԻՒՏԻ 1500

ԵՒ

ՀԱՅ ՏՊԱՐԱՐՈՒԹԵԼՆ 400

ԱՄԵՆԱԿԻՆ

ԵՆԻՐՈՒՄ ԵՆՔ ՄԵՐ ԱՅՍ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԸ



## ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

1909 թւի յունիս, յուլիս և օգոստոս ամիսների ընթացքում մենք մի ճանապարհորդութիւն կատարեցինք Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթներում. մեր ճանապարհորդութիւնը զուտ ուսումնասիրական նպատակ ունէր: Մենք այցելեցինք Վան, Մուշ, Էրզրում քաղաքները. մտանք այդ տեղերի առաջնորդարանները. այցելեցինք Կտուց-Անապատի, Վարազի, Աղթամարի, Նարեկի, Ս. Կարապետի, Ս. Յովհաննէսի և Կարմրակի վանքերը. անցանք Բայազետի, Ուչքիլիսէի, Արճէշի, Թիմարի, Վան-Տօսպի, Արճակի, Հայոց-Ձորի, Շատախի, Գեաւաշի, Մուշի, Սասունի, Խնուսի, Էրզրումի և Բասենի գաւառներով. կարեօր կենտրոնատեղերում կանգ առանք և ծանօթացանք երկրի հետ: Ճանապարհորդութեան ժամանակ մեզ յաջողեց ձեռք բերել նիւթեր այդ երկրի աշխարհագրութեան և ազգաբնակչութեան վիճակագրութեան վերաբերեալ, տեղեկութիւններ ճանապարհների հաղորդակցութեան, երկրի արդիւնազործութեան, հողատիրութեան և հարկերի մասին, նաև տեղեկութիւններ մասնաւորապէս հայ ժողովրդի կացութեան և տնտեսական դրութեան վերաբերեալ:

Ահա այդ նիւթերն ու տեղեկութիւնները կարգի բերելով և նրանց կողմնակի աղբիւրներով լրացնելով, յանձնում ենք տպագրութեան, վստահ լինելով, որ սրանք, որքան էլ թերի գտնւեն, այնուամենայնիւ, օգտակար կը լինին մեր ճանապարհորդած երկրով հետաքրքրուողներին:

Աւելորդ չենք համարում աւելացնել, որ մեզնից անկախ պատճառներով գրքիս տպագրութիւնը շատ ուշացաւ և միջոցների սղութեան պատճառով մտադրւած քարտէշները հրատարակել անկարող եղանք:



72327-89

25 2328

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Նախածանօթութիւն . . . . .	1
Վարչական բաժանում . . . . .	5
ՎԱՆԻ ՎԻԼԱՅԷԹ . . . . .	9
Վանի Լիճը . . . . .	10
Վան-Տօսպի գաւառ . . . . .	14, 19
Վան . . . . .	15
Վարագի վանք . . . . .	23
Ս. Գրիգորի վանք . . . . .	24
Թիմարի գաւառ . . . . .	25—27
Կառուց անապատ . . . . .	28
Արճակի գաւառ . . . . .	30—32
Բերկրիի գաւառ . . . . .	33—35
Արճէշի գաւառ . . . . .	36—39
Ականց . . . . .	41
Ալջաւազի գաւառ . . . . .	42—43
Արծկէ . . . . .	44
Հայոց-Չորի գաւառ . . . . .	45—47
Խօշաբի գաւառ . . . . .	48—50
Գեաւաշի գաւառ . . . . .	51—53
Ոստան . . . . .	54
Չաղար Ս. Նշան . . . . .	55
Նարեկի վանք . . . . .	55
Աղթամարի վանք . . . . .	56
Կարճկանի գաւառ . . . . .	59—60
Շատախի գաւառ . . . . .	61—64
Թաղը . . . . .	66
Նորդուզի գաւառ . . . . .	68—69
Մօկսի գաւառ . . . . .	70—74
Կառկառի գաւառ . . . . .	76—77
Վիճակագիր Վանի վիլայէթի հայ ժողովրդի . . . . .	78

ԲԻԹԼԻՍԻ ՎԻԼԱՅԷԹ . . . . .	79
Բիթլիսի սանջակ . . . . .	81
Բիթլիս . . . . .	81
Բիթլիսի գաւառ . . . . .	84—85
Դատան . . . . .	87
Խլաթի գաւառ . . . . .	87—89
Խլաթ . . . . .	90
Խիզանի գաւառ . . . . .	91—93
Մօսկանի գաւառ . . . . .	96—97
Մուշի սանջակ . . . . .	98
Մուշի գաշտ . . . . .	98—104
Մուշ . . . . .	108
Ս. Կարապետի վանք . . . . .	113
Առաքելոց վանք . . . . .	115
Ս. Յովհաննէսի վանք . . . . .	117
Սասուն . . . . .	119—143
Բուլանըղի գաւառ . . . . .	144—146
Մանազկերտի գաւառ . . . . .	147, 149
Մանազկերտ . . . . .	148
Վարդոյի գաւառ . . . . .	151—152
Սղերզի սանջակ . . . . .	153
Վիճակագիր Բիթլիսի վիլայէթի հայ ժողովրդի . . . . .	157
ԷՐԶՐՈՒՄԻ ՎԻԼԱՅԷԹ . . . . .	158
Էրզրումի սանջակ . . . . .	160
Էրզրում . . . . .	160
Էրզրումի գաւառ . . . . .	168—173
Կարմիր վանք . . . . .	171
Եռակնի գաւառ . . . . .	175, 179
Հասան-Կալա . . . . .	176
Խնուսի գաւառ . . . . .	181—185
Խնուս . . . . .	184
Դերջանի գաւառ . . . . .	186—187
Քղիի գաւառ . . . . .	188—191
Քղի . . . . .	189
Բայբուրդի գաւառ . . . . .	193—195
Բայբուրդ . . . . .	194

Սպերի գաւառ . . . . .	196—197
Կիսկիմի գաւառ . . . . .	198—199
Թօրթումի գաւառ . . . . .	200—201
Բայազէտի սանջակ . . . . .	202
Բայազէտի գաւառ . . . . .	202—206
Բայազէտ . . . . .	204
Դիազինի գաւառ . . . . .	207—210
Դիազին . . . . .	207
Ուչքիլիսէի վանք . . . . .	209
Կարաքիլիսէի գաւառ . . . . .	211, 212
Կարաքիլիսէ . . . . .	211
Ալաշկերտի գաւառ . . . . .	213, 215
Թօփրազ կալէ . . . . .	214
Դութաղի գաւառ . . . . .	216—217
Երզնկայի սանջակ . . . . .	218
Երզնկայի գաւառ . . . . .	218—222
Երզնկա . . . . .	219
Թիլ աւան . . . . .	221
Քեմախի գաւառ . . . . .	223—225
Քեմախ . . . . .	223
Վիճակագիր Էրզրումի Վիլայէթի հայ ժողովրդի . . . . .	226
Վիճակագիր Վանի և Էրզրումի վիլայէթների մի քանի գիւղերի հայ ժողովրդի . . . . .	228
Երեք վիլայէթների վիճակագրութիւնը ըստ Վ. Ֆինէի . . . . .	236
Երեք վիլայէթների վիճակագրութիւնը . . . . .	242
Մահմեդական տարրեր . . . . .	248
Հողորդակցութեան և կապիտալի բացակայութիւնը . . . . .	256
Օրէնք և կառավարութիւն . . . . .	264
Հողատիրութեան կարգերը . . . . .	271
Մարաբա . . . . .	275
Հարկերը և նրանց գանձման սխաւմները . . . . .	282
Հայ ժողովրդի վիճակը . . . . .	303
Հայ ժողովրդի ներկայ վիճակը . . . . .	340
Քուրդ բէկերը և աղաները . . . . .	355
Յուցակներ գրաւումների, յափշտակութիւնների և սպա- նութիւնների . . . . .	368—400

### ՆԱԽԱԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

Այն երեք վիլայէթները կամ նահանգները, որոնք կազմում են մեր ներկայ ուսումնասիրութեան նիւթը, գտնուում են Ասիական Թուրքիայում՝ առասկան և պարսկական սահմաններին կից. դրանք են՝ Էրզրումի, Վանի և Բիթլիսի վիլայէթները, որոնք բռնուած լինելով երկրագործ հայ ժողովրդով և կազմելով պատմական Հայաստանի նահանգները, կոչուում են միևնոյն ժամանակ Թուրքիայի Հայկական Վիլայէթներ:

Այդ երեք վիլայէթները իբրև սահմանակից վիլայէթներ, հետևապէս իբրև մի ամբողջութիւն կազմող շրջան, ընկած են 37° 41' հիւսիսային լայնութեան և 38° 30' 40' 20" արևելեան երկարութեան մէջ, սահմաններ ունենալով արևելքից Պարսկաստանը, հիւսիս-արևելքից Ռուսաստանը, հիւսիսից Տրապիզոնի վիլայէթը, արևմուտքից Սըլվազի վիլայէթը, իսկ հարաւից Խարբէրդի (Մամուրէթ-Իւլ-Ազիզ) և Դիարբէքիբի վիլայէթները:

Այդ երեք վիլայէթները միասին վերցրած բռնում են աւելի քան 116,000 քառակուսի կիլոմետր կամ 109,000 քառակուսի վերստ տարածութիւն, որը, եթէ համեմատելու լինենք կովկասի նահանգների հետ, կը աննհնար, որ Երևանի, Գանձակի, Թիֆլիսի նահանգները և Կարսի շրջանը միասին վերցրած, իրենց տարածութեամբ, որ համարում է աւելի քան 114,000 քառակուսի վերստի, մի փոքր չափով միայն ընդարձակ են յիշեալ երեք վիլայէթների տարածութիւնից:

Էրզրումի վիլայէթը բռնում է այդ տարածութեան հիւսիսային մասը իր ամբողջ երկարութեամբ, սկսած առասկան սահմանից մինչև Սըլվազի վիլայէթը. իսկ Վանի և Բիթլիսի վիլայէթները բռնում են այդ տարածութեան հարաւային մասը ամբողջապէս:

Իրենց աշխարհագրական կազմութեամբ այդ երեք վիլայէթները ներկայացնում են մի հետաքրքիր պատկեր. հսկայ լեռնաշղթաներ, վիթխարի կատարներ, խորունկ ձորեր և միմեանց յաջորդող գաշտավայրեր աջ ու ձախ աղօտում են այդ ընդարձակ



տարածութիւնը, կարատում են նրան զանազան ձևերի և մակար-  
դակների, կազմում մեծ ու փոքր բնագաւառներ, իրենց ուրոյն  
կլիմայական պայմաններով և այդ բոլորը, իբրև մի ամբողջութիւն,  
ներկայացնում է լեռների և լեռնաշղթաների, բլուրների և կա-  
տարների մի վիթխարի դանդաձ, կրելով իր վրա Հայկական  
Բարձրավանդակ անունը:

Այսպէս, հիւսիս-արևելեան կողմից իբրև բնական պատուար  
բարձրանում է Արարատեան լեռնաշղթան (Հայկական պարը) մինչ-  
և 17,000 ոտնաչափ բարձրութեան հասնող իր վիթխարի կատար-  
ներով, որը հիւսիս-արևմտեան ուղղութեամբ բեկրեկուն գծով ձգ-  
ւում է աւելի քան 150 վերստ տարածութիւն, կազմելով ոռու-  
տածիկական սահմանը: Հիւսիս-արևմտեան կողմում ձգւում են Պոն-  
տոսի և Պարխարեան լեռնաշղթաները, որոնք Սև ծովի հարաւ-  
արևելեան ափերի ուղղութեամբ կազմում են էրզրումի և Տրա-  
պիզոնի վիլայէթների սահմանը: Հարաւային կողմում ընկած է  
Տաւրոսի լեռնաշղթան, որն արևելեան ուղղութեամբ տարածւելով,  
գնում միանում է Գուրգասանի լեռնաշղթային, կազմելով սահման  
Բիթլիսի և Դիարբէքիւրի վիլայէթների մէջ մի կողմից, Վանի վի-  
լայէթի և պատմական Քուրդիստանի մէջ միւս կողմից:

Այդ երեք վիլայէթներում, որպէս ներքին հանգոյցներ, յայտ-  
նի են՝ Թանդուբէքը 11,500 ոտնաչափ բարձրութեամբ և Ալադա-  
ղի (Օսողկանց լեռներ) լեռնաշղթան 10,500 ոտնաչափ բարձրու-  
թեամբ, որոնք Մակեի խանութեան սահմաններից սկսած դէպի  
արևմուտք տարածւելով, կազմում են էրզրումի և Վանի վիլայէթ-  
ների սահմանը:

Սիփանը, 13,000 ոտ. լաջանիոտ նձմրութիւն, 9,700 ոտ. և  
Մօկսի լեռները բոլորելով Վանի լճի արևմտեան մասը, կազմում  
են Վանի և Բիթլիսի վիլայէթների սահմանը:

Ջրառատ Բինգեօլեան (Բլուրակեան) լեռները 10,700 ոտ. և  
Խամուր-դաղի շղթան 9,800 ոտ. կազմում են էրզրումի և Բիթ-  
լիսի վիլայէթների սահմանը:

Այս լեռներից բացի յայտնի են. Էրզրումի վիլայէթում՝ Փալան-Թօքէնը 10,700 ոտ., Դոււարօ-  
յինը, Դոււրու-դաղը, 10,700 ոտ. Քօփ-դաղը և Քօսա-դաղը:

Վանի վիլայէթում՝ Վարազը 10,100 ոտ. Արտօսը, Եղերօվը  
և Շատախի լեռները:

Բիթլիսի վիլայէթում՝ Խութի և Սասունի բարձունքները  
Անտօք և Քէփին գագաթներով:

Երեք նշանաւոր գետեր իրենց սկունքներով կազմում են այս  
շրջանի գարդը. դրանք են՝ Արաքսը, Եփրատը և Տիգրիսը:

Արաքսը սկիզբն է առնում Բինգեօլեան լեռների հիւսիսային  
փէշերից և ոլորապտոյտ հոսելով, ոռոգում է էրզրումի վիլայէթի  
արևելեան մի մասը և Բասէնը կարելով, անցնում է ոռոսական  
սահմանը:

Եփրատն ունի երկու ճիւղ. արևելեան ճիւղը, որ կոչւում է  
նաև Մուրադ-գետ, սկիզբն է առնում Ալադաղի հիւսիսային փէ-  
շերից և ոռոգելով էրզրումի վիլայէթի հարաւ-արևելեան մի փոքր  
մասը, մտնում է Բիթլիսի վիլայէթի սահմանը, ուր առատօրէն  
ոռոգելով Մանազկերտի, Բուլանըղի և Մուշի դաշտավայրերը, հո-  
սում է դէպի Դիարբէքիւրի և Սարըբըղի վիլայէթները:

Արևմտեան Եփրատը սկիզբն է առնում էրզրումից դէպի հիւ-  
սիս գտնուող Դոււլու լեռներից և պտոյտներ գործելով, ոռոգում է  
էրզրումի, Դերջանի և Երզնկայի դաշտավայրերը և ապա թեքւե-  
լով դէպի հարաւ, Սարըբըղի վիլայէթի սահմանների մէջ միանում  
է Արևելեան Եփրատին:

Տիգրիսը նոյնպէս երկու ճիւղ ունի:  
Արևմտեան Տիգրիսը գուրս է մեր ընդգծած սահմաններից.  
նա բխում է Տաւրօսի շղթայի հարաւային լեռներից և ոռոգում է  
Դիարբէքիւրի վիլայէթի տափարակները:

Իսկ Արևելեան Տիգրիսը կամ Բօթան-սուն սկիզբն է առնում  
Վանի վիլայէթում Մօկսի և Շատախի լեռներից, հասում է դէպի  
Բիթլիսի վիլայէթի դաշտավայրերը և Սղերգից դէպի հարաւ մի-  
անում է Արևմտեան Տիգրիսին:

Արևելեան Տիգրիսի մի ճիւղն է կազմում Բիթլիս-սու գետը  
(Թուխ-գետը), որը բխելով Մօսկանի լեռներից, կարում է Բիթ-  
լիսը և ոռոգելով Սղերգի դաշտավայրերը, խառնւում է Արևելեան  
Տիգրիսին:

Էրզրումից դէպի հիւսիս-արևմուտք Քօփ լեռները հիւսիսային  
լանջերից սկիզբն է առնում ճօրօխ գետը, որը ոռոգելով Բայրուրղի  
և Սպերի հովիտները, հոսում է դէպի ոռոսական սահմանը:

Մեզ հետաքրքրող այս շրջանը հարուստ է նաև լճերով, որոն-  
ցից առաջին տեղը բռնում է Վանի լիճը. սա իր ջրաբաշխով

կեանք է տալիս Վանի վիլայէթի կենտրոնական գաւառներին և յայտնի է տառեկ կոչւող իր ձկնով, թէև ջուրը աղի է:

Վանի լճից դէպի արեւելք գտնուում է Արճակի փոքրիկ լիճը. սրա ջուրը նոյնպէս աղի է և աւելի աղի, քան նոյնիսկ Վանի լճի ջուրը:

Երկու այլ փոքրիկ լճեր՝ մէկը Նէմրութի խառնարանում 7,600 ոտնաչափ բարձրութեան վրա, իսկ միւսը Նէմրութից դէպի հիւսիս, Նազիք լիճ անուանով, գտնուում են Բիթլիսի վիլայէթի արեւելեան սահմանների մօտ:

Իսկ Էրզրումի վիլայէթում, ուսական սահմանին կից, Սինակի բարձունքների զոգում 7,400 ոտնաչափ բարձրութեան վրա գտնուում է Բալլ-գեօլը (Գալլատա լիճը), որը յայտնի է իր վճիռ գլուխկան ջրով և անուշահամ ձկներով:

Երկրի այս օրինակ կազմութիւնը հանդիսանալով իրրե խառաւէտ հովասուն վայրեր և հրաշալի արօտատեղիներ անասնապահութեան և խաշնարածութեան համար, միևնոյն ժամանակ բնութիւնը չէ զլացել նրանից ձեակերպելու զեղեցիկ լեռնազառաներ, սիրուն հովիտներ և ընդարձակ տափարակներ, ուր մշակում են ամեն տեսակի հացահատիկներ, ձգում խաղողի այգիներ, բուսցնում բազմատեսակ պտղատու ծառեր և արգիւնարներում ծխախոտ, մետաքս, երբեմն նոյն իսկ բամբակ և բրինձ:

Իրենց ընդարձակութեամբ և պտղաբերութեամբ աչքի են ընկնում:

Էրզրումի վիլայէթում՝ Ալաշկերտի և Բասնի տափարակները, Էրզրումի դաշտը, Թօրթումի, Բայրուրդի և Երզնկայի հովիտները:

Վանի վիլայէթում՝ Վան-Տօսպի և Արճէշի տափարակները, Հայց-Չորի հովիտը և Արազայի գաշտը:

Բիթլիսի վիլայէթում՝ Մուշի գաշտը Սղերդի տափարակները և Բուլանդի ու Մանազկերտի հովիտները:

Կլիմայական պայմանների տեսակէտից մեր ընդգծած շրջանը նոյնքան բազմազան է, որքան և նրա մակերևոյթը:

Ընդհանուր առմամբ կլիման բարեխառն է և հմայիչ, բայց շրջանները, գաւառները և նոյն իսկ գաւառամասերը, առանձին առանձին վերցրած, կլիմայական տեսակէտից այնպէս են տարբերում միմեանցից, որ մարդ մի կէտում իրեն զգում է սիրիւր-

եան ցուրտ երկրներում, իսկ դրանից ոչ հեռու մի այլ կէտում տապալկում ու խաշում է այրեցեալ դօտիներին յատուկ տապից:

Այսպէս, մինչդեռ Էրզրումը իր դաշտով արտադրում է միմիայն հացահատիկներ և յայտնի է երբեմն եօթ-ութ ամիս տևող իր դաժան ձմեռներով, նրա մօտիկ գաւառակներից մէկը, օրինակ, Թօրթումն ունի խիստ տաք կլիմա, արտադրում է խաղողի տեսակներ, բազմազան պտուղներ և այդ բարիքների առատութիւնով ձոխացնում է Էրզրումի շուկաները:

Մինչդեռ Ալազադի լեռներով նոյն իսկ յուլիս ամսի շոգերին առանց տաք վերարկի և կրկնակօշիկների չի կարելի գիշերով ճանապարհորդել, այդ նոյն լեռների հարաւային հեռաւոր փէշերի վրա փուսած Վանի լճի հիւսիսային ափերը կազմող Արճէշի գաւառն ունի տաք կլիմա և արտադրում է պտուղներ և խաղող:

Եւ վերջապէս, մինչդեռ Մուշի գաշտի հարաւային եզերներին ըմբոստ կերպով զուրս ցցւած Սասունի լեռների թագուհու, գեղեցիկ Անտօքի վերին ձորակներում ամառ-ձմեռ անպակաս են ձիւնի շեղփերը, այդ նոյն Անտօքի երկրորդական ձորակների մէջ Տալօրիկում աջող կերպով բուսնում է խաղող, թուզ և այլ պտուղներ, իսկ Սասունի Թուլի և Խիանք գաւառակները մասնաւորապէս հանդիսանում են Մուշին մրգեր մատակարարող շրջաններ, թէև Մուշն էլ զուրկ չէ խաղողի այգիներից և ծառայատուղներից:

Ահա ընդհանուր գծերով այն բազմատեսակ կազմութիւն և կլիմա ունեցող երկրը, որի մանրամասն ուսումնասիրութեանը մենք զիմում ենք:

### ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄ

Տաճկաստանում գաւառական վարչական պաշտօնէութիւնը հետևեալ կազմութիւնն ունի:

Պետութիւնը բաժանւած է վիլայէթների կամ նահանգների. վիլայէթը կառավարում է վալին կամ նահանգապետը, որը նշանակում է Սուլթանից և ենթակայ է նրան: Վիլայէթը բաժանւած է սանջակների,<sup>1)</sup> յաճախ երկու սանջակից աւելի չէ լինում

1) Շատերը սանջակը համեմատում են գաւառի հետ. այդ մեր կարծիքով ուղիղ չէ. սանջակը գաւառից մեծ շրջան է պարունակում, այդ պատճառով սանջակ էլ պիտի լիշի մեր գրքում:

մի վիլայէթը. սանջակը կառավարում է մութասարիֆը, որը ենթակայ է վալիին: Սանջակը բաժանւած է կազաների կամ գաւառների. կազան կառավարում է գայմագամը կամ գաւառապետը, որը ենթակայ է մութասարիֆին: Կազան բաժանւած է նահիլէների կամ գաւառակների. նահիլէն կառավարում է մուգիրը, որը ենթակայ է գայմագամին:

Մեր ընդգծած շրջանը, ինչպէս վերը տեսանք, բաղկացած է երեք վիլայէթներից. զրանք են՝ էրզրումի, Վանի և Բիթլիսի վիլայէթները:

Իր ընդարձակութեամբ զրանցից առաջին տեղը բռնում է էրզրումի վիլայէթը. նրա տարածութիւնը հաւասար է 49,700 քառակուսի կիլոմետրի կամ 46,600 քառակուսի վերստի: Իր ընդարձակութեամբ երկրորդ տեղը բռնում է Վանի վիլայէթը. նրա տարածութիւնը հաւասար է 39,300 քառակուսի կիլոմետրի կամ 36,900 քառակուսի վերստի: Իսկ Բիթլիսի վիլայէթը իր ընդարձակութեամբ բռնում է երրորդ տեղը. նրա տարածութիւնը հաւասար է 27,100 քառակուսի կիլոմետրի կամ 25,000 քառակուսի վերստի:

էրզրումի վիլայէթի գլխաւոր քաղաքն է էրզրումը կամ Կարինը. այստեղ կենտրոնացած են վիլայէթի վարչական և դատաստանական հիմնարկութիւնները:

Վիլայէթը բաժանւած է երեք սանջակների. զրանք են՝ էրզրումի, Երզնկայի և Բայազէտի սանջակները:

էրզրումի սանջակն ունի հետեւեալ կազաները իրենց գիւղերով.

- 1) էրզրումի կազա 169 գիւղ.
- 2) Բասէնի » 238 »
- 3) Մուուսի » 236 »
- 4) Գերջանի » 231 »
- 5) Կիսկիմի » 68 »
- 6) Նարմանի » 123 »
- 7) Բայրուրգի » 169 »
- 8) Սպերի » 134 »
- 9) Քզիի » 206 »

Ընդամենը 9 կազա, 1,574 գիւղ:

Երզնկայի սանջակն ունի հետեւեալ կազաները իրենց գիւղերով.

- 1) Երզնկայի կազա 184 գիւղ.

- 2) Քեմաիի » 89 »
  - 3) Կերճանիսի » 148 »
  - 4) Գուզլիջանի » 60 »
  - 5) Գուրուչայի » 57 »
- Ընդամենը 5 կազա, 538 գիւղ:

Բայազէտի սանջակն ունի հետեւեալ կազաները իրենց գիւղերով.

- 1) Բայազէտի կազա 110 գիւղ.
  - 2) Դիազինի » 78 »
  - 3) Կարաքիլիսէի » 155 »
  - 4) Ալաշկերտի » 111 »
  - 5) Գուխազի » 96 »
- Ընդամենը 5 կազա, 551 գիւղ:

Այսպիսով էրզրումի վիլայէթը բաղկացած է 3 սանջակներից, 19 կազաներից և 2,663 գիւղերից:

Վանի վիլայէթի գլխաւոր քաղաքն է Վանը, ուր կենտրոնացած են վիլայէթի վարչական և դատաստանական հիմնարկութիւնները:

Վիլայէթը բաժանւած է երկու սանջակների. զրանք են՝ Վանի և Հէքեարիի սանջակները:

Վանի սանջակն ունի հետեւեալ կազաները իրենց գիւղերով.

- 1) Վանի կազա 293 գիւղ.
  - 2) Արճէշի » 132 »
  - 3) Ալջաւազի » 44 »
  - 4) Գեուաշի » 181 »
  - 5) Շատաիի » 162 »
  - 6) Մանմուզիի » 83 »
- Ընդամենը 6 կազա, 895 գիւղ:

Հէքեարիի սանջակն ունի հետեւեալ կազաները իրենց գիւղերով.

- 1) Հէքեարիի կազա 144 գիւղ.
  - 2) Համիդէի » 43 »
  - 3) Գեուաուի » 184 »
  - 4) Զուլամհրիկի » 196 »
  - 5) Մամուրիէզի » 34 »
  - 6) Շէմգինանի » 131 »
- Ընդամենը 6 կազա, 732 գիւղ:

Այսպիսով վանի վիլայէթը բաղկացած է 2 սանջակներէց, 12 կազաներէց և 1,627 գիւղերից:

Բիթլիսի վիլայէթի գլխաւոր քաղաքն է Բիթլիսը, ուր կենտրոնացած են վիլայէթի վարչական և դատաստանական հիմնարկութիւնները:

Վիլայէթը բաժանուած է չորս սանջակներէ. զրանք են՝ Բիթլիսի, Սղերզի, Մուշի և Գէնջի սանջակները:

Բիթլիսի սանջակն ունի հետեւեալ կազաները իրենց գիւղերով.

- 1) Բիթլիսի կազա 188 գիւղ.
- 2) Մօտկանի » 52 »
- 3) Խիզանի » 168 »
- 4) Խլաթի » 33 »

Ընդամենը 4 կազա, 441 գիւղ:

Մուշի սանջակն ունի հետեւեալ կազաները իրենց գիւղերով.

- 1) Մուշի կազա 191 գիւղ.
- 2) Բուլանդի » 63 »
- 3) Մանազկերտի » 126 »
- 4) Սասունի » 118 »
- 5) Վարդօյի » 69 »

Ընդամենը 5 կազա, 567 գիւղ:

Սղերզի սանջակն ունի հետեւեալ կազաները իրենց գիւղերով.

- 1) Սղերզի կազա 70 գիւղ.
- 2) Շիրվանի » 160 »
- 3) Բարվարի » 61 »
- 4) Խարզանի » 183 »
- 5) Էրունի » 205 »

Ընդամենը 5 կազա, 679 գիւղ:


Գէնջի սանջակն ունի հետեւեալ կազաները իրենց գիւղերով.

- 1) Գէնջի կազա 219 գիւղ.
- 2) Խուլփի » 113 »
- 3) Ճապաղճուրի » 91 »

Ընդամենը 3 կազա, 423 գիւղ:

Այսպիսով Բիթլիսի վիլայէթը բաղկացած է 4 սանջակներէց, 17 կազաներից և 2,110 գիւղերից:

Իսկ երեք վիլայէթները միասին բաղկացած են 9 սանջակներից 48 կազաներից և 6,400 գիւղերից:



Այժմ տեսնուք այդ երեք վիլայէթները, իրենց յայ ժողովրդի բնակավայրեր, ինչ են ներկայացնում իրենցից, կանոնադրութիւնները, որոնք իրենց պատմական գլխաւորապէս այն շրջանների վրա, որոնք իրենց պատմական նշանակութեամբ, հին սահմաններով և հայ ժողովրդի քանակով առանձին կարեւորութիւն ունին մեզ համար:

### ՎԱՆԻ ՎԻԼԱՅԷԹ

Մեզ հետաքրքրող երեք վիլայէթների մէջ իր պատմական նշանակութեամբ և օրիգինալ բնութիւնով առաջին տեղը բռնում է Վանի վիլայէթը:

Այդ վիլայէթը, ինչպէս տեսանք, բաղկացած է Վանի և Հէքեարիի սանջակներից. Հէքեարիի սանջակն առաջ կազմում էր առանձին վիլայէթ. շատ քարտէզներում մինչև այժմ էլ Հէքեարիի առաջ է բերւած իրեն ջով վիլայէթ.<sup>1)</sup> դրա միացումը Վանի վիլայէթին տեղի ունեցաւ 1876 թւին, որոշ քաղաքական հաշիւներով, որի մասին դեռ ևս առիթ կուենանք խօսելու:

Հէքեարիի սանջակը բռնում է Վանի վիլայէթի ամբողջ հարաւային մասը, բաժանելով Վանի սանջակից մի բնական պատուարով, այն է՝ Կորդուայ և Չուխի լեռնաշղթաներով. արևելեան կողմից նա սահմանակից է Պարսկաստանին և Ուրմիի խանութեանը: Այդ սանջակի վրա մենք երկար կանոն չենք անի. այժմ այդտեղ քիչ հայեր կան, ազգաբնակչութիւնը աննշան բացառութեամբ բաղկացած է ասորիներից և քրդերից. միակ շրջանը, ուր դեռ ևս հայի պատահում էք, այդ Աղբակի գաւառն է:

Աղբակը ընկած է Չաւ գետի վերին հովիտներում, տարածելով մինչև Պարսից սահմանը. դիրքը մասամբ լեռնային է և մասամբ դաշտային. դաշտերում մշակում են ընտիր հացահատիկներ, իսկ լեռներում զարգացած է խաշնարածութիւնը: Այս շրջանում գտնուում է Բաշկալէ աւանը, որը հնում նշանաւոր բերդաքաղաք էր, իսկ այժմ համարւում է սանջակի կենտրոնավայրը:

Բաշկալէն ունի մօտ 500 տուն հայ, հրէա, ասորի և քուրդ բնակիչ. հայերը շատ քիչ թիւ են կազմում: Բաշկալէից բացի

1) Տես Ռուսաց Շտաբի քարտէզը, հրատարակւած 1902 թւին:

հայեր ապրում են նաև շրջակայ մի քանի գիւղերում, որոնց թիւը նոյնպէս աննշան է:

Աղբակում գտնուում է Ս. Բարդուղիմէոսի վանքը, որը յայտնի է իր անցեալով, հոյակապ շէնքով և ընդարձակ հողերով, հողեր, որոնք ունին օսմանեան ասիական վիրայէթներին յատուկ ամայի վիճակ:

Հէքեարին մասամբ հետաքրքիր է այն տեսակէտից, որ այդտեղ իբրև քրիստոնեայ տարր, ապրում են բաւականաչափ ասորիներ, որոնց բուն բնակավայր համարուում է Ջուլամերիկի գաւառը. այստեղ գտնուում է Ջուլամերիկի աւանը իբրև գաւառի կենտրոնավայր, իսկ դրանից գէպի հիւսիս, մի փոքր հեռու, գտնուում է Քօջանիս գիւղը, ուր նստում է ասորիների կաթողիկոսը—ՄարՇիմօնը, որի իշխանութեան տակ գտնուում են աւելի քան 80,000 ասորիներ:

Ասորիների գրութիւնը, իբրև երկրագործ խաղաղ ժողովրդի գրութիւն, մի աննախանձելի պատկեր է ներկայացնում. ճաճկաստանի ասիական վիրայէթները հանդիսանում են ապօրինի կարգերի մի վայր, իսկ այդ կարգերը ամենամեծ չափով արտայայտուում են խաղաղ, երկրագործ, առանձնապէս քրիստոնեայ ժողովուրդների վրա:

Վանի սանձակը բռնում է վիրայէթի ամբողջ հիւսիսային մասը, սահմաններ ունենալով արևելքից Մակւի խանութիւնը, հիւսիսից Էրզրումի վիրայէթը, արևմուտքից և հարաւ-արևմուտքից Բիթլիսի վիրայէթը:

Սանձակի կենտրոնում արևմտեան ուղղութեամբ փուսած է Վանի լիճը, իր մէջ թափող բազմաթիւ գետերով ու գետակներով, որոնք և հանդիսանում են այդ շրջանի սգին:

### ՎԱՆԻ ԼԻՃԸ

Վանի լիճը, որը հսում կոչուում էր Բզնունեաց ծով, մէկն է այն երեք լճերից, որոնք կազմում էին պատմական Հայաստանի գարգը. դրանք են՝ Սևանի, Վանի և Ուրմիի լճերը: Այդ երեք լճերը իբրև երեք գեղանի քոյրեր, բնութեան երեք գեղեցկուհիներ, հանդերձ իրենց միօրինակութեամբ տարբերուում են միմեանցից իրենց գիւղերով, ընդարձակութեամբ և խորութիւնով:

Սևանի լիճը գտնուում է ծովի մակերևոյթից 6,300 ոտնաչափ բարձրութեան վրա. նրա երկարութիւնը ամենաընդարձակ տեղում հասնում է 67 վերստի, լայնութիւնը 40 վերստի. մակերևոյթը հաւասար է 1,225 քառակուսի վերստի, իսկ ամենամեծ խորութիւնը հաւասար է 60 սաժէնի:

Վանի լիճը գտնուում է 5,600 ոտնաչափ բարձրութեան վրա. երկարութիւնը ամենաընդարձակ տեղում հասնում է 116 վերստի, լայնութիւնը 48 վերստի, իսկ մակերևոյթը հաւասար է 2,598 քառակուսի վերստի:

Իսկ Ուրմիի լիճը գտնուում է 4,100 ոտնաչափ բարձրութեան վրա. երկարութիւնը ամենաընդարձակ տեղում հասնում է 120 վերստի, լայնութիւնը 36 վերստի.<sup>1)</sup> մակերևոյթը հաւասար է 4,143 քառակուսի վերստի. իսկ ամենամեծ խորութիւնը հաւասար է 7-8 սաժէնի:

Այսպիսով Սևանի լիճն ունի բարձր զիրք, փոքր մակերևոյթ և մեծ խորութիւն, Ուրմիի լիճն, ընդհակառակը, ունի ցածր զիրք, մեծ մակերևոյթ և աննշան խորութիւն, մինչդեռ Վանի լիճը իր բարձրութեամբ, իր մակերևոյթով և իր խորութեամբ միւս երկու լճերի նկատմամբ բռնում է միջին տեղը:

Բացի այդ, Սևանի լճի ջուրը համեղ է ու վճիտ, Վանի լճինը աղի է, իսկ Ուրմիին աւելի ևս աղի: Սևանի լիճը տալիս է բազմատեսակ համեղ ձկներ, ինչպէս են՝ իշխանը, բաղտակը, կողակը և այլն. Վանի լիճը տալիս է միմիայն տառեխ կոչւող ձուկը, իսկ Ուրմիի լիճը չէ տալիս և ոչ մի տեսակ ձուկ:

Չը նայած այս բոլորին, Վանի լիճը իր ուրոյն յատկութիւններով և աշխարհագրական զիրքով բռնում է մի բացառիկ տեղ:

Նախ, նրա ջուրը խմելու համար միանգամայն անպէտք լինելով հանդերձ, պարունակում է իր մէջ բորակային մաքրիչ աղեր, որից մի քանի տեղերում պատրաստում են լւացքի համար բոքակ: Այդ նոյն աղերի շնորհիւ Վանի լճի մէջ լողանալը մի շատ դուրեկան և մաքրիչ բան է. լողանալուց յետոյ մարդ զգում է իրեն թեթևացած և մաշկը թաւշի պէս փափկամ:

Սակայն Վանի լիճը հմայիչ է իր գեղամիժաղ ափերով, իր

1) Այս թւերը բաղելով Լինչի Armenia գրքից, (տես том II, стр. 49—55.) մեղ թւում է, որ Ուրմիի լճի լայնութիւնը նրա ամենաընդարձակ տեղում անհամեմատ աւելի մեծ կը լինի, քան առաջ է բերւած այդտեղ:

մէջ թափուող գետերով ու գետակներով, իր հրաշալի տեսարաններով և աշխարհազրահան դերքով:

Ճիշտ է, Սևանի լիճն իր կապուտակ վճիտ մակարդակով, գեղեցիկ օղակի պէս իրեն բոլորող Գեղամի և Շահդաղի սիրուն լեռնաշղթաներով ներկայացնում է իբրև մի հմայիչ պատկեր, բայց նա իր աղքատ բնութիւնով և մերկ ավերով երբէք չի կարող նմանել Վանի լճին, որի ավերը շատ տեղերում և բազմաթիւ գետաբերանները զարգարւած են գեղեցիկ պարտէզներով, իսկ տեղ տեղ մօտակայ լեռները ծածկւած են անտառներով. այդ լիճն իր բարեխառն կլիմայով, իր բերրի ավուտներով կը վերածւէր մի կատարեալ զբախտի, եթէ նա ընկած չը լինէր մի բարբարոս ժողովրդի ձեռքում:

Վանի լիճն ունի մի այլ կարևոր դեր, որով նա աւելի ևս նշանակութիւն է ստանում. նրա ավերում գտնուում են մի շարք բարերիւր և պտղատու գաւառներ, այդ գաւառների մէջ մթերքների տեղափոխութիւնը և երթևեկութիւնը կատարւում է մեծ մասամբ լճի վրա լողացող նաւակներով. լճի ամենահեռաւոր տարածութիւնը նաւակներով անցնելու համար հարկաւոր է 10-12 ժամ, եթէ միայն հակառակ քամիները խոչընդոտ չը հանդիսանան, մինչդեռ այդ տարածութիւնը ցամաքով անցնելու համար հարկաւոր է 2-3 օր. նաւակներով ապրանք տեղափոխելը և երթևեկելը անհամեմատ էժան է, քան ձիով կամ սայլով: Եւ եթէ ի նկատի ունենանք այն հանգամանքը, որ կեանքի և գոյքի անապահով այդ երկրում ցամաքային ճանապարհորդութիւնը պայմանաւորւած է մեծամեծ վտանգների հետ, այն ժամանակ հասկանալի կը դառնայ այն կարևոր դերը, որ կատարւում է այդ լիճը. հանդիսանալով իբրև հաղորդակցութեան միջոց, թէև այժմ գոյութիւն ունեցող նաւակները չեն համապատասխանում ժամանակակից պահանջներին:

Վանի լիճն ունի մի յատկութիւն ևս, որն ընդհանուր է թէ Սևանի և թէ Ուրմիի լճերին. դա նրա մակերևոյթի պարբերական ելևէջներն են, որոնց շնորհիւ նորանոր ծովածոցեր և ավեր են գոյանում և որոնց շնորհիւ յաճախ ծովափնեայ ազգաբնակչութեան համար մեծամեծ դժուարութիւններ ստեղծուում: Մեր ճանապարհորդութեան միջոցին, որ տեղի ունեցաւ 1909 թւի յունիս, յուլիս և օգոստոս ամիսներին ընթացքում, լճի ջրի մակերևոյթը բարձրացել էր աւելի քան 3 մետր. շատ տեղերում ավերը անապին

չափով յետ էին գնացել և ջուրը եկել ծածկել էր վարելահողերը և խոտհարքերը: Այդ բանը իր վրա գրաւեց մեր ուշադրութիւնը և առանձնապէս այն պատճառով, որ միևնոյն երևոյթը մենք նկատել էինք մի քանի շարաթներ առաջ Սևանի լճի ավերում: Միմեանցից հարիւրաւոր վերստեր հետու ընկած երկու լճերի ջրերը միաժամանակ բարձրացել էին. անշուշտ երկու տեղերում էլ գործում էին միևնոյն երկրաբանական կամ կլիմայական պրօցեսները: Մենք այդ երևոյթի առիթով հետաքրքրել էինք Սևանի լճի ավերում, այժմ էլ հետաքրքրւում էինք Վանի լճի ավերում. այդ երկու տեղերում մեր ստացած տեղեկութիւնները շատ համապատասխանում էին միմեանց. 25-30 տարին մէկ անգամ պարբերաբար այդ լճերի ջրերը բարձրանում են և իջնում, բայց, ըստ երևոյթին, Վանի լճի ջուրը շարունակ մի սրոջ չափով բարձր է մնում և ցամաքներ գրաւում:

Կտուց անապատում այնտեղի վանահայրը մեզ պատմեց հետեւալ հետաքրքիր երևոյթը. սրա վկայութեամբ 1892 և 1893 թւերին լճի ջուրը այնքան նւազել էր, որ կղզին միացել էր ցամաքին և ուխտաւորները սայլերով ուղիղ գնում էին վանքը, իսկ 1896 թւի կոտորածների ժամանակ, երբ անապին թւով սարսափահար կղամ ժողովուրդ պատասպարան էր գտել վանքում, լճի ջուրը արդէն այնքան էր բարձրացել, որ կղզին անջատել էր ցամաքից և շնորհիւ այդ բանի, գազանացած քրդերը անկարող կղան մտնել այնտեղ, որով թէ վանքը և թէ այնտեղ պատասպարան գտած ժողովուրդը սղատ մնացին նոր կողպուտներից և վայրագութիւններից: Իսկ մեր ճանապարհորդութեան ժամանակ կղզու և ցամաքի մէջ եղած ջրային տարածութիւնը այնքան մեծ էր, որ նաւը 20 բոյկում հազիւ ծովափից հասնում էր կղզին:

Վանի լճի այս փոփոխութիւնները իրենց վրա են պարձրել շատ զիտնական ճանապարհորդների ուշադրութիւնը, նրանց թրւում նաև կինչի, որը իր գրքի մէջ բերում է այդ հարցի շուրջը մի շարք զիտնականների հետեւալ վկայութիւնները:<sup>1)</sup>

1806 թւին, Ժօբերի վկայութեամբ, Վանի լճի ջուրը այնքան էր բարձրացել, որ սպանում էր Արճէշը և Վանի շրջակաները ծածկել:

1) Տես Լինչ, Армения, томъ II, стр. 62.

1838 թւին, Բրանտի վկայութեամբ, լճի ջուրը այնքան էր նւաղել, որ Արճէշի շրջակայ ցամաքը տաս տարւայ ընթացքում մեծացել էր 1½ վերստով:

1841 թւին, Լօֆուուսի վկայութեամբ, լճի ջուրը բարձրացել էր ամբողջ 10-12 ոտնաչափ, ջուրը հասել էր Արճէշին և բնակիչները ստիպւած եղան քաշել քաղաքից:

1847 թւին, Օմեր-դը-Էլըի վկայութեամբ, լճի ջուրը իջնում էր:

1850 թւին, Լէյհարդի վկայութեամբ, լճի ջուրը նորից բարձրանում էր:

1863 թւին, Շարեկերի վկայութեամբ, ջուրը բարձրանում էր:

1875 թւին, Բէլլի վկայութեամբ, ջուրը բոլորովին իջել էր:

Իսկ 1898 թւին, Լինչի և Օովալդի վկայութեամբ, ջուրը բարձրանում էր, մի վկայութիւն, որը հաստատում էր նաև Կուուց անապատի վանահօր պատմածով:

Վանի լճի ներկայ բարձրացումը պիտի համարել խոշոր բարձրացումներից մէկը. Աւանց գիւղը, որը համարում է Վանի նաւահանգիստը, հետևապէս յարմար գիրք ունեցողը, նոյն իսկ այդ գիւղի մարգագետինների մի մասը ջուրը եկել ծածկել էր:

Սրանք անա կազմում էին այն լճի առանձնաշատկութիւնները, որ հանդիսանալով պատմական Վասպուրականի դարը, չորս կողմից շրջապատւած բազմապիսի լեռնաշղթաներով, սուր սուր կատարներով ու պճնաղարդ բլուրներով, իր գեղանի ափերի վրա հիւրընկալել է բազմաթիւ հայաբնակ գաւառներ, մէկը միւսից գերազանցող իր դիրքով և իր գեղեցկութիւնով:

Այդ գաւառներն են՝ Վան-Տօսպը, Թիմարը, Արճակը, Բերկրին, Արճէշը, Ալջավազը մի կողմից, Հայոց-Չօրը, Խօշարը, Գեաւաշը, Կարճկանը, Շատախը, Նորդուզը, Մօկսը, Կասկատը միւս կողմից:<sup>1)</sup>

### ՎԱՆ-ՏՕՍՊԻ ԳԱՒԱՌ

Վանի լճի ոչ մի ափ իր ընդարձակութեամբ, պտղաբերու-

1) Այս անուններից մի քանիսը չեն յիշւած վարչական բաժանման անունների շարքում այն պատճառով, որ սրանք կազմում են այնտեղ բերւած գաւառների գաւառամասերը, սակայն որոնք մեր ուսումնասիրութեան մէջ առանձին տեղ են բռնելու:

թեամբ, իր կլիմայով և տեսարաններով չի կարող նմանել այն տափարակին, որն ընկած է լճի հարաւ-արեւելեան ծովախորշի ծայրափին. դա մի երկարուկ դաշտ է, որի արեւելեան կողմում, որպէս մի հսկայ, ցցւած է երկգագաթ Վարազը. հիւսիսային և հարաւային կողմերից բարձրանում են սիրուն բլուրների շարքեր, իսկ արեւմտեան կողմում տարածւում է ջրային կապուտակը իր նկարէն հորիզոնով:

Այդտեղից լճի հիւսիսային հեռւուր ափերում երևում է գեղեցիկ Սրիփանի համաչափ բուսած կատարը, հարաւային ափերով ձգւում են Շատախի, Մօկսի և Կարճկանի լեռների անվերջ կուտակումները, իսկ արեւմտեան ափը կորչում է հեռուոր մշուշի մէջ, ուր հազիւ երևում է Նէմրութի սուերագիծը. և ձեզ թւում է, թէ լճի կապուտակ մակարդակը գնալով թեքւում է դէպի ցած, թէ լեռների այդ շարքը գնալով հակում է ու հակում և այդ բոլորը, իրրև յոգնած քարաւաններ, գնում հանգչում են հեռաստաններում:

Անա ձեր առաջ այդպիսի հրաշալի տեսարաններ բացող տափարակի վրա ընկած է Վան-Տօսպ գաւառակը: Այդ տափարակը, որ ունի 12-15 վերստ երկարութիւն և 8-10 վերստ լայնութիւն, մի շատ պտղաբեր դաշտ է, որ տալիս է ընտիր հացահատիկների բուսցնում է խաղողի այգիներ և պտղատու պարտէզներ. եթէ այդ տափարակը կարելի լինէր բաւականաչափ ոռոգել, նա կը զաւնար մի կատարեալ գրախտ. անա այդ ենթադրեալ դրախտի դարը կազմում է այժմեան Վան քաղաքը, պատմական Շամիրամակերտը:

### Վ Ա Ն

Վան քաղաքը իր բնական դիրքով նմանը չունի մեր ուսումնասիրութեան նիւթը կազմող ամբողջ շրջանում. նա գեղեցիկ է պճնաղարդ, անցեալով հարուստ, օդով ու ջրով սրանչելի և դիրքով բանաստեղծական:

Քաղաքն ընկած է տափարակի արեւմտեան ծայրում, լճի ափից փոքր ինչ հեռու. նա բաղկացած է երկու մասերից. արեւմտեան մասը բուն քաղաքն է, որը երեք կողմերից շրջապատւած է պարբսպով. այդ պարիսպները մեծ մասամբ այժմ էլ կանգուն են. քաղաքն ունի չորս գուռ, որոնցից մէկը գտնւում է արեւելեան կող-

մուս, երկուսը հարաւային, իսկ չորրորդը հիւսիս-արեւմտեան կողմում: Իրանցից առաջինը կոչուում է Թաւրիզի գուռ, երկրորդը Նոր կամ Սարայի գուռ, երրորդը Միջին գուռ, իսկ չորրորդը Նաւահանգստի կամ Իսթէլէի գուռ:

Բուն քաղաքի հիւսիս-արեւելեան ամբողջ երկարութեամբ, իրրեքնական պատնէշ, գուռս է ցցւած մի երկար և ուղղաձիգ քարաժայռ, հիւսիսային միջին մասը մի փոքր ուռած ու լայնացած: Այդ քարաժայռն ունի մի վերտի չափ երկարութիւն և 40-ից մինչև 50 սաժէն բարձրութիւն, որի ուղղահայեաց եզրները միանգամայն անմատչելի են դարձնում նրա կատարը: Ահա այդ քարաժայռը Շամիրամի պատմական բերդն է, յայտնի իր անցեալով և մինչև այժմ պահպանւած սեպածե արձանագրութիւններով: Շամիրամի քարաժայռի վրա, նրա միջի ընդարձակ տեղում, մինչև այժմ էլ կանգնած մնում են միջնաբերդի պարիսպները, որոնք աւելի ևս անմատչելի են դարձնում նրա վերելքը: Այդ պարիսպների վրայից երևում է միջնաբերդի մզկիթի մինարէն, իրրե նշան օսմանեան տիրապետութեան այդ պատմական թանգարանին:

Բուն քաղաքը շատ նեղւածք է. այդտեղ փողոցները անկասուն են և տները միմեանց կպած. այստեղ գտնուում են շուկան, կառավարութեան տունը, պօստ-հեռագրատունը, դորանոցը և հաշերի առաջնորդարանը. քաղաքի այս մասը շատ ազբատ է բուսականութիւնից:

Սակայն այդպէս չէ քաղաքի արեւելեան մասը. նա ունի հարուստ բուսականութիւն, ընդարձակ և ճոխ այգիներ, գեղեցիկ պարտէզներ և սիրուն ծառուղիներ, որոնց պատճառով էլ այդ մասը կոչուում է Այգեստան: Եւ իսկապէս այգեստան. 3-4 վերստ տարածութեան վրա փուած քաղաքամասը ներկայացնում է այգիների մի ծով. իւրաքանչիւր տուն ունի իր պարտէզը կամ այգին, որոնք միմեանց հետ կապւած են փոքրիկ դռնակներով. շնորհիւ այդ հազորակցութիւնների և քաղաքի ընդարձակութեան, 1896 թւի մեծ կոտորածների ժամանակ Այգեստանը կարողացաւ մի քանի օր շարունակ պաշտպանւել և նոյն իսկ ուժեղ դիմադրութիւն ցոյց տալ իսթամուլ ամբոխին:

Այգեստանի ամբողջ երկարութեամբ ձգւում է մի լայն փողոց, որի երկու կողմերում շարքով տնկւած են սուերախիտ ուռենիներ և կաղամախիներ. այդ փողոցը կոչուում է Սաչբոզանի

փողոց, իսկ դրա մէջտեղում, ուղղահայեաց կարող փողոցի վրա, կայ մի փոքրիկ հրապարակ, որը կոչուում է Սաչբոզանի հրապարակ: Սաչբոզանի փողոցն ու հրապարակը, որ կազմում են Այգեստանի կենտրոնը, իրենց ծառուղիներով անմասն են, իսկ Այգեստանի մնացեալ փողոցները նեղ են, ծուռ ու մուռ, տները ոչ գեղեցիկ, հողէ պարիսպները նոյն իսկ ազեղ, բայց այդ բոլորը իրենց ազեղութիւնով կորչում են այն գեղեցկութեան մէջ, որ ներկայացնում է իրենից բուսազարդ Այգեստանը:

Այգեստանը բաղկացած է մի քանի թաղերից. դրանք են՝ Հայկաժանքի, Սուրբ Յակոբի, Յանկոյսների, Նորաշէնի, Արարքի և Կլորգարի թաղերը:

Այստեղ գտնուում են ուսուց, պարսից, անգլիացոց, ֆրանսիացոց հիւպատոսարանները և բազմաթիւ դպրոցն ու որբանոցը:

Վանը, մասնաւորապէս Այգեստանը, հարուստ է սահնորակ աղբիւրներով և սպարտէզներն ու այգիները ուսպող առուներով. բայց այդ քաղաքի երկու կողմերից հասելով գնում լիճն են թափւում Յանկոյսների և Կուսուրաշի գետակները, իսկ Շամիրամի պատմական առուն գալիս ուսպում է քաղաքի հարաւային կողմում ընկած արակին ու այգիները:

Վանի կլիման հրաշալի է. ցերեկները բաւականին շոգ է լինում, որի շնորհիւ քաղաքը արտադրում է խաղողի շատ աւսակներ, որոնցից պատրաստում են ընտիր գինիներ, ծիրան, ինձուր, տանձ և ուրիշ շատ աւսակի պտուղներ, իսկ գիշերները մի այնպիսի զով ու մեղմիկ հով է փչում, այնպիսի դուրեկան օդ է կանգնում, որ մարդ հաճոյքով քաշում է վերան բրդէ տաք վերմակը և քնում:


Վանն ունի 7,500 տուն, շնչի հաշւով 38,000 բնակիչ, որից 6,000 տունը գտնւում է Այգեստանում, իսկ 1,500 տունը բուն քաղաքում:

Հայերի թիւը հաշւում են Այգեստանում 3,000 տուն, բուն քաղաքում 1,000 տուն, ընդամենը 4,000 տուն 20,000 շնչով:

Տաճիկների թիւը հաշւում են Այգեստանում 3,000 տուն, բուն քաղաքում 500 տուն, ընդամենը 3,500 տուն 18,000 շնչով: 1)

1) Այս թիւերը կազմւած են հայերի ձեռքով վերջին տարիներում, որոնք յամենայն դէպս աւելի ճիշտ են, քան միջնա այժմ եղածները: Լինը Վանի բնա-

9329-87  
408





Վանի հայերն աչքի են ընկնում իրենց ընդունակութիւններով. նրանք լաւ վաճառականներ են, շնորհալի արհեստաւորներ, և օտարութեան մէջ խիստ ճարպիկ, թէև դրանց հետ միասին իւրացրած ունին կեղծաւորութիւն, խորամանկութիւն և խաբելու մեծ ընդունակութիւն. մենք սխալւած չենք լինի, եթէ վանեցիներին իրենց ընդունակութիւնների պատճառով անւանենք Տաճկաստանի գօկեր:

Վանի առևտուրը համարեա ամբողջապէս գտնուում է հայերի ձեռքում. հայ ճօթավաճառների և մանրավաճառների թիւը հաշւուում են 500, մրգավաճառներ 60, ոսկերիչներ 60, հիւաներ, կահագործներ, մառանկողներ 80, դերձակներ 75, կօշկակարներ և կօնդօրաչիներ 100, շիլինգարներ, դարբիններ, փորագրիչներ, հացավաճառներ, մսավաճառներ, թէյատներ, շալագործներ, կտաւագործներ և այլն 200-ի շափ:

Շուկային զբաղմունքով ապրող տաճիկները պարապում են գլխաւորապէս թէյատներ պահելով, մրգավաճառութեամբ, մսավաճառութեամբ, հացագործութեամբ և մասամբ էլ կօշկակարութեամբ ու դերձակութեամբ:

Հայերն ունին 10 եկեղեցի և 8 դպրոց, որոնց ցուցակը բերում ենք առանձին: Բացի այս, Վանում ունին օրիորդաց դպրոցներ ամերիկական բողոքականները, գերմանական բողոքականները և Դօմինիկեան կղերները:

Վանում կան երիտասարդական շրջաններ, որոնք մարդու վրա թողնում են լաւ տպաւորութիւն. նրանք ունին մտաւոր զբաղմունքներ, հրատարակում են փոքրիկ թերթեր, թէև խմորատիպ, որոնց հետևելով, նոյն ձևի թերթեր հրատարակում են նաև Շատախում, Գեաւաշում և Արճակում: Այդ թերթերն են՝ «Յորձանք», «Փայս», «Տիգրիս», «Մովակ», «Գաւառի Չայն» և այլն:

Ընդհանուր առմամբ Վանը մի թանկարժէք քաղաք է, բայց քարացած և կանգ առած և եթէ աջտեղ մուտք գործէր կուլտուրան, նա կը դառնար մի ծաղկած վայր իր առևտրով և արտահանութիւններով:

Կիչների թիւը հաշուում է 30,000, որից 20,000-ը հայ, իսկ 10,000-ը տաճիկ (տես ԵՊՍ II. ԵՐ. 104): Տաճիկների թիւը մենք գտնում ենք պահասաւոր, աւելի ճիշտ պիտի ընդունել մեր բերած թիւը, որը կազմւած է հայերի ձեռքով, որոնք դժուար թէ դիտարեալ կերպով մեծացնէին այդ թիւը:

### Յուցակ Վանի հայ դպրոցների

№	Դպրոցների անունները	Որ սեռի	Որքան աշակերտներով	Դասակարգման տարիները
1	Կենտրոն. վարժ. 6 հիմ. դաս.	արական	100	8
2	Երեմեան վարժ. 6 հիմ. դաս.	»	230	10
3	Արարոցի թաղային դպրոց .	երկսեռ	400	14
4	Նորաշէնի » » .	արական	100	6
5	Յանկոյաների » » .	»	100	6
6	Ս. Յակոբի » » .	»	40	3
7	Հայկավանքի » » .	»	30	2
8	Սանդխտեան դպրոց . . .	օրիորդաց	230	8
Ընդամենը . . .			1230	57

### ՎԱՆ-ՏՕՍՊԻ ԳԻՒՂԵՐԸ

Վան-Տօսպի գաւառակում կան 20 հայաբնակ գիւղեր, որոնցից իր կարևորութեամբ առաջին տեղը բռնում է Աւանց գիւղը. սա ընկած է Վանից գէպի հիւսիս կէս ժամ հեռաւորութեան վրա ուղիղ լճի ափին:

Գիւղի զիբը գեղեցիկ է. գեղեցիկ են մանաւանդ նրան շրջապատող խաղողի այգիներն ու պարտէզները և սիրուն մարդագետիկները. գիւղից գէպի արեւելք տարածւում են նրա պաղարեր վարելահողերը:

Աւանցը բաւականին մեծ գիւղ է, որի նմանը շատ քիչ է պատահում այդ կողմերում. նա ունի 300 տուն զուտ հայ բնակիչ: Ժողովուրդն ունի բազմապիսի պարագմունքներ, որոնց շնորհիւ նրա անտեսութիւնն անհամեմատ աւելի բարւօք վիճակի մէջ է, քան այլ գիւղերի ժողովուրդների: Նախ՝ Աւանցի ժողովուրդը պարապում է հողագործութեամբ և այգեգործութեամբ, որոնք

կազմում են նրա անտեսութեան գլխաւոր ճիւղը. երկրորդ՝ նա պարապում է բորակ պատրաստելով, որը մեծ քանակութեամբ արտահանում է Վան, Բիթլիս, Սղերդ և այլ տեղեր:

Բորակը պատրաստում են լճի ջրից. ջուրը բայ են թողնում անագին սալաձուլեան վրա փուլած ածուների մէջ. մի քանի շաբաթների ընթացքում ջուրը արևի տաքութեանից գոլորշիանում է, որից ածուների մէջ նստում է բորակի հաստ շերտ, որը կարատելով, իրրև մաքրիչ նիւթ, դառնում է արտահանութեան աղբանք:

Սակայն Աւանցի ամենաարդիւնաւոր գրազմունքը նաւալաբուլիւնն է, որը ինչ-ինչ հանգամանքների շնորհիւ մինչև այժմ էլ մնում է նրան բաժին: Միանգամայն զարմանալի է, որ ծովափնեայ միւս գաւառներն ու գիւղերը լճի վրա չունին նաւակներ և եթէ կան էլ, անշուշտ նրանց թիւը մի քանի հատից չի անցնում:

Աւանցը ամենամեծ նաւահանգիստն է Վանի լճի վրա, եթէ միայն կարելի է նրան նաւահանգիստ անւանել: Այստեղ գուրս են հանում նաւակները շրջակայ գաւառներից գանազան բերքեր Վանի շուկան ստնելու համար. այստեղից գուրս է ուղարկում Վանի շատ ապրանքներ դէպի գաւառները: Վանի լճի վրա երթիւ-ւեկում են 100-ի մօտ մեծ ու փոքր առագաստաւոր նաւակներ, որոնք տարբերում են Սեանի լճի վրա երթիկեկող նաւակներից իրենց մեծութեամբ և տարածակամածով. սրանք վերցնում են շատ անգամ 500-600 փութ բնու: Այդ բոլոր նաւակները աննշան բացառութեամբ պատկանում են Աւանց գիւղի հայ ժողովրդին, որը կարողացել է Վանի լճի վրա թրավարելու և ալիքների դէմ մաքստելու արճեստը իւրացնել և կատարելագործել: Նաւագնացութիւնը այստեղ սկսւում է գիշեր ժամանակ. այդպէս թեկադրում են կլիմայական պայմանները. լստ երևոյթին, նաւագնացութիւնը այդ լճի վրա ենթակայ է հողմային պատահարների. այդ է պատճառը, որ յաճախ նաւախարները նստում են օրերով և սպասում յաջող քամիներին<sup>1)</sup>

1) Վանի լճի վրա մենք ճանապարհորդեցիք երկու անգամ. առաջին անգամ Արճէշից դէպի Կաուց անապատ, իսկ երկրորդ անգամ Վանից դէպի Գաուան: Գիշերայ ժամի 11-ին գուրս գալով Աւանցից, յաջող օրւայ ժամը 12-ին մօտենում էինք Գաուանին, երբ բարձրացաւ հակառակ քամին և ստիպեց մեր նաւը ուղղել դէպի հիւսիս, գուրս գալ Ծօրկօնք գիւղը, որը գտնւում է Գաուանից մէկ ժամ հեռաւորութեան վրա և այդտեղից մինչև Գաուան գնալ

Աւանցը թէև հին գիւղ է, բայց լճի բարձրանալու շնորհիւ մի քանի անգամ տեղափոխ է եղել և կամայ կամայ յետ քաշել. տեղացիների պատմելով 60-70 տարի առաջ բոլորովին ջրի տակ մնաց նախկին գիւղի եկեղեցին, որի փոխարէն շինւեց այժմեանը:

Լճի ջուրը այժմ էլ բարձրանալով եկել կոխել է գիւղի հարաւային կողմում ընկած խոտհարքերը և ցանքերը:

Վան-Տօսպում երկրորդ նշանաւոր գիւղը համարւում է Արտամէղը, որը ընկած է լճի հարաւարեկեան ափին, Վանից 10-12 վերստ հեռաւորութեան վրա: Սա հստակ եղել է նշանաւոր քաղաք. սրա շրջակայքում մինչև այժմ էլ գտնւում են հնաւթիւններ և բնեռագիր արձանագրութիւններ, որոնք ցոյց են տալիս այդ շրջանի փառաւոր անցեալը:

Արտամէղը այժմ նշանաւոր է իր այգիներով և ծառագարդ պարտէզներով. նա արտադրում է մեծ քանակութեամբ պտուղներ, որոնց մէջ առանձնապէս գոված է խնձորը:

Գիւղը ստղւում է Շամիրամի ջրով, որը օժտապոյտ քարափները պատեկով, մօտենում է Արտամէղին, ջրում նրա այգիներն ու պարտէզները և անցնում գնում է Վանը պճնագարդելու: Շամիրամի առուն հոսում է գիւղի հարաւային եզրերով, որից մինչև լճափը տարածուող այգիները պատկերանում են իրրև մի ծառագարդ թերակղզի:

Այժմ Արտամէղն ունի 500 տուն բնակիչ, որի 150 տունը հայեր են, իսկ 350 տունը տաճիկներ: Տեղացիների պատմելով 1877 թւի ուսու-տաճկական պատերազմից առաջ հայերի թիւը հասնում էր 400 տան, իսկ տաճիկներինը ընդամենը 60-70. պատերազմի սարսափները մի կողմից, անընդհատ շարունակուող հալածանքները միւս՝ առաջ բերին այն, որ գնալով հայերի թիւը այդտեղ նւազեց, իսկ տաճիկների թիւը աճեց: Այգիները մեծ մասամբ պատկանում են տաճիկներին. հայերը այգիներ շատ քիչ ունին, բայց հարուստ են վարելահողերով և պարապում են բացառապէս երկրագործութեամբ:

Վան-Տօսպում Աւանցից և Արտամէղից յետոյ լաւ գիւղեր համարւում են Լէզկը, Սիլգահը, Շահրաղին, Կոււուրաշը, Բեր-

տով, թէև մեզ համար առաջինը և վերջինը չէր. որ մենք ստով պիտի ճանապարհորդէինք:

գակը և Յւստանը. վերջին չորս գիւղերն ունին հարուստ բուսականութիւն և յայտնի են իրենց խաղողով ու գինով:

Վիճակագիր Վան-Տոսպի գաւառակի հայ ժողովրդի			
№	Գ ի խ Ղ Ե Ր Ը	Հայ տուն 1)	Մանկեր տուն 2)
1	Աւանց . . . . .	300	
2	Լէզկ . . . . .	130	
3	Շահրաղի . . . . .	250	
4	Սխզահ . . . . .	135	
5	Չորովանց . . . . .	15	40
6	Կողբանց . . . . .	27	
7	Շուշանց . . . . .	55	
8	Կուսուրաշ . . . . .	110	
9	Կենդանանց . . . . .	45	
10	Բերդակ . . . . .	90	
11	Յւստան . . . . .	80	60
12	Արտամէդ . . . . .	150	350
13	Լամդկերտ . . . . .	50	
14	Գարման . . . . .	55	15
15	Ֆառուղ . . . . .	35	15
16	Ոսկերակ . . . . .	45	
17	Էրմանց . . . . .	3	50
18	Սեպրակ . . . . .	2	25
		1577	

1) Այս տեղեկութիւնները հաւաքել ենք Վանում տեղեակ մարդկանցից:  
 2) Մանկեղաններ ասելով բոլոր ցուցակներում պիտի հասկանալ բուրդ, սաճիկ, շէրքէզ և այլն. բացի այդ, մանկեղանների թիւը բերում է մոտաւոր հաշով, որքան այդ հնարաւոր է եղել:

ՎԱՐԱՊԻ ՎԱՆՔԸ

Որքան որ գեղեցիկ է Վանի լճի հարաւարեկեան ծովախորշը իր տափարակով, կրկնակի-եռակի չափով գեղեցիկ է այդ տափարակի արևելեան սահմանի վրա ցցւած վիթխարի Վարագը: Գա Վան-Տոսպի հսկան է, նրա մասսիվը, բայց միևնոյն ժամանակ նրա գեղեցկութիւնը, նրա զարդը: Վարագն ունի աւելի քան 10,000 ոտնաչափ բարձրութիւն, որի ժայռոտ վերելքը բաղկացած է երկու բաժան-բաժան կատարներից. այն կատարը, որ ընկած է դէպի արևելք, բարձր է, իսկ միւսը, որ նայում է ուղիղ տափարակին, փոքր է և կողքերից լանջաւոր: Փոքր կատարի հարաւային գեղեցիկ լանջերից մէկի վրա դանդաղ է Վարագի վանքը,<sup>1)</sup> որը Տաճկաստանի նշանաւոր վանքերից մէկն է, բաղկացած եօթ եկեղեցիներից և որն ունի յիշելի անցեալ:

Վարագ անունը անբաժան կերպով կապւած է Խրիմեան Հայրիկի անւան հետ. այս վանքն էր, որտեղ առաջին անգամ լուսի մի շողք ցուաց զարեբով տիրապետող խաւարի մէջ. այս վանքն էր, որը խաւար միջավայրում առաջին անգամ հիւրընկալեց իր պարիսպների մէջ Գուստանբերդի հնարած գործիքը, հիւրընկալեց նաև իր ժամանակներում հալածւած Խրիմեանի պէս լուսամիտ մարդուն, որը դեռ 60-ական թւականներին ձեռնարկեց լրագրի հրատարակութեան. դա «Արծիւ Վասպուրական Աշխարհին» էր, որն ունեցաւ հինգ տարւայ շրջան: Վանքն այժմ դադարել է այն գերը խաղալուց. տպարանը այլ ևս գոյութիւն չունի, բայց մի քանի աւանդական լուսաւոր կարգեր դեռ պահպանում են: Այսպէս, վանքում այժմ էլ գոյութիւն ունի գիշերօթիկ դպրոց 3 նախակրթարաններով և 4 դասարաններով.<sup>2)</sup> այդտեղ սովորում են աւելի քան 60 աշակերտներ:

Վարագի վանքը լաւ պահպանւած և հարուստ վանքերից մէկն է. նա ունի լաւ պարտէզ, ընդարձակ ծառատան, զբանցից մի փոքր հեռու ջրաղաց. նա ունի իր սեպհական առուն բերւած լեռան հեռաւոր լանջերից: Ունի մեծ անտեսութիւն, զրա հետ

1) Նախկին Վարագը, որ այժմ աւերակ է, գտնւում է բարձր կատարի արևմտեան լանջի վրա:  
 2) Տաճկաստանում մինչև այժմ էլ կրթական գործը մեծ չափով կենտրոնացած է վանքերում, մի բացասական հանգամանք, որը հետևանք է տիրապետող կարգերի:

միասին նաև մեծ եկամուտներ: Պահում է աւելի քան 1000 գլուխ ոչխար, որից մուտք ստացւում է մօտ 200 ոսկի,<sup>1)</sup> 30-ից աւելի կով ու մատակ, 20-ից աւելի եզներ: Ունի աճազին արօտատեղիներ, աւելի քան 150 դեռահատին վարելահող: Տարեկան սերմ է ձգում 140 չափ<sup>2)</sup> և ստանում է 1,200 չափ հացահատիկներ, որից 700 չափը սպառւում է վանքի կարիքները վրա, իսկ մնացեալ 500 չափը վճարւում է վանքի մշակներին և ուսուցիչներին:<sup>3)</sup>

Բացի այս, վանքը տարեկան ստանում է հետեւեալ դրամական նպաստները.

Կարասուրեանի կտակով . . . . .	45 ոսկի
Ամերիկայի բարեգործներից . . . . .	30 ոսկի
Պետերբուրգի եկեղեցական խորհրդից . . . . .	1000 ռուբ.
Թիֆլիսում գտնուող խանութի վարձ . . . . .	120 »

Վանքի եկամուտների մեծ մասը ծախսւում է դպրոցի վրա, իսկ մնացեալ փոքր մասը միարանութեան պէտքերի և թւով 40 մշակների վրա: Իւրաքանչիւր աշակերտի վրա ծախսւում է, հաշւած ամեն ինչ, այն է՝ ուտելիք, հագնելիք, դպրոցական պիտոյքներ և այլն 8 ոսկի. այսպիսով միմիայն դպրոցի ծախքը հասնում է 500 ոսկու:

Վարազի վանքը որպէս հնութեան տեղ նշանաւոր է նրանով, որ այդտեղ գտնւում են Վասպուրականի Սենեքերիմ թագաւորի, Սուշուշ թագուհու և Պետրոս Գետադարձ կաթողիկոսի գերեզմանները:

**ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐԻ ՎԱՆՔԸ**

Վարազի լեռան փոքրիկ կատարի հիւսիս-արևելեան փէշերի վրա գտնւում է մի այլ վանք. դա Սուրբ Գրիգորի վանքն է, որը կոչւում է նաև Սալնապատի վանք:

Այս վանքը միացած է Վարազի վանքի հետ մի դժւարին շաւիղով, որը ձգւած է լեռան երկու կատարների մէջտեղով ժայռերի, բլուրների և խորխորասների միջով. այս տարածութիւնը անցնելու համար պահանջւում է 2-3 ժամւայ տանջանք:

1) Տաճկական ոսկին կամ լիրան արժէ 8<sup>1</sup>/<sub>2</sub> ռուբլի:  
 2) Չափը հասարակ է ուստական 4 փթին:  
 3) Մինչև այժմ Տաճկաստանում բնական բերքերով են վարձատրում ոչ միայն աշխատուորներին, այլ և շատ տեղերում նաև ուսուցիչներին: "

Վանից Սուրբ Գրիգորի վանքը գնում են լեռան հիւսիսային փէշերով, իսկ Վարազի վանքը՝ լեռան հարաւային փէշերով. այս երկու ճանապարհները մեծ մասամբ դաշտային են և ունին 2-3 ժամի տեղութիւն:

Սուրբ Գրիգորը հարուստ վանք չէ. ունի ընդամենը 120 ոչխար և 30-ի չափ կենդանիներ, ունի նաև արօտատեղիներ ու վարելահողեր, բայց ինքը չէ՝ մշակում, այլ տալիս է կապալով և ստանում է տարեկան 30 ոսկի եկամուտ:

Վանքում այժմ կայ մի որբանոց 40 որբերով, որի ծախքը հոգացւում է պատրիարքարանի միջոցով զանազան բարերարներից ստացւող նպաստներով: 1896 թւի մեծ կոտորածներից յետոյ Վանի շրջանում որբերի թիւը այնքան մեծացաւ, որ շատ վանքեր ստիպւած եղան հիմնել յատուկ որբանոցներ, սարսափների այդ մանուկ զոհերին պատսպարելու համար. այդ որբանոցները մինչև այժմ էլ գոյութիւն ունին:

Վանքը օժտւած է հրաշալի դիրքով, անուշ ջրերով և առողջարար օդով. այդ պատճառով վանեցի մի երկու տամեակ ունեւոր ընտանիքներ ամառները գալիս են այստեղ ամառանոց, իրենց հետ բերելով սեփական վրաններ: Պէտք է նկատել, որ Տաճկաստանի շատ տեղերում հայերը ամառները հանգստանալու և մի քանի օրով բնութեան քաղցրութիւնը ճաշակելու համար ընտրւում են յատկապէս վանքերը այն պատճառով, որ այդ տեղերում միայն կարող են նրանք իրենց շատ ու քիչ ապահով զգալ:

Սուրբ Գրիգորի վանքը 1909 թւի զարնանը նշանաւոր դարձաւ նրանով, որ կառավարութիւնը վանեցի Դաւիթ անունով մէկի մատնութեան հիման վրա խուզարկեց վանքը, այդտեղից հանեց մի քանի պահւած զէնքեր և այդ առիթ գործաւ Վանում նոր խռովութիւններ սարքելու, որի ժամանակ կատարւեցին մի շարք սպանութիւններ, բանտարկութիւններ և տանջանքներ. այս տեղի ունեցաւ սահմանադրութիւնից ընդամենը երկու ամիս առաջ:

**ԹԻՄԱՐԻ ԳԱՒԱՌ**

Վան-Տօսպի գաւառից դէպի հիւսիս-արևմուտք, ցամաքը, որ ներկայացնում է տեղ-տեղ չափաւոր ելևէջների և տեղ-տեղ լեռների ու ձորերի մի խանուածք, լճի արևելեան կողմից բաւականին լայն

շերտով առաջ է գնացել ջրի մէջ, գոյացնելով մի մեծ թերակղզի, երկու կողմերից ասպարէզ տալով ջրի կոհակներին, որոնք և կերտել են թերակղզու երկու թևերի վրա երկու ծովախորշեր, մէկը միւսից զեղեցիկ, մէկը միւսից բանաստեղծական: Թերակղզին բաւականին մեծ է, ափերի մօտ լեռնոտ և տեղ տեղ շեշտակի ջրի մէջ իջած:

Ահա այդ թերակղզու վրա բնկած է Վասպուրականի հայաշատ գաւառներից մէկը՝ Թիմարը:

Թիմարը հնում եղել է բազմամարդ և ծաղկած մի գաւառ, բայց պարբերական հալածանքները նրան դարձրել են անշուք և ազգաբնակչութիւնը նօսրացրել: Այժմ հայաբնակ զիւղերի թիւը այդ գաւառում հաշոււմ են 38:

Թիմարը յայտնի է իր հացահատիկների մշակութեամբ, բայց դուրկ չէ նաև բարբերի հովիտներից, որոնք, բնկած լինելով գաւառի միջով հոսող և լիճք թափող Մարմէտ գետի և նրա ճիւղերի վրա, արտադրում են խաղող, ծառագոտուղներ և բանջարանոցային բերքեր:

Թիմարի բազմամարդ և լաւ զիւղերից մէկն է Մարմէտը. սա ունի 135 տուն հայ բնակիչ և յայտնի է իր հացահատիկներով:

Բայց Մարմէտից աւելի բազմամարդ և աւելի հարուստ գիւղ համարուում է Ալիւրը. սա ունի 335 տուն բնակիչ, զեղեցիկ խաղողի այգիներ և փուած լինելով մի սիրուն լանջի վրա, ունի խիստ բանաստեղծական տեսք:

Ալիւրը, իբրև հարուստ գիւղ, 1896 թւի կոտորածների ժամանակ զէպի ինքը գրաւեց վայրագ քուրդ ցեղերին, որոնք մի շարք բարբարոսութիւններ գործելուց յիտոյ, քշեցին 4,000 ոչխար, մի այգքան էլ տաւար և կողոպտեցին գիւղի ամբողջ գոյքը. չը նայած այդ բոլորին, իր բերրի հողերի և այգիների շնորհիւ Ալիւրը այժմ էլ այդ շրջանի ամենահարուստ գիւղն է:

Նա ոչ միայն հարուստ է հացահատիկներով, այլ և խաղողով, որի չափը որոշելու համար կը բերենք մի հաշիւ. 1908 թւին խաղողի բերք եղել է 8,800 լիտր. <sup>1)</sup> խաղողի տասանորդ տուրք վճարել է գիւղը 45 ոսկի և խաղողի շիրայի համար 12 ոսկի, ծառագոտուղների համար 20 ոսկի, բնդամենը 77 ոսկի. այդքան

1) Լիտրը հաւասար է ուսական կէս փթիին:

հաշիւն գրամ <sup>1)</sup> միմիայն խաղողի և ծառագոտուղների տասանորդ տուրք վճարելու համար պէտք է լինել Ալիւրի պէս հարուստ, իսկ այսպիսի զիւղեր շատ հազւագիւտ են այդ երկրում:

1) Բացի հացահատիկներից մնացեալ բերքերի տասանորդ տուրքը վճարուում է գրամով:

Վիճակագիր Թիմար գաւառի հայ ժողովրդի						Հայ տուն 1)	Մահմեդ. տուն	
№	Գ	Ի	Ի	Ղ	Ե	Ր	Ը	
1	Արտաւէղ	.	.	.	.	.	12	2
2	Կոճ	.	.	.	.	.	9	20
3	Աղիպեօզալ	.	.	.	.	.	20	
4	Կիւմննայ	.	.	.	.	.	110	
5	Բայդակ	.	.	.	.	.	38	
6	Տրլաշէն	.	.	.	.	.	95	
7	Ատնականց	.	.	.	.	.	40	
8	Ծակտար	.	.	.	.	.	40	
9	Ամենաշատ	.	.	.	.	.	38	
10	Աննավանք	.	.	.	.	.	46	
11	Մարմէղ	.	.	.	.	.	135	
12	Թրքաշէն	.	.	.	.	.	3	30
13	Բաղ	.	.	.	.	.	10	20
14	Ջանիկ-Մաղուր	.	.	.	.	.	80	
15	Նորշէն	.	.	.	.	.	30	
16	Քեօրփիքեօյ	.	.	.	.	.	2	20
17	Ատեր	.	.	.	.	.	50	
18	Փիլկարիլ	.	.	.	.	.	35	

1) Այս տեղեկութիւնները հաւաքել ենք Կոտայ անապատում անձամբ տեղացիներից:

Վիճակագիր թիմար գաւառի հայ ժողովրդի					Հայ տուն	Մասնեղ. տուն	
№	Գ	Ի	Ի	Ղ	Ե	Ր	Ը
19	Գոմս	.	.	.	40		
20	Աղջավերան	.	.	.	35	4	
21	Մերկանջուղ	.	.	.	5	10	
22	Գարարէկ	.	.	.	10	20	
23	Սօսրաթ	.	.	.	15	12	
24	Շահդեալզի	.	.	.	18		
25	Նորովանց	.	.	.	30		
26	Խժիշկ	.	.	.	110		
27	Ամկու-բերդ	.	.	.	30	40	
28	Էրէրին	.	.	.	110		
29	Քեօջանի	.	.	.	110		
30	Գեօրու	.	.	.	12	40	
31	Խաւենց	.	.	.	95		
32	Ալիւր	.	.	.	335		
33	Եկմալ	.	.	.	30		
34	Սաւարածին	.	.	.	30	2	
35	Պօղանց	.	.	.	50		
36	Աւերակի	.	.	.	60		
37	Զրաշէն	.	.	.	50		
38	Բերդ կամ Նորգիւղ	.	.	.	30		
					1998		

**ԿՏՈՒՅ ԱՆԱՊԱՏԸ**

Թիմարի անւան հետ կապւած են թերակղզու երկու ծայրերում միմեանցից աւելի քան 30 վերստ հեռաւորութեամբ լճի մէջ բուսած երկու կղզիներ իրենց մենաստաններով. զրանք են՝ Կտուց անապատը և Լիւմ անապատը:

Լիւմը մի բաւականին մեծ ու տափարակ կղզի է, որը Վան երթևեկող նաւերի գծից դուրս դառնելով, շատ քիչ այցելուներ ունի. այդպէս չէ Կտուցը:

Սա փոքրիկ, Սեանի կղզուց էլ փոքրիկ, մի լեռնակղզի է զէպի ցամաքը զարծրած իր տափարակ ափով, որի վրա շինուած է հինաւուրց Ս. Կարապետի վանքը իր միջնադարեան խցերով և հիւրասենեակներով: Կղզու և ցամաքի միջի տարածութիւնը մէկ վերստից աւելի կը լինի, որը նաւելու համար հարկաւոր է լինում 20 բոպէ. այդ տարածութիւնը այժմ գնալով մեծանում է, որովհետև լճի ջուրը բարձրանալով ցամաքի ափերը սողցել է և առաջ եկել, մինչդեռ, ինչպէս վերը տեսանք, 1892-93 թւերին ջուրը ախրան էր իջել, որ կղզին միացել էր ցամաքին:

Կղզու գիմաց, ցամաքի վրա շինուած է զրաի տունը իր սենեակներով և 12-15 հոգու համար գիշերօթիկ սրահնոց-զպրոցով: Թէ ծովափին և թէ կղզու վրա բուսած կան բաւականաչափ նշաններ, որոնք մի առանձին գեղեցկութիւն են տալիս այդ ամայի միջավայրին:

Վանքն ունի 3 վարդապետներից բաղկացած միարանութիւն. վանահայր Ստեփաննոս վարդապետը ապրում է զրաի տանը և իր ձեռքում պահում է վանքի անտեսութեան ընդհանուր հսկողութիւնը, ձեռունի եղիտ վարդապետը կղզուց բոլորովին չի դուրս գալիս, նա վանքի աւանդապահն է, իսկ Գրիգոր վարդապետը շարունակ ձի նստած վարում է զրաի գործերը, հետևում է վար ու ցանքին և պապին է հաւարում: 1)

Վանքն ունի 4 աշք ջրաղաց, մէկ ձիթհանք, մի քանի տասնեակ խանութներ վանում և այլ տեղերում, 200 գլուխ ոչխար և 100 գլուխ տաւար, ունի 200 շափ վարհեկանոց, ընդարձակ արօտատեղիներ, սակայն ջուր չկայ, որի պատճառով էլ նոյն իսկ ջրաղացները տարւայ մեծ մասը կանգնած են լինում:

Այս փոքրիկ վանքի փոքրիկ միարանութիւնը իր անտեսութիւնով մեզ վրա թողեց շատ լաւ տպաւորութիւն. վարդապետները ապրում էին իրար հետ սիրով, վանքի անտեսութեան մէջ նկատելի էր հոգացողութիւն. առանձին հոգացողութիւն մենք նկատեցինք կղզու փոքրիկ մատենադարանում, ուր խնամքով դարւած և պահպանւած էին հին ձեռագիր աւետարաններ և այլ կրօնական գրքեր:

1) Տաճկաստանում վանքերի սղեցութիւնը դեռ ևս մեծ է և ժողովուրդը շարունակում է անարտաճ պողի տալ:

Այս վանքում նկատելի էր նաև հիւրատիրութիւն. երբ մեր խնդրանքով մօտակայ երեք գիւղերից վանահայրը կանչել տւեց մի քանի գիւղացիներ, մեզ հետաքրքրող տեղեկութիւններ քաղելու համար, նախ քան ճանապարհ ձգելը, նրանց հրաւիրեցին ճաշի:

1896 թւի կոտորածների ժամանակ Կոռուց անապատը մեծ ծառայութիւն արեց փախստական ժողովրդին: Աւելի քան 8,000 ժողովուրդ շրջակայ գիւղերից սարսափահար եղած ու կողոպտւած, նաւերով գիմեց կղզին, ուր այդ անգին բազմութիւնը ամբողջ մէկ ամիս բացօդեայ, արեգակի ճառագայթների տակ և գիշերային քամիներին ենթակայ, կրեց ամենասոսկալի զրկանքներ. վանքը տւեց այն բոլորը, ինչ որ ունէր, բայց այդ ունեցածը շատ չնչին էր կարիքի հետ համեմատած:

Կոռուց անապատը շատ անգամ էր իր դռները բացել ապաստան խնդրողների առաջ, բայց այդ դուր չէր գալիս կառավարութեանը, որի շնորհիւ 1906 թւին երկու վարդապետները զբոսապարտւելով, տարւեցին Վան ու բանտարկւեցին և բանտից արձակւեցին հինգ ամիս ու կէսից յետոյ: Այդ երկրում փախստականներին ապաստանելն էլ յանցանք էր համարուում:

### ԱՐՃԱԿԻ ԳԱԻԱԽ

Թիմարից դէպի արևելք Վան-Տօսպին սահմանակից գտնուում է Արճակի գաւառը իր մի քանի տասնեակ գիւղերով:

Արճակը յայտնի է իր համանուն լճով, որն ընկած է ուղիղ գաւառի կենտրոնում: Լիճը բաւականին մեծ է և շրջանաձև, բացի արևելեան մասից, ուր ցամաքը ներս գնալով, ձևացրել է մի բութ թերակղզի. նա ունի աւելի քան 30 վերստ շրջագիծ և սիրուն ափեր, որոնց վրա հիւրընկալել է մի քանի մեծ և փոքր գիւղեր: Լճի արևելեան և հիւսիս-արևելեան ափերը դաշտային են, իսկ միւս ափերը լեռնոտ, մանաւանդ արևմտեան ափերը, ուր շարքով ընկած Ախտաղաղ, Դղջու և Երկաթներ կոչւող գագաթները կիսաօդակի պէս բոլորելով լճի կէս մասը, նրան տալիս են մի առաձին գեղեցկութիւն:

Արճակի լճի մակերևոյթը բարձր է ծովի մակերևոյթից 5,800 ոտնաչափ, հետևապէս բարձր է Վանի լճի մակերևոյթից 200 ոտ-

նաչափ: Զուրը աղի է, հաւանօրէն աւելի աղի, քան Վանի լճի ջուրը, ինչպէս այդ ցոյց են տալիս նրա ափերին կուտակւած գորշագոյն աղային նստւածքները: Լճի մէջ կայ ձկան մի տեսակը, սակայն որը շատ քիչ է որսւում և ժողովրդի սնտեսութեան մէջ որ և է տեղ բռնել չէ կարողանում: Նաւագնացութիւն բոլորովին գոյութիւն չունի. երկրի յետամնացութիւնը անդրադարձել է նաև այս գեղեցիկ լճի վրա, որը կարելի էր դարձնել մի սիրուն զբօսավայր: Լճի մէջ թափուում են երեք փոքրիկ գետակներ. դրանք են՝ Խառակօնիսի, Խնօյի և Մալաու գետակները:

Ջրի մակերևոյթի բարձրացման միևնոյն երևոյթը, որը մենք տեսանք Վանի լճում, տեղի ունի նաև այստեղ. ջուրը բարձրանալով ծածկել է ափերը, տեղ տեղ առաջ գնալով ողողել է ցամաքը մեծ տարածութեամբ. Խառակօնիս գիւղում, որը գտնուում է լճի ափին, մի քանի տներ մնացել են ջրի մէջ և այժմ լուրջ կերպով դրւած է գիւղի տեղափոխութեան հարցը:

Արճակի գաւառը տեղ տեղ լեռնոտ է և տեղ տեղ դաշտային. ժողովրդի գլխաւոր զբաղմունքն է հողագործութիւնը, որով տեղական կարիքներին գոհացում տալուց յետոյ, կարելի է լինում վաճառքի հանել որոշ չափով հացահատիկներ:

Գաւառում հայաբնակ գիւղերի թիւը հասնում է 22-ի. դրանցից նշանաւոր են.

Արճակը, որն ունի 160 տուն բնակիչ և գտնուում է լճի հարաւ-արևելեան ափում:

Խառակօնիսը, որն ունի 200 տուն բնակիչ և գտնուում է լճի հիւսիս-արևելեան ափում, Արճակից մի ժամ հեռաւորութեան վրա: Այս գիւղը շատ հին է և ունի շուրջը մի քանի հնութիւններ:

Արճակում կան քրդաբնակ գիւղեր. դրանցում ապրող ժողովուրդը խաղաղ է և ապրում է երկրագործութեամբ, բայց կան աշիւրէթներ, որոնք հանդիսանում են գաւառի անհանգիստ տարրը. դրանք են՝

- Շամսկիները, որոնց ցեղապեան է Սաղօմ բէկը:
- Մալանցիները, որոնց ցեղապեան է Մամաղ բէկը:
- Եւ Շաւեցիները, որոնց ցեղապեան էր այժմ մեռած Քեամիլ բէկը:

Ահա այս բէկերի ձեռքով 1896 թւին կողոպտւեցին Արճակի գիւղերը և կատարւեցին մի շարք վայրագութիւններ:

Վիճակագիր Արձակ գաւառի հայ ժողովրդի		
№	Գ Ր Ի Ի Ղ Ե Ր Ը	Հայ տուն 1) Մանկ. տուն 1)
1	Սառահոնիս	200
2	Արձակ	160
3	Հաշփշատ ներքին	15 25
4	Ղըզլա	55
5	Նարաթ	20
6	Մըխնիս	60
7	Զօրանօղլու	20 15
8	Պախեղէկ վերին	16
9	Էրմանց	5 55
10	Սեան	65 60
11	Զաւանց	35 2
12	Լիմ	25 35
13	Մանգան	35 33
14	Կարթալան 2)	1 35
15	Հասպատան	20 25
16	Նազարա	60
17	Բօղաղքեասան	20
18	Շամշաղին	6 40
19	Աղջաշայ	1 15
20	Զախմախ	8 2
21	Տաղվերան	32 2
22	Սաթիրէկ	7 36
		866

1) Այս տեղեկութիւնները կազմել է պ. Շիրին Յակոբեանը:

2) Այս գիւղում 1896 թւի կոտորածին 10 տուն հայեր քրդացել են, որոնք այժմ էլ քուրդ են:

### ԲԵՐԿՐԻԻ ԳԱԽԱՌ

Թիմարի և Արձակի գաւառներից դէպի հիւսիս, Վանի լճի հիւսիս-արևելեան ծովախորշից սկսած մինչև Մակեի խանութիւնը և մինչև Թանգուրէքի լեռնաշղթան տարածուած է Բերկրիի գաւառը, որն իր ընդարձակութեամբ Վանի սանջակի գաւառների մէջ ամենատառջինն է, թէև մեծ մասամբ ամառի:

Գաւառն աչքի է ընկնում գետերի տառտութիւնով, պարարտ հողերով և ընդարձակ արօտատեղիներով, բայց բնակչութիւնը նոսր է և երկիրը մեծ մասամբ անմշակ:

Գաւառի հիւսիս-արևելեան մասում, սահմանակից Մակեի խանութեանը, ընկած է Արաղայի դաշտը. սա մի դաշտէ, որի նմանը շատ քիչ կը գտնէք մի այլ տեղում: Սրա երկարութիւնը հաշուած են աւելի քան 60 վերսա և լայնութիւնը 30 վերսա և այդ տարածութիւնը այնպէս կոկ է, այնպէս ուղիղ, ինչպէս ձևօքի փեր: Դաշտի միջով հոսում են Սաւուղ-Սու, Աշանգօլա և Նազարաւա գետերը, որոնք միանալով, կազմում են Բերկրիի գետը և գնում թափում են Վանի լճի մէջ: Այս դաշտը ամառները կորած է լինում խոտի և բուսականութեան մէջ, ուր իջնում են քուրդ թափառական ցեղերն իրենց օրաններով:

Այս դաշտի վրա հնում գոյութիւն ունէին բազմաթիւ հայ գիւղեր, որոնց աւերակները մինչև այժմ էլ մնում են: Էփրիկեանի բնաշխարհիկ բառարանի մէջ այդ գիւղերի թիւը յիշւած է 300: Բերկրիի գաւառի հայերի մէջ այժմ էլ պատմուած է մի աւանդութիւն, որը տալիս է մի որոշ գաղափար այդ դաշտի անցեալի մասին:

Արաղայի դաշտն իր բազմաթիւ գիւղերով պատկանում էր Եգիդի Քօք աղային, — պատմում է աւանդութիւնը, — մի անգամ Քօք աղան որոշեց զուրս գալ այցելութեան իր գիւղերին և իւրաքանչիւր գիւղում մնաց մէկ օր. երբ նա վերջացրեց իր այցելութիւնները և տուն դարձաւ, նկատեց, որ այդ շրջագայութիւնը տեւել էր ուղիղ մէկ տարի. այդպիսով Քօք աղան իմացաւ, որ իր գիւղերի թիւը հասնում է 360-ի:<sup>1)</sup>

Որքան էլ չսպասագայութիւններով հիւսւած, բայց և այնպէս

1) Ժողովրդի մէջ տարին հաշուած են 360 օր:



այդ աւանդութիւնը վկայում է այն, որ այդ դաշտը երբեքն ունէր մի ծաղկած շրջան և բազմաթիւ գիւղեր տալիս էին նրան կենդանութիւն: Աբաղայի դաշտը, գտնւելով Մակի խանութեան սահմանին կից, կնթակայ է եղիլ թափառական քուրդ ցեղերի անվերջ ասպատակութիւններին. վրա է հասել 1828 թւի ուսուտաճկական պատերազմը իր սարսափներով և շատ ծաղկած շրջանների թւում գատարկւել և ամայացել է նաև այդ դաշտը:

Այժմ ամբողջ Բերկրի գաւառում կան 77 մեծ և մանր գիւղեր, որոնցից հայարնակ են միմիայն 26-ը: Այս 77 գիւղերից 62-ը պատկանում են քուրդ աղաներին, որոնց ցուցակը բերում ենք առանձին<sup>2)</sup>. այդ աղաներից գլխաւորներն են՝ Թօռուն կոչւող Ալի աղայի երկու աղաները՝ Կոփ Մամադ բէկը, որն ապրում է հայարնակ Սաչան գիւղում և Մուստաֆա բէկը, որն ապրում է Նազարաւա գիւղում: Այս գաւառի ժողովրդի իրեք քառորդ մասը, համարեա, մարարա է, այսինքն սեփական հողից զուրկ և աղայի հողի վրա աշխատող: Աղայի քմահաճոյքին կնթակայ, այդ ժողովուրդը իր գոյութիւնը պահպանելու համար միմիայն մի միջոց է գտել. նա ծայրայեղ շափերի է հասցրել ֆիզիքական աշխատանքը և չարաքաշութիւնը և շնորհիւ դրա, նա հասել է գրաստին փոխարինելու մեծ աստիճանին, մի երևոյթ, որը ընդհանրացած կը տեսնէք մարդկային իրաւագրկութեան այդ երկրի շատ կողմերում:

Բերկրի գաւառի Սաչան գիւղից մինչև Բայազետ քաղաքը կը լինի 40-45 վերստ տարածութիւն. Սաչան գիւղից հայերը 4 փութ նաւա շալակած մի օրում Բայազետից գնում են Սաչան: ահա ձեզ մի նմուշ այդ չարքաշ ժողովրդի կեանքից:

Գաւառի կենտրոնավայր համարւում է Բերկրի հին բերդաքաղաքը, այժմ մի սոսկ աւան, որը գտնւում է Վանի լճից զէպի հիւսիս-արևելք, մօտաւորապէս 25 վերստ հեռաւորութեան վրա. Այստեղ այժմ ապրում են ընդամենը 25 տուն հայեր, մինչդեռ մի ժամանակ 250 տնից աւելի էր հայերի թիւը:

Հայարնակ գիւղերից նշանաւոր են.

Գործուտը, որն ունի 100 տուն բնակիչ:

Սաչանը, որն ունի 70 տուն բնակիչ:

Այս երկու գիւղերը իրենց շրջանի ամենալաւ գիւղերն են. նրանք ունին ընդարձակ բերրի հողեր և բաւականաչափ աշխատաւոր կենդանիներ, որոնց շնորհիւ չարքաշ խաչնիցին ոչ միայն իր պէտքերի, այլ և վաճառքի համար մշակում է մեծաքանակ հացահատիկներ. Սաչէնում կան ընտանիքներ, որ ունին 30-40 տաւար և 100-150 ոչխար, բայց ի հարկէ, սրանք եղակի երևոյթներ են ծայրայեղ չքաւորութեան ուղեկանոսի մէջ:

Վիճակագիր Բերկրի-Աբաղա գաւառի հայ ժողովրդի

№	Գ Ի Ի Ղ Ե Ր Ը	Հայ տուն 1)	Մանկ. տուն 1)
1	Կորտկան վերին . . . . .	25	20
2	Սալախանէ . . . . .	7	20
3	Դէրօն . . . . .	30	25
4	Սըմբ . . . . .	10	35
5	Աջէկեռան . . . . .	30	25
6	Աւասօր . . . . .	6	30
7	Սան . . . . .	10	15
8	Ղայմազ . . . . .	30	20
9	Սաչան . . . . .	70	10
10	Նաղարավէ ներքին . . . . .	50	
11	Ալիքալէն . . . . .	2	
12	Եկմալ . . . . .	4	5
13	Չըրխու . . . . .	7	
14	Բազիզ աղէն . . . . .	6	30
15	Գօնգուրմէ . . . . .	8	
16	Կանէգաւան . . . . .	20	
17	Թիբմէն վերին . . . . .	2	
18	Քիապապիկ . . . . .	35	
19	Սուրբ-Թաթոս . . . . .	30	
20	Անգիւղակ . . . . .	60	
21	Գործութ . . . . .	100	
22	Քեօշկ . . . . .	5	
23	Անձաւ . . . . .	8	
24	Առեղ . . . . .	15	
25	Պատիկ-գեղ . . . . .	70	
26	Բերկրի . . . . .	25	
		665	

1) Այս տեղեկութիւնները կազմել է Կ. Շիրին Յակոբեանը:

### ԱՐՃԷՇԻ ԳԱԽԱՌ

Վանի լճի հիւսիս-արեւելեան ծովախորշի հիւսիսային ափից սկսած մինչև Ալազաղի լեռնաշղթան, սահմանակից հերկրիի գաւառին, տարածուած է Արճէշի գաւառը կամ պատմական Քաջ-բերունիքը, որը Վասպուրականի գաւառների մէջ իր բարեբերութիւնով Վան-Տօսպից յետոյ առաջին տեղն է բռնում:

Գաւառի հիւսիսային մասը լեռնոտէ, իսկ հարաւայինը՝ դաշտային. դաշտային է առանձնապէս այն մասը, որը տարածուած է անմիջապէս ծովախորշի ափերին: Ծովափնեայ տափարակներից մէկի վրա, որը երեք կողմերից բլուրներով պատած 10 վերստի չափ երկարութիւնն և 8 վերստի չափ լայնութիւնն ունեցող մի սիրուն գաշտ է, գտնուած է գաւառի կենտրոնավայր Ականց քաղաքի մի շարք գիւղերով. այդ դաշտում կլիման տաք է, հողը բարեբեր, ջուրը առատ, որոնց շնորհիւ այդ դաշտը արտադրում է առատ հացահատիկներ, խաղողի լաւ տեսակներ, գանապան ծառապտուղներ և այլ տեսակի բերքեր:

Այդ փոքրիկ դաշտի մակերևոյթը ոլորապտոյտ ակօսելով ծովախորշն են թափուած Գալի-չայ, Օրօրան և Իրիշատ փոքրիկ գետերը, որոնց ճանապարհի վրա օաղիսի պէս ընկած ծառապարզ գիւղերը դաշտին տալիս են մի աւելի ևս գեղեցիկ տեսք: Չը լինէր միշտ քանդող, աւերող ձեռքը, այս փոքրիկ դաշտից մի դրախտ կարելի էր նստեցծել: Այսպիսի գեղեցիկ դաշտ հանդիսանում է նաև դէպի արևմուտք տարածուող ծովափը, ուր ընկած են գաւառի մի քանի այլ գիւղեր, բայց մարդկային ձեռքը այս տեղերում քանդել է նոյն իսկ բնութեան տւած զարդերը: 1896 թւի սոսկալի կոտորածից անցել է ամբողջ 13 տարի. բուսական աշխարհը այդտեղ 13 անգամ կեանք է փոխել, բայց այդ արեան հովիտներից մինչև այժմ էլ արեան հոտ է փչում: Այդ կոտորածը, որպէս մի աւերիչ հողմ, եկել անցել է ամբողջ գաւառի վրայով և չորս կողմը մահ տարածել: Այս գաւառի շատ գիւղերը, ահա մինչև այժմ էլ իրբև աւերակի կոյտեր այդ չինգիսիսանեան օրերի ուրն են ուղբում: Սակայն այդ մասին մի այլ տեղ:

Երկրագործութիւնից և այգեգործութիւնից բացի, Արճէշի այս սիրուն ծովափնեայ դաշտի գիւղերն ունին և մի այլ շահաւէտ պարապմունք. այդ տառեխ կոչւած ձկան ձկնորսութիւնն է,

որ աւալիս է արտահանութեան համար առատ բերք. ձկնորսութեամբ պարապում են գլխաւորապէս Օրօրան, Սարկէն, Խուրմակ և Իրիշատ գիւղերը:

Գաւառի մէջ նշանաւոր է Զիլանաձորը իր հմայիչ բնութիւնով և ձմարային ջերմութիւններով. այս ձորում կայ նաև պղնձի հանք, որը սակայն չի շահագործուած:

Ինչպէս տեսանք, Արճէշի կենտրոնավայրն է Ականց քաղաքը, բայց Ականցից առաջ այս շրջանում եղել է մի այլ աւելի մեծ քաղաք, որի անունն այսօր կրում է իր վրա գաւառը:

Ծովախորշի ափին մինչև այժմ էլ մնում են նախկին Արճէշ քաղաքի աւերակները, որի մեծ մասը ջրի տակն է անցել. դա եղել է նշանաւոր բերդաքաղաք իր փառաւոր անցեալով. այդ են վկայում նրա նախկին շէնքերի բեկորները և նրա շրջակայքում գտնուող բեկոսգիր արձանագրութիւնները: Վանի լիճը հսում իր ափերի վրա կառուցւած ունէր եօթ նշանաւոր բերդեր. դրանք էին՝ Վանի, Ոստանի, Գաւառանի, Խլաթի և Արծկէի բերդերը. ահա այդ եօթ բերդերից մէկն էր Արճէշի բերդը<sup>1)</sup> իր բերդաքաղաքով, բայց անընդհատ պատերազմները մի կողմից, Վանի լճի մակերևոյթի աստիճանական բարձրացումը միւս՝ առաջ բերին այն, որ Արճէշ բերդաքաղաքը աւերւեց, ջրի տակն անցաւ և նրա տեղ հիմնեց այժմեան Ականց քաղաքը:

Արճէշի գաւառն ունի 122 գիւղ, որոնցից 44-ը հայարնակ են, սակայն զուտ հայարնակ գիւղեր հազւագիւտ են. բոլոր գիւղերում համարեա հայերի հետ խառն ապրում են քրդեր. բացի այդ, շատ գիւղերում պատահում են ընդամենը 1-5 տուն հայեր, ինչպէս այդ երևում է սրան կցած գաւառացուցակից. գիւղերի այս օրինակ այլտեսուած առաջ բերեց 1896 թւի կոտորածը իր սարսափներով:

Արճէշի հարուստ գիւղերից էր Բանոնը, որի ժողովուրդը խաբերայութեամբ տարւեց Մոյ, Կասրմ աղաչի գիւղը և այնտեղ կողոպտեց ու կոտորեց:

Գանձակն ունէր 42 տուն բնակիչ. դրանցից մնացին մի-միայն 2 տուն, մնացեալները կոտորւեցին ու զաղթեցին: Այս

1) Այս բերդերից մէկի անունը յայտնի չէ:

գիւղում կոտորուցին նաև այստեղ փախած շատ բնափախներ Կե-  
նարորի վանքից, Ծայծակ և Արմիզոն գիւղերից:

Ծայծակն ունէր 40 տուն բնակիչ, զրանցից 37-ը գաղթեցին:  
Ջուղզեանն ունէր 60 տուն բնակիչ, 56-ը գաղթեցին:

Ախարաֆը մի այգեկարգ և ծառազարդ գիւղ էր. սրա ժո-  
ղովուրդը ամբողջապէս կոտորուց և գաղթեց. գիւղն աւերեցին և  
այգիները ոչնչացրին:

Արմիզոնն ունէր 43 տուն բնակիչ, զրանցից և ոչ մի տուն  
չը մնաց:

Յարութիւնն ունէր 21 տուն, այժմ մնում է 7-ը:

Փայխները 34 տուն էր, այժմ մնում է 16-ը:

Սաչերովը 15 տուն էր, այժմ մնում է 1-ը:

Այս վիճակին հնթարկւած գիւղերից է Սոջալուն, որտեղ  
այժմ մնում է 4 տուն չքաւոր քաղցած հայեր. այդ գիւղի  
չըջակայքում կայ մի այլ, որի մասին պատմում են մի եղերնա-  
կան անցք.

1904 թւին 15 զինւած երիտասարդների մի խումբ ոմն  
Երկաթ անունով մէկի առաջնորդութեամբ բրդերից հալածելով,  
պատասխարան գտաւ այդ այլի մէջ. այլը պաշարուց հազարաւոր  
բրդերի բազմութեամբ. երեք օրւայ յամառ գիմազրութիւնից  
յետոյ պաշարւածներն այլը ներսից պայթեցրին և իրենք մնա-  
ցին քարակոյտների տակ: Այսպիսի դրամաներով լիքն են Տաճ-  
կաստանի հայարնակ գաւառները:

Արճէշի գաւառում, իբրև վայրագ ցեղ, յայտնի է Հայդա-  
րանցիների ցեղը. սրա ցեղապետն է Էմին փաշան, որի անւան  
հետ անբաժան կերպով կապւած են այս շրջանում կատարւած  
բոլոր բարբարոսութիւններն ու վայրագութիւնները:

Վիճակագիր Արճէշի գաւառի հայ ժողովրդի

№	ԳԻՒՂԵՐԸ	1		2	
		Տուն	Շունչ	Տուն	Արական շունչ
1	Բլուրմակ . . .	38		38	135
2	Սարկէն . . .	23		23	80
3	Իրիշատ . . .	25		18	73
4	Օրօրան . . .	17		17	58
5	Փափշկէն . . .	6		5	18
6	Մաճառս . . .	10		9	27
7	Ջիրգաշէն . . .	6		4	15
8	Հասպնակ . . .	14		10	38
9	Յարութիւն . . .	15		10	35
10	Սոսկուն . . .	69	440	65	247
11	Սոջալու . . .	8	52	4	14
12	Աղսաֆ . . .	5	36	8	22
13	Արձաւարի վանք . . .	14	89	7	25
14	Փայ . . .	8	59	5	27
15	Գեօղ ներքին . . .	10	65	15	64
16	Գեօղ վերին . . .	9	87	12	50
17	Քալաքիւ . . .	2	19	6	20
18	Կտրած քար . . .	28	194	28	99
19	Աղսրաֆ . . .	21	167	13	42
20	Գանձակ . . .	12	81	15	52
21	Ջուղզեան . . .			6	14
22	Ծայծակ . . .			5	8
23	Բանոն . . .			5	18
24	Փայխներ . . .			3	7
25	Մոյ . . .			15	58
26	Բերգաղ . . .			14	29

1) Այս տեղեկութիւնները կազմել է պ. Արամ Սաֆրաստեանը:

2) Այս տեղեկութիւնները բաղել ենք Ականցի ընթերցարանի մի տեղե-  
կագրից, որը կազմւած էր յատկապէս հայ ժողովրդի տրական սեռի թիւը ստու-  
գելու նպատակով Երեցփոխանական ժողովի անգամ ընտրելու համար:



### ԱԼՋԱԽԱԶԻ ԳԱԽԱՌ

Վանի լճի հիւսիսային հեռուոր ափի վրա բարձրանում է համաչափ կողերով և կերտուն կատարով մի վիթխարի գագաթ. դա գեղեցիկ Սիփանն է, որի եղերազիծը շատ յիշեցնում է Արարատը: Սիփանը հրաբխային սար է, մէն-մենակ ցլւած երկնքի կապուտակ ֆօսի վրա. նրա մասսիվը այնքան գեղեցիկ է և այնքան բեկիէֆ, որ ամենահեռուոր տեղից անգամ նրա վրա է դառնում մարդու հայեացքը:

Ահա այս լեռան լանջերից մինչև լճի ափերը տարածւող հարաւային լայն փէշերի վրա ձգւած է Ալջաւազի գաւառը կամ պատմական Սոսիստունիքը, սահմաններ ունենալով Արճէշի, Մանազկերտի, Բուլանդի և Խլաթի գաւառները:

Գաւառը մեծ մասամբ լեռնային է, ծովեզրեայ մասերում միայն տափարակ: Այստեղ օզը հրաշալի է, հողը պարարտուր մշակուած են ամենաընտիր հացահատիկներ և որոնք բաւականաչափ արտահանւում են Վան: Յորենի յատկութիւնով վաւարականի գաւառների մէջ Ալջաւազը բնում է առաջին տեղը: Դաշտային մի քանի մասերում կլիմայի տարութեան շնորհիւ աճում են խաղողի այգիներ և պտղատու պարտէզներ. պտուղներից նշանաւոր են ծիրանը, խնձորը և ընկոյզը:

### Վիճակագիր Ալջաւազի գաւառի հայ ժողովրդի

№	Գ Ի Ի Ղ Ե Ր Ը	Տուն	Շ Ո Ի Ն Չ		
			Արական	Բզական	Բոլորը
1	Արձկե . . . . .	81	271	250	521
2	Առէն . . . . .	102	348	278	626
3	Նորշէն . . . . .	24	86	74	160
4	Էգէձոր . . . . .	18	73	85	158
5	Ձիրաքլու . . . . .	36	152	145	297
6	Քազոխ . . . . .	26	95	87	182
7	Սիփաններ . . . . .	78	270	264	534
8	Փեշնազումեր . . . . .	18	78	85	163
9	Սոսանց . . . . .	40	169	165	334
10	Ղուզէլ . . . . .	20	55	65	120
11	Անուշ-աղբիւր . . . . .	12	30	38	68
12	Նորշնջուղ . . . . .	37	143	162	305
13	Վիճկացուկ . . . . .	26	87	74	161
14	Բարկաթ . . . . .	12	61	101	162
15	Կոճերեր . . . . .	35	162	149	311
16	Կարարէշիշ . . . . .	38	144	127	271
17	Արճրա . . . . .	74	247	230	477
18	Անջկուս . . . . .	53	203	210	413
19	Ուռու . . . . .	6	14	14	28
20	Գաւըքոյ . . . . .	4	12	15	27
21	Տանբուս . . . . .	8	18	29	47
22	Սորերով . . . . .	3	9	10	19
23	Օրանկաշի . . . . .	10	33	21	54
		761	2760	2678	5438

1) Այս տեղեկութիւնները կազմել է պ. Գրիգոր Կեղեանը:

### Ա Ր Ծ Կ Է

Այլաւազի վարչական կենտրոնավայրը համարուած է Արձկէն, որ նստում է գաւառի գալմաղամը: Սա լճի ափին ընկած գեղեցիկ դիրք ունեցող, պարտէզներով և պտղատու ծառերով զարդարւած մի աւան է: Հնում Արձկէն նշանաւոր բերդաքաղաք էր. մինչև այժմ էլ ծովափի վրա մնում են հին բերդի պարիսպները, որոնք ցոյց են տալիս այդ միջավայրի երբեմն ծաղկած գրութիւնը:

Արձկէն առաջ ունէր բաւականաչափ հայ ժողովուրդ. այժմ շատ քիչ է նրա թիւը, ընդամենը 81 ընտանիք 521 շնչով, որից 271-ը արական սեռի, իսկ 250-ը իգական:

Այլաւազի գաւառում հաշւում են 44 գիւղ, որի 23-ը հայաբնակ են: Հայաբնակ գիւղերից նշանաւոր են.

Առէնը, որ ունի 120 տուն բնակիչ:

Վերին և ներքին Սիփանները, որ միասին ունին 78 տուն բնակիչ:

Պաղոզի այգիներով և պտղատու պարտէզներով յայտնի են Սիփանները:

Նոյնպիսի գիւղ է նաև Կոճերը, որը գտնւելով լճի ափին, միևնոյն ժամանակ համարուած է այդ շրջանի նաւահանգիստը:

Ինչպէս միւս գաւառները, այնպէս էլ Այլաւազը 1896 թւի կոտորածների ժամանակ վայրագութիւնների աստղարկ գարծաւ, թէև այստեղ բարբարոսութիւնները այնպիսի չափերի չը հասան, ինչպէս Արձէշի գաւառում, բայց և այնպէս, շատ հայեր թողեցին իրենց աւերւած և կողոպուած տները և գաղթեցին Կովկաս ու այլ տեղեր:

Բարբարոսութիւնների գլխաւոր ղեկավար հանդիսացաւ Հայգարանցիների երկրորդ ցեղապետը, վայրագ Հուսէին փաշան, որը կոտորածից յետոյ գրաւեց հայերի պատկան ամենալաւ հողերը, շինեց մի քանի գիւղերում սեփական տներ և տէր գարծաւ ահագին շրջանին. սահմանադրութիւնից յետոյ հայերը իրենց հողերի մի մասը յետ ստացան, իսկ Կոճեր գիւղում շինւած Հուսէին փաշայի տունը ընդ հայերը քանդեցին:

### ՀԱՅՈՅ ՉՈՐԻ ՔԱԽԱՌ

Վան-Տօսպից դէպի հարաւ երկշարք բլուրների և լեռների մէջ, աւելի քան 30 վերստ տարածութեան վրա ձգւում է մի գեղեցիկ ձոր. այդ ձորը մի քանի տեղերում շատ լայնանում է. այնքան լայնանում, որ կորցնելով ձորի տեսքը, փոխարկւում է գաշտի. աւելի շուտ դա մի երկարուկ հովիտ է կամ հովիտների մի շարք, որոնց առատօրէն ստոգելով, ոլորապտոյտ գնում թափւում է ծովախորշը Սօշար գետը:

Այդ հովիտը կամ հովիտների շարքը նրա երկու կողմերում ձգւող լեռների բարձրութիւնից մի շատ գեղեցիկ տեսք ունի. տեղ-տեղ նա պտոյաներ է գործում, նորանոր տեսարաններ յաջորդում են միմեանց. այդ պտոյաները չափելով առաջանում է լուրի Սօշարն իբրև մի ժապուէն և այդ բոլորը հանդուսում են կանաչ բուսականութեան մէջ: Վասպուրականը եթէ ունի լաւ տեսարաններ, զրանցից մէկն է Հայոց Չորի տեսքը նրան եղերագծող բլուրների և լեռների վրայից:

Ահա այս հովիտների վրա և նրա պատնէշ կազմող լեռների և բլուրների լանջերում ընկած է Վասպուրականի բարերեր գաւառներից մէկը՝ Հայոց Չորը:

Լոկ գեղեցիկութիւնը և բանաստեղծական գիրքը չէ Հայոց Չորի առանձնայատկութիւն կազմողը, ոչ. նրա մեծ արժանատութիւնը նրա պտղաբերութեան մէջն է. Սօշարի հովիտը տալիս է հացահատիկների ընտիր տեսակներ, այդ տեղի գլխաւոր պարագմունքը հողագործութիւնն է:

Հայոց Չորը հարուստ է նաև սաւանդակ ջրերով, որոնք բխում են նրա լեռնալանջերից և ձորալանջերից. այդ շրջանից սկիզբն է առնում Շամիրամի առուն: Նրա սկունքները գտնւում են Վերին Պժնկերա գիւղի շրջակայքում, որտեղից սկիզբն առնելով կարում է Ներքին Պժնկերտը, ապա խաչագիւղ ջրանցքով կարում անցնում է Սօշար գետը և ընթացքը դարձնելով արեւմուտք, հասում է դէպի Արտամէղ:

Հայոց Չորում կան 31 հայաբնակ գիւղեր, որոնցում խառն ապրում են քրդեր. այդ շրջանում քրդերը եկան հաստատեցին գլխաւորապէս 1896 թւի կոտորածներից յետոյ: Այստեղի հայերը յայտնի են իբրև լաւ երկրագործներ. հողերի առատութեամբ և

հացահատիկների բերքով աչքի են ընկնում Գերբը, Իշխանի Գոմը և Կրզղաշը: Այս լաւ գիւղերի տնտեսականի մասին զաղափար կազմելու համար բերինք մի փոքրիկ հաշիւ: Կրզղաշն ունի 44 տուն բնակիչ. 1908 թւին գիւղը վճարել է տասանորդ տուրք 200 չափ կամ 700 փութ ցորեն ու գարի և 46 ոսկի կամ մօտ 400 բուրլի դրամ խոտի համար. եթէ գիւղը վճարել է 800 փութ տասանորդ տուրք, հաշուելով տուրքը 8-ից մէկը<sup>1)</sup>, կը նշանակէ գիւղին մնացել է 5,600 փութ հացահատիկ: Բաժանելով այդ քանակութիւնը ընտանիքների թւի վրա, կը տեսնենք, որ միջին թւով իւրաքանչիւր ընտանիք ստացել է բերք 128 փութ հացահատիկ. մի երկիր, ուր կապիտալը դեռ մուտք չի գործել, ուր դեռ եւս բնասնտեսութիւնն է տիրում, այդքան բերքով վճարել միւս գրամական տուրքերը, հոգալ ապրուստի միւս կարիքներն անկարելի է. այդ պատճառով ունեւոր գիւղերում անգամ, այս երկրի մէջ չքաւորութիւնը կատարեալ է: Կրզղաշում միզ հիւրընկալեց գիւղի ամենաունեւոր ընտանիքը. նա ունէր երկու յարկանի մեծ տուն, սակայն այդ մեծ տան մէջ էլ մենք նկատեցինք երկրի տնտեսական աննախանձելի վիճակը: Բայց կան շատ գիւղեր, որոնք հոգ էլ չունին և նրանց հողերը անցել են զանազան կեղեքիչների ձեռքը: Օրինակ, Հնդստան գիւղի հողերի կէսը պատկանում է վանում բազմաձ աղաներին. էրէրմի գիւղն ունի 700 գութան հող. դրանից 430 գութանը պատկանում է աղաներին: Առեղ գիւղի 1,200 գութան հողից ժողովրդին պատկանում է միմիայն 200-ը. մնացեալ 1000 գութանը դարձեալ աղաներինն է. Ոչխրանց գիւղում ոչ մի հողատէր գիւղացի չը կայ. բոլոր գիւղացիները այտեղ մարաբա են: Թէ ինչ կը լինի հողագուրկ գիւղերի ժողովրդի դրութիւնը, այդ արդէն հասկանալի է: Գոյութիւն ունեցող կարգերը ահա ստեղծել են մի այնպիսի դրութիւն, որ հողի առատ տեղում էլ խաղաղ երգրագործ ժողովուրդը հողագուրկ է և չքաւոր:

Հայոց Չորի գիւղերից է Սարականցը, մի գեղեցիկ ծառազարդ գիւղ, ընկած ծովափին, Սոշար գետի խառնուրդի մօտ մի սիրուն դիրքի վրա. շնորհիւ այդ դիրքի, գիւղն ազատ էր մնացել լծի ողորումից, մինչդեռ գետախառնուրդի մօտ ահապին տարա-

1) Տաճկաստանում տասանորդ տուրքը վերցնում են բերքով 8-ից 1-ը:

Վիճակագիր Հայոց Չորի գաւառի հայ ժողովրդի 1)						
№	Գիւղերը	Հ Ա Յ				Ման. մեղ. տուն
		Տուն	Արական	Իգական	Բոլորը	
1	Տօնի 2)	13	60	60	120	31
2	Նոր-գիւղ	90	280	250	530	2
3	Առեղ	21	78	72	150	7
4	Հաւշասոր 2)					21
5	Հնդստան	36	99	96	195	5
6	Ուրթուկ	42	125	122	247	1
7	Խէք	29	78	70	148	
8	Ասուածաշէն	47	102	95	197	46
9	Արաղենց	38	86	101	187	9
10	Անկշտանց	60	140	165	305	4
11	Էրէրմի	75	155	154	309	
12	Կրզղի	32	129	112	241	11
13	Ոչխրանց	8	23	26	49	5
14	Պժնկերա վեր.	6	26	16	42	43
15	Սոսպ	43	108	115	223	6
16	Հիրճ	30	78	77	155	60
17	Կրզղաշ	44	119	118	237	1
18	Գերծ	85	246	245	491	8
19	Պլլատնց	58	170	160	230	7
20	Աթանանց	61	159	149	308	
21	Մուլք	5	11	12	23	30
22	Սիպտակ վանք	16	53	61	114	
23	Սարականց	34	82	91	173	
24	Թրքաշէն	13	28	25	53	7
25	Մարքս	25	73	78	151	
26	Կեմ	98	240	227	467	
27	Անգղ	105	249	243	492	
28	Մաշտակ	61	170	149	319	7
29	Իշխանի գոմ	52	170	149	319	
30	Քեօշք	35	77	104	181	
31	Ս. Վարդան	22	55	50	105	
32	Սօրգոմ	57	168	186	354	
		1341	3637	3578	7215	

1) Այս տեղեկութիւնները կազմել է պ. Շիրին Յակոբեանը:  
2) Այս երկու գիւղերում ապրում են ասորիներ:

ձուլի մեջ վրա գիւղի հողերը ջուրը ծածկել էր<sup>1)</sup>։ Այս գիւղում կար երիտասարդների մի շրջան, որը հրատարակում էր «Ծովակ» անունով մի փոքրիկ խմորատիպ թերթ, որի մէջ տեղ էին գտնում գաւառի ուսումնասիրութեան վերաբերեալ նիւթեր և փոքրիկ քարտէզներ։ Սրանք մի մի լուսատու ցուբեր էին անթափանց խաւարի մէջ։

Հայոց Ջորը հանդիտանում է հին աւանդութիւնների մի վայր. շատ աւանդութիւններ, որոնք մինչև այժմ էլ գոյութիւն ունին այդ շրջանում, կապւած են նրա հնագարեան անցքերի և տեղերի հետ։

Այսպէս, աւանդաբար պատմում են, որ Հայկ նահապետը իր ընտանիքով ապրում էր Հայոց Ջորում։

Ասուածաշէն գիւղից դէպի արևելք գտնում է մի հին աւերակ բերդ. այդ բերդը կոչւում է Հայկայ բերդ։

Անգղ գիւղի մօտ կայ Ասուածածին անունով մի վանք. այդ վանքը իր շինել է Թադէոս առաքեալը, երբ նա առաջին անգամ յայտնւել է այդ կողմերում քրիստոնէութիւն քարոզելու համար։

### ՄՈՇԱԲԻ ԳԱՒԱՌ

Արևելեան կողմից Վան-Տօսպին և Հայոց Ջորին սահմանափակ է Մօշար գաւառը։

Այստեղ երկիրը մասամբ դաշտային է և մասամբ լեռնային, իսկ սահմանների մօտ բլուրովին լեռնային է։ Գաւառի ամբողջ երկարութեամբ հարաւ-արևելեան կողմից ձգւում է Չուխ կոչւող լեռնաշղթան, որի լանջերից բխում են բազմաթիւ սառնորակ աղբիւրներ. այդ աղբիւրներից գոյտնում է Մօշար գետը, որը սլաքապտոյտ հոսելով, ոտոգում է գաւառի մի շարք հովիտներ և ապա

1) Այստեղ մենք ճանապարհորդում էինք ոտով. ընտրելով աւելի կարճ ճանապարհ ստիպւած եղանք կիսով չափ մերկանալ, ձգել ուսերիս, կոշիկներս, և հագոտս և տեղացի մի երիտասարդի առաջնորդութեամբ կտրել ու անցնել նախ գետը և ապա ծովի փոխւած անողին մարգագետինները։

մտնում Հայոց Ջորը։ Անա այս գետի անունով կոչւում է նաև գաւառը։

Մօշարի գաւառը հարուստ է բերրի հողերով, բայց նա աւելի հարուստ է արօտատեղերով. չը նայած դրան, անասնապահութիւնը քիչ չափով է զարգացած և ժողովրդի անտեսութիւնը այստեղ շատ ընկած է։

Գաւառի կենտրոնում Մօշար գետի վրա գտնւում է Մօշարի բերդը, շինւած մի անառիկ ժայռոտ տեղում. այդ բերդում մինչև անցեալ դարի 50-ական թւականները, այսինքն մինչև տաճիկների տիրապետութիւնը, ապրում էին անկախ քուրդ բէկեր. բերդաքաղաքում իրը կային 1,500 տուն բնակիչ, որի 1,000 տունը հայեր էին<sup>1)</sup>։ Թէ որքան ճիշտ են այս թւերը, ստուգել դժւար է, բայց անհերքելի է այն փաստը, որ այնտեղ առաջ եղել են բազմաթիւ հայեր, մինչդեռ այժմ ոչ մի առն հայ չէք գտնի այդտեղ։ Բերդաքաղաք իր նախկին մտքով գոյութիւն չունի. ընդամենը մի քանի տասնեակ քուրդ ընտանիքներ կազմում են նախկին բերդաքաղաքի այժմեան բնակչութիւնը։

Մօշարի գաւառում այժմ կան 11 հայաբնակ գիւղեր, որոնցում հայերի հետ խառն ապրում են նաև քրդեր, իսկ մի քանիստում ապրող հայերի թիւը այնքան աննշան է, որ նրանք միայն անունով են հայաբնակ. քրդաբնակ գիւղերի թիւը այստեղ հասնում է 40-ի։

Հայ սղգաբնակութեան թիւը այս շրջանում այժմ շատ աննշան է. մեր ունեցած տեղեկութիւններով այդ շրջանում ապրում են ընդամենը 180 տուն հայեր, մինչդեռ մի երկու-երեք տասնեակ տարիներ առաջ այդտեղ հայ ժողովրդի թիւը հաշւում էին հազարներով։ Ո՛ւր գնաց, ի՞նչ եղաւ այդ բազմութիւնը. մի շատ սովորական հարց, որին, հետևում է շատ սովորական պատասխան Մօշարի գաւառն ընկած է հայաբնակ կենտրոնից դուրս. նա սահմանակից է Մակի խանութեանը, նա շրջապատւած է քուրդ վայրագ ցեղերով. այդտեղ հնձել է մանգաղը անընդհատ տասնեակ տարիների ընթացքում. այդտեղով եկել անցել է 1896 թի տւերիչ փոթորիկը և այս խժոգժութիւնների ձեռքից պլուխ

1) Տես «Բնաշխարհիկ բոսորան» Էփրիկեանի հատար ք. երես. 218.



է վերցրել խաղաղ, անզէն, անպաշտպան հայ ժողովուրդը և անցել գնացել:

Այս շրջանի հայաբնակ գիւղերից ամենամեծն է Քոէլը, որն ունի այժմ 60 տուն բնակիչ: 1896 թիւ կոտորածի ժամանակ այս գիւղում սպանւեցին 39 մարդ և վիրաւորուեցին 11 մարդ: Թէ որքան մարդ մեռաւ վախից ու զրկանքներից և քանիսը գաղթեցին ու գնացին, այդ չը գիտենք: Բայց որ իւրաքանչիւր այդպիսի մի փոթորիկ ազգաբնակչութեան թիւը իջեցնում էր կէսի, այդ փաստ է և այդ փաստերն են, որ գալիս են հնարաւոր դարձնելու մի գաւառի, մի շրջանի կատարեալ ամայացումը:

Վիճակագիր Առշարի գաւառի հայ ժողովրդի

№	Պ Ի Ի Ղ Ե Ր Ը	Հայ տուն 1)	Մանկ. տուն 1)
1	Սալխանա	20	20
2	Ձէնիս	25	15
3	Քիլիսա	3	
4	Պըհանա	2	
5	Բօթ	1	
6	Քոէլ	60	4
7	Հուրթուկ	40	
8	Բակագեաղուկ	8	62
9	Կանթվան	12	10
10	Կասրիկ	6	60
11	Հոգեաց վանք	2	
		179	

1) Այս տեղեկութիւնները կազմել է պ. Ներսէս Փոխանեանը:

ԳԵԱԻԱՇԻ ԳԱԻԱՌ

Վանի լճի ափերն առհասարակ շատ են լեռնոտ, բայց աւելի լեռնոտ են նրա հարաւային ափերը. այդտեղ հորիզոնի վրա գծագրւում է լեռների մի երկար շարք, իր բազմաթիւ կատարներով, որն արեւմտեան ուղղութեամբ, իբրև մի ամրակուս պատնէշ, ուղիղ գծով գնում կորչում է հեռաւոր մշուշի մէջ. այդպէս է Քուրդաստանի լեռնաշղթայի տեսքը հեռաւոր տարածութիւնից, առաջին հայեացքից. սակայն, երբ մօտենում էք այդ լեռնաշղթային, ոտք էք զնում նրա լանջերի և կողերի վրա, ձեր յետն էք թողնում նրա երկրորդական կատարները, գնալով պատկերը փոխւում է, կատարները բաժան-բաժան եղած յետ ու յետ են փախչում, լեռնաշղթան հարիւրաւոր կողմերից ճիւղեր է արձակում և փոքրիկ շղթաներ ու ձորեր, լեռներ, լեռնադաշտեր ու հովիտներ յաջորդում են միմեանց իբրև մի ժխոր:

Ահա ընդհանուր առմամբ այն կազմութիւնը, ուր կողք կողքի ընկած են Գեաւաշ, Կարճկան, Շատախ, Նորդուզ, Մօկս, և Կառկառ գաւառները, որոնք միմեացից կտրւած են երկրորդական լեռնաշղթաներով:

Չուխի լեռներից սկսած մի լեռնաշղթայ Հայոց Չորի ամբողջ հարաւային սահմանը գծելով, գնում բախւում է պատմական Արտօս լեռան կատարին, որն, իբրև մի հսկայ, դուրս է ցցւել ծովախորշի հարաւային ափերի վրա. սպա նոյն շղթան Արտօսի միւս կողմերից նոր սկիզբն առնելով, տարածւում է դէպի հարաւարեւմուտք, ուր կիսաշրջան կազմելով, թեքւում է հիւսիս և ծովափի վրա վերջանում է Կապուտ-կոզ կամ Ընձաքեարս գագաթով: Իսկ Կապուտ-կոզը իր փէշերը ներս հրելով լճի մէջ, ձեացրել է մի թերակղզի, որը վերջանում է Դաւարօյին կոչւող հրանդանով: Ահա այս երկրորդ շղթայի կենտրոնում բարձրանում է 11,400 ոտնաչափ բարձրութիւն ունեցող մի կատար. դա Եղերովն է, որը հանդիսանում է Արտօսի մրցակիցը:

Հայոց Չորի սահմանից սկսած մինչև Արտօս, Եղերով և Դաւարօյնի հրանդանը ծովախորշի ափերը տեղ-տեղ լայնանում են և գեղեցիկ դաշտեր ձեացնում, դաշտեր, ուր բուսնում են ընտիր հացահատիկներ, ծառեր ու ծառապտուղներ և նոյն իսկ խաղողի այգիներ: Լեռներով բոլորած ծովափնեայ այս մասն իր

պողարներու թեամբ և բանաստեղծական դիրքով Վասպուրականի լաւ շրջաններից մէկն է:

Ահա ծովափնեայ այս մասում ընկած է Գեաւաշի կամ պատմական Ոստանի գաւառը, որն իր մի քանի վայրերով առանձին հետաքրքրութիւն է ներկայացնում:

Գեաւաշի գիրքը լեռնային է և մասամբ դաշտային. կլիման բարեխառն է, ջուրն առատ: Գաւառը ոռոգւում է Ոստան, Տըշող, Փշաւանց և Մոխրաբերդ գետակներով:

Գեաւաշի դաշտային մասը տալիս է առատ հաց, որն արտահանւում է հացից զուրկ լեռնոտ գաւառները, այն է՝ Մօկա, Կառկաւ և Խիզան: Տալիս է նաև պտուղներ, թէև այդ, իբրև արտահանութեան նիւթ, չնչին տեղ է բռնում:

Լեռնային մասերում գէպի Գաւարոյի նրանդանը կան անտառներ. այդտեղից արտահանում են գէպի վան և Արձէշ փայտ և ածուխ:

Բացի այդ, լեռնոտ մասերը հարուստ են արօտներով, ուր ժողովուրդը պարապում է խաշնարածութեամբ և շալագործութեամբ:

Իբրև արտահանութեան նիւթ ծառայում է տառեխ ձուկը, որը մեծ քանակութեամբ որսւում է Փշաւանց և Մոխրաբերդ գետերում. ձկնորսութեան շահագործման իրաւունքը պատկանում է կառավարութեանը:

Գաւառում կան աւելի քան 20 հայաբնակ գիւղեր. գաւառի կենտրոնավայր համարւում է Ոստան տաւնը, ուր նստում է գալմազամը:

Գաւառի հայաբնակ գիւղերից աչքի են ընկնում.

Հացահատիկներով Նարեկը, Փշաւանցը, Նոր-գիւղը, Պատականցը, Շատուանը Տախմանցը, Վուկօնիսը:

Շալագործութիւնով Նարեկը, Նոր-գիւղը:

Ձկնորսութիւնով Մոխրաբերդը, Փշաւանցը:

Գեաւաշում գտնւում են երեք վայրեր, որոնք մեզ համար ունին պատմական նշանակութիւն. դրանք են՝ Չաղար-Սուրբ Նշանի, Նարեկի և Աղթամարի վանքերը. ահա դրանց մասին մենք կը տանք մի քանի ամփոփ տեղեկութիւններ, թէև դրանք, իբրև սոսկ վանքեր, այժմ մի առանձին բան չեն ներկայացնում:

Վիճակագիր Գեաւաշի գաւառի հայ ժողովրդի.<sup>1)</sup>

№	Գ Ի Ի Ղ Ե Ր Ը.	Տո՛ւ.
1	Աթանոնց .	40
2	Սպիտակ-վանից թաղ .	20
3	Յիլի .	20
4	Բարադաշտ .	15
5	Պատականց .	60
6	Տըշող .	36
7	Հիբիճ .	30
8	Փշաւանց .	50
9	Տախմանց .	20
10	Հարբերդ .	40
11	Բօղօնիս .	18
12	Նարեկ .	105
13	Փայիսներ .	60
14	Սարկ .	15
15	Մոխրաբերդ .	80
16	Նոր-գիւղ .	85
17	Ընձակ .	40
18	Բէլու .	110
19	Շատուան .	20
20	Թիմար .	25
21	Յաղուն .	23
22	Վաւկանց .	21
23	Գանձակ .	30
		963

1) Այս տեղեկութիւնները բաղկի ենք Յղթամարի տեղեկագրից:

### Ո Ս Տ Ա Ն

Արասու լեռան հիւսիսային փէշերի վրա տարածուած է մի գեղեցիկ պողաքեր հովիտ, որը գոգաւոր գնում հակուած է ծովափին. այդ հովտի վրա փռուած է այժմեան Ոստանը:

Ոստանը պատմական անուն է. Վանի լճի ափերին գտնուող հօթ բերդաքաղաքներից մէկն է նա. նրա աւերակները մինչև այժմ էլ կան ծովափին դուրս ցցուած մի մեծ քարածայտի վրա. դա Ռշտունեաց մայրաքաղաքն էր. երբեմն կանգուն և հօր ամբողջի մէջ նստում էին Ռշտունեաց իշխանները: Այժմեան Ոստանը այդտեղից հեռու է ընկած. նա բաղկացած է միմեանցից անջատ մի քանի թաղերից, որոնք կրում են դանազան անուններ:

Այդ անուններն են՝ Սան-Հէշաթ, Թաղէ-Ժօր, Թաղէ-Բառօթ, Թաղէ-Նաւէ և այլն: Այդ թաղերը, որոնք իրենց աշխարհագրական դիրքով, ջրերի առատութեամբ և հողերի պողաքերութեամբ մի աշխատաւոր ժողովրդի ձեռքում մի պճնագարդ, նմանը չունեցող քաղաք կը դասնային, այժմ ներկայացնում են թէև բուսականութեան և ծառերի մէջ թաղուած, բայց անշուք, նոյն իսկ խղճուկ գիւղերի կամ թաղերի մի խումբ:

Ոստանում կէս դար առաջ ապրում էին բաւական թւով հայեր, այժմ չկայ այդտեղ և ոչ մի տուն հայ. նրանց տեղը բռնել են կուլտուրային խորթ քուրդ տարրեր, որոնք և գրողմէլ են այդ հարուստ բնութեան վրա անկուլտուրականութեան կնիքը: Ոստանն այժմ իր բոլոր թաղերով միասին ունի մօտաւորապէս 600 տուն քուրդ բնակիչ:

### ՉԱՂԱՐ-ՍՈՒՐԲ-ՆՇԱՆԸ

Չաղար-Սուրբ-Նշանի վանքը գտնուած է Ոստան աւանի մօտ. դա մի փոքրիկ վանք է մի վարդապետով և երկու թէև երեք ծառաներով. մեծ անտեսութիւն չունի նա, թէև նրա այգին, պտղատու ծառերով հարուստ պարտէզը և վարելահողերը կարելի էր եկամուտի աւանձին աղբիւր դարձնել. սակայն այդ վանքը նշանաւոր է նրանով, որ այդտեղ գտնուած է Մ-րդ դարի քաղցրախօս պատմիչ, Վարդանանց պատերազմի սղբերգու Եղիշէի գերեզմանը: Ըստ աւանդութեան, Եղիշէի գերեզմանը գտնուած էր ծովափին մօտիկ գտնուող մի վանքում, որի աւերակները մինչև այժմ էլ մնում են. երբ այս վանքը աւերեց, Եղիշէի նշխարները հանեցին այդտեղից և բերին ամփոփեցին Չաղար-Սուրբ-Նշանի վանքը, նրա ներքնախցի մէջ, որի շնորհիւ այդ վանքը կրում է իր վրա մեծ պատմագրի անմահ անունը:

### ՆԱՐԵԿԻ ՎԱՆՔԸ

Փշաւանց գետի հովտում, ծովափից մի ժամ հեռաւորութեան վրա, լեռների ստորոտում գտնուած է Նարեկ գիւղը: Սա գաւառի մեծ գիւղերից մէկն է, աւելի քան 100 տուն բնակչով. գիւղն ունի բարերեր հողեր, պողատու պարտէզներ և գեղեցիկ գիրք: Գիւղն այս շրջանում աչքի է բնկնում իր գպրոցով և Աղթամարում կրթութիւն ստացած իր մի քանի երիտասարդներով:

Ահա այս գիւղի կենտրոնում շինուած է Նարեկի վանքը, որի մէջ գտնուած է XI-րդ դարի նշանաւոր բանաստեղծ և մատենագիր Գրիգոր Նարեկացու գերեզմանը: Այդ գերեզմանը, որն այժմ մի մեծ ուխտատեղի է շրջակայ հայ գիւղերի ժողովրդի համար, կրում է հետեւեալ տապանագիրը.

Քէրոր Նարեկոց, կան տաք ամփոփեալ, մամուկեպ  
Նրեշտակն ի մարմնի, ի սոյն տապանի.  
Աքանչելի հոնտոր, ի Նարեկոյ տարույս.  
Սուրբ Նարեկացի, վանահայր կարգի.  
Որոյ կենդանի տղամ է Նարեկեան վանուցս.  
Նրաշագործ կմախք, ճովանչի բարունի.

Տասպանաքորիւն: Սրբոյն Գրիգորի:

Պատմէ գայս շիրիմ: Զամի Տեառն 1867,

Ի փառս պարծանաց: Մարտի 3 օրից:

Նարեկի վանքն այժմ ծառայում է Նարեկ գիւղին իբրև եկեղեցի և շնորհիւ այդ բանի, նա աւելի լաւ է պահպանել, քան ազգաբնակութիւնից ճեղու ընկած վանքերը: Նա իբրև վանք, ունի իր սեփական կալւածքը: Նրա վարելահողերի տարածութիւնը հասնում է 360 չափի, որը տրւում է գիւղացիներին կապալով և այդ եկամուտը ծախսւում է գիւղի դպրոցի վրա:

**Ա.ՂԹԱՄԱՐԻ ՎԱՆՔԸ**

Աւելի մեծ և նշանաւոր վանք ոչ միայն Գեաւաշում, այլ և ամբողջ Վասպուրականում համարւում է Աղթամարը:

Վանի լճի մէջ կան չորս կղզիներ, այդ չորս կղզիներն էլ դարձել են վանքերի և վանական միաբանութիւնների կայան: Դրանցից երկուսը գտնւում են Թիմարի գաւառի շրջանում. դրանք Լիմ և Կտուց անապատներն են, որոնց պատահեցինք իր տեղում, իսկ երկու կղզիները գտնւում են Գեաւաշի ծովախորշում, ափից 3-4 վերստ ճեղատուրութեան վրա: Այս երկու կղզիներից մէկը կոչւում է Արաէր, դրա վրա շինւած է ս. Աստուածածին անուանով մի վանք, սակայն որն այժմ կիսաւեր դրութեան մէջ է և կղզին անմարդաբնակ:

Իսկ երկրորդն Աղթամարի կղզին է, որի անունով էլ նրա վրա շինւած ս. Սաչի Վանքը կոչւում է Աղթամարի վանք:

Կղզին արեւմտեան կողմից ներկայացնում է մի մեծ քարածայռ ջրի մէջ կախւած իր թեք կողերով, իսկ արեւելեան մասը տափարակ է, ուր շինւած են վանքը, վեհարանն իրեն անհրաժեշտ շինութիւններով և ուր բուսած կան նշենիներ, մի քանի այլ ծառեր և խաղողի մի փոքրիկ անկաբան: Կղզու հարաւարեւմտեան կողմում, ժայռերի մօտ այցելուին ցոյց են տալիս մի քար, որի մասին պատմում են, որ իբր հանգուցեալ Ռաֆֆին Աղթամարը այցելած ժամանակ առանձնացել ու նստել է այդ քարի վրա, հայեացքը ձգել է լճի խաղաղ մակարդակի վրա և երկար ժամանակ այդ գրութեան մէջ մտալուց յետոյ, սթափել է տիտուր խորասուզումներից և նոյն քարի վրա նստած սեղում

գրել է «Զայն տուր, ով ծովակ»-ը: անա այդ օրից սկսած յիշուող քարը կոչւում է «Ռաֆֆու քար»: զս զգնուսուայմ մնա իրամ

Աղթամարի վանքը մեծ է, լայց իբրև հարտարապետական մի շէնք, իր արտաքին քանդակէն զարդարանքներով ներկայանում է մի գեղեցիկ գործ: Վանքի դրսի պատերը զարդարաբարւած են կրօնական իմաստ ունեցող քանդակներով. մէջ ընդ մէջ դուրս են բերւած զանազան կենդանիների և թռչունների նկարներ. իսկ քանդակների մի շարք ներկայացնում է խաղողի ողկոյզների և ծաղիկների մի շղթայ. այսպիսի գեղեցիկ գործ շատ հազագիւտ է այս տեղերի վանքերում: Բայց այս գեղեցիկ քանդակները և մանուանդ գմբէթի վրայի խաչն ու նրա պատւանդանը վնասել և կոտրատել են այն գնդակներից և թնդանօթի հարւածներից, երբ 1896 թւի կոտորածների ժամանակ վանքը պաշարեց զօրքերով և ենթարկեց թնդանօթածգութեան:

Աղթամարի վանքն ունի մեծ անցեալ. նրա շինութեան նախանձախնդիր հանգիսացել է Գագիկ Արծրունին և նրա յաջորդները. նա շրջապատւած է եղել ամուր պարիսպներով, որոնք ժամանակի ընթացքում քանդակել, ջրատոյգ են եղել և որոնցից, իբրև նմուշ, մինչև այժմ էլ մնում է մի բեկոր՝ կղզու հարաւային կողմում ջրի միջից գուրս պրծած մի ժայռի կողքին կպած: Աղթամարը համարւում էր մի մեծ թեմ, իր կաթողիկոսական աթոռով և ահագին միաբանութիւնով, որի իրաւասութեան տակ մտնում էին Հայոց-Ձորը, Գեաւաշը, Կարճկանը, Շատախը, Նորդուզը, Մօկսը, Խիզանը, Կառկառը և այլ շրջաններ: Վանքի եկամուտները հասնում էին հազարաւոր ոսկիների:

Այժմ դրանցից ոչինչ չի մնացել. ոչ կաթողիկոսութիւն կայ և ոչ էլ միաբանութիւն, վանքն ու կղզին համարեա թէ անմարդաբնակ են:

Վանքի դիմաց, ծովափին գտնւում է Ախավանքը, այսինքն Աղթամարի դրսի տունը և նաւահանգիստը. գա այգիներով, սրարտէզներով և ծառերով շրջապատւած մի գեղեցիկ տեղ է, ուր շինւած է երկրորդ վեհարանը և դպրոցի մեծ շէնքը:

Աղթամարի դպրոցն այդ խաւար երկրի մի քանի լաւ գոլրոցներից մէկն է, եթէ կարելի է լաւ բառը գործածել. այդտեղ կրթութիւն են ստանում շրջակայ գաւառներից եկած տղաներգաւառներում շատ ու թիչ բան իմացող ուսուցիչներ համարում

են Աղթամարի դպրոցաւարտները: Սակայն, ի նկատի ունենա-  
նալով այն եկամուտները, որ ստանում է Աղթամարի վանքը,  
շատ աւելի լաւ դպրոց կարելի էր պահել, քան այժմ է պահուում:  
Վանքն ունի այդի, պարտէզ, 500 չափ վարելահող՝ մեծ  
մասամբ ջրովի, 40 եզ, 15 գոմէշ, 20 կով, 500 ոչխար, 20 ձի և  
ջորի, որոնցից ստանում է մեծ եկամուտ:

Բացի այս, 1909 թւին ունեցել է հասոյթներ՝ Մօկաի Փութ-  
կի Ս. Գէորգից 200 ոսկի, Նարեկի վանքից 100 չափ ցորեն,  
Չաղար-Սուրբ-Նշանից 16 ոսկի, Մպիտակ վանքից 100 չափ ցո-  
րեն, Մոխրաբերդի Կարմրակ, Նոր-գիւղի Ս. Գէորգ և մի քանի  
այլ վանքերից 20-30-ական չափ ցորեն: Եւ եթէ ի նկատի ունե-  
նանք պաղին, որ այդ կողմերում դեռ ևս կանոնաւոր կերպով  
հաւաքուում է, այն փամանակ հասկանալի կը լինի, թէ որքան  
մեծ եկամուտ կունենայ Աղթամարի վանքը, եթէ նրա վրա կա-  
նոնաւոր հսկողութիւն լինի:

Ախա վանքում մենք տեսանք մի մեծ ձեռագիր մատեան.  
այդ մատեանի մէջ արձանագրուած էին Աղթամարի թեմի բոլոր  
փրճակներն իրեց գիւղերով և ծխահամարներով. արձանագրուած էին  
նաև 1896 թւի ջարդերի ժամանակ զոհեաճնների թիւը, աւերմունքնե-  
րի և կողոպուտների չափը. և բացի այդ, արձանագրուած կային թե-  
մում կատարուած շատ թէ քիչ աչքի ընկնող անցքերը: Շատ անցքեր  
արձանագրուած էին հանդուցեալ Սաշատուր կաթողիկոսի ձեռքով  
և ինչպէս երևում էր, Աղթամարի այդ վերջին կաթողիկոսը  
եղել է եռանդուն, ուշադիր և շինարար մարդ, հանդիսանալով  
իր ժամանակի պատմագիրը: Բայց ցաւելով պիտի ասենք, որ  
այդ գեղեցիկ մատեանը ձգուած էր դասարաններից մէկում, որին  
խրաքանչիւրը մօտենում ու թերթում էր և թերևս հարկաւոր  
եղած զէքում չը գրեւած թերթերը պատուում:

Այս գեռ ոչինչ կղզում, երբ մենք հետաքրքրեցինք վանքի  
մատենագրանով, ինձ մի փայտեայ սանդուխտով առաջնորդեցին  
վանքի զանգակատունը. այդտեղ խառն ի խուռն միմեանց  
վրա թափուած էին ի միջի այլոց մագաղաթեայ ձեռագիր մա-  
տեններ և մի քանի դարձեալ մագաղաթեայ պատմական ար-  
ժէք ունեցող ինչ-ինչ յիշատակագրեր և կոնդակներ, որոնք  
անխնայ ձեռնահարուում էին և պատարուում. տեսանք այդ բո-  
լորը և չը զարմացանք, որովհետ այդ ժամանակ Վանքի հսկո-  
ղութիւնը յանձնուած էր մի ազէտ մարդու ձիշտ է, գոյութիւն  
ունէր վանքին հսկող հողաբարձութիւն, բայց վանքում անաէրու-  
թիւն էր տիրում և մենք հեռացանք տխուր ապաւորութեան տակ:

### ԿԱՐՃԿԱՆԻ ԳԱԻԱՄԻ

Քաւարային հրեանդանից զէպի արեւմուտք, լճի հարաւային  
ափի վրա ընկած է Կարճկանի գաւառը. սա արեւելեան կողմից  
սահմանակից է Գեաւաշի գաւառին, իսկ արեւմտեան կողմից  
Բիթլիսի վիլայէթին:

Երկրի դիրքը այստեղ խիստ լեռնոտ է և խորդ ու բորդ-  
տեղ-տեղ լեռները կախուած են ուղիղ ջրի մէջ. երկրի բազմազան  
կազմութեան շնորհիւ բազմազան են նաև ծովափունքը, որոնք  
ներկայացնում են ծովախորշերի, թերակղզիների և հրեանդան-  
ների բեկրեկուն մի եզր:

Ունենալով այսպիսի կազմութիւն, Կարճկանը, բնականաբար,  
զուրկ է հարթավայրերից և աղքատ հացահատիկների մշակու-  
թեամբ: Մի ընդարձակ դաշտ, որն աչքի է ընկնում Կարճկա-  
նում, դա ծովափից մի քանի վերստ հեռու Կենդրանց զիւղի մօտ  
գտնւող դաշտն է, որի հիւսիսային կողմից պատնէշ կազմող բլուր-  
ների շնորհիւ գարնան հեղեղատների ժամանակ, ջուրը գալիս  
ծածկում է այդ դաշտը և ապա շարաթների ընթացքում սառ-  
րեղրեայ անցքերով ձեւելով ու գնալով, յատակում թողնում է  
տիղմի մի հաստ շերտ, որը մշակելով, ստանում են առատ բերք.  
բայց յաճախ պատահում են տարիներ, երբ ամբարում է անազին  
քանակութեամբ ջուր, դաշտը իր ժամանակին չի ցամաքում և  
մնում է անմշակ:

Փաւառը, լինելով մեծ մասամբ լեռնային, շատ հարուստ է  
արօտատեղիներով, որոնց շնորհիւ այստեղ զարգացած է անաս-  
նապահութիւնը և առանձնապէս խաշնարածութիւնը. մեծագոյն  
և պարտառ ոչխարներով առանձին հոշակ է վայելում Կարճ-  
կանը:

Բացի այդ, Կարճկանը հարուստ է անասուններով, որոնցից  
ստացում է շինութիւնների փայտ, ածուխ և արտահանում է  
անտառներից զուրկ գաւառները: Սակայն պիտի նկատած, որ  
կառավարութեան կողմից ոչ մի հսկողութիւն չը կայ այս երկրում  
անտառների վրա և նրանք անխնայ կերպով կտրատուում են:

Կարճկանում հաշուում են աւելի քան 70 գիւղեր, որոնցից  
հայարնակ են 22-ը:

Հայաբնակ գիւղերից իրենց բազմամարդութեամբ և մեծութեամբ աչքի են ընկնում Օրանցը և Եղէկիւրը:

Առանձնապէս աչքի է ընկնում Սօրբը, որը գտնուում է լճի ափին, մի շատ գեղեցիկ դիրքի վրա և համարուում է այդ շրջանի նաւահանգիստը:

Վիճակագիր կարճկան գաւառի հայ ժողովրդի<sup>1)</sup>.

№	Գ ի ի Ղ Ե Ր	Տուն.
1	Փրիուս . . . . .	30
2	Կանդու . . . . .	15
3	Կանչաոս . . . . .	20
4	Ուրէնդուս . . . . .	15
5	Սմբօն . . . . .	10
6	Սուսա . . . . .	30
7	Կարբ . . . . .	25
8	Մրորս . . . . .	20
9	Կենդրանց . . . . .	35
10	Վանիկ . . . . .	37
11	Օղւանց . . . . .	60
12	Սուուս . . . . .	12
13	Կուլթ . . . . .	60
14	Հնձան . . . . .	7
15	Օրանց . . . . .	110
16	Սօրբ . . . . .	60
17	Քարւակ . . . . .	30
18	Ուսունց . . . . .	10
19	Փիկանց . . . . .	10
20	Եղէկիս . . . . .	90
21	Գոմս . . . . .	40
22	Առանց . . . . .	20
		746

<sup>1)</sup> Այս տեղեկութիւնները բազմ ենք Ազիածարի տեղեկագրից:

Շ Ա Տ Ա Խ Ա Ռ Գ Ա Ի Ա Ռ

Արտօսի լեռնաշղթան հարաւային կողմից շատ է փուած. նրա լանջերը անվերջ ելեէջներով գնում տարածուում են մինչև Արևելեան Տիգրիսի վերին հովիտը, ձևացնելով բազմաթիւ երկրորդական շղթաներ ու ձորեր իրենց ելեէջներով:

Այդ բաւական չէ. Արտօսի լեռնաշղթայից սկիզբ առնելով, հարաւ-արևմտեան ուղղութեամբ տարածուում են մի քանի զուգահեռական լեռնաշղթաներ, որոնք հանդիսանալով իրրև բնական պատնէշներ, այդ լեռնահանգոյցը կտրատում են փոքրիկ շրջանների, որոնց զրկում տեղ են գտել վանի լեռնային գաւառակները:

Այդ լեռնաշղթաներից մէկը Արտօսի լեռնաշղթան է, որն սկիզբ առնելով Արտօսի արևմտեան լանջերից, պնում հանգում է Արևելեան Տիգրիսի հովտում:

Ահա այդ շղթայից դէպի արևելք Արտօսի հարաւային ելեէջների վրա փուած է Շատախի գաւառը, ընդգրկելով Արևելեան Տիգրիսի ակունքների մի մասը:

Շատախը կատարեալ լեռնային մի գաւառ է. նրա մակերևոյթը ներկայացնում է լեռների և ձորերի մի ժխոր. մի վիթխարի կատար իր լանջերով զալիս ընդհարուում է մի ուրիշ կատարի, մի խորունկ ձոր զալիս միանում է մի այլ ձորի: Այս լեռներն ու ձորերը հանդերձ իրենց յոգնեցուցիչ ելեէջներով, յաճախ երևան են հանում բնութեան հմայիչ տեսարաններ, որոնց վրա կանգ է առնում մարդու հայացքը ու բեկուանում:

Սևտիկինի ձորի մէջ, Հալկանց կոչուող փոքրիկ գիւղի դիմաց, մի վիթխարի լեռան կրճքից խփում է մի վիթխարի շատրան. դա մի փոքրիկ գետ է, որն ստորերկրեայ անցքերով եկել ամենի լեռան կուրճքը պատուել է և աւելի քան 20 սաժէն բարձրութիւնից մի ուժգին շառաչումով թափուում է ժայռերի վրա, փշուր-փշուր զալիս, փրփուր ու փոշի բարձրացնում և այդ փոշիով ջրում է ձորի յատակը, կանաչ բուսեցնում, գոլացնում է օդը արևից շիկացած քարքարոտ ձորի մէջ և յաղթական սոնոցով գնում խառնուում է Սևտիկինի գետին: Նայում էք այդ հմայիչ տեսարանին, նրա աղմկուղ և գլխիվայր թափուող կոհակներին և յափշտակուում բնութեան այս տեսարանով: Բայց որբան

այսպիսի և սրանից էլ զեղեցիկ պատկերներ զարդարում են այդ խորհուրեկ ձորերը և վիթխարի կուրծքերը:

Երկրի այսպիսի կազմութեան շնորհիւ Շատախի գաւառում երկրագործութիւնը շատ թոյլ չափով է զարգացած. ժողովրդի գլխաւոր պարագամունքն է խաշնարածութիւնը և դրա հետ միասին նաև շալագործութիւնը: Ժողովրդի եկամտաւի աղբիւր ծաւայում են նաև սնտառները, որոնք մատկարարում են շինութիւնների փայտ, վառելիք և անուխ: Անտառներում պատահում են շամի ծառերի, որոնց տեղացիները անւանում են գենի, բայց ամենից շատ տարածւած են կազնի ծառերը: Շատախը հարուստ է նաև պտղատու ծառերով, մանաւանդ ընկուզենիներով, որոնց պտուղը մեծ քանակութեամբ արտահանւում է շրջակայ գաւառները: Ընկուզենիները աճում են բնական կերպով և փուլած են մեծ մասամբ ձորերի մէջ:

Շատախն ունի աւելի քան 90 գիւղ, որի 52-ը հայաբնակ են. դրանց մէջ հաշւած են նաև այն հատւածները, որոնք գտնւում են այս և այն լեռնալանջում գոմերին կից. սրանք տեղացիները բարբառով կոչւում են մզբաներ, որոնցում լինում են 2-6 ընտանիք:

Մեծ գիւղերն ընկած են ձորերի մէջ, ինչպէս և գաւառի կենտրոնավայրը՝ Թաղը և այդ այն պատճառով, որ երկիրը խիստ լեռնային լինելով, բնակութեան և հողագործութեան համար շատ ու թիչ հարթ և յարմար տեղեր գտնւում են ձորերում:

Մի մեծ ձոր գաւառի հիւսիս-արևելեան սահմանից սկսած պտոյտներ կազմելով, միջից կտրում է գաւառը և հարաւ-արևմտեան սահմանից դուրս գնում. այս ձորի գտնադրոն մասերը կրում են զանազան անուններ. այսպէս, նրա մի որս լեղը կոչւում է Շատախու գեալին<sup>1)</sup>, մի այլ տեղ՝ Վախրովա գեալին, երրորդ տեղը Գեանգեան գեալին և այլն: Այս մեծ ձորի միջով հոսում է Տիգրիսը: Մի այլ ձոր սկսւելով հիւսիսային կողմից, գալիս գաւառի կենտրոնում միանում է մեծ ձորին. այս երկրորդ ձորի միջով գալիս Տիգրիսին է խառնւում Սևախիկի գետը. ահա երկու գետերի այս խառնուրդի վրա գաւում է Թաղը կամ Շատախի քաղաքը:

1) Գեալին այդ կողմերի սօգորական բառն է և նշանակում է ձոր:

Շատախի հայաբնակ գիւղերից նշանաւոր են. Սաշնարածութեամբ՝ Կաճէթը Սևախիկինը, Արմշատը, Կաղպին: Մեղաբուծութեամբ Կաճէթը, Կոսովանքը, Թաղը: Հացահատիկներով Առեղը, Կայնէմէրանը, Շիղանը, Կաղպիսը:

Այս չորս գիւղերն ընկած են գաւառի հիւսիս-արևմտեան կողմում, մի գեղեցիկ դաշտի վրա, որը կոչւում է Փետանդաշտ, որ ունի 12 վերստի չափ երկարութիւն և 7 վերստի չափ լայնութիւն, չորս կողմից շրջապատւած լեռներով. այդ լեռներն են՝ հսկայ Արտուրը, Կարաբուլաղը, Չմէն և Բարաղօտիկը: Գարնան հեղեղների ժամանակ այս դաշտը լցւում է ջրով և նմանւում է մի փոքրիկ ծովի: Մայիսի վերջերում ջուրը ցամաքում է դաշտի յատակում թողնելով տիղմ. ահա այդ տիղմի մէջ ձգւում են սերմ և ստանում առատ բերք. սակայն պատահում են տարիներ, որ ժամանակին ջուրը չի ցամաքում և մշակութիւն չի լինում. այդպիսի տարիներում ժողովուրդը մեծ նեղութիւնների մէջ է ընկնում:

Չը նաչած բազմազան դրազմունքներին, այնուամենայնիւ Շատախի ժողովուրդը նեղ վիճակի ունի և այդ վիճակը թեթեւացնելու համար տարւայ որոշ ամիսներին մեծ թւով աշխատաւոր ձեռքեր գնում են Գիարբէքիւրի կողմերը աշխատելու:

Ժողովրդի նեղ վիճակը եթէ մասամբ հետևանք է երկրի կազմութեան, աւելի մեծ չափով արդիւնք է վայրագութիւնների:

Գաւառի մի քանի մասերում քրդական վայրագութիւնները շատ մեծ են. վիլայէթի կենտրոնից հեռու լինելը և երկրի դիրքը նպաստել են աւագակարարոյ քրդին աւելի ևս յանդուգն դառնալու: Շատախում կան 40-ի չափ քրդական գիւղեր, որոնց մեծ մասը խաղաղ, աշխատաւոր և նոյնիսկ հայի պէս հարստանում են այդ շրջանի շարիքը. դրանք են՝ Սաւաշտանցիները, Եղզինանցիները, Սալիլանցիները և Գրաւցիները, որ բնակւում են հայերի հետ խառը Շատախում և Նորդուզում: Այս չորս աշիբէթներից ամենավայրագ ցեղը Գրաւցիներն են. սրանց ցեղապետն է Շաքիր աղան, մի գաղան մարդ, որը 1896 թւին մի շարք բարբարոսութիւններ գործեց Շատախում և կողոպտեց հայ գիւղերը: Շաքիրի եղբոր որդին է Միրմըհէն, որը մի աւագակախումը կազմած ասպատակում է Շատախն ու Նորդուզը, կողոպտում է ճամբորդներին, յաճախ պաշարում է գիւղերն ու փրկանք անում և ժողովուրդը սարսափի մէջ պահում:

Վիճակագիր Շատախի գաւառի հայ ժողովրդի<sup>1</sup>).

№	Գ Ի Ի Ղ Ե Ր Ը.	Տուն.	Շունչ.
1	Նաւահանդ . . . . .	4	
2	Շիվրաշ վարին . . . . .	3	
3	Մարօշկ . . . . .	8	
4	Կասր . . . . .	1	
5	Վախրով . . . . .	12	
6	Աքրուս . . . . .	2	
7	Առիգոմ . . . . .	12	
8	Բրմենց . . . . .	6	
9	Պապոնց-մզրէն . . . . .	8	
10	Մարդակերոց . . . . .	2	
11	Բաղչկանց-մզրէն . . . . .	10	
12	Շինա-մզրէն . . . . .	4	
13	Յարօ-մզրէն . . . . .	2	
14	Շեղջանց . . . . .	3	
15	Կւերս . . . . .	6	
16	Շամօ-մզրէն . . . . .	12	
17	Առոսկի . . . . .	12	
18	Երէցու-մզրէն . . . . .	2	
19	Մուսկանէն . . . . .	12	
20	Շահրուր . . . . .	3	
21	Նառ . . . . .	5	
22	Ղարադէր . . . . .	1	
23	Դարենց վեր . . . . .	7	
24	Դարենց վար . . . . .	5	
25	Սևաիկինա-գոմեր . . . . .	12	
26	Սևաիկին . . . . .	48	
27	Հաշկանց . . . . .	10	
28	Բօլս . . . . .	15	
29	Բօսենց-մզրէն . . . . .	10	
30	Փաղենց . . . . .	2	
31	Ծուղ . . . . .	5	

Վիճակագիր Շատախի գաւառի հայ ժողովրդի<sup>1</sup>).

№	Գ Ի Ի Ղ Ե Ր Ը.	Տուն	Շունչ
32	Բրդի-գոմեր . . . . .	6	
33	Յիլի . . . . .	15	
34	Սօղանց . . . . .	12	
35	Պաղի . . . . .	8	
36	Մարծեղ . . . . .	2	
37	Տղասպար . . . . .	13	96
38	Ծիծանց . . . . .	22	164
39	Ճընուկ . . . . .	21	180
40	Յինենց . . . . .	20	178
41	Կաղպի . . . . .	75	460
42	Կօսովանք . . . . .	8	
43	Սաղ . . . . .	13	67
44	Կաճէթ . . . . .	85	40
45	Արմշատ . . . . .	40	
46	Սարկէթ . . . . .	10	
47	Սուժար . . . . .	10	
48	Առեղ . . . . .	26	160
49	Կախէմէրան . . . . .	20	
50	Շիղան . . . . .	45	
51	Կաղաղիս . . . . .	31	214
		726	
52	Թաղ . . . . .	200	1200

Այս տեղեկութիւնները կազմել ենք Շատախում տեղեկ մարդկանցից:



## Թ Ա Ղ Ը

Այն տեղը, ուր ընկած է Թաղը, սարսափ ազդող, բայց միևնույն ժամանակ հմայելի մի տեսք ունի. Մարուզ, Գըլուլական, Կայնէկլ գագաթները, իրրև հովաներ, երեք կողմերից ցցւած են երկնքի կապուտակութեան մէջ. երեք վիթխարի ձորեր իրենց անուկի կուրծքերով գալիս միանում են իրար և երկու գետեր անագին շտաշումով գալիս զարնւում են միմեանց, բարձրացնելով խլացուցիչ մի որոտ, որից գետինը գողում է, գողում է նրա հետ միասին նաև Թաղը: Թաղի վրա կախւած է Քիւրէկ լեռը, որի լանջերին կուտակւող ձիւնը շատ անգամ թափւել է ցած և վնասներ պատճառել Թաղի բնակիչներին: Այդպիսի դէպք տեղի է ունեցել 1883 թւի փետրւարի 18-ին, որի մասին եկեղեցու զբան ձակատին փորագրւած է հետեւեալը.

«Քիւրէկ լեռնէ ձեան ուսի գալով, Վերին Թաղն և 157 անձինք ծածկեց, յորոց 100-ը ողջ հանւեցան և 57-ը մեռած, ընդ որս երեք օրեայ հարս և փեսան»:

Թաղն ունի 100 տուն զուտ հայ բնակիչ, որոնք պարսպում են գլխաւորապէս առետուրով և շալագործութեամբ: Հոգ բոլորովին չունին. ունին մասնաւոր չափով խաղողի այգիներ և պտղատու պարտէզներ, բայց ապրուստի գլխաւոր միջոց դարձեալ ֆնում է շալագործութիւնը: Պէտք է նկատած, որ այս շրջանի լեռնոտ գաւառներում շատ տարածւած է շալագործութիւնը, բայց նա առանձին կատարելագործութեան հասել է Շատախում: Շալերի ամենաբնասիր տեսակը, որը մեղանում կոչւում է Վանի շալ, կարելի է գտնել մեծ չափով այստեղ, Թաղում, ուր այդ արհեստով զբաղւած են թէ մարդիկ և թէ կանայք:

Այդ շալի համար գործ են անում անգորեան այժի բուրդ, որն ունի ընտիր յատկութիւն և գնահատւում է շատ թանկանդօրեան այժիքը այստեղ յայտնի են կեժ անուանով. այդ անուանով կոչւում է նաև նրա բուրդը: Այդ բրդի հօխան<sup>1)</sup> արժէ 15-16 կուռուշ<sup>2)</sup>, այն ինչ, սովորական ոչխարի բուրդը արժէ 6 կուռուշ:

1) Հօխան հաւասար է սուտկան  $3\frac{1}{2}$  գրվանբային:

2) Կուռուշը հաւասար է սուտկան 8 կոպէկին:

Բուրդը գզում և մանում են կանայք. թաղում չկայ մի կին, որ այդ աշխատանքով չը պարսպի. թեկ հինելը, գործելը և շալ ներկելն ու կոծելը, այսինքն կոծերի մէջ դնել սեղմելը և խառադարձնելը կատարում են մարդիկ. այս աշխատանքներով Թաղում պարապում են աւելի քան 200 հոգի:

Այժմ տեսնենք, ինչպէս է վարձատրւում այստեղ աշխատանքը:

Մէկ հօխան բուրդը գզելու համար վճարում են 20-30 փարա<sup>1)</sup>. մէկ հօխան թեկի մանկն արժէ 3-7 կուռուշ, նայած ինչ բարակութեան և նրբութեան պէտք է մանել թեկը. մէկ հօխան թեկը մի կինը կարող է մանել մէկից մինչև երկու շաբաթ: 20 կանգունը հինում է մէկ օրում. ջրելը և գործելն արժէ 12-15 կուռուշ. 20 կանգունը մէկ մարդը գործում է 2-3 օրում. ներկը և ներկելն արժէ 5-10 կուռուշ, նայած ինչ գոյնի ներկ է պահանջւում. կոծելն արժէ 5 կուռուշ: Ահա աշխատութեան այն չնչին վարձատրութիւնը, որ սահմանել է զրամից զուրկ այդ միջավայրում:

Այստեղի շալը գլխաւորապէս արտահանւում է Բիթլիս, Գիւրբէքի և այլ տեղեր. տեղում շալի 20 կանգունը վաճառւում է 80-120 կուռուշ:

Թաղում կայ տղայոց և օրիորդաց զարոց. կայ նաև ուսումնասէր երիտասարդների մի փոքրիկ շրջան, որը հրատարակում է մի փոքրիկ խմորատիպ թերթ, ուր տեղ են գտնում գաւառի ուսումնասիրութեան վերաբերեալ նիւթեր:

1) 5 փարան հաւասար է մէկ կոպէկին. կուռուշն ունի 40 փարա:

2) Մէկ թոփ շալը ունենում է 20 կանգուն և կշռում է  $1\frac{1}{2}$  հօխա:

### ՆՈՐԴՈՒԶԻ ԳԱԽԱՌ

Շատախից ղէպի արեւելք, Տիգրիսի ակունքների վրա գտնուում է Նորդուզի գաւառակը:

Այս գաւառակի աշխարհագրական դիրքը համարեա նոյնն է, ինչ որ Շատախինը, իսկ քաղաքական պայմանները նրանից էլ տեղի վատթար են: Գաւառակը նախ տարածւում է ղէպի Հեքեարիի սանջակի սահմանը կազմող լեռները, որոնք բռնւած են բուրդ ցեղերով, երկրորդ՝ գաւառի մէջ ապրում են բազմաթիւ քրդեր, որոնց թւում նաև Գրաւցիների ցեղի մի մասը, որոնք արդէն յայտնի են իրենց վայրագութիւններով: Այս պայմանների մէջ ապրում է մի բուն հայ ժողովուրդ, ընդունակ կողարտելու և թաւանելու, ունենալով դարաւոր ճնշումների կնիքը իր ճակատին դրօշմւած: Թէ ինչ կը լինէր այստեղ գտնուող մի բուն ժողովրդի դրօշմունք այն ժամանակ, երբ հայաշատ կենտրոնները, անգոր յեա մղելու ստակալի ջարդերը, ձգում էին տուն ու տեղ և փախչում գլուխ ազատելու համար, այդ Ատաւած գիւտէ և Էթէ այսօր այս գաւառակում գեւ ևս գոյութիւն ունին հայեր, այդ էլ շնորհիւ այն տոկոսութեան և ղրմացկանութեան, որ դարերի հաւածանքի ուժով մարմնացրել են նրանք իրենց մէջ:

Նորդուզում կոյ աւելի քան 60 գիւղ. զբանցից 11-ում միայն, այն էլ քրդերի հետ խառն, ապրում են հայեր, որոնց թիւը ընդամենը հասնում է 150 տան, մինչդեռ դուռ քրդարնակ գիւղերի թիւը հասնում է 50-ի:

Ամենամեծ հայաբնակ գիւղը համարւում է Փիրրաղալանը, որտեղ ապրում են մէկ տեղեկութիւնով 20, իսկ մի այլ տեղեկութիւնով՝ 36 տուն հայ. այդ նոյն գիւղում կան այժմ 40 տուն քրդեր, որոնք եկել հաստատուել են այստեղ 1896 թւի ջարդերից յետոյ, բռնկով փախած հայերի տեղը: Այս վիճակին ենթարկւել են միւս հայաբնակ գիւղերը, որոնցում այժմ մնում են նախկին հայ ժողովրդի փշրանքները:

Նորդուզում կան երկու քրդական աշիրէթներ. զբանք են Ալանցիները, որ ապրում են գաւառակի հարաւ-արեւմտեան մասում և Շիլանցիները, որ ապրում են գաւառակի արեւելեան մասում:

սում. բայց ոչ մէկը և ոչ միւսը իրենց վայրագութիւններով նման չեն Գրաւցիներին. սրանք կատարեալ տէր են դարձել երկրին. սրանց ցեղապետները զրել են խաղաղ աշխատաւոր ժողովրդի վրա ապօրինի տուրքեր և այդ տուրքերը հաւաքում են ամենայն ճշտութեամբ:

Վիճակագիր Նորդուզի գաւառի հայ ժողովրդի<sup>1)</sup>

N°	Գ Ի Ի Ղ Ե Ր Ը	ՀԱՅ ՏՈՒՆ		Մահմեդական տուն
		Այժմ կան	1896 թ. գաղթելին	
1	Աղսին . . . . .	12	10	30
2	Փիրրաղալան . . . . .	36	40	40
3	Կողան . . . . .	15	20	12
4	Հիբան . . . . .	5	10	
5	Հօթայեան . . . . .	10		18
6	Նորարին ներք. . . . .	7		
7	Դիմ . . . . .	22	25	1
8	Ըսքիւնս վեր. . . . .	8	20	8
9	» ներք. . . . .	12		
10	Շամենց . . . . .	35		30
11	Օլաման . . . . .	2		8
		164		

<sup>1)</sup> Այս տեղեկութիւնները տեղ է մեզ պ. Կարապետ Ամիրեանը:

### ՄՕԿՍԻ ԳԱԻԱՌ

Երկրի կազմութեամբ, կլիմայական յատկութիւններով, զբաղմունքները՝ իւրատեսակութեամբ և նիստ ու կացով ու քաղաքական պայմաններով Վանի լճի հարաւային լեռնոտ գաւառների մէջ իրրև տիպար համարուում է Մօկսը. այդ պատճառով նրա նկարագիրը կը տանք աւելի մանրամասն, քաղելով այդ մի ձեռագրից, որը Հայոց Զորում հրատարակող «Ծովակ» թերթի խմբագրութիւնը սիրով յանձնեց մեզ:

Մօկսը քառանկիւնի դիրքով մի լեռնահանգոյց է, որի երկարութիւնը կարելի է անցնել 6 ժամում, իսկ լայնութիւնը 5 ժամում: Երկիրն ամբողջապէս ծածկւած է լեռներով, լեռնաշղթաներով ու գագաթներով: Մօկսի գլխաւոր լեռներն են հիւսիսային կողմում Եղերովը, որն իր գագաթներով գծում է Գեաւաշի սահմանը. արեւելեան կողմում Կոռաշապահը և Անուսը, որոնք գծում են Շատախի սահմանը. արեւմտեան սահմանի վրա ցցւած են Կառկառի ապառաժոտ գագաթները, իսկ հարաւային սահմանի վրա բարձրանում են Բարվարի լեռները: Այս լեռներից ճիւղաւորելով դէպի գաւառի կենտրոնն ենձգւում բազմաթիւ փոքրիկ լեռնաշղթաներ, ծնունդ տալով խորունկ ձորերի կամ գեալիների:

Մօկսը բաժանւած է եօթ գլխաւոր գեալիների. զրանք են՝

1) Փութկու գեալին. սա սկսում է Եղերովից և գալիս հասնում է գաւառի կենտրոնը, ուր շինւած է Կարմիր կամուրջը, իր մէջ հիւրընկալելով 1) Փութկու վանքը, 2) քաղաքի հինգ թաղերը, այն է՝ Դաշտը, 5. 1) Անճղոցը, 5. Արբխամենցը, 5. Բաղաքի փողը. 5. և Մատկանցը, ք. 3) Լճանը, խ. 4) Ոստընքը, ք. 5) Հըսնկէ-մզրէն, ք. գիւղերը:

2) Տինխ-գեալին. սա Փութկու գեալինի շարունակութիւնը կազմելով, ձգւում է դէպի Բարվարի սահմանը. այստեղ գտնւում են հետեւեալ գիւղերը՝ 1) Գոմանց, 5. 2) Կաւար, ք. 3) Ուրաշուղ, ք. 4) Բլօրիս, ք. 5) Ռաման, ք. 6) Թաղնղար, ք. 7) Թաղբառօժ, ք. 8) Արչակ, ք. 9) Խըէր, 5. 10) Տմիս, խ. 11) Ծափանց, խ. 12) Կճաւ, 5. 13) Հաւարիս, խ. 14) Փրէկանց, ք. 15) Յակրակ, ք.

1) 5. տառը պէտք է կարդալ հայաբնակ. ք. տառը-քրդաբնակ, իսկ խ. տառը-խառն բնակ.

3) Տուրկա-բալասօ գեալին, որն սկսում է Կարմիր կամուրջից և հարաւ-արեւմտեան ուղղութեամբ տարածւում է մինչև Բարվարի սահմանը. սրա մէջ ընկած են՝ 1) Թառամաղը, ք. 2) Ծառտանցը, խ. 3) Կճողո, 5. 4) Կճողու վանքը, 5. 5) Պարանիսը, ք. 6) Շիկորանը, ք. 7) Հաղմղունքս, խ. 8) Հաքանցը, ք. և 9) Մակնին, խ.

4) Տալանից ձոր, որն սկսում է Կարմիր կամուրջից և արեւմտեան ուղղութեամբ ձգւում է մինչև Ներքին Սպարկերտի սահմանը. այստեղ ընկած են՝ 1) Մարականցը, 5. 2) Սպրկանցը, խ. 3) Ս. Կարապետի վանքը, 5. 4) Հազլանը, 5. 5) Բրանուտը, խ. 6) Սեպը, խ. 7) Ծոււմը, ք. 8) Դարենցը, ք. 9) Բերդը, ք. 10) Վերսը, ք. 11) Հառվանցը, ք. 12) Վերին-գեղը, ք. 13) Հաւսթանցը, ք. 14) Հըրվին, ք. 15) Հերը, խ. 16) Սաքըսը, խ. 17) Գիտրիսը, 5. և 18) Գոմերը, 5.

5) Հառնանց գեալին, որն սկսում է Կարմիր կամուրջից և արեւելեան ուղղութեամբ տարածւում է մինչև Անուսի փէշերը. այս գեալինի մէջ ընկած են՝ 1) Լուկնցը, 5. 2) Նօվիսը, ք. 3) Հառնանցը, 5. 4) Կայթանցը, 5. 5) Նաննցը, 5. 6) Դաւմանը, ք. 7) Բեսորը, ք. 8) Հաակնջաւը, 5. 9) Անապատը, 5. 10) Շէնը, 5. 11) Փէտատեղը, 5. 12) Խացարլուրը, 5. 13) Հաղինը, 5. 14) Կարաթանցը, ք. 15) Մզրան, ք.

6) Բառա գեալին, որն սկսում է քաղաքի թաղից և ձգւում է դէպի վերին Սպարկերտի և Կառկառի լեռները. այս գեալինի մէջ ընկած են՝ 1) Սորսը, 5. 2) Վանքիկը, խ. 3) Յառնջիկը, ք. 4) Բուկնցը, 5. 5) Բառը, խ. 6) Գնեկանցը, 5. 7) Բիւրանղը, խ. 8) Շիօնցը, ք.

7) Յառնջու գեալին, որն սկսում է Կուռաշահապի ստորոտից և վերջանում է Փութկու վանքի մօտերքը. այս գեալինի մէջ ընկած են՝ 1) Խալկնցը, 5. 2) Դէմկառը, խ. 3) Յառնջը, 5. 4) Գիտրիսը, ք. 5) Աւատի-մզրէն, ք. 6) Շէխա-մզրէն, ք. 7) Ատրճանցը, 5. 8) Կարկճանցը, խ. 9) Կասը, խ. 10) Նորովանցը, խ. 11) Դէրէ-Ալի-աղա, ք.

Գեալիները, նայած նրանց դիրքին, կոչւում են բառօժ, այսինքն արեկող և ձմակ. արեկող գեալիներում կլիման տաք է և մեղմ և հողը բարեբեր:

Մօկսի կլիման ամբողջարար է և մեղմ. ձմեռը տեւում է 5

ամիս և շրջակայ գաւառներից եղանակը տար է լինում, մասնաւոր գեալիների մէջ, ուր անպատշաճ Ժամերի հետ միասին աճում են նաև ընկուզի, տանձի, խնձորի և սալորի ծառեր:

Մօկսը շատ հարուստ է սառնորակ ջրերով, որոնք հազարաւոր առակներով իջնում են ձորերի մէջ, խառնուժում միմեանց և կազմում գետակներ: Իւրաքանչիւր գեալին ունի իր գետակը. գետակներից ամենամեծը Փուլիու գեալինի գետակն է, որ սկիզբն է առնում Եգերովի ստորոտներում գտնուող «Ճոջ-գետու աղ» կոչուող մի մեծ քարայրից. սա Մօկայ ջուրն է, որը կարելով քաղարի թաղերը, հասում է դէպի հարաւ և ճանապարհին իր մէջ ընդունելով բազմաթիւ ջրեր, ուսած ու մեծացած գնում թափուում է Արևելեան Տիգրիսի մէջ:

Մօկսը, իբրև լեռնոտ երկիր, շատ զուրկ է սափարակներից, բայց հարուստ է արօտներով և ծաղկաւէտ վայրերով, որոնց շնորհիւ այստեղ զարդացած է խաչնարածութիւնը և մեղարուծութիւնը:

Մօկսի գիւղերը շինւած են մեծ մասամբ գեալիների յարմարաւոր կողերի և լանջերի վրա. տները երկու, յաճախ երեք յարկանի են, քարաշէն և մեծ մեծ լուսամուտներով. լուսամուտները փեղկեր չունին. ձմեռները տար լինելու համար հիւստում են նրանց ուռնու ճիւղերով և ապա ձեփում կենդանիների ազդով, լոյսի համար թողնելով մի փոքրիկ անցք: Տների ներքին յարկերը յատկացւած են կենդանիների համար: Տների կտուրները ծառայում են իբրև կալստեղեր. հեռաւոր լեռների և ձորերի լանջերում ընկած փոքրիկ արտերից ցորեն ու գարին Մօկային կրում է շալակով և ձեծում, վրան կենդանիներ պատեցնելով. կայսելու գործիքներ այստեղ գոյութիւն չունին:

Մօկային շատ սակուն և չարաքաշ ժողովուրդ է. իր երկրի ապառաժատ կուրծքերը մշակելուց զատ, նա պարագում է նաև արհեստներով. ամենաընդհանրացած արհեստներն են շալագործութիւնը և գլորարութիւնը. վերջին զբաղմունքը շատ յատուկ է մօկացուն, որը լարէ գործիքը ուսը ձգած չափչփում է տար ու ձոր, մանուս է այս ու այն գաւառը, այս ու այն քրդի օրան, հասնում է մինչև Կովկաս և Դիարբէքիւր և գիւղ անկողով փոք աշխատում ու տուն գտնում:

Մօկսի տարազը թէ հայերի և թէ քրդերի մօտ նահապետա-

կան է ու ընդհանուր: Հայերն ունին իւրայատուկ բարբառ խառը քրդերէն, թուրքերէր և արաբերէն բառերով:

Մօկսում կան աւելի քան 40 հայաբնակ գիւղեր, մի այդքան էլ կան քրդաբնակ գիւղեր. բայց քրդաբնակ գիւղերը փոքր լինելով քրդերի թիւը պակաս է հայերի թւից, սակայն այս հանգամանքը արդելք չի եղել քրդական ազդեցութեան գորեղանալուն Մօկսում: Հայերը մտաւորապէս շատ յետ են մնացել. ամբողջ շրջանում կան 8 խղճուկ գպրոցներ: Հողերի մեծ մասը պատկանում է քիւրդ ազաներին. շատ հայաբնակ գիւղերի ժողովուրդը միանգամայն զուրկ է սեփական հողից. ազաները հողերի համար կապալազին վերցնելուց բացի, վերցնում են շատ անգամ նաև ապօրինի տուրքեր:

Այս ազաներից մէկն է կեղեքիչ Շէյխ-Մազլը, որն ապրում է Հաւասթանց գիւղում, ունի մեծ կալւածքներ, դրա հետ միասին նաև մեծ ազդեցութիւն քրդերի վրա: Սրա հայր Շէյխ-Փանըմը, որն աւելի կեղեքիչ ու բարբարոս անուն է թողել, հաշկաւոր Շէյխ Չալաէզինի յաջորդն էր:

Իբրև բացառութիւն այդ կեղեքիչ տարրերի, Մօկսում յայտնի է Աւզալբէկի ազա Մուրթուլաբէկը, որի շնորհիւ 1896 թւին Մօկսի հայ ժողովուրդը ազատ մնաց մասսային ջարդերից ու կողոպուտներից, թէև մասնակի կողոպուտներ և սպանութիւններ, այնուամենայնիւ, տեղի ունեցան այս և այն տեղ:

22	17
23	18
24	19
25	20
26	21
27	22
28	23
29	24
30	25
31	26
32	27
33	28
34	29
35	30
36	31
37	32
38	33
39	34
40	35

Վիճակագիր Մօկսի գաւառի հայ ժողովրդի <sup>1)</sup>			
№	Գ Ի Ի Ղ Ե Ր Ը	Տոն	
1	Կճողս . . . . .	10	
2	Ծառտանց . . . . .	10	
3	Թառամաղ . . . . .	3	
4	Հաղմղունս . . . . .	3	
5	Մակնի . . . . .	8	
6	Տմիս . . . . .	15	
7	Գոմանց . . . . .	15	
8	Խրէր . . . . .	8	
9	Ծափանց . . . . .	15	
10	Կճաւ . . . . .	30	
11	Հաւարիս . . . . .	15	
12	Խացարլուր . . . . .	20	
13	Հաղին . . . . .	35	
14	Հեր . . . . .	10	
15	Սարս . . . . .	8	
16	Գիլգրիս . . . . .	35	
17	Գոմեր . . . . .	20	
18	Սորս . . . . .	28	
19	Բուլենց . . . . .	35	
20	Վանքիկ . . . . .	8	
21	Բառ . . . . .	15	
22	Գնեկանց . . . . .	32	
23	Բիւրանդ . . . . .	10	
24	Լճան . . . . .	10	
25	Հառնանց . . . . .	15	
26	Լուլենց . . . . .	10	
27	Կայթանց . . . . .	53	
28	Նանենց . . . . .	40	
29	Շէն . . . . .	20	

<sup>1)</sup> Այս տեղեկութիւնները բաղել ենք Աղթամարի տեղեկագրից:

Վիճակագիր Մօկսի գաւառի հայ ժողովրդի			
№	Գ Ի Ի Ղ Ե Ր Ը	Տոն	
30	Հասկնջաւ . . . . .	15	
31	Անապատ . . . . .	5	
32	Փէտատեղ . . . . .	5	
33	Նորովանց . . . . .	12	
34	Կասր . . . . .	10	
35	Ատրճանց . . . . .	16	
36	Կարկճանց . . . . .	30	
37	Հառինջ . . . . .	33	
38	Դէմկառ . . . . .	12	
39	Խալենց . . . . .	6	
40	Մարականց . . . . .	11	
41	Սպրկանց . . . . .	16	
42	Հաղլվան . . . . .	22	
43	Բրանուա . . . . .	6	
44	Սեպ . . . . .	25	
45	Անճղոց թաղ . . . . .	24	
46	Դաշտի » . . . . .	40	
47	Արբիամենց » . . . . .	24	
48	Քաղաքի » . . . . .	20	
		868	

### ԿԱՌԿԱՌԻ ԳԱԻԱՌ

Կառկառի գաւառակն իր տարածութեամբ այս շրջանի լեռնային գաւառների մէջ ամենափոքրն է. նա ընկած է Կարճկանի, Մօկսի, Խիզանի և Սպարկերտի գաւառների մէջտեղը Երկիրը խիստ լեռնոտ է, ինչպէս և միւս գաւառները և մակերևոյթն ակօսւած խորունկ ձորերով: Գաշտեր չունենալու պատճառով երկրագործութիւնն այստեղ շատ թոյլ չափով է զարգացած. սակայն, Կառկառը հարուստ է արօտներով, որի շնորհիւ ժողովուրդը պարապում է գլխաւորապէս խաշնարածութեամբ: Կառկառը հարուստ է նաև սառնորակ ջրերով, որոնք ի մի խառնելով, կազմում են գետակներ և գնում թափւում են Խիզան գետի մէջ:

Կառկառում կան 19 գուտ հայաբնակ գիւղեր, միակ նպաստաւոր հանգամանք այս շրջանում. կան նաև գուտ քրդաբնակ գիւղեր, բայց նրանց թիւը փոքր է, թէև հայ ժողովուրդն ազատ չէ քրդական ճնշումներից. նախ՝ հայ ժողովուրդին կեղեքում են տեղացի քուրդ ազաները և կալւածատէր հոգևորականները, որոնց թիւն այս շրջանում մեծ է. հայերի հետ միաժամանակ կեղեքում է նաև խաղաղ աշխատասէր քուրդ ժողովուրդը. և երկրորդ՝ հայ ժողովուրդին կեղեքում են այն թափառաշրջիկ քուրդ ցեղերը, որոնք ամառները չւում գալիս են Կառկառի լեռները իրենց հօտերով: Շնորհիւ այս հանգամանքի, հայ ժողովուրդը այստեղ անտեսական նեղ վիճակ ունի, մանաւանդ, որ գաւառակը իր աշխարհագրական դիրքով շատ մեկուսացած է:

Այս երևոյթով պիտի բացատրել նաև այն, որ ժողովուրդը ապրում է շատ կղզիացած, կրթութիւնը նրա մէջ մուտք չի գործում և նա խարխափում է տգիտութեան մէջ:

Կառկառն այժմ բաժանւած է երկու մասի՝ արևելեան մաս և արևմտեան մաս. դրանցից առաջինը գտնւում է Վանի վիլայէթում, իսկ երկրորդը՝ է Բիթլիսի վիլայէթում, բայց ի նկատի ունենալով այն, որ այդ երկու մասերը, իբրև մի պատմական շրջան, գտնւում են միևնոյն անւան տակ, այդ պատճառով մենք բերում ենք այդ երկու մասերը միասին, կցելով նրան մի ընդհանուր գիւղացուցակ:

### Վիճակագիր Կառկառի գաւառի հայ ժողովուրդի<sup>1)</sup>

№	Գ ր ի ի Ղ Ե Մ Բ Ը	Տուն
1	Անդու . . . . .	13
2	Թացու . . . . .	59
3	Եղէկիս . . . . .	65
4	Բերկերի . . . . .	33
5	Հալս . . . . .	8
6	Մնձորուա . . . . .	13
7	Յարբոնց . . . . .	36
8	Հիւրքիւրկին . . . . .	15
9	Չկոր . . . . .	13
10	Որիգ . . . . .	33
11	Չախող . . . . .	7
12	Ծօկու . . . . .	38
13	Մրորտեայ . . . . .	45
14	Տափ . . . . .	10
15	Մճկանց . . . . .	15
16	Մուլք . . . . .	3
17	Կիճի . . . . .	14
18	Յարկեայ . . . . .	15
19	Յաղթ . . . . .	35
		470

<sup>1)</sup> Այս տեղեկութիւնները քաղել ենք Աղթամարի տեղեկագրից:

Վիճակագիր Վանի վիլայէթի հայ ժողովրդի <sup>1)</sup>					
№	ՔԱՂԱՔ և ԳԱԻԱՌ	Գիւղ	Տուն	Շունչ	
1	Վան քաղաք		4000	20000	
2	Վան-Տոսպի գաւառ	18	1577	11039	
3	Թիմարի »	38	1998	13986	
4	Արճակի »	22	866	6062	
5	Բերկրիի »	26	665	4655	
6	Ականց քաղաք		250	1500	
7	Արճէշի գաւառ	43	429	3003	
8	Ալջաւաղի »	23	761	5438	
9	Հայոց Չորի »	32	1341	7215	
10	Սօշարի »	11	179	1253	
11	Գեաւաշի »	23	963	6741	
12	Կարճկանի »	22	746	5222	
13	Շատախի քաղաք Թաղ		200	1200	
14	Շատախի գաւառ	51	726	5082	
15	Նորդուզի »	11	164	1148	
16	Մօկսի »	48	868	5076	
17	Կառկառի »	19	470	3290	
	3 քաղաք	387	16203	102910	

<sup>1)</sup> Գաւառների ազգաբնակչության բնութագրերի անդամների միջին թիւ վերցրել ենք 7.

### ԲԻԹԼԻՍԻ ՎԻԼԱՅԷԹ

Իր պատմական նշանակութեամբ և աշխարհագրական դիրքով Վանի վիլայէթից յետոյ մեզ համար կարեւոր տեղ բռնում է Բիթլիսի կամ Բաղէշի վիլայէթը:

Արա սահմաններն են՝ արեւելքից Վանի վիլայէթը, հիւսիսից Էրզրումի, իսկ արեւմուտքից և հարաւից Դիարբէքիքի վիլայէթները. բնական սահմաններ կազմում են՝ արեւելքից Վանի լիճը, հիւսիսից Բինգեօլեան լեռները, հարաւից Տիգրիսը, իսկ արեւմուտքից Տաւրօսի բարձրութեան մէկը Դարբոշ գագաթը:

Իր աշխարհագրական կազմութեամբ Բիթլիսի վիլայէթը մի հետաքրքիր պատկեր է ներկայացնում. Տաւրօսեան լեռնաշղթան մէջտեղից կարելով, վիլայէթը բաժանում է հիւսիսային և հարաւային մասերի, որոնք ունին միազամայն տարբեր ջրաբաշխներ:

Հիւսիսային մասն ընկած է Տաւրօսեան լեռնաշղթայի և Բինգեօլեան լեռների մէջ, հիւսիս-արեւելեան ուղղութեամբ տարածւելով մինչև Միփանի և Կարտանի լանջերը, ընդգրկելով Մուշի գաշար և մինչև Մանազկերտի տափարակները ձգւող տարածութիւնը. այս մասը կազմում է Արեւիկան Եփրատի հովիտն իր ջրաբաշխով: Այս մասում Եփրատի մէջ թափւում են իրենց ստորածիւղերով Մանազկերտի, Քնուսի, Չարբուխուրի կամ Բինգեօլ գետերը, իսկ Մուշի գաշարում՝ Մեղրագետը:

Վիլայէթի հարաւային մասը գտնւում է Տաւրօսեան լեռնաշղթայի և Տիգրիսի մէջ, ընդգրկելով Քարգանի և Սղերդի տափարակները և հարաւ-արեւելեան ուղղութեամբ Մօկսի ու Շատախի սահմանները գծելով, գնում տարածւում է մինչև Կորդլաց լեռները: Այս մասը կազմում է Արեւիկան Տիգրիսի հովիտը և մասամբ Արեւմտեան Տիգրիսի ափունքը: Այս մասում Արեւելեան Տիգրիսի մէջ իրենց ստորածիւղերով թափւում են Քիզան և

Բիթլիս գետերը: Այս միևնույն մասում Արևմտեան Տիգրիսի մէջ թափուում են Բաթման-սու, Պարզան գետերը և ապա Արևելեան Տիգրիսը:

Բիթլիսի վրայէթը, ինչպէս տեսանք, բազկացած է չորս սանջակներից. դրանք են՝ Բիթլիսի, Մուշի, Սղերզի և Գէնջի սանջակները:

Բիթլիսի սանջակը բռնում է Վանի լճի արևմտեան ափունքը և Բիթլիսի շրջապատը Կարճկանի սահմանից սկսած մինչև Մասունի արևելեան լանջերը:

Մուշի սանջակը բռնում է վրայէթի հիւսիսային և հիւսիս-արևելեան ամբողջ մասը:

Սղերզի սանջակը բռնում է վրայէթի հարաւային մասը:

Իսկ Գէնջի սանջակը բռնում է վրայէթի արևմտեան մասը: Գէնջի սանջակին մենք առանձին տեղ չենք յատկացնելու. ուշտեղ հայեր շատ քիչ կան, եղածները բնակուում են Մասունի արևմտեան երկու գաւառակներում, այն է՝ Պուլիում և Պիանքում, որոնց նկարագրութիւնը մենք կը տանք Մասունի հետ միասին, իբրև աշխարհագրական մի անբողջութիւն: Ինչ վերաբերում է սանջակի կենտրոնավայր Գէնջին և նրա շրջակայքում գտնուող մի քանի հայաբնակ գիւղերին, դրանց ցուցակն առաջ կը բերենք առանձին տախտակով:

Սղերզի սանջակի նկարագրութեան վրա նոյնպէս չենք ծանրանալու. այդ շրջանի վերաբերեալ տեղեկութիւնները պահասում են մեզ. հայ ազգաբնակչութեան բնհանուր թիւը կը հանենք կողմնակի հաշիւներէց:

Գալով Բիթլիսի և Մուշի սանջակներին, նախ մենք կը ծանօթանանք Բիթլիսի սանջակի հետ, որը կազմում է Վանի վրայէթի արևմտեան սահմանի անմիջական շարունակութիւնը և ապա կանցնենք Մուշի սանջակին, տալով նրան, իբրև խոշոր պատմական վայրի, առէլի մեծ տեղ:

### ԲԻԹԼԻՍԻ ՍԱՆՋԱԿ

Բիթլիսի սանջակը, իբրև եռածայր մակերևոյթ, բռնում է վրայէթի արևելեան սահմանային միջին մասը, մի ծայրով տարածելով դէպի հիւսիս-արևելք մինչև Սիփանի ստորոտները, ընդգրկելով Վանի լճի արևմտեան և հարաւ-արևմտեան ափունքը, հանդերձ Գուգուռի և Նէմբութի գագաթներով: Երկրորդ ծայրով տարածում է հարաւ-արևելեան ուղղութեամբ մինչև Մօկսի և Շատախի սահմանները, ընդգրկելով Պիզանի բարձունքները, իսկ երրորդ ծայրով տարածում է դէպի արևմուտք, ընդգրկելով Մօտկանի լեռնահանդոյցը:

Ինչպէս տեսանք, Բիթլիսի սանջակը բազկացած է չորս գաւառներից. դրանք են՝ Պիանի, Մօտկանի, Պիզանի և Բիթլիսի գաւառները: Իրանցից առաջինը գտնուում է սանջակի հիւսիս-արևելեան ծայրում, Մօտկանը արևելեան, Պիզանը հարաւ-արևելեան, իսկ այդ եռածայր մակերևոյթի կենտրոնում գտնուում է վրայէթի կենտրոնավայր Բիթլիսն իր գաւառով:

### ԲԻԹԼԻՍ

Բիթլիս կամ Բաղէշ քաղաքը գտնուում է Վանի լճի հարաւ-արևմտեան կողմում, լճի ափից ուղիղ գծով մօտաւորապէս 20 վերստ հեռաւորութեան վրա:

Գա զեղեցիկ քաղաք է, շինւած մի բնաստեղծական ձորի մէջ, ձորի բնաստեղծական լանջերի վրա: Այդ ձորն իսկապէս մի քանի ձորերի հանդոյց է. նախ երկու ձորեր, մէկը հիւսիս-արևելեան կողմից, իսկ մյուսը հարաւ-արևմտեան, գալիս միանում են կենտրոնական ձորին, նրան տալով եռաթևեան մի տեսք, ապա մի վորք անց յաջորդաբար երկու կողմերից կենտրոնական ձորին գալիս միանում են երկու այլ ձորեր: Երկու գետեր, մէկը Համեղաջուր, մյուսը Պարսովի ջուր անունով, երկու վերին ձորերից իջնելով և կենտրոնական ձորի մէջ դուրս ցցւած մի ժայռաբլուրի հիմքերը երկու կողմերից քերելով, գնում միանում են իրար և ապա ընդունելով իրենց մէջ ցածի երկու ձորերի միջով հասող վարքիկ գետակներ, առած ու հաստացած գնում են թափելու:



հեռաւոր Տիրգրիտի մէջ, նա Բիթլիսի գետն է: Կենտրոնական ձորի յատակում դուրս ցցեւած ժայռաբլուրի վրա կառուցեւած է երբեմն անւանի և հովիտ, իսկ այժմ կիսակործան Բիթլիսի ամրոցն, իր ատամնաւոր, պարիսպներով: Հինաւուրց ամրոցից բացի, ձորի յատակում գետեղեւած են շուկան և մի քանի խիտ բնակեւած թաղեր իրենց մղկիթներով ու մինարէններով: Իսկ ազգաբնակութեան խոշորագոյն մասը հաստատուած է ձորերի լանջերի վրա, ուր տները ամֆիտեատրի ձևով իրար մէջքի բարձրացած, քաղաքին տալիս են մի հմայիչ տեսք: Առանձնապէս գեղեցիկ է քաղաքի այն մասը, որն ընկած է ձորի հիւսիսային լանջերի վրա. գտեալատարեալ ամֆիտեատր է: Բիթլիսում տները շինուած մեծ մասամբ քարից. հարուստ քարահանքերը մատակարարում են ընտիր յատակութիւն ունեցող քար և գեղեցկացնում են առանց այն էլ գեղեցիկ քաղաքը:

Բիթլիսը ջրերով խիտ առատ քաղաք է, բազմաթիւ առուներ աջ ու ձախ վազվզելով ոտոցում են տներով բռնուած ձորալանջերը և երբեմն ամայի այգ կողերը ծածկում ձախ բուսականութիւնով:

Բիթլիսի կլիման ունի երկու ծայրայեղութիւններ. նախ՝ ամառները շատ շոգ է լինում, շնորհիւ այն հանգամանքի, որ ձորը իր բացւացքով նայում է դէպի հարաւ, արեգակի այրող ճառագայթները ներգործում են իրենց ամբողջ թափով. այգ ճառագայթների և սառնորակ ջրերի շնորհիւ Բիթլիսը հանդիսանում է մի պտղաբեր քաղաք. նա դարձաբուած է ուռնիների և կաղախիների խիտ շարքերով. նա ճոխացած է խաղողի այգիներով և պտղատու պարտէզներով. նա արտադրում է ընտիր խաղողի տեսակներ, տանձ, խնձոր, սալոր, ծիրան, սերկիւլի, թուզ, նուռ, կեռաս և այլ պտուղներ:

Միւս կողմից, Բիթլիսն ունի սոսկալի ձմեռ, որը յաճախ տեսւած է 5 ամիս, հանդերձ իր սառնամանիքներով ու քամիներով. դրանով նա պարտական է իր բարձրութեան, որը հասնում է 5,200 ոտնաչափի ձորի մակերևոյթից:

Բիթլիսը մի վաճառաշահ քաղաք է և իրրև այդպիսին, նա ունեցել է իր մեծ դերը անցեալում և ունենալու է նաև ապագայում: Նա գտնուած է Տրապիզոնից Էրզրում և Էրզրուից Մոսուլ տանող ճանապարհի վրա. նա հանդիսանում է այն միակ կէտը, որի վրայով յարաբերութիւն է պահպանուած Վանի,

հիւսիսային մի քանի շրջանների և Դիարբէքքրի, Մոսուլի և Միջագետքի մէջ: Երկու լեռնաշղթաներ՝ Տաւրոսն ու Քուրդստանը, իրրև անանցանկի բնական պատնէշներ, պատուար են հանդիսանում Ասիական Տաճկաստանի հիւսիսային և հարաւային երկիրների մէջ և եթէ կայ մի տեղ, որ ծառայում է իրրև անցք, այդ պատուարի միջով, դա Վանի լճի արեւմտեան ցած տարածութիւնն է, ուր երկու շղթաներ հակելով, թողնում են հաղորդակցութեան համար մի բաց դուռ, որի վրա գտնուած է Բիթլիսը: Նայելով Բիթլիսի վրա իրրև այգպիսի կարևոր մի կէտի, սրտեղով այժմ կատարուած է բազմաթիւ կարաւանների երթեկութիւն, չը պիտի դարմանալ, որ Բիթլիսը, իրրև վաճառականութեան կենտրոն, բարձր է կանգնած Ասիական Թուրքիայի շատ քաղաքներից:

Բիթլիսի շուկան բազկացած է մօտաւորապէս 1,000 գտնագտն տեսակի մանր ու մեծ կրպակներից, մի քանի քարաւանասարաններից և բազմաթիւ սրճարաններից: Իրրև զբաղմունքի, առևտրի և արտահանութեան նիւթ ծառայում է բազէշի շիլա կոչուող կարմիր կտաւը, որի գիմացկութիւնը և ամուր ալ կարմիր գոյնը նրան հասցրել են մեծ հռչակի:

Բիթլիսն ունի 30,000 բնակիչ, որի մի կըրորդ մասը, այն է 10,000-ը հայեր են: Հայերն ունին չորս եկեղեցի, որոնցից նշանաւոր է Կարմրակ Ս. Նշանի եկեղեցին և չորս վանքեր, որոնցից երեքը գտնուած են քաղաքի շրջակայքում, իսկ մէկը քաղաքի մէջ Ամրտօլու վանք անուանով: Տաճիկներն ունին 15 մզկիթ:

Հայերը մտաւորապէս այստեղ այնքան էլ յետ փնացած չեն. նրանք ունին 7 դպրոցներ, որոնցից 4-ը տղայոց է, իսկ երեքը օրիորդաց. այստեղ դպրոցներ ունին նաև բողոքական հայերը:

Բիթլիսի հայերը բաւականին ճարպիկ են և ընդունակ. նրանք առանձին ընդունակութիւն ցոյց են տալիս առևտրի մէջ. այստեղ առևտուրը մեծ մասամբ նրանց ձեռքումն է գտնուած, թէև յաճախակի կրկնուող խռովութիւններն ու կոտորածները ամեն անգամ եկել են քանդելու այդ տոկուն ժողովրդի ստեղծագործութիւնն ու վաստակը: Բիթլիսցի հայը ոչ միայն իր տան մէջ է առևտրով պարապում, այլ և դիմում է օտար տեղեր և ամեն տեղ էլ հանդիսանում է լաւ մրցակից առևտրական:

**ԲԻԹԼԻՍԻ ԳԱԽԱՌ**

Բիթլիսի գաւառում կան չորս հայաբնակ գաւառակներ, զրանք են՝ Փարխանդի, Տատիկի, Գիւղէլղէրէլի և Դաուանի գաւառակները:

Փարխանդի գաւառակն ընկած է քաղաքից զէպի հարաւ և պարունակում է իր մէջ 8 հայաբնակ գիւղեր:

Տատիկի գաւառակն ընկած է քաղաքից զէպի հարաւ-արեւելք և պարունակում է իր մէջ 11 հայաբնակ գիւղեր:

Այս գաւառակում նշանաւոր է Դուլթիկ գիւղն իր գեղեցիկ դիրքով, ջրերի առատութեամբ և պողաբերութիւնով. դա մի մեծ գիւղ է, մօտաւորապէս 350 տուն բնակիչներով. ժողովուրդը յայտնի է իր ընդունակութիւններով և արհեստագիտութիւնով. աշտեղ զարգացած է առանձնապէս երկաթագործութիւնը և բրուտութիւնը. Դուլթիկի կաւէ ամանները մեծ ընդունակութիւն ունին գտած ոչ միայն մօտիկ, այլ և հեռաւոր շրջաններում:

Դուլթիկը յայտնի է նաև իր եկեղեցիներով, վանքերով ու սրբավայրերով, որոնք վիկայում են նրա փառաւոր անցեալը: Այժմ գիւղն ունի երկու սեռի օրինաւոր դպրոց, որը պահպանւում է Պօլսի հայրենակիցների կազմած «Եզրայրամէր» ընկերութեան նպաստներով:

Գիւղէլղէրէի գաւառակը գտնւում է քաղաքից զէպի հիւսիս-արեւելք և տարածւում է մինչև կարճկանի սահմանները. այս գաւառակը պարունակւում է իր մէջ 18 հայաբնակ գիւղեր:

Դաուանի գաւառակն ընկած է քաղաքից զէպի հիւսիս և տարածւում է մինչև Վանի լճի արևմտեան ափը. այս գաւառակի հայաբնակ գիւղերի թիւն է 9, որոնցից նշանաւոր է Դաուան ամանը:

**Վիճակագիր Բիթլիսի գաւառի հայ ժողովրդի**

№	Գ յ Ի Ի Ղ Ե Ր Ը	Տուն <sup>1)</sup>	Շուն <sup>2)</sup>	Տուն <sup>2)</sup>
Տատիկ գաւառակ.				
1	Դուլթիկ . . . . .	334	1779	
2	Մօճկօնէս . . . . .	43	291	
3	Կելճօնք . . . . .	27	184	
4	Կելսւր . . . . .	19	147	
5	Պասս . . . . .	58	441	
6	Ոստին . . . . .	27	134	
7	Ծղկամ . . . . .	41	243	
8	Վանիկ . . . . .	60	362	
9	Սասիկ . . . . .	27	158	
10	Շէն . . . . .	12	73	
11	Սափ . . . . .	7	41	
		<b>655</b>	<b>3853</b>	<b>655</b>
Գիւղէլղէրէ գաւառակ.				
1	Հանդ . . . . .	38	238	
2	Տոփ . . . . .	20	114	
3	Տաշտոփ . . . . .	13	70	
4	Որճաք . . . . .	8	57	
5	Սազ . . . . .	47	293	
6	Նէլ . . . . .	27	181	
7	Կարլ . . . . .	40	335	
8	Խումս . . . . .	20	162	
9	Կութ . . . . .	57	514	
10	Խարզիթ . . . . .	25	168	
11	Խարդ . . . . .	8	64	
12	Ջըլքան . . . . .	7	50	
13	Մնդեան . . . . .	3	22	
14	Թոնուա . . . . .	8	60	

1) Այս տեղեկութիւնները քաղել ենք Էփրիկեանի բնաշխարհի բառարանից:  
 2) Այս տեղեկութիւնները քաղել ենք Մուշի առաջնորդարանից:

Վիճակագիր Բիթլիսի գաւառի հայ ժողովրդի						
№	Գ Ի Ի Ղ Ե Բ Ը	Տուն	Շուն	Տուն		
15	Ալբերդ . . . . .	2	21			
16	Կոտոմ . . . . .	4	39			
17	Բալբան . . . . .	3	18			
18	Աղբձոր . . . . .	9	53			
		339	2459	339		
Փարխանդի գաւառակ.						
1	Փարխանդ . . . . .	51	331			
2	Ամպ . . . . .	8	35			
3	Խմելջուր . . . . .	12	74			
4	Մարգորդ վեր . . . . .	7	53			
5	» ներք . . . . .	25	182			
6	Հորմեղ . . . . .	14	80			
7	Կորվու . . . . .	60	575			
8	Խարտկող . . . . .	4	48			
		181	1378	181		
Դատւանի գաւառակ.						
1	Դատւան . . . . .	70	512	120		
2	Օրդափ . . . . .	58	302	80		
3	Ալամէք . . . . .	4	28	5		
4	Սախրե . . . . .	31	207	50		
5	Ծւար . . . . .	17	86	20		
6	Կամախ . . . . .	41	266	60		
7	Պօռ . . . . .	46	392	100		
8	Բարշէն . . . . .	35	325	35		
9	Մզրէ . . . . .	20	134	25		
		322	2252	495		
46				1670		

**ԴԱՏԻԱՆ**

Դատւանը աւելի շուտ մի գիւղ է, քան աւան. նա ունի ընդամենը 100 տուն բնակիչ, բայց նրա կարեորութիւնը նրա աշխարհագրական գիրքի մէջ է: Այդ աւանը գտնուում է Վանի լճի հարաւ-արեւմտեան ափին. ունի թէև փոքր, բայց յարմարաւոր նաւահանգիստ. այդ աեղով փոխադրում են Բիթլիսից և Մուշի դաշտից միեւրբնեք զէպի Վան և ստանում են Վանից այլ միեւրբնեք. այդ տեղից նստում են նաև Վան գնացողները և այդտեղ ափ էլնում Վանից եկողները: Այդպիսով Դատւանը հանգիստանում է լճի արեւմտեան ափի գլխաւոր նաւահանգիստը: Չնայած այդ բոլորին, Դատւանը այժմ այդ երկրին յատուկ մի յեղանակ, ազրատ աւան է, մինչդեռ այլ պայմանների մէջ նա կը գտնուար մի բանուկ նաւահանգիստ, իսկ իր ունեցած բերրի հողերի շնորհիւ՝ արդիւնաւէտ ու վաճառաշահ աւան:

Դատւանը, իբրև պատմական վայր, ունի իր անցեալը. նրա շրջակայքում կան բազմաթիւ աւերակներ և եկեղեցիների բեկորներ. աւերակների մի մեծ կոյտ էլ գտնուում է ծովափին ընկած մի բլրի վրա, որը վերագրուում է Արծրունիների սոսմին և համարուում է Սենեքերիմի ամառանոցը:

Բիթլիսի գաւառը և մասնաւորապէս Դատւանի շրջանը ունի գեղեցիկ տեսարաններ. բնութիւնն առատօրէն պարզեւ է իր բարեքները այդ վայրերին. Գոգուան ու Նէմրուժը մի կողմից, Տաւրոսի արևելեան փէշերը միւս՝ և Քուրդստանի լեռների արեւմտեան լանջերը երրորդ կողմից, հակելով աեղ են աւել մի ընդարձակ հովիտի, որն իր հարուստ բուսականութեամբ և անտառապատ բլուրներով հանդիսանում է մի հմայիչ վայր:

Բայց այդտեղ կեանքն ու կուլտուրան կանգ աւնելով, քարացման է գատապարաւել նաև հարուստ բնութիւնը:

**ԽԼԱԹԻ ԳԱԻԱՌ**

Խլաթի գաւառը կամ պատմական Բզնունիքը գտնուում է Վանի լճի հիւսիս-արեւմտեան ափերի վրա, սահմաններ ունենալով արևելքից Ալջաւազի գաւառը, հիւսիսից Բուլանըզը, իսկ արևմուտքից Մուշի գաւառն ու գաշտը:

Պաւատի հիւսիս-արեւելեան սահմանի վրայ բարձրանում է Սիփանը, գագաթների այդ գեղեցիկունին, իսկ հարաւային սահմանների վրա բարձրանում են երկու պատմական լեռներ Փոզուռն ու Նէմրուժը:

Փոզուռը հարաւ-արեւելան կողմից պատկերանում է իրև մէկ հատիկ գագաթ, որի խիստ թեք կողերը վերջանում են մի սուր կատարով: Փոզուռի կատարն այդ կողմից և գեղեցիկ է և անմտաշելի: հարաւ-արեւմտեան և արեւմտեան կողմից նա հակում է անտառապատ լեռների և բլուռների վրայ, սրանք կազմում են Մուշի դաշտի արեւելեան սահմանը:

Փոզուռից դէպի հիւսիս գտնւում է Նէմրուժը. սա նման չէ Փոզուռին, սրածայր կատարով չէ պսակւած նրա գլուխը. ստորոտները լայնանիստ, լանջերը փուլած, բարձունքները տափաւած ու հաղարդ, նա ներկայացնում է կուտակումների մի կուտակում, որի բարձրութիւնն այդ ձևով էլ անապին է: նա լայնանիստ փուլած է Մուշի դաշտի և Վանի լճի մէջտեղ, և հանդիսանալով իրրև մի պատար լճի յարձանքներին դէպի Մուշի դաշտ, հէնց իր գագաթի լայնարեւրան խառնարանում գուրգուրում է մի փոքրիկ ծովակ: Նէմրուժը հրաբխային կատար է. նրա խառնարանի շրջապատը, ըստ Լինչի, 22 վերստ է, իսկ տրամագիծը 7½ վերստ. ահա այդ ընդարձակ խառնարանի ամբողջ կէս մասը ծածկւած է ջրով և այդ, իրրև իւրայատուկ մի լիճ, մի գարգ Սլաթի գաւառում, գտնւում է ծովի մակերևոյթից 7,600 ոտնաչափ բարձրութեան վրա:

Նէմրուժի գագաթի վարդը կազմող այդ լճակից բացի Սլաթի գաւառում կայ և մի այլ լիճ. դա Նազիկ կոչուող լիճն է, որը գտնւում է գաւառի հիւսիս-արեւմտեան կողմում: Նազիկը 3-4 անգամ մեծ է քան Նէմրուժի լիճը և ծովի մակերևոյթից բարձր է 6,400 ոտնաչափով. լճի ջուրը անուշահամ է, անուշահամ են նաև նրա մէջ գտնուող ձկները:

Սլաթի գաւառն ունի սիրուն բարերեր դաշտեր. այդ դաշտերում մշակուում են ընտիր հացահատիկներ, որից բուսականաչափ արտահանում է Վան:

Պաւատում կայ 33 գիւղ, որից 25-ը հայաբնակ են. հայաբնակ գիւղերից նշանուոր է Թեղուտը:

Թեղուտը գտնւում է Վանի լճի արեւմտեան ծովախորշի

ափից մի փոքր հեռու. նա այժմ ունի աւելի քան 200 տուն բնակիչ: 1881 թւին տեղի ունեցած երկրաշարժից զիւղը աւերակց և ժողովրդի մեծագոյն մասը գիւմեց պանդխտութեան, սակայն շատերը նորից վերադարձան գիւղ, շէնացրին աւերած տները և շնորհիւ բարերեր հողերի, շուտով վերակազնեցին իրենց նախկին տնտեսութիւր. Թեղուտն այժմ էլ գաւառի ամենամեծ գիւղն է:

Վիճակագիր Սլաթի գաւառի հայ ժողովրդի <sup>1)</sup>						Տուն	Շուն
№	Գ	Ի	Դ	Ե	Ը		
1	Ագարակ	.	.	.	.	6	51
2	Աջաղ	.	.	.	.	18	139
3	Էրմալը	.	.	.	.	16	132
4	Թեղուտ	.	.	.	.	215	1728
5	Թուխ	.	.	.	.	25	208
6	Տափափանք	.	.	.	.	90	873
7	Սուլիկ	.	.	.	.	20	183
8	Սարարաշէնք	.	.	.	.	28	209
9	Ծաղկէ	.	.	.	.	25	227
10	Ծղակ	.	.	.	.	60	496
11	Կուշտեան	.	.	.	.	26	249
12	Կձւակ	.	.	.	.	60	514
13	Կամուրջ	.	.	.	.	57	688
14	Հերսնք	.	.	.	.	28	262
15	Ճիղերոք	.	.	.	.	10	115
16	Ճեմալտին	.	.	.	.	15	153
17	Մեծք	.	.	.	.	20	185
18	Մաանափանք	.	.	.	.	12	103
19	Սպրաձոր	.	.	.	.	29	176
20	Սղորդ	.	.	.	.	15	138
21	Փրիսու	.	.	.	.	115	1000
22	Շամիրամ.	.	.	.	.	26	214
23	Ջրհոր	.	.	.	.	37	316
24	Չօրիօնք	.	.	.	.	13	84
						966	8443

<sup>1)</sup> Այս տեղեկութիւնները բաղել ենք Էփրեկեանի Բնաշխարհի բաւարանից:

### Խ Լ Ա Թ

Սլաթի գաւառի կենտրոնավայրն է Սլաթ քաղաքը, որն ընկած է լճի հիւսիս-արեւմտեան բուն ափին:

Դա քաղաք չէ այժման հասկացողութեամբ, այլ մի քանի դատ-գատ անշուք թաղերի խումբ, որոնք աւելի աչքի են ընկնում իրենց աւերակներով, քան նորագոյն շէնքերով: Այդ թաղերն ունին իրենց յատուկ անունները. այսպէս՝ կենտրոնական թաղը կոչւում է Իքի-գուրէ. այստեղ կան մի քանի մահմեդական դամբարաններ իրենց գեղեցիկ մատուռներով, որոնց մէջ աչքի են ընկնում մի գոյգը, որոնց անունով և կոչւում է թաղը: Այս թաղի դիմաց, ուղղիդ լճի ափին, գտնուում է Սլաթի բերդը, օսմանեան տիրապետութեան օրօք շինւած. սրա պարիսպները զրւած են ջրից բաւականին բարձր մի ժայռի վրա, որի շնորհիւ բերդը ապաստ է մնացել ջրասոյգ լինելուց: Իքի-գուրէ թաղից դէպի արեւմուտք, մի ձորի լանջերի վրա ընկած է Սարաբա-շէնք կոչուող թաղը. այստեղ գտնուում է Սլաթի հնագոյն շրջանի բերդը, որի աւերակների յետքերը միայն այժմ են նշմարուում, իսկ Իքի-գուրէ թաղից դէպի արեւելք, լճի ափին ընկած է Էրկիզան կոչուող թաղը, ուր կենտրոնացած է պաշտօնէութիւնը:

Նայելով Սլաթի գեղեցիկ դիրքին, երկու հնագոյն շրջանների բերդերի մնացորդներին և կանգուն մնացած գեղեցկաշէն դամբարաններին, անժխտելի է մնում Սլաթի հարուստ անցեալը և ծաղկման փառաւոր շրջանը, մինչդեռ նա այսօր անցեալի յուշերով ապրող մի խճուկ պատկեր է ներկայացնում:

Սիրուն կլիման, բարեբեր հողը չեն խնայել Սլաթին որևէ բարիք. հէնց այժմ էլ նրա թաղերը, առանձնապէս Էրկիզանը և Սարաբա-շահարը թաղւած են հարուստ բուսականութեան մէջ, զարդարւած են բազմատեսակ պտղատու ծառերով, բայց բացակայում է այն շինարար ձեռքը, որը կարող էր զրախտ դարձնել այդ վայրը:

Սլաթի մէջ ապրում են գլխաւորապէս քրդեր. հայերի թիւը այստեղ շատ քիչ է, ընդամենը 25-30 ընտանիք, որոնք բնակւում են Սարաբա-շահար թաղում, իրրև հողագործ տարր. իրենց նւագ թւով հայերը այդտեղ որևէ հետաքրքիր երևոյթ չեն ներկայացնում:

### ԽԼԱԹԻ ԳԱԽԱՌ

Քուրդստանի լեռները, տարածելով Վանի լճի հարաւային ափերի ամբողջ երկարութեամբ և ամենաբարձր չափերի համեմտով լեռնաշղթայի կենտրոնական մասում, ուր Արտսն ու Եղերովը, որպէս այդ լեռների հսկաներ, իրենց կատարներով գծում են ամենաբարձր սահմանը, արեւմտեան մասում, աստիճանաբար հակւելով, գնում հանգում են Արևելեան Տիգրիսի հովտում և Սղերգի տափարակներում:

Ահա Քուրդստանի լեռների այս մասում Մօկսին, Կառկառին, և Կարճկանին սահմանակից ընկած է Սիզանի գաւառը, կազմւելով Էրթիսի սանջուկի հարաւ-արևելեան ծայրը:

Գաւառի մակերևոյթին իր կազմութեամբ մի հետաքրքիր պատկեր է ներկայացնում. հիւսիսային և արևելեան մասերում երկիրը լեռնոտ է և խոր ձորերով ակօւած, ինչպէս Մօկսն ու Կառկառն էին. տեղ-տեղ լեռները պատած են անտառներով, իսկ հարաւային և արևմտեան մասերում դաշտային է:

Գաւառի երկարութեամբ վազում է Սիզան գետը, որի բազմաթիւ ճիւղերը սոսգում են գաւառի մի խոշոր մասը. կլիման բարեխառն է, տեղ-տեղ նոյն իսկ տաք, իսկ հողը բարեբեր է մանաւանդ դաշտային մասերում:

Գաւառը բողկացած է երեք գաւառակներից. զրանք են՝ Մամոտանքը, Սպարկերտը և Սիզանը, որոնք կողք կողքի ընկած են Մօկսի և Կառկառի սահմաններից սկսած մինչև գաւառաբերանը:

Մամոտանքն ու Սպարկերտը, սահմանակից լինելով Մօկսին և Կառկառին, իրենց կազմութեամբ շատ նման են յիշեալ գաւառակներին. երկիրը պատած է լեռներով ու ձորերով. հողագործութեան համար տափարակ դաշտեր համարեա չը կան, ժողովրդի գլխաւոր պարապմունքն է խաշնարածութիւնն ու շալագործութիւնը:

Այսպէս չէ Սիզանը. ճիշտ է, այս գաւառակներում էլ կան լեռներ ու ձորեր, բայց նրանք յաճախ տեղի են տալիս սիրուն հարթութիւնների. գետերի հովիտները բացում են ձեր առաջ սիրուն տեսարաններ. երկիրը դառնում է հիւրընկալ ու բարեբեր և այդ հովիտների ու հարթութիւնների վրա աճում են խաղողի բնոյր այգիներ, պտղատու ծառերի շատ տեսակներ և ցորենից

ու գարուց բացի, բուննում են նաև ծխախոտ և տեղ-տեղ նոյն իսկ բամբակ:

Մամոտանքը բաղկացած է 16 հայարնակ գիւղերից. քրդաբնակ գիւղերի թիւը անյայտ է. հայարնակ գիւղերից նշանաւոր են Սէզը և Ապարանքը: Վերջինս իբր եղև է նախնի հայ նախորարներից մէկի ապարանքը, որից և մնացել է մինչև այժմ այդ անունը: Այս գիւղի մօտ գտնուում է Ապարանից Ս. Սաչի վանքը, որ եղև է Մօկաց եպիսկոպոսանիստ աթոռը:

Ապարիկերան ունի 29 հայարնակ գիւղեր. զրանցից իր մեծութեամբ աչքի է ընկնում Բասար:

Սիլվանն ունի 23 հայարնակ գիւղեր:

Գաւառի կենտրոնավայրն է Կարատու աւանը, ուր ապրում են 50-ի չափ տուն հայեր:

Սիլվանի գաւառը 1896 թւի ջարդերի ժամանակ մեծամեծ զրկանքներ կրեց. միմիայն Մամոտանքն ունեցաւ 160 սպանւած, Սիլվան ունեցաւ աւելի քան 400 սպանւած. ժողովրդից շատերը գաղթեցին և շատերին էլ կրօնափոխ կղան:

Այս շրջանի չարագործներն էին՝ Սալիզ Ալին, խորօղցի Աղէն, բշէրիկցի Մատաֆա-բէկը, Այս գիւղացի Մամէն, սալուլցի Մօլլա Կատուժը, կապաթանցի Մահմէն, Շառօն, Ջէնլէրը և Ալիշէրը: Բարբարոսները Ս. Սաչ վանքի վանահայր Մահակ վարդապետին կենդանի տիկ հանեցին: Գէլ գիւղացի Փախկի Մահաւը և Կապարոցի Ահմէզը երկու եղբայրներ իրար վրա զրած ցցով գետնին գամեցին:

Վիճակագիր Սիլվանի գաւառի հայ ժողովրդի<sup>1)</sup>

№	Գ Ի Ի Ղ Ե Ր Ը	Տուն
1	Սարխոց . . . . .	24
2	Սարկե . . . . .	36
3	Մանտնց . . . . .	22
4	Մահմտենք . . . . .	30
5	Պոռչենց . . . . .	15
6	Անապատ . . . . .	22
7	Աղեան . . . . .	3
8	Նորշէն . . . . .	10
9	Տի . . . . .	38
10	Ս. Սաչ-գիւղ . . . . .	20
11	Պախոր . . . . .	17
12	Նամ . . . . .	9
13	Սաճուս . . . . .	12
14	Կատինօք . . . . .	18
15	Կարատու վերին . . . . .	25
16	» ներքին . . . . .	18
17	Պրիւնս . . . . .	34
18	Դարոնց . . . . .	38
19	Շէն . . . . .	18
20	Փալատ . . . . .	8
21	Սուփ . . . . .	9
22	Հէզին . . . . .	21
23	Անտեանց . . . . .	42
		489

1) Այս տեղեկութիւնները բաղւած են Աղթամարի տեղեկագրից:

Վիճակագիր Սպարկերտի դաւառակի հայ ժողովրդի			
№	Գ Ի Ի Ղ Ե Ր Ը	Տուն <sup>1)</sup>	
1	Սև քար . . . . .	16	
2	Ճածվան . . . . .	50	
3	Կոտենց վեր . . . . .	37	
4	« ներ . . . . .	9	
5	Ներքան . . . . .	7	
6	Օղանդ . . . . .	11	
7	Հիւրուզ վեր . . . . .	40	
8	» ներ . . . . .	19	
9	Պաղենց . . . . .	20	
10	Լուար . . . . .	12	
11	Թաղ . . . . .	8	
12	Կեղխ . . . . .	9	
13	Տանձէս . . . . .	8	
14	Տօռու . . . . .	19	
15	Յարդին . . . . .	5	
16	Դալարս . . . . .	15	
17	Պասրանս . . . . .	14	
18	Հիւսպ . . . . .	20	
19	Խութ . . . . .	9	
20	Սօրի . . . . .	12	
21	Բաստ . . . . .	60	
22	Սօղանց . . . . .	20	
23	Առնջիկ . . . . .	20	
24	Տւաղուս . . . . .	30	
25	Կոան . . . . .	5	
26	Դաշտ . . . . .	13	
27	Մատ . . . . .	20	
28	Չմէն . . . . .	20	
29	Բերդակ . . . . .	5	
		533	

1) Այս տեղեկութիւնները բազում են Աղթամարի տեղեկագրից:

Վիճակագիր Մամուտանք դաւառակի հայ ժողովրդի <sup>1)</sup>			
№	Գ Ի Ի Ղ Ե Ր Ը	Տուն	
1	Սէղ . . . . .	40	
2	Օվ . . . . .	30	
3	Հաւտանց . . . . .	6	
4	Գթանց . . . . .	4	
5	Նախանձ . . . . .	1	
6	Ապարանք . . . . .	18	
7	Պարկանց . . . . .	10	
8	Գոմեր . . . . .	6	
9	Կանոց . . . . .	15	
10	Հարմուս . . . . .	1	
11	Յարութ . . . . .	9	
12	Կօնիս . . . . .	10	
13	Գուղենց . . . . .	12	
14	Մութ . . . . .	10	
15	Շէն-աղբիւր . . . . .	25	
16	Միշայ . . . . .	11	
		208	

1) Այս տեղեկութիւնները բազում են Աղթամարի տեղեկագրից:

### ՄՕՏԿԱՆԻ ԳԱԻԱՒ

Տուրօսի լեռնաշղթան Բիթլիսից դէպի արևմուտք կանգ է առնում և աջ ու ձախ թեւեր արձակելով առաջացնում է մի նոր լեռնաշղթայ, որի մի ծայրը տարածւում է դէպի Վանի լիճը, իսկ միւս ծայրը հարաւ արևմտեան ուղղութեամբ գնում հանգում է Սղերգի գաշաավայրում. ահա այս նոր շեռնաշղթայի հարաւային լանջերի վրա ընկած է Մօտկանի գաւառը:

Մօտկանը այգալիսով մի լեռնոտ, յաճախ հարուստ ու ապս-  
սածոտ գաւառ է. սրա ձորերի և պատուածքների միջով հոսում են բազմաթիւ առուներ, որոնք միանալով կազմում են Արևմտեան Տիգրիսի մէջ թափուղ Սարգան գետի մէկ ճիւղը:

Մօտկանը բուսականին ընդարձակ գաւառ է, բայց այդտեղ ապրող հայերի թիւը շատ սահմանափակ է: Հայաբնակ գիւղերի թիւը հաշւում են 19, բայց նրանցից մեծ մասը անուսով է միայն գիւղ: Կան գիւղեր, որ ունին 3-5 տուն բնակիչ, իսկ մեծ գիւղերն ունին ամենաշատը 40 տուն բնակիչ: Այսպիսով Մօտկանում ապրում են ընդամենը մի բուն հայեր, որոնք գտնւելով վայրենի բնութեան ծոցում և վայրագ քուրդ ցեղերով շրջապատւած, վարում են ճնշւած կեանք:

### Վիճակագիր Մօտկանի գաւառակի հայ ժողովրդի<sup>1)</sup>

№	Գ Ի Ի Ղ Ե Ր Ը	Տուն
1	Կարբ . . . . .	6
2	Բրուար . . . . .	8
3	Մղրուկ . . . . .	20
4	Որձէնք . . . . .	15
5	Գղեխ . . . . .	14
6	Մէրէ-թաղ . . . . .	10
7	Հաւու-թաղ . . . . .	10
8	Սուր . . . . .	10
9	Ասպնջեր . . . . .	50
10	Կնձաւ . . . . .	40
11	Մցու . . . . .	25
12	Քաշախ . . . . .	30
13	Մեծ-ձոր . . . . .	3
14	Մրձանք . . . . .	5
15	Բողնուտ . . . . .	10
16	Շէն . . . . .	20
17	Արփի . . . . .	15
18	Նիչ . . . . .	15
19	Կրխու . . . . .	10
		<b>316</b>

1) Այս տեղեկութիւնները բաղկ ենք Մուշի առաջնորդարանից:



### ՄՈՒՇԻ ՍԱՆՋԱԿ

Մուշի սանձակը, ինչպէս տեսանք, բռնում է Բիթլիսի վիշաշէթի հիւսիսային և հիւսիս-արեւելեան ամբողջ մասը. նա բազմակայան է հինգ գաւառներից. դրանք են՝ 1) Մուշի գաշտը, 2) Սասունը, 3) Բուլանդը, 4) Մանազկերտը և 5) Վարզոն:

### ՄՈՒՇԻ ԴԱՇՏԸ

Մուշի գաշտը կամ պատմական Տարօնի գաւառը գտնւում է Վանի լճից դէպի արեւմուտք, բռնելով հիւսիս-արեւմտեան ուղղութեամբ տարածուող մի երկարուկ տարածութիւն. նրա երկարութիւնը կը լինի 70 վերստ, իսկ լայնութիւնը 25-30 վերստ: Գաշտը երեք կողմերից շրջապատւած է բարձր լեռներով. արեւելեան սահմանի վրա ցցւած են Գուգուան ու Նէմրութը իրենց փէշերով, հիւսիսային երկարութեամբ բնկած է Բինգեօլեան լեռների հարաւային հեռուոր շարքը, այն է՝ Հաւատամքի և Քարքէ գագաթների իրենց օժանդակ լեռներով, իսկ հարաւային կողմում ձգւած է Տաւրոսեան լեռնաշղթան: Երեք հսկայ պատնէշներ, գծելով Մուշի գաշտի սահմանները, տալիս են նրան մի գեղեցիկ տեսք: Ընտրեցէք նրան շրջապատող լեռներից որը կամենաք, բարձրացէք նրա վրայ և այդտեղից դիտէք այդ օրիգինալ բնութիւնը: Հորիզոնը չորս կողմից ներկայացնում է կատարների մի բոլորակ շղթայ. այդ կատարները գլխիվայր իջնելով, գալիս օղակի պէս բոլորում են սիրուն գաշտը. երկու գետեր՝ Եփրատն ու Մեղրազեաը ոլորապտոյտ ափօսելով գաշտը, գալիս խառնւում են իրար և իրրե ժապաւէն, բեկբեկուն գծում են հարթ մակարդակը, իսկ այդ բուլբուլները, իբրև մի նոր գեղեցկութիւն կոկիկ հարթութեան վրա օաղիսի պէս բնկած են Մուշի գաշտի բազմաթիւ գիւղերը:

Նայում էք բնութեան ստեղծած այդ գեղեցիկ տեսարանին, նրա հմայիչ պատկերներով յափշտակուած էք այնքան ժամանակ, մինչև որ այդ երկրում տիրող կարգերի տխուր յիշողութիւնները գալիս են ընդհատելու այդ հմայիչ տպաւորութիւնները:

Մուշի գաշտն իր պարարտ հողերով, ջրերի առատութիւնով և բարեխառն կլիմայով մի թագնւած գանձ է. թագնւած գանձ ստում ենք այն պատճառով, որ նա այժմ այն չէ ներկայացնում, ինչ որ պէտք էր: Այդ գաշտում բուսնում են ամենաբնտիր ծառապտուղներ, հացահատիկներ և բանջարանոցային բոյսեր. բուսնում են խաղող, վարունգ, սեխ, ձմերուկ. այդ գաշտում բուսնում են ծխախոտ, բրինձ, նոյն իսկ բամբակ, ինչպէս այդ ցոյց են աւել փորձերը. այդ գաշտի մի քանի մասերում հողն այնքան պարարտ է և այնքան խոնաութիւն պարունակող իր մէջ, որ խաղողի այգիները և վարունգի ու ձմերուկի բուստաններն աճում են առանց ջրելու: Այսպէս լինելով ակներև է, որ Մուշի գաշտից կարելի էր մի երկրորդ Արարատեան գաշտ ստեղծել:

Եւ իսկապէս, իրենց Ֆիզիքական կազմութիւնով և կլիմայական պայմաններով սրբան նմանութիւններ կան այդ երկու գաշտերի մէջ:

Արարատեան գաշտը շրջապատւած է Արարատեան, Արագածի և Գեղամայ լեռներով, իսկ Մուշի գաշտը՝ Բինգօլեան, Նէմրութի և Տաւրօսի լեռներով:

Արարատեան գաշտը կազմում է Արաքսի հովիտը, իսկ Մուշի գաշտը՝ Եփրատի հովիտը:

Ճիշտ է, Արարատեան գաշտը երկու անգամ մեծ է Մուշի գաշտից, նրա մակերևոյթը աւելի ցած է, քան Մուշի գաշտի մակերևոյթը և հետևապէս, Արարատեան գաշտի կլիման աւելի տաք է և աւելի նպաստաւոր մի քանի բերքերի համար, ինչպէս են բամբակը, բրինձը, խաղողը. բայց այն հարուստ բուսականութիւնը և այն ճոխ անտառները, որոնցով ծածկւած են Մուշի գաշտը շրջապատող լեռները, դուք չէք գտնի Արարատեան գաշտը շրջապատող լեռներում. մի հանդամանք, որն ահագին նշանակութիւն ունի երկրի սնտեսական կեանքում: Այդ անտառները մինչև այժմ էլ շատ տեղերում ժողովրդին մատակարարում են բնութեան սուած մեղրահամ մի հիւթ, որն առատօրէն իջնում է տերեւների վրա և որը հաւաքելով ու եփելով, ստացւում է մեղրին փոխարինող շատ տեղերում յայտնի գազպէնը:

Մինչդեռ իր ներկայ սնտեսական դրութեամբ Մուշի գաշտը ոչ միայն չի կարելի որևէ համեմատութեան մէջ դնել Արարատեան:

տեան դաշտի հետ, այլ և այստեղ այնքան ընկած է կուլտուրան, որ մարդ դարմացած բացականչում է.

— Միթէ՞ սա է Մուշի դաշտը, այն Մուշի դաշտը, որ պատմական անցեալում Արարատեան դաշտի մրցակիցն էր հանդիսանում:

Պատմական Հայաստանում իբրև կուլտուրական վայրեր, առանձին տեղ գրաւեցին երկուսը. դրանք էին Արարատեան երկիրը և Տարօնը, այժմեան բառով Արարատեան դաշտը և Մուշի դաշտը:

Հինգերորդ դարը մեր պատմութեան մէջ համարում է մտաւոր շարժման դար. այդ շրջանում տեղի ունեցան առերի գիւտը, Մուրը Գրքի թարգմանութիւնը, ուսումնաստարաւ հայ երիտասարդների ուղեորութիւնը Աղէքսանդրիա, Աթէնք և Բիւզանդիոն բարձրագոյն կրթութիւն ձեռք բերելու նպատակով և վերջապէս այդ շրջանում ծաղկեցին վանքերը, ուր կենտրոնացած էր այդ ժամանակայ կրթական գործն ու մասնագրութիւնը: Եւ ահա այդ մտաւոր շարժման գլուխ կազմած էին երկու խոշոր անձնաւորութիւններ՝ Սահակը և Մեսրոբը, որոնցից առաջինը Արարատեան դաշտիցն էր, իսկ երկրորդը Մուշի դաշտի Հացեկաց գիւղից:

Եթէ Աղէքսանդրիայի, Աթէնքի և Բիւզանդիոնի բարձրագոյն դպրոցներում կրթութիւն ստացած, գիտական պաշարով հայրենիք վերադարձած և ազգային գրականութեանը նւիրւած Սահակ-Մեսրոբեան առաջադէմ աշակերտներից Եզնիկ Կողբացին և Ղազար Փարպեցին Արարատեան դաշտից էին, ապա նրանց բնորեկագոյն ընկերները, Մովսէս Սորենացին, քաղցրախօս Եղիշէն և Դաւիթ Անյաղթը Մուշի դաշտից էին:

Եւ վերջապէս, եթէ Արարատեան դաշտում իբրև մտաւոր կենտրոն առաջ եկաւ Էջմիածնի վանքը, Մուշի դաշտում, իբրև այդպիսի կենտրոն, ծաղկեց Տարօնի հոշակաւոր Գլակայ. այժմ Սուրբ Կարապետի վանքը, որը մինչև այժմ էլ ահագին ժողովրդականութիւն ունի նոյն իսկ հեռաւոր տեղերի հայութեան մէջ:

Այսպիսի մի խոշոր մտաւոր վայր հանդիսանալու համար Մուշի դաշտը միևնոյն ժամանակ պիտի եղած լինէր նաև անստեատկան և բազմամարդ մի վայր. և այդպէս էլ էր:

Տարօնը մի ժամանակ ունէր ծաղկած քաղաքներ. դրանք էին՝ Օձ, Վիշապ և Զինակերտ քաղաքները, որոնց տեղերը մին-

չև այժմ էլ յայտնի են: Գլակայ վանքն ունէր խոշոր կալածներ և 12 խոշոր գիւղեր, որոնցից Կարսը, ըստ Զենոբ Գլակի, ունէր 3,012 ծուխ, Մեղզին՝ 2,080 ծուխ. Սորոնքը՝ Մովսէս Սորենացու ծննդավայրը՝ 1,906 ծուխ և այլն. գիւղեր, որոնք այժմ էլ գոյութիւն ունին. բայց որոնց ծիւրի թիւը մի քանի տասնեակից չի անցնում:

Այս թւերը որքան էլ չափազանցրած լինին, այնուամենայնիւ ցոյց են տալիս այն, որ Մուշի դաշտը մի ժամանակ մի ծաղկած վայր էր, հացի և այլ բերքերի շտեմարան, ոչ միայն բուն դաշտում ապրող ժողովրդի, այլ և շրջապատող լեռնաբնակ ահագին ժողովուրդները համար, որոնք բեռնաւորւած մեղրով, գաղպէնով, բրդով ու ձեռագործ շալերով, իջնում էին դաշտ, փոխում նրանց հացահատիկների հետ և նորից իրենց լեռները դառնում. ծաղկած վայր և շտեմարան, ուր հանգիստ էին առնում հեռաւոր ճամբորդները և իջեանում ու պաշար վերցնում բազմաթիւ քարավանները:

Իսկ այժմ, այժմ այդ նախկին ծաղկած վայրը, նախկին շտեմարանն ու յոգնած քարավանների հանգատարանը ներկայացնում է մի խղճուկ պատկեր: Դաշտն իր շրջականերով պարունակում է իր մէջ 100 հայաբնակ գիւղեր, որոնցից ամենամեծ և ունևոր գիւղը համարում է Սապգիւղը 350 տուն բնակիչներով, մինչդեռ գիւղերի մեծ մասը բաղկացած է 15-20 տուն բնակիչներից: Ամբողջ դաշտում հազիւ կայ 30-35,000 բնակիչ, որ վարում է գրկանքներով լի մի չարաքաշ կեանք. գոյութիւն չունին ոչ շէն գիւղեր և ոչ էլ օրինաւոր տնտեսութիւն:

Իսկ այս բոլորի պատճառը այդ երկրում տիրող կարգերն են, անվերջ հալածանքներն ու ճնշումները, որոնց ձեռքից աշխատաւոր հայ ժողովուրդը գլուխ ազատելու համար մտածում է միմիայն գաղթելու և փախչելու վրա:

Երբ անցնում էք Մուշի դաշտով, տեսնում անմշակ մտացած ահագին տարածութիւններ և շատ տեղերում թանկարժէք բերքերի փոխարէն կորեկի և գլգիլի արտեր, նոր կարողանում էք գաղափար կազմել, թէ այդ ճնշումներն ու հալածանքները որպիսի ամայացումների բերել հասցրել են այդ հարուստ դաշտը:

Ճիշտ է, կան մի քանի գիւղեր, որոնք իրենց մեծութեամբ, հացառատ դաշտերով և ծառաստաներով թողնում են շատ թէ

քիչ լաւ գիւղի տպաւորութիւն, բայց զլրանք բացառութիւններ են, որոնց կողքին տասնեակներով ընկած գիւղեր մի խղճուկ պատկեր են ներկայացնում: Եւ այդ սիրուն, բարեբեր դաշտում աչժմ ախալխի անտեսական քայքայում գոյութիւն ունի, որ շատ գիւղեր սալլի փոխարէն գործ են ածում պալխի անունով մի գործիք, որը սահնակի մի պրիմիտիւ ձեւ է և որը կանաչի վրայով քարշ են տալիս երկու լրարիկ եզուկներ: Եզ չկայ, սալլ չի մնացել, գուժան ու սերմացու նոյնպէս չի մնացել և այդ պատճառով դաշտեցին հազիւ-հազ ձեռք է բերում մի քիչ կորեկ ու զլգիլ, մի կերպ փորփրում է գիւղին մօտիկ ընկած մի արտի կտոր, ձգում է այդտեղ կորեկի ու զլգիլի սերմ ու զրա բերքով քարշ տալիս իր թշուառ գոյութիւնը: Այս դաշտում հայր միանգամայն ձեռք է վերցրել բոստաններ ու այգիներ մշակելու զբաղմունքից: Նրա վրա ախրան ապօրինի տուրքեր են բարգել, որ այգին ու բոստանը ոչ միայն օգուտ չեն բերի, այլ և պատուհաս կը դառնան տիրոջ վրիժի և զարմացմամբ Մուշի դաշտում ամեն տեղ տեսնում էք քրդին բոստան մշակելիս, գիւղը հայինն է, հողը նոյնպէս հայինը, բայց մշակողը քուրդն է. պատճառն այն է, որ քրդի մշակած բոստանի տասանորդ տուրքը քիչ են գնահատում, իսկ հայի մշակածի տասանորդը հինգ անգամ շատ: Հայը մի դէպքում է միայն բոստան մշակում. այդ այն է, որ բերում է մի քուրդ, հողը յանձնում է նրան և կիսովի մշակել տալիս:

Այսպէս է անա զրութիւնը Մուշի դաշտում:

Ինչպէս տեսանք, Մուշի դաշտում կան 100-ի չափ հայարնակ գիւղեր. այդ գիւղերից իրենց մեծութեամբ աչքի են ընկնում Նորշէնը, Յրօնքը և Սասգիւղը:

Սասգիւղն ունի փոքրիկ շուկա, 20-ի չափ խանութներ, երկու սեւի զպրոց: Ժողովրդի գլխաւոր զբաղմունքն է հողագործութիւնը. առաջ մեծ չափով գոյութիւն ունէր այստեղ նաև խաշնարածութիւնը, բայց քրդերը խլեցին արօտատեղիները և հաչերը ստիպւած եղան վերջ տալ խաշնարածութեանը: Գիւղում տեղի քան 50 ընտանիք պարապում են բրուտութեամբ, մի արճևատ, որը Մուշի դաշտում շատ առաջ է գնացել:

Դաշտի արևմտեան մասում գտնուում է Մուշեղաշէն գիւղը. այս գիւղը նշանաւոր է նրանով, որ ունի առատ ջուր, բերրի

նոյ և մշակում է բրինձ, թէև հալածանքների շնորհիւ այդ օգտաւէտ զբաղմունքը շատ աննշան չափով է առաջ գնացել:

Դաշտի արևմտեան կողմում միմիանցից բաւակոնին հետո գտնուում են Կրզլ-աղաջ և Զիարէթ գիւղերը, որոնք աչքի են ընկնում հարուստ բուսականութիւնով և ծառաստաններով:

Իսկ դաշտի հիւսիսային կողմում աչքի է ընկնում Սուլուխ գիւղը իր հացահատիկներով:

Այս գիւղին մօտիկ գտնուում է Եփրատի քարաշէն կամուրջը, որը միակն է Մուշի դաշտում, եթէ չը հաշուենք Մուշ քաղաքին մօտիկ Մեղրագետի վրա գտնուող հասարակ կամուրջը. Եփրատի կամուրջը նոր է շինւած, ունի 12 կամար, բայց շատ նեղ է:

Մուշի դաշտում վերջին երկու տասնեակ տարիների ընթացքում հայերի վերարեւմամբ մեծամեծ ճնշումներ տեղի ունեցան. այժմ էլ շատ թարմ են այդ ճնշումների տպաւորութիւնները և թւում են այն անունները, որոնք գործել են այդտեղ անասելի բարբարոսութիւններ:

Այդ բարբարոսներն են՝ Խւների կասա բէկը, Սասգիւղի Հաջի Ֆէրօն, թըլէցի Շէյխ Սաարէգինը և Շէյխ Ամին, Չիրբանցի համիրիէի զայմագամ Իբրահիմ բէկը, համիրիէի բինբաշի Աճմաղը և Դրբօյի Սայիղը, դոմսէցի Հաջի Նազիրը, մշեցիներ Գոմար աւերող Իբրայիմը, Իգէտ էֆէնդին, Բազրխան էֆէնդին և մշեցի Իզգէտ փաշան ու Ազամաթ բէկը:

10	20	30	40	50	60	70	80	90	100
11	21	31	41	51	61	71	81	91	101
12	22	32	42	52	62	72	82	92	102
13	23	33	43	53	63	73	83	93	103
14	24	34	44	54	64	74	84	94	104
15	25	35	45	55	65	75	85	95	105
16	26	36	46	56	66	76	86	96	106
17	27	37	47	57	67	77	87	97	107
18	28	38	48	58	68	78	88	98	108
19	29	39	49	59	69	79	89	99	109
20	30	40	50	60	70	80	90	100	110
21	31	41	51	61	71	81	91	101	111
22	32	42	52	62	72	82	92	102	112
23	33	43	53	63	73	83	93	103	113

Վիճակագիր Մուշի դաշտի հայ ժողովրդի.						
№	Գ Ի Ի Ղ Ե Ր Ը	Քուրդ սուն		Հայ սուն		
		Քան սառն	Այժմ	Քան սառն	Այժմ	Այժմ
1	Աւզոււ	7	30	73	50	60
2	Խւնեի <sup>3)</sup>	3	60	50	35	20
3	Ծոզէտ			30	10	12
4	Ուշտամ			35	15	10
5	Աղբէնիս					80
6	Վարդենիս <sup>4)</sup>		100			200
7	Արսօնք				126	120
8	Խարս <sup>5)</sup>					80
9	Անհիստ		15	70	60	70
10	Դրմէրդ		20	70	40	100
11	Աւզաղբիւր					40
12	Նոր-քաղաք					30
13	Ալի-գլլօն					80
14	Երիզակ		12	70	50	50
15	Վարդիսաղ					25
16	Ծղակ	15	75	35	23	20
17	Երշտեր		6	38	27	70
18	Արբավանք		13	60	40	80
19	Արագ		17	22	18	30
20	Թիլ	20	100	40	20	50
21	Բրդազոմ					150
22	Մկրազոմ		7	50	70	80
23	Խասաղիւղ		45	400	330	350

1) Այս տեղեկութիւնները բազել ենք Մուշի տաճարաբանից:  
 2) Այս տեղեկութիւնները տեւի է մեզ պ. Նազարեթ Մարտիրոսեանի:  
 3) Այս գիւղից է հոսկաուր ասպակ Մուսա բէկը:  
 4) Այս գիւղում ապրում են չերքէզներ:  
 5) Այս գիւղից է Մուսա բէկի գոհ Գիւլիպարը:

№	Գ Ի Ի Ղ Ե Ր Ը	Քուրդ սուն		Հայ սուն		
		Քան սառն	Այժմ	Քան սառն	Այժմ	Այժմ
24	Շմլակ	1	8	42	28	40
25	Բնդիւներ	1	8	15	8	8
26	Ալվառինջ		7	130	100	160
27	Մաղնիկ			65	15	15
28	Բերդակ			150	102	100
29	Բօլօսիկ	15	100	37	10	30
30	Հաւատօրիկ			90	120	65
31	Սինամէրկ					8
32	Մառնկու-մզրէն					10
33	Առաղ	4	15	83	66	70
34	Դերքիվանք			89	67	60
35	Մօկոււնք		8	76	58	50
36	Արդա-մզրէ					12
37	Հաղիկ		6	40	30	30
38	Բօտտաքեանդ					80
39	Ապլպուհար <sup>1)</sup>	2	18	50	10	20
40	Դըւնիկ <sup>2)</sup>	1	6	49	30	30
41	Ցրօնք			250	200	300
42	Խարթոս ներք.	3	10	40	30	30
43	Շէխուսուֆ		2	34	34	40
44	Շէխրբիմ	4	5	27	27	30
45	Ցօրկօնք					50
46	Ցունան					83
47	Բքլենց					50
48	Ալիջան			97	70	80
49	Աղջան	8	9	110	100	120
50	Յարթիբի	3	80	60	80	

1) Այս գիւղում ապրում են չերքէզներ:  
 2) Այս գիւղում ապրում են տաճիկներ:

№	Գ Ի Ի Ղ Ե Ր	Քուրդ սուն		Հայ սուն		
		Քանն սունը	Այժմ	Քանն սունը	Այժմ	Այժմ
51	Նորշեն .			263	314	300
52	Ալիգրնան .		3	29	18	30
53	Սոխոմ .	5	11	100	70	120
54	Յողունք .	1	7	55	102	90
55	Առինջ .					150
56	Առինջվանք .	3	6	40	38	60
57	Չափնոց .					40
58	Աւղրգաղի-քօշք .					10
59	Կաննին .					140
60	Փեղար .			65	40	30
61	Զրիկ .	12	30	80	60	120
62	Քարձոր .	1	9	60	10	40
63	Սորոնք <sup>1)</sup> .	1	6	20	7	50
64	Կեպախօլի .					10
65	Գոմեր .			70	60	80
66	Բլէշ .					20
67	Քիւրդ-մէյգան .		15	72	42	50
68	Շէխալան .			95	85	80
69	Աւզաղբիւք .		7	32	28	40
70	Կըզլազաջ .		4	135	103	100
71	Սընձնուտ .			30	20	40
72	Յարախօնք .	5	17	35	20	40
73	Փողրկով <sup>2)</sup> .	5	24	61	43	40
74	Սոփեր .					30
75	Սաշխալգաղ .					60
76	Սուլուխ .			120	70	120
77	Կուրաւի .					90

1) Այս գիւղից է մտակնագիր Մոսկէս Խորենացին:

2) Այս գիւղում ապրում են տաճիկներ:

№	Գ Ի Ի Ղ Ե Ր Ը	Քուրդ սուն		Հայ սուն		
		Քանն սունը	Այժմ	Քանն սունը	Այժմ	Այժմ
78	Յխաւի .					45
79	Աւրան .					170
80	Դէրիկ .					40
81	Ալատին .					8
82	Հերկերա .					20
83	Գոմս .					70
84	Սէյլան .					100
85	Մեխաի .					25
86	Հայրաղու .					40
87	Սորտուր .					60
88	Ուսուղ .					100
89	Տոմ .					40
90	Ըշկեանթան .					15
91	Հասան-օվա .					30
92	Բաղլու .					40
93	Կաբս .					50
94	Չիարէթ .					160
95	Սէկրան .					4
	Չխուրի գիւղեր .					60
96	Մուշեղաշեն .					4
97	Փակ .					4
98	Ճապկիւ .					15
99	Քըզասն .					4
100	Թախթալու .					30
101	Սարէ-կօլէ .					8
102	Մօզըք .					

6580

1)

1) Այս թիւը ընդհանուր վիճակագրութեան մէջ մտցնելու համար պակասեցնում ենք 15% -ով, առաջնորդելով այն բանով, որ այլանդ ընթաց առաջին աղբիւրը, որն աւելի վտանգելի է թուում մեզ, մօտաւորապէս 15% պակաս է, քան երկրորդ աղբիւրը, թէև առաջինում բոլոր գիւղերը չեն ընթաց:

# Մ Ո Ւ Շ

Մուշի սանջակի կենտրոնավայրն է Մուշ քաղաքը, ուր նստում է մութասարիֆը:

Նա ընկած է Տաւրոսեան լեռնաշղթայի հիւսիսային ստորոտներում, Կօրդուք և Միրնիկատար գագաթների բլրապատ փեշերի վրա: Քաղաքի վերին մասում, մի սիրուն դիրքի վրա գտնւում են Մամիկոնեանների բերդի փլատակները, որոնք հետզհետէ անհետանում են, իսկ նրանց տեղում շինւում են բնակարաններ: Այդտեղից սկսած քաղաքը տարածւում է նախ թեք և ապա մի փոքր հարթ բլուրի լանջերի վրա, առաջանալով դէպի դաշտը: Քաղաքի արեւելեան կողմում բացւում է մի սիրուն ձորակ, որի միջով վազում է Մուշի գետակը, իսկ նրա խիստ թեք կողերի վրա շինւած է հայարնակ Չորի թաղը: Քաղաքի ոտերի տակ փուած է Մուշի լայնանիստ դաշտը, իսկ շրջակայ բլուրներն ու վերելքները ծածկւած են խաղողի այգիներով, պտղատու պարտէզներով, որոնք Մուշին ապրիս են բանաստեղծական մի հմայիչ տեսք:

Սակայն այլ է տպաւորութիւնը, երբ թողած շրջակայ բլուրները, մտնում էք քաղաքի ասիական փողոցները: Շուկան, որն ընկած է քաղաքի կենտրոնում և որտեղ գտնւում է Ալադին բէյի մզկիթն իր մինարէով, ներկայացնում է կրպակների մի քանի անկանոն շարքեր, ուր մանրավաճառների և մրգավաճառների կողքին իր կեղտոտ շիշն ու շամբուրն է ցուցադրել տաճիկ «աշպաղը» և ուր խոնւած բազմազան ամբոխը քուրանների վրա ձէնձէրացող տաճիկեան քէպապի ծուխի հետ միասին կատարեալ է դարձնում ասիական շուկաներին յատուկ պատկերը: Մտնում էք ամենալաւ ճաշարանը, որը հայի է պատկանում և որտեղ ճաշում են ոտտիկանական պաշտօնեաներ. դա մի սովորականից էլ վատ, առատազն ու պատերը ծխից ամբողջովին սևացած կրպակ է, ուր մի կողմի վրա պատրաստում են կերակուրները, իսկ միւս

կողմում կեղտոտ սեղանի վրա հրամցնում են ձեզ ճաշ. սևացած պատից քարշ է արւած լացարանն իր սապոնով և երեսբրիչով, որով լացւում ու սրբւում են ամենքը, իբրև անհրաժեշտ սովորութիւն. քաղցը ստիպում է ձեզ ուսել, բայց մի փոքր ուտելուց յետոյ դուրս էք գնում զզւանքով: Արժէքաւոր ապրանքներ վաճառող խանութները, առանձնապէս ճօթավաճառները և մի քանի խոշոր արհեստաւորութիւններ կենտրոնացած են մի քանի քարվանսարաններում, ուր ցած առատազներ ունեցող մութ ու նեղ կրպակները նոր բան չեն աւելացնում ասիական այդ շուկայի փառքին:

Այսպէս է շուկան. սրանից աւելի կեղտոտ, աւելի անկանոն և նոյն իսկ իրար վրա թափւած պատկերանում են փողոցներն ու տները, մանաւանդ հայարնակ Չորի թաղում: Ծուռ ու մուռ, քարքարոտ և նեղլիկ փողոցների վրա բացւում են տների դռները. բակ ասած բանը այստեղ գոյութիւն չունի. թեք գառնվայրի կողքերին սխմւած, միմեանց կպած, ինչպէս սարսափահար ոչխարի հօտը, կուտակւած են տները. ով մի թիղ տեղ ձեռք է ձգել, հէնց այդ տեղ էլ շինել է իրար վրա երկու ծածկ և մէջը մտել. և այդպիսի նեղւածքը հարկադրել, հնարաւոր է դարձրել փողոցի մէջ կերակուր եփելը, լացք անելը և նոյն իսկ երեխաներին լողացնելը: Այսպիսի նեղւածքը և բնակարանների կուտակումը զլիսաւորապէս հետևանք է եղել այն բնութիւններին, որին ենթակայ է եղել հայ ժողովուրդը այդ երկրում: Այս երևոյթով է բացատրւում նաև այն, որ քաղաքի հիւսիսային և արևմտեան մասերում ձգւած նոր թաղերում ոչ մի հայ սիրտ չի անում դուրս գալ և բնակութիւն հաստատել, մինչդեռ տաճիկներն այդ տեղերում անագին բնակչութիւն են հաստատել:

Գուգ-մահլա թաղում գտնւում է զօրանոցը, ուր սահմանադրութիւնից առաջ լինում էր 3,000-ից ոչ պակաս զօրք, իսկ այժմ կան ընդամենը 1,000 հոգի. ոչ միայն այստեղ, այլ և բոլոր հայարնակ վայրերում սահմանադրութիւնից առաջ պահւում էին անագին թւով զօրքեր, որոնց ներկայութիւնը սակայն ոչ միայն չէր զսպում քուրդ վայրագ ցեղերին, այլ և հանդիսանում էր խրախուսիչ նրանց գործողութիւններին:

Մուշը բաղկացած է 12 մանր ու մեծ թաղերից, ուր հայերը և տաճիկները ապրում են հետեեալ չափով:

Յուցակ Մուշի թաղերի և ազգաբնակչության

N	Թ Ա Ղ Ե Ր Ը	Տուն	Տուն
		տաճիկի	հայի
1	Բերդի թաղ . . . . .	500	
2	Վերին » . . . . .		350
3	Բրուտի » . . . . .		150
4	Ս. Մարինէյի թաղ . . . . .		300
5	Սուրդենց թաղ . . . . .	50	
6	Չորի թաղ . . . . .		300
7	Մինարա-մահլա . . . . .	400	50
8	Ջիգրաշէնի թաղ . . . . .		50
9	Դուզ-մահլա . . . . .	100	
10	Քօթան-մահլա . . . . .	150	
11	Դաշ-մահլա . . . . .	700	
12	Սուֆրա-մահլա . . . . .	300	
		2200	1200

Այսպիսով Մուշն ունի 3,400 տուն բնակիչ, որից 2,200 տունը տաճիկներ ու քրդեր են, իսկ 1,200 տունը հայեր. շնչի հաշվով հայերը կը լինեն 7,000, իսկ տաճիկներն ու քրդերը 13,000, բնդամենը 20,000:

Մուշի հայերի գլխավոր զբաղմունքն է վաճառականութիւնը և առանձնապէս արհեստները: Մուշի շուկայում հաշոււմ են մօտաւորապէս 800 զանազան տեսակի մանր ու մեծ կրպակներ, որոնցից 500-ը պատկանում են հայերին: Հայ խանութպաններից մօտաւորապէս 200-ը պարապում են ճօթալաճառութեամբ և մանրավաճառութեամբ, իսկ 300-ը արհեստներով: Արհեստներից աչքի են ընկնում կօշկակարութիւնը, կօնդօրաշուժիւնը<sup>1)</sup>, գերձակութիւնը, օսկերչութիւնը, դարբնութիւնը, չիլինգարութիւնը, պայտասութիւնը, ներկարարութիւնը և այլն:

1) Կօշիկների մի տեսակը, որ լինում է շատ ամուր կարծած և տակերը մեխերով զանաւած, ճանկատանում, որ շատ ընդհանրացած են այդ կօշիկները, կոչոււմ են կօնդօրաներ, իսկ կարագները՝ կօնդօրաչիկներ:

Մուշում տարածւած է նաև բրուտութիւնը, որի անունով, ինչպէս տեսանք, կոչոււմ է հայաբնակ թաղերից մէկը: Այս արհեստը այստեղ հասցրել են բաւականին նորութեան. Մուշի բրուտները հասարակ կաւից շինոււմ են նոյն իսկ բաժակներ, որոնք գիւղերում փոխարինում են իսկական բաժակներին:

Մուշի հայերը, ըստ երևոյթին, աւելի են ճնշումներ կրել, քան Տաճկաստանի այլ քաղաքների հայերը. այստեղ սարկութիւնը, շոգոքորթութիւնը և ուրիշի դէմ վիզ ծուլը ծայրայեղ չափերի է հասել. երիտասարդ ուժերը գլուխ են վերցնում և հեռանում են այգտեղից. քաղաքում մնում են նրանք, որոնք կարողանում են աւելի շատ գլուխ ծուկ, աւելի շատ կեղծել ու հաճոյանալ. և այս երևոյթը անդբաղարձել է նոյն իսկ Մշեցու ընտանեկան կեանքի վրա: Մուշում հայ կլինը շատ է իրաւազուրկ, փողոցում տղամարդ տեսնելիս նա երեսը դարձնում է գէպի պատը և այգպէս մնում է, մինչև որ տղամարդը կանցնի. սներում հիւրերի առաջ նա իրաւունք չունի դուրս գալու. եկեղեցիներում կանանց մասը տախտակներով միանդաման զատւած է տղամարդկանց մասից. տախտակների մէջ թողնւած փոքրիկ ծակօտիները միայն հնարաւորութիւն են տալիս մշեցի կնոջը նայելու բեմի վրա կատարուող ծիսակատարութեանը: Մի խօսքով Տաճկաստանի ոչ մի քաղաքում մենք այնպիսի ընտանեկան սոսկալի կարգեր չը տեսանք, ինչպէս Մուշում: այստեղից մենք հեռացանք մի շատ ծանր տպաւորութեան տակ. այս քաղաքի սահմաններից դուրս գալով, կարծէք վայր դրինք մեր խղճի վրա ծանրացած մի մեծ քար:

Սակայն ծանր ներդործութիւն թողնող Մուշում մենք մի լաւ տպաւորութիւն ստացանք: Մեր Մուշ մտնելու յաջորդ օրը կիրակի էր. այդ օրը տեղացի մի երիտասարդ մեկ դրօսնկու տարաւ Չորաթաղի հեռաւոր լանջերի վրա, ուր դուրս էր եկել դրօսնող հասարակութիւնը, ի հարկէ, միմիայն տղամարդկանցից բաղկացած. այգտեղ մենք տեսանք մի քանի խմբեր, որոնք ձորի լանջերի վրա տեղ բռնած, նւագում և ուրախ ժամանակ էին անցկացնում. այդ զւարճութիւններին մասնակցում էին հայերի հետ միասին նաև մի քանի տաճիկներ: Մեր զարմանքը մեծ էր. միթէ այդ երկրում հայը զւարճանալ գիտէ և միթէ հայի զւարճութեանը մասնակից է լինում նաև տաճիկը. մեր այս աարա-

կուսանքը փարատեց մեզ ուղեկցող երիտասարդը, բացատրելով, որ կան շատ տաճիկներ, որոնք միշտ էլ լաւ յարաբերութիւն են պահպանել հայերի հետ, որոնք հակառակ են եղել կոտորածներին և որ այս ձևի զարճութիւններ հայերի կողմից սկսել են սահմանադրութիւնից յետոյ: Ճիշտ էր, սահմանադրութիւնը մեծ փոփոխութիւն էր առաջ բերել: սահմանադրութեան տարեգարձին վանում մենք ականատես էինք մի խելակորոյս պարի ու զարճութեան, որը կատարում էր փողոցներում և որին մասնակցում էին հայերի հետ միասին նաև տաճիկները. սակայն ոչ մէկը և ոչ միւսը չէին կանգնեցրել այն զազանութիւնները, որոնք տեղի էին ունեցել կարմիր գունատրամ Տաճկաստանի երկնակամարի տակ:

Մի հասակ առած արճեստաւոր, սրի խանութում նստած հետաքրքրում էինք նրա արճեստով և որը մեր հարցերը թողած շուտ շուտ դառնում էր իր գոճեւած հարազատների պատմութեանը, ցոյց տալով խանութի մօտով անցնող երկու լաւ հագնւած տաճիկների, ասաց մեզ հետևեալը.

— Տեսնում էք զրանց, պարոն, զրանք մեր նախկին զահիճներն են, մեզ կողոպտողները, մեզ կոտորողները, որոնք սահմանադրութիւնից յետոյ զարճել են «ժօն թուրքեր» և հայերի ամենամօտ բարեկամները, բայց եթէ առիթը գայ, նրանք զարճեալ նոյն զազաններն են և նոյն կողոպտիչները:

Եւ երբ մենք հետաքրքրուեցինք նրանց պարապմունքով, երևաց, որ նրանք պատկանում էին այն դասակարգին, որը վերցնում է կապալով զիւղերի տասանորդ տուրքը և որն ապրում է գիւղացու աշխատանքով ու նրա քրտինքի վատտակով:

Մուշն առաջնորդական քաղաք է. այնտեղ նստում է թեմական առաջնորդ: Հայերն ունին 5 եկեղեցի, 5 թաղային դպրոց, մէկ օրիորդաց դպրոց և մէկ զպրոց էլ Միացեալ Ընկերութեան անունով: Բացի այդ, պատրիարքարանից ստացւող նպաստներով պահպանւում են երկու որբանոցեր:

ՍՈՒՐԲ ԿԱՐԱՊԵՏԻ ՎԱՆՔԸ

Մուշի դաշտը մինչև այժմ էլ ամուր կապերով կապւած է այն կանգուն ֆնացած հիմնարկութիւնների հետ, որոնք Տարօնի ծաղկման շրջանում հանդիսանում էին նրա հաւատալիքների և մտաւոր կենտրոն: Այդպիսի հիմնարկութիւններից Մուշի դաշտում աչքի են ընկնում երեքը. զրանք են՝ Ս. Կարապետի, Ս. Յովհաննէսի և Առաքիլոց վանքերը:

Ս. Կարապետի վանքը, որն իր առաջին վանահօր Զէնոր Գլալի անունով կոչւում է Գլալայ վանք, իսկ իր շրջակայքում գտնւող Գալինեան քաղցրահամ աղբիւրների անունով նաև Իննակնեան վանք, գտնւում է Մուշի դաշտի հիւսիս-արևմտեան մասում, Մուշից մօտաւորապէս 40 վերստ հեռու, Բարքէ լեռան կողերի մի հրաշալի դիրքում. այդ դիրքից բացւում են անտառապատ բլուրների, երկաթուղի ձորերի, փոքրիկ լեռնադաշտերի և հեռաւոր լեռնաշղթաների գեղեցիկ տեսարաններ:

Դաշտից վանքը տանող ճանապարհը ձգւում է անտառապատ բլուրների միջով և վերջանում է մի գեժարին վերելքով, որին կոչում են «Հաւատամքի ել» և որը բարեպաշտ ուխտաւորները բարձրանում են «հաւատամքն» անգիր ասելով:

Ս. Կարապետը ոչ միայն Տաճկաստանում, այլ և Ռուսաստանում մեծ հռչակ է վայելում. նրան ուխտի են գալիս Տաճկաստանի հեռաւոր գաւառներից, գալիս են նաև Կովկասի շատ տեղերից: Վանքի պատերի վրա փորագրւած են բազմաթիւ անուններ այն ուխտաւորների, որոնք եկել են շատ ու շատ հեռաւոր տեղերից և բերել տոտաձեռն նւէրներ:

Ահա այս է պատճառը, որ Տաճկաստանի վանքերի մէջ ամենալաւ պահպանւած և ամենաշքեղը Ս. Կարապետի վանքն է:

Ս. Կարապետի վանքը մի հատիկ վանք չէ, այլ մի քանի վանքերի և մատուռների խումբ. վանքի գանդակատան առաջ, գաւթում մի ընդարձակ տեղ գտնւած է երկաթէ ցանկապատով ցանկապատը ընդգրկում է գեղեցիկ զանգակատունը, որտեղից դուր մտնում էք առաջին սինագարդ տաճարը. նա նոր ժամանակների մի շէնք է, իր 25 կամարներից բաղկացած տանիքով, որը յենւում է 16 սիւների վրա. այդ տաճարից մտնում էք կողք կողքի կապնած մի զոյգ վանքերի մէջ. այդ զոյգ վանքերի երկու



կողքերում կան մի-մի մատուռ: Ահա այս խումբ վանքերի մէջ գտնուում է Յովհաննէս-Մկրտչի գերեզմանը, որով այնքան մեծ հռչակ է ստացել վանքը. այդտեղ գտնուում են նաև Մամիկոնեան տոհմի մի քանի ներկայացուցիչների՝ Մուշեղ Մամիկոնեանի և Գայլ Վահանի գերեզմանները:

Վանքը չօրս կողմից շրջապատւած է երկյարկ շինութիւններով. այդտեղ է ուխտաւորների համար յատկացւած սենեակները, վանահօր և միաբանութեան խուցերը, դպրոցը, գրադարանը և այլն. այդտեղ են խոհանոցը, փոսը, մատանը և մթերանոցը:

Շրջակայ աղբիւրների ջրերը միանալով, կազմում են մի գետակ և հոսելով վանքի պարիսպներից ներս, միանում են այդտեղ գտնուող երկու աղբիւրների ջրերին և մի անցքով գետնի տակ իջնում. այդտեղ գտնուում է վանքի երկաշքանի ջրաղացը, յատկապէս միաբանութեան կարիքներին ծառայելու համար. ջրաղացի գլխաւոր մուտքը բացւում է ձորի վրա:

Վանքի պարսպից դուրս կայ մի այլ բակ. այդտեղ գտնուում է մի հին մատուռ և մի նոր մեծ շէնք, որը շինւած է եղել դպրոցի համար, բայց վերջին տարիների հարածանքների պատճառով դատարկ է մնացել և վանքն ուղարկւած տաճիկ զօրքերի բնակութեան տեղ դարձել մինչև սահմանադրութիւնը:

Վանքն ունի պարտէզ, բանջարանոց, մեղանոց, գոմ, ախոս, իր անտեսութեան յատուկ տեղը դաշտում, որը կոչւում է փակահ և մեծաքանակ հողեր ու անտառներ:

Վանքի միաբանութիւնը բաղկացած է 7 վարդապետներից, որոնցից 4-ը շարունակ դուրսն են լինում և գրազւած են վանքի դրսի գործերով և պաղին հաւաքելով: Վանահայրն է Սուրբի Ահարօնք գիւղացի Վարդան վարդապետ Յակոբեանը, մի բաւականին ետանդոտ և ճարպիկ մարդ:

Վանքն ունի գրչերօթիկ դպրոց 55 աշակերտներով:

Ս. կարապետի վանքի եկամուտների և անտեսութեան վրա մի գաղափար կազմելու համար առաջ կը բերենք մի քանի թւեր, քաղելով այդ վանահօր տւած տեղեկութիւններից:

Վանքն ունի 400 ոչխար, 34 եղ ու գոմէշ, 33 կով ու մատակ, 20 տաւար, 13 ձի և 16 էշ:

Սերմ ձգում են տարեկան 15-20 քիլէ <sup>1)</sup>, մօտ 150 փութ: 1908 թւին վանքը վճարել է տասանորդ սուրբ՝ հացահատիկների համար 40 ոսկի, խոտի համար 40 ոսկի, խամչուռ (ոչխարի հարկ) 25 ոսկի և էմլակ (կալւածական տուրք) 8 ոսկի, բնդամենը 113 ոսկի:

Տարեկան ստացւում է պողի 40 քիլէ հացահատիկ, 25 լիւր <sup>2)</sup> պանիր, 15 լիւր իւղ և աւելի քան 400 ուլ, դառ և ոչխար:

Բացի այդ, վանքն ստանում է Պետերբուրգի Եկեղեցական Խորհրդից 1,000 ռուբլի և ուխտաւորներից աւելի քան 100 ոսկի:

Վանքում այժմ կերակրւում են 7 վարդապետ, 55 աշակերտ, 4 ձիապան, 5 էշապան, 8 հովիւ, 10 պահապան, 40 ծառաներ և նախըջիններ, իսկ ամառները սրանց վրա աւելւանում են 50-ի չափ հնձուորներ:

Վանքի հեղինակութիւնը աւելի ևս մեծացնելու նպատակով, միաբանութիւնը մտածում է Մուշից տեղափոխել վանքը վերջին կոտորածների ժամանակ անուն հանած Գէորգ Չաւուշի և ուրիշների աճիւնը: Ի հարկէ, այս մտադրութեան հետ կապւած է վանքի եկամուտներն աւելանալու խնդիրը, մի խնդիր, որն առաջ է մղւում միաբանութեան կողմից ետանդուն կերպով:

Վանահայրը մեղ խնդրում էր, որ երբ մենք կովկաս վերադառնանք, լրագրութեան մէջ կոչ անենք ուսասնայերին ուխտ գնալու Ս. կարապետ, պատճառաբանելով, որ Խրիմեանի վանահայրութիւնից յետոյ Արծրունին մի շարք յօղածներով վարկարեկիւով միաբանութիւնը, ուսասնայերը ստեցին վանքից, ուխտագնացութիւնը դադարեց և վանքի եկամուտները նւազեցին: Եւ երբ մենք բացատրում էինք նրան, թէ ուսասնայերի մէջ այժմ նոյն իսկ տարօրինակ կը թւայ վանքերի ուխտագնացութեան համար կոչ անելը, նա չէր համոզւում այդ բանին և կրկին ու կրկին պնդում էր իր խնդրի վրա:

ԱՌԱՔԵԼՈՑ ՎԱՆՔԸ

Առաքելոց վանքը գտնուում է Մուշից դէպի հարաւ-արևելք, մի ժամ հեռաւորութեամբ Ծիրնկատարի կողերի վրա: Վանքը գրաւած ունի մի հրաշալի դիրք, որի մի կողմում բարձրանում

1) Գիլէն հաւասար է 7 1/2 փթի:  
2) Լիւրը հաւասար է 6 հօթայի կամ 4էս փթի:

են իրար վրա Սասունի լեռները, իսկ միւս կողմում բացւում է Մուշի դաշտի մի աննման տեսարանը իր շրջապատ լեռներով:

Վանքն ունի բաւականաչափ վարելահող, ընդարձակ արօտասեղիք, ոչխար, տաւար, լծկաններ և մեծ սնտեսութիւն: Բացի այդ, նա ստանում է պատրիարքարանից նպաստ 100 ոսկի, որով պահում է մի գիշերօթիկ գպրոց 25 աշակերտով և մանուսա գործելու մի արհեստանոց, ուր սովորում են 8 թէ 10 հոգի:

Վանքը յայտնի է իրրև թարգմանչաց գերեզմանատեղի, որով նա ստացել է մեծ հռչակ: Վանքի արևելեան պատի մօտ կան մի քանի խաչարձաններ և գերեզմանաքարեր, որոնք իրենց վրա կրում են դարերի պատմութիւն. այդ խաչարձանների և գերեզմանաքարերի տակ ամփոփւած են հինգերորդ դարի խոշոր դէմքերի՝ Մովսէս Առրենացու, Դաւիթ Անյաղթի, Ղազար Փարպեցու և նրանց մի քանի ընկերների աճիւնը: Ահա այս լուս, բայց միևնոյն ժամանակ յիշողութեան մէջ նւիրական խոհեր գարթեցնող խաչարձանները Առաքելոց վանքը դարձրել են մի նւիրական տեղ:

Առաքելոց վանքը Մուշի դաշտում հռչակ է վայելում առանձնապէս իր հրաշագործ կլիճ Աւետարանով. դա մի հազւագիւտ, կատարելութեան հասցրած ձեռագիր մագաղաթեայ աւետարան է, որի փոքրիկ երևանների ձեռագիրը, ծագկատասերի ու նկարների նրբութիւնը և գոյների ազնւութիւնը գարմանք են ազդում մարդուն: Մենք տեսել ենք ձեռագիր աւետարաններ Տաթևի, Սեանի, Կոտայ անապատի, Աղթամարի և այլ վանքերում, բայց այդ աստիճանի նրբութեան հասցրած ձեռագիր աւետարան մենք չենք տեսել ոչ մի տեղում: Այդ աւետարանը կրում է ՉԶԳ թւականը նոյն թւականը կրում են նաև երկու խոշոր գիրքով մագաղաթեայ ճառընտիրներ, որոնք իրենց թերթերի մեծութեամբ և նուրբ ձեռագրերով նոյնպիսի արժէքաւոր գործեր են:

Թէ կլիճ Աւետարանը որպիսի ժողովրդականութիւն է վայելում Մուշի դաշտում, այդ երևաց հետեւալից. ի նկատի ունենալով, որ կարող է այս թանկարժէք աւետարանը կորչել կամ գողացւել Տաճկաստանի պէս մի երկրում, մենք առաջարկեցինք փոխադրել այդ էջմիաձնի թանգարանը. սակայն մեր առաջարկութիւնը յարձակութիւնների աւիթ դարձաւ ոչ միայն վանահօր կողմից, այլ և այդ տեղ գտնուող ուխտաւոր մի քանի դաշտեցիների կողմից:

Առաքելոց վանքը վերջին երկու տասնեակ տարիների ընթացքում խոշոր փոթորիկների վայր է դարձած եղել. զինւած հայերի այդտեղ ապաստան գտնելու պատճառով շատ անգամ ահագին զորքերով պաշարւել է վանքը և հրացանածգութեան սուպարէզ դարձել: Այդպիսի պաշարութիւնների ենթարկւեց վանքը 1892-93, 1897-98, 1900-1901 և 1903 թւականներին. վանքի պատերի վրա մինչև այժմ էլ ֆնում են գնդակների տեղերը, իսկ վանքի արևմտեան դարպասը գեռ նաշխւած է բազմաթիւ ծակոտիներով:

1903 թւից ի վեր կոտորութիւնը այստեղ զորքեր զրկեց, որոնք մինչև սահմանադրութեան յայտարարումը, ամբողջ հինգ տարի, վանքի համար դարձան մի ծանր բեռ. ժողովուրդը սարսափից դադարեց ուխտի գալ և վանքը կրեց մեծամեծ վնասներ: Այս վիճակին ենթարկւեցին նախքան սահմանադրութիւնը շատ վանքեր հայարնակ գաւառներում:

1903 թւից ի վեր կոտորութիւնը այստեղ զորքեր զրկեց, որոնք մինչև սահմանադրութեան յայտարարումը, ամբողջ հինգ տարի, վանքի համար դարձան մի ծանր բեռ. ժողովուրդը սարսափից դադարեց ուխտի գալ և վանքը կրեց մեծամեծ վնասներ: Այս վիճակին ենթարկւեցին նախքան սահմանադրութիւնը շատ վանքեր հայարնակ գաւառներում:

### Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍԻ ՎԱՆՔԸ

Մուշից դէպի արևմուտք, 3 ժամ հեռաւորութեամբ Սասունի հիւսիս-արևմտեան փէշերի վրա գտնւում է Ս. Յովհաննէսի վանքը, որը կարծէք ուզում է մրցակից հանդիսանալ Ս. Կարապետի վանքին. այստեղ, միարանութեան վկայութեամբ, իրը գտնւում է Յովհաննէս-Մկրտչի մարմնի մի մասը:

Վանքը երեք կողմերից շրջապատւած է անտառապատ բլուրներով, իսկ հիւսիսային կողմից նրա առաջ բացւում են մի քանի ձորեր, որոնք վերջանում են Մուշի դաշտով:

Ս. Յովհաննէսի դիրքը բարձր է և գեղեցիկ. այդտեղից բացուող պատկերները հմայիչ են. նրա տեսարանը չունի ոչ Առաքելոց և ոչ էլ Ս. Կարապետի վանքը:

Մի գեղեցիկ առաւօտ էր. վանքի վանահայր Առաքել վարդապետ Մուրադեանը մեղ առաջնորդեց դէպի մի բլուր. այն, ինչ որ բացուեց մեր առաջ այդ բլուրից, մի հրապուրիչ տեսարան էր. 20-25 տարի առաջ յափշտակութեամբ կլանւած Բաֆֆու

նկարագրած Տարօնի առաւօտը պատկերանում էր մեր առաջ իր իսկութեամբ:

Մեր ոտների տակ փուսած էր թաւիշի պէս կանաչին տուղ ընդարձակ դաշտը. նրա հարթ ու կոկիկ մակերևոյթը ոլորապտոյտ դժոււմ էին եւիրատն ու Մեղրագետը իրրև ժապաւէններ, իսկ նրանց ձեւած հարթակների վրա երևում էին Մուշի գիւղերը իրրև օաղիսներ: Գաշտի հակառակ կողմում լեռների մէջ երևում էր Ս. Կարապետի վանքը, իսկ նրանից դէպի արևելք, բլուրների մէջ սեւին էր տալիս Գէրիկի գիւղը, որի մօտերքում մի ժամանակ բազմած էին Աշտիշատի հոշակաւոր վանքը և Ողկան ամրոցը: Հորիզոնի վրա դէպի հիւսիս ցցւած էին Բինգօլեան լեռները, դէպի արևելք՝ Նէմրութն ու Գոգուոր և ապա գեղեցիկ Սիփանը, իսկ աւելի հեռուն, Ալադաղի լեռներից այն կողմը, գծագրւում էր Մասիսի սիրուն կատարի ստեղծագիծը, իրրև մի թափանցիք շղարշ: Ծանօթ Մասիսի կատարը տեսնել այդ հեռաւորութիւնից միանգամայն անսպասելի էր, բայց վանքի դիրքը, այդ երկրին յատուկ ջինջ ու թափանցիկ օդը տեսանելի էին դարձրել անտեսանելին: Ահա այդ հմայիչ տեսարանի առաջ կանգնած մենք երկար հիանում էինք նրանով:

Ս. Յովհաննէսի վանքը օժտւած է ընդարձակ անտառներով, վարելահողերով և արօտատեղիներով. սակայն վանքի հարաւարևելեան կողմում գտնւած անագին հողերը կառավարութիւնը խլել է և նրա վրա հիմնել մի քրդական գիւղ, յատկապէս Սասունի երթևեկութիւնը զժւարացնելու համար:

Վանքում գոյութիւն ունի մի որբանոց-գպրոց, ուր խնամւում և կրթութիւն են ստանում աւելի քան 40 մանուկներ: Այդ գպրոցում տիրում են խալիֆայական կարգեր. այդ էին ցոյց տալիս այն երկու սենեակները, որոնք յատկացւած էին դասատուի և ննջարանի համար. կեղտն ու նեղածուծութիւնը և հակամանկավարժական կահաւորութիւնը լրացնում էին ամեն բան: Այլ կերպ լինել չէր էլ կարող. միթէ՞ ժամանակակից կրթութիւնը հնարաւոր է վանական փթած մթնոլորտում, այն էլ տաճկական իրականութեան մէջ: Մենք այդ վանքերում այն տպաւորութիւնն ստացանք, որ գպրոցները նրանց համար ծառայում էին իրրև պատրուակ ոչ միայն վանքերի եկամտաների ծախսումն արդարացնելու, այլ և պատրիարքաբարանից և զանազան բարեգործներից նպաստներ ձեռք բերելու համար:

### Ս Ա Ս Ո Ւ Ն

Հսկայ լեռների, խորունկ ձորերի, միմեանց վրա հեծած, միմեանց փոր մտած պոռթկումների և պատուածքների մի խառնարան է Սասունը, որը որպէս մի գիթիտարի զանգւած, բարձրանում է Մուշի դաշտի հարաւային կողմում, կապմելով Տաւրոսեան լեռնաշղթայի միջին բարձրութիւնը:

Մուշից սկսած լեռ լեռի վրա, կատար կատարի թևակոխելով, մի ոլորապտոյտ ճանապարհ ձեզ տանում է դէպի վեր, կապուտակը, դէպի Ծիրնկատարը, ապա իջնելով մի մեծ ձորի մէջ, նորից ձեզ տանում է դէպի նորանոր բարձունքներ և նորանոր կատարներ, ամեն սնգամ ձեք առաջ բացելով նորանոր խորխորատների տեսարաններ. նորից լեռներ, նորից ձորեր և այսպէս շարունակ ու անվերջ:

Այսպէս է ահա վերելքը դէպի Սասուն Մուշի դաշտի այն բոլոր տեղերից, որ տեղերից հնարաւոր է եղել գծել մի նեղ շաւիղ: Մի առ մի թւել ու նկարագրել այդ լեռնահանգոյցի կողմերն ու մասերը անկարելի է. որոշ սահմանագիծ փնտռել նրա գաւառակների մէջ նոյնպէս դժուար է. միմիայն ձորերով և նրանց ուղղութիւններով հնարաւոր է եղել որոշել գաւառակների, աւելի ձիշտ, գիւղախմբերի տեղը:

Սասունի կենտրոնում, լեռների կուտակումների վրա բարձրանում է մի զիթիտարի կատար. դա Անտօրն է, Սասունի հսկան. դրա ստորոտներից բացւում են Սասունի լեռնախմբերն իրենց գաւառակներով:

Սասունը մի անմատչելի գաւառ է ոչ միայն հեռաւոր տեղերի, այլ և Մուշի համար. քաղաքական հալածանքները մի կողմից, լեռնային անանցանելի կաղմութիւնը միւս, արգելք են դարձել հարևան մշեցուն անգամ ոտք դնել այդ հետաքրքիր վայրը:

Լեռը կուզէք բարձրանալ, հարց կը տայ ձեզ մշեցին, դէմքի վրա արտայայտելով և երկիւղ և զարմանք, երբ իմանայ ձեր մտադրութիւնը:

Եւ իսկապէս. որ տաճկահայը ներկայ պայմաներում կը մտածի իր աղբուստի անմիջական շահերից դուրս որ և է նպա-

տակով տանից ոտքը դուրս դնելու, այն էլ ուր, դէպի լեռք, դէպի «Սասմայ ծոերը»:

Սասունի կլիման լեռներում և բարձրավանդակներում ցուրտ է, իսկ հովիտներում և ձորերում տաք: Երկիրն անաս է ջրերով, բայց գուրկ նոյնիսկ փոքրիկ դաշտերից, անտառապատ ու ժայռոտ բնութիւնը կոպիտ է, վայրենի և աղքատ:

Սասունցին իր հերթում այդ բնութեան հարպատ զաւակն է. նա կոպիտ է, հպարտ, կսական ու քաջ, բայց աղքատ: Եւ եթէ սասունցին ձեռք ձեռքի տւած իր անմատչելի լեռներին ու ձորերին վերջին երկու տասնիակ տարիների ընթացքում քաջութեան հրաշքեր ցոյց չը տար, թերևս նա այսօր բոլորովին մոռացւած լինէր անմենքից. բայց նա ոչ միայն մոռացւած չէ, այլ և իր վրա գրւած ունի ամենքի ուշադրութիւնը:

Սակայն ինչ է ներկայացնում իրենից ուշադրութեան արժանի այդ վայրը:

Այն Սասունը, որ առանձնապէս իր վրա է դարձրել ամենքիս ուշադրութիւնը, մի փոքր շրջան է, որը կազմում է Սասունի կենտրոնական մասը, իսկ ամբողջ Սասունը մի մեծ լեռնագաւառ է, որի որոշ մասերում ապրում են նաև մեծ թւով քրդեր:

Ամբողջ Սասունը բազկացած է ութ հայաբնակ գաւառակներից կամ գիւղախմբերից, դրանք են.

- 1) Շատախի գիւղերը:
- 2) Առաջաւոր »
- 3) Գելլիէգուզանի »
- 4) Տալօրիկի »
- 5) Ծովասարի »
- 6) Խիանքի »
- 7) Խուլփի »
- 8) Խութ-բանաշէնի »

### ՇԱՏԱԽԻ ԳԻՒՂԵՐ

Անտօքից դէպի հիւսիս, Մուշի դաշտի սահմանի վրա, բարձրանում են Կորդուք սարի և Ծիրնկատարի լեռները, իսկ լեռներից դէպի հարաւ քացուած է բնդարձակ մի ձոր, որի մի-

ջով հոսելով մի գետ, ճանապարհին ընթացքը փոխում է դէպի հարաւ և մտնելով մի նոր ձոր, գնում խառնուած է Անտօքաջրին:

Ահա այդ գետը կոչուած է Շատախի գետ, իսկ ձորը Շատախի կամ Սուտանքի ձոր, որի մէջ ընկած են Շատախի փոքրաթիւ գիւղերը: Այդ ձորը մի շատ գեղեցիկ ձոր է, յատակը լայն, հողերը բերրի և լանջերը անտառապատ:

Շատախն ունի ընդամենը 6 գիւղ, որոնք ընկած լինելով գետի ընթացքի հետ, ոտոզում են նրա առատ ջրերով. այդ գիւղերն են՝ Գերմաւը, Քօփը, Երիցանքը, Տափըկը, Շուշնամերկը, և Գեղաշէնը:

Իսկապէս Գեղաշէն, եթէ ոչ բնակարանների տեսքով, սակայն շրջապատող բնութիւնով և բանաստեղծական դիրքով:

Իր դիրքով առանձնապէս աչքի է ընկնում Տափըկ գիւղը, որը կառավարութիւնը ընտրել է իրեն գորանոցի տեղ:

1904 թւին կառավարութիւնը միտք յղացաւ Սասունը միանգամայն թուրքացնելու համար. նրա կարևոր կէտերում գորանոցներ հիմնել և հիմնեց 5 գորանոց. մէկը գրանցից բաժին ընկաւ Շատախին, որը և շինեց Տափըկ գիւղում: Եւսի քան սահմանադրութիւնը, այդ գորանոցում պահուած էին բաւականաչափ գորքեր, սակայն սահմանադրութիւնից յետոյ հանդամանքները փոխւեցին, գորքերի ներկայութիւնը աւելորդ համարուեց և նրանց տարան այդտեղից, թողնելով միմիայն 10 հոգի:

Վիճակագիր Շատախի գիւղերի հայ ժողովրդի <sup>1)</sup>					Տուն	Շունչ	
№	Գ	Ի	Ի	Ղ	Ե	Բ	Ը
1	Քօփ						429
2	Գերմաւ						395
3	Երիցանք						134
4	Տափըկ						244
5	Գեղաշէն						392
6	Շուշնամերկ						286
							1880

1) Այս տեղեկութիւնները բազել ենք Մուշի առաջնորդարանում 1909 թվ. նոյնամասնաւոյց յանձնաժողովի տեղեկագրից:

### ԱՌԱՋԱԻՈՐ ԳԻՒՂԵՐ

Շատախից ղէպի արևմուտք միևնոյն ձորի շարունակութեան վրա, Շուշնամերկից և Գեղաշէնից մի ժամով հեռու ընկած են Սասունի երկու նշանաւոր գիւղերը, զրանք են՝ Շէնիկն ու Սէմալը: Այս գիւղերը գտնուում են Սասուն տանող ճանապարհի վրա և ամեն անգամ կառավարութեան ընդհարումը Սասունի հետ սկսել է այս երկու գիւղերից. ահա թէ ինչու այս գիւղերը կոչւում են առաջաւոր գիւղեր:

Սրանց վիճակակից են չորս այլ գիւղեր, որոնք գտնուում են Շէնիկից ու Սէմալից ոչ հեռու, զրանք են՝ Ալիանցիքը, Գելիէգէմանը, Գելիէգէմսուրը և Տալաւաքեաժէն:

Շէնիկն ու Սէմալը երկու հարեան գիւղեր են, իւրաքանչիւրը 60-70 տնից բաղկացած, այս գիւղերի ժողովուրդը քաջութեան անուն ունի համաձայն, որի պատճառով էլ կառավարութիւնը նախ և առաջ սրանց հետ է ուղեցել հաշիւ մաքրել: Ամեն անգամ, երբ կառավարութեան զօրքերը յատնել են այգտեղ, Շէնիկի ժողովուրդը թողել է տուն ու տեղ, քաշուել է Սէմալ, իսկ սէմալցիներ քաշուել է գիւղից այն ժամանակ, երբ այլ ևս հնար չէ եղել գիւղում մնալու:

Օրինակ, 1894 թւի ղէպերին Սէմալից սպանւեցին 70 տղամարդ և 50 կին ու երեխայ, 1904 թւի ղէպերին սպանւեցին 20 տղամարդ, իսկ լեռները փախած կանանցից և երեխաներից սառնամանիներին զոհ գնացին աւելի քան 200 հոգի: Այս անգամ Սէմալը բոլորովին աւերեց և այժմ ժողովուրդն սպրում է շաղ անցած ձորի մէջ մի քանի տուն այտեղ, մի քանի տուն այնտեղ, խղճուկ ծածկերի տակ:

Շէնիկի և Սէմալի գիւղքը մասամբ զաշտային է, թէև քարքարոտ և նրանք ունին մասնաւոր հողեր, որոնք ոռոգւում են Սէմալի գետի ջրով: Բացի այդ, Շէնիկն ու Սէմալը ունենալով արօտատեղիներ և անտառներ, պարապում են նաև անասնապահութեամբ. չը նայած զրան, շնորհիւ անվերջ հալածաքներին, նրանք այժմ վարում են ծանր ու չարաքաշ կեանք:

Շէնիկից և Սէմալից արդէն սկսում է Սասունցուն յատուկ խրթին և անհասկանալի բարբարոք, որը հասկանալու համար կարիք է լինում թարգմանի գիմել. նրա արտասանութիւնը և

շեշտը միանգամայն քրդերէն է և երբէք չի կարելի հասկանալ, մանաւանդ երբ նա շտապ է խօսում. բայց երբ ուշադրութեամբ հետևում էք նրա արտասանած բառերին, նոր համոզուում էք, որ շատ բառեր հայերէն են:

Սասունցու բարբարոք մասին մի գաղափար կազմելու համար առաջ կը բերենք Սէմալի շրջակայ վայրերից մի քանիսի անունը:

Գիւղից ղէպի հիւսիս մէկ լեռան գագաթը, որ ունի գեղեցիկ դիրք, կոչւում է Քափրահունօ. այս բառը քրդերէն է և նշանակում է Հունօյի օրատեղի: Այդ դիրքից մի փոքր ցած, մէկ այլ գեղեցիկ դիրք կոչւում է Մլաքուրսի, որ նշանակում է ոտքի տեղ. այս դիրքի վրա շինւած է Սասունի 5 զօրանոցներից երկրորդը, որը կատարելապէս իշխում է Սէմալի վրա և որի մէջ նախ քան սահմանադրութիւնը, լինում էին աւելի քան 100 զինւոր, իսկ այժմ մնացել են ընդամենը 15 զինւոր:

Գիւղից ղէպի հարաւ գտնուող մի մերկ գագաթ կոչւում է Գրէքօլ, որ նշանակում է քօսալեւ, իսկ ղէպի հարաւ-արեւելք գտնուող մէկ բլուր կոչւում է Քաֆրասօր, որ նշանակում է կարմիր օրատեղի: Այստեղ մի քանի օրով իջնում է Սէմալի օրան իր խաշներով սար բարձրանալիս և իջնելիս: Վերջին 5 տարիների ընթացքում հալածանքների պատճառով սէմալցիներ բոլորովին զաղարեց սար բարձրանալ, մինչև որ յայտարարեց սահմանադրութիւնը և նա հնարաւորութիւն ունեցաւ սար դուրս գալ:

Վիճակագիր Առաջաւոր գիւղերի հայ ժողովրդի <sup>1)</sup>				
№	Գ Ի Ի Ղ Ե Ր Ը	Տուն	Շունչ	
1	Շէնիկ		654	
2	Սէմալ		798	
3	Ալիանցիք	65	539	
4	Գելիէգէման		133	
5	Գելիէգէմսուր		198	
6	Տալաւաքեաժէ		58	
			2380	

<sup>1)</sup> Այս տեղեկութիւնները քաղել ենք Մուշի առաջնորդարանում 1909 թւի նպաստամատոյց յանձնաժողովի տեղեկագրից:

### ԳԵԼԻԷԳՈՒԶԱՆԻ ԳԻՒՂԵՐ

Անտօքի արեւելեան անմիջական փէշերի վրա բացուած է մի խորունկ ձոր. այդ ձորը երկու կողմերից սխմւած խիստ թեք վիթխարի լանջերի մէջ պտոյտներ գործելով, գնում միանում է այն ձորին, որ: միջով հոսում է Շատախի գետը: Նոր ձորի վերին ծերպերից սկիզբն առնելով գոյանում է մի գետ, որը խառնուելով Շատախի գետին, հոսում է դէպի Տալօրիկ:

Ահա այս ձորի մէջ բնկած է Գելիէգուզանը իր 16 թաղերով, որի անունով ձորը կոչուած է Գելիէգուզանի ձոր, իսկ գետը՝ Գելիէգուզանի գետ:

Անմալից ժամուկէս տեղ մի նեղ ուղի ձեզ դուրս է բերում Գելիէգուզանի գլխաւոր ձորի մէկ ճիւղը կազմող մէկ այլ ձորի եզերքին. այդ ձորի թեք լանջերի վրա, իբրև ժողաւէն, ձգւած նեղ շաւիղը ձեզ սաստու է ազդում. այդտեղ ձիուց իջնում էք և խեղճ կենդանուն դժւարութեամբ քարշ տալիս ձեր ետևից: Տեղ տեղ ձորի կուրծքը այն աստիճանի թեք է և շաւիղն այնքան նեղ, որ մի անզգոյշ քայլը սպառնում է ձեզ էլ, ձեր ձիուն էլ ձորի խորխորասանրը տանելու: Մէկ ժամ տեղ դժւարին և վտանգաւոր գառիվայրը վերջապէս ձեզ իջեցնում է անյատակ ձորի մէջ, ուր քարերին զարկելով Գելիէգուզանի գետը շտաշում և ազմկում է սխմւած ապառաժոտ ձորը:

Անցնում էք թաղերից մէկի մօտով. նեղ շաւիղը ձգւում է պարտէզների և կորեկի ու ցորենի արտիկների միջով և ահա բացւում է ձորի վերին մասը, որի վիթխարի կողերին, ինչպէս մարտկոցներ, կպած են Գելիէգուզանի մի քանի թաղերը:

Ո՞ր սատանան վճռել է գալ և այս անյատակ ձորերում բնակութիւն հաստատել, մտածում էք դուք և այդ անստիկ ու անմատչելի կուրծքերը, կարծէք, պատասխանում են ձեզ.

— Անկախ կեանք վարելու ձգտող սասունցին

Եւ իսկապէս, շնորհիւ այդ անմատչելի լեաների ու ձորերի, մի բուռն ժողովուրդ կարողացել է դարերով ազատ կեանք վարել:

Մենք սահմանադրութիւնից առաջ բոլորովին ազատ էինք և հարկ չէինք վճարում, իսկ սահմանադրութիւնից յետոյ մեզ վրա ծանր հարկեր դրին, խոր դժկամակութեամբ ասում էր Գելիէգուզանի իշխանները մէկը:

Տարին մէկ անգամ միայն հարկահաւաքը ոտ կը դնէր Գելիէգուզան և որքան մենք առաջարկէինք, այնքանով էլ կը բաւականանար ու յետ կերթար, իսկ այժմ մէկին 5-10 անգամ աւելի են պահանջում. այս խօսքերն էլ ասում էր իշխաններից մէկ ուրիշը:

Մենք զոհեր տւինք, իսկ շահւողը, թեթևութիւն ստացողը դաշտեցին եղաւ, ասում էր երրորդը:

Եւ այս խօսքերը ասում էր այն սասունցին, որին հպատակութեան բերելու տաանեակ տարիներով անզօր էր գտնել տաճիկ կառավարութիւնը: Քանի քանի անգամ կառավարական զօրքերը ստիպւած են եղել այդ անմատչելի ձորերից յետ դառնալ և քանի քանի հրանիւթերով բարձած ջորիներ սայթաքել և խորխորան են գնացել այդ ձորերում. մի անգամ միայն կառավարական զօրքը կարողացաւ հասնել Գելիէգուզան և թնդանօթը Գրէքօլ լեռան կատարից ուղղելով սմբակոծեց գիւղը. դա 1904 թ.ի գարնանն էր, երբ ստանամանիքներից յաղթահարւած սասունցին տեղի տւեց և կառավարութիւնը հիմնեց հինգ զօրանոցները:

Չը նայած այդ բոլորին, մինչև այժմ էլ սասունցին ամեն կերպ աշխատում է, որ տաճիկ պաշտօնեան և հարկահաւաքը որքան կարելի է քիչ ոտ դնի իր ձորերում:

Այսպէս օրինակ, 1908 թ.ին սահմանադրութիւնից յետոյ Գելիէգուզանի տասանորդ տուրքը կապալով վերցրեց մշեցի աղա Չաւուշի տղան 95 ոսկու և որպէս զի այդ տաճիկը գիւղը չմտար, 95 ոսկու վրա աւելացրին 15 ոսկի վաստակ և այդ ամբողջ դրամը պարտք անելով ու վճարելով, նրան հեռացրին գիւղից:

Գելիէգուզանցին շատ է զուրկ վարելահողերից. նրա գելին շատ է ապառաժոտ ու քարքարոտ, կորեկի, մասամբ դարու և ցորենի փոքրիկ արտիկներ, մի քանի ծառեր ու ծառապտուղներ և մէկ երկու այժ կազմում են նրա ապրուստի միջոցները. անսանապահութիւնը, մասնաւորապէս այժեր ունենալը կը ապահովէր սակաւապէտ գելիէգուզանցուն, բայց նա զրկւել էր ամեն ինչից և օրը անց էր կազնում քաղցած:

Դուք մեզ բերել էք այժեր, այս խօսքերով դիմեցին մեզ Գելիէգուզանի իշխանները, երբ մենք հանդիսա առանք նրանցից մէկի տան տուձ ձգւած խախի վրա. և երբ իմացան, որ մենք լոկ ճանապարհորդներ ենք և ոչ նպաստ բաժանող, դժկամակութեամբ, սոսնց այլևայլութեան նրանք աւելացրին.

Ձեր դատարկ գալը մեզ պէտք չէ, կը բերէիք մեզ այծեր, նրանք մեր արտերը կը պարտաւարացնէին, մեզ իւր ու պանիր կը տային և ձեր գալը մեր աչքին, մեր զլիւին:

Այսպէս ասում էր այն գելիէզուզանցին, որը մի ժամանակ ունէր անապին թւով այժ ուղչխար, տան ասաջ շարւած էին մեզրի փեթակներ, նրա դուռը բաց էր ամենքի ատաջ, նա չը գիտէր ինչ բան է ուրիշին դիմելը, իսկ այժմ նա օգնութիւն էր պահանջում:

Գելիէզուզանի 16 թաղերում կան 130-140 տուն ընակիր 1,000 հօգուց բազկացած. նրանք անվիհեր ու քաջ մարդիկ են, բայց զրկանքներից տառապած, մաշւած: Սասունի 5 զօրանոցներից երրորդը այստեղ է շինւած, բայց սահմանադրութիւնից յետոյ, երբ զօրքը քաշուց, այդ զօրանոցի տանիքը քանդեցին հայերը:

Վիճակագիր Գելիէզուզանի գիւղերի հայ ժողովրդի <sup>1)</sup>			Տուն	Շունչ
№	Գ ի ի Ղ Ե Ր Ը			
1	Սարձն-գումեր	.	2	
2	Դաղւրնիկ	.	10	
3	Սարիբշան	.	12	
4	Միւրիթար	.	7	
5	Մազրէսա	.	2	
6	Գէռիկ	.	1	
7	Հօսէլ	.	5	
8	Հուսէյնցիք	.	15	1030
9	Սասոյի-մզրէն	.	8	
10	Դրճօլ	.	12	
11	Կաւրտի	.	1	
12	Գիւղ	.	20	
13	Ռէշիկ	.	10	
14	Ամբար	.	5	
15	Սօշօք	.	11	
16	Մերկեր	.	13	
			134	1030

1) Այս տեղեկութիւնները քաղել ենք Մուշի ասպնորդարանում 1909 թ. նպաստամատոց յաճախագրի տեղեկագրից:

## Տ Ա Լ Ի Օ Ր Ի Կ

Տալօրիկն իր բնութիւնով և անմատչելի լինելով ու ձուրերով, իր ուրոյն կլիմայով և տեղուն ու քաջատրամ ժողովրդով հանդիսանում է Սասունի սիրտը. այդտեղ են ապաստածո խորհրտասները, այդտեղ են նաև երկաթէ մարդիկ:

Անաօրից հարաւ, կողք կողքի կպած գտնւում է կենտրոնական Սասունի երկրորդ հսկան. դա Քէփինն է, որի անմատչելի գալաթի վրա պաշտպանութիւն էր գտնում սասունցին հազարաւոր օրդերից և զօրքերից նեղւած ժամանակ:

Քէփինի արևելեան և հարաւ-արևելեան կողմերից բացւում են երկու վիթխարի ձորեր, սրնց ծմակներում նստած ձիւնի անագին շեղփերից գետակներ են գոյանում: Այդ երկու ձորերը միանալով, կազմում են Գելիէսան. անա այդ երկու ձորերի միջով ձգւում է Գելիէզուզանից Տալօրիկ տանող նեղ շաւիղը: Շաւիղը անվերջ ելեկջներ է կատարում. տեղ-տեղ նա ձգւում է կոկ ժայռերի վերայով, ուր ոտք դնելիս սայթաքում է թէ մարդու ոտքը և թէ ձիւն պայտը. տեղ-տեղ ձեր ասաջ զցւում են ժայռի բեկորներ, որոնց վրայից պիտի մօզցեցի և կամ թռչել, երբեմն շաւիղը ձգւում է ձիւնի մի երկարուկ շերտի տակով, երբեմն կոխում էր մի այդպիսի շերտ և անցնում վրայով և երբեմն ձիւնի մի անագին շեղփ մնում է ձեզանից ցած, ձորի ստորին ծմակներում: Անցնում էր այդ դժւարին ելեկջը կէս ժամ, մէկ ժամ, ժամ ու կէս, բայց դուք դեռ ևս ձորի մէջն էք գտնւում որտեղից լսում է ձորի խորխորաններում քարերին գարկեղ և աղմկեղ գետի որոտը, որտեղից Քէփինի բարձր լանջերում երևում է քրդական փսքրիկ օբան և ձեր ասաջ դեռ զցւած է վերջին վերելքը, որը մոտացնել է տալիս թէ Ծիրնկատարի և թէ Գելիէզուզանի վերելքները:

Վերջին դժւարին վերելքն անցնելով, դուք էք գալիս մի կանաչին տեղ թաւշխայ լանջ. օգոստոսի 4-ն է, բայց ըստ երևոյթին, մի քանի օր ասաջ միայն վերջացել է ձիւնը այդտեղից և նոր միայն բացւում է ձնձաղիկը:

Ինչ հմայիչ տեսարաններ. ձեր ասաջ զցւած է մի նոր կատար. դա Աւիսօրիկն է, որի կողերի վրայով ձգւում է շաւիղը:

այստեղից փոփոխակի բացում են մէկը միւսից գեղեցիկ ու հմայիչ տեսարաններ:

Ահա արեւելքում ցցւած գեղեցիկ Ծովասարը պայտածև իջնող իր լեռնաթևերով: Նրանից դէպի հիւսիս երևում են Սութի լեռները, իսկ դէպի հարաւ՝ Մարաթուքի շղթան. ձեզնից անմիջապէս հարաւ բազմած են Տալօրիկի և ապա Սարգանի կատարները, իսկ դէպի արեւմուտք Սիանքի լեռնաշարքը:

Աւխորկնից դէպի հարաւ ցցւած է մի այլ դագաթ. դա Գարբոջն է: Գարբոջի հարաւը նայող փէշերին, Մանհը կոչւող փոքրիկ շղթայի երկու կողմերի վրա բացում են երկու ձորեր, որոնք գնում խառնուում են մի մեծ խորխորատ ձորի. ահա սրտ միջով պտոյաններ գործելով սրբնթաց վազում է Անտօքաջուրը, և իր շոտաչումով աղմկում ձորի սխմւած կողերը. սա Տալօրիկի ձորն է, Տալօրիկի 14 թաղերի բնագաւառը:

Յիշեալ թաղերն ընկած են այս կարգով. Գարբոջից սկսող արեւելեան ձորում գտնուում է Տալօրիկի զլխաւոր թաղը՝ Էգետունը, 35 տնից բաղկացած. այս ձորի վերին մասում մի բարձր դիրքի վրա շինւած է Սատունի 5 պորանոցներից ամենամեծը, ուր սահմանադրութիւնից առաջ լինում էին աւելի քան 200 զօրքեր, իսկ այժմ մնում են 25 հոգի: Արեւմտեան ձորում գտնուում է Տալօրիկի երկրորդ մեծ թաղը Նըլօլինքը, 40 տնից բաղկացած իր համանուն գիտակով. այս ձորի արեւմտեան կողերի վրա գտնուում են Տալօրիկի երկաթէ հանքերը, որից սալօրիկցին նահապետական ձեով հալեցնում և շինում էր դէնքեր և հաղար ու մի գործիքներ թէ իր պէտքերի և թէ արտահանութեան համար. այժմ երկաթագործ վարպետները չը կան և հանքը այլ ևս չի շահագործուում:

Էգետան և Նըլօլինքի ձորերի միացման տեղում գտնուում է Հաքմանքը, 15 տնից բաղկացած, այստեղից երկու թևերի վրա բացում է Տալօրիկի մեծ ձորը: Աջ թևի ձորի վրա ընկած են երկու թաղեր՝ Արտիօնքն ու Մզրէն, իսկ ձախ թևի ձորի հիւսիսային լանջերի վրայ ընկած են Դւայէնքը և Փուրխը: Այստեղ ձորը ամենի տեսք աւնի. նրա հարսւային թևը, անամաչելի և տեղ-տեղ անատոտ կողերը տարածելով դէպի արեւելք, ընդհարւում են այդտեղ գուրս ցցւած մի ապտոածոտ կուրծքի, յազթւում այդ ընդհարման մէջ և պտոյտ գործելով դէպի հարաւ:

բացում է մի նեղ կիրճ, գետի հոսանքը չը կանգնեցնելու համար: Ահա այդ պտոյտի տեղում շինւած է Սատանի կամուրջը: Այդ կամուրջից դէպի ձախ, ձորի բարձր կողերի վրա ընկած է Սընովիտ թաղը, իսկ դէպի աջ բարձրանում է Փոֆոքարը, որից այն կողմը Տալօրիկի ձորի շարունակութիւն կազմող մեծ պտոյտների վրայ ընկած են Տալօրիկի ֆնացեալ վեց թաղերը՝ Բրդամանքը, Հօնուտը, Հարդքը, Սպլանքը, Չորերը և Եղգարթը:

Բայց ի՞նչ է Փոֆոքարը:

Չորի յատակից շեշտակի բուսած ժայռերի մի վիթխարի դագաթ է Փոֆոքարը, որն իր կրծքով սեղմել, փոխել է ձորի ընթացքը. նրա թևք կողերը մինչև դագաթը լերկ ժայռերի կուտակումներ և բեկբեկումներ են, որոնց արանքներում տեղ-տեղ արմատ են բռնել վայրի ծառեր: Փոֆոքարի ժայռոտ կողերով ձգւում է մի նեղ շաւիղ. դա Տալօրիկի երկու թաղախմբերի ճանապարհն է: Ձեզ այդտեղով առաջնորդում է սալօրիկցին դէպի միւս թաղախումբը. գնում էք նրա ետևից նախ արագ, աստիճանաբար վերելքը գտնում է դժւարին, անանցանելի և վտանգաւոր. ոտներդ տեղ-տեղ գնում էք ժայռի ճեղքերի մէջ, ձեռքերով կախ էք ըկնում ժայռի մի այլ ճեղքից և մագլցում առաջ. այդպիսի վերելքին անսովոր, յոգնած վերջապէս մի տեղ կանգ էք առնում, նայում էք չորս կողմը և սոսկում: Ձեր ոտքի տակ ձորի խորքում հազիւ նշմարւում է Սատանի կամուրջը. Փոֆոքարի ապտոածոտ կողերն իջնում են մինչև այդտեղ, իսկ Փոֆոքարի այն սուր քարաքիթը, որը բոլորից բարձր ցցւած օբօրւում է իրը քամիներից և ֆոֆոտում, որից և ստացել է իր անունն ամբողջ լեռնաժայռը, դեռ շատ հեռու է: Երկիւղը ձեզ կոխում է, գլխի պտոյտ է առաջ գալիս, մտածում էք յետ դառնալ, բայց չէ որ նոյնքան դժւար է վերադառնալը, որքան և առաջ գնալը և վճռելով այլևս յետև անդուդին չը նայել, շարունակում էք մագլուցումը մինչև վերջը:

Պարոն, բաւական վարժւած կ'երևիք այսպիսի դժւար ճանապարհներ անցնելու մէջ. ամեն դաշտեցի ընդունակ չէ Փոֆոքարը անցնելու: այս խօսքերն ուղղեց մեզ մեր առաջնորդ Տալօրիկի ուսուցիչ Մկրտիչ Յովհաննիսեանը, երբ մենք սարսափի տակ անցանք Փոֆոքարը:



Բայց արդեօք կը համաձայնէինք մենք այդ Ացիլլան երկրորդ անգամ անցնել: — Ոչ երբէք:

Իսկ այդ տալօրիկցու սովորական ճանապարհն է, ամեն օրւայ անց ու դարձի տեղը. այդտեղով անց ու դարձ է անում նաև տալօրիկցի կիներ, երեխան գրկած, երբեմն նոյն իսկ 3 փութ զլզիլ շալակած և այն էլ ոչ միայն ցերեկները, այլ և զիշեր ժամանակ: Մի խօսքով Ֆոֆոքարը դիցական աշխարհ է, ուր ապրում է դիցական տալօրիկցին:

Տալօրիկցին իր բնաւորութեամբ այդ միջավայրի հարազատ դաւակն է. նա սովուն է և քաջ: Ճիշտ է, նա հասակով պարթև է. քաղաքական հալածանքները, բնութեան ժխտութիւնը և չարքաշ կեանքը դրօշմել են զրա գէմքի և կազմւածքի վրա իրենց կնիքը, բայց նրանցից խիլ չեն կարողացել նրա անվեհերութիւնը և նա այս օր էլ արհամարանքով է նայում տաճիկների վրայ, սպասելով լաւագոյն օրերի:

Տալօրիկցին, որի հասկացողութիւնը Սասունի սարերից այն կողմը չի անցնում, որը նախ է պարզամտութեան հասցրած չափով, որի զէնքը շաշխանան է, այդ տալօրիկցին այսօր էլ երազում է եօթ վիլայէթի հողի մասին. մի զիտ, որը բնորոշելու համար առաջ ենք բերում քրդերէն երգի մի կտորը իր թարգմանութեամբ, որը շատ ընդհանրացած է Սասունում:

Ահա այդ երգը:

Դէ լէխն, լէխն, բրանօ լէխն,  
Գուշմանէ մազն, մօլլա շէխն,  
Մօսունի բինըն, Ֆշէկա լէխն,  
Կաշէ կուբմանջա լը արգէ բախն:

Ֆիդա գօքէզը ժայէ խալաթէ,  
Կոմդա դաւօրգան հաֆթ վօլիլաթ,  
Գէորգ Սունդխարի չար ինջիլա,  
Սօյնախօթ բէժմբոյ հէսիրա:

Գէորգ Սունդխարի զվէ մօսանի,  
Կօմ նօգա բաւէն սար խշէ գալէ,  
Գուժը դինա Իսա, ըժ դինա Իսուս,  
Ժը մէնէնի ժը վա իգի բխալէ:

Դէ գարկէք, գարկէք, եղբայրներ գարկէք,  
Թշնամու մեծին, մօլլին ու շէյխին,  
Մօսինը բերէք, փամփուշտը դրէք,  
Թշնամի քրդին գլորէք գեաին:

Ֆիդային ահա, եկաւ խալաթով,  
Եօթը վիլայէթ մենք կը պահանջենք.  
Գէորգը երգեց չորս աւետարանով,  
Խեղճի համար արիւն պիտ թափենք:

Գէորգը երգեց մօսինի վրա,  
Աւրել զօրանոցը Գիլիէգուզանի  
Դու մահմեդական, ես քրիստոնեայ  
Մեր երկուսից մէկը պիտի ջնջուի:

Տալօրիկցին վեհանձն է, հպարտ. նա վիզ ծոկ չը զիտէ, նրան խորթ են խնդրելն ու մուրալը, իսկ այն, ինչ որ նրան հարկաւոր է, նա կը պահանջի, կը խլի ձեզանից. այս կողմից նա մինչև անգամ վերին աստիճանի եսամոլ է: Երբ նպաստամատոյց յաճնաժողովը նպաստներ էր բաժնում Մուշի կարօտեալներին, վկայում են, որ սասունցին ոչ մի կերպ չէր կարողանում հաշուել այն մտքի հետ, որ դաշտեցին նրա հետ հաւասար բաժին պիտի ստանայ: Այս բաւական չէ. նպաստներից հաւասար բաժին էին ստանում Սասունի թէ հարուստը և թէ աղքատը, թէ իշխանը և թէ մշակը. այսպէս վարել էր նաև տալօրիկցին:

Տալօրիկցին կոպիտ է, բիրդ. մինչև այսօր էլ նա իր գլզիլի արտերը արշաւոյ արջերին հալածում է իր գիշերային գոռում զոչումներով և վայրենի աղաղակներով<sup>1)</sup>, բայց նա այդ կոպտութիւնների մէջ էլ համակրելի է, որովհետև նրա մէջ հարազատութեամբ անդրադառնում է կոպիտ ու բրիզ միջավայրը և նա

<sup>1)</sup> Հօսնուտ գիւղում, ուր մենք անց կացրինք մի գիշեր և որի դիմաց գեաի միւս ափին բարձրանում է մի անտառապատ լանջ ամբողջ գիշերը. ազմկում էր պահապանների աղաղակներով: Գիւղացիների պատմելով, դիմացի անտառից արջերը իջնում են ցած, պատում ու անցնում են գետը և հասած զլզիլը ուտում, բայց աղաղակներ լսելով, նորից անտառն են փախում:

հանդիսանում է այդ միջավայրի պարզասիրտ և պարզամիտ հարազատ գաւազներ:

Իր պարզասրտութեամբ, անվեհերութեամբ և չարքաշ կեանքով տղամարդուց յետ չի մնում նաև տալօրիկցի կիներ: Նա երբէք չի քաշուում օտարից և ոչ միայն չի քաշուում, այլ մի առանձին հարցասիրութեամբ դիմում է ձեզ և ձեր ով լինելն ու գալու պատճառը հարցնում. քրդական հագուստի տակ, կրակոտ աչքերով և սևացած դէմքով տալօրիկցի կնոջ համարձակ դիմումը ձեզ հրապոյր է ազդում: Տալօրիկցի կինն է, որ տղամարդուն հաւասար իշխում է այդ լեռներին. տալօրիկցի կինն է, որ նեղ բողբոջներին իր ամուսնու անբաժան ընկերն է և օգնականը. նա է տան պահապանը, երբ ամուսինը բացակայ է: Տալօրիկցի կինը գեղեցիկ չէ և ոչ էլ պարթև, բայց նա աշխոյժ է, կրակոտ, եռուն, նրա շարժումները կեանք են շնչում և ձեզ խորին պատկառանք ազդում:

Տալօրիկի լեռներում և ձորերում տափարակ անկիւն չկայ, մշակութեան համար այդտեղ մի ափ հարթ տարածութիւն չէք գտնի. նրա ապառաժոտ կուրծքերը անհիւրընկալ են. բայց հէնց այդ տեղն է, ուր տալօրիկցին իր համար կայան է ընտրել, ուր սոկուն աշխատութեամբ կեանք է ստեղծել: Նա լերկ կուրծքերը պչպտրել է իր մատներով, թեք լանջերը հարթել, պատնէշներով է պատել, փոքրիկ տափարակները վրա անասելի ջանքեր է գրել և իր համար անտեսութիւն ստեղծել:

Շնորհիւ այդ սոկուն աշխատանքի, Տալօրիկի արեկող ձորերի մէջ, ուր ամառները շատ շոգ է լինում, կորեկից, գլգլից, ցորենից և գարուց բացի բուննում են թուզ, նուռ, գխտոր, ծխախոտ, խաղող և մինչև անգամ բամբակ:

Պաղողի տեսակները շատ են և կրում են հետևեալ անունները. 1) իգնուրդ, 2) նուսար, 3) բոլորպտուղ, 4) աշխար, 5) դումշիկի, 6) եղանաչք, 7) կարմիր, 8) մօխար, 9) սօլօր, 10) բաթման, 11) բօրկը, 12) լօշ, 13) բախրտի և այլն: Պաղողի այգիներով առանձնապէս հարուստ է Էգետունը, որի պատճառով էլ նա ստացել է Էգետուն կամ այգետուն անունը:

Տալօրիկի ձորերում աճում են նաև թթենիներ, շնորհիւ որի մի քանի թաղերում պարսպում են շերամապահութեամբ. կան բաւականաչափ երկյարկանի սններ, որոնց վերին յարկի

սենեակները յատկացւում են շերամապահութեան. այդ սենեակներն ունին մեծ լուսամուտներ, բայց առանց փեղկերի:

Տալօրիկում հողը տարւայ ընթացքում մշակուում է երկու անգամ և այդ շնորհիւ ջրի առատութեան և հողերի պարարտացման. այդ տեղերի վրա պահում են ոչխարներ և այծեր: Այս միջոցն է գործ դրւում նաև ուրիշ գաւառներում:

Տալօրիկցին վերին աստիճանի սակաւապէտ է. նա գործ է ածում կորեկի և գլգլի հաց. ցորենի գործածութիւնը հազւագիւտ է. երբեմն հիւրերի առաջ դուրս են բերում ցորենի հաց. ցորենը մանրացնում են երկանաքարով, որից համարեա ամեն տուն ունի. խոժոռ ալիւրից խմոր են հունցում և սաջի (կասկարայի) վրա թխում ու տաք-տաք հիւրերին հրամցնում ստելով.

— Կերակուր անուշ արէք:

Սակաւապէտութեան վրա աւելացել է չքաւորութիւնը, մասնաւոր 1904 թւի դէպքերից յետոյ, երբ զօրքերն աւերեցին Տալօրիկի մի քանի թաղերը, առանձնապէս Էգետունն ու Հագմանքը. ժողովուրդը քաշեց Սլէվանի և Սութի կողմերը և վերադարձաւ իր հարազատ ձորերը միմիայն սահմանադրութիւնից յետոյ:

Այսքան երկար կտնդ տոնելով Տալօրիկի վրա և սալով նրա մանրամասն նկարագրութիւնը, մենք թեթևակի կանցնենք Սատունի մնացեալ գաւառակների մասին, որոնք աւելի կամ պակաս չափով նոյն ընդհանուր պատկերն են ներկայացնում:

Վիճակագիր Տալօրիկի գիւղերի հայ ժողովրդի <sup>1)</sup>			
№	Գ Ի Ի Ղ Ե Ր Ը	Տուն	Շունչ
1	Էգետուն . . . . .	35	1349
2	Հագմանք . . . . .	15	
3	Հըլօղինք . . . . .	40	
4	Դւալենք . . . . .	13	
5	Փուրխ . . . . .	16	
6	Մզրէն . . . . .	15	
7	Արախունք . . . . .	10	
8	Սըլհովիտ . . . . .	10	
9	Քրդամանք . . . . .	11	
10	Հօսնուտ . . . . .	6	
11	Հարդք . . . . .	11	
12	Սպղանք . . . . .	11	
13	Չորեր . . . . .	3	
14	Եղգարթ . . . . .	10	
		206	1349

1) Այս տեղեկութիւնները քաղել ենք Մուշի առաջնորդարանում 1909 թ. նպաստամատուց յաճնաժողովի տեղեկագրից:

## ՍԻԱՆՔԻ ԳԻՒՂԵՐ

Անաօքից ղէպի հարաւ-արեւմուտք ընկած են Սիանքի լեռները, որոնք պայտածե թեւերով տարածուած են ղէպի արեւելք, մէջտեղը բացելով մի անագին ձոր. այդ ձորը կոչուած է Իշխնձոր: Ահա այդ լեռների և ձորերի լանջերի վրա ընկած են Սիանքի մանր ու մեծ գիւղերը:

Իշխնձորի յատակում ընկած է Իշխնձոր գիւղն իր չորս թաղերով, որոնք միասին ունին 100 տուն բնակիչ. այդ չորս թաղերն են՝ Նորհանը (նոր շինած), Գալինքը (կալատեղ), Սըզլար-ղինը և Սըրվարը: Իշխնձորը Սիանքի ամենամեծ և ուժեղ գիւղն է, որը անմաս չէր մնում Սասունի ղէպքերին. այդտեղ շինւած է Սասունի զօրանոցներից վերջին հինգերորդը, որտեղ մինչև այժմ էլ պահուած են 15 զինւորներ:

Իշխնձորից ղէպի վեր, լեռների լանջերում ընկած են Սիանքի երեք գիւղերը. դրանք են՝ Ընկուզնակը, Սևիթը և Արախօնքը, իսկ մնացեալ գիւղերը փուած են լեռնաշղթայի զանազան լանջերում:

Սիանքի աշխարհագրական կազմութիւնն աւելի կամ պակաս չափով նոյնն է, ինչ որ ընդհանրապէս Սասունի կազմութիւնը. նոյն լեռներն ու ձորերը. նոյն աշխատասէր, տոկուն և քաջասիրտ ժողովուրդը և նոյն անտեսական պայմանները: Մի տարբերութիւն, որ նկատելի է Սիանքում, այդ այն է, որ այստեղ բնութիւնը փոքր ինչ մեղմ է, երկրագործութիւնն ու այգեգործութիւնը աւելի բարեյաջող պայմանների մէջ, որի շնորհիւ ժողովուրդը այստեղ համեմատաբար աւելի քիչ է տառապում, քան Տալօրիկում:

Ամբողջ Սիանքում կան 18 հայաբնակ գիւղեր աւելի քան 500 տուն բնակչով:

Այս գաւառակն իր վարչական կազմով պատկանում է Գէնջի սանջակին, բայց աշխարհագրական կազմութեամբ լինելով Սասունի մի մասը, առաջ ենք բերում Սասունի միւս գաւառակների հետ միասին:

Վիճակագիր Խիանքի գիւղերի հայ ժողովրդի <sup>1)</sup>				
№	Գ Ի Ի Ղ Ե Ր Ը	Տուն	Շունչ	
1	Իշխնձոր . . . . .	100	1249	
2	Ընկուզնակ . . . . .	50		
3	Հեղին . . . . .	20		
4	Սևիթ . . . . .	6		
5	Արախօնք . . . . .	30		
6	Սաղաուն . . . . .	50		
7	Փարկա . . . . .	40		
8	Բերմ . . . . .	100		
9	Պրհամպա . . . . .	25		
10	Արբա . . . . .	16		
11	Կրեխոխ . . . . .	3		
12	Քարիք . . . . .	2		
13	Շրմանա . . . . .	5		
14	Բաց . . . . .	5		
15	Սըլօխ . . . . .	5		
16	Արխունդ . . . . .	50		
17	Տանձ . . . . .	2		
18	Հըրդա . . . . .	7		
		516		

<sup>1)</sup> Այս տեղեկութիւնները քաղել ենք Մուշի առաջնորդարանում 1909 թ.ի նպաստամատոյց յանձնաժողովի տեղեկագրից:

### ԾՈՎԱՍԱՐԻ ԳԻՒՂԵՐ

Անաօքից ղէպի արևելք ընկած է Ծովասարը, որի արևմտեան փէշերը մի քանի ձորակներով ակօսւած, գալիս հանգում են Անաօքաջրի հովտում:

Ծովասարի յանջերում կան մի քանի քրդարնակ գիւղեր, որոնց հետ միասին կան նաև հայարնակ գիւղեր. հայարնակ գիւղերի թիւը չորս է. զրանք են՝ Աղբին, Հեթինքը, Տատրագոմը և Կէլուաշը. այդ չորս գիւղերը միասին ունին 1300 բնակիչ:

Երկրի զիրքը յատուկ է Սասունի բնութեանը. լեռներն ու ձորերը յաջորդում են միմեանց, նոյն չարաքաշ և նոյն տոկուն ժողովուրդն է իր անտեսական պայմաններով, ինչ որ Սասունի միւս գաւառակներում:

Վիճակագիր Ծովասարի գիւղերի հայ ժողովրդի <sup>1)</sup>				
№	Գ Ի Ի Ղ Ե Ր Ը	Տուն	Շունչ	
1	Աղբի . . . . .		548	
2	Հեթինք . . . . .		429	
3	Տատրագոմ . . . . .		165	
4	Կէլուաշ . . . . .		87	
			1329	

<sup>1)</sup> Այս տեղեկութիւնները քաղել ենք Մուշի առաջնորդարանում 1909 թ.ի նպաստամատոյց յանձնաժողովի տեղեկագրից:

### ՆՈՒՆԻՓԻ ՓԻԻՂԵՐ

Անտօքից դէպի արեւմուտք ընկած է Սուլիի գաւառակը, որն ունի 16 հայաբնակ համեմատաբար մեծ գիւղեր: Այս գաւառակը թէև նոյնպէս լեռնոտ է, բայց ոչ այն չափով, ինչ չափով որ լեռնոտ են Սասունի կենտրոնական գաւառակները:

Սուլիին ունի սաք կլիմա, բարեբեր հողեր և հարուստ բուսականութիւն. նա տալիս է խաղողի ընտիր տեսակներ, բազմատեսակ ծառապտուղներ, որոնք մեծ քանակութեամբ արտահանուում են Մուշ և նրա շուկան ճոխացնում, չլնայած որ Մուշն ինքն էլ ունի խաղողի այգիներ և պտղատու պարտէզներ: Սուլիի խաղողի և ծառապտուղների արտահանութիւնը շատ աւելի առաջ կը գնար, եթէ այդ երկրում գոյութիւն ունենային գոնէ շատ ու քիչ կանոնաւոր ճանապարհներ. բայց դրանցից առանձնապէս զուրկ է Սասունի շրջանը:

Հայաբնակ գիւղերից իրենց բազմամարդութեամբ աչքի են ընկնում Ընձքարը, Ահարօնքը, Գազկէն և Գեղերվանը:

Սուլիի գաւառակը գտնուում է Գէնջի սանջակի վարչութեան մէջ, բայց նա Սասունի մէկ մասն է կազմում, որ և բերում ենք նրա հետ միասին:

810		1
150		2
107		3
87		4
1031		

### Վիճակագիր Սուլիի գաւառի հայ ժողովրդի<sup>1)</sup>

№	Գ Ի Ի Ղ Ե Ր Ը	Տուն	Շունչ
1	Ահարօնք . . . . .	64	397
2	Գեղերվան . . . . .	54	383
3	Ընձքար . . . . .	120	1015
4	Էլւր . . . . .	35	204
5	Փասուր . . . . .	36	296
6	Թխախս . . . . .	15	77
7	Սըրուճ . . . . .	7	32
8	Գազկէ . . . . .	60	360
9	Թլթաւ . . . . .	18	85
10	Հաւրք . . . . .	25	120
11	Մաշտակ . . . . .	10	47
12	Շուղըք . . . . .	35	217
13	Գրէմօրի . . . . .	8	43
14	Փարգահ . . . . .	38	350
15	Արժիկ . . . . .	12	123
16	Սարլջօղ . . . . .	26	198
		563	3947

1) Այս տեղեկութիւնները քաղել ենք Մուշի առաջնորդաբանում 1909 թ. նպաստամատոյց յանձնաժողովի տեղեկագրից:

### ՍՈՒԹ-ԲՈՆԱՇԷՆԻ ԳԻՒՂԵՐ

Անասօքից գէպի հիւսիս-արեւելք ընկած են Սութի լեռները. այդ լեռներում գտնուում է Սութ-բոնաշէնի գաւառակն իր 21 հայաբնակ գիւղերով:

Երկրի կազմութիւնն աւելի նման է կենտրոնական Սասունի կազմութեանը. բարձրարեւր լեռներն ու խորունկ ձորերը կազմում են այդ գաւառակի յատկանիշը. լեռները մեծ չափերով ծածկւած են անտառներով:

Հայաբնակ գիւղերն այս գաւառակում մեծ չեն. 21 գիւղում հաշոււմ են ընդամենը 300 տուն բնակիչ:

Այս շրջանում գտնուում է Ս. Աղպրիկի վանքը, որը Սութ-բոնաշէնի հայ ժողովրդի համար նւիրական ուխտատեղի է. այս վանքը որպէս թէ շինւած է Թադէոս առաքեալի ձեռքով:

Հայ ժողովրդի գրութիւնը այստեղ շատ ծանր է, պատճառները երկու են. նախ՝ գաւառակը հեռու է ընկած կենտրոնական Սասունից և մեկուսացած գիրք ունի. երկրորդ՝ Սասունի քուրդ աշիրէթներից մի երկուսը, այն է՝ Բալաքցիք, Բընդրցիք և Շիքօհնց հաստատւած են Մարաթուկի, Ծովասարի և Սութ-բոնաշէնի լեռներում և իրեց վայրագութիւններով ամենից շատ ճնշում են կենտրոնից հեռու ընկած գաւառակների հայ ժողովուրդներին. գտնւելով այսպիսի պայմանների մէջ, Սութ-բոնաշէնի հայ ժողովուրդն, իր քաջութեամբ հանդերձ, քուրդ ցեղերի կողմից ենթակայ է մեծամեծ զրկանքների:

Ամփոփելով մեր խօսքը Սասունի մասին, կասենք:

Սասունը խորունկ ձորերից և անթիւ կատարներից հիւսւած մի ընդարձակ լեռնագաւառ է. նա ունի իր յատուկ բնութիւնը, կլիման և ժողովուրդը: Գաւառի զանազան կողմերում և առանձնապէս կենտրոնական մասում գտնուում են ութ հայաբնակ գաւառակներ կամ գիւղախմբեր. դրանք են՝ Շատախը, Առաջաւոր գիւղախումբը, Գեղիէզուզանը, Տալօրիկը, Սուլփը, Սիւնքը, Ծովասարի գիւղերը և Սութ-բոնաշէնը: Այդ ութը գիւղախմբերում ապրում է մօտաւորապէս 17,000 ժողովուրդ:

Այսքան է Սասունի հայ ժողովրդի ամբողջ թիւը. սակայն Սասունի այն մասը, որը վերջին երկու տասնեակ տարիներէ

ընթացքում հանդիսացել է խոշոր դէպքերի վայր և իր վրայ է գրաւել մեր բոլորիս ուշադրութիւնը, շատ փոքր է. նա կազմում է Սասունի այն կենտրոնական մասը, ուր գտնուում են Շէնիկն ու Սէմալը իրենց գիւղախմբով, Գեղիէզուզանն ու Տալօրիկը իրենց թաղերով և Շատախի, Ծովասարի ու Խշինձորի կենտրոնական Սասունին մօտիկ գտնուող մի քանի գիւղերը, որոնցում ապրող հայ ժողովրդի թիւը կլինի ոչ աւելի 5,000-ից:

Սակայն Սասունում միայն հայեր չեն ապրում. հայերից աւելի թիւ կազմում են քրդերը. գաւառի մեծ մասը բռնւած է նրանցով: Նախ՝ իրրև տեղացի քրդական ցեղեր յայտնի են Բալաքցիք, Բընդրցիք, Շիքօհնք, Սալիլինք, Ճելիլինք, Սասունցիք, Տաղիրանցիք և այլն ցեղեր, որոնք միասին կազմում են մի խոշոր թիւ. երկրորդ՝ ամասները հազար ու մի տեղից իրենց հօտերով չուում ու գալիս են Սասունի լեռները բազմաթիւ թափառական ցեղեր, որոնց ոչ թիւը և ոչ էլ քանակը հաշի առնել հնարաւոր չէ: Այսպէս օրինակ, եթէ Շէնիկին և Սէմալին կազմ լեռներում օրա է դնում Սասունի ստորոտներում ապրող կաշըկանցիների ցեղը, Մուշից վեր, Կօրդուքի մի գեղեցիկ լանջում, որը կըզլ-զիարէթ անունն է կրում, օրա են դնում օրերով ճամբա եկած Դիարէքիթի տափարակներում ապրող քրդական ցեղերը: Ահա այս բազմաթիւ օրաների հազարաւոր խարոյկներով վառուում են գիշեր ժամանակ Սասունի լեռները ամառայ ամիսներում, դարձնելով նրան որպէս բանակատեղի:

Հազարաւոր տեղացի քրդեր, հազարաւոր չուղ օրաներ, ահա այն աւերիչ ոյժը, որի գէմ անհաւասար կռիւ մղելով, մի բուռն հայ ժողովուրդ շարունակում է իր գոյութիւնը Սասունի լեռներում:

1875 598

Վիճակագիրը Սուլթ-բոնաշէնի գաւառի հայ ժողովրդի<sup>1)</sup>

№	Գ Ի Ի Ղ Ե Ր Ը	Տուն	Շունչ
1	Ռարաթ . . . . .	8	101
2	Փիղօնք . . . . .	12	120
3	Սարէնգօլէ . . . . .	17	136
4	Կժանք . . . . .	19	101
5	Արունք . . . . .	6	47
6	Ընկուղէք . . . . .	25	138
7	Շահվերդի . . . . .	19	192
8	Բըլըկան . . . . .	13	78
9	Թաղըձոր . . . . .	8	47
10	Աւարք . . . . .	6	48
11	Ագրակ . . . . .	23	168
12	Փրիվանք . . . . .	1	8
13	Գիլօնք . . . . .	9	68
14	Հընդձոր . . . . .	3	12
15	Կօռք . . . . .	8	48
16	Շնխտ վերին . . . . .	5	24
17	» ներքին . . . . .	35	301
18	Գաշտակձ . . . . .	11	137
19	Շէն . . . . .	35	280
20	Թաղւանք . . . . .	26	269
21	Յուշուտ . . . . .	38	211
		327	2534

1) Այս տեղեկութիւնները բաղել ենք Մուշի առաջնորդարանից:

### ՓՍԱՆԱՅ ԳԱԻԱՌ

Փսանայ գաւառի մասին տեղեկութիւններ մեզ պակասում են. այդ պատճառով առաջ ենք բերում միմիայն գիւղերի ցուցակը, այն էլ առանց բնակիչների թւերի:

Յուցակ Փսանայ գաւառի հայաբնակ գիւղերի<sup>1)</sup>

№	Գ Ի Ի Ղ Ե Ր Ը	Տուն
1	Գաղլձօղ	
2	Սորան	
3	Շէխան	
4	Նոր-ղեղ	
5	Գէլաւանօն	
6	Մըջղեղ	
7	Խնձորեկ	
8	Թարօք	
9	Կօրնկէղ	
10	Բաջրինք	
11	Մկղենք	

1) Այս ցուցակը վերցրել ենք Մուշի առաջնորդարանից:

### ԲՈՒԼԱՆԸՂԻ ԳԱԽԱՌ

Բուլանըղի գաւառն ընկած է Մուշի սանջակի հիւսիս-արեւելեան մասում. նրա սահմաններն են՝ արեւելքից Մանաղկերտի գաւառը, հիւսիսից Էրզրումի վիլայէթը, արեւմուտքից և հարաւ-արեւմուտքից Վարդոյի և Մուշի գաւառները, իսկ հարաւից Խլաթի գաւառը:

Երկրի կազմութիւնը մասամբ դաշտային է և մասամբ լեռնային. լեռնային է առանձնապէս գաւառի հիւսիս-արեւմտեան և արեւմտեան մասերը, որոնց սահմանների վրա բարձրանում են Սամուրի շղթան և Մուշի դաշտի պատար կազմող լեռները: Բացի այդ, գաւառի կենտրոնում գտնւում է Բլէջանը իր բազմաթիւ գագաթներով, որոնցից մի քանիսի բարձրութիւնը ծովի մակերեւոյթից հասնում է մինչև 9,000 սանաչափի: Բլէջանի լեռները տարածւելով դէպի հարաւ, գաւառը բաժանում են երկու մասի, վերին և ներքին Բուլանըղների:

Գաշտային տեղերն ընկած են գաւառի երկու մասերումն էլ. Բլէջանից դէպի արեւմուտք, ներքին Բուլանըղում կան բաւականին տափարակներ, որոնք հանդիսանում են բերրի դաշտավայրեր. աւելի ընդարձակ տափարակներ գտնւում են վերին Բուլանըղում, որոնք կազմում են Եփրատի լայնանիստ հովիտը:

Բուլանըղը համարւում է իրրե ջրառատ գաւառ: Նախ՝ Բլէջանից դէպի հարաւ գտնւում է Բուլամա լիճը իր մէջ թափւող գետակներով: Երկրորդ՝ գաւառի ամբողջ երկարութեամբ հոսում է Եփրատը, որի մէջ թափւում են Սնուսի գետն իր ճիւղերով և մի քանի այլ փոքրիկ գետեր, որոնք առատօրէն ոռոգում են գաւառի տափարակները:

Գաւառն իր կլիմայական յատկութիւններով և դաշտային կազմութեամբ արտադրում է ընաիր հացահատիկներ, որոնք և կազմում են ժողովրդի գլխաւոր զբաղմունքը, բայց գաւառում զարգացած է նաև անասնապահութիւնն ու խաշնարածութիւնը, շնորհիւ այն ընդարձակ արօտատեղիների, որոնք փուլած են Սամուրի լեռների և Բլէջանի լանջերի վրա:

Բուլանըղում կան աւելի քան 60 գիւղեր, որից 29-ը հայաբնակ են. հայերի հետ խառն ապրում են քրդեր և չերքէզներ:

Քաղաքի կենտրոնավայր համարւում է Կօփը. այդտեղ է նստում գայմագամը: Կօփը քաղաքի հրապոյր չունի. նա մի աւան է, աւելի շուտ մի մեծ գիւղ, ուր ժողովուրդը զբաղւում է աննշան բացառութեամբ երկրագործութիւնով. նա ունի 500 տուն բնակիչ, որից 340-ը հայեր են:

Բուլանըղի գաւառում աչքի են ընկնում մի քանի բազմամարդ գիւղեր, որոնք ունին բարերեր հողեր. մենք կը յիշենք դրանցից մի երկուսը:

Եօնջալունը զուտ հայաբնակ գիւղ է. ունի 250 տուն բնակիչ, գտնւում է վերին Բուլանըղում Եփրատի մի գեղեցիկ հովտի վրա. ունի հրաշալի տեսարաններ և հացառատ դաշտեր:

Կիլը դարձեալ զուտ հայաբնակ գիւղ է. ունի 200 տուն բնակիչ, գտնւում է Բլէջանից դէպի արեւմուտք, համանուն գետակի վրա, որը յայտնի է իր համեղ ձկներով: Այս գիւղին կից մի բլրակի վրայ կան հին բերդի ֆնացորդներ:

Բուլանըղում առաջ մեծ ու շէն գիւղեր շատ կային, բայց պարբերական հալածանքները հանգիստ չեն տւել նրանց և տեղի է ունեցել այն սովորական երեւոյթը, որը յատուկ է այդ երկրին. հայերը շարունակ գաղթել են, իսկ նրանց տեղը իջել են քրդերը:

Այս վիճակին ենթարկւած գիւղերից է վերին Բուլանըղում գտնւող Լաթար գիւղը: Այս գիւղը 20-30 տարի առաջ զուտ հայաբնակ էր և ունէր 300 տուն բնակիչ:

Բիթլիսից մի քանի շէյխեր գալով, տիրացան հայերին պատկանող հողերին և նրանց հալածելով, նրանց հողերի վրա աստիճանաբար բերին բնակեցրին քրդեր. այդպիսով այժմ Լաթարում կան 240 տուն քրդեր, իսկ հայ ընտանիքների թիւը 100-ից չի անցնում:

30	50
10	27
15	150
	150
	215



## ՄԱՆԱԶԿԵՐՏԻ ԳԱՒԱՍԻ

Մանագիկերտի գաւառը կամ պատմական Վարաժնունիքը գտնուում է Մուշի սանջակի հիւսիս-արեւելեան ծայրում, որի սահմաններն են արեւմուտքից Բուլանըղի գաւառը, հարաւից Վանի վիլայէթը, իսկ արեւելքից և հիւսիսից Էրզրումի վիլայէթը:

Երկրի կազմութիւնը մեծ մասամբ դաշտային է, դաշտային է մանաւանդ գաւառի կենտրոնական մասը, իսկ գաւառի հիւսիսային և հարաւային ծայրերը լեռնոտ են: Հարաւային սահմանի վրա ցցւած է Սիփանը, որի փէշերը ալիքանման տարածւում են գաւառի ներսը: Մի այլ զագաթ ցցւած է հիւսիսային սահմանի վրա. դա ծովի մակերևոյթից 8,000 ոտնաչափ բարձրութիւն ունեցող Կարտեանն է, որի փէշերը նոյնպէս տարածւում են գաւառի ներսը: Ահա այս երկու լեռների մէջ փուլած է Մանագիկերտի տափարակը:

Մանագիկերտը, որպէս տնտեսական վայր, այնքան էլ աչքի ընկնող տեղ չի բռնում. ճիշտ է, գաւառի մի քանի մասերն արտադրում են ընտիր հացահատիկներ, մանաւանդ արեւմտեան մասը, որը հանգիստանում է Եփրատի հովիտը, բայց գաւառի հարաւարեւելեան մի ընդարձակ տափարակը ամայի է և դաշտային պարապմունքների համար անարդիւնք: Սրանով բացատրւում է այն երևոյթը, որ Մանագիկերտի գաւառում այնպիսի բազմածուխ գիւղեր չկան, ինչպէս, օրինակ, Բուլանըղի գաւառում:

Մանագիկերտի գաւառում հաշւում են 126 գիւղ. դրանցից 40-ը միայն հայաբնակ են, որոնցում չնչին բացառութեամբ հայերի հետ միասին ապրում են նաև քրդեր: Գաւառի խոշորագոյն մասը բռնւած է քրդերով, որոնց մէջ աչքի են ընկնում Սիպկանցի և Հասանանցի ցեղերը:

Վիճակագիր Բուլանըղի գաւառի հայ ժողովրդի:			
№	Գ Ի Ի Ղ Ե Ր Ը	Հայ տուն <sup>1)</sup>	Քուրդ տուն <sup>1)</sup>
1	Պրտոպ . . . . .	4	30
2	Նաչու . . . . .	10	40
3	Փիրան . . . . .	20	60
4	Նարարաշար . . . . .	30	50
5	Քէքաու . . . . .	100	35
6	Բլուր . . . . .	60	15
7	Միրիպար . . . . .	30	16
8	Ալիպօճան . . . . .	3	20
9	Լաթար . . . . .	80	240
10	Շէխեաղուր . . . . .	120	20
11	Մէջիթլու . . . . .	125	
12	Կօփ . . . . .	450	130
13	Եօնջալու . . . . .	250	
14	Համդաշէխ . . . . .	150	
15	Գարազէլ <sup>2)</sup> . . . . .	85	25
16	Թէղուտ <sup>2)</sup> . . . . .	70	35
17	Ունչոր <sup>2)</sup> . . . . .	90	20
18	Յակրակ . . . . .	45	30
19	Գնարօլան . . . . .	30	40
20	Կոպակ . . . . .	45	180
21	Շէխալի <sup>2)</sup> . . . . .	5	45
22	Կօպօ <sup>2)</sup> . . . . .	60	80
23	Թրբաշէն . . . . .	50	35
24	Յատկօն . . . . .	38	5
25	Լիզ . . . . .	200	
26	Ապրի . . . . .	30	80
27	Մօլաքեանդ . . . . .	25	40
28	Նօշկեալդի . . . . .	120	15
29	Շիրվանշէխ . . . . .	150	
		<b>2475</b>	

<sup>1)</sup> Այս տեղեկութիւնները աւել է մեզ Մուշի առաջնորդարանի բարձուգար պարոն Նագաբէթ Մարտիրոսեանը:

<sup>2)</sup> Այս գիւղերի բնակիչները չէրբէզներ են:

**ՄԱՆԱԶԿԵՐՏ**

Գաւառի կենտրոնաւաճը համարուած է Մանազկերա քաղաքը. սա գտնուած է համանուն գետի վրա, ոչ հեռու Եփրատի ձախ արփից: Հնում յայտնի բերդաքաղաք էր, շրջապատուած ամուր պարիսպներով, որոնց բեկորները մինչև այժմ էլ պահպանուել են: Քաղաքի արևելեան կողմում գտնուած է միջնաբերդը իր գեղեցիկ և ամուր պարիսպներով: Միջնաբերդից դուրս քաղաքի հարաւային մասում գտնուած են Աստուածածնի Երեք Պորան կիսաւեր եկեղեցին և Ս. Սարգիս կանգուն մնացած եկեղեցին, որի մէջ այժմ կատարուած է ժամասացութիւն: Միջնաբերդի և եկեղեցիների ճարտարապետական կառուցւածքները վկայում են Մանազկերտի փաստւոր անցեալի մասին, բայց նախկին շէնք բերդաքաղաքը այսօր ներկայանում է մի խղճուկ պատկեր իրրե հեզնանք նրա անցեալի:

Մանազկերտն այժմ ունի ընդամենը 280 տուն բնակիչ, որի 80-ը հայեր են, իսկ 200-ը քրդեր:

Մանազկերտի գաւառի ամենամեծ գիւղն է Տուկնուկը, որն ընկած է գաւառի հիւսիսային կողմում Եփրատի մի հովիտի վրա. սա ունի 340 տուն բնակիչ, որից 80-ը միայն հայեր են, իսկ մնացեալը քրդեր:

Մանազկերտից գէպի հարաւ գտնուած է Թոնդրակ գիւղը. սա պատմութեան մէջ «Թոնդրակեցոց աղանդով» յայտնի Թոնդրակ գիւղն է, որն այժմ ունի 145 տուն բնակիչ, զրանցից 35 տունը հայեր են, իսկ մնացեալը քրդեր:

**Վիճակագիր Մանազկերտի գաւառի հայ ժողովրդի**

№	Գ	Ի	Ի	Ղ	Ե	Ր	Ր	Հայ տուն 1)	Քուրդ տուն 1)
1	Բազրան	.	.	.	.	.	.	15	30
2	Եկմալ	.	.	.	.	.	.	15	
3	Խարալի	.	.	.	.	.	.	6	30
4	Եարամիշ	.	.	.	.	.	.	7	47
5	Սարաւուտ 2)	.	.	.	.	.	.	5	30
6	Թոնդրակ	.	.	.	.	.	.	35	110
7	Տէրիկ	.	.	.	.	.	.	60	
8	Ակնիք վեր.	.	.	.	.	.	.	30	10
9	» ներք.	.	.	.	.	.	.	5	15
10	Շէյխմանաւա	.	.	.	.	.	.	3	20
11	Մանազկերտ	.	.	.	.	.	.	80	200
12	Մոյարար	.	.	.	.	.	.	10	30
13	Մարմուտ	.	.	.	.	.	.	25	50
14	Ղարաղայա	.	.	.	.	.	.	50	5
15	Տօլազրաշ	.	.	.	.	.	.	40	10
16	Հասուններ	.	.	.	.	.	.	30	3
17	Փըրէմասեան	.	.	.	.	.	.	3	30
18	Հաջիրօթ	.	.	.	.	.	.	8	25
19	Կանիկօր	.	.	.	.	.	.	15	50
20	Տուկնուկ	.	.	.	.	.	.	80	260
21	Խարարախանի	.	.	.	.	.	.	47	60
22	Խանըք	.	.	.	.	.	.	5	35
23	Հասան-փաշա	.	.	.	.	.	.	7	42
24	Նորատին	.	.	.	.	.	.	90	30
25	Գերանլըղ	.	.	.	.	.	.	9	30
26	Իկնախօջէն	.	.	.	.	.	.	25	
27	Ըրդաղի-խամիկ	.	.	.	.	.	.	44	75

1) Այս տեղեկութիւնները տուել է մեզ Մուշի տաաջնորդարանի բարձրագար պ. Նազարէթ Մարտիրոսեանը:

2) Այս գիւղի բնակիչները չէրբէղներ են:

Վիճակագիր Մանագկերտի գաւառի հայ ժողովրդի									
№	Գ	Ի	Ի	Ղ	Ե	Ր	Ը	Հայ տ ու ն	Քուրդ տուն
28	Մըխչին	.	.	.	.	.	.	15	30
29	Խանօղլի	.	.	.	.	.	.	15	20
30	Ռստամ-գէղուկ 1)	.	.	.	.	.	.	136	15
31	Յոթանլու	.	.	.	.	.	.	65	10
32	Խօշաճին	.	.	.	.	.	.	5	15
33	Սուլթանլու	.	.	.	.	.	.	40	110
34	Հըսէն	.	.	.	.	.	.	8	33
35	Կուշտեան	.	.	.	.	.	.	15	120
36	Մալա-մստաֆա	.	.	.	.	.	.	30	80
37	Ինտրիչի-գեղ	.	.	.	.	.	.	10	40
38	Բօյի-չապղուն	.	.	.	.	.	.	6	33
39	Տօրօխան	.	.	.	.	.	.	30	50
40	Բանգտէն	.	.	.	.	.	.	25	
								1149	

### ՎԱՐԴՕՅԻ ԳԱԽԱՍԻ

Վարդօյի գաւառն ընկած է Մուշի սանջակի հիւսիս-արեւմտեան ծայրում Բինգեօլի հարաւային լանջերի վրա:

Հռչակաւոր Բինգեօլը չի հանդիսանում բնութեան աշխարհի ճարտարագետական կառուցւածք, ինչպիսին է գեղեցիկ Սիփանը իր համաչափ կատարով և ոչ էլ աշխարհի խոշոր բարձրութիւն, ինչպիսին է Արարատը. նա, ինչպէս գիտենք, ունի ընդամենը 10,700 ոտնաչափ բարձրութիւն, բայց այդ, նրա գագաթը շատ աձև է և նոյն իսկ ճապարհ, բայց Բինգեօլն ունի ընդարձակ լեռնադաշտեր, գեղեցիկ լեռնահովիտներ, որոնք անուցանում են հազարաւոր ոչխարի հօտեր և բլրաւոր ակիւքեր, որոնցից սկիզբն են առնում Արաքսը և Արեւիկեան Եփրատի գլխաւոր օժանդակ գետերը:

Մի գեղեցիկ և ընդարձակ լեռնահովիտ բացւում է Բինգեօլի հարաւային լանջերի վրա, որն իջնելով և միանալով Մուշի դաշտի հիւսիսային պատար կազմող լեռների լանջերին, գոգաւոր թեքւում է դէպի արեւելք, բացելով մի ընդհանուր հուն վազող բազմաթիւ ջրերի համար. այս լեռնահովիտում ընկած է Վարդօյի գաւառը:

Վարդօյի գաւառում կայ մօտաւորապէս 100 գիւղ, որոնցից միմիայն 6-ը հայաբնակ են, 5-ը չէրքէզարնակ, իսկ մնացեալը քրդաբնակ:

Քրդերի մեծ մասը պատկանում է Ջիրբանցի ցեղին. սրանց գլխաւոր պարագմունքն է խաշնարածութիւնը. գեղեցիկ Բինգեօլը գեղեցիկ արօտներ է պարգեւել նրանց հօտերին. այդ հօտերը պարարտացնելով, Ջիրբանցի քուրդը քշում տանում է մինչև Դիարբէքիր և նրա փոխարէն ոսկիներ բերում:

Բինգեօլի այդ լանջից, ուր ընկած է Վարդօյի գաւառը, գոյանում է մի գետ, որը գնում, չէրքէզարնակ Չարբախուր գիւղից բաւականին ցած, խառնւում է Արեւիկեան Եփրատին: Այդ գետը կրում է զանազան անուններ. նրա սկիզբը կոչւում է Գօղան-գետ, ստորին մասը Չարբախուրի գետ, բայց կոչւում է նաև Բինգեօլի գետ: Այդ գետի վերին հովիտներում ընկած են հայաբնակ գիւղերը:

Հայաբնակ գիւղերից մէկը Գիւմգիւմն է, որը միևնոյն ժամանակ հանդիսանում է գաւառի կենտրոնավայրը. նա ունի 200 տուն բնակիչ, որից 140-ը քրդեր են, իսկ 60-ը հայեր:

1) Այս գիւղի բնակիչները չէրքէզներ են:

Մնացեալ հայարնակ գիւղերն են Ամարանը, Յաները, Բագր-  
զանը, Իօղանը և Կուտեմերը: Հայերը այստեղ բացառապէս պա-  
րապում են երկրագործութեամբ:

Իր դաշտերով անանձնապէս աչքի է ընկնում Կուտեմերը,  
բանջարանոցային բոյսեր, ծխախոտ, պտղատու և անպտուղ ծա-  
ռեր, աճում են այստեղ անատորէն: Բինգեօլի հարաւային տաք  
լանջերը աշխատասէր և տոկուն հայ ժողովրդի ջանքերով կը դառ-  
նային արդիւնաւէտ և կուտուրական մի վայր, քան սուկ արօ-  
տատեղիներ, եթէ միայն այստեղ հայ ժողովրդի համար գոյու-  
թիւն ունենար կեանքի և գոյքի ապահովութիւն:

Այո, եթէ միայն, բայց այդ կը լինէր մի երազ: Երբ կեան-  
քի և գոյքի ապահովութիւն հայի համար գոյութիւն չունի նոյն  
խիղ բազմահայ Մուշի դաշտում, արդեօք այդպիսին գոյութիւն  
կունենար մի Վարդօյի գաւառում, ուր մի բուն հայեր շրջապատ-  
ւած են քրդերով և չէրքէզներով:

Վիճակագիր Վարդօյի գաւառի հայ ժողովրդի									
№	Գ	Ի	Ի	Ղ	Շ	Ր	Ը	Հայ տուն 1)	Քուրդ տուն 1)
1	Ամարան	.	.	.	.	.	.	10	30
2	Կիւմկիւմ	.	.	.	.	.	.	60	140
3	Յաներ	.	.	.	.	.	.	18	20
4	Բագրկան	.	.	.	.	.	.	80	
5	Կուտեմիւր	.	.	.	.	.	.	60	
6	Իօտան	.	.	.	.	.	.	40	
								268	

Մարդկային զանազան խմբերով և անբազմապէս զարգացած  
գոյութեամբ հայերը այստեղ բացառապէս պարապում են երկրագործ-  
ութեամբ: Երբ կեանքի և գոյքի ապահովութիւն հայի համար գոյութիւն  
չունի նոյն խիղ բազմահայ Մուշի դաշտում, արդեօք այդպիսին գոյութիւն  
կունենար մի Վարդօյի գաւառում, ուր մի բուն հայեր շրջապատ-  
ւած են քրդերով և չէրքէզներով:

1) Այս տեղեկութիւնները բաշխել ենք Մուշի ստաշնարդարներից:

### ՍՂԵՐԴԻ ՍԱՆՉԱԿ

Սղերդի սանջակն, ինչպէս տեսանք, բունում է վիլայէթի հա-  
րաւային մասը, նրա սահմաններն են հիւսիսից Բիթլիսի սան-  
ջակը, արեւելքից Վանի վիլայէթը, իսկ հարաւից և արեւմուտքից  
Իրարէքիւրի վիլայէթը: Սանջակի հարաւային և հարաւ-արեւելեան  
սահմանները սկսեցնում են Սրառատ Տիգրիսը, ոտոզելով նրա  
դաշտավայրերը: Բացի այդ, Սղերդից դէպի հարաւ գալիս խառ-  
նում են իրար Արեւելեան Տիգրիսն ու Բիթլիսի գետը և միացած  
գնում թափւում են Արեւմտեան Տիգրիսի մէջ, իրենց ընթացքում  
ոտոզելով սանջակի միջին դաշտավայրերը, այսպիսով Սղերդի  
սանջակը հանդիսանում է Սրառատ և բարեբեր մի շրջան:

Սղերդի սանջակը բաղկացած է եօթ գաւառներից, զրանք  
են՝ Սղերդի, Սարգանի, Շիրվանի, Բարվարի, Էրունի, Բէնդ-վանի  
և Հազօյի գաւառները:

Սղերդի գաւառն ընկած է սանջակի կենտրոնում, այդտեղ  
գտնում է վարչական կենտրոնավայր Սղերդ քաղաքը, ուր նս-  
տում է մութասարիֆ: Քաղաքը նշանաւոր է իր պտղաբերութեամբ,  
նա արտադրում է խաղող, գինի և բազմաթիւ ծառապտուղներ:  
Ունի իր շուկան մի քանի հարիւր խանութներով և կրպակներով,  
իբրև արտահանութեան ապրանք յայտնի է կարմիր շիւան, որը  
կազմում է բազմաթիւ ընտանիքների ապրուստի միջոց:

Սղերդ քաղաքը, ըստ Քինէի, ունի 15,000 բնակիչ, հայերի  
թիւը հասնում է 3,300-ի:

Սարգանի գաւառը գտնում է Սղերդի գաւառից դէպի հիւ-  
սիս-արեւմուտք, նրա կենտրոնավայրն է Զօխ աւանը: Գաւառը  
ոտոզւում է Սարգան գետով, երկիրը տեղ-տեղ լեռնոտ է ու ան-  
տառապատ, բերքերից նշանաւոր է խաղողը և գինին:

Շիրվանի գաւառը գտնում է Սղերդ գաւառից դէպի հիւ-  
սիս-արեւելք, նրա կենտրոնավայրն է Քուֆրա աւանը, գաւառը  
ոտոզւում է Արեւելեան Տիգրիսի ջրով, երկիրը լեռնոտ է ու ան-  
տառոտ, բերքերից նշանաւոր են խաղողը, նուշը, կեռասը և բալը:

Բարվարի գաւառը գտնում է սանջակի արեւելեան ծայրում,  
երկիրը հարուստ է խոտաւէտ լեռներով և արօտներով, այդտեղ  
չուն, գալիս են Մօսուլից խաշնարած ցիգեր իրենց հօտերով: Գա-

աւոր նշանաւոր է այգեգործութեամբ, խաղողի բերքով, ծառապտուղներով և մեղաբուծութեամբ:

Էրունի գաւառը գտնուում է Սղերդի գաւառից դէպի հարաւարեկը, գաւառի կենտրոնավայր է ԴէՏ աւանը:

Բէնդվանի գաւառը գտնուում է Սղերդի գաւառից դէպի հարաւարեւմուտք:

Իսկ Հաղօյի գաւառն ընկած է սանջակի հիւսիսարեւմտեան ծայրում:

Ըստ Քինէի, Սղերդի սանջակում ապրում են 30,000 հայեր, իսկ մեր հաշուով այդ շրջանի հայերի թիւը 20,000-ից չի անցնում: Ի նկատի ունենալով, որ Քինէն իր վիճակագրութիւնը կազմել է 1890-ական թւականներին, հետեւապէս, 20-25 տարւայ ընթացքում այդ շրջանի հայ ժողովուրդը նւազել է մի երրորդական մասով, մի շատ սովորական երևոյթ տաճկական իրականութեան մէջ:

Վիճակագիր Շիրվանի գաւառակի հայ ժողովրդի 1)		
№	Գ Ի Ի Ղ Ե Ր Ը	Տուն
1	Կարվէ . . . . .	7
2	Պանդակ . . . . .	20
3	Քէօսախ . . . . .	5
4	Սմթօր . . . . .	60
5	Գօրիհան . . . . .	50
6	Քէլին . . . . .	10
7	Դէրեկ . . . . .	15
8	Բըբկ . . . . .	13
9	Մաղան . . . . .	30
10	Դէրավէլ . . . . .	30
11	ՔօՖրա . . . . .	20
12	Գօնդէ-գիգան . . . . .	10
13	Նրբայն . . . . .	50
14	Սէջէր . . . . .	20
		340

1) Այս տեղեկութիւնները բաղած են Ազխամարի տեղեկագրից:

Վիճակագիր Բարվարի գաւառակի հայ ժողովրդի 1)			
№	Գ Ի Ի Ղ Ե Ր Ը		Տուն
1	Ոզիմ . . . . .		150
2	Հակուկ . . . . .		20
3	Հաւեխանց . . . . .		30
4	Մալբկ . . . . .		25
5	Բօրմ . . . . .		80
6	Բանիջան . . . . .		15
7	Սանու . . . . .		5
8	Սօսխէր . . . . .		30
9	Գաշտով . . . . .		7
10	Հէշատ . . . . .		15
11	Կեփ . . . . .		12
12	Առխէ . . . . .		15
13	Ասուան վեր . . . . .		15
14	Ասուան ներք . . . . .		10
15	Ռարանօկ . . . . .		20
16	Ատէլ . . . . .		50
17	ԴըՏ . . . . .		200
18	Դէմթաղ . . . . .		20
19	Պէրօղ . . . . .		20
			739

1) Այս տեղեկութիւնները բաղած են Ազխամարի տեղեկագրից:

Վիճակագիր Հագոյի գիւղերի հայ ժողովրդի 1)					
№	Գ	Ի	Ի	Ղ Ե Ր Ը	Տո՛ւն
1	Կող	.	.	.	20
2	Մըտղի	.	.	.	8
3	Հով	.	.	.	15
4	Նարօփան	.	.	.	10
5	Հազո	.	.	.	150
6	Այմարօ	.	.	.	4
7	Մանկիկ	.	.	.	10
					217

Վիճակագիր Գէնջի գաւառի հայ ժողովրդի 2)						
№	Գ	Ի	Ի	Ղ Ե Ր Ը	Հայ տ ու ն	Քուրդ տուն
1	Արշէն	.	.	.	20	200
2	Փարխու	.	.	.	10	7
3	Կրծու	.	.	.	10	4
4	Պողէ	.	.	.	6	5
5	Սարարէ	.	.	.	15	10
6	Բօզլան	.	.	.	8	60
7	Անգակ	.	.	.	6	6
8	Նորեկ	.	.	.	6	8
9	Ջարկնուա	.	.	.	8	20
10	Ղամարա	.	.	.	7	30
					96	

1) Այս տեղեկութիւնները քաղել ենք Մուշի առաջնորդարանից:  
 2) Այս տեղեկութիւնները քաղել ենք Մուշի առաջնորդարանից:

Վիճակագիր Բիթլիսի վիլայէթի հայ ժողովրդի				
№	ԳԱՂԱՔ ԵՒ ԳԱՒԱՌ	Գիւղ	Տ ու ն	Շ ու ն չ
1	Բիթլիս քաղաք	.	1600	10000
2	Բիթլիսի գաւառ	.	46	1670
3	Սլաթի »	.	24	966
4	Սիվանի »	.	23	489
5	Մամբասնքի »	.	16	208
6	Սպարկերտի »	.	29	533
7	Մօսկանի »	.	19	316
8	Մուշ քաղաք	.	1200	7000
9	Մուշի դաշտ	.	102	5580
10	Սառուն Շասախի գիւղեր	.	6	170
11	» Առաջաւոր »	.	6	340
12	» Գեղիէղուզանի »	.	16	134
13	» Տալօբիկի »	.	14	206
14	» Սիւնքի »	.	18	516
15	» Ծովասարի »	.	4	190
16	» Սուլփի »	.	16	563
17	» Սուլթ-բանաշէնի »	.	21	327
18	Փաննաց գաւառ	.	11	300
19	Կօփ-բուլանըղ	.	450	3150
20	Բուլանըղի գաւառ	.	28	2025
21	Մանաղկերտի »	.	40	1149
22	Վարդոյի »	.	6	268
23	Սգերդը Իր շրջաններով	.	1500	10000
24	Շիրվանի գաւառ	.	14	340
25	Բարվարի »	.	19	739
26	Հագոյի »	.	7	217
27	Գէնջի »	.	10	96
		3 քաղաք	495	22092
				154164

### ԷՐԶՐՈՒՄԻ ՎԻՂԱՅԷԹ

Մեզ հետաքրքրող երեք վիլայէթներէից ընդարձակագոյնը և բազմամարդը Էրզրումի վիլայէթն է, թէև այդտեղ ապրող հայե-րի թիւը ընդհանուր ազգաբնակչութեան համեմատութեամբ փոքր է:

Վիլայէթի սահմաններն են արևելքից և հիւսիս-արևելքից Ռուսաստանը, հիւսիսից Տրապիզոնի վիլայէթը, արևմուտքից Սըվազի վիլայէթը, իսկ հարաւից Սարբերդի, Բիթլիսի և Վանի վիլայէթները:

Երկրի կազմութիւնով Էրզրումի վիլայէթն աւելի քան հե-տաքրքիր պատկեր է ներկայացնում. բազմաթիւ լեռնագոտի-ները մի կողմից, մի քանի մեծ գետերը միւս, նրա մակերևոյ-թին առկա են բազմազան մի տեսք:

Նախ խիստ լեռնոտ են նրա սահմանները. օրինակ, արևե-լեան կողմում բարձրանում են Արարատեան լեռները, հիւսիսային կողմում Պոնտոսի և Պարսիարեան լեռները, իսկ հարաւային կող-մում Բինգիօլը, Սամուրը և Ալազաղը: Ապա լեռնոտ է նաև վի-լայէթի կենտրոնական մասերը, ուր Փալան-Թօքէնի, Դաւարօյինի, Դումլուի և Քօփի լեռներն իրենց բարձր կատարներով հանդիսա-նում են միաժամանակ գետային սիստեմների գլխաւոր անջրպետ-ներ: Երկրի ալպիսի կազմութեան շնորհիւ այս շրջանը հստակ կոչւում էր Բարձր-Հայք:

Էրզրումի վիլայէթը շատ հարուստ է գետերով. չորս խոշոր գետեր սկիզբն են առնում նրա սահմաններում և աջ ու ձախ ա-կօսում են նրա ընդարձակ մակերևոյթը. դրանք են՝ Արևելեան Եփրատը, Արաքսը, Արևմտեան Եփրատը և Ճօրօխը:

Վիլայէթի հարաւ-արևելեան մասում՝ Ալազաղի, Սինակի, Աղբուլաղի և Քօսաղաղի լանջերից սկիզբն է առնում Արևելեան Եփրատը, որը Կարաքիլիսէյի, Ալաշկերտի և Դութաղի գաշտերը ոտոզելով, մտնում է Բիթլիսի վիլայէթը: Բինգիօլի հիւսիսային փէշերից սկիզբն է առնում Արաքսը, որը Բասնը ոտոզելով, դի-մում է սուսական սահմանը: Վիլայէթի կենտրոնական Դումլու

լեռներից սկիզբն է առնում Արևմտեան Եփրատը, որը ոտոզելով Դերջանի, Երզնկայի և Քեմախի գաշտերը, մտնում է Սըվազի վի-լայէթը և վերջապէս վիլայէթի հիւսիս-արևմտեան մասում գան-ւող Քօփ լեռներից սկիզբն է առնում Ճօրօխը, որը ոտոզելով վի-լայէթի հիւսիսային երկարութեամբ ընկած հովիտները, հոսում է դէպի սուսաց սահմանը:

Բայց վիլայէթում կան նաև տափարակ գաշտեր, որոնցով առանձնապէս աչքի են ընկնում արևելեան և արևմտեան մասերը: Ծնորհիւ այս օրինակ այլազան բնութեան, այլազան է այս-տեղ նաև կլիման և արդիւնաբերութիւնը:

Կլիման վիլայէթի մի քանի մասերում, մանաւանդ Էրզրու-մի շրջակայքում, շատ խիստ է. ցրտաշունչ ձմեռը լինում է տեղ-ղական. յաճախ 5-6 ամսով երկիրը ծածկւած է լինում ձիւնով, բայց մի քանի մասերում էլ կլիման բարեխառն է, նոյն իսկ շոգ, ուր աճում են տաք կլիմայի բերքեր:

Բերքերը զանազան են. ընտիր հացահատիկներ, բանջարա-նոցային բերքեր, բազմատեսակ ծառայտուղներ, խաղող, ծխա-խոտ, բրինձ և այլն բերքեր կազմում են վիլայէթի հարստութիւնը: Միմիայն հացահատիկների բերքը համում է տարեկան 13-15 միլիօն փթի:

Երկրի լեռնային կազմութեան և ընդարձակ արօտատեղի-ների շնորհիւ զարգացած է անասնապահութիւնը և առանձնապէս խաշնարածութիւնը. ամբողջ վիլայէթում հաշւում են կէս միլիօ-նից աւելի խոշոր կենդանիներ և երկու ու կէս միլիօնից աւելի ոչխար և այծ, թէև երկրի աւելի խաղաղ և աւելի բարեկարգ վի-ճակում Էրզրումի պէս ընդարձակ, բնութիւնից առատօրէն օժտ-ւած վիլայէթը կը արտադրէր մի քանի անգամ աւելի բերք և կեն-դանիներ, քան այժմ է արտադրում:

Վիլայէթի մի քանի մասերը հարուստ են նաև անտառնե-րով, որոնք արտադրում են շինութիւնների համար փայտեղէն նիւթեր:

Էրզրումի վիլայէթն ունի և մի այլ առաւելութիւն. դա նրա աշխարհազրական դիրքն է. նա ընկած է ասիական վիլայէթներէի և Տրապիզոնից Պարսկաստան տանող մեծ ճանապարհի վրա, որով ստանում է քաղաքական խոշոր նշանակութիւն:

Էրզրումի վիլայէթը, ինչպէս տեսանք, բաղկացած է երեք

սանձակներէց. զրանք են՝ Էրզրումի, Բայազէտի և Երզնկայի սանձակները:

Էրզրումի սանձակը բռնուեմ է վիլայէթի ամբողջ միջին մասը, հիւսիսային սահմաններէց սկսած մինչև հարաւայինը:

Բայազէտի սանձակը բռնուեմ է Քօսա-գաղից և Դէլի-բարաչից սկսած Ռուսաստանին սահմանակից ամբողջ հարաւ-արեւելեան մասը:

Իսկ Երզնկայի սանձակը բռնուեմ է Բէկուրդազ և Ֆէշիշղազ լեռներէց սկսած վիլայէթի ամբողջ արեւմտեան մասը:

### ԷՐԶՐՈՒՄԻ ՍԱՆՁԱԿ

Էրզրումի սանձակը բաղկացած է 9 գաւառներից, զրանք են՝ 1) Էրզրումի, 2) Բասենի, 3) Խնուսի, 4) Դերջանի, 5) Քղիի, 6) Բայբուրդի, 7) Սպերի, 8) Կիսկիմի և 9) Թորթումի գաւառները:

Կենտրոնական գաւառ համարուեմ է Էրզրումի գաւառը, իսկ այդ գաւառի մէջ գտնուեմ է վիլայէթի կենտրոնավայրը՝ Էրզրում քաղաքը:

### Է Ր Զ Ր Ո Ւ Մ

Էրզրումը կամ Կարինը իր աշխարհագրական դիրքով և արտաքին տեսքով մեզ հետաքրքրող երեք վիլայէթների լաւագոյն և մեծ քաղաքն է:

Նա գտնուեմ է համանուն գաշաի հարաւային ծայրին, Փալան-Թօքէնի հեռաւոր փէշերի մի գեղեցիկ դիրքի վրա: Բնութիւնը այդտեղ ճաշիչ է. քաղաքից դէպի հարաւ ցցւած են Հաւատամք և Էյրալի գագաթներն իրենց բլուրներով. դէպի արեւելք ընկած է Դաւարօյլիներ, իսկ դէպի հիւսիս և արեւմուտք քաղաքի պարբեր առկ փաւած է սիրուն գաշաը, որին եղբարացոյ Դոմլուի լեռները նրան տալիս են մի առանձին տեսք, քեւեկով իրենց վրա մարդու հայեացքը:

Քաղաքը հեռէից աչքի է ընկնում իր մինարէններով. պատկերը կատարեալ է մանաւանդ Փալան-Թօքէնի բարձունքից իջ-

նող այցելուի համար: Քաղաքի մօտ պատկերը փոխուեմ է. պատնէշներն ու խրամասները ցցուեմ են ձեր առաջ. աւելի ու աւելի տեսանելի են դառնում քաղաքի շրջակայ բլուրների վրա շինւած ամրութիւնները և մարտկոցները, որոնց մօտենալիս զգում էք, որ գործ ունիք ամրութիւններով պաշտպանւած ուղղմական կարեւորութիւն ունեցող մի քաղաքի հետ:

Մարտկոցներ գտնուեմ են նաև Փալան-Թօքէնի և Դաւարօյլիի դիրքերի վրա, հանդիսանալով իրրե քաղաքի հեռաւոր ամրութիւններ:

Քաղաքի տեսքն ընդհանրապէս գեղեցիկ է. մի քանի փողոցներ թողնում են նոյն իսկ եւրոպական քաղաքի տպւորութիւն. այդպիսի տպւորութիւն թողնում է մանաւանդ Բայազէտը, Վանը, Մուշը և Խնուսը տեսնելուց յետոյ, թէև առիական սիւրբերկները այստեղ էլ անպակաս են: Մի սիւրբերկ ձեզ համար պատրաստւած է քաղաքի դռների մօտ, ուր մի ինչ որ պաշտօնեայ ձեզանից առնում է «Թօքիազ-բասմախ» (հօլը կոխելու վարձ) 20 փարա և ծխախոտի խաղարկութեան պատրուակով 10-20 փարա և ձեզ բաց թողնում, թէկուզ դուք թագցրած չունենաք ծխախոտ: Էրզրումն իր արտաքին տեսքով պարտական է իր շրջակայքում գտնուող քարահանքերին և հայ որմնագիրներին, որոնք իրենց արհեստը այստեղ մեծ կատարելագործութեան են հասցրել:

Բայց, չը նայած բազմիցս կրկնուող երկրաշարժներին և մատնաւորապէս 1859 թւին տեղի ունեցած աւերիչ երկրաշարժին, որի ժամանակ աւերեցին աւելի քան 4,000 տներ, 9 մինարէներ և փլտատակների տակ մնացին հազարաւոր մարդիկ, Էրզրումը աւելի աչքի է ընկնում իր մի քանի հին շէնքերով:

Այդ շէնքերից է միջնաբերդը, որը գտնուեմ է քաղաքի կենտրոնում մի բարձր դիրքի վրա, իր ամուր պարիսպներով, տախտակամած բարձր աշտարակով: Այստեղ գտնուեմ են գեղեցիկ ապարանքներ. այստեղ շինւած է Ս. Սարգիս անուանով մի եկեղեցի, որի գմբէթը երևում է պարիսպների ետեւից: Միջնաբերդի պարիսպներից գուրս գտնուեմ է նահատակների մատուռը, ուր ուխտ են գալիս հայ կանայք: Այդ մատուռը մի հասարակ տուն է, որտեղ ապրում է մի տաճիկ աղքատ ընտանիք և որը շահագործում է մատուռի եկամուտը:



Միջնաբերդից դէպի հարաւ գտնոււմ է Էրզրումի բազմաթիւ մզկիթներէց հնագոյնը. դա Ուլու-Չամի կոչուող մզկիթն է, որն աչքի է ընկնում իր մեծութեամբ և արտաքին գեղեցկութեամբ:

Սակայն, իբրև հնագոյն պարզ, շարունակուած են մնալ Ուլու-Չամի մզկիթին կից Ձիֆաէ-Մինարէ կոչուող զոյգ աշտարակները, որոնք իրենց բարձրութեամբ, նուրբ քանդակներով և ամուր պատուանդաններով, պատուանդաններ, որոնք կամարակապ հանդիսանում են գլխաւոր մուտք դէպի շինութեան ներսը, մարդուն հմայք են պատճառում: Ըստ երևոյթին Ձիֆթէ-Մինարէյի սենեակները, որոնց թիւը հասնում է 40-ի, ծառայելիս են եղել իբրև դպրոցի շէնք և իբրև իմաստուն մարդկանց ժողովատեղի:

Ոչ միայն իր հին շէնքերով, այլ և այժմեան գիրքով ու ճութութեամբ Էրզրումն իր վրա է գրաւում ճանապարհորդի ուշադրութիւնը և այդ ունի իր պատճառները:

Էրզրումը համարուած է ոչ միայն իբրև ռազմական վայր և զօրատեղի, ոչ միայն իբրև գլխաւոր կենտրոն հարեան վիլայէթների յարաբերութիւններին, այլ և նա, գտնւելով Տրապիզոնից Թաւրիզ տանող մեծ ճանապարհի վրա, հանդիսանում է գլխաւոր կայան եւրոպական ապրանքների և Պարսկաստանի հում բերքերի փոխադրութեան:

Հազարաւոր քարավաններ շարունակ մտնում ու դուրս են գալիս այդ քաղաքը եւրոպական ապրանքներով և Պարսկաստանի բերքերով բեռնաւարած և հազարաւոր քարավաններ այդտեղ հանգիստ առնելուց յետոյ, վերցնում են իրենց համար պաշար և նորից ճանապարհ ընկնում: Նոյն գլխաւոր կենտրոն հանդիսանալու է Էրզրումը նաև ապագայում, երբ Տրապիզոնից երկաթուղին կրտարւի դէպի հարաւային երկրները: Եւ միջազգային յարաբերութիւնների այս կարևոր դերը ունեցել է իր խոշոր ազդեցութիւնը Էրզրումի վրա:

Շնորհիւ այս բոլորի, Էրզրումում կարելի է պատահել լայն փողոցների, օրինաւոր շէնքերի, նոր ձևի խանութների, մաքուր իջևանների և ճաշարանների և նոյն իսկ մի քանի փողոցներում գազային լուսաւորութեան:

Էրզրումը, շրջապատւած լինելով պարսիպներով և ամրութիւններով, ունի չորս գլխաւոր դուռ. արևմտեան կողմում գտնւում է Երզնկայի դուռը, արևելեան կողմում Թաւրիզի դուռը,

հիւսիսային կողմում Օլթիի և հարաւ-արևմտեան կողմում Խարբերդի դուռը:

Էրզրումը յայտնի է իր ջրառատութեամբ. գուցէ չգտնէք մի այլ քաղաք, որն Էրզրումի չափ աղբիւրներ ունենար: Աղբիւրներ կան ոչ միայն քաղաքի հրապարակներում և փողոցներում, այլև մասնաւոր տների բակերում. այսպիսով Էրզրումում հաշոււմ են մօտ 500 աղբիւրներ, որոնց սառնորակ և անուշահամ ջրերը յատուկ խողովակներով բերւած են մեծ մասամբ Փալան-Թօքէնի ստորին լանջերից:

Էրզրումում հաշոււմ են աւելի քան 60,000 բնակիչ, որից 15,000-ը հայեր են. հայերն ապրում են քաղաքի հիւսիսային և հիւսիս-արևմտեան մասում: Քաղաքի այս մասը համեմատաբար աւելի կանոնաւոր է և մաքուր. այս մասում ապրում են ուսուցչականը և Ֆրանսիացոց հիւպատոսները:

Հայերը պարապում են գլխաւորապէս վաճառականութեամբ և արհեստներով. արհեստներն այստեղ շատ առաջ են գնացել: Էրզրումում հաշոււմ են աւելի քան 3,000 խանութներ և կրպակներ, որոնց կէսը համարեա պատկանում է հայերին. հայերից մօտ 500-ը պարապում են ճոթավաճառութեամբ և մանրավաճառութեամբ. սրանց մէջ կան Պօլսի և այլ քաղաքների հետ առևտրական կապեր ունեցող խոշոր վաճառականներ, իսկ աւելի քան 1,000 հոգի պարապում են արհեստներով, արհեստներ, որոնցից առանձնապէս առաջ են գնացել գերձակութիւնը, կօշկակարութիւնը, ոսկերչութիւնը, դարբնութիւնը, պղնձագործութիւնը, հիւանութիւնը, պաշտառութիւնը, թիթեղագործութիւնը, ժամագործութիւնը, շիլինգարութիւնը, գինագործութիւնը և այլն: Ոսկերիչներն ունին իրենց յատուկ շարքը, որտեղով անցնելիս մարդու ուշադրութիւնն են գրաւում գեղեցիկ ձևազարդ դարդարանքները: Իսկ բոլորից աւելի առաջ է գնացել որմնադրութիւնը, որով հաց են գտնում բազմաթիւ հայ ընտանիքներ, ոչ միայն քաղաքում, այլ և Էրզրումի դաշտի շատ գիւղերում:

Էրզրումցի հայը վարում է շատ վայելուչ կեանք. այդ բանում նա պարտական է ամբողջովին իր կնոջը: Էրզրումցի հայ կինը իր գեղեցկութեամբ և կիրթ շարժումներով հանգերձ, ժրջան է, եռանդոտ, վերին աստիճանի անտես է և մաքրասէր: Բաւական է ոտ գնել Էրզրումցի հայի սունը, որ մարդ անմիջապէս

դադարաւոր կազմի էրզրումցի հայ կնոջ տնտեսութեան և մաքրութեան վրայ: Այստեղ հայ կինը արեւ է և մի այլ առաջադէմ քայլ. նա սկսեւ է իր ընտանեկան փակ կեանքից դուրս էլ կեանք ձանաչել. նա յաճախում է թատրոն, զանազան ժողովների և դասախօսութիւնների, թէև ոչ սոցամարդկանց հետ միասին. փողոց դուրս գալիս տեղական սովորութեան համաձայն թէև ձգում է սե «չարտար», բայց երեսը չի ծածկում:

Էրզրումում կան բաւականաչափ կրթական հաստատութիւններ, որոնց մէջ առաջին տեղ բռնում է Սանասարեան վարժարանը իր 180 աշակերտներով. սա թէև գտնւում է հնացած մարդկանց ձեռքում, բայց և այնպէս, իր միջնակարգ դասընթացով և իր երկարամեայ գոյութեամբ մեծ զարկ է տւել վիլայէթի կրթական գործին, գաւառներն ուղարկելով բազմաթիւ ընթերցաւարտներ, որոնք գիւղերում ստանձնում են ուսուցչութեան պաշտօն:

Սանասարեան վարժարանից բացի, էրզրումում կան մի մի արական և իգական եօթնամեայ դպրոցներ, երկու երկուսն հինգամեայ դպրոցներ և հինգ երկուսն եռամեայ դպրոցներ, որոնց ցուցակը առաջ ենք բերում առանձին տախտակով գաւառական դպրոցների հետ միասին:

Էրզրումը հարուստ չէ եկեղեցիներով, բայց նա ունի մի եկեղեցի, որը պատիւ է բերում արճեասնեբով առաջ գնացած Էրզրումի հայ ժողովրդին. դա ս. Աստուածածին եկեղեցին է, 1840 թւին շինւած, որն ունի լաւ եկամուտ բերող շէնքեր և խանութներ, որոնց եկամուտներով պահւում են դպրոցները: Ս. Աստուածածնի եկեղեցին մի ընդարձակ և գեղեցիկ շէնք է 20 սիւների վրա հաստատւած և բազմաթիւ մեծ լուսամուտներով լուսաւորւած. առանձին ճաշակով շինւած է կանանց դասի փերնատունը: Եկեղեցին այնքան գրաւիչ է և բնդարձակ, որ այնտեղ մտնողը կարծում է, թէ գտնւում է նորագոյն պահանջներով կառուցւած եւրոպական մի հիմնարկութեան մէջ:

Եկեղեցու մօտ գտնւում են առաջնորդարանը, մի քանի լուսնիք և խանութների մի մեծ շարք, ուր լինում են յատկապէս հայ վաճառականներ:

Եկեղեցուց քիչ հեռու գտնւում է հայոց գերեզմանատունը պարսպապատ և մաքուր. գերեզմանատուն այցելողի ուշադրութիւնը գրաւում են հրեք բան:

Առաջին, այդտեղ գտնւում է մի կոթող ուսերէն մակազրութեամբ. նրա տակ թաղւած են 1877 թւի ուսուտաճկական պատերազմում ընկած ուսու զինուորները. այդ եղբայրական գերեզմանի վրա բարձրացրած կոթողը նշան է ուսաների եօթ ամուսայ տիրապետութեան էրզրումում:

Երկրորդ, այստեղ գտնւում է մի հատիկ գերեզման. դա կախազան հանւած Արամ Արամեանի գերեզմանն է, որին իւրաքանչիւր էրզրումցի հայ մօտենում է մեծ պատկառանքով:

Եւ երրորդ, այդտեղ գտնւում է մի այլ եղբայրական գերեզման, ուր թաղւած են 1895 թւի հոկտեմբերի 24-ի կոտորածների հարիւրաւոր զոհերը: Այդ կոտորածը, որին զոհ գնացին 570 հոգի, տեղի ունեցաւ սոկերիչների շարքում, բերդի միջի շուկայում, գիւրջու դասն շուրջը, Աթմէյգանում և Մահլի գլուխ կոչւած տեղում:

Այդ սոսկալի կոտորածը եղբայրական գերեզմանից բացի, ունի մի այլ յուշարձան. քաղաքի արեւմտեան մասում կայ մի հասարակական պարտէզ. այդ պարտէզն առաջ կոչւում էր Միլլէթ բախշասի, այսինքն ազգային պարտէզ, իսկ սահմանադրութիւնից յետոյ կոչւում է Հուրիաթ-բախշասի, այսինքն սահմանադրութեան պարտէզ: Այդ պարտէզը մի քանիսի պատմելով, 1896 թւին տնկել տւեց Շաքիր փաշան, ստելով:

Այս ծառերը պիտի անւեն հայ նահատակների արիւնով և բուսած ծառերը թող դառնան վկայ այդ ոճիրների զղջման:

Որքան ճիշտ է այդ, չը գիտենք, յամենայն դէպս, այդ պարտիզի գոյութիւնը կապւած է հայկական ջարդերի հետ:

Բայց այստեղ չէ միայն, որ հայկական ջարդերը կազմում են յայտնի թւական, այլ ամեն տեղ, այդ արիւնոտ երկրում բոլոր դէպքերը յիշւում են հայկական ջարդերի թւականով իբրև մի սև դարագլուխ:

Վիճակագիր կարնոյ և կարնոյ գաւառների կրթական հաստատութիւնների, կազմւած կարնոյ առաջնորդարանում 1)

Շրջան	Դ Պ Ր Ո Յ Ն Ե Ր						ԱՇԱԿԵՐՏՆԵՐ						Վարչական կազմ				Տ Ա Ր Ե Կ Ա Ն Բ Ի Ի Ջ Է Ն							
	Ա ն ու ն ը		Տ ե ս ա կ ը		Արական	Բզական	Խաղը	Արական	Բզական	Բնորդը	Ուսուցիչ		Վարչական	Ստորին	Բնորդը	Ե Կ Ա Մ Ո Ի Տ				Ծ Ա Խ Ք				
	Արական	Բզական	Խաղը	Արական	Բզական	Բնորդը	Արական	Բզական	Բնորդը	Արական	Բզական	Արական	Բզական	Արական	Բզական	Քուսակ	Նպաստ. ժող.	Զանազ. աղբիւր.	Փումարը	Վարչական	Ուսուցչական	Զանազան	Փումարը	
	Արական	Բզական	Խաղը	Արական	Բզական	Բնորդը	Արական	Բզական	Բնորդը	Արական	Բզական	Արական	Բզական	Արական	Բզական	Կուսուչ	Կուսուչ	Կուսուչ	Կուսուչ	Կուսուչ	Կուսուչ	Կուսուչ	Կուսուչ	Կուսուչ
Կարին	Արծնեան	Նոամեայ		1	195	139	334	8	1			1	9	7400		1150	8550	850	6500	1200	8550			
»	Գավաֆեան	»		1	128	143	271	4	1			1	5	2400		3550	5950	850	3900	1200	5950			
»	Մարեան	»		1	93	82	175	4	1			1	6	2750		4050	6800	1100	4200	1500	6800			
»	Տ. Ազարեան	»		1	99	96	195	5	1			1	6	2050		4400	6450	850	4400	1200	6450			
»	Աղապալեան	»		1	108	122	230	5	1			1	6	4900		3250	8150	850	3300	4000	8150			
»	Մարեան	Հնգամեայ		1	42	62	104	3	1			2	4	1900		7250	9150	850	6700	1600	9150			
»	Տ. Ազարեան	»		1	32	40	72	2	1			2	2	1400		6450	7850	650	6000	1200	7850			
»	Արծնեան	Եօթնամեայ	1		314		314	10	2			3	15	7800	1500	51550	60850	1350	53000	2000	60800			
»	Հոփսիմեան	»	1			291	291	1	8			1	1	410		14450	23650	1550	20100	2000	23650			
»	Սանաարեան	Իննամեայ	1		182		182	16	15			24	36	100000		260000	360000	43000	107000	21000	360000			
Դաշար	Զանազան	Նախակրթարան	22		826		826					15	39		15400	8800	24200		19800	4400	24200			
»	»	»	18		769	237	1006					10	28	3	12600	7200	19800		16200	3600	19800			
Խնուս	»	»	18		930		930					18	40		10800	7200	18000		14400	3600	18000			
Դեղջան	»	»	11		590		590					11	22		5500	5500	11000		8800	2200	11000			
»	»	»	8		320	130	450					8	16		4000	4000	8000		6400	1600	8000			
Սպեր	»	»	16		350	210	560					16	32		9600	6400	16000		12800	3200	16000			
Կիսկիմ	»	»	2		40	18	58					2	4		1200	800	2000		1600	400	2000			
Բասէն	»	»	17		880		880					17	34		7200	9800	17000		13600	3400	17000			
»	»	»	2		55	24	79					2	4		1300	900	2200		1800	400	2200			

1) Կարինի դպրոցները պահուած են եկեղեցական եկամուտներով, իսկ գաւառական դպրոցները՝ մասամբ պատրիարքարանի նպաստներով, մասամբ զիւրական եկեղեցիների եկամտով:

### ԷՐԶՐՈՒՄԻ ԳԱԽԱՄ

Էրզրումի գաւառ ասելով պիտի հասկանալ Էրզրումի դաշտը, որովհետեւ այդ դաշտի վրա փռւած է նրա գիւղերի մեծ մասը:

Էրզրումի դաշտը Էրզրում քաղաքի պարզն է. նրա մարգագետինը իր նկարէն լեռներով, շրջապատւած Փալան-Թօքէնի, Դաւարօյինի, Դոււլուի և ՇէյխՂիկի լեռներով, տարածւում է դէպի արևմուտք, դէպի Աղրաբայի և Քօփի լեռները, ունենալով 15 վերստաչափ լայնութիւն և երկու այդ չափ երկարութիւն:

Էրզրումի դաշտը գտնուում է ծովի մակերևոյթից 6,000 ոտնաչափ բարձրութեան վրա. այդ պատճառով նրա կլիման լեռնային է. չը նայած դրան, նա օժտւած է առատ ջրերով և բերրի ու արգասանդ հողերով: Շրջակայ լեռներից գլխաւորապէս Դումլուի լանջերից հոսում են բազմաթիւ ջրեր, որոնք միանալով դաշտում և կոչւելով Կարասու, կազմում են Արևմտեան Տիգրիսի գլխաւոր ակունքը: Դաշտի արեւելեան մասը ջրերի առատութեան շնորհիւ ներկայացնում է մի ընդարձակ ճահիճ, ուր առատօրէն բուսնում է եղէզն և որտեղ ապրում են այդ դաշտին յատուկ բազմաթիւ թռչուններ: Դաշտի ընդարձակագոյն մասը բնւած է հացահատիկների մշակութեամբ, որը տալիս է առատ բերք: Ահա այս դաշտը կազմում է Էրզրումի շտեմարանը, նրան յագեցնողը:

Այս դաշտի և նրան շրջապատող լեռների լանջերի վրա ընկած է Էրզրումի գաւառը, բաղկացած 169 գիւղերից, որի 48-ը հայաբնակ են, իսկ մնացածը տաճկաբնակ: Կարևոր է նկատել, որ այստեղի տաճիկ ժողովուրդը, իբրև երկրագործ տարր, քուրդ ժողովրդից անհամեմատ կուլտուրապէս բարձր և խաղաղ ժողովուրդ է, որի զբաղիւթիւնը հայ ժողովրդի համար աւելի ցանկալի է քան քրդի:

Հայաբնակ գիւղերի մեծագոյն մասը գտնուում է դաշտի վրա. դրանք գաւառի բազմամարդ գիւղերն են, նշանաւոր իրենց վարելահողերով և դաշտային պարապմունքներով:

Սակայն, ինչպէս ամեն տեղ, այնպէս էլ այստեղ հողերի մեծ մասը պատկանում է աղաներին. քիչ գիւղ կը դռնէք այստեղ, ուր հողը գիւղացու սեփականութիւնը լինէր: Էրզրումում նստող բազմաթիւ տաճիկներ, իբրև կալւածատէրեր, ապրում են գիւղացու ձեռքով մշակող հողերի եկամուտով: Գիւղացիները մեծ մա-

սամբ մարաբաներ են. նրանք աղայի սերմով աղայի հողը մշակում են և բերքի կէսը աղային տալիս. այս այն դէպքում, երբ լծկանն ու գործիքը գիւղացունն են. հողային յարաբերութեան այս ձևը կոչւում է «օրթղշութիւն»: Բայց երբ լծկանն ու գործիքները նոյնպէս աղայինն են, այդ դէպքում բերքի երկու երրորդական մասը հասնում է աղային և միայն մի երրորդական մասը մշակող գիւղացուն. սակայն այս ձևի մարաբաների թիւը շատ մեծ չէ:

Էրզրումի դաշտում մի քանի գիւղեր միայն կարողացել են հողը սեփականացնել և դրանց մէջ առաջին տեղը բռնում է հարուստ Զիթոյ գիւղը:

Չը նայած անտեսական այս աննպաստ պայմաններին, Էրզրումի դաշտի հայ գիւղացիութիւնը իր կենցաղով մի հազւագիւտ բացառութիւն է կազմում այդ երկրի կլասիք չքաւորութեան մէջ: Մտնում էք ունեւոր ձիթոյցի հայի տունը. մեծ սրահի մէջ բացւում են մի քանի դռներ. այդ դռներից մէկը ձեզ տանում է դէպի տունը. նա քիչ նմանութիւն ունի Մուշի դաշտի գիւղացու պատերն ու առատաղը սեւացած երթիկաւոր տներին: Այստեղ առատաղը ծածկւած է, թէև հայկական տների ձևով, բայց մի առանձին ճաշակով. թոնիրը շինւած է տան մի կողմի վրա և երթիկը տանձնացրած, որով տան միւս մասերը ազատ են մնում ձիթից. մի մեծ փայտեայ պահարան և կաւէ ամանները շարւած են պատերի տակ որոշ կանոնաւորութեամբ: Մի այլ դուռ սրահից ձեզ տանում է մի սենեակ և այդ սենեակից մի այլ սենեակ. առաջին սենեակում ձեր ուշադրութիւնն է գրաւում մաքուր փռւածքը հանդերձ օթոցներով և բարձերով. պատերի տակ շարւած են մի քանի փայտեայ գոյնաւոր սնդուկներ. մի կողմում բազմած է քարէ լւացարանը, որը իբրև Էրզրումցի որմնագիր ճարտարպետի նուրբ ձեռագործ, կազմում է սենեակի զարդը և ապա մի պատի առաջ շինւած է մի մեծ դարակ իր բաժանմունքներով. այդ դարակը գեղատներում գործածող դարակներից տարբերւում է նրանով, որ սա փեղկեր չունի և ներկւած չէ. այդ դարակի մէջ հահ շարւած են արծաթի պէս մաքուր պղնձեայ ամանները, մեծ սինիներից սկսած մինչև փոքրիկ ափսէները թւով 40-50 հատ. դրանք որոշ կարգով մեծից սկսած մինչև փոքրը, յինւած դարակի ետևի տախտակին, նայում են ձեզ և արտացոլում ձեր դէմքը. նայում էք դրանց գասաւորութեանն ու մաքրութեանը

և հիանում այդ գեղջկական մուգէյումով: Երկրորդ սենեակը նոյնպէս մաքուր է, կապերտներով, օթոցներով և բարձերով զարդարւած: Մի այլ դուռ սրահից ձեզ տանում է արտոստունը. դա արտոստունն չէ, այլ մի ընդարձակ սենեակ, արտոստան յարմարեցրած, մուռնիքը կանոնաւոր, պատերը մաքուր, արտոստաղը փայտերով ու տախտակներով շինւած և տանիքի վրա լուսամուտներ թողած, իսկ արտոստան մէջտեղում ձմեռայ գրոյցների համար մի սիրուն տախտակամած վերնատուն շինւած. նայում էք այս բոլորին և չէք հաւատում ձեր աչքերին:

Անցնում էք մի այլ գիւղ՝ Սօուղ-Ջերմուկը և մտնում առաջին պատահած տունը. երկու ջահիլ կանայք ձեզ ներս են հրաւիրում. նրանք հարուստ չեն. հողը աղային է պատկանում. տունը փոքր է, սենեակը նոյնպէս փոքր և զուրկ փուածքից, բայց այդտեղ էլ թոնիրը շինւած է տան մի անկիւնում, երթիկը տախտակամածով առանձնացած է, որով և տան արտոստաղը մաքուր է մնացել սեանալուց: Տան մէջ դրւած է փայտէ մի մեծ պահարան անկողինների համար և մի մեծ դարակ, որի մէջ շարւած են պղնձեայ փայլուն ամանները, թեւ թւով քիչ. հիացած տան մաքրութիւնով, երկու ջահիլ կանանց վայելուչ շարժումներով և քաղաքավարի վերաբերմունքով, դուրս էք գալիս մի թեթևացած սրտով և ձեզ ու ձեզ հարց տալիս.

— Միթէ՞ աւերիչ ձեռքը այստեղ չի գործել:

Ոչ, աւերիչ ձեռքը այստեղ էլ է գործել. 1895 թւի կոտորածների ժամանակ հայաբնակ գիւղերը հիմնովին կողոպտեցին, բացի Ջիթոլից, որը կարողացաւ դիմադրել խուժանին և ազատ մնալ կողոպուտից, բայց այդ օրից անցել է ամբողջ տասն և հինգ տարի. այդ միջոցում էրզրումի դաշտի հայը իր տոկուն աշխատութեամբ կարողացաւ իր քայքայւած անտեսութիւնը նորից վերականգնել: Ես ոչ միայն լաւ հողագործ է, այլ և եռանդոտ ու շնորհալի արհեստաւոր, որ և ստեղծել է իր համար վայելուչ կեանք: Ինչ վերաբերում է ընտանեկան մաքրութեան և կարգ ու կանոնին, այդ պիտի վերագրել այն շփման, որ դաշտեցին իր արհեստների շնորհիւ ունի քաղաքի հետ:

Այլ են եղել պայմանները հայաբնակ միւս գաւառներում. նախ՝ այն տեղերում կողոպուտն ու կոտորածը կրկնւել է մի քանի անգամ և երկրորդ՝ հայ գիւղացին իր վար ու ցանքից բացի գրադմունք չունի:

Էրզրումի դաշտի գիւղերից նշանաւոր են՝ Կանը. սա գանւում է ոչ հեռու քաղաքից, նրա հիւսիսային կողմում և ունի 290 տուն բնակիչ. կանեցիք յայտնի են որպէս լաւ արհեստաւորներ, որոնց մեծագոյն մասը աշխատում է քաղաքում:

Ջիթիլիկը. սա նոյնպէս գտնւում է ոչ հեռու քաղաքից և ունի 190 տուն բնակիչ, որոնք պարապում են գլխաւորապէս երկրագործութիւնով:

Ջիթոլը. սա իր հարստութիւնով և բարեկեցիկ կեանքով էրզրումի դաշտի առաջին գիւղն է և ունի 216 տուն բնակիչ. ձիթոլցիները թէ լաւ հողագործներ են և թէ լաւ արհեստաւորներ:

Օձնին և Կրիչքը. այս երկու գիւղերից դուրս են գալիս շնորհալի որմնադիրներ և հիւաներ, որոնք իրենց արհեստներով գեղեցկացնում են էրզրումը:

Իլէճէն. սա գտնւում է քաղաքից դէպի արեւմուտք մեծ ճանապարհի վրա. այս գիւղը թէև մեծ չէ, բայց նշանաւոր է իր հանրային ջրերով. ջրերի ակների վրա շինւած են բաղնիքներ, որոնք տրւում են կապալով յօգուտ գանձարանի:

Ղարարը. սրա մօտ գտնւում է մի բլուր, որի կողքերը քանդակի բացւում են փրատակներ, հին կարասիներ և արծաթեայ ու պղնձեայ դրամներ. ենթադրւում է, որ այդ բլուրի տակ գտնւում են հնում նշանաւոր եղած Արծն քաղաքի աւերակները:

### ԿԱՐՄԻՐ ՎԱՆՔԸ

Էրզրումի գաւառի վանքերից նշանաւոր է Ս. Աստուածածնի կարմիր վանքը, որը գտնւում է քաղաքից դէպի հիւսիս-արևելք 4 ժամ հեռաւորութեան վրա, չինձք գիւղի մօտ:

Վանքը մեծ չէ, բայց նշանաւոր է իր շէնքի հստութիւնով և ամբութիւնով, որի շնորհիւ իր կարմրաքար գմբէթով նա մինչև այժմ մնացել է անփոստ ու կանգուն:

Վանքը հնում ունեցել է մեծ կալւածներ և մեծ համբաւ. նա համարել է դպրութեան և գիտութեան տեղ, ուր տարիներով սովորել և պատրաստւած դուրս են գնացել Գրիգոր Մագիստրոսը, Անանիա Շիրակեցին, Գրիգոր Նարեկացին, Արիստակէս Լաստիվերացին և շատ ուրիշ կրօնաւորներ:

Այս վանքն այժմ էլ մեծ համբաւ ունի Էրզրումի դաշտի հայ ժողովրդի մէջ. նրա բազմաթիւ սենեակներում շարաթներով դալիս հանգստանում են քաղաքից յայտնի ընտանիքներ. օգոստոսի մէջ Աստուածածնի ուխտին այդտեղ հաւաքւում է դաշտի գիւղերից անազին բազմութիւն, որը կրօնական ծիսակատարութիւններից բացի, մի քանի ժամով իրեն տալիս է զւարճութիւնների և կերուխումի և մի պահ մոռանում է առօրեայ հոգան ու չարքաշ կեանքը. Տաճկաստանում հազւագիւտ է կանանց և մարդկանց խառը բազմութիւն տեսնելը, իսկ երկու սեւի խառը պարը աւելի ևս հազւագիւտ է. սակայն այդ հնարաւոր է դարձել Էրզրումի դաշտի վանքերում: Այստեղ ասիական դափ ու զուռնայի նւագի հետ պարում են խառը շղթայ բոնած թէ մարդիկ և թէ կանայք:

Կարմիր վանքն այժմ ունի բաւականաչափ վարելահող և կենդանիներ. նա մշակել է տալիս այդ հողերը իր միջոցներով: Բացի այդ, վանքն ստանում է եկամուտներ ուխտաւորներից, պողիից, նպաստներ զանազան տեղերից և այդ եկամուտներով պահւում է մի գիշերօթիկ դպրոց, ուր սովորում են 15-ի չափ երեխաներ:

Վիճակագիր Էրզրումի դաշտի հայ ժողովրդի

№	Գ Ի Ի Ղ Ե Ր Ը	Հայ տուն 1)	Մահմեդ. տուն 1)
1	Մուսուրկա	134	8
2	Սօւղ-Ջերմուկ	41	55
3	Շինոց	60	23
4	Թուանճ	46	100
5	Հինձր	20	30
6	Գըղըլ-քիլիսէ	30	33
7	Շիփէկ	45	15
8	Դինարիգոմ	49	53
9	Ջիթոյ	216	12
10	Արծաթի	30	70
11	Ումուտում	80	55
12	Կրիչք	56	22
13	Կրճնկոց	22	5
14	Գեղախոս	37	41
15	Դւնիկ	80	25
16	Պատրշէն	34	9
17	Երկնիստ	9	42
18	Սաչկավանք	14	38
19	Ըղտածօր	50	45
20	Գոմք	45	40
21	Օճնի	190	35
22	Թարքունի	75	10
23	Նորշէն	22	50
24	Սալածօր	25	32
25	Ղարարգ	100	40
26	Էյլէնզի	28	45
27	Ղայափա	8	20
28	Ղուճճի	6	25
29	Գարահասան	66	60

1) Այս տեղեկութիւնները աւել է մեզ Էրզրումի տաջնորդարանի քարտուղար պ. Վ. Մանօթեանը:

Վիճակագիր Էրզրումի դաշտի հայ ժողովրդի									
№	Գ	Ի	Ի	Ղ	Ն	Ր	Ը	Հայ տ ու ն	Մահմեդ. տուն
30	Հողպէք	.	.	.	.	.	.	6	45
31	Աշգալէ	.	.	.	.	.	.	34	200
32	Ճինխս	.	.	.	.	.	.	65	140
33	Երկան-մասուր	.	.	.	.	.	.	18	130
34	Թօփալ-չաւուշ	.	.	.	.	.	.	35	150
35	Թիթկիր	.	.	.	.	.	.	8	160
36	Թէվրիսճիք	.	.	.	.	.	.	3	150
37	Իլիճէ	.	.	.	.	.	.	80	60
38	Անկառիչ	.	.	.	.	.	.	15	35
39	Բլուր	.	.	.	.	.	.	37	32
40	Արշունի	.	.	.	.	.	.	30	2
41	Սէօյիւթլի	.	.	.	.	.	.	36	95
42	Մէօրդիւլիւք	.	.	.	.	.	.	18	60
43	Կէղ	.	.	.	.	.	.	130	30
44	Զիֆթլիկ	.	.	.	.	.	.	191	41
45	Կան	.	.	.	.	.	.	290	100
46	Բրթոնք	.	.	.	.	.	.	7	200
47	Թէզէկիւլ	.	.	.	.	.	.	2	150
48	Վերին գիւղ	.	.	.	.	.	.	20	30
49	Ճիպոտ 1)	.	.	.	.	.	.	50	—
50	Ագրակ 2)	.	.	.	.	.	.	40	20
51	Վեքեխաս 2)	.	.	.	.	.	.	35	5
								2768	

1) Այս գիւղը պատկանում է Օվաճրի գաւառակին:  
 2) Այս երկու գիւղերը պատկանում են Նարմանի գաւառակին:

## ԲԱՍՏՆԻ ԳԱԽԱՌ

Բասէնի գաւառը սահմանակից է Էրզրումի դաշտին. սա իր երկարութեամբ Դաւաբոյնից ձգւում է մինչև սուսայ սահմանը, բռնելով մի մեծ տարածութիւն. սրա հիւսիսային կողմում գտնւում է Թորթումը, իսկ հարաւային կողմում Խնուսի և Ալաշկերտի գաւառները:

Երկրի կազմութիւնը մեծ մասամբ դաշտային է. սահմանների մօտ միայն նրա պատկերը փոխւում է. հարաւից և հիւսիսից շղթայաձև լեռները պատնէշ են կանգնում նրան, մէջտեղ թողնելով մի ընդարձակ տափարակ, որը կոչւում է Բասէնի դաշտ, իսկ արևմտեան կողմում երկարուկ ընկած է Դաւաբոյնը, որն Էրզրումի և Բասէնի դաշտերի սահմանը կազմելով, միաժամանակ հանդիսանում է Արևմտեան Եփրատի և Արաքսի մի քանի ծայր սկունքների անջրպետը:

Գաւառի երկարութեամբ արևմուտքից դէպի արևելք ոլորապտոյտ հոսում է Արաքսը, ոտոզելով նրա տափարակները. սա Արաքսի վերին ընդարձակագոյն և պողատու հովիտն է, նշանաւոր իր հացահատիկների բերքով:

Բասէնը Էրզրումի սանջակի կարեօրպոյն գաւառներից մէկն է. նա ունի մեծ դեր, պատմութեան մէջ յայտնի է եղել իր քաղաքական դէպքերով:

Նախ՝ Բասէնը Էրզրումի սանջակի ընդարձակ գաւառներից առաջինն է. երկրորդ՝ նա իր ընդարձակ և հացառատ գաշտով հանդիսանում է Էրզրումի գլխաւոր շտեմարանը. երրորդ՝ Բասէնի միջով անցնում է եւրոպական և պարսկական ապրանքների փոխանակութեան այն մեծ ճանապարհը, որը աւել է Էրզրումին այնքան մեծ դարի: Եւ վերջապէս Բասէնի ամբողջ երկարութեամբ ձգւում է Էրզրումի ճանապարհը դէպի Կարս, որը խոստանում է մեծ ապագայ, երբ հաղորդակցութեան միջոցները հովկասի և Էրզրումի մէջ կը բարեփոխեն:

Բասէնի դիրքը բարձր է, կլիման բարեխառը և հողը բերրի-ժողովրդի գլխաւոր պարապմունքն է հացահատիկների մշակութիւնը, թէև մի քանի տեղերում մշակում են նաև բանջարանոցային բերքեր և վարունգ ու ձմերուկ, բայց այս ճիւղը այն չափով չի զարգացած, որքան կարելի էր:

Բասէնի գաւառում կայ 169 գիւղ, որի 57-ը հայաբնակ են. այս գիւղերից շատերում հայերի հետ խառն ապրում են նաև քրդեր. կան գիւղեր էլ, ուր հայերը կազմում են ընդամենը 3-4 ընտանիք:

Գաւառի լաւ հողագործ տարր համարում է հայ ժողովուրդը, բայց մարաբալուժիւնը այստեղ էլ մուտք է գործել. շատ ընտանիքներ զրկւած են սեփական հողից և մասնւած են զրկանքների ու չքաւորութեան:

Բայց երբ համեմատում էք Բասենի անտեսական գրութիւնը Վանի և Բիթլիսի շատ հայաբնակ գաւառների անտեսական գրութեան հետ, տեսնում էք, որ նա ախրան էլ ստեղծել չէ. բասենցին անտեսապէս բարձր է կանգնած Մուշի դաշտեցուց, բայց ստոր է կանգնած էրզրումի դաշտեցուց. նա բռնում է մի միջին տեղ. ընտանեկան նիստ ու կացով աւելի նման է էրզրումի դաշտեցուն, բայց նւագ և աղքատիկ չափով:

Բասէնցի հայը զես ևս կրում է իր վրա նահապետականութիւնը. այժմ էլ պատահում էք բազմանդամ ընտանիքների, որոնք պահում են մի քանի զոյգ եղներ ու գոմէշներ, դուրս են բերում ծանրաշարժ գութաններ իրենց ամբողջ սարքով և աճաղին սերմ են ձգում հողի մէջ: Այսպիսի նահապետական ընտանիքներից է Քեօրփիքեօյ գիւղի Գրիգորը, որի ընտանիքը բաղկացած է 40 անդամից և որը տարեկան սերմ է ձգում մինչև 25 սօմար:

Բասէնի հայաբնակ գիւղերից աչքի են ընկնում Գոմաձորը, Եաղանը, Վելիբարան և Հերթեր, որոնցում ապրող ընտանիքների թիւը հասնում է 130-ից մինչև 160-ի:

Բասէնի լաւ գիւղերից մէկն է նաև Քեօրփիքեօյը՝ 90 տուն բնակիչներով, որից մի փոքր ցած Արաքսի վրա ձգւած հինաւուրց կամուրջը ծառայում է իրրե անցք բազմաթիւ քարավանների համար. այստեղից բաժանւում է գէպի ուռուսաց սահմանը տանող ճանապարհը:

**ՀԱՍԱՆ-ԿԱԼԱ.**

Բասէնի վարչական կենտրոնավայրն է հանքային ջրերով յայտնի բերդաքաղաք Հասան-Կալան, որը գտնւում է գաւառի

կենտրոնում, էրզրումից մօտաւորապէս 40 վերստ հեռաւորութեան վրա: Այստեղով անցնում է Տրապիզօն-Պորսկաստանի մեծ ճանապարհը:

Դաշտի մէջ բուսած մի քանի բլուրներ իրենց հարաւային ծայրում դուրս են ցցել ժայռերով պատած մի բարձր կուրծք, որի վրա կառուցւած են հին բերդի պարիսպները: Մինչև 1877 թւի ուռու-տաճկական պատերազմը այս բերդն, իրրե ամբողջին, գոյութիւն ունէր. և այդտեղ լինում էր բերդապահ դուռնի, բայց ուռնների գրաւումից և ապա յետ քաշելուց յետոյ այլևս չը վերականգնւեց նա և իրրե ոչ ռազմական կէտ այժմ ամայի է:

Բերդի հարաւ-արեւմտեան ստորոտում շինւած է քաղաքը. դա պատերազմից առաջ մի փոքրիկ աւան էր. երբ ուռնները գրաւեցին Կարսը և Սարիղամիշը իրենց շրջականերով, այդ շրջաններից բազմաթիւ տաճիկներ գաղթեցին Տաճկաստան. ա՛նա այդ գաղթած տաճիկներից շատերը եկան հաստատուեցին Հասան-Կալայում, որով աւանը մեծացաւ և վերջը դարձաւ քաղաք: Այժմ նա ունի 2,500 տուն բնակիչ, բաւականին տանելի շուկայ և մի մաքուր իջևան, մի բան, որը չէք գտնի նոյն իսկ Մուշի պէս մեծ քաղաքում: Այստեղ կարծէք կարողացել է Կովկասի կուլտուրան մի փոքր ներս թափանցել. բայց չը պէտք է մոռանալ, որ քաղաքի յետ ընկած կեղտոտ ու նեղ փողոցները և իրար վրա թափւած տները կրում են իրենց վրա ասիական կնիքը:

Հասան-Կալայում ապրում են 45 տուն հայեր մեծ մասամբ շրջակայ գիւղերից և էրզրումից եկած, որոնք պարապում են առևտրով և զլխաւորապէս արհեստներով: Տաճիկ ժողովրդի մեծագոյն մասը պարապում է երկրագործութեամբ, մի փոքր մասը միայն պարապում է առևտրով ու արհեստներով, բայց կայ մի դասակարգ էլ, որը ոչ մի զբաղմունք չունի, տարւայ 10 ամիսը անց է կացնում մի պորտաբոյժ կեանք և հունձի ժամանակ կապալով վերցնելով գիւղերի տասանորդ աուրքը, դուրս է գալիս կեղեքելու երկրագործ ժողովրդին, իլիլու նրա վաստակը:

Հասան-Կալայի շուրջը կան բազմաթիւ հանքային ջրեր. դրանցից երեք մեծ աղներ կառավարութիւնը յարմարեցրել է իրրե լողարաններ և տալիս է կապալով. բայց ոչ կանոնաւոր շէնքեր կան և ոչ էլ յարմարութիւններ. մի մեծ ծածկի տակ շինւած է մի ընդհանուր աւազան, որի մէջ մտնում են ամենքը և



որտեղից ոչ թէ բժշկութիւն, այլ զանազան վարակիչ հիւանդութիւններ կարելի է ստանալ, մանաւանդ, որ մեծ ճանապարհները յիշուող վայրերում շատ տարածւած են լինում վնասակար անասնաբանութիւնները:

Այստեղի երեք լողարաններից մէկը բերում է կառավարութեանը եկամուտ 45 ոսկի, երկրորդը 90 ոսկի, իսկ երրորդը և ամենամեծ լողարանը, որի ջուրը յայտնի է իր տաքութեամբ, բերում է 250 ոսկի: Եթէ Հասան-կալան գտնւէր մի կուլտուրայէս առաջ գնացած կառավարութեան ձեռքում, նա կը դառնար մի խոշոր կուրորս:

Վիճակագիր Բասէնի գաւառի հայ ժողովրդի 1)		
№	Գ Ի Ի Ղ Ե Ր Ը	Տուն
1	Հասան-կալա	45
2	Կիւլի	10
3	Միջլէլի	12
4	Ալվար	39
5	Հերթի	133
6	Թորթան	50
7	Էգէպար	103
8	Օգոմի	31
9	Պատիճվան	26
10	Բեօիլրիբեօյ	90
11	Կոտապազ	35
12	Նաղան	142
13	Իշխու	110
14	Հարսնիքար	42
15	Թաւոնց	23
16	Թօղէ-վերան	54
17	Գոմաձոր	160
18	Իւզվերան	64
19	Վէլի-բարա	134
20	Տօտի	57
21	Ճառասուն	48
22	Ալի-ճէքրէկ	111
23	Ծանծաղ	47
24	Թայխօջա վեր.	12
25	» ներք.	15
26	Պոռովերան	27
27	Սիւլիակի	6
28	Ծառս	9

1) Այս տեղեկութիւնները բազմի ենք կարելի առաջնորդարանից:

Վիճակագիր Բասէնի գաւառի հայ ժողովրդի		
№	Գ ի ի Ղ Ե Ր Ը	Տուն
29	Արտօս	5
30	Ազապ	9
31	Ախա	3
32	Սորասան	24
33	Սաչու	17
34	Չամուրլի	5
35	Գարաչուխա	5
36	Էգերմէկ	6
37	Եգլզան	2
38	Փոքր-թայ	1
39	Սանամէր	2
40	Ախէլէկ	3
41	Գրզլիճա	2
42	Սօգիւթու	2
43	Յարան	4
44	Գարաւէտ	3
45	Սըդըր-էլեսպ	3
46	Սընէզէ	4
47	Չիֆլիկ	6
48	Սարիքիւլի	4
49	Մազսուղ-ճօշ	3
50	Միւլքի	2
51	Հեօլլէկ	5
52	Մենտեան	3
53	Գրզլիճա վեր	3
54	Գարաեազի	6
55	Փէրէճիք	1
56	Աճալար	2
57	Օրթուզի	2
		1772

### ՍՆՈՒՍԻ ԳԱԻԱՌ

Սնուսի գաւառը փուած է Բինգեօլեան և Փալան-թօքէնի լեռների մէջ գտնուող ընդարձակ տարածութեան վրա հիւսիս-արեւմուտքից սկսած, սահմաններ ունենալով Էրզրումի, Բասէնի, Մանազկերտի, Բուլանըզի, Վարդօյի և Իերջանի գաւառները:

Սնուսի գաւառը գեղեցիկ գաւառ է, շատ գեղեցիկ. նրա լեռնային տեսարանները հմայք են ազգում մարդուն, նրա գետահովիտները բաւականութիւն պատճառում անցորդին: Հիւսիսային կողմում ձգւած է Փալան-թօքէնի լեռնաշարքը իր բազմաթիւ գագաթներով, իսկ հարաւային կողմում բազմած են Բինգեօլը իր բերակնեան լանջերով, Սամուրն իր թեւերով և Ջէրնիկն իր կատարով: Այս երկու շարք լեռների արանքում մէջ ընդ մէջ բացւում են գեղեցիկ գաշտեր, սիրուն գետահովիտներ, անշատուած միմեանցից փոքրիկ լեռներով ու շղթաներով:

Սնուսի գաւառը նշանաւոր է իր ջրերով. քիչ կը գտնէք մի այլ շրջան այնքան ջրառատ, որքան Սնուսի գաւառը: Ջրեր հոսում են նաև Փալան-թօքէնի հարաւային լանջերից, բայց ջրերի գլխաւոր աւազանը հանդիսանում է Բինգեօլը: Բինգեօլի ոչ մի լանջ այնպէս ջրառատ չէ, ինչպէս հիւսիսային և արեւելեան լանջերը: Այդ ծով լանջերի իւրաքանչիւր ձորակից բխում են աղներ, որոնք միանալով կազմում են առակներ, գետակներ և ապա գետեր. Բինգեօլի հիւսիս-արեւելեան լանջից ճիւղ առնելով տարածւում են Ազվերանի և Ազգազի լեռները, Բինգեօլի լանջերից բխող բազմաթիւ ջրերը բաժանելով երկու մեծ խմբերի. գրանցից արեւելեան խումբը կազմում է Սնուսի գետի աղունքը, իսկ հիւսիսային խումբը Արաքսի աղունքը: Սնուսի գետը ստղելով գաւառի հարաւային մասը, հոսում է Բուլանըզի գաւառը և այնտեղ միանում Արեւելեան Եփրատին. իսկ Արաքսը ստղելով գաւառի հիւսիսային մասը, Սախկալ-թութան կիրճի միջով հոսում է Բասէնի գաւառը և ապա այնտեղից Ռուսաստան:

Երկրի այս օրինակ կազմութեան և աննման կլիմայի շնորհիւ գաւառում առաջ է գնացել պարապմունքների երկու խոշոր ճիւղ. գրանցից մէկն է երկրագործութիւնը մասնաւորապէս հացահատիկների մշակութիւնը, որը տարածւած է գլխաւորապէս Սնուսի գաշտում և գետահովիտներում, ուր ընկած են հայաբնակ

գիւղերից շատերը: Խնուսի մի քանի տեղերի հացահատիկը մեծ համբաւ ունի:

Պարապմունքի երկրորդ ճիւղը աւելի է առաջ է գնացել. դա խաշնարածութիւնն է: Ոչ մի լեռնային շրջան չի կարող խաշնարածութեան համար այնպիսի յարմար վայր հանդիսանալ, ինչպիսին է Բինդեօրեան շրջանը: Դա մի մեծ լեռնադրախտ է իր արօտներով և հովասուն խոտատեղիներով. ժողովրդի մեծագոյն մասը, գլխաւորապէս քրդերը, պարապում են խաշնարածութեամբ. էրզրումի շուկայի համար մտացու ընտիր ոչխարներ տալիս է Խնուսը. Դիարբէքերից, Հալէպից և նոյն իսկ Դամասկոսից գալիս են վաճառականներ յատկապէս Խնուսի ոչխարի հօտերը գնելու և տանելու համար:

Խնուսի գաւառը յայտնի է նաև իր հանքերով. մի կողմ թողած այն ենթադրեալ թանկարժէք հանքերը, որ կարող են լինել նրա խորքում, մենք կը յիշենք հանքերի երկու տեսակը, որ գոյութիւն ունին արդէն:

Գաւառը շատ հարուստ է աղահանքերով. դրանցից նշանաւոր է հիւսիսային մասում մի ձորակի մէջ գտնուող Թաթոս-տուզլի կոչւող աղահանքը. դա քարի աղահանք չէ, այլ աղահանքի աղբիւր է, որը շահագործում է կառավարութիւնը մի պրիմիտիւ ձևով. ջրով պատուղ անիւր իջեցնում է հորի մէջ և աղաջրով լիքը դուրս բերում փոկի վրա ամրացած կաշեայ պարկերը և գատարկում փայտէ նաւերի մէջ. այդտեղից աղաջուրը գնում թափւում է մի մեծ տարածութեան վրա շինուած ածուների մէջ. արեգակի ճառագայթների տակ մի քանի օրւայ ընթացքում գոլորշիանում է աղաջուրը, ածուների յատակում թողնելով աւազանման աղի բաւականին հաստ շերտ: Ահա այդ աղը կապում է առճիկ կառավարութեան դատարկ գանձարանի եկամուտներից մէկը:

Աղահանքի մօտ շինուած է մի լաւ շէնք, ուր նստում է կառավարութեան պաշտօնեան. աղահանքում աշխատում են 10-15 խնուսցի հայեր իրրև հաւատարիմ տարր, որոնք ստանում են ամսական 130 կուռուշ (10 բ. 40 կ.) վարձ: Աղի լիտրը, մօտաւորապէս կէս փութը, գնահատուած է 128 փարա կամ 25 1/2 կոպէկ:

Գաւառում կայ նաև նաւթի հանք. Թաթոսի աղահանքից ոչ հեռու գտնուում է Դաթիւնլար անունով մի փոքրիկ քրդարնակ գիւղ. այդ անունը գիւղը ստացել է իր մօտ գտնուող նաւթաղ-

բիւրից, որը անունով միայն յայտնի է, իսկ շահագործում չկայ. վերջին ժամանակներս էրզրումի մի քանի հայ վաճառականներ ձեռք բերին այդ գիւղի շրջակայ հողերի և հանքերի շահագործման իրաւունքը, բայց թէ երբ գործի կանցնեն, դեռ յայտնի չէ:

Խնուսի գաւառն ունի 236 գիւղ, որի 24-ը միայն հայարնակ են. այդ գիւղերից մի քանիսում հայերի թիւը շատ սահմանափակ է. ազգաբնակչութեան խոշորագոյն մասը քրդեր են, որոնք պատկանում են Հայդարանցի, Զիլանցի և Զիրբանցի ցեղերին:

Խնուսի գաւառը հնում բազմահայ գաւառներից մէկն էր. այդտեղ մինչև այժմ էլ իւրաքանչիւր քայլափոխը, հայ անուն կրող իւրաքանչիւր քրդարնակ գիւղը վկայում են այդ անցիակի մասին: Խնուսից կէս ժամ գէպի հիւսիս մի ձորակի մէջ կանգուն մնում է մի փոքրիկ, բայց գեղեցիկ վանք, շրջապատուած գերեզմաններով և խաչարձաններով. այդ վանքի անունով ձորակը կոչւում է Բիրխէ-դարիասի, իսկ մօտիկ ընկած քրդարնակ մի գիւղ՝ Բիրխէ-քեօյ: Եւ քանի քանի հայ անուն կրող այգպիսի վայրերի մօտով գալիս ու անցնում էք առանց հայի երես տեսնելու: Անցնում էք այդ ամայի գաւառներով, տեսնում հին հին յիշատակներ և ձեզ թւում է, որ մի հնձող ձեռք անվերջ հնձում է այդ աշխարհը: Եւ իսկապէս կեանքը այդտեղ հնձում է. ճանապարհի կողքերին յաճախ պատահում էք քարակոյտերի. տեղ տեղ դրանց թիւը մեծանում է, բազմապատկւում. այդ քարակոյտերից իւրաքանչիւրը վկայում է մի սպանութեան, մի եղեռնագործութեան մասին. տեսնում էք այդ բոլորը և սարսափած շտապում էք ժամ առաջ հեռանալ այդտեղից: Այսպիսի բոպէսներ ահա դուք սպրում էք անվերջ այդ երկրի ճանապարհորդութեան միջոցին:

Խնուսի գաւառի հայարնակ գիւղերից աչքի են ընկնում Արօսը, Զէվէրմէն, Գարա-քեօփրուն, Խօզլուն, Իօվանդուկը և Գարաչօբանը:

Այս գիւղերն ունին պողարեր գաշտեր, ջրառատ հողեր և տանելի կացութիւն. տանելի ենք ասում, որովհետև տանելի կացութիւնն էլ այս երկրում հազւագիւտ է. այս գիւղերից առանձնապէս աչքի է ընկնում Գարաչօբանը, որի ժողովուրդը իր ընդունակութիւնների և աշխատասիրութեան շնորհիւ իրեն շրջապատող գիւղերի մէջ ձեռք է բերել մի առանձին գիրք:

## Խ Ն ՈՒ Ս

Մնուսի գաւառի վարչական կենտրոնավայրն է Մնուս բերդաքաղաքը, որը գտնուում է Բինգեօլի արեւելեան ստորոտներում մի ձորակի երկու լանջերի վրա: Քաղաքի զիբբը գեղեցիկ է և քանաստեղծական: Ձորակի միջով վազում է Մնուս գետը, քաղաքը բաժանելով երկու մասի: Գետի աջ ափին կարծր ժայռերի վրա շինւած է բերդը, որ այժմ ամայի է և կիսաւեր: Տների մեծ մասը գտնուում է գետի ձախ ափին ձորի մէջ, իսկ մի մասն էլ ձորից վեր մի հարթութեան վրա. այս մասում կան մի քանի լաւ շինութիւններ, որոնց թւում նաև դատարանը իր քարատաշ շէնքով: Քաղաքի շուրջը կան ընտիր քարահանքեր, որոնցից օգտուում են խնուացիները տներ շինելու ժամանակ: Շուկան գտնուում է ձորի մէջ եղող թաղում, բայց խանութներ կան նաև վերին թաղում: Մնուսն ունի աւելի քան 900 տուն բնակիչ, որից 325 տունը 2,163 շնչով հայեր են, իսկ մնացեալը տաճիկներ են և քրդեր: Հայերն ապրում են մասամբ ձորի թաղում և մասամբ վերին թաղում:

Հայերի մեծ մասը պարապում է հողագործութեամբ, բայց փոքր չէ նաև առևտրով և արհեստներով պարապողների թիւը: 50-ի չափ հայ խանութպաններ կան և 60-ի չափ կօնյօրաչիներ, դարբիններ, ոսկերիչներ, դերձակներ, պայտառներ, սառաջներ և այլ տեսակի արհեստաւորներ: Կարելի է ասել, որ Մնուսի առևտուրը մեծ մասամբ գտնուում է հայերի ձեռքում:

Մնուսցի հայը ընդհանրապէս աշխատասէր է և տոկուն. նա ամեն կերպ ձգտում է բարձր կանգնած լինել իրեն շրջապատող տարրերից, որքան էլ անբող պայմանները աննպատ են նրա համար: Օրինակ, խնուացու տանը դուք կը գտնէք մեղրի փեթակներ, տան առաջ փոքրիկ պարտէզ, տեղ տեղ ծառատունկեր և երբեմն կոկիկ տներ ու բաւարար կեանք: Սրանք թէև շատ փոքրիկ երևոյթներ են, բայց կուլտուրային խորթ քրդի հարեանութեան և իշխանութեան տակ գանւող հայի համար այս էլ մեծ երևոյթ չէ, որ Տաճկաստանում հայը ստիպւած է իր հարստութիւնը թազցնել, վատ հագնւել, վատ ապրել, ազքատ ձեանալ և այդ բոլորը նրա համար, որ իր գոյքն ու կեանքը վտանդիչ չը ենթարկի:

## Վիճակագիր Մնուսի գաւառի հայ ժողովրդի 1)

№	Գ Ի Ի Ղ Ե Ր Ը	Հայ ա ու ն	Քուրդ տուն
1	Բերդ . . . . .	325	600
2	Սարլլու . . . . .	45	
3	Արօս . . . . .	95	3
4	Ելփիս . . . . .	65	10
5	Ձէվէրմէ . . . . .	180	
6	Հարեմիկ . . . . .	120	30
7	Սալիլ-Հաւուշ . . . . .	85	30
8	Քաղքիկ . . . . .	110	15
9	Աղջամեկիք . . . . .	45	7
10	Շարաղին . . . . .	50	
11	Մարուֆ . . . . .	45	
12	Տուճան . . . . .	60	20
13	Գարաքեօիրու . . . . .	150	5
14	Ենիքեօյ . . . . .	50	
15	Եղուրղլու . . . . .	5	
16	Սօղլու . . . . .	120	5
17	Եահեա . . . . .	40	20
18	Սըրթ . . . . .	40	30
19	Բուսնաղ . . . . .	40	5
20	Գօլանդուկ . . . . .	120	
21	Գարաչօրան . . . . .	220	
22	Սարւորի . . . . .	30	8
23	Սըրմ-խայա . . . . .	45	6
24	Կոպալ . . . . .	65	25
25	Գարապուրաք . . . . .	4	
26	Մժնկերա . . . . .	5	40
27	Պեկուրաի . . . . .	4	15
28	Թանդրլու . . . . .	5	
29	Գօլճիսար . . . . .	2	
30	Մօլա-Դաւութ . . . . .	1	
31	Թարաձիղ . . . . .	5	
32	Անտուլպոմ . . . . .	5	
33	Սօղան . . . . .	4	
		2185	

1) Այս տեղեկութիւնները աւել է մեզ Մնուսում պ. Կարապետ Մալխասեանը:

**ԴԵՐՉԱՆԻ ԳԱԻԱՍԻ**

Դերձանի գաւառի սահմաններն են արեւելքից Էրզրումի և Խնուսի գաւառները, հիւսիսից Բայրուզդի գաւառը, հարաւից Քղիի, իսկ արեւմուտքից Երզնկայի սահմակը: Գաւառի միջով հոսում է Արեւմտեան-Եփրատը, նրան բաժանելով երկու մասի:

Երկրի կազմութիւնը մասամբ գաշտային է, մասամբ լեռնային. լեռներից նշանաւոր են. Սաչդաղը, Սալխալը, Կարակայան, Ձէրգիկը և Մարիամգաղը, որոնք ընկած են գաւառի հարաւային և արեւելեան սահմանների վրա, կազմելով մի կիսաշրջան: Այս լեռներից հոսում են բազմաթիւ ջրեր, որոնք ոռոգելով գաւառի հարաւ-արեւելեան ընդարձակ մասը, խառնուում են իրար և կազմելով Տուզլիսու գետը, գնում թափուում են Եփրատի մէջ:

Գաւառի գաշտային մասերը առանձնապէս գետահովիտները հանդիսանում են հացահատիկների մշակութեան համար բարեբեր վայրեր և իսկապէս, Դերձանի մի քանի տեղերի ցորենը շատ հոշակեւած է շրջակայ գաւառներում և այդ պատճառով նա ունի լաւ արտահանութիւն:

Դերձանի կլիման բարեխառն է, իսկ տեղ տեղ նոյն իսկ տաք, մանաւանդ ձորահովիտներում, ուր կարելի է աճեցնել ծառայատուղներ, խաղող և այլ բերքեր, բայց տիրող կարգերի և ժողովրդի յետամնացութեան պատճառով պարապմունքի այդպիսի ճիւղեր համարեա գոյութիւն չունին:

Դերձանի գաւառն ունի 231 գիւղ. դրանցից 31-ը միայն հայաբնակ են: Գաւառի կենտրոնավայրն է Մամախաթուն աւանը, որը գտնւում է Տուզլիսու գետի վրա. աւանի բնակիչները տաճիկներ են:

Հայաբնակ գիւղերից նշանաւոր է Բագառիջը, որն ունի 150 տուն հայ և 150 տուն տաճիկ բնակիչ: Գիւղը յայտնի է իր անցեալով. այստեղ Տիգրան երկրորդը կանգնեցրեց Յունաստանից բերած Հեփեսոսի կուռքի մեհեանը: Գիւղի մէջ գտնուող ժայռերի վրա կայ մի հին բերդի աւերակներ:

Հայաբնակ մեծ գիւղերից է նաև Բուլքը, որն ունի աւելի քան 100 տուն բնակիչ: Գիւղի դիրքը գեղեցիկ է, ջուրը առատ և բարեբեր:

Իր դիրքով, օդով և ջրով յայտնի է նաև Ծաղկարի գիւղը, որն ունի 60 տուն հայ և 15 տուն տաճիկ ժողովուրդ: Գիւղի շրջակայքում գտնւում է Ծաղկարի Ս. Դաւիթ անուն կրող վանքը, որի մօտ կան գեղեցիկ խաչարձաններ:

**Վիճակագիր Դերձանի գաւառի հայ ժողովրդի 1)**

№	Գ Ի Ի Ղ Ե Ր Ը	Հայ տ ու ն	Մահմեդ. տուն
1	Սումլար	35	30
2	Ղուրգոլ	30	25
3	Սարիգայա	100	
4	Ապրանք	40	30
5	Չըքնըս	60	5
6	Քեօփուր	100	15
7	Աղաթեր	20	15
8	Չանագչի	8	15
9	Հիրանի	7	15
10	Ծաղկարի	60	15
11	Սարխին	25	50
12	Վիժան	20	20
13	Սնազազ վեր.	8	10
14	» ներք.	30	5
15	Աստոյի-գոմ	10	10
16	Գրենիկ	60	
17	Փիրիչ	100	10
18	Հոդէք	60	50
19	Բագառիջ	150	150
20	Վարգուկ	30	30
21	Սաչիկ-օղլու գոմ	18	12
22	Չամուր-դէրէ	15	
23	Մանց	60	60
24	Գառն-բերդակ	25	8
25	Ազրակ	12	13
26	Հերունի	3	15
27	Բուլք	120	
28	Էսպէվէրէք	15	30
29	Գարապուլաք	8	60
30	Սընգըրի	25	25
31	Սազ-գիւղ	50	50
		<b>1304</b>	

1) Այս տեղեկութիւնները բաղել ենք Կարինի առաջնորդարանից:

### ՔՂԻԻ ԳԱԽԱՄ

Քղիի գաւառը գտնուում է Էրզրումի սանջակի հարաւ արեւմտեան ծայրում, որի սահմաններն են. արեւելքից Խնուսի գաւառը, հիւսիսից Դերջանի գաւառը, արեւմուտքից Երզնկայի սանջակը, իսկ հարաւից Սարրերզի և Բիթլիսի վիլայէթները:

Երկրի կազմութիւնը խիստ լեռնային է. բազմաթիւ սարերով ու ձորերով ծածկւած է գաւառի մակերևոյթը, ուր երկրագործութեան համար դաշտավայրեր հազւագէտ են: Կեռները շատ տեղերում ծածկւած են անտառներով:

Գաւառի միջով հոսում է Քղի գետը, որի ակունքները գտնուում են Սաչգաղ ու Սալխալ լեռների հարաւային լանջերում. գետի մի ձիւղը կոչւում է Բինգեօլ-սու: Քղի գետը վիլայէթի սահմաններից դուրս գնալով, Սարրերզից դէպի հիւսիս-արեւելք թափւում է Արեւելեան Եփրատի մէջ:

Երկրի կլիման խիստ անողջարար է, այդ պատճառով ժողովուրդը ամբակազմ է, տոկուն և երկարակեաց:

Ժողովուրդը պարապում է երկրագործութեամբ սահմանափակ չափով. երկրի կազմութիւնը հնարաւորութիւն չի տալիս լայն տեղ տալու այդ պարապմունքին, բայց երկրի այդ նոյն կազմութիւնը իր ծաղկաւէտ արօտներով հնարաւոր է դարձնում լայն չափով պարապելու անասնապահութեամբ և խաշնարածութեամբ: Այստեղի կովերը, այծերն ու ոչխարներն անւանի են, որոնց կաթնեղէնը, միսն ու ճարպը և բուրգն ու մազը կազմում են ժողովրդի ապրուստի գլխաւոր միջոց: Բացի այդ, բեռնակրութեան համար ժողովուրդը պահում է ձի, էջ և ջորի. սայլի գործածութիւնը այստեղ հնարաւոր չէ, ամեն ինչ փոխադրւում է յիշեալ կենդանիներով:

Որոշ չափով ապրուստի միջոց ծառայում են անտառները. նախ անտառներից ժողովուրդը հաւաքում է պտուղներ, այն է՝ ընկոյզ, կաղին, ալոճ, տանձ և այլն, որոնցով հարուստ են այդ անտառները. երկրորդ՝ անտառները մատակարարում են վառելիք և շինութիւնների համար փայտ ոչ միայն տեղական կարիքների այլ և արտահանութեան համար:

Քղիի անտառները հարուստ են նաև այն քաղցր հիւթով, որը իջնում է տերևների վրա և որից պատրաստում են մեղրա-

համ գազպէնը: Այդ նոյն բարիքին պիտի վերադրել նաև մեղաբուծութիւնը, որը բաւականաչափ տարածւած է գաւառի շատ գիւղերում:

Քղիի գաւառն ունի 206 գիւղ, որից 50-ը հայաբնակ են, իսկ ֆրանգալը քրդաբնակ. քրդեր ապրում են նաև հայաբնակ գիւղերում:

Հայաբնակ գիւղերից աչքի են բնկնում. Ծառապտուղներով՝ Առինջը և Ասողերիցը: Հողագործութեամբ և արհեստներով՝ Առէքը և Խուրքը: Իսկ բազմամարդութեամբ՝ Դարմանը. սա ունի 350 տուն բնակիչ:

Քղիի գաւառում կան մի քանի վանքեր. գրանք են՝ Ս. Կիրակոսի վանքը, Ասողաբերդ գիւղի մօտ, Ս. Փրկչի վանքը Սերգելի գիւղի մօտ, որոնք ծառայում են հայ ժողովրդի համար իբրև ուխտատեղիներ, բայց գլխաւոր ուխտատեղի համարւում է Ս. Լոյս լեռը: Դա երկու սրածայր գագաթներից բաղկացած գաւառի ամենարարձր լեռն է, որը գտնուում է գաւառի արեւմտեան կողմում Դէրսիմի սահմանի վրա: Այդ լեռը, որը վանքի փոխարէն քարայրեր ունի իր վրա, համարւում է Քղիի գաւառի հայ և քուրդ ժողովուրդների ամենաներբական վայրը: Մեծ պատրաստութիւններով կին ու տղամարդկանց անազին բազմութիւն հայ թէ քուրդ Վարդավառին ուխտ են գնում այդ լեռը, տօնում են մեծ շքով Վարդավառը, կեր ու խում անում և նոյն հանդիսաւորութեամբ տուն դառնում: Ս. Լոյս լեռան անունով երգւում են թէ հայերը և թէ քրդերը:

### Ք Ղ Ի

Քղիի գաւառի վարչական կենտրոնավայրն է Քղի ավանը, որն ընկած է Քղի գետի աջ ափին, նրա մի վտակի վրա: Սկզբնական Քղին մի բազմամարդ քաղաք էր, շինւած Հագասուն գիւղի մօտ, որը 1616 թւի երկրաշարժից բոլորովին աւերւեց և բնակիչները մի փոքր մասը եկաւ և հիմնեց այժմեան Քղին:

Աւանը շինւած է մի գեղեցիկ լանջի վրա, ուր մէկը միւսի մէջքին բարձրացող սները նրան տալիս են սիրուն տեսք, բայց

աւելի գեղեցիկ են նրան շրջապատող բլուրները, լեռներն ու ձորերը, որոնցից իւրաքանչիւրն ունի իր յատուկ անունը և արժէքը:

Աւանից ոչ հեռու ցցւած են երկու լեռներ. դրանք են Սէտէ-խատումը և Քարգլուխը. առաջինի գագաթից ձիւնը անպակաս է, իսկ ստորտից բխում է Ս. Աստուածածնի ակը, որն ուխտատեղի է քղեցու համար. երկրորդը ապառաժոտ է ու լերկ. սրա ստորոտներում գտնուում են քարահանքեր ու կաւահանքեր, որոնցից մեծապէս օգտուում է քղեցին: Այս երկու լեռների մէջ բացւում է մի հրաշալի բուսական ձոր, որը կոչւում է Քարկանձոր. այդ ձորի կողերից բխում են բազմաթիւ սառնորակ աղբիւրներ, որոնք կոչւում են Սառատակ: Ահա Քարկանձորի և Սառատակի ակունքներից գոյանում է մի մեծ վտակ, որը գնում ոտոզում է աւանի պարտէզները և պտտեցնում ջրաղացների անիւները:

Աւանի աները քարաշէն են, տեղ տեղ երկու յարկանի ու գեղեցիկ, թէև փողոցները անկանոն են: Աւանն ունի իր շուկան, ուր կան բաւականաչափ խանութներ և արհեստակրպակներ:

Քղին ունի 350 տուն հայ բնակիչ և 100 տուն տաճիկ. տաճիկներն ապրում են աւանի ցածի թաղում, ուր շուկան է գտնւում, իսկ հայերը բնակւում են Քարկանձորի կողմը: Հայերի մասը բաղկացած է չորս թաղերից, դրանք են՝ Ս. Յակոբի, Ս. Սարգսի, Ս. Լուսաւորչի և Վարի թաղերը: Ս. Յակոբի թաղում գտնուում է առաջնորդարանը և օրիորդաց դպրոցը, իսկ Ս. Սարգսի թաղում տղայոց դպրոցն իր գեղեցիկ շէնքով:

Քղիի հայերը ամբակազմ են, առողջ, բնդունակ և աշխատասէր. աւանի առևտուրն ամբողջապէս նրանց ձեռքումն է գտնւում, արհեստները նոյնպէս. արհեստներից աչքի են ընկնում կաշեգործութիւնը, կոշիկակարութիւնը, դերձակութիւնը, ոսկերչութիւնը, պղնձագործութիւնը, դարբնութիւնը, հիւանութիւնը, պայտատութիւնը և այլն:

Վիճակագիր Քղիի գաւառի հայ ժողովրդի 1)

№	Գ Ր Ի Ի Ղ Ե Ր Ը	Հ Ա Յ		Մասնեղ. շունչ
		Տուն	Շունչ	
1	Քարաք	350	2450	1050
2	Ճըպըր	50	350	6
3	Ղաղի	15	105	168
4	Ակիպիվան	18	126	119
5	Եօլ-մէջ	18	126	160
6	Աղբղուտ	15	105	35
7	Ճերմակ	150	1050	70
8	Առէք	150	1050	
9	Դարման	350	2450	40
10	Ապօղնակ	45	315	
11	Օռնակ	80	560	350
12	Օրօր	90	630	140
13	Ասողբերդ	130	910	100
14	Չարիպաշ	15	105	35
15	Չահանդշի	100	700	15
16	Չան	30	210	160
17	Քէրպօզ	50	350	72
18	Աւրանիկ	20	140	174
19	Չըլըպէ-մըզբէ	15	105	415
20	Հողաս	50	350	100
21	Սուբս	200	1400	
22	Սերկևիլ	92	644	120
23	Սեղանք	15	105	49
24	Հարկապ	2	14	265
25	Ալթուն-Հուսէին	10	70	35
26	Հեթև	90	630	

1) Այս տեղեկութիւնները քաղել ենք Վարինի առաջնորդարանից:

Վիճակագիր Քղիի գաւառի հայ ժողովրդի

№	Գ ի ի Ղ Ե Ր Ը	Հ Ա Յ		Մանկ. շունչ
		Տուն	Շունչ	
27	Աղային-շէնլիկ	20	140	35
28	Սաղաձոր	60	420	
29	Չումախ	7	50	90
30	Հաղատուն	50	350	
31	Տինէկ	18	126	7
32	Առինջ	30	210	
33	Նարապէք	40	280	
34	Մէլիքան	40	280	
35	Ջերման	27	175	400
36	Ամառիճ	27	175	35
37	Նօլխօլ	2	14	686
38	Նասգիւղ	2	14	266
39	Նուպէք	20	140	105
40	Ագրակ	30	210	25
41	Նօշքար	15	105	37
42	Լըք	5	35	110
43	Նաչաթուր	8	56	130
44	Շէն	10	70	70
45	Ինախ	5	35	350
46	Շարուկ	15	105	
47	Գըղլէլպուկ	15	105	105
48	Լըղիկ	40	280	70
49	Չիֆթլիկ	35	245	
50	Հէօլէնք	5	35	385
		2676	18705	

ԲԱՅԲՈՒՐԴԻ ԳԱԻԱՍ

Էրզրումի սանջակի հիւսիս-արեւմտեան մասում սկիզբն է առնում ձօրօխ գետը, որը ոլորապտոյտ կիսաշրջան կազմելով, ընթացքը դարձնում է գէպի հիւսիս-արեւելք և ոռոգելով սանջակի մի ընդարձակ մասը, ուսուական Արգլինի մօտով դիմում է գէպի Սև ծովը:

Պարխարեան շղթայի Վազուկ և Զիարէթ լեռները մի կողմից, Օթլըղ և Քօփ լեռների շարքը միւս՝ հանդիսանում են ակունքների աջն գլխաւոր աւազանը, որոնցից գոյանում է ձօրօխը: Ահա ձօրօխի վերին հովիտների և նրա ակունքների վրա բնկած է Բայրուրղի գաւառն իր բազմաթիւ գիւղերով:

Գաւառի կազմութիւնը բազմազան է. երկրագործութեան համար կան բերրի գաշտեր, բանջարանոցների, խաղողի այգիների և ծառաստանների համար՝ սիրուն գետաբերաններ և ձորահովիտներ, անասնապահութեան համար՝ հոտաւէտ լեռնալանջեր և արօտատեղիներ, մեղաբուծութեան համար՝ ծաղկաւէտ վայրեր, փայտեղէնի համար՝ հարուստ անտառներ: Մի խօսքով, գիւղատնտեսական բոլոր ճիւղերի համար գաւառը հանդիսանում է յարմար շրջան: Բացի այդ, գաւառում կան թանկագին մետաղի հանքեր, սակայն որոնք չեն շահագործուում:

Բայրուրղի գաւառը տնտեսապէս և մտաւորապէս աւելի բարձր է կանգնած, քան նրան կից միւս գաւառները. նախ՝ նա հարուստ է բերքերով. հացահատիկներից և ընդեղէններից բացի նա արդիւնարեւրում է խաղող, ծառապտուղներ, մետաքս, մեղր, մոմ, կենդանիներ և այլն. երկրորդ՝ նա գտնուում է Տրապիզոնից գէպի էրզրում և Թարսից տանող մեծ ճանապարհի վրա, որի շնորհիւ թէ՛ նիւթապէս է շահուում և թէ՛ անմիջապէս կապւած լինելով Տրապիզոնի հետ, նրանից ազգւում է և մտաւորապէս և կուլտուրապէս:

Բայրուրղի գաւառն ունի 169 գիւղ, որից 30-ը հայաբնակ են, իսկ մնացեալ գիւղերում ապրում են տաճիկներ և քիչ թւով լաղեր: Հայերը որքան էլ քիչ թիւ են կազմում այստեղ, բայց և այնպէս աչքի են ընկնում իրենց ընդունակութիւններով և աշխատասիրութիւնով:

Հայաբնակ գիւղերից նշանաւոր են Քանթացը, Քարալարակը, Վարաղահանը, Լըսննքը, Բլուրը և Աւերակը:



Հայաբնակ գիւղերից է նաև Երկին, որի մօտ գտնուող քա-  
րանանքը տալիս է ընտիր ջրաղացի քարեր:

### Բ Ա Յ Բ Ո Ւ Ր Դ

Բայրուրդի գաւառի վարչական կենտրոնավայրն է Բայրուրդ  
քաղաքը, որն ընկած է ձորօխի երկու ափերի վրա: Քաղաքը  
երեք կողմից շրջապատւած է լեռներով. քաղաքից անմիջապէս  
դէպի հիւսիս ընկած է այդ լեռներից մէկը ժայռոտ և անմատ-  
չելի կողերով, որի վրա շինւած է Բայրուրդի հինաւուրց ամրոցը,  
այդ ամրոցն այժմ ամայի է. նրա կիսաւեր պարիսպները մնում  
են կանգնած իբրև յիշատակ փառաւոր անցեալի:

Շնորհիւ առատաջուր ձորօխի, Բայրուրդն ունի բուսական  
գեղեցիկ տեսք. գետի երկու ափերի ուղղութեամբ ընդարձակ տա-  
րածութեան վրա ձգւած են պարտէզներ և ծառատաններ:

Քաղաքն ունի աշխարհագրական կարևոր դիրք. ցամաքային  
ճանապարհով նա կապւած է Տրապիզոնի և Էրզրումի հետ, իսկ  
ձորօխի միջոցով՝ Ռուսաստանի և Բաթումի հետ. շնորհիւ այսպի-  
սի յարաբերութիւնների քաղաքը ծաղկման վիճակի մէջ է. նա  
ունի ընդարձակ շուկա աւելի քան 500 խանութներով, կրպակնե-  
րով և բազմապիսի արհեստանոցներով: Բացի այն, որ գաւառի  
խոշոր բերքերի առևտուրը Բայրուրդի շուկայումն է կատարոււմ,  
տարին մէկ անգամ մայիս և յունիս ամիսների ընթացքում այս-  
տեղ տեղի է ունենում երեքշաբաթեայ տօնավաճառ, որի ժամա-  
նակ բազմատեսակ բերքերով հարստացած և բազմատարր ամբո-  
խով խառնւած շուկան աւելի ևս կենդանութիւն է ստանում:

Բայրուրդն ունի աւելի քան 2,500 տուն բնակիչ. ընդարձակ  
քաղաքն աչքի է ընկնում իր մինարէներով, թէև տներն ու փո-  
ղոցներն անշուք են և անկանոն. մզկիթներից նշանաւոր է Ուլու-  
շամին, որն առջ կեղեցի է եղել:

Բայրուրդում կան 400 տուն հայեր, որոնց գլխաւոր պա-  
րապմունքն է առևտուրը և արհեստները. արհեստներից առանձին  
կատարելագործութեան հասել է ոսկերչութիւնը: Բայրուրդցի հայ  
ոսկերչի պատրաստած արծաթեայ զարդերը վաճառքի են հան-  
ւում նոյն իսկ շատ հեռաւոր տեղեր: Հայերն ապրում են չորս  
թաղերում իրենց չորս եկեղեցիներով, նրանք ունին երկու դպրոց,  
որոնցից մէկը տղայոց է, իսկ միւսը աղջկերանց:

### Վիճակագիր Բայրուրդի գաւառի հայ ժողովրդի 1)

№	Գ Ի Ի Ղ Ե Ր Ը	Հայ տ ու ն	Մանկ. տուն
1	Բայրուրդ . . . . .	400	2200
2	Ալմշկայ . . . . .	9	17
3	Առիւծկայ . . . . .	45	
4	Աւերակ . . . . .	110	90
5	Բլուր . . . . .	75	225
6	Բլրակ . . . . .	65	
7	Գրչի . . . . .	50	30
8	Երկի . . . . .	80	
9	Թոմնայ . . . . .	30	20
10	Լրահոնք . . . . .	120	2
11	Սայէք . . . . .	45	10
12	Սնձաւերակ . . . . .	10	25
13	Սուրս . . . . .	90	5
14	Կիվ . . . . .	26	14
15	Հընաի . . . . .	65	35
16	Մալասա . . . . .	45	30
17	Նիլ . . . . .	40	210
18	Պալախոռ . . . . .	100	140
19	Սարածիւղ . . . . .	10	40
20	Ջահմանց . . . . .	60	40
21	Սըզրճի . . . . .	25	20
22	Ս. Թորոս . . . . .	60	40
23	Վարդահան . . . . .	90	
24	Թումէլ . . . . .	25	20
25	Թուշաի . . . . .	25	15
26	Փնջրկայ . . . . .	15	25
27	Քարավարակ . . . . .	185	
28	Քսանթաց . . . . .	158	
29	Քրիստիսի . . . . .	2	38
30	Օձտեղ . . . . .	42	40
		<b>2102</b>	

1) Այս տեղեկութիւնները քաղել ենք Կարինի առաջնորդարանից:

## ՍՊԵՐԻ ԳԱԻԱՌ

Ճօրօխ գետի միջին հոսանքի վրա ընկած է Սպերի գաւառը, որն արևմտեան կողմից սահմանակից է Բայրուրդի գաւառին, իսկ արևելքից Կիսկիմի գաւառին:

Երկրի կազմութիւնը հիւսիսային և հարաւային սահմանների մօտ լեռնային է և տեղ տեղ անտառապատ, իսկ գաւառի միջին մասում, որտեղից Ճօրօխն է հոսում, կան գեղեցիկ գաշտավայրեր և բարերեր հովիտներ հացահատիկների մշակութեան, այգեպանութեան և պարտիզպանութեան համար:

ժողովրդի պարագմունքների մէջ երկրագործութեան, պարտիզպանութեան, այգեպանութեան և անասնապահութեան շարքում որոշ տեղ է բռնում նաև մեղաբուծութիւնը. բուսականութիւնով հարուստ ծաղկաւէտ լեռները ամենայրմար վայրն են հանդիսանում գիւղատնտեսական այդ ճիւղի համար: Ինչպէս Բայրուրդի, այնպէս էլ Սպերի գաւառում ժողովրդի անտեսութեան մէջ խոշոր տեղ է բռնում մեղրի և առանձնապէս մեղրամոմի արտահանութիւնը:

Սպերի գաւառում կայ 134 գիւղ. դրանցից հայաբնակ են միմիայն 18-ը, որոնք աչքի են ընկնում իրենց սակաւամարդութեամբ. դրանցից ամենամեծն է Մանցը, որն ունի ընդամենը 45 տուն բնակիչ. միւս գիւղերն աւելի ևս փոքր են:

Գաւառի կենտրոնավայրն է Սպեր ավանը, որը գտնւում է Ճօրօխի աջ ափին. սա ունի 340 տուն բնակիչ, որի միայն 40-ը հայեր են:

## Վիճակագիր Սպերի գաւառի հայ ժողովրդի 1)

№	Գ Ի Ի Ղ Ե Ր Ը	Հայ տ ու ն	Մահմեդ. տուն
1	Գասապա . . . . .	40	300
2	Մանց . . . . .	45	
3	Կաժ . . . . .	18	
4	Վարիզոնց . . . . .	17	22
5	Միզրիկ . . . . .	35	50
6	Խողաղբուր . . . . .	30	16
7	Դշաձոր . . . . .	15	11
8	Յիլէն . . . . .	40	20
9	Քրէօղ . . . . .	18	20
10	Հունուտ . . . . .	40	300
11	Ձինաջուր . . . . .	35	10
12	Էղեձոր . . . . .	12	3
13	Տղանց . . . . .	22	12
14	Շէհրիստանց . . . . .	15	
15	Օձուտ . . . . .	5	4
16	Ճիպոտ . . . . .	40	
17	Հողեկ . . . . .	4	12
18	Ջուրակինց (Ղրակոյս) . . . . .	15	20
		446	

1) Այս տեղեկութիւնները բաղել ենք Կարինի առաջնորդարանից:

### ԿԻՍԿԻՄԻ ԳԱԻԱՄ

Կիսկիմի գաւառն ընկած է Ճօրօխի միջին հովիտների վրա, Սպերի սահմաններից սկսած մինչև ուղւայ սահմանը:

Գա մի փոքրիկ գաւառ է և ունի ընդամենը 68 զիւզ. գաւառի կենտրոնավայրն է Կիսկիմ աւանը, որը գտնւում է Ճօրօխի աջ ափին, նրա գետակներից մէկի վրա:

Կիսկիմի գաւառում կան միմիայն վեց հայաբնակ գիւղեր. զրանք են՝ Սոտըջուրը, Կարմրակը, Գասապան, Փրթիկները, Նիխախը և Կոււարաշէնը: Այս գիւղերից վերջին չորսը փոքր են, իսկ առաջին երկուսը մեծ:

Կարմրակն ունի 150 տուն ընակիչ, որոնք գուտ կաթօլիկներ են. գիւղը գտնւում է Ճօրօխից դէպի հարաւ մի բարեբեր տեղում, ուր ժողովուրդը պարապում է հողագործութեամբ և այգեպանութեամբ. բացի այդ, կարմրակցիները Ճօրօխի ափին ունին խաղողի այգիներ և պտղատու պարտէզներ, որոնք կազմում են նրա ապրուստի գլխաւոր աղբիւրներից մէկը:

Աւելի մեծ և աւելի ուշադրութեան արժանի է Սոտըջուրը. սա մի գիւղ չէ, այլ գիւղերի կամ մեծ մեծ թաղերի մի խումբ, որը գտնւում է Ճօրօխից դէպի հիւսիս, համանուն գետակի վրա, շրջապատւած Պարխարեան լեռների մի քանի անտառապատ գաղթներով:

Սոտըջուրը բաղկացած է 7 թաղերից, զրանք են՝ Սանդաձորը, Սուսնացը, Կազմխուտը, Գեղուտը, Ճիճապաղը, Կիսակը, Կրմանը, որոնք միասին ունին 850 տուն ընակիչ. սրանք գուտ կաթօլիկներ են: Այստեղի հայերը վերին աստիճանի աշխատասէր են. Ճօրօխի երկու ափերի վրա ունին հացահատիկների արտեր, խաղողի այգիներ և դեղձի, թուզի ու նոխի տնկարաններ. բացի այդ, Մեծ-սար կոչւող լեռան ստորոտներում ունին աներ ու գոմեր յատկապէս անասնապահութեան համար: Այսքանով չբուսականացած Սոտըջուրցի տղամարդկանցից շատերը փող վաստակելու նպատակով դիմում են պանդխտութեան. Ռուսաստանում սրանք յայտնի են իբրև լաւ հացագործներ:

Իրենց կենցաղով Սոտըջուրցիները շատ աւելի բարձր են կանգնած, քան նրանց շրջապատող այլազգի ժողովուրդները. տները գեղեցիկ են, մեծ մասամբ երկյարկանի և ծառադարձ,

ապրուստով ու հագուստով վայելուչ, հաւատալիքների մէջ խտապահ. իւրաքանչիւր թաղ ունի իր եկեղեցին և մատուռը. տարւայ մէջ մի քանի անգամ ածնական հանդէսներ են կատարում և կեր ու խում անում և շնորհիւ այս բոլորի Սոտըջուրը շրջակայ բնակիչների կողմից արժանացել է «Պատիկ Հում» կոչման:

Վիճակագիր Կիսկիմի գաւառի հայ ժողովրդի 1)

№	Գ ի ի Ղ Ե Ր Ը	Հայ տ ու ն	Մահմեդ. տուն
1	Սոտըջուր — թաղերը . . . . .	850	
	1) Սանդաձոր . . . . .		
	2) Սուսնաց . . . . .		
	3) Կազմխուտ . . . . .		
	4) Գեղուտ . . . . .		
	5) Ճիճապաղ . . . . .		
	6) Կիսակ . . . . .		
	7) Կրման . . . . .		
2	Կարմրակ . . . . .	150	
3	Գասապա . . . . .	15	
4	Փրթիկներ . . . . .	30	
5	Նիխախ . . . . .	7	
6	Կոււարաշէն . . . . .	40	
		1092	

1) Այս տեղեկութիւնները քաղել ենք Կարինի առաջնորդարանից:

### ԹՕՐԹՈՒՄԻ ԳԱԻԱՌ

Իրավունքազուրկ լինելու հիւսիսային լանջերից սկիզբն է առնում Թօրթում գետը, որը հիւսիս-արևելեան ուղղութեամբ հոսելով, ուսուական սահմանի մօտերքում թափուեմ է Ճօրօխի մէկ մեծ ճիւղը կազմող Օլթի գետի մէջ:

Ահա Թօրթում գետի և նրա բազմաթիւ վտակների հոսանքի վրա ընկած է Թօրթում գաւառակն իր մանր ու մեծ գիւղերով:

Թօրթումն իր աշխարհազրական և կլիմայական պայմաններով մի հետաքրքիր վայր է: Երկիրը պատած է լեռներով ու ձորերով, պճնազարդ ձորանովիտները և սուր սուր կատարները նրան տալիս են գեղեցիկ տեսք: Բազմաթիւ մեծ ու փոքր վտակներ մայր գետով հանդերձ աջ ու ձախ ափօտում են երկիրը, իրենց գետաբերաններում հիւրընկալելով պտղատու պարտէզներ և խաղողի այգիներ:

Իրրև բնութեան զարդ, գաւառի կենտրոնում գտնուեմ է Թօրթումի լիճը, որը թէև նեղ է, բայց երեք ժամի չափ երկարութիւն ունի: Նրա ափերը ժայռոտ են ու բարձր, տեղ տեղ շեշտակի ջրի մէջ կախած. այդ ժայռոտ ափերի մէջ նա սնուցանուեմ է համեղ ձկներ և իր կոհակների միջով ճանապարհ տալիս Թօրթում գետին, որը լճի հարաւային ծայրից մտնուեմ, հիւսիսային ծայրից դուրս է գալիս: Բնութեան մի այլ զարդ կազմուեմ է Թօրթում գետի ջրվէժը. լճից դուրս գալով մի քառորդ ժամի չափ դէպի հիւսիս-արևելք, 40 մետր բարձրութիւնից գետը թափուեմ է ժայռերի վրա և շրջակայքը աղմկուեմ իր շառաչուեմով: Այսպիսի գեղեցիկ ջրվէժ բնութիւնը քիչ է հրաշակերտել մի այլ տեղ:

Թօրթումի բնական կերտւածների վրա կան բազմաժամարդկային ձեռքի կերտւածներ. գաւառակը հարուստ է հին բերդերով, այդ բերդերից նշանաւոր է Թօրթում գիւղի բերդը, որի բնութիւնից կերտւած կարծր ժայռերի վիթխարի պատւանդանը հրմայք է ազդուեմ մարդուն:

Թօրթումի գաւառակն իր ֆիզիքական կազմութեան շնորհիւ զուրկ է դաշտավայրերից և աղքատ է հացահատիկներով, բայց նա հարուստ է ծառապտուղներով, որոնցից աչքի են ընկնուեմ ծիրանը, սալորը, թութը, ընկոյզը և խաղողն իր տեսակներով, որոնք մեծ քանակութեամբ արտահանուեմ են էրզրում և շրջակայ գա-

ւառները ու փոխանակուեմ գրամով ու հացահատիկներով: Եթէ Բասէնը հանդիսանուեմ է էրզրումի հացի շտեմարանը, Թօրթումը հանդիսանուեմ է մրգեղէնի շտեմարան:

Թօրթումի գաւառակն ունի 73 գիւղ, որից 13-ը հայաբնակ են: Հայաբնակ գիւղերից նշանաւոր են.

Քյլսան իր բազմամարդութեամբ, որն ունի 800 բնակիչ:

Սարխուն իր հնութիւններով. այստեղ գտնուեմ է գեղեցկաշէն Ս. Աստուածածնի վանքը իր բազմաթիւ մատուռներով:

Վիճակագիր Թօրթումի գաւառի հայ ժողովրդի 1)									
№	Գ	Ի	Ի	Ղ	Ե	Ր	Ը	Հայ ս ու ն	Մահեղ. տուն
1	Սարխու	.	.	.	.	.	.	467	210
2	Շիփէք	.	.	.	.	.	.	250	46
3	Պար	.	.	.	.	.	.	24	130
4	Ռապատ	.	.	.	.	.	.	95	
5	Քարընկոս	.	.	.	.	.	.	60	
6	Կօչանս	.	.	.	.	.	.	176	
7	Վախթիկանս	.	.	.	.	.	.	80	75
8	Սողարակ	.	.	.	.	.	.	104	
9	Նորշէն	.	.	.	.	.	.	300	6
10	Քյլսա	.	.	.	.	.	.	800	
11	Ապունէս	.	.	.	.	.	.	280	
12	Գօրքէր	.	.	.	.	.	.	89	
13	Վերին գեղ	.	.	.	.	.	.	104	245
								2829	

1) Այս տեղեկութիւնները քաղել ենք էփրիկեանի Բնաշխարհիկ բառարանից:

### ԲԱՅԱԶԷՏԻ ՍԱՆՉԱԿ

Բայազէտի սանջակը բռնում է էրզրումի վիլայէթի հարաւարեկիւան մասը, սահմաններ ունենալով հիւսիսից Ռուսաստանը, արեւելքից Մալեի խանութիւնը, հարաւից Վանի վիլայէթը, արեւմուտքից Բիթլիսի վիլայէթը, իսկ հիւսիս-արեւմուտքից Բասէնի գաւառը:

Սանջակի բնական սահմաններ կազմում են հիւսիսից Արարատեան լեռնաշղթան իր ամբողջ երկարութեամբ մինչև Քօսադաղ լեռը, իսկ հարաւից Թանդուրէքի, Ալադաղի և Կարտանի լեռները:

Բայազէտի սանջակը բազկացած է հինգ գաւառներից, զրանք են՝ Բայազէտի, Դիաղինի, Կարաքիլիսէի, Թօփրագ-կալէյի կամ Ալաշկերտի և Պագնօսի գաւառները:

### ԲԱՅԱԶԷՏԻ ԳԱԻԱՌ

Մեծ Արարատի հարաւ-արեւմտեան լանջերից սկսում է մի ընդարձակ դաշտավայր, որը Չընդլ կոչւող կատարի փէշերից տարածելով մինչև Թանդուրէքի փէշերը, ունի աւելի քան 20-25 վերստ երկարութիւն և նոյնքան լայնութիւն: Դաշտի միջին մասը ծածկւած է լճերով, ճահիճներով և եղէգնուաներով, իսկ մնացեալ մասերը ներկայացնում են խոտհարքեր և վարելահողեր. այդ դաշտը կոչւում է Գոնաւուկի դաշտ. դաշտի մէջ բարձրանում է ժայռոտ կողերով մի մեծ լեռ, որը տարածում է իր լանջերը դէպի արեւմուտք. դա Արծափքար լեռն է:

Արարատից դէպի արեւմուտք լեռնաշղթայի բարձունքներում, Մինէկի և Կրզ-Ջիարէթի լեռների մի խորունկ հովտում ներհում է Բալղ-գեօլը, պատմական Գայլատու լիճը. դա, կարծէք այդ լեռների գերած կոյսը լինի, որն անօրբ ծփալով, բախում է իրեն օդակի պէս շրջապատող լեռնանման ամերին և փրկութիւն չը գտնելով, իր կուսական ողբն է ողբում: Բալղ-գեօլը գտնւում է ծովի մակերևոյթից 7,400 ոտնաչափ բարձրութեան վրա, կից սուսաց սահմանին. նրա երկարութիւնը կը լինի ոչ պակաս 10 վերստից, իսկ լայնութիւնը 4-5 վերստ: Նրա ջուրը մտնում է, ստոր և

քաղցրահամ. նրա ձուկը առատ է ու համեղ, որի շահագործումը սրբում է կապալով յօգուտ գանձարանի: Լճի հիւսիսային կողմում կայ մի փոքրիկ կղզի իր աւերակ վանքով. լճի վրա կայ մի փոքրիկ նաւակ ձկնորսութեան համար:

Բալղ-գեօլի ծագման մասին կայ մի սիրուն ավանդութիւն:

— Այս լեռների գոգում շատ առաջ ծով չը կար, այլ կար մի աննման աղբիւր, որի ակը միշտ գոցւած էր լինում. ամեն անգամ հարս ու աղջկերք ջրի դնալիս ակը պիտի բացէին և կուժը լցնելուց յետոյ նորից գոցէին. մի անգամ երկար, շատ երկար տարիներ օտարութիւն գնացած մի երիտասարդ տուն վերադարձաւ. յոգնած ու քրանած եղբօր ոտները լանալու համար քոյրը ջրի վազ տւեց, բայց կուժը լցնելուց յետոյ այնպէս շտապ նա տուն դարձաւ, որ մտապաւ աղբիւրի ակը գոցել և երբ եղբօր ոտները լաց, նրան հաց տւեց և քացը դրոյցներով զարիւր եղբորից իր կարօտն էր առնում, մէկ էլ էն տեսաւ, որ սար ու ձոր ջուրը բռնել էր. քոյր ու եղբօր կարօտի ժամերն այնքան էին երկարել, որ փոքրիկ աղբիւրի փոքրիկ ակից մի ծով էր գոյացել:

Ահա այսպիսի լեգենդական ծագում ունեցող Բալղ-գեօլի հարաւ-արեւելեան ծայրից հասում է մի գետակ, որը լեռնանցքերից ոլորապատոյա իջնելով գիմում է դէպի Գոնաւուկի դաշտը և արտերն ու խոտհարքերը սոսոկելով, գնում ծծւում է ճահիճների մէջ. դա Բալղ-չայ գետակն է:

Բալղ-չայ գետակի հովիտների, Գոնաւուկի գաշտի և նրան շրջապատող լեռնալանջերի վրա ընկած է Բայազէտի գաւառը կամ պատմական Կոգովիար:

Այժմ այդ գաւառն առանձին հրապոյր չունի. նրա գեղեցիկ լանջերը, սիրուն հովիտներն ու բերրի դաշտերը բռնւած են կուլտուրային խորթ քուրդ տարրերով, որոնք զբաղւում են մասամբ երկրագործութեամբ և մասամբ խաշնարածութեամբ:

Գաւառում հաշւում են 110 գիւղ, որոնցից միմիայն 3-ը հայաբնակ են. հայկական հնութիւններով լի այս շրջանում, մի ժամանակեայ գուտ հայաբնակ այս գաւառում այժմ կան ընդամենը 3 հայաբնակ գիւղեր. այս գաւառի քրդերը պատկանում են գլխաւորապէս Ջալալցիների ցեղին, որը մի բազմամարդ և վայրագ ցեղ է:

Հայաբնակ գիւղեր են Արծափը, Քօրունը և Մուսունը, որոնք

ընկած են Արարատեան լեռնաշղթայի Չընգլ ու Չօռ կոչւած գագաթները հարաւային ստորոտներում:

Այդ երեք գիւղերից ամենափոքրը Քօրունն է, որն ունի 30 տուն հայ և 30 տուն քուրդ բնակիչ:

Մուսունը զուտ հայաբնակ է և ունի 70 տուն բնակիչ. գիւղն ունի 20 կրպակներից բաղկացած շուկայ. այդ կրպակներից միմիայն 3-ը հայերին են պատկանում, իսկ մնացեալը պատկանում են բայազէտցի քրդերին:

Աւելի մեծ գիւղ Արծափն է. սա ունի 120 տուն զուտ հայ բնակիչ և գտնւում է Արծափքար լեռան ստորոտում, համանուն գետակի վրա: Գիւղը շրջապատւած է կիսաւեր հողէ պարիսպներով. Արծափը հնում եղել է բերդաքաղաք. 1828 թւի ուսու-տաճկական պատերազմից յետոյ շատերն այստեղից գաղթեցին: Գիւղն ունի բերրի հողեր, առատ ջուր և տաք ձորալանջեր, ուր 1877 թւի ուսու-տաճկական պատերազմից առաջ կային խաղողի այգիներ. այդ տեղերից մէկը մինչև այժմ էլ կոչւում է «Պարոնց այգի»: Բայազէտի պաշարումից յետոյ, երբ Տէր-Ղուկասովի բանակը յետ քաշեց, քրդերն այս տեղերում աւերմունքներ գործեցին: Այս երեք գիւղերի հայ ժողովրդի զրութիւնն այժմ էլ ծանր է և կի՛ն նա կարողանում է իր գոյութիւնը պաշտպանել, այդ էլ շնորհիւ նրա սովունութեան:

### Բ Ա Յ Ա Չ Է Տ

Թանգուրէքի հիւսիսային հեռաւոր լանջերի վրա, մի ժայռոտ ու բլրապատ տեղում ընկած է համանուն սանջակի կենտրոնավայր Բայազէտ քաղաքը: Նա երեք կողմերից շրջապատւած է Քարաքիթ, Արնաքար, Շարան-քարեր, Բալարան<sup>1)</sup>, Խլլլէք, Կօշարուլաղ և Թաքեարդաղ ժայռոտ գագաթներով. հիւսիսային կողմից միայն ազատ է քաղաքը, որտեղից բացւում է Գոնաւուկ դաշտի գեղեցիկ տեսարանը:

1) 1877 թւի պատերազմի ժամանակ Բայազէտի բերդում պաշարւած ուսու զօրքերին օգնութեան հասնող Տէր-Ղուկասովի բանակը այս լեռան վրայից առաջին անգամ թմրկահարութեամբ աւետեց իր գոյութեամբ պաշարւածներին. այդ օրից լեռը կոչւում է Բալարան սար:

Արնաքարի թեք կողերի վրա ցցւած են հին բերդի պարիսպները, Ծիրանաւորի և Ս. Գրիգորի կիսաւեր եկեղեցիները և հին մզկիթն ու մինարէն:

Բալարանի ստորոտում բացւող ձորի վրա ցցւած է այժմեան բերդը իր քարէ պարիսպներով, որի կենտրոնում բարձրանում են ճարտարարեստ պալատի մուտքերը, մզկիթն իր նկարէն գմբէթով և մինարէն իր 90 աստիճաններով: Այդ շէնքերն իրենց արտաքինով գեղարեստական գործեր են, զարդարւած արարական գրութիւններով, որոնք հաճոյք են պատճառում այցելուին և որոնք 1877 թւի ուսու-տաճկական պատերազմի ժամանակ գնդակներից և սոււճերից մեծապէս վնասել են: Այստեղ այժմ տեղաւորւած է փոքրաթիւ բերդապահ զօրքը և բանտը: Իրտում էք այդ գեղեցիկ շէնքերը, դիտում կեխտոտ բանտն ու զօրանոցը և տեսնում մի հակապատկեր անցեալի և այժմեայ մէջ:

Երկու շրջան կողք կողքի ցցւած են այդ ապառաժոտ կողերի վրա. հին բերդը հայկական ծագում ունի. դա պատմական Գարոյնք ամրոցն է. Բագրատունիների հայրենական կալւածքը, ուր սրահում էին տոհմական հարստութիւնները: Նոր բերդը 18-րդ դարի գործ է և հիմնւել է տաճիկների օրօք, թէև ճարտարապետը հայ է եղել. մի գեղեցիկաշէն մատուռի գետնափոր յատակում գտնւում է այդ գեղեցիկ շէնքերի հիմնադիր Մահմադ փաշայի և նրա կնոջ գերեզմանը մարմարեայ տապանաքարերով զարդարւած: Այս բերդը անցեալ տարում երեք անգամ սուսների ձեռքն անցաւ. և երեք անգամ էլ յետ արւեց՝ առաջին անգամ 1828 թւին, երկրորդ անգամ 1854 թւին. իսկ երրորդ անգամ 1877 թւին. վերջին գրաւման նւիրւած է Բաֆֆու «Թենթ» վկայը: Իւրաքանչիւր անգամ ուսուաց յետ քաշելը վերջացել է հայկական կոտորածներով և գաղթերով. մահմեդական խուժանն իր վրէժը թափում էր խաղաղ հայ ժողովրդի գլխին և այն Բայազէտը, որը անցեալ դարի սկիզբներին աւելի քան 1700 տուն հայ բնակիչ ունէր, այժմ հալու երկու-երեք հարիւրի է հասնում նրանց թիւը:

Այժմ Բայազէտն իրրե քաղաք, ներկայացնում է ծուռ ու մուս փողոցների և անշուք աների մի գանգաւ, փոււած նոր բերդի տակ խորդ ու բորդ բլուրների վրա: Նա բաղկացած է չորս թաղերից. զրանք են Աւղիգետի, Նարաբէլօյի, Վրոբշիկների և Ծիրանաւորի թաղերը: Քաղաքն ունի մօտ 1,000 տուն բնակիչ,

որի 350-ը հայեր են, իսկ մնացեալը տաճիկներ և քրդեր. հայերն ապրում են գլխաւորապէս Աւզիզիօռի թաղում:

Հայերի բարբառը, նիստն ու կացը, հագուստն ու կերակուրները, յատուկ անուանները և ընտանեկան հանդէսներն իրենց խնամախօսութիւններով և հարսանիքներով զարմանալի կերպով յիշեցնում են ուստական Նոր-Բայազէտ քաղաքի հայ ժողովրդի կենցաղը 30-40 տարի առաջ: Այստեղից գաղթելով Նոր-Բայազէտ, գաղթական հայերը ոչ միայն իրենց հետ տարան հին կենցաղը, այլև նոր հայրենիքում ստեղծեցին իրենց համար հին վաթանի ուխտատեղիները, այն է՝ Ծաղկավանքը, Թուխմանուկը և Սաւաւ-ճաճինը: Բայց այստեղ ուստական կուլտուրան նրանց արագ կերպով առաջ բռնեց, մինչդեռ Հին-Բայազէտը մնաց քարացած իր տեղում և անշարժ իր սովորութիւնների մէջ:

Այստեղի հայերը շատ ճարպիկ և յարմարուղ են, որի շնորհիւ կարողացել են իրենց գոյութիւնը պահպանել. նրանք լաւ վաճառականներ են և լաւ արհեստաւորներ: Շուկան, որը բաղկացած է 200 խանութներից և կրպակներից, մեծ մասամբ գտնւում է հայերի ձեռքում. ազգաբնակչութեան մնացեալ մասը պարապում է երկրագործութեամբ և անասնապահութեամբ:

Հայերն ունին երկեսո դպրոց մօտ 300 աշակերտ-աշակերտուհիներով. դպրոցի շէնքը և ներքին կարգերը աւելի շուտ խալիֆայական են:

Բայազէտում նստում է մութասարիֆ, հայերի առաջնորդական փոխանորդ և ուստական հիւպատոս:

Վիճակագիր Բայազէտի գաւառի հայ ժողովրդի					
№	Գ Ի Ի Ղ Ե Ր Ը			Տուն	
1	Արձափ	.	.	.	120
2	Քօրուն	.	.	.	30
3	Մուսուն	.	.	.	60
					210

### Դ Ի Ա Դ Ի Ն Գ Ա Ի Ա Ռ

Ալազաղի լեռնաշղթայի հիւսիսային ծաղկաւէտ և ջրառատ լանջերից սկիզբն է առնում Արեւելեան-Եփրատը, որը Դիաղինի մօտ ընթացքը դարձնելով դէպի արեւմուտք, հոսում է քերելով Նպաս լեռան ստորոտները, իսկ Կարաքիլիսէի մօտերքը, ընդունելով իր մէջ Շէռեանը և մի քանի այլ գետեր, թեքւում է դէպի հարաւ և Դութաղի մօտով դիմում Մանազկերտ:

Եփրատի վերին հոսանքը մի քանի անուաններ ունի. նա կոչւում է նաև Արաձանի, Մուրաղ, բայց մենք նրան կը անւանենք Եփրատ:

Եփրատի վերին հոսանքի վրա գտնւում է Դիաղինի կամ պատմական Ծաղկոտան գաւառը, որն ունի մեզ համար պատմական նշանակութիւն:

### Դ Ի Ա Դ Ի Ն

Բայազէտից դէպի արեւմուտք 37 վերստ հեռաւորութեան վրա, Եփրատի աջ ափին գտնւում է գաւառի կենտրոնավայր Դիաղին աւանը: Այստեղ և այստեղից դէպի վեր Եփրատն ունի հմայիչ տեսք. երկու ափերը, որպէս լեռ քարերի վիթխարի ձուլւածքներ, շեշտակի բարձրանում են վեր, ինչպէս պարիսպներ, մէջտեղ թողնելով մի անցք Եփրատի կոհակների համար. այդ ձուլւած կողերը և բարձր են և զեղեցիկ և տպաւորիչ. կարծէք մարդկային ձեռքը հղկիչ գործիքներով հղկել է այդ քարափ պարիսպները:

Ահա մի այդպիսի ափի վրա մտնում են գետ ևս Դիաղինի հինաւուրց բերդի յետին մնացորդները, որոնք վկայում են ժամանակով այդտեղի ոսղմական վայր լինելու մասին:

Դիաղինն ունի 300 տուն քուրդ բնակիչ. նա արդիւնաբեր վայր չէ, բայց գտնւելով Տրապիզօնից Պարսկաստան տանող ճանապարհի վրա, ունի փոքրիկ շուկա և 40-50 կրպակներ: Այստեղ կան ընդամենը 15 տուն հայեր, որոնք եկել են Բայազէտից և պարապում են արհեստներով:

ԲՆԱՎԱՆ ԿԱՄՈՒՐՁԸ: Դիաղինից դէպի հարաւ մի ժամով

հետո գտնուում է բնութեան հրաշալիքներից մէկը, Եփրատի բնական կամուրջը. այդ կամուրջը կրային և ծծմբային կազմութիւն ունի. նրա հաստութիւնը, հետևապէս բարձրութիւնը կը լինի աւելի քան 10 սաժէն, իսկ լայնութիւնը դրանից էլ շատ. Տաթևի Սասանի-կամուրջ կոչուող բնական կամրջի համեմատութեամբ, սա մի հսկայ, մի հոյակապ շէնք է, որի տակով գալարուող Եփրատը հմայք և երկիւղ է ազդում: Կամրջի չորս կողմից բխում են բազմաթիւ տաք ու դոլ ծծմբային և կրային յատկութիւն ունեցող հանքային ջրեր. տեղ տեղ նրանք խփում են իրրև շատրւաններ, տեղ տեղ նրանք փոքրիկ բլուրներ են գոյացնում և տեղ տեղ դադարելով, մի այլ տեղից բխում. ամբողջ շրջակայքը ծծումբի հոտով է լցւած և ծծմբագոյն փոշիով ծածկւած: Եւ այդ ջրերի քարացումից առաջացած թմբիկներն իրենց մէջ սխնայն ծծումբ են պարունակում, որ նրանց կոշտերը կրակին մօտեցնելով, այրումն է տեղի ունենում և ծուխ ու հոտ բարձրանում:

**ԳԵՐՄԱԻԷ:** Բնական կամրջից մի փոքր վեր Եփրատի աջ ափին գտնուում է Դիաղինի հանքային ջրերի մեծ աղը, բայտ տեղացիները, գլխաւոր Գերմաւը: Դա իր տաքութեան աստիճանով և ջրի քանակութեամբ մի գտնձ է. ամառուայ երեք ամիսների ընթացքում գալիս են այդտեղ ոչ միայն մօտիկ շրջականերից, այլ և սահմանակից Ռուսաստանից, մնում են օրերով նոյն իսկ շարաթներով այդտեղ և օգտուում այդ ջրից, ի հարկէ առանց բնակարանային, ուտեստի և բժշկական յարմարութիւնների: Գլխաւոր Գերմաւին կալած մի կոնսձե բլրակի ծայրից խփում է մի տաք աղբիւր. ախներև է, որ այդ բլրակը գոյացել է ջրի քարացումից: Այդ բլրից մի փոքր հեռու գտնուում է մի այլ հանքային աղբիւր. գա օձերի Գերմաւն է, որի մէջ նոյնպէս լողանում են շատերը:

Գերմաւի գիւմաց, Եփրատի միւս ափին, մի բլուրի լանջում ընկած է Միրզաշանը, այս շրջանի Հայդարանցի ցեղի ստորաբաժան Շամսիցիների ցեղապետ Մամադ բէկի գիւղը, ուր գտնուում է նրա երկյարկանի սպիտակ տունը—գղեակը: Միրզաշանից փոքր ինչ ցած դարձեալ կան հանքային ջրեր և այդ ջրերից գոյացած բլրակներ ու ժայռեր: Հարկաւոր էր մի քաղաքակիրթ պետութեան ներկայութիւնը, որ այս շրջանը գտնար երկրագնդի խոշոր կուրօբաններից մէկը. և որչափ բնական հարստութիւններ թագնւած կան այս ամալի միջավայրում:

### ՈՒՉՔԻԻԼԻՍԷՅԻ ՎԱՆՔԸ

Դիաղինից դէպի հիւսիս-արևմուտք, 15 վերստ հեռաւորութեամբ, Եփրատի ձախ ափին գտնուում է պատմական Նպատ լեռը, իսկ Նպատի հիւսիսային ստորոտում համանուն գիւղին կից շինւած է հինաւուրց Բագաւանի Ս. Յովհաննիսի կամ Ուչքիլիսէյի վանքը: Սա հնում հռչակաւոր պաշտամունքի տեղի էր ոչ միայն քրիստոնէութեան, այլև հեթանոսութեան ժամանակ: Այստեղ առաջին անգամ Գրիգոր Լուսաւորիչը Եփրատի մէջ մկրտեց Տրդատ թագաւորին, հայոց մեծամեծներին և անաղին բազմութիւն. այստեղ տեղի են ունեցել կրօնական ժողովներ, օձեղ է կաթողիկոս Գանիէլ Սուրմառեցին, իսկ վերջին երկու դարերի ընթացքում համարուում էր Բագրեանդի առաջնորդութեան վայր:

Ուչքիլիսէյի վանքը մի հոյակապ շէնք է, թէև նրա ամուր պատերի մէջ գոյացել են լայն պատուածքներ: Վանքը շրջապատւած է բարձր և ամուր պարիսպներով նման ամրոցի պարիսպներին: Այժմ նա ծառայում է համանուն գիւղին իրրև եկեղեցի, թէև նրա պատերը մերկ են և զարդարանքներից զուրկ:

Վանքն առաջ ունեցել է ընդարձակ կալւածներ. այժմ էլ որքան նա կողոպուած և ամալի դարձած այնուամենայնիւ ունի անաղին քանակութեամբ բերրի վարելահողեր և խոտհարքեր, որոնք գտնւելով Եփրատի ափերի վրայ ոռոգւում են նրա ջրով: Բացի այդ, վանքն ունի չորս աչք ջրաղաց և բաւականաչափ կենդանիներ զաշտային աշխատանքների համար:

Վանքն ունի մի փոքրիկ և խղճուկ գպրոց, ուր սովորում են մի երկու տասնեակ մանուկներ:

Դիաղինի գաւառն ունի 78 գիւղ, որից 7-ը միայն հայաբնակ են. այս գաւառում էլ կան բազմաթիւ աւերակներ և գիւղերի հետքեր, ուր ապրելիս են եղել հայեր. այժմ ախուր յիշատակները միայն ցցւած են այս ու այն տեղ:

Հայաբնակ գիւղերից 5-ը, այն է, Ուչքիլիսէն, Կարաբագարը, Գուճուպուճախը, Սէյգօն և Զուջանը գտնուում են վանքի շրջակայքում և կարծէք իրենց գոյութիւնը պահում են շնորհիւ վանքի: Այս գիւղերում քրդական հալածանքներն անվերջ են եղել. դեռ մօտիկ անցեալում, 1904 թւին, գինւած մի խումբ հայերի այդ կողմերում երևալու պատճառով յիշեալ գիւղերը կողոպուե-



ցին և 10-15 հոգի սպանւեցին. այդ բաւական չէր, վանքի մօտ կառավարութիւնը շինեց մի զօրանոց և մինչև սահմանադրութիւնը այգտեղ պահում էր զօրք, որը մի մեծ պատուհաս էր դարձել խեղճ զիւղացիների գլխին:

Վիճակագիր Դիաղինի գաւառի հայ ժողովրդի 1)		
№	Գ ի ի Ղ Ե Ր Ը	Տուն
1	Դիաղին . . . . .	15
2	Ուչքիլիսէ . . . . .	27
3	Կարաբազար . . . . .	20
4	Սէյդօ . . . . .	7
5	Ջուջան . . . . .	45
6	Միրզաջան . . . . .	7
7	Գումլուպուճախ . . . . .	35
		156

1) Այս տեղեկութիւնները բազել ենք Կարինի առաջնորդարանից:

## ԿԱՐԱՔԻԼԻՍԷԻ ԳԱԻԱՌ

Դիաղինի գաւառից զէպի արևմուտք Եփրատի երկու ափերի վրա գտնուում է Կարաքիլիսէի գաւառը. սա Բայազէտի սանջակի հինգ գաւառներից ամենամեծն է. ունի 155 գիւղ, որի 10-ը միայն հայաբնակ են:

Գաւառը յայտնի է իր բարերեր հողերով, ուր մշակւում են գլխաւորապէս հացահատիկներ. Եփրատն իր մէջ թափւող Դաշլիչայ, Կարասու և այլ գետերով ոռոգում է նրա տափարակները, բայց երկրագործական աշխատանքներին անընդունակ քուրդ տարրի շնորհիւ գաւառը անտեսապէս ոչ միայն չի յառաջադիմում, այլև յետադիմում է. իսկ աշխատակէր և ընդունակ հայ ժողովրդին քրդական հալածանքներն ու կեղեքումները հնարաւորութիւն չեն տալիս երկրագործական կուլտուրան առաջ տանելու, մի երևոյթ, որն ընդհանուր է այդ գժբախտ երկրում:

## ԿԱՐԱՔԻԼԻՍԷ

Եփրատի աջ ափին գտնուում է գաւառի կենտրոնավայր Կարաքիլիսէ աւանը. սա մեծ չէ, ունի ընդամենը 5-600 տուն բնակիչ, որից 350-ը հայեր են. բայց շնորհիւ այն հանգամանքի, որ նա գտնուում է Տրապիզոնից Պարսկաստան տանող ճանապարհի վրայ և այդ տեղով շարունակ անց ու դարձ են անում բազմաթիւ քարավաններ, այդ պատճառով նա հանդիսանում է իրրև բանուկ աւան, ունենալով իր շուկան և կենդանութիւնը: Կան պեղի քան 200 խանութներ, որոնց կէսը պատկանում է հայերին. արհեստները համարեայ ամբողջովին գտնուում են հայերի ձեռքում:

Գաւառում ապրող հայերի ընդհանուր թիւը հասնում է 600 տան, որի 350-ը, ինչպէս տեսանք, ապրում է Կարաքիլիսէյում, իսկ 250-ը՝ հայաբնակ 9 գիւղերում: Հայերի գլխաւոր պարագամունքն է երկրագործութիւնը: Հայաբնակ գիւղերից նշանաւոր են Եօնջալուն և Մանկասարը:

Եօնջալուն այժմ ունի 80 տուն բնակիչ. 20-30 տարի առաջ սա մի մեծ գիւղ էր հարուստ և հիւրասէր, Եօնջալեցի Գասպարի անունը յայտնի էր ամեն տեղ, նրա գոնից զուրս էր գալիս 7

գութան, նրա ցորենի հորերը տարին տասներկու ամիս լիքն էին լինում, օրական նրա տանը սեղան էին նստում տասնեակներով օտար մարդիկ, չը կար անցորդ, որ չը մանէր Եօնջալեցի Գասպարի տունը, չը կարէր նրա հացը և ապա անցնէր:

Թէև չափազանցութիւններով լի, բայց այս պատմւածքը որոշ չափով գաղափար է կազմել տալիս տնտեսական այն բարեկեցիկ վիճակի մասին, որի մէջ մի երկու տասնեակ տարիներ առաջ գտնուում էր այս շրջանը, մի շրջան, ուր այժմ թագաւորում է քաղցն ու թշուառութիւնը:

Վիճակագիր Կարաքիլիսէի գաւառի հայ ժողովրդի 1)		
№	Գ ի ի Ղ Ե Ր Ը	Տուն
1	Խաչիթափը . . . . .	7
2	Դաշլիչայ . . . . .	15
3	Կարաքիլիսէ . . . . .	350
4	Եօնջալու . . . . .	80
5	Չաղլու . . . . .	35
6	Զիրօ . . . . .	15
7	Մանկասար . . . . .	60
8	Մեղրէ . . . . .	40
9	Խրղըր . . . . .	2
10	Երանոս . . . . .	20
		624

1) Այս տեղեկութիւնները քաղել ենք Կարինի առաջնորդարանից:

### ԱՂԱՇԿԵՐՏԻ ԳԱԻԱՌ

Կարաքիլիսէի գաւառից դէպի հիւսիս և դէպի արեւմուտք տարածուում է մի ընդարձակ ու գեղեցիկ դաշտ. դաշտի սահմանները կազմում են հիւսիսից սուսաց սահմանը գծող Արարատեան շղթայի շարունակութիւնը, Փէրլի գագաթից սկսած մինչև Քօսադաղ լեռը, արեւմուտքից Բասէնի սահմանը գծող Դալիբարայի և Շէրիան լեռները, իսկ հարաւից Մէրգէմիր, Խալիաս և Կիւճ-գետուկի լեռները:

Ահա այս սահմաններում գտնուում է Ալաշկերտի գաւառը, որի անունով էլ դաշտը կոչուում է Ալաշկերտի դաշտ: Շրջակայ լեռներից բազմաթիւ վտակներ հոսում են դէպի դաշտը, ուր միանալով և մի բաւականաչափ մեծ գետ կազմելով, գնում թափուում են Եփրատի մէջ. դա Շէրեան գետն է:

Շնորհիւ առատ ջրերի, ընդարձակ ու հարթ մակերևոյթի և հողերի արդաւանդութեան Ալաշկերտի դաշտը հանդիսանում է մի բարեբեր վայր, ուր առատօրէն բուսնում են ընտիր հացահատիկներ և բանջարանոցային բերքեր: Դաշտը հրապուրիչ է իր տեսարաններով և կոկոթեամբ, բայց աւելի հրապուրիչ են նրան շրջապատող լեռները, ուր հարուստ բուսականութիւնը և զով արօտանդիւնները հանդիսանում են գեղեցիկ վայրեր անասնապահութեան և առանձնապէս խաշնարածութեան համար:

Գաւառը բաղկացած է 111 գիւղերից, որոնցից 12-ը միայն հայաբնակ են: Սա հնում գուտ հայաբնակ գաւառ էր. այդ են վկայում բազմաթիւ աւերակ գիւղերը և հայանուն քրդաբնակ գիւղեր: Այս գաւառի նկատմամբ մասնաւորապէս, Բայազէտի ամբողջ սանջակի նկատմամբ ընդհանրապէս անցեալ դարում տեղի ունեցած ուս-տաճկական պատերազմները աւերիչ հետեանքներ ունեցան. կոտորածին հետևում էր գաղթը, գաղթին՝ աւերմունքը և այսպէս շարունակ, որոնց շնորհիւ Ալաշկերտի պէս մի ընդարձակ գաւառում այժմ մնում են ընդամենը 12 խոճուկ գիւղեր: Ռուսական Նոր-Բայազէտի Ալաշկերտ գաւառամասում այժմ կան 20-30 բազմամարդ գիւղեր. դրանք բոլորը գաղթել են այստեղից 1828 թւին: Ոչ պակաս աւերիչ հետեանքներ ունեցան նաև վերջին երկու տասնեակ տարիների ընթացքում տեղի ունեցող սիստեմատիկ ջարդերն ու կողոպուտները:

Այսպիսի երևոյթներն ընդհանուր են հայկական վիլայէթներում. բայց այն, ինչ որ տեղի է ունեցել այստեղ, ուստաց սահմանին կից, բացառիկ է, բացառիկ իր ամայացումներով:

Հայաբնակ գիւղերից նշանաւոր են.

Ամատը աւելի քան 100 տուն բնակչով. սրա շրջակայքում կան հին բնակչութեան և հին բերդի հետքեր:

Զէտկանը 80 տուն բնակչով. սա հարուստ է բերրի հողերով, ունի գեղեցիկ դիրք և սիրուն տեսարաններ. գիւղի շրջակայքում կան հնութիւններ:

Սաստուրը աւելի քան 50 տուն բնակչով. սա գտնուում է Շէքեան գետի ձախ ափին, էրզրում տանող ճանապարհի վրա. հարուստ է հողերով ու ջրերով: Գիւղի չորս կողմում տարածւած են բանջարանոցներ, պարտէզներ և ծառաստաններ: Գիւղի շրջակայքում կան նշանաւոր ուխտատեղիներ, բազմաթիւ աւերակներ և ընդարձակ հին գերեզմանատուն, որոնք վկայում են այդ շրջանի փառաւոր անցեալի մասին:

Հայաբնակ գիւղերից նշանաւոր են նաև Սաչլուն, Եխնի-թէփէն և Մօլլա-սուլէյմանը:

### ԹՕՓՐԱՂ-ԿԱԼԷ

Ալաշկերտի գաշտի հիւսիսային եզրերին, որտեղից սկսւում է Շահգեօլի վերելքը, մի բանաստեղծական դիրքի վրա գտնւում է գաւառի կենտրոնավայր Թօփրաղ-կալէ բերդաքաղաքը. սա, իբր, երկրորդ դարի վերջերում Արտաշէս Բ-ի թոռ Վաղարշի ձեռքով հիմնած Վաղարշակերտն է:

Քաղաքի հիւսիս-արևմտեան կողմում գտնուող մի բլուրի վրա շինւած է հինաւուրց բերդը, որի քարերն այժմ նիւթ են ծառայում նոր շինուող տների համար: Բերդի հարաւային ստորոտում կան բազմաթիւ աւերակ շէնքեր, որոնք, իբր, նախկին ընդարձակ շուկայի մնացորդներն են: Բերդից մի փոքր հեռու, դէպի հարաւ և արևմուտք նոյնպէս կան աւերակներ և մեծ շէնքերի մնացորդներ. աւերակների հետքեր կան նաև բերդի այլ և այլ կողմերում. այդ բոլորը միասին վկայում են մի ժամանակ այդտեղ եղած մի մեծ քաղաքի գոյութեան մասին: Բայց չը նայած այդ

փառաւոր անցեալին և այն գեղեցիկ դիրքին ու բարերբ միջավայրին, ուր գտնուում է քաղաքը, նա այժմ ներկայացնում է մի խղճուկ պատկեր:

Քաղաքն ունի 500 տուն բնակիչ, որից 200-ը հայեր են, իսկ մնացեալը քրդեր և տաճիկներ են: Շուկան բաղկացած է 50-60-ի չափ մանր մուշր կրպակներից: Հայերը պարապում են գլխաւորապէս երկրագործութեամբ, իսկ փոքր մասը՝ տուտրով ու արհեստներով: Ինչպէս ամեն տեղ, այնպէս էլ այստեղ վերջին երկու տասնեակ տարիների սոսկալի զէպքերը մեծ փրաններ հասցրին առևտրին, երկրագործութեանը և ընդհանրապէս երկրի տնտեսութեանը:

Վիճակագիր Ալաշկերտի գաւառի հայ ժողովրդի 1)		
№	Ք Ի Ի Ղ Ե Ր Ը	Տուն
1	Ղայարէկ . . . . .	40
2	Զլկանի . . . . .	60
3	Աշխալէ . . . . .	10
4	Թօփրաղ-կալէ . . . . .	200
5	Սաչլու . . . . .	80
6	Ամատ . . . . .	100
7	Եխնի-թէփէ . . . . .	90
8	Երիցու-գիւղ . . . . .	40
9	Սաստուր . . . . .	55
10	Սօշեան . . . . .	5
11	Մօլլա-սուլէյման . . . . .	80
12	Զէտկան . . . . .	80
		<hr/> 840

1) Այս տեղեկութիւնները քաղել ենք Կարինի տաճնորդարանից:

### ԳՈՒԹԱՂԻ ԳԱՒԱՌ

Կարաքիլիսէի գաւառից զէպի հարաւ գտնուած է Գուլթաղի կամ Անթաղի գաւառը, սահմաններ ունենալով արեւմուտքից Մանազկերտի, հարաւից Ալջաւաղի և հարաւ-արեւելքից Արճէշի գաւառները:

Գաւառի միջով հոսում է Եփրատը, որն ընդունելով իր մէջ նորանոր գետակներ, շարունակում է իր ընթացքը զէպի Մանազկերտի սահմանները:

Գաւառը բաղկացած է 96 գիւղերից. վարչական կենտրոնավայր համարւում է Գուլթաղը, որն ընկած է Եփրատի աջ ափին, Կարաքիլիսէից զէպի հարաւ, 35 վերստ հեռավորութեան վրա: Դա ընդամենը 100 տուն ունեցող մի թշուառ գիւղ է, որի ընակիչները կարափափախներ են, Ռուսաստանի Օլթիի կողմերից այստեղ գաղթած:

Գաւառն ամբողջապէս բռնւած է Սիպկանցի և Հայդարանցի ցեղերին պատկանող քրդերով. հայերն այստեղ չնչին փոքրամասնութիւն են կազմում. զուտ հայաբնակ գիւղեր բոլորովին չը կան, այլ նրանք ապրում են քրդերի հետ խառը մի քանի տուն այս և մի քանի տուն այն գիւղում. պատճառները շատ հասկանալի են:

Գաւառում գտնուում է Պաղնոս աւանը. այդտեղ նստում է Հայդարանցիների ցեղապետ, Համիդէի գլխաւոր Հուսէին փաշան, արիւնարբու զազանների մի նմուշը, որը աւերեց ամբողջ Ալջաւաղը և կողոպտեց ամեն ինչ. այս շրջանի հայերից նրանք, որոնք ընդունակ են եղել այդ արիւնարբու հրէշի և նրա խուլափների զազանութիւնները լուռ ու մուռջ տանելու, միմիայն նրանք են մնացել այդտեղ, իսկ նրանք, որոնք անկարող են եղել տանել այդ զազանութիւնները, փախել են այդ շրջանից առանց յետ նայելու: Եւ շնորհիւ զրա մի ժամանակեայ բազմահայ գաւառում այժմ կան ընդամենը 200 տուն հայեր, որոնցից 50-ը ապրում են Պաղնոսում, այսինքն արիւնարբու Հուսէին փաշայի անմիջական լծի տակ, իսկ մնացեալը շող անցած ապրում են 21 քրդաբնակ գիւղերում, իբրև հայ ժողովրդի բեկորներ:

Երկրի դիրքը գեղեցիկ է, կլիման բարեխառն, ջուրն առատ, հողը բերրի և արօտները ծաղկաւէտ, բայց մշակութիւնն ու անտեսութիւնը ընկած է, որովհետև աշխատանքի փոխարէն այստեղ թագաւորում է թաւանի և կողոպուտի կուլտուր:

### Վիճակագիր Գուլթաղի գաւառի հայ ժողովրդի 1)

№	Գ ի ի Ղ Ե Ր Ը	Հայ տ ու ն	Մահմեդ. տուն
1	Պաղնոս . . . . .	50	100
2	Գուլթաղ . . . . .	6	100
3	Մըլան . . . . .	12	60
4	Մուսիկ . . . . .	5	80
5	Քօշկ . . . . .	13	100
6	Շամէ . . . . .	10	60
7	Նազարշէյի . . . . .	24	50
8	Խրրասօր . . . . .	19	70
9	Բազուն . . . . .	11	100
10	Ղարաքեօյ . . . . .	15	7
11	Ջամալվէրդին . . . . .	5	100
12	Մօլլա-հասան . . . . .	8	90
13	Խարխալըղ . . . . .	5	150
14	Մաթար . . . . .	2	100
15	Արարալի . . . . .	2	20
16	Աւջօ . . . . .	2	100
17	Ղարդալըղ . . . . .	5	50
18	Ասմար . . . . .	3	100
19	Մօլաշամդին . . . . .	1	80
20	Դէրըկ . . . . .	2	30
21	Խանըկ . . . . .	1	80
22	Բարդաւ . . . . .	2	30
		203	

1) Այս տեղեկութիւնները քաղել ենք Կարմէն վարդապետի յուշատետրից:

### ԵՐԶՆԿԱՅԻ ՍԱՆՁԱԿ

Երզնկայի սանձակը բռնուում է էրզրուումի վիլայէթի արեմտեան մասը, սահմաններ ունենալով հիւսիսից Տրապիզոնի, արեմուտքից Սըվազի, իսկ հարաւից Սարրերզի վիլայէթները:

Սանձակը բաղկացած է հինգ գաւառներից. դրանք են՝ Երզնկայի, Քեմախի կամ Կամախի, Կերճանիսի, Գուզիջանի և Գուրուչայի գաւառները:

Վերջին չորս գաւառներում ապրող հայ ժողովուրդը շատ սահմանափակ թիւ է կազմում. Երզնկայի մէջ և նրա գաւառում միայն ապրում են բաւականաչափ հայեր:

### ԵՐԶՆԿԱՅԻ ԳԱԽԱՌ

Դերջանի գաւառից դէպի արեմուտք Եփրատի հոսանքի վրայ գտնուում է Երզնկայի գաւառը: Հիւսիսից Սիպիօքի, արեմուտքից Գոհանամքի, հարաւից Մերջանի և արեւելքից Քէշիշղազ լեռները իրենց բլուրներով ու կուրծքերով շղթայ բռնած հակում են դէպի ցած, մէջտեղ թողնելով 7 ժամեայ երկարութեամբ և 3 ժամեայ լայնութեամբ մի ընդարձակ դաշտ, որի միջով Եփրատը հոսելով իր օժանդակ բազմաթիւ վտակներով ոռոգում է այդ դաշտը և անցնում գնում:

Դաշտը բարեբեր է ու ջրառատ, լեռները գեղեցիկ են ու խոտաւէտ, կլիման բարեխառն է տեղ տեղ լեռնային և տեղ տեղ դաշտային ու տաք: Եւ ահա բնութիւնից օժտւած բարեբեր դաշտի, ծաղկաւէտ լանջերի և բուսական գետահովիտների ու ձորահովիտների վրա փուլած Երզնկայի գաւառը արտադրում է ընտիր հացահատիկներ, բանջարանոցային բերքեր, սեխ, ձմերուկ և ծառապտուղներ, այն է խնձոր, տանձ, դեղձ, ծիրան, սերկևիլ, կեռաս, ընկոյգ. արտադրում է նաև ծխախոտ, խաղող, թուֆ, մեղր և բացի այդ ամեն տեսակի կենդանիներ: Գաւառի բնական հարստութիւնների և բազմապիսի բերքերի շնորհիւ առանձին կարևորութիւն է ստացել Երզնկայ քաղաքը թէ անցիալում և թէ այժմ:

Սանձակի հինգ գաւառներից ամենամեծը Երզնկայի գաւառն է. սա ունի 184 մեծ ու փոքր գիւղեր. հայաբնակ գիւղերի թիւը

հասնում է 31-ի, սակայն որոնցից մի քանիսում ապրող հայերի թիւը խիստ սահմանափակ է:

Իրենց բազմամարդութեամբ և տնտեսական կացութիւնով հայաբնակ գիւղերից նշանաւոր են՝ Մեղուցիկը, Մթննին, Եկանը, Մահմուդցիքը, Գիւլլիւճէն և մեծ Ագարակը:

Այս գիւղերից մի քանիսը, ինչպէս և Բթառիջը ունին գեղեցիկ ծառաստաններ, խաղողի այգիներ և պտղատու պարտէզներ, որոնք կազմում են ժողովրդի ապրուստի գլխաւոր աղբիւրը: Բերքերի և պտուղների մեծ մասը վաճառքի է հանուում Երզնկայի շուկան, ուր մթերքների մեծ սպառումն կայ:

### Ե Ր Զ Ն Կ Ա

Սանձակի վարչական կենտրոնավայր Երզնկա բերդաքաղաքը գտնուում է համանուն գաւառի բարեբեր գաշտի՝ արեմտեան մասում, Եփրատից դէպի հիւսիս մի քանի վերսա հեռաւորութեան վրա:

Սա պատմական անցքերով յայտնի մի շատ հին քաղաք է. հեթանոսութեան ժամանակ այստեղ գտնուում էր Յունաստանից բերւած Անահիտի մեհեանը, որի շնորհիւ դարերի ընթացքում քաղաքը հանդիսանում էր հեթանոս հայ ժողովրդի նւիրական սրշտամունքի վայր մինչև քրիստոնէութիւն ընդունելը: Սուրբ պատերազմներ տեղի են ունեցել դարերի ընթացքում այստեղ. Երզնկան փոփոխակի անցել է յոյների, պարսիկների, թաթարների և տաճիկների ձեռքը ամեն անգամ կողոպուելով, աւերելը և նորից շինելով: Սուրբ երկրաշարժներ պարբերաբար տեղի են ունեցել այստեղ դարերի ընթացքում, որից մի քանի անգամ տակն ու վրա է եղել քաղաքը, իր փլատակների տակ թողնելով հազարաւոր մարդիկ և նորից վերանորոգել:

Չը նայած այսբան փոթորկալից անցքերի և երկրաշարժների, որոնց շնորհիւ քաղաքը մի քանի անգամ տեղափոխութիւնների է ենթարկւել, այսօր էլ նա գաւառական քաղաք լինելով հանդերձ, հանդիսանում է Տաճկաստանի ասիական վաճառաշահ քաղաքներից մէկը:

Երզնկան բաւականին մեծ քաղաք է. նա ունի աւելի քան 4,000 տուն բնակիչ. քաղաքում շինուում են նորանոր տներ մի,

յաճախ երկու յարկանի, վայելուչ արտաքինով և յատուկ պարտէզներով ու ծառատաններով. խոշոր պաշտօնեաները և ունեւոր քաղաքացիները հայ թէ տաճիկ ունին իրենց յատուկ շէնքերը, կառավարութիւնը նոյնպէս ունի իր շէնքերը, որոնց մէջ աչքի է ընկնում զինւորական զպրոցի շէնքը: Քաղաքն ունի ընդարձակ շուկայ բազմաթիւ խանութներով, արհեստանոցներով և երեք հրապարակներով, ուր վաճառուում են զանազան տեսակի մթերքներ: Քաղաքում կան նշանաւոր բաղնիքներ, իջևաններ, զօրանոցներ, հիւրանոց և զօրքերի համար կօշիկների, զգեստների և այլ իրերի արհեստանոցներ:

Քաղաքի հարաւ-արեւելեան կողմում մի բարձր գիրքի վրա գտնուում է բերդը շինւած կարծր քարերից, ուր տեղաւորւած են զօրքերը և ուր պահուում են սաղմական բազմաթիւ հին իրեր: Բացի այդ, քաղաքում կան մի շարք հնութիւններ, որոնցից աչքի են ընկնում միջնաբերդը և նրա գեանանցքերը:

Երզնկայի այսքան տաաջ գնալուն նպաստել են զխաւորապէս երեք պայմաններ:

Նախ՝ գաւառն իր բազմապիսի բերքերով և արդիւնքներով հանդիսանում է քաղաքի ծաղկման առաջին ազգակը. հարուստ միջավայրը նրան շարունակ ձօխութեան մէջ է պահել:

Երկրորդ՝ բանուկ ճանապարհներով Երզնկան կապւած է Տրապիզօնի, Էրզրումի, Սըւվազի և Խարբերդի հետ, հանդիսանալով կարեւոր կէտ այդ քաղաքների հաղորդակցութեան համար:

Եւ երրորդ՝ Երզնկան համարուում է Օսմանեան զօրքերի 4-րդ զօրաբանակի բնակավայր, ուր գտնուող բազմաթիւ զօրքերի և զինւորականների ներկայութիւնը մեծ վարկ է տւել քաղաքին: Շնորհիւ այս բոլորի Երզնկայում ծաղկած դրութեան մէջ է ոչ միայն առևտուրը, այլև արհեստները:

Երզնկայում ապրող հայերի թիւը հաշուում են 1,500 տուն. այստեղի հայերը մեծ մասամբ պարապում են առևտրով և արհեստներով. նրանք շատ առաջ են գնացել մասնաւորապէս արհեստների մէջ. լաւ դերձակներ են, կօշկակարներ, ներկարարներ, ոսկերիչներ և առանձնապէս պղնձագործներ: Հայերի մէջ շատ տարածւած է նաև մանուսայ և մետաքսեղէն գործւածքները, որոնցով ապրուստ են հայթհայթում հարիւրաւոր ընտանիքներ:

Հայերն ապրում են չորս թաղերում և ունին չորս եկեղեցի:

կրթական հաստատութիւնների թիւը հասնում է 10-ի, ուր սովորում են աւելի քան 1,000 երկու սեռի մանուկներ:

Երզնկայի հայ ժողովուրդը ընդհանրապէս շատ սովուն է և ընդունակ և չը նայած տիրող ծանր պայմաններին նա անհամեմատ բարձր է կանգնած իրեն շրջապատող տարրերից:

## Թ Ի Լ Ա Ի Ա Ն

Երզնկայից դէպի հիւսիս-արևմուտք երկու ժամայ ճանապարհ հեռու գտնուում է պատմական Թիլ աւանը: Այստեղ քրիստոնէութիւնից առաջ շինւած էր Յունաստանից բերւած Նանէ գիցուհու մեհեանը, իսկ քրիստոնէութիւնը ընդունելուց յետոյ մեհեանը կործանեցին և նրա փոխարէն շինեցին վանքեր. այդ վանքերից նշանաւոր էր Կաթողիկէ կոչւածը, ուր թաղւեց Մեծն Ներսէսի մարմինը:

Այժմ պատմական Թիլ աւանը մի բոլորովին յետ ընկած գիւղ է, ուր ապրում են բացառապէս տաճիկներ:

Վիճակագիր Երզնկայի գաւառի հայ ժողովրդի 1)

№	Գ ի ի Ղ Ե Ր Ը	Հայ տ ու Ն	Մահմեդ. տուն
1	Սուրբ-Օհան . . . . .	17	5
2	Գօլչէքէնի-բալանկա . . . . .	10	
3	Մթննի . . . . .	85	
4	Կարմրի և Էսէսի . . . . .	22	70
5	Եալընըզպաղ . . . . .	3	100
6	Տընկետէկ . . . . .	3	10
7	Ախոռճուղ . . . . .	13	
8	Հայրապետի . . . . .	20	30
9	Շխլի . . . . .	9	61
10	Խնձորեկ . . . . .	30	25
11	Ս. Նիկողայոսի վանք . . . . .	2	
12	Բթառիջ . . . . .	50	100
13	Կարաքիլիսէ . . . . .	26	44
14	Աղճաքէնդ . . . . .	6	14
15	Ագարակ վերին . . . . .	42	
16	Կամուրջգլուխ . . . . .	4	1
17	Քուրդ . . . . .	1	30
18	Տաճրակ . . . . .	17	7
19	Եկան . . . . .	67	8
20	Կելենցիկ . . . . .	31	
21	Հոռոմ-ագարակ . . . . .	18	50
22	Ուռեկ . . . . .	5	40
23	Ծաթ . . . . .	52	10
24	Մեղուցիկ . . . . .	185	35
25	Կարաթուշ . . . . .	20	21
26	Մեծ-ագարակ . . . . .	57	58
27	Բզվան . . . . .	54	24
28	Մահմուդցիք . . . . .	67	
29	Ագարակ վարի . . . . .	23	2
30	Դարատեկին . . . . .	19	3
31	Գիւլլիւճէ . . . . .	66	
		1024	

ՔԵՄԱԽԻ ԳԱԻԱՌ

Երզնկայից գէպի հարաւ-արեւմուտք գտնուում է Քեմախի կամ պատմական Դարանաղեաց գաւառը:

Սա փոքրիկ գաւառ է, բայց հարուստ բերրի հողերով, ձոխ բուսականութեամբ և բերքերով ու պտուղներով: Գաւառի միջով հոսում է Արեւմտեան եփրատը առատօրէն ոռոգելով հովիտներն ու ձորահովիտները, որի շնորհիւ գաւառի շատ գիւղեր պճնագարդւած են պարտէզներով և ծառաստաններով:

Գաւառը բաղկացած է 89 գիւղերից. դրանցից 21-ը հայաբնակ են. բայց կան շատ տաճկաբնակ հայանուն գիւղեր և հնութիւններ, որոնք ցոյց են տալիս, որ այդտեղ մի ժամանակ ահագին թւով հայ ժողովուրդ էր ապրում: Հայաբնակ գիւղերից նշանաւոր են Մեծ ու փոքր Արմտանը և մեծ ու փոքր Բագառիջը իրենց բազմամարդութեամբ. Նշանաւոր է նաև Գոմեր գիւղը իր շրջակայքում գտնուող քարածուխի և աղի հանքերով. ունի առողջարար օդ և լաւ տեսարաններ. այս բոլորի շնորհիւ գիւղը շատ առաջ է գնացել և դարձել է մեծ երթևեկութեան վայր:

Գաւառի մէջ գտնուում է և մի այլ գիւղ, որը մեզ համար ունի պատմական նշանակութիւն. դա Թորղան աւանն է, շինւած Սեպուհ լեռան արևելեան բլուրների վրա: Հիթանոսութեան ժամանակ Թորղան աւանում գտնուում էր Ասորեստանից բերւած Բարշամ կուսքի մեհեանը: Քրիստոնէութիւնը Հայաստան մուտք գործելուց յետոյ Գրիգոր Լուսաւորիչը մեհեանի տեղ կանգնեցնել տեղի վանքեր ու եկեղեցիներ և այդտեղ էլ թաղեց նրա մարմինը: Այժմ Թորղան աւանը մի փոքրիկ գիւղ է և ունի ընդամենը 30 տուն հայ բնակիչ:

Ք Ե Մ Ա Խ

Երզնկայից գէպի հարաւ-արեւմուտք եփրատի ձախ ափին, Թանաճոր կոչուող փոքրիկ վտակի վրա գտնուում է Քեմախի գաւառի վարչական կենտրոնավայր Քեմախ կամ Կամախ բերդաքաղաքը: Քաղաքը շինւած է մի լեռան վրա, շրջապատւած հին բերդի կիսաւեր պարիսպներով. նրա ստորոտում փուլած է ծա-

1) Այս տեղեկութիւնները բաղել ենք Էփրիկեանի Բնաշխարհիկ բառարանից:

ազարդ և բուսականութիւնով հարուստ մի դաշտ, որը քաղաքին տալիս է գեղեցիկ տեսք:

Սա հնում կոչուում էր Անի ամրոց, որի կիսաւեր պարիսպները մինչև այժմ էլ գոյութիւն ունին: Այստեղ գտնուում էր Յունաստանից բերւած Արամազդի մեծեանը, որը Գրիգոր Լուսաւորչու ձեռքով կործանւեց և նրա տեղ շինւեց եկեղեցի: Այստեղ պահուում էին Արշակունի թագաւորների գանձերը և այստեղ թաղուում էին նրանց մարմինները:

Հինաւուրց բերդի մէջ այժմ կան կիսաւեր եկեղեցիներ և մզկիթներ. կան գեանափոր անցքեր և իշխանական ապարանքների մնացորդներ. նոյնպիսի հնութիւնների հետքեր կան նաև քաղաքի շրջակայքում:

Քեմաին այժմ մի փոքրիկ վաճառաշահ քաղաք է. բանուկ ճանապարհով կապւած է Երզնկայի և Ակն քաղաքի հետ. ունի մի փոքրիկ շուկայ 100-ի չափ խանութներով ու կրպակներով, ուր բերւում և վաճառուում են շրջակայ գիւղերից զանազան բերքեր:

Քաղաքի մէջ ապրող հայերը շատ քիչ են. նրանց թիւը 50 բնտանիքից չի անցնում. նրանք ապրում են առանձին թաղում և ունին մի եկեղեցի:

**Վիճակագիր Կերճանիսի գաւառի հայ ժողովրդի 1)**

№	Գ ի ի Ղ Ե Ր Ը	Օտարներ		
		Տուն	Տուն	Շունչ
1	Կերճանիս քաղաք . . . . .		38	225
2	Հոռոփուլ . . . . .		59	775
3	Մելիք-շէրիֆ . . . . .	150	42	421
			139	1421

1) Այս տեղեկութիւնները կազմել է Քեմալի առաջնորդական փոխանորդը:

**Վիճակագիր Քեմալի գաւառի հայ ժողովրդի 1)**

№	Գ ի ի Ղ Ե Ր Ը	Օտարներ		
		Տուն	Տուն	Շունչ
1	Քեմալս քաղաք . . . . .	550	48	298
2	Մարիբ . . . . .	30	78	586
3	Հաղարբ . . . . .	5	34	194
4	Մեծ Բագառիճ . . . . .	6	174	1268
5	Փոքր Բագառիճ . . . . .		75	746
6	Ս. Նշան վանք . . . . .		20	125
7	Զաքարի . . . . .	1	10	73
8	Ուսի . . . . .	5	26	132
9	Գոմեր . . . . .	50	54	365
10	Թորղան . . . . .		43	419
11	Թաւկներ . . . . .		41	374
12	Կառնի . . . . .		27	201
			630	4781

**Վիճակագիր Գուրուշայի գաւառի հայ ժողովրդի 2)**

№	Գ ի ի Ղ Ե Ր Ը	Օտարներ		
		Տուն	Տուն	Շունչ
1	Մեծ Արմտան . . . . .	30	246	1173
2	Փոքր Արմտան . . . . .		76	530
3	Թուղուա . . . . .	25	93	631
4	Ապուշտա . . . . .		21	124
5	Հասանօվա . . . . .		44	211
6	Տանձի . . . . .	50	7	56
			487	2725

1) Այս տեղեկութիւնները կազմել է Քեմալի առաջնորդական փոխանորդը:

2) Այս տեղեկութիւնները կազմել է Քեմալի առաջնորդական փոխանորդը:



Վիճակագիր Էրզրումի վիլայեթի հայ ժողովրդի					
№	Քաղաք և գաւառ	Գիւղ	Տուն	Շունչ	
1	Էրզրում		2500	15000	
2	Էրզրումի գաւառ	51	2768	19376	
3	Բասէնի »	57	1772	12404	
4	Խնուս քաղաք		325	2275	
5	Խնուսի գաւառ	32	1860	13020	
6	Գերջանի »	31	1304	9128	
7	Քղի քաղաք		350	2450	
8	Քղիի գաւառ	49	2326	16255	
9	Բայրուրդ քաղաք		400	2400	
10	Բայրուրդի գաւառ	29	1702	11914	
11	Սպերի »	18	446	3122	
12	Կիսկիմի »	6	1092	7644	
13	Թօրթումի »	13	405	2829	
14	Բայազէտ քաղաք		350	2450	
15	Բայազէտի գաւառ	3	210	1470	
16	Գիաղինի »	7	156	1092	
17	Կարաքիլիսէ քաղաք		350	2450	
18	Կարաքիլիսէի գաւառ	9	274	1918	
19	Թօփրադ-Կալէ		200	1400	
20	Ալաշկերտի գաւառ	11	640	4480	
21	Գուժաղի »	22	203	1421	
22	Երզնկա քաղաք		1500	9000	
23	Երզնկայի գաւառ	31	1024	7168	
24	Քեմախ քաղաք		48	298	
25	Քեմախի գաւառ	11	582	4483	
26	Գուրուչայի »	6	487	2725	
27	Կերճանիսի »	3	139	1421	
	9 քաղաք	389	23413	159593	

Վիճակագիր Էրեք վիլայեթների հայ ժողովրդի					
№	Վիլայեթ	Քաղ.	Գիւղ	Տուն	Շունչ
1	Վանի	3	387	16203	102910
2	Բիթլիսի	3	495	22092	154164
3	Էրզրումի	9	389	23413	159593
		15	1271	61708	416667

Վիճակագիր Վանի և Էրզրումի վիլայեթն. մի քանի գիւղ. հայ ժողովրդի

№	ԱՆՈՒՆՆԵՐԸ				№	ԱՆՈՒՆՆԵՐԸ			
		Արական	Իգական	Բոլորը			Արական	Իգական	Բոլորը
	Էրզրումի վիլայեր				26	Քօչօյի տուն	6	11	17
	Ուչքիլիսէի գաւառ				27	Յակոբի »	4	3	7
	ԿՈՒՄԼՈՒ-ՊՈՒՃԱՂ.				28	Մուբօյի »	3	5	8
1	Քեանալի տուն	10	5	15	29	Սարգսի »	6	6	12
2	Գեալգէի »	9	9	18	30	Գալօյի »	4	4	8
3	Հասօյի »	6	7	13	31	Փալանչի Յակօյի »	4	1	5
4	Ջքօյի »	7	8	15	32	Քեանդօյի »	5	3	8
5	Հոխէի »	12	12	24	33	Տուլօյի »	2	2	4
6	Գասպարի »	7	8	15	34	Մուշեղի »	2	1	3
7	Ալէքսանի »	2	2	4	35	Մօզիկ Մարգարի »	4	3	7
8	Յովկէի »	6	2	8		Վ. անի վիլայեր	164	148	312
9	Սիմօյի »	3	5	8		Արճէշի գաւառ			
10	Մերօյի »	4	6	10		Ս Օ Ս Կ Ո Ի Ն			
11	Յակօյի »	4	3	7	1	Դաւթի տուն	3	2	5
12	Քիշմօյի »	5	5	10	2	Շիրինի »	2	2	4
13	Փոխանի »	6	4	10	3	Գուլանի »	3	2	5
14	Պեարոսի »	4	3	7	4	Համիդի »	3	2	5
15	Շահէնի »	4	2	6	5	Տալէյի »	4	3	7
16	Խէլօյի »	6	1	7	6	Մալքանի »	5	6	11
17	Հակիլօյի »	3	1	4	7	Դաւթի »	5	2	7
18	Մէլքօյի »	2	3	5	8	Շահէնի »	2	2	4
19	Սէփանի »	3	2	5	9	Ռէս Պեարոսի »	11	7	18
20	Սիմօյի »	3	2	5	10	Սիմօնի »	4	1	5
21	Աւէյի »	3	4	7	11	Անդրէասի »	3	4	7
22	Ուստ. Մանուկի »	6	5	11	12	Մեարոբի »	2	3	5
23	» Յակօյի »	3	4	7	13	Շահէնի »	6	3	9
24	Վահանի »	4	4	8	14	Պեարոսի »	1	3	4
25	Նազարի »	2	2	4	15	Փոխանի »	3	5	8

Վիճակագիր Վանի և Էրզրումի վիլայեթ. մի քանի գիւղ. հայ ժողովրդի

№	ԱՆՈՒՆՆԵՐԸ				№	ԱՆՈՒՆՆԵՐԸ			
		Արական	Իգական	Բոլորը			Արական	Իգական	Բոլորը
16	Նէլօյի տուն	3	4	7	45	Մուբօյի տուն	2	2	4
17	Աւէտի »	4	2	6	46	Եղօյի »	4	2	6
18	Սարգսի »	5	6	11	47	Յակօյի »	4	4	8
19	Գալուստի »	2	1	3	48	Հասօյի »	3	2	5
20	Մկօյի »	3	5	8	49	Հասմօյի »		2	2
21	Պօղոսի »	9	9	18	50	Յարթենի »	5	4	9
22	Ղաւաղի »	2	4	6	51	Գէւօյի »	1	3	4
23	Հայդօյի »	2	4	6	52	Կալէյի »	7	5	12
24	Մուսէյի »	1	3	4	53	Ռէս Մուբաղի »	3	4	7
25	Բայաթի »	4	5	9	54	Առաքիլի »	6	3	9
26	Միրզօյի »	3	2	5	55	Մկօյի »	4	1	5
27	Կարապետի »	5	3	8	56	Իսրայէլի »	4	11	15
28	Հարօյի »	3	3	6	57	Թումասի »	4	3	7
29	Մուբաղի »	7	7	14	58	Արէնի »	3	3	6
30	Փիրուզի »		4	4	59	Սրբէյի »	6	6	12
31	Ալմաստի »	1	1	2	60	Սաչօյի »	2	2	4
32	Կոբի »	5	4	9	61	Յարթօյի »	2	3	5
33	Փօթօնի »	3	3	6	62	Մէրօյի »	3	3	6
34	Պօղոսի »	3	2	5	63	Մարտօյի »	3	4	7
35	Նազիրի »	9	7	16	64	Բազօյի »	2	3	5
36	Գէւօյի »	6	3	9	65	Ռէս Կարօյի »	9	12	21
37	Մեխանի »	6	6	12	66	Պայլօզի »	1	1	2
38	Տէրաւէրի »	4	2	6		Վանի վիլայեր	240	234	474
39	Միբօյի »	2	3	5		Շասաթի գաւառ			
40	Սաֆօյի »	2	1	3		Ա Ռ Ե Ղ			
41	Մանուկի »	2	1	3	1	Քեանդարի Մնօ .	5	4	9
42	Կարօյի »	1	2	3	2	» Պօսիկ .	1	2	3
43	Տէրաւէրի »	6	5	11	3	Թարվարցի Զանօ .	3	1	4
44	Սահակի »	2	2	4					

Վիճակագիր Վանի և Երզրումի վիլայեթ. մի քանի գիւղ. հայ ժողովրդի

№	ԱՆՈՒՆՆԵՐԸ	Արական	Իգական	Բոլորը	№	ԱՆՈՒՆՆԵՐԸ	Արական	Իգական	Բոլորը
4	Թալիֆի Մանուկ	1	2	3	3	Մարտիրոսեան Յակ	6	5	11
5	Սալիֆի Ներսո	5	6	11	4	Կարապետեան Գրիգ	2	1	3
6	Մանասէրի Բաղդո	2	1	3	5	Յակոբեան Պատար	2	4	6
7	Կապտաի Գասպար	3	3	6	6	» Օվանէս	3	2	5
8	Դաւթի Բաղդո	7	8	15	7	Արսէնեան Վահան	7	3	10
9	Սալիֆի Պօղոս	1	2	3	8	Կարապետեան Ալօ	2	2	4
10	» Մարտիկ	5	6	11	9	Արթինեան Բաղօ	1	3	4
11	Ալէսօրի Կարապետ	2	3	5	10	Սիմօնեան Եղապար	1	—	1
12	Երիցու Աւօ	10	13	23	11	Մարտիրոսեան Ջաղօ	3	1	4
13	» Սաչօ	3	5	8	12	Դաւթեան Գրիգոր	2	3	5
14	Բարսեղի Մկօ	2	3	5	13	Ասլանեան Սլօ	3	1	4
15	» Եղօ	2	1	3	14	» Փոխան	2	1	3
16	» Գափօ	1	1	2	15	Յակոբեան Գէորգ	8	8	16
17	Հէօխանի Կեղօ	1	2	3	16	» Մարտիրոս	2	3	5
18	Սարօյի Սաչօ	7	5	12	17	Գալստեան Մկօ	3	1	4
19	Կարօսթէ Հէօղիկ	4	3	7	18	Վարդանեան Գրիգոր	5	10	15
20	» Պօղոս	2	2	4	19	Հօրօեան Արթին	3	3	6
21	» Աւետ	1	1	2	20	Մէլքօնեան Բարսեղ	3	4	7
22	Հէօխանի Աւետիս	1	2	3	21	Մկրտչեան Արշակ	4	3	7
23	Փօսյի Եաթոս	2	2	4	22	Սարօեան Սարգիս	5	5	10
24	Փոխանի Պետրոս	1	3	4	23	Ագօեան Սարգիս	2	2	4
25	Շառօյի Բաղալ	2	1	3	24	» Արթին	3	2	5
26	Ջաւօյի Թաճօ	3	1	4	25	Աւետիսեան Պօղոս	3	3	6
	Վանի վիլայիթ	77	83	160	26	Մարիամեան Սարկն	4	9	13
	Հայոց-Չորի գաւառ				27	Բարսեղեան Գարրէլ	6	7	13
	Խ Ա Ր Ա Կ Ա Ն Յ				28	Մարտիրոսեան Սահ	1	2	3
1	Պետրոսեան Մկրտիչ	2	2	4	29	Գալստեան Նշան	1	1	2
2	Օհանէսի կինը	—	1	1	30	» Ղեանդ	1	4	5
					31	Մանուկեան Օրան	3	3	6

Վիճակագիր Վանի և Երզրումի վիլայեթ. մի քանի գիւղ. հայ ժողովրդի

№	ԱՆՈՒՆՆԵՐԸ	Արական	Իգական	Բոլորը	№	ԱՆՈՒՆՆԵՐԸ	Արական	Իգական	Բոլորը
32	Բաղդօեան Նշան	—	4	4	25	Սաչիկեան Վանօ	1	1	2
	Վ ա ն ի վ ի լ ա յ ի ր	93	103	196	26	Ղազարեան Գրիգոր	8	4	12
	Գեաւաշի գաւառ				27	Սախօեան Մանուկ	2	2	4
	ՊԱՏԱԿԱՆՅ				28	» Սաչօ	1	1	2
1	Մանասէրի Ասլօ	6	6	12	29	Կրտօեան Յակոբ	1	2	3
2	» Նիկօ	5	4	9	30	Սիփիկեան Մանուկ	2	4	6
3	Կառուս Սախօ	3	2	5	31	Պետրոսեան Կարապ	4	2	6
4	Ռէս Սաչօ	2	2	4	32	Վարդանեան Մարտիթ	3	3	6
5	» Դաւօ	1	3	4	33	Պօղոսեան Նշան	2	1	3
6	Բրուդ Սարգիս	1	2	3	34	Յուսէփեան Մուրադ	2	2	4
7	Մանուկեան Սեղրակ	4	4	8	35	Ղազարեան Եղօ	1	2	3
8	Հարիկեան Պետրոս	5	4	9	36	Սախօեան Յովհաննէս	1	1	2
9	» Գրիգոր	2	2	4	37	Յակոբեան Սիմօն	2	2	4
10	Չարէլի Աւօ	2	2	4	38	Գարրիէլեան »	3	1	4
11	» Նշան	3	4	7	39	Ագօեան Վարդան	2	3	5
12	Մանուկեան Սահակ	3	3	6	40	Պարուրեան »	3	2	5
13	Մկրտչեան Էրօ	2	2	4	41	Սարգսեան Յարօ	1	2	3
14	Սեփանեան Պօղոս	2	1	3	42	Մանուկեան Լեոն	4	3	7
15	Պետօյի կինը	1	3	4	43	Սարգսեան Կարապետ	1	1	2
16	Մուրադեան Չիրօ	2	2	4	44	Մարգարեան Բաղդիկ	4	4	8
17	» Սաֆար	1	3	4	45	Մուսէսեան Սամէլ	6	3	9
18	» Սաչօ	3	1	4	46	Մուրադեան Շողիկ	—	4	4
19	Սարրերդի Յարօ	1	1	2	47	Մարտիրոսեան Կարօ	2	2	4
20	Սաչիկեան Յովհանն	6	6	12	48	Սիրօեան Սաչօ	1	3	4
21	Յունանեան Կարապ	2	2	4	49	Ափրօեան Յեթօ	1	1	2
22	Մկրտչեան Պետրոս	1	2	3	50	Յուսէփեան Սաչօ	2	1	3
23	Պօղանոցիս	—	2	2	51	Մալխասեան Մկրտիչ	1	1	2
24	Ագիղեան Փանոս	1	—	1	52	Բլանեան Պօղոս	4	4	8
					53	Կարապետեան Միօ	1	4	5

Վիճակագիր Վանի և Էրզրումի վիլայեթն. մի քանի գիւղ. հայ ժողովրդի

№	ԱՆՈՒՆՆԵՐԸ				№	ԱՆՈՒՆՆԵՐԸ			
		Արական	Իգական	Բոլորը			Արական	Իգական	Բոլորը
54	Մանուկեան Բաղալ	2	2	4	3	Սահակու Պետրոս	4	3	7
55	Թուխօեան Վարդան	2	2	4	4	Աւետիսեան Պաշատ.	2	6	8
56	Բարնարցին .	—	2	2	5	Կարապետեան Նշան	2	5	7
57	Ասմօն .	1	2	3	6	Խլղաթեան Միսակ .	3	1	4
58	Վերդօեան Յարօ .	2	2	4	7	» Սեղրակ	3	1	4
59	Յովհաննիսեան Մուշ.	2	2	4	8	Մուրադեան Ղազար	2	1	3
60	Գոին .	1	3	4	9	Ճանգիւղեան Պօղոս	2	1	3
61	Խիզանա աէրաէրը .	5	5	10	10	Փոխանեան Մինաս	2	1	3
62	Հոխանեան Շողազար	3	1	4	11	Գրիգորեան Ղազար	3	1	4
63	Սարգսեան Սաֆար	4	1	5	12	» Յակոբ	2	2	4
64	Բալասանեան Պաշօ	2	4	6	13	Մեղրոնեան Յարութ.	4	1	5
65	Աւեկեան Մուրադ .	2	2	4	14	Գալստեան Ղազար .	2	1	3
66	Ակօեան Նշան .	1	—	1	15	» Գիւլագիլ	3	2	5
67	Զօրիկեան Գասպար	2	2	4	16	Տէր Սահակեան Մար.	3	4	7
68	Բեքրաւոր Միօ .	2	2	4	17	Յովհաննիսեան Պետ.	2	2	4
69	Մարգօեան Գրիգոր	5	3	8	18	Մկրտչեան Ճօշազա	3	4	7
70	Կարսեան Թաթօ .	2	4	6	19	Ներսէսեան Միքայէլ	3	1	4
71	Միսեան » .	4	3	7	20	Յարութիւնեան Ման.	2	2	4
72	Փոխանեան Պետրոս	2	2	4	21	Եղիշէ .	2	3	5
73	Մարտօեան Պօղոս .	1	1	2	22	Պետրոս .	3	2	5
74	Տէրաէրի Յակոբ .	3	3	6	23	Նշան .	3	1	4
75	Յակոբեան Յունան	1	2	3	24	Արրահամ .	4	2	6
76	Ռաշօն .	2	1	3	25	Հարօ .	3	4	7
	Վանի վիլայիք	176	180	356	26	Զաթօ .	4	2	6
	Վան-Տօսպի գաւառ				27	Կարապետ .	3	1	4
	ԿԵՆԴԱՆԱՆՑ				28	Գոլան .	1	2	3
1	Մուխի Գէորգ .	5	6	11	29	Անտօն .	2	1	3
2	Ամբրի Շահէն .	2	2	4	30	Տէրաէրը .	3	2	5
					31	Մուրադը .	3	1	4

Վիճակագիր Վանի և Էրզրումի վիլայեթ. մի քանի գիւղ. հայ ժողովրդի

№	ԱՆՈՒՆՆԵՐԸ				№	ԱՆՈՒՆՆԵՐԸ			
		Արական	Իգական	Բոլորը			Արական	Իգական	Բոլորը
32	Ճօշ ազա .	3	2	5	21	Խլօյի Վարդան .	1	1	2
33	Յարութիւն .	2	3	5	22	» Աւղօ .	1	4	5
34	Գին .	1	1	2	23	» Համբարձում	2	2	4
35	Գարբէլ .	1	1	2	24	» Գրիգոր .	2	1	3
36	Եղօ .	3	2	5	25	» Գարեգին .	4	2	6
	Վանի վիլայիք	95	77	172	26	Օվանէսի Պօղոս .	4	3	7
	Թիմարի գաւառ				27	Մարօյի Եղօ .	5	7	12
	ԱՆՆԱՎԱՆՔ				28	Օվանէսի Յակոբ .	3	3	6
1	Մանուկի Մարտօ .	5	8	13	29	Աւօյի Սահակ .	1	2	3
2	Գարբէլի Կարօ .	2	3	5	30	» Գէորգ .	1	—	1
3	Գէորգի Գրիգոր .	2	3	5	31	Աւանի Մանուկ .	1	2	3
4	Ասլանի Վարդան .	4	1	5	32	Խսան Վանօ .	3	3	6
5	Նազարի Մնացական	1	2	3	33	Գէորգի Մնէ .	1	—	1
6	» Գարեգին .	3	2	5	34	Փոխանի Միսակ .	2	2	4
7	» Անտօն .	1	1	2	35	» Տիգրան .	1	1	2
8	Ամրօյի Պօղոս .	1	3	4	36	Յովսէփի կինը .	—	3	3
9	Շաղօյի Մկօ .	2	1	3	37	Տէր Միքայէլի Խոսր.	1	3	4
10	Վարդանի Աւղօ .	3	2	5	38	Յօնօյի Բարսեղ .	2	2	4
11	Միսերանց Մանուկ	3	3	6	39	Յարթենի Գրիգոր .	6	4	10
12	Մարտիկ Եղօ .	2	1	3	40	Բարսեղի Սարգիս .	2	2	4
13	» Տիգրան .	2	3	5	41	» Դաւիթ .	3	1	4
14	» Պետրոս .	3	2	5	42	» Միսակ .	1	1	2
15	» Վարդան .	2	3	5	43	Ասպատուրի Արմեն.	2	1	3
16	Նախօյի Վէրդի .	2	1	3	44	Տէր Յովակիմը .	4	5	9
17	Ասլանի Պօղոս .	2	2	4	45	Էլօյի Աւետիս .	3	4	10
18	Մինասի Սարօ .	2	—	2	46	Թաթոսու Կարօ .	5	3	8
19	Պաղօյի Սեթրօ .	2	1	3					
20	Օվանէսի Պօղոս .	5	4	9					

Վիճակագիր Վանի և Էրզրումի վիլայեթների մի քանի գիւղերի հայ ժողովրդի և նրանց ընտանիքների անդամների միջին թվերի							
Գ ա լ ա ն	Գ ի ի Ղ	№	Ընտանիք	Արական	Իգական	Բոլորը	Ընտանիք անդամ միջին թիւ
Էրզրումի վիլ.	Սայրօ . . . . .	1	7	38	42	80	11,4
Դիադինի	Գումլուպուճալ . . . . .	2	35	164	148	312	8,9
	Ուչքիլիս . . . . .	3	27	124	108	232	8,6
	Կարաբաղար . . . . .	4	20	89	83	172	8,6
	Ջուջան . . . . .	5	45	193	183	376	8,4
	Միրզաջան . . . . .	6	7	29	24	53	7,6
Վանի վիլ.		6	141	637	588	1225	8,7
Արճէշի	Սոսկուն . . . . .	1	66	240	234	474	7,2
	Բլուրմակ . . . . .	2	41	132	152	284	7,0
		2	107	372	386	758	7,1
Շատախի	Կաղապիս . . . . .	1	31	109	105	214	6,9
	Քրմենց . . . . .	2	6	24	16	40	6,7
	Ասեղ . . . . .	3	26	77	83	160	6,2
	Հաշկանց . . . . .	4	15	44	44	88	5,9
		4	78	254	248	502	6,4
Հայոց-Ջուրի	Սարականց . . . . .	1	32	93	103	196	6,1
	Սորգոմ . . . . .	2	52	143	151	294	5,7
	Քեօշք . . . . .	3	33	86	96	182	5,5
	Կեմ . . . . .	4	98	246	238	484	4,9
		4	215	568	588	1156	5,4
Վանի	Կուռուբաշ . . . . .	1	107	297	286	583	5,5
	Կենդանանց . . . . .	2	36	95	77	172	4,8
		2	143	392	363	755	5,3

Գ ա լ ա ն	Գ ի ի Ղ	№	Ընտանիք	Արական	Իգական	Բոլորը	Ընտանիք անդամ միջին թիւ
Վանի վիլ.							
Գեաւաշի	Յիլի . . . . .	1	24	74	69	143	6,0
	Պատականց . . . . .	2	76	176	180	356	4,7
		2	100	250	249	499	5,0
Թիմարի	Մարմէղ . . . . .	1	137	348	339	687	5,0
	Աննավանք . . . . .	2	46	113	108	221	4,8
	Ամենաշատ . . . . .	3	35	89	63	152	4,4
		3	218	550	510	1060	4,9
		23	1002	3023	2932	5955	5,9

Ընտանիքների անդամների միջին թիւ ստանալու համար մենք կազմել աւելնք գոնադան գաւառների 23 գիւղերի տների և նրանց անդամների ցուցակները 1), որոնցից 7-ը առաջ ենք բերում անուն անուն, իսկ միւսներինը՝ ընդհանուր գումարներով: Թէև այստեղ ստացուել է ընդհանուր միջին թիւը 6 (5,9), բայց որովհետև այդ ցուցակներից Դիադինի 6 և Արճէշի 2 գիւղերինը կազմել ենք մենք անձամբ շատ ուշադրութեամբ և տեղացիների աջակցութեամբ, որոնց միջին թիւը 7-ից, նոյն իսկ 8-ից անցնում է, այդ պատճառով հայ ժողովրդի ընդհանուր թիւը զուրս բերելիս մենք ընդունել ենք գիւղական ժողովրդի համար ընտանիքի անդամների միջին թիւը 7, իսկ քաղաքացիներինը՝ 6. ըստ երեւոյթին ուրիշների ձեռքով կազմած ցուցակները կատարել են շատ պակասաւոր, ուրի մէջ մենք համոզուեցինք մեր յետագայ դիտողութիւնների ժամանակ. Էրզրումի դաշտում կան շատ գիւղեր, որոնցում ընտանիքների միջին թիւը հասնում է 10-ի:

1) Յիշեալ ցուցակները կազմելիս մեզ աջակցել է վանեցի ուսուցիչ պ. Ն. Տէր Մկրտչանը, որն ընկերացաւ մեզ հետ Շատախը ճանապարհորդելիս:

Էրզրումի, Բիթլիսի և Վանի վիլայեթների ազգա-  
(անս La Turquie d'Asie)

Վիլայեթ	Ս ա ն ջ ա կ	№	ԿԱԶԱ ԵՒ ՔԱՂԱՔ
ԷՐԶՐՈՒՄԻ	ԷՐԶՐՈՒՄԻ	1	Էրզրում — քաղաք . . .
		2	» կաղա . . .
		3	Օվայի » . . .
		4	Քղիի » . . .
		5	Դերջանի » . . .
		6	Խնուսի » . . .
		7	Թօրթումի » . . .
		8	Կիսկիմի » . . .
		9	Բասէնի » . . .
ԵՐԶՆԿԱՅԻ	ԵՐԶՆԿԱՅԻ	10	Երզնկայ — քաղաք . . .
		11	» կաղա . . .
		12	Րէֆայիէի » . . .
		13	Գուբուչայի » . . .
		14	Քեմախի » . . .
		15	Բայբուրդի » . . .
		16	Սպիբի » . . .
ԲԱՅԱԶԷՏԻ	ԲԱՅԱԶԷՏԻ	17	Բայազէտ — քաղաք . . .
		18	» կաղա . . .
		19	Դիաղինի » . . .
		20	Կարաքիլիսի » . . .
		21	Ալաշկերտի » . . .
		22	Դութաղի » . . .

Մնակութեան վիճակագրութիւնը ըստ Վ. Քինէի  
Vital Cuinet. Paris. 1891.)

Մասնագիտանք	Հ ա յ Ե Ր	Այլ ցեղեր	Բ ու լ ու Ր Ը
26564	10435	1907	38906
33533	14501	695	48729
49087	20821	577	70485
28836	12040	349	41225
19913	6689	193	26795
16746	10073	148	26967
50224	2146	221	52591
23929	5954	68	29951
39007	7275	369	46651
287839	89934	4527	382300
15000	7500	500	23000
28583	6454	1137	36174
22869	837	1221	24927
10670	2610	203	13483
14547	3692	633	18872
46822	10579	922	58323
32981	2838	260	36079
171472	34510	4876	210858
669	1200	131	2000
5210	575	—	5785
10706	364	88	11158
4704	2092	142	6938
13943	6060	178	20181
6239	214	29	6482
41471	10505	568	52544
500782	134949	9971	645702

Էրզրումի, Բիթլիսի և Վանի վիլայեթների ազգա-  
(տես La Turquie d'Asie)

Վիլայեթ	Ս ա ն ջ ա կ	№	ԿԱԶՍ ԵՒ ՔԱՂԱՔ
ԲԻԹԼԻՍԻ	ԲԻԹԼԻՍԻ	1	Բիթլիսի կազա
		2	Նլաթի »
		3	Նիդանի »
		4	Մօսկանի »
ՄՈՒՇԻ	ՄՈՒՇԻ	5	Մուշ-քաղաք
		6	» կազա
		7	Բուլանդի »
		8	Մանազկերտի »
		9	Վարդոյի »
		10	Սասունի »
ՍՂԵՐԴԻ	ՍՂԵՐԴԻ	11	Սղերդ-քաղաք
		12	» կազա
		13	Բանդվանի »
		14	Շիրվանի »
		15	Էբուսի »
		16	Նարզանի »
		17	Բարվարի »
		18	Հադոյի »
ԳԷՆՋԻ	ԳԷՆՋԻ	19	Գենջի կազա
		20	Ճապղաղճուրի »
		21	Նուլփի »

Ընակութեան վիճակագրութիւնը ըստ Վ. Քինէի  
Vital Cuinet. Paris. 1891.)

Մասնեղանակներ	Հ ա յ ե Ր	Այլ ցեղեր	Բ ո լ ո Ր Ը
20800	16286	1800	38886
16635	6609	415	23659
17422	4304	1344	23070
15546	5710	1356	22612
70403	32909	4915	108227
8300	6700	—	15000
14082	12921	—	27003
13000	10361	—	23361
12000	9000	—	21000
9000	7994	—	16994
10370	8389	1342	20101
66752	55365	1342	123459
9680	3320	2000	15000
6020	2700	1600	10320
8094	2506	400	11000
9655	4113	400	14168
9441	5113	700	15254
8800	3600	600	13000
7758	3800	442	12000
5000	5000	—	10000
64448	30152	6142	100742
18467	7930	—	26397
16465	4335	—	20800
17465	699	836	19000
52397	12964	836	66197
254000	131390	13235	398625

Էրզրումի, Բիթլիսի և Վանի վիլայեթների ազգա-  
(տես La Turquie b' Asie

Վիլայեթ	Ս ա ն ջ ա կ	№	ԿԱԶԱ ԵՒ ՔԱՂԱՔ
Վ Ա Ն Ի	Վ Ա Ն Ի	1	Վանի կազա . . .
		2	Կարճկանի » . . .
		3	Շասասի » . . .
		4	Գեաուաշի » . . .
		5	Այջուազի » . . .
		6	Արճէշի » . . .
		7	Բերկըրի » . . .
		8	Մօկսի » . . .
ՀԷՔԵԱՐԻԻ	ՀԷՔԵԱՐԻԻ	9	Ջուլամէրիկի կազա . . .
		10	Աղբակի » . . .
		11	Գեաուառի » . . .
		12	Շէմդինանի » . . .
		13	Մանուզի » . . .
		14	Նորգուզի » . . .
		15	Չալի » . . .
		16	Համիդի » . . .
		17	Շէքաբի » . . .
		18	Օրամարի » . . .
		19	Ամադիէի » . . .

1) Քաղերով և առաջ բերելով Տաճկաստանին ներսած Քինէի չորսնասորեան  
զբոթիւնը, կարեւր ենք համարում յայտնել, որ նրա առաջ բերած վիլայեթների ընդ-  
հայեթին վերաբերող թւերը անհամեմատ պակասաւոր են իսկականից. ինչ վերաբերու-  
մենք կարեւր համարեցինք այս վիճակագիրը կցել մեր աշխատութեանը:

Բնակութեան վիճակագրութիւնը ըստ Վ. Քինէի  
(Yital Cuinet. Paris. 1891.) 1)

Մասնականներ	Հ ա յ ե Ր	Այլ ցեղեր	Բ ու ո Ր Ը
21500	12500	1500	35500
5676	7820	843	14339
6850	6500	280	13630
8130	4850	184	13164
4145	8138	414	12697
5129	9490	155	14774
5910	7270	202	13382
3660	8432	422	12514
61000	65000	4000	130000
16900	2000	15000	33900
28270	3000	11690	42870
14700	1900	9600	26200
15270	—	3200	18470
25680	2500	3500	31680
12000	2600	3000	17600
11930	—	31960	43890
13840	3000	—	16840
12000	—	6700	18700
14870	—	11040	25910
14540	—	9400	23940
180000	15000	105000	300000
241000	80000	109000	430000
995782	346339	132206	1474327

Խոշոր աշխատութիւնից մեզ հետաքրքրող երեք վիլայեթների այս հետաքրքիր վիճակա-  
նունքը թւերը միանգամայն համապատասխանում են պաշտօնական թւերին, որոնցից  
է մանրամասն թւերին, նրանք նոյնպէս ազատ չեն խոշոր սխալներից. չը նայած դրան,  
16



# ԵՐԵՅ ՎԻԼԱՅԷԹՆԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒ-

## ԹԻՒՆԸ

Վերջացնելով մեզ հետաքրքրող հայարնակ գաւառների տեղադրական և վիճակագրական տեսութիւնը, մեզ մնում է անելու մի ամփոփ վիճակագրական համեմատութիւն՝ իմանալու համար, թէ երեք վիլայէթներում որքան հայ ժողովուրդ կայ և թէ նա ընդհանուր ազգարնակութեան որ տոկոսն է կազմում:

Նախ քան անմիջական թւերին դիմելը, մենք պիտի ասենք, որ վիճակագրութիւն կազմելը մի վերին աստիճանի դժւարին խընդիր է, դժւարին այն տեսակէտից, որ ճիշտ տեղեկութիւններ ստանալը համարեա անկարելի է. ամենակուլտուրական երկրներում անգամ վիճակագրութիւն կազմելը դեռ ևս չի հասել իր զարգացման աստիճանին և ամենափորձեալ վիճակագիրներն անգամ իրենց բերած թւերին և եզրակացութիւններին միշտ էլ մօտենում են խիստ զգուշութեամբ. այդպիսի զգուշութիւն անհրաժեշտ է մանաւանդ այն ժողովուրդների վերաբերմամբ, որոնք կանգնած լինելով կուլտուրական ստոր աստիճանի վրա և գտնւելով քաղաքական բացառիկ պայմանների մէջ, ոչ միայն չեն ըմբռնում վիճակագրութեան նշանակութիւնը, այլև այդ բանի մէջ նկատելով հարկերը մեծացնելու, նոր հարկեր նշանակելու և կամ նման մի յետին միտք, գիտակցօրէն ծածկում են ճշմարտութիւնը և յաճախ տալիս այնպիսի տեղեկութիւններ, որոնք աւելի ևս շփոթում են հարցը:

Այս տեսակէտից Տաճկաստանը ընդհանրապէս, նրա ստիական վիլայէթները մասնաւորապէս, թերևս առաջնադաս տեղ բռնեն: Այդ երկրում թափառական խաշնարած քուրդ ցեղերը համարեա անմատչելի են, իսկ օրինաւոր և ապօրինի հարկերի տակ ճնշւած երկրագործ ժողովուրդը ամեն բան թաղցնում է. թաղցնում է թէ կայք, թէ հարստութիւն և թէ մարդահամարի թիւը. նա բացասաբար է

վերաբերում դէպի կառավարութիւնը և դէպի ամենքը. նա ամեն տեղ և ամեն մի հարցում միմիայն իր վնասն է տեսնում և շատ բնական է, որ խոյս տայ իւրաքանչիւր հարցումից, իւրաքանչիւր գիմումից:

Այս բոլորը ի նկատի ունենալով, ասել, թէ մեր առաջ բերած թւերը միանգամայն համապատասխանում են ճշմարտութեանը, դժար է, մանաւանդ, եթէ աչքի առաջ ունենանք, որ Տաճկաստանի հայ ժողովուրդը զինուորական տուրքի <sup>1)</sup> պատճառով միշտ էլ թաղցրել է մարդահամարի իսկական թիւը: Բայց այդ միևնոյն ամեն ինչից խուսափող և ամեն ինչի բացասաբար վերաբերող ժողովուրդը յաճախ բացում է իր սիրտը, հաւատում է իր գաղանիքները այն մարդկանց, որոնց նա համարում է իր բարեկամը, պատմելով նրանց իր ցաւերը և իր ունեցւածքը այնպէս, ինչպէս որ նրանք կան:

Ահա այսպիսի վստահելի աղբիւրների վրա հիմնւած են զլխաւորապէս մեր բերած թւերը, թւեր՝ կազմւած առաջնորդարանների, ծխական քահանաների, զիւղական ուսուցիչների և տեղացի ուսումնասէր երիտասարդների ձեռքով, որոնք, եթէ բոլորովին ճիշտ էլ չլինեն, յամենայն դէպս, մօտ են ճշմարտութեանը և անպայման աւելի վստահելի, քան կառավարչական պաշտօնական թւերը, որտեղ մասնաւորապէս հայ ժողովրդի քանակը շատ պակասաւոր է, ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ, կրկնում ենք, զինուորական ծանր տուրքերից խուսափելու համար հայերը ծածկում են արուեստի թիւը. մի երևոյթ, որը ընդհանրացած լինելով, շատ լաւ յայտնի է նաև կառավարութեանը:

Համաձայն մեր բերած վիճակագրական տեղեկութիւնների, Վանի վիլայէթում հայ ժողովրդի թիւը հասնում է 103,000-ի. Բիթլիսի վիլայէթում 154,000, իսկ Էրզրումի վիլայէթում 160,000-ի: Ուրեմն երեք հայաշատ վիլայէթներում ապրող հայ ժողովրդի թիւը միասին կազմում է 417,000:

— Միթէ՞ երեք հայաշատ վիլայէթներում ապրում են ընդամենը 417,000 հայեր, այսինքն աւելի քիչ, քան Նրեանի նահանգում ապրող հայերը, — անշուշտ կը բացազանչի տաճկահայ ժողովրդի վիճակով հետաքրքրողը:

1) Սահմանագրութիւնից յետոյ այս տուրքը վերացւել է:

— Այս, կը պատասխանենք մենք, որքան էլ մեր բերած թւերը պակասուող լինեն, որքան էլ մեր բերած գաւառացուցակներէց վրիպած լինեն հայաբնակ զիւղեր, այնուամենայնիւ երեք վրլայէթներէ հայ ժողովրդի թիւը 500,000-ի չի հասնի, մինչդեռ Երևանի նահանգում ապրող հայ ժողովրդի այժմեան թիւը 500,000-ից անցնում է:

Տաճիկ կառավարութեան պաշտօնական թւերը աւելի ևս պակասուող են քան մերը: 1896 թւի առաջին ժողովրդագրութեան <sup>1)</sup> համաձայն Վանի վրլայէթում ապրում են 80,000 հայեր, Բիթլիսի վրլայէթում 131,000, իսկ Էրզրումի վրլայէթում 135,000. ուրեմն երեք վրլայէթներում միասին 346,000, մի թիւ, որը մեր բերած թւից պակաս է ամբողջ 19-20 անգամով և մի սարբերութիւն, որը զեռ փոքր պիտի համարել, եթէ ի նկատի աւնենանք, որ հայ ժողովրդի թիւը պակաս է բերում թէ հէնց նոյն հայ ժողովրդի կողմից զինուորական սուրբի պատճառով և թէ կառավարութեան կողմից քաղաքական նկատումներով: Չը պէտք է մոռանալ, որ Տաճկաստանում հայ ժողովրդի թւի աճումն վերջին 2-3 տասնակ տարիների ընթացքում գոյաթիւն չաւնի և հետևապէս պաշտօնական վիճակագրութիւնից յետոյ հայերի թիւը աճած լինել չի կարող:

Ծանր է ապաւորութիւնը, երբ հայ ժողովրդի թիւը առանձին ենք բերում, աւելի ևս ուժեղ է ապաւորութիւնը, երբ բերում ենք հայ ժողովրդի և ընդհանուր ազգաբնակչութեան թւերը միասին և համեմատում ենք այդ երկու թւերը իրար հետ:

Համաձայն նոյն 1896 թւի պաշտօնական ժողովրդագրութեան Վանի վրլայէթում ապրում են 241,000 մահմեդականներ, 80,000 հայեր և 109,000 այլ քրիստոնեաներ <sup>2)</sup>. Բիթլիսի վրլայէթում ապրում են 254,000 մահմեդականներ, 131,000 հայեր և 13,000 այլ քրիստոնեաներ. իսկ Էրզրումի վրլայէթում 500,000 մահմեդականներ, 135,000 հայեր և 10,000 այլ քրիստոնեաներ:

Վերածելով այս թւերը սովորական չափերի, կստանանք.

Վրլայէթներ	Ընդհանուր ազգաբնակ թիւը	Մահմեդականներ թիւը	0/0	Հայերի թիւը	0/0	Այլ քրիստոնեաների թիւը	0/0
Վանի . . .	430,000	241,000	56	80,000	19	109,000	25
Բիթլիսի . . .	398,000	254,000	64	131,000	33	13,000	3
Էրզրումի . . .	645,000	500,000	77	135,000	21	10,000	2
	1,473,000	995,000	68	346,000	23	132,000	9

Այսպիսով Վանի վրլայէթում հայերը կազմում են ընդհանուր ազգաբնակչութեան 19<sup>0</sup>/<sub>0</sub>, Բիթլիսի վրլայէթում 33<sup>0</sup>/<sub>0</sub>, Էրզրումի վրլայէթում 21<sup>0</sup>/<sub>0</sub>, իսկ երեք վրլայէթները միասին վերցրած 23<sup>0</sup>/<sub>0</sub>:

Հայ ժողովրդի սովորական չափը այլ կլինի, եթէ վերցնենք մեր թւերը, որոնք անպայման աւելի ճիշտ են:

Թողնելով անփոփոխ մահմեդականների և միւս քրիստոնեաների թւերը այն կերպ, ինչ կերպ նրանք առաջ են բերած պաշտօնական վիճակագրութեան մէջ, ենթադրելով որ մահմեդականների թիւը նւազեցման չի ենթարկւել, իսկ միւս քրիստոնեայ ժողովուրդների թիւը փոքր լինելով, նւազման տարբերութիւնը շոշափելի փոփոխութիւններ չի առաջացնելու. առաջ բերելով հայ ժողովրդի թիւը մեր աղբիւրներից և մեր բերած թւի տարբերութիւնների չափով, մեծացնելով ընդհանուր ազգաբնակչութեան թիւը երեք վրլայէթներում, կստանանք.

Վրլայէթներ	Ընդհանուր ազգաբնակ թիւը	Մահմեդականներ թիւը	0/0	Հայերի թիւը	0/0	Այլ քրիստոնեաների թիւը	0/0
Վանի . . .	453,000	241,000	53	103,000	23	109,000	24
Բիթլիսի . . .	421,000	254,000	60	154,000	37	13,000	3
Էրզրումի . . .	670,000	500,000	74	160,000	24	10,000	2
	1,544,000	995,000	64	417,000	27	132,000	9

1) Стат. Бюльн. Имперіи. Просвѣщенія, томъ. XII, стр. 541.

2) Վանի վրլայէթում բացի հայերից, իբրև քրիստոնեայ, ժողովուրդ ապրում են ասորիները, սակայն որոնց թիւը մեր կարծիքով 80,000-ից աւելի չը պիտի լինի. արաբից է բերւած 109,000 թիւը, չը գտնենք:

Չը նայած այն հանդամանքին, որ մեր բերած թւերով հայ ժողովրդի տոկոսական չափը Վանի վիլայէթում 19-ից բարձրանում է 23-ի, Բիթլիսի վիլայէթում 33-ից բարձրանում է 37-ի, Էրզրումի վիլայէթում 21-ից բարձրանում է 24-ի, այնուամենայնիւ տարբերութիւնը այնքան փոքր է, որ այդ հաշուով էլ երեք վիլայէթները միասին վերցրած հայ ժողովուրդը կազմում է ընդհանուր ազգաբնակչութեան թւի միմիայն  $27\frac{0}{100}$ -ը, մինչդեռ մահմեդական ժողովուրդները կազմում են ընդհանուր ազգաբնակչութեան  $64\frac{0}{100}$ -ը:

Այսպէս է պատկերը աճա այն չափով, ինչ չափով որ երեք վիլայէթների ընդհանուր ազգաբնակչութեան, մասնաւորապէս մահմեդական ժողովուրդների պաշտօնական վիճակագիրը համապատասխանում է իսկութեանը:

Պատկերն ընդհանուր առմամբ նոյն է. երբ ոտք էք դնում այդ երկիրը, երբ անձամբ համոզւում էք, թէ ինչպէս մի ժամանակւայ գուտ հայաբնակ գաւառներն այժմ դարձել են քրդաբնակ և թէ ինչպէս հայ ժողովուրդն ամեն տեղ նւագել ու նուրացել է, տեղի տալով մահմեդական տարրերին: Տեսնում էք երկիրը անձամբ և նոր միայն գաղափար էք կազմում այն ամայացման մասին, որ տեղի է ունեցել այդ երկրում հայերի վերաբերմամբ:

1878 թւի Բերլինի կօնգրէսին հայերի կողմից ներկայացրած յիշատակագրի մէջ Տաճկաստանի հայաբնակ գաւառների հայ ժողովրդի թիւը ցոյց է տրւած 1,330,000-ի, իսկ մահմեդականների թիւը 530,000-ի. եթէ ի նկատի ունենանք, որ յիշատակագրի մէջ առաջ էին բերւած հայաբնակ վեց վիլայէթների, այն է՝ Վանի, Բիթլիսի, Էրզրումի, Սըվազի, Թարքերզի և Դիարբէքքիի հայաբնակ գաւառները և բաց էին թողնւած մահմեդականներով ընտկեցրած գաւառները, ինչպէս Վանի վիլայէթի կէս մասը, Հէքիարին և այլ շրջաններ, ուր հայեր համարեա թէ չը կան, յիշատակագրում բերւած թւերը չը պիտի չափազանցութիւն համարել:

1896 թւի պաշտօնական վիճակագրութեան համաձայն այդ վեց վիլայէթներում ապրում է 613,000 հայ ժողովուրդ. եթէ այդ թւի վրա աւելացնենք  $20\frac{0}{100}$  այն հիման վրա, որ այդ չափով պակաս է կազմւած պաշտօնական վիճակագրութիւնը, ինչպէս որ տեսանք մեր բերած թւերի համեմատութիւնից, կստանանք 737,000, որ ասել է թէ այժմ այդ վեց վիլայէթներում ապրող հայ ժողովրդի իսկական թիւը 736,000 է: Յիշատակագրի մէջ բեր-

ւած 1,330,000 թւից դուրս գալով 736,000-ը, կը քնայ 594,000, որը կազմում է  $45\frac{0}{100}$ , կը նշանակէ Բերլինի կօնգրէսից յետոյ, որ անում է 30-32 տարի, Տաճկաստանի ասիական վիլայէթներում հայ ժողովրդի թիւը նւագել է  $45\frac{0}{100}$ -ով, իսկ նրա տեղը եկել ըսնել են մահմեդական տարրերը:

Եթէ ի նկատի ունենանք 1877 թւի ուսու-տաճկական պատերազմի հետևանքները իրենց աւերիչ գաղթականութիւններով և վերջին երեք տասնեակ տարիների ընթացքում պարբերաբար կրկնուող կոտորածներն ու գաղթերը, չը պիտի զարմանանք, որ հայերի թիւը երկրի մէջ նւագել է  $45\frac{0}{100}$ -ով և որ նա իր բուն երկրի մէջ կազմում է այժմ փոքրամասնութիւն:

Այս երևոյթն աւելի ակնեքե կը դառնայ, երբ մենք կանցնենք սիստեմատիկ հաբստահարութիւններին և նրանց ստակալի փաստերին: Բայց, նախ քան այդ, մենք կը ծանօթանանք այն տարրերի հետ, որոնք յիշեալ երեք վիլայէթներում ապրում են հայ ժողովրդի հետ խառը:

## ՄԱՀՄԵԴԱԿԱՆ ՏԱՐՐԵՐ

Ինչպէս տեսանք, համաձայն 1896 թւի ժողովրդագրութեան երեք վիլայէթների ընդհանուր ազգաբնակչութեան թիւը հասնում է 1,473,000-ի. այս թւի վրա աւելացնելով այն տարրերութիւնը, որ կայ մեր բերած և պաշտօնական թւերի մէջ հայ ժողովրդի վերաբերմամբ, կստանանք 1,544,000. ուրեմն աւելի ճիշտ հաշուով երեք վիլայէթում կայ 1,544,000 ազգաբնակչութիւն:

Այդ թւից, համաձայն մեր աղբիւրների, 417,000-ը հայեր են. համաձայն 1896 թւի պաշտօնական ժողովրդագրութեան 132,000-ը այլ քրիստոնեայ ժողովուրդներ են. զրանք են գլխաւորապէս ասորիները, որոնք ապրում են Վանի վիլայէթի Հեքեաբիի սանջակում, մասնաւորապէս Ջուլամերիկում և մասամբ յոյները, որոնք ապրում են Էրզրումի վիլայէթում:

Այսպիսով երեք վիլայէթներում ապրող քրիստոնեայ ժողովուրդներէ թիւը մինսին կազմում է 549,000:

Այս թիւը դուրս գալով ընդհանուր ազգաբնակչութեան թւից, կստանանք 995,000. ուրեմն երեք վիլայէթներում ապրող մահմեդական տարրերի թիւը հասնում է 995,000-ի:

Մահմեդական տարրերը բազկացած են քրդերից, տաճիկներից, կարափափախներից, չէքքէզներից և լազերից:

Վերջին երեք ժողովուրդները շատ սահմանափակ թիւ են կազմում. լազերը հազիւ 10,000 հոգի լինեն. սրանք ապրում են Էրզրումի վիլայէթի հիւսիսային մասում, սահմանակից Լազիստանին, որը կազմում է Տրապիզոնի վիլայէթի մի մասը:

Կարափափախները նոյնպէս հազիւ 10,000 հոգի լինեն. սրանք 1877 թւի ուսումնական պատերազմից յետոյ գաղթեցին Կարսի, Օլթիի և Արզահանի կողմերից և այժմ բնակուում են Բայազէտի սանջակի Կարաքիլիսէի և Դութաղի գաւառներում:

Չէքքէզները քանակով աւելի են. թերևս 15,000-ից անցնի նրանց թիւը. սրանք նոյնպէս գաղթեցին Կարսի և Օլթիի շրջան-

ներից, երբ 1877 թւի պատերազմից յետոյ այդ շրջաններն անցան Ռուսաստանի ձեռքը: Չէքքէզները շաղ անցած քնակուում են Խնուսի, Վարդոյի, Բուլանըղի, Մանազկերաի, Խլաթի, Ալջաւաղի և Արճակի գաւառներում:

Այս երեք փոքրիկ ժողովուրդները, որոնք համարուում են նստակեաց երկրագործ ժողովուրդ, կուլտուրապէս շատ ստոր աստիճանի վրա են կանգնած. գաշտային պարապմունքները դեռ ևս շատ քիչ ազդեցութիւն են գործել նրանց վարք ու բարքերի վրա. իրենց անտեսական պարապմունքներից դուրս նրանք հանդիսանում են անհանգիստ տարրեր. դէպի հայ և քուրդ խաղաղ երկրագործ ժողովուրդը. տաճիկական կարգերը այդ երեք ժողովուրդներին աւելի ևս խրախուսել են իրենց հակումների մէջ. իւրաքանչիւրը զրանցից աչքի է ընկնում իր ցեղային տարազով և ցեղային բնազդներով. մասնաւորապէս չէքքէզը մնացել է միևնոյն բէշմէտ, բրդոտ գլխարկ և խէնջար կրող, միևնոյն սխրագործ և աւազակարարոյ լեռնեցին: Այս երեք ժողովուրդները վայելում են մի քանի արտօնութիւններ. օրինակ. կարափափախներից և չէքքէզներից կազմւած էին համիդիէական առանձին գնդեր իրենց գլխաւորներով. շնորհիւ այդ արտօնութիւնների, նրանք հանդիսացել են խոչնդոտ երկրի խաղաղ զարգացման, երկրագործ ժողովուրդների գաշտային պարապմունքներին և առհասարակ այն ձեռնարկութիւններին, որոնք ծառայելիս են եղել ժողովրդի շահերին:

Մահմեդական միւս երկու տարրերը, քրդերն ու տաճիկները կազմում են ազգաբնակչութեան խոշորագոյն մասը. զրանցից իւրաքանչիւրի ճիշտ թիւը որոշել զժւար է. շատ տեղերում, մասնաւորապէս քաղաքներում հնարաւոր չի լինում այդ երկու տարրերը միմեանցից ասարբերել, բայց հաստատապէս կարելի է ասել, որ քրդերը անհամեմատ թերևս կրկնակի չափով շատ են տաճիկներից: Ընդունելով մահմեդականների ընդհանուր թիւը 995,000, փտահօրէն կարելի է ասել, որ այդ քանակութեան 35,000-ը կարափափախներ, չէքքէզներ և լազեր են, 360,000 տաճիկներ, իսկ 600,000 քրդեր:

Տաճիկները գետեղւած են գլխաւորապէս Էրզրումի վիլայէթի հիւսիսային և արևմտեան մասերում և քաղաքներում: Գիւղական տաճիկ ժողովուրդը պարապում է երկրագործութեամբ և առհա-

սարակ դաշտային աշխատանքներով, իսկ քաղաքներում նա հանդիսանում է պաշտօնէութիւնը, վաճառականութիւնն ու արհեստաւորութիւնը և գիւղերը կապալով վերցնողների դասակարգը: Տաճիկ ժողովուրդը թէ տեմպերամենտով և թէ կենցաղով անհամեմատ բարձր է կանգնած մահմեդական միւս տարրերից, մասնաւորապէս քրդերից, բայց որպէս տիրող տարր, որը կոչւած է իրր առաջ մղելու երկիրը մտաւորապէս և տնտեսապէս, շատ յետամնաց է և կուլտուրապէս անհամեմատ աւելի ստոր աստիճանի վրա կանգնած, քան հայ ժողովուրդը, չը նայած քաղաքական և սօցիալական այն ծանր պայմաններին, որի մէջ գտնուում է վերջինս: Շնորհիւ այդ յետամնացութեան, տաճիկ ժողովուրդը երկրի կուլտուրայի վրա որևէ ազդեցութիւն ունենալ չի կարողացել և յաճախ եղել է գործակից այն վայրագութիւնների, որ տեղի են ունեցել մահմեդական միւս տարրերի կողմից:

Ի՞նչ է ներկայացնում իրենից քուրդը, ազգաբնակչութեան խոշորագոյն թիւ կազմող այդ տարրը:

Քուրդ ասելով չը պիտի հասկանալ, միատարր, միաբարբառ և միևնոյն հաւատալիքները դաւանող կոմպակտ ժողովուրդ, ոչ, նա այլատարր է, այլաբարբառ և այլահաւատ, բայց ի նկատի ունենալով նրա սօցիալական դրութիւնը, նրա կենցաղը, ընդհանուր առմամբ նրա վրա կարելի է նայել իբրև մի ամբողջութիւն կազմող ժողովրդի:

Այս տեսակէտից մօտենալով խնդրին, նրան պիտի բաժանել երկու մասի. մէկ մասը դրանցից այն է, որը, թողնելով արդէն թափառական կեանքը, այժմ նստակեաց կեանք է վարում, ապրում է դաշտային աշխատանքներով և ենթակայ է այն բոլոր զրկանքներին, որոնց ենթակայ են առհասարակ խաղաղ աշխատանքներով ապրող երկրագործ ժողովուրդները Տաճկաստանի պէս մի անկազմակերպ պետութեան մէջ: Իսկ երկրորդ մասը, որը յամենայն դէպս կազմում է ընդհանուր քրդութեան խոշորագոյն մասը, այն է, որ շարունակում է դեռ ևս սկզբնական ցեղային, նօմադական կեանք վարել, որը առած իր հօտերը տարւայ մէջ 6-7 ամիս շարունակ մի տեղից չուում է միւս տեղը և անվերջ տեղափոխութիւնների պատճառով գտնւելով շփման և ընդհարումների մէջ այլ ցեղերի հետ, կրում է իր վրա պէնք, որով եթէ նա երբևէն պաշտպանուում է թշնամի ցեղերի յարձակումներից, յա-

ճախ միևնոյն զէնքով յարձակում, կողոպտում և սպանում է իր աշխատանքով ապրող խաղաղ երկրագործ ժողովրդին:

Այս երկրորդ մասը քուրդ աշիրէթներն են, այն աշիրէթները, որոնք թէև գրաւել են ահագին քանակութեամբ հողեր, բռնի ձեռք են բերել շատ բերրի դաշտեր, բայց գեռ- ևս շարունակում են անբաժան մնալ իրենց սիրած լեռներից ու զէնքից, իսկ տեղը եկած ժամանակ ասպատակում և սարսափ են տարածում խաղաղ անպաշտպան ազգաբնակչութեան վրա, մի չարիք, որից տառապում է երկիրը, որից քայքայւում և կազմալուծւում է ժողովուրդը:

Քուրդ տարրը բազկացած է բազմաթիւ ցեղերից կամ աշիրէթներից, որոնցից իւրաքանչիւրը, նայած իր մեծութեանը, ունի իր ցեղապետը, իր ներքին կազմակերպութիւնը, իր բնակչութեան վայրը և իր ազդեցութեան սահմանները: Շատերն այդ ցեղերից ունին իրենց ստորաբաժանումները յատուկ ցեղապետներով: Այդ ցեղերն աւելի կամ պակաս չափով տարբերւում են միմեանցից իրենց բնազդներով, կողոպտելու և առևանգելու հակումներով ու բարբարոս գործողութիւններով. յաճախ դրանց մէջ չնչին պատճառներից առաջ են գալիս ընդհարումներ, որոնք երբևէն դառնում են ամբողջ ցեղերի կռիւ և վերջանում խոշոր մասսային ընդհարումներով և բազմաթիւ սպանութիւններով:

Քրդական ցեղերի հետ աւելի մօտիկից ծանօթանալու համար մենք կը բերենք մի քանի մանրամասն տեղեկութիւններ, քաղելով այդ էրդրումում հրատարակւող «Յառաջ» թերթի 1909 թւի 7 և 11-րդ համարներում տպւած պ. էքլէրի յօդւածներից, աւելացնելով նրան մեր մի քանի անձնական տեղեկութիւնները:

- Քուրդ ցեղերից նշանաւոր են.
- 1) Զալալցիներ. սա բազմամարդ մի ցեղ է. բնակւում է Ալաշկերտի, Բայազէտի և Իրազիւնի գաւառներում. այս ցեղի ստորաբաժան ցեղերն են Հասասօրցիները, Սականցիները, Սօտանցիները և այլն, որոնք ամառները չուում են Սինակի լեռները: Հասասօրցիների ցեղապետն է Սալի բէկը, Սականցիների ցեղապետը Իրբաիմ բէկը, Սօտանցիների ցեղապետն Ահմադ ազան:
  - 2) Զիլանցիներ. սա նոյնպէս բազմամարդ ցեղ է և բնակւում է Ալաշկերտի և Բայազէտի գաւառներում ու Պարսկաստանի սահմանների վրա. սրա ցեղապետն է Սէլիմ փաշան:

3) Մլրագլցիներ. այս ցեղը բնակուում է Դուժագի գաւառում և պարապում է մասամբ խաշնարածութեամբ և մասամբ հողագործութեամբ:

4) Հալգարանցիներ. սա շատ բազմամարդ ցեղ է. բնակուում է Դուժագի, Ալջաւագի, Արճէշի և Բերկրիի գաւառներում. ցեղապետներն են Հուսէին փաշան և Էմին փաշան՝ երկու եղբայրներ, որոնք 1896 թւի կոտորածների ժամանակ աւերեցին Արճէշն ու Ալջաւագը և շատ բարբարոսութիւններ գործեցին. սրա ստորաբաժան ցեղերն են Շամբակցիները, Ղազըկցիները, Թաջղոցիները և Մուքայէլցիները, որոնք բնակուում են Իրադինի գաւառում, իսկ ամառները չուում են Ալաղաղի և Թանդուբէքի լեռները: Շամբակցիների ցեղապետն է Մամադ բէկը, Ղազըկցիներինը Մստաֆա բէկը, Թաջղոցիներինը Մստո Չամգակը, Մուքայէլցիներինը Հուսէյին բէկը:

5) Հասանանցիներ. սա բազմամարդ և հարուստ ցեղ է բնակուում է Մանազկերտի, Բուլանըզի և Խնուսի գաւառներում. սրանց գլխաւորն է Մանազկերտի Ֆաթուլլա բէկը: Այս ցեղն ունի բազմաթիւ ստորաբաժանութիւններ. դրանք են Ըմբրեանք, Շէշները, Ֆարզները, Ասէաները, Ֆիսիանցիները, Շէշբուկցիները և այլն:

6) Զիրբանցիներ. սա նոյնպէս մի բազմամարդ ցեղ է. ունի շատ ճիւղեր. դրանք են Մախսուտներ, Խըթունք, Տարպօներ, Ֆէզլիներ և այլն, որոնք գտնուելով թշնամական յարաբերութիւններ մէջ, անվերջ կռիւներ են մղում իրար դէմ: Այս ցեղը բնակուում է Վարդոյի գաւառում և Խամուր լեռան լանջերի վրա:

7) Շատիանցիներ. սա երկրագործութեամբ պարապող մի խաղաղ ցեղ է, ենթակայ աշիրէթների ճնշումներին. բնակուում է Խնուսի գաւառի հարաւային մասում և Դերջանի շրջակայքում:

8) Բլըբցիներ. սա Զիրբանցիներին բաժանուած մի փոքրիկ ցեղ է և բնակուում է Խնուսի գաւառում:

9) Մամբկանցիներ և Մայտանցիներ. այս երկու ցեղերը, որոնք հաշուում են Հասանանցիների վրա, բնակուում են Մուշի գաւառում և Քօսուրի լեռներում:

10) Զըխուրցիներ և Խոյթեցիներ. այս երկու ցեղերը բնակուում են Մուշի գաւառի Զխուր գաւառամասում և Խոյթ գաւառի մէջ. սրանց գլխաւորն է տիրահոջակ Մուսա բէկը, որը յայտնի է Մուշի գաւառում գործած իր վայրագութիւններով և Գիւլիզարի

փախցնելովը. սրա եղբայրն է Կասմ բէկը, նոյնպէս յայտնի իր վայրագութիւններով:

11) Զարիկցիներ. սա խաղաղ աշխատաւոր մի բազմամարդ ցեղ է իր հատուկ բարբառով և գաւառանքով, որ և կոչուում է կըզլըաշ, իսկ մի մասը խըբբաշ. այս ցեղը ապրում է Խնուսի, Դերջանի, Քոյիի և Դէրսիմի գաւառներում:

12) Մօտանցիներ. սա մի վայրագ և անհանդիստ ցեղ է. ապրում է Բիթլիսից դէպի արեւմուտք, Մօտկանի գաւառում:

13) Բալաբցիներ. սա մի բազմամարդ ցեղ է և ունի շատ ճիւղեր. դրանք են Բըւրբրցիներ, Շիքօներ, Խալիբներ, Ճէլիլներ, Մասունցիներ, Տաղերանցիներ և այլն. սրանք բնակուում են Մարաթուքի, Տօվասարի լեռներում, Խոյթի և Մօտկանի մի քանի մասերում և Փսանաց գաւառից մինչև Մասուն: Մարաթուքի լեռան շուրջը բնակող ցեղերը, ինչպէս Շիքօներ, արաբախօս են:

14) Խիանցիներ և Փսիանցիներ. այս երկու ցեղերը բնակուում են համանուն գաւառներում և որովհետեւ այդ երկու գաւառները սահմանակից են և այդ երկու ցեղերը թշնամի միմեանց հետ, այդ պատճառով նրանց մէջ յաճախ տեղի են ունենում զինուած ընդհարումներ, որոնց մասնակցում են նաև հայերը, բնակիլով իւրաքանչիւրը իրեն վրա իշխող ցեղի կողմը:

15) Բաղըբանցիներ. սա բազմամարդ, աւագակարարոյ մի ցեղ է, 12 ճիւղերի բաժանուած, որոնք միմեանց հետ թշնամի լինելով հանդերձ, հարկ կգած դէպքում միանում են և թշնամու դէմ դուրս բերում հազարաւոր կառողներ: Այս ցեղը բնակուում է Սլէվանիի և Խիանքի գաւառներում և Գէնջի ու Մասունի մէջ գտնուող լեռներում. սրա ցեղապետն է Թեյի աղայի տունը:

16) Զըւրբցիներ. այս ցեղը բնակուում է Զըւրբան գաւառում, սրի կենտրոնն է Հազրօն. սրանց գլխաւորն է Բէճէպ բէկի որդի Սէյֆէտոլին բէկը: Այս ցեղի մի մասը գաղթել և բնակութիւն է հաստատել Խնուսի կողմերում, որի գլխաւորն է վայրագ Թուլի խան բէկը:

17) Սլէվանցիներ. այդ ցեղը երկրագործ ժողովուրդ է և միևնոյն ժամանակ քաջ ու կուող. բնակուում է Սլէվանիի գաւառում. գլխաւորն է Մուֆարդինի մէջ ապրող Հաջի Ռաշիդ աղան:

18) Ռէզօթանցիներ, Բըրբանցիներ, Փնճընարցիներ, Ալիանցիներ. սրանք քոչւոր ցեղեր են. բնակուում են Խարզան, Բէշերիկ,

Բարձր, Ռընտփան գաւառներում, իսկ ամառները չու՛մ գալիս են Մուշից դէպի հարաւ Սիւ՛մ կոչուող լեռները: Ռշղօթանցիները նիգակներ են կրում և յայտնի են իրրև լաւ ձիավարմանը:

19) Խարզանցիներ. այս ցեղը մեծ մասամբ խաղաղ, երկրագործ ժողովուրդ է, մի քանի ցեղերի բաժանուած, որոնց գլխաւորն է Չոզ գիւղի Ֆէթնա բէկի որդի Միր Սէվախն: Այս ցեղի մէջ ապրում է Նիզանի շէյխը, որը մասնակցեց 1895 թւի Սասունի կոտորածներին:

20) Խիզանցիներ. այս ցեղը բնակւում է Բիթլիսից դէպի արևելք, Խիզանի գաւառում և պարսպում է երկրագործութեամբ: Այստեղ է ապրում Շէյխ Ջալալէզզինի յաջորդների մի մասը, այն Շէյխ Ջալալէզզինի, որը 1877 թւի սուլտանական պատերազմին մեծ աւերումներ գործեց Բայազէտի և Ալաշկերտի գաւառներում և որը նիւթ ծառայեց Ռաֆֆու «Ջալալէզզին» վէպին:

21) Շիրվանցիներ. այս ցեղի մի մասը խաշնարած ժողովուրդ է, իսկ մեծ մասը պարսպում է երկրագործութեամբ, պարտիզպանութեամբ, մրգավաճառութեամբ և ջորեպանութեամբ. բնակութեան տեղն է Բիթլիսից դէպի հարաւ-արևելք գտնուող Շիրվան գաւառակը: Այստեղ բնակւում է Գուֆրա գիւղի հոշակաւոր շէյխը:

22) Ալանցիներ և Շիրվանցիներ. այս երկու ցեղերը բնակւում Նորդուզի գաւառում:

23) Մալիւանցիներ, Պաւլտանցիներ, Եզգինանցիներ, Գրաւցիներ. այս չորս ցեղերը բնակւում են Շատախի գաւառում և թէպէտ բազմամարդ ցեղեր չեն, բայց աչքի են բնկնում իրենց անհանգստութեամբ, մանաւանդ Գրաւցիները, որոնց վայրագութիւնը անչափ է: Գրաւցիների ցեղապետն է Շաքիր ազան և նրա եղբոր տղա Միր Մհէն, որը մի աւազակախումբ կազմած այժմ էլ ասպատակում է Շատախը և Նորդուզը:

24) Պօնդացիներ. այս ցեղը բնակւում է Կորդուք լեռների համանուն գաւառում. ցեղը հպատակւում է հոշակաւոր Բազրխան բէկի ղերդաստանին, որի այժմեայ ներկայացուցիչներն են Մստօէ-Մէրը և Աղաէ-Սօրը: Սրանք ունին ահագին հարստութիւն և հօտեր. ամառները չու՛մ գնում են մինչև Պարսկաստանի սահմանները և աշնանը նորից վերադառնում իրենց ձմեռանոցները:

Ահա մի քանի գլխաւորներն այն բազմաթիւ քրդական ցե-

ղերի, որոնցով բռնւած են մեզ հետաքրքրող վիլայէթների լեռներն ու հովիտները. ցեղեր, որոնց մեծագոյն մասը շարունակելով նօմադական կեանք, նախամարդուն յատուկ կենցաղ, զէնքի և կողոպուտի կուլտից բացի, մի այլ կուլտ չի ճանաչում և այժմ հանդիսանում է խոչնդոտ ոչ միայն կուլտուրական ձեռնարկութիւններին, այլ և ներկայանում է իրրև մի աւերող, մի քանդող ձեռք, իրրև մի ոչնչացնող ուժ այն բոլորի, ինչ որ արւել է այդ երկրի խաղաղ աշխատանքով ապրող ժողովուրդների ջանքերի շնորհիւ:

Այս ցեղերը ահա փաստօրէն հանդիսանում են երկրի տէրը, մանաւանդ այն օրից, երբ կառավարութիւնը նրանցից կազմակերպեց համիրլիէական գնդեր և զինեց կառավարութեան զէնքերով:

## ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՒ ԿԱ- ՊԻՏԱԼԻ ԲԱՑԱԿԱՑՈՒԹԻՒՆԸ

Մի երևոյթ, որը նոյն իսկ առաջին քաղից աչքի է ընկնում Տաճկաստանի ասիական վիլայէթներում դա հաղորդակցութեան միջոցների բացակայութիւնն է: Ոտք էք դնում սուտական սանձմաններից զէպի այդ երկրի ներքը, անցնում էք ընդամենը մի ժամուայ ճանապարհն և զգում էք, որ միջնորդը փոխեց, կարգերը այլ դարձան և կուլտուրական երկրից մտաք անկուլտուր երկիր: Այդտեղ չէք լսում երկաթուղու սուրոցը, այդտեղ չկան կառքեր և կառապաններ, այդտեղ չէք գտնի նաև շատ ու քիչ տանելի ճանապարհներ ու կայարաններ: Շոգեմեքենային փոխարինում է ձին, կառքերին ջորին, իսկ բեռնակիր ֆուրգոններին էշերի և ուղտերի քարավանները: Այսպիսի միջոցներով է կատարւում երթևեկութիւնն ու ապրանքների տեղափոխութիւնը խոշոր կենտրոնների մէջ. յետ ընկած գաւառներն ու լեռնոտ շրջանները այդ յարմարութիւններից էլ զուրկ են:

Այդ երկրում օրինաւոր ճանապարհները բացակայում են բառի բուն նշանակութեամբ, չը նայած, որ կառավարութիւնը ժողովրդից վերցնում է ճանապարհներ անցկացնելու համար յատուկ տուրք կամ ինչպէս այնտեղ անւանում են «եօլ փարասի»: Եօլ փարասին գանձւում է և գանձւում է ամենայն խստութեամբ, բայց երկրի մէջ ճանապարհներ չեն շինւում, իսկ եզամները մնում են նախկին գրութեան մէջ:

Գլխաւոր ճանապարհ, որ գոյութիւն ունի մեղ հետաքրքրող երեք վիլայէթներում, դն տրանզիտի ճանապարհն է, որը ձգւած է Տրապիզոնի և Թաւրիզի մէջ: Այս ճանապարհն անցնում է Բայբուրդի, Էրզրումի, Բասէնի, Ալաշկերտի և Բայազէտի տափարակներով. այդ ճանապարհով փոխադրւում են եւրոպական ապրանքները հիւսիսային Պարսկաստան և արտասանւում են Պարսկաս-

տանից Եւրոպա մեծ քանակութեամբ. բերքեր և շնորհիւ այն հանգամանքի, որ այդ ճանապարհով շահագրգուած են եւրոպական մի շարք պետութիւններ, այդ պատճառով առանձին հոգս է տարւած նրա կանոնաւորութեան և ապահովութեան համար: Չը նայած այդ բոլորին, ապրանքների տեղափոխութիւնը կատարւում է ուղտերի քարավաններով, որովհետև նոյն իսկ այդ ճանապարհը կանոնաւոր խճուղի համարելուց շատ հեռու է և իր ամբողջ երկարութեամբ անխաչին երթևեկութեան համար անպէտք, թէև մի քանի տեղերում, մասնաւորապէս Էրզրումի և Տրապիզոնի մէջ, գոյութիւն ունի նաև անխաչին երթևեկութիւն:

Մի այլ ճանապարհ ձգւում է Երզնկայից մինչև Էրզրում և Էրզրումից մինչև ուսասց սանձմանը, մի որոշ տեղ միանալով արանզխի ճանապարհին. այս ճանապարհը նոյնպէս հեռու է խճուղի համարելուց. ճիշտ է, Էրզրումից մինչև ուսասկան սանձմանը երթևեկում են կառքեր, բայց տեղ տեղ այնպիսի դժուարութեամբ, որ ձիով երթևեկելը յաճախ գերադասելի է լինում:

Այս երկու ճանապարհներն ամենաբանուկ և կանոնաւոր ճանապարհներն են ամբողջ երեք վիլայէթներում. միւս երկրորդական ճանապարհներն աւելի ևս վատթար են ու անտանելի:

Մի ճանապարհ Էրզրումից Սուուսի վրայով անցնում է զէպի Մուշ, Բիթլիս և Դիարբէքի, այդ երեք կենտրոնները կապելով Տրապիզոնի հետ. բայց այդ ճանապարհով ոչ միայն հնարաւոր չէ անխաչին երթևեկութիւնը, այլ և ձմեռուայ ամիսների ընթացքում յարաբերութիւնները միանգամայն ընդհատւում են. շնորհիւ դրա Դիարբէքիի և Տրապիզոնի մէջ երթևեկութիւնը և ապրանքների տեղափոխութիւնը գլխաւորապէս կատարւում է Սարբերդի վրայով, թէև այդ դիմը անհամեմատ երկար է Էրզրում-Բիթլիսի զմից:

Ճիշտ է, Մուշից զէպի Էրզրում խճուղի անցկացնելու փորձ եղել է և երկու տարի առաջ Մուշի գաշտից սկսած մի որոշ տեղ ճանապարհը հարթել են և նոյն իսկ խճով ծածկել, բայց որովհետև խճի վրա աւազ չի լցւած և սխմիչ անիւներով չի ամրացրած, այդ պատճառով երթևեկութիւնը կատարւում է ոչ թէ խճի վրայով, այլ խճի երկու կողմերով, արտերի ու ցանքերի միջով ձգուող ուղիով, որը անձրևների ժամանակ միանգամայն անանցանելի է դառնում:



Վանից դէպի էրզրում կայ երկու ճանապարհ. մէկը զրանցից ձգւում է Վանի լճի հիւսիսային ափերով, Մանազկերտի և Խնուսի վրայով, բայց այս ճանապարհը նման էրզրումից-Մուշի թիւիս ձգւող ճանապարհին, ձմեռները փակւում է և երթեկու-թիւնը դադարում. երկրորդ ճանապարհը Վանի լճի հիւսիսային ափերից թեքւելով դէպի հիւսիս, Արճէշի, Գութաղի և Ալաշկերտի վրայով գնում միանում է տրանսպիտի ճանապարհին, կատարելով մի մեծ շրջան. այս ճանապարհով երթեկու-թիւնը ևս զլիսաւորապէս ձմեռները, երբ լեռնային կարճ ճանապարհներն արդէն ձիւնով են բռնւած լինում:

Միևնոյն պայմանների մէջ գտնւում են Վանից դէպի Բիթլիս, Պարսկաստան և Ռուսաստան տանող ճանապարհները:

Եւ ինչ է դուրս գալիս. շնորհիւ այն հանգամանքի, որ այդ ճանապարհները մեծ մասամբ ձգւում են լեռնանցքերի, ձորերի և կիրճերի միջով և անմատչելի են անիւային երթեկու-թիւնների համար, այդ պատճառով ճանապարհորդելը և ապրանքներ տեղա-փոխելն այդ երկրում կապւած է մեծամեծ ծախքերի և ծանր տան-ջանքների հետ: Չը պէտք է մոռանալ նաև այն, որ կանոնաւոր ճանապարհներ չը լինելով, չը կան նաև կամուրջներ գետերի վրա, որ և ճանապարհորդները յաճախ մեծ պոռոյաներ են գործում գե-տերի ծանծաղուտ տեղերով ելք գտնելու համար:

Աւելի վատթար վիճակի մէջ է հաղորդակցութիւնը գաւառ-ների և առանձնապէս լեռնոտ շրջանների մէջ. շատ տեղերում նեղ շաւիղները ձգւում են խորունկ ձորերի միջով և թեք լանջերի վրայով. այդ տեղերում յաճախ նոյն իսկ գրաստի երթեկու-թիւնը անհնարին է դառնում և դրաստին փոխարինում է մարդը, մի երևոյթ, որը շատ ընդհանրացած է Տաճկաստանում. շալակում են մարդիկ ահազին ծանրոցներ և օրերով ճանապարհ կտրում. ֆիզիքական սուկալի ծանր աշխատանքը կարճէք այդ երկրի ազ-գաբնակութեան ճակատագիրը լինի:

Այս բոլորին աւելացրէք երկրի անապահով դրութիւնը, կի-սակիրթ ցեղերի աւարառութիւններն ու ասպատակութիւնները և կեանքի ու գոյքի պաշտպանութեան միջոցների բացակայութիւնը, այն ժամանակ հասկանալի կը լինի, թէ որպիսի դժար պայման-ների մէջ գտնւում են հաղորդակցութեան միջոցները այդ երկրում:

Երկիրն ինքն ըստ ինքեան ծածկւած է հսկայ լեռնաշղթանե-

րով ու խոշոր կատարներով, որոնք անկարելի են դարձնում կա-նոնաւոր հաղորդակցութիւնը. կառավարութիւնը միջոցներ ձեռք չի առնում երկրի մէջ հաղորդակցութեան միջոցներ ստեղծելու և ճանապարհներ անցկացնելու. բնիկ երկրագործ ժողովուրդը ոչ հնարաւորութիւն և ոչ էլ միջոց ունի ձեռնարկելու որևէ կուլտու-րական գործի. վայրագ քուրդ ցեղերն իրենց շահատակութիւն-ներով աւելի ևս կանգնեցնում են երկրի հաղորդակցութիւնը. և շնորհիւ այս բոլորի, կեանքն այստեղ կանգ է առել. զրա հետ միասին կանգ է առել նաև երկրի մշակութիւնը, արդիւնաբերու-թիւնը և ամեն ինչ:

Մէկ քաղաքից դէպի միւսը գնալու համար պէտք է սպասել օրերով, երբեմն և շաբաթներով, մինչև որ ուղեկիցներ կը գտնեն. առանձնապէս ձի վարձել և ուղեկից վերցնելը թէ դժւար է և թէ անասելի թանկ. այդ անկազմակերպ երկրում հասկացողութիւն չկայ արժէքների և չափերի մասին. մէկ ոսկի կը պահանջեն այն տարածութեան համար, որը կուլտուրական երկրներում կարելի է գնալ աւելի դիւրին և յարմար միջոցներով ընդամենը 2-3 բուր-լի ծախսելով: Այս երևոյթի գլխաւոր պատճառը երկրի անապա-հով դրութիւնն է: Ծանապարհորդելու միակ հնարաւոր միջոցը քարավանների հետ միանալն է, իսկ քարավաններ պատահում են շաբաթը մէկ, յաճախ երկու շաբաթը մէկ անգամ: Մինչև որ քարավանը կը գայ, բեռը կը թափի, նոր բեռ կը գտնի և ճանա-պարհ կը ընկնի, կանցնի մի ամբողջ շաբաթ: Քարավաններն էլ երթեկու-թիւնը են մեծ խմբերով. անապահով դրութիւնը նրանց էլ ստիպում է համախմբել, միասին շարժել, միասին հանգիստ առնել և ձամբորդը ստիպւած է նրանց հետ քարշ գալ օրերով, ահազին ծախքեր անել, մինչև որ տեղ հասնի: Այս պայմաննե-րում ճանապարհորդողը ծախսում է տասն անգամ աւելի գրամ և գործ է դնում տասն անգամ աւելի ժամանակ և աւելի ետանդ:

Միևնոյն դժւարութիւնները, դրամի և ժամանակի վատնումն աւելի մեծ չափով անդրադառնում են ապրանքների վրա. մի գա-ւառ կամ շրջան ունի աւելորդ մթերք, բայց փոխադրութիւնների պատճառով արտահանել չի կարողանում և մթերքը դառնում է անարժէք մի բան. մի գաւառ կամ շրջան զրկւել է բերքից, ե-րաշար ոչնչացրել է ամբողջովին նրա բերքը, փոխադրութեան դժւարութիւնների պատճառով հնարաւորութիւն չը կայ շուտափոյթ

մթերք ստանալ հարեան դաւառներից և ահա ժողովուրդը մատնուում է սովի և մեռնում է քաղցից:

Ահա այդ երկրի անտեսական քայքայումները և անասելի թշուառութիւնների գլխաւոր պատճառներից մէկը:

Այդ երկրի անտեսական աննօրմալ դրութեան մի երկրորդ պատճառը կապիտալի բացակայութիւնն է: Երկիրն, ինչպէս ասասանք, հարուստ է բերքերով, հանքերով և անտաններով. բարեբեր գաշտերը, գետաբերանները և հովիտներն ու ձորանովիտները բուսցնում են ընտիր հացահատիկներ, ծխախոտ, խաղող, ծառապտուղներ, թթենիներ. լճերն ու գետերը հարուստ են ձկներով. կան աղի, երկաթի, նաւթի, պղնձի, արծաթի, ոսկու և այլ հանքեր. լեռները շատ տեղերում ծածկւած են իրա անտաններով. Վանի լիճը իր ծովափնեայ բերրի գաւառներով ներկայանում է նաւագնացութեան համար յարմար մի շրջան. հանքային հարուստ ջրերը, գեղեցիկ բնութիւնը, անասնապահութեան համար անփոխարինելի բարձրազանդակներն ու արօտները հանդիսանում են շահագործման համար ընդարձակ վայրեր: Բայց շնորհիւ այն հանգամանքի, որ երկրի մէջ չկայ կապիտալ, չի շահագործուում ոչ երկրի արդիւնաբերութիւնը և ոչ էլ հանքային հարստութիւնները, այդ պատճառով ամեն ինչ շարունակուում է մնալ իր նախնական դրութեան մէջ:

Երկիրը մշակուում է այն չափով, ինչ չափով որ պահանջուում է տեղական անմիջական կարիքը իր սակաւապէտ աղքատիկ պէտքերով. յատկապէս արտահանելու և շուկաներ ստեղծելու համար բերքեր բոլորովին չեն մշակուում. հանքերից միայն աղն է շահագործուում, սակայն որի շահագործումը կատարուում է շատ պրիմիտիւ ձևով և այդ պատճառով լայն արտահանութիւն չի գտնուում. անասնապահութիւնն ու խաշնարածութիւնը, որոնք կազմում են ժողովրդի խոշոր պարապմունքներից մէկը և որոնց ստացւում է բուրդ, մազ, կաշի, մորթի, ճարպ և կաթնեղէն մթերքներ, նոյնպէս օրինաւոր արտահանութեան նիւթ դառնալ չեն կարողանում:

Երկրի մէջ դրամ չը կայ, առևտուրը կատարուում է մեծ մասամբ ապրանքների կամ բերքերի փոխանակութեան սխտեմով. սպասել, որ ներքին կապիտալը գայ շահագործելու երկրի բնական

հարստութիւնները, միամտութիւն կը լինի. մնում է, որ օտար կապիտալը գայ այդ դերն ստանձնելու, բայց այդ նոյնպէս տեղի չի ունենում, որովհետև կապիտալը միայն այնտեղ է մուտք գործում, ուր գոյութիւն ունին աշխատանքն ու կապիտալը աստիճանող կարգեր, կարգեր, որոնք միանգամայն բացակայում են Տաճկաստանի ասիական վիլայէթներում: Ընշտ է, յաճախ կապիտալն ինքը գալիս է կարգ և ապահովութիւն ստեղծելու՝ այնտեղ, ուր պահանջուում է նրա շահը, բայց արդեօք մեր ընդգծած երկիրն ունի որևէ հրապուրիչ կողմ դէպի իրեն ձգելու օտար կապիտալներ. ի հարկէ ոչ:

Ահա գլխաւոր խոչնդոր բոլոր կուլուրական ձեռնարկութիւնների, հետևապէս և երկրի անտեսական դրութեան ու ժողովրդի բարեկեցութեան:

Երբ չը կայ բնական հարստութիւնների շահագործում, արդիւնաբերութիւնն ու գործարանական կեանք, բանուորական ձեռքերի աշխատանք, հետևապէս չը կայ նաև մթերքների սպառումն և մանր հնչիւն դրամի գործածութիւն:

Եւ իսկապէս, այդ երկրում այնքան սակաւ է դրամն ընդհանրապէս և մանր դրամն առանձնապէս, որ առևտուրը միանգամայն կաշկանդւած է: Կարող էք երևակայել, որ յաճախ կամ գնողն է հրաժարուում գնումից և կամ խանութպանը վաճառքից միմիայն այն պատճառով, որ գնողի մի ոսկին մանրացնելու համար մանր դրամ չի ձարուում և այս տեղի է ունենում շատ անգամ:

Թէ մեղ հետաքրքրող, առանձնապէս Վանի և Բիթլիսի վիլայէթներում դրամի և մանր դրամի սակաւութեան պատճառով որպիսի կօմիքական դրութիւններ են ստեղծուում, գաղափար կազմելու համար առաջ կը բերենք մի քանի երևոյթներ:

Տաճկաստանում դրամական ամենափոքր միութիւնը փարան է, որը հաւասար է սուսական  $\frac{1}{5}$  կոպէկին, կամ որի 5 հատը հաւասար է մէկ կոպէկին, բայց մէկ փարանոց դրամ չը կայ, այլ կան 5 և 10 փարանոց պղնձեայ դրամներ: Իրերն արծաթեայ դրամ գոյութիւն ունի դահեկանը կամ կուռուշը, որը հաւասար է 40 փարային կամ սուսական 8 կոպէկին. արծաթեայ դրամներ կան նաև 2 կուռուշանոց, 5 կուռուշանոց, 10 կուռուշանոց և 20 կուռուշանոց. 20 կուռուշանոց դրամը սուսական մէկ մանէթանոց արծաթ դրամից մեծ է, կոչւում է սպիտակ մէջիդ և հաւասար է

1 մանէթ 60 կոպէկին: Իսկ իբրև ոսկէ դրամ գոյութիւն ունի տաճկական լիրան, որը կոչուում է դեղին մէջիդ. դեղին մէջիդը հաւասար է 5 սպիտակ մէջիդին կամ 100 կուռուշին և կամ ոսկական 8 մանէթին. բայց շրջանառութեան մէջ հաշուում են 105-106 կուռուշ:

Իբրև դրամական միութիւն գործ է ածուում կուռուշը. դրամնով գնահատուում են բոլոր ապրանքները և չափուում բոլոր արժէքները. և շնորհիւ այն հանգամանքի, որ մանր դրամներ շրջանառութեան մէջ շատ քիչ կան և մանր առևտուրը, ինչպէս և դրամների մանրացնելը պայմանաւորուած է դժուարութիւնների հետ, այդ պատճառով աշխատում են առևտրին որքան կարելի է պարզ ձև տալ և գնահատել ամբողջ կուռուշներով. ոչ միայն ժողովրդի մէջ, այլ և պետական հիմնարկութիւններում ամեն կերպ աշխատում են յարմարել դրամական պայմաններին. այսպէս, օրինակ, սովորական նամակադրօշմը կամ մարկան արժէ մէկ կուռուշ. արտասահման ուղարկող նամակների համար նոյնպէս պահանջուում է մէկ կուռուշի մարկա. բայց նամակները թէ կրկրի մէջ և թէ արտասահման ուղարկելու համար արժէ կէս կուռուշ. հեռագրի իւրաքանչիւր բառի համար միևնոյն վիլայէթի մէջ վճարուում է  $\frac{1}{4}$  կուռուշ, հարեան վիլայէթների մէջ  $\frac{1}{2}$  կուռուշ, ոչ հարեան վիլայէթների մէջ  $\frac{3}{4}$  կուռուշ, իսկ աւելի հեռուոր վիլայէթների մէջ 1 կուռուշ:

Մանր դրամի սակաւութիւնը յաճախ զաւեշտական դրութիւններ է ստեղծում. նախ՝ դրամներ մանրացնելու համար վարձ վերցնելը այդ երկրում սովորական երևոյթ է. օրինակ դեղին մէջիդը մանրացնելու համար վերցնում են 3-5 կուռուշ. արժաթ մէջիդի համար 1 կուռուշ. բայց աւելի զաւեշտականն այն է, որ ապրանք վաճառելիս խանութպանը շատ անգամ մանր դրամ չը լինելու պատճառով կամ խօսեցածից աւելի է վերցնում և կամ պակաս, միայն թէ հնարաւոր լինի որևէ կերպ դրամի աւելին վերագարձնել:

Երկրորդ՝ հետաքրքիր է տեսնել, թէ որպիսի հնացած դրամներ դասնում են շրջանառութեան մէջ. նոր դրամների համարեա չէք պատահում այդ երկրում. ձեռքէ ձեռք անցնում են դրամներ բոլորովին մաշւած և գրւածքներից զրկւած. առնում ու տալիս են դրամներ կանթած և ծակւած, որը ցոյց է տալիս, որ

այդ դրամները մի ժամանակ զարգարելիս են եղել կանոնաց ճակատներն ու պարանոցները և այդպիսի դրամները մսխուում են առանց որևէ դժուարութեան:

Ի հարկէ, այս երևոյթը նոյնպէս հետևանք է կապիտալի չը գոյութեան, մի երևոյթ, որը անդրադարձել է տնտեսական կեանքի բոլոր ճիւղերի վրա իր բացասական կողմերով:

Կապիտալն ինքը մի շարժիչ, ստեղծագործող ուժ է. մի երկիր տնտեսապէս և մտաւորապէս այն ժամանակ է առաջ գնում, երբ այնտեղ մուտք է գործում կապիտալն իր հսկայական ձեռնարկութիւններով. կապիտալն է, որ պատուում է ձորերի ու լեռների կրճեքը, անց է կացնում ուղիներ և ճանապարհներ, դիմում է մեքենայի յեղաշրջող ուժին և զարկ է տալիս թմբած քարացած կեանքին. սրանից ոչ մէկը չէք գտնի Տաճկաստանի տարական վիլայէթներում. և այդ շատ բնական է, որովհետև կապիտալը բառի բուն նշանակութեամբ բացակայում է այդ երկրում և նրա տեղը դեռ ամուր նստած են միջնադարեան աւատական կարգերը, մարդկային իրաւագրկութեան այդ ինստիտուտը իր սեկրականութեամբ:

### ՕՐԷՆՔ ԵՒ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ

Օրէնք այն իմաստով, ինչ իմաստով որ հասկացուած է այժմ և օրէնքի գործադրութիւն այն մտքով, ինչ մտքով որ ընդունուած է առողջ արամարանութիւնը, Տաճկաստանի առիական վիլայէթներում գոյութիւն չունին: Այս կարծիքը Տաճկաստանի պէս մի պետութեան նկատմամբ թերևս այնքան էլ տարօրինակ չը թւայ, եթէ ի նկատի ունենանք, որ շատ լուսաւոր համարւած երկրներում անգամ օրէնքը և օրէնքի գործադրութիւնն իր ցանկալի աստիճանին դեռ ևս չի հասել:

Իայց մենք Տաճկաստանի վերաբերմամբ աւելին կասենք. կառավարութիւն այն իմաստով, ինչ իմաստով որ հասկացուած է այժմ, կամ կառավարութիւն այն մտքով, ինչ մտքով որ պահանջուած է նոյն այդ կառավարութեան սեփական շահը, նոյնպէս գոյութիւն չունին Տաճկաստանի առիական վիլայէթներում: Եթէ այդ երկրում գոյութիւն ունենար մի կազմակերպւած կառավարութիւն ժամանակակից իր բոլոր ֆունկցիաներով և նոյն իսկ իր երկաթէ օրէնքներով, դա անշուշտ կը լինէր մի բարիք այդ երկրի ժողովրդի համար, որովհետև այդպիսի կառավարութիւնը որքան էլ խիստ լինէր և անողոր իր պահանջների և սահմանւած կարգերի նկատմամբ, նոյնքան խիստ կը լինէր դէպք. մասնակի բռնութիւնները և քրդական ցեղերի վայրագութիւնները, որոնք կողոպտելով խաղաղ աշխատաւոր ժողովրդին, միևնոյն ժամանակ կանգնեցնում են նորմալ կեանքը, դրա հետ միասին նաև երկրի կանոնաւոր մշակութիւնն ու կուլտուրան, որից մեծապէս տուժում է նախ և առաջ ինքը կառավարութիւնը:

Այդտեղ օրէնք և կազմակերպւած կառավարութիւն չը կայ, այդ պատճառով ժողովուրդը կեղերւում է պաշտօնեայից, աղաներից ու բէկերից և վայրագ քուրդ ցեղերից. իսկ եթէ լինէր ուժեղ կառավարութիւն, յամենայն դէպս, թէկուզ իր կեղերումների համար նա կը զսպէր և պաշտօնեային, և աղային ու բէկին

և վայրագ քրդին: Երբ ոտք էք դնում այդ երկրի ներքը, մօտիկից ծանօթանում էք տիրող կարգերի հետ, տեսնում այն անհատական և մասսայական կեղերումներն ու բռնութիւնները, որ տեղի ունին ամեն օր, խորին ցանկութեամբ բացականչում էք.

— Ինչո՞ւ այս երկրում չը կայ երկաթէ կառավարութիւն իր երկաթէ օրէնքներով, որը գար վերջ դնելու այն անարխիային, որից տառապում է անվերջ երկիրը:

Սակայն ասել, թէ Տաճկաստանում օրէնք և կառավարութիւն ասած բաները բոլորովին գոյութիւն չունին, չի կարելի. ընդհակառակը, մօտիկից ծանօթանալով այդ երկրի օրէնքների, կառավարական ձևերի հետ այն չափով, ինչ չափով որ նրանք գոյութիւն ունին թղթի վրա, մարդ ապշում է, ապշում է, տեսնելով լայն ժողովրդական մասնակցութիւն թէ դատաստանական հիմնարկութիւնների և թէ վարչական մարմինների մէջ:

Տաճկական օրէնքներն այն չափով, ինչ չափով որ նրանք չեն հակասում զուրանի սկզբունքներին, կրում են լայն ժողովրդական բնույթ: Սուլթան Աբդուլ-Մէջիդի երկու իրազէները — առաջինը Սադր-Շէրիֆը, հրատարակւած 1839 թւին գահակալութեան առիթով, երկրորդը Սադր-Հիւմայիւնը, հրատարակւած 1856 թւի կոստի պատերազմից յետոյ, եկան սկիզբ դնելու արդար օրէնքների, որոնցով հաւասար քաղաքացիական իրաւունք էր տրուած բոլոր հպատակներին առանց խտրութեան կրօնի, ցեղի և դասակարգի. յայտարարւում էր կրօնական ներդրամութիւն, վերապահւում էր իրաւունք բոլոր հպատակներին, որպիսի ծագում էլ որ նրանք ունենային, վարելիք պետական ծառայութիւն և հիմնելու դատարաններ բոլոր ազգութիւնների ներկայացուցիչների մասնակցութեամբ:

Համաձայն այդ իրազէների մինչև այժմ էլ պետական վարչական մարմինների, դատաստանական հիմնարկութիւնների և քաղաքացիական կազմերի մէջ մասնակցութիւն ունին ժողովրդական ներկայացուցիչներ:

Այսպէս, իւրաքանչիւր վիլայէթ, սանջակ և կազա ունին իրենց վարչական մարմինները կամ մաջլիս իդարաները:

Վիլայէթի մաջլիս իդարային մասնակցում են. 1) վալին, 2) մուֆթին, որը հանդիտանում է հոգևոր ներկայացուցիչ և օրէնքները բացատրող ըստ զուրանի, 3) դադին, կամ դատաւորը

4) առաջնորդը կամ փոխանորդը (քրիստոնեաների կրօնապետը),  
 5) դաւթարդարը կամ վալիի օգնականը, 6) մակթուրչին (քարտուղարը) և 7) չորս ընտրեալներ ժողովրդի կողմից՝ 2-ը մահմեդական և 2-ը քրիստոնեայ:

Սանջակի մաջլիս իղարային մասնակցում են. 1) մուխասարիֆը, 2) մուֆթին, 3) զազին, 4) առաջնորդը կամ նրա փոխանորդը, 5) մահաաուբաչին (համարակալ), 6) թահրիրաթ մուդիրին (քարտուղար) և 7) չորս ընտրեալներ ժողովրդի կողմից՝ 2-ը մահմեդական և 2-ը քրիստոնեայ:

Կազայի մաջլիս իղարային մասնակցում են. 1) գայմագամը, 2) մալը մուդիրը, 3) հաշագահը, 4) քարտուղարը և 5) երեք ընտրեալներ ժողովրդի կողմից:

Մաջլիս իղարաներն աճուրդի են դնում գիւղերի տասանորդ տուրքերը, հողում են զօրքերի անտեսական պէտքերը, կարգադրում են հարկերի գանձումը, կրթական գործը և ճանապարհների հոգացողութիւնը:

Քաղաքներն ունին իրենց վարչական մարմինները, որոնք կոչւում են վալադիէ դայրասի կամ քաղաքապետութիւն. սրանք կազմւած են քաղաքացիների կողմից ընտրւած ներկայացուցիչներից, որոնք և վարում են քաղաքի վերաբերեալ բոլոր գործերը:

Աւելի լայն սկզբունքների վրա դրւած են դատաստանական հիմնարկութիւնները. այդտեղ անպայման կերպով մասնակցում են ժողովրդական ներկայացուցիչներ և դատերը վճուում են կուլիգիալ հիմունքներով:

Հաշտարար դատարանները կամ մահքէմէի սուլֆիէները կազմւած են մուդիրից և մահմեդական ու քրիստոնեայ մէկ մէկ ներկայացուցիչ անդամներից:

Նախնական դատարանները կամ բիդայէթ մահքէմէսիները կազմւած են զազիից և մահմեդական ու քրիստոնեայ մէկ մէկ ներկայացուցիչ անդամներից:

Վերաքննիչ դատարանը կամ իստինաֆ մահքէմէսին երկու բաժանմունք ունի. առաջինը քաղաքացիականն է կամ հուկուկը՝ որը կազմւած է զազիից և երկու ներկայացուցիչ անդամներից, իսկ երկրորդը քրէականն է կամ ջազա մահքէմէսին, որը կազմւած է ըէյսից և երկու ներկայացուցիչ անդամներից: Եթէ քննելիք գատը ծանրակշիւ է, դատին մասնակցում են չորս ներկայացուցիչ անդամները համապատասխան ատեանում:

Վալիաթի դատարանը կամ իստինաֆ մահքէմէսին չորս բաժանմունք ունի.

1) Քաղաքացիականը կամ իստինաֆ հուկուկ մահքէմէսին կազմւած է զազիից և չորս ներկայացուցիչ անդամներից:

2) Քրէականը կամ իստինաֆ ջազա մահքէմէսին կազմւած է ըէյսից և չորս ներկայացուցիչ անդամներից:

3) Ամբաստանիչ ատեանը կամ հիյաթ իթտինամիան կազմւած է ըէյսից և երկու ներկայացուցիչ անդամներից:

և 4) Վաճառականական ատեանը կամ թուջարաթ մահքէմէսին կազմւած է ըէյսից և չորս ներկայացուցիչ անդամներից:

Ահա լայն ժողովրդական մասնակցութիւն ունեցող դատարաններ և վարչական մարմիններ, որպիսիները դժւար է գտնել Տաճկաստանի պէս մի այլ պետութեան մէջ, բայց հարցը նրանումն է, որ այդ գեղեցիկ սկզբունքները մնում են թղթի վրա իբրև լիկ արձանագրութիւններ, դատաստանական և վարչական մարմինները մնում են իբրև մեռած տառ և այդ հիմունքների վրա կազմակերպւած կառավարութեան գոյութիւնն անգամ չի նկատուում երկրի մէջ:

Բայց մի կարծէք, որ այդ հիմնարկութիւնները բոլորովին գոյութիւն չունին. ոչ, գոյութիւն ունին. ամեն տեղ կը տեսնէք երկու, երբեմն նոյն իսկ երեքյարկանի կառավարութեան տունը՝ հիւքմաթը <sup>1)</sup>. Բազմաթիւ պաշտօնեաներ և համիդիէական խայտարղէտ իւզբաշիններ, բինբաշիններ, գայմագամներ և փաշաներ զարդարւած Եւրոպայից փոխ առած ուսապանակներով, կոճակներով, շքանշաններով ու սրերով, որոնց աջ ու ձախ կը պատահէք իսանութիւններում և սրճարաններում վեր թափւած, արևելցուն յատուկ զրոյցներով զբաղւած:

— Որքան դեմօկրատ է այս երկրում կառավարութիւնը իր հիմնարկութիւններով և պաշտօնեաներով, — բացականչում է մարդ առաջին իսկ տպաւորութիւնից, բայց երբ մօտիկից էք ծանօթանում այդ երկրի կարգերին, համոզոււմ էք, որ այդպիսի յարաբերութիւններ ատեղծել են շնորհիւ այն հանգամանքի, որ պաշ-

1) Տաճկաստանում կառավարչական բոլոր հիմնարկութիւնները, բացի զինուորական և սոստ-հեռագրական գրասենեակներից, զետեղւած են մի մեծ շինութեան մէջ, որը կոչւում է հիւքմաթ կամ օսբայ. հիւքմաթի տակի յարկում յաճախ զետեղւած է լինում բանտը:

ածնէութեան ապրուստի զլիւաւոր աղբիւրը կազմում են կաշառք-  
ները և կողմնակի եկամուտները:

Ինչ է այդ հիմնարկութիւնների և պաշտօնեաների արածը,  
համարեա ոչինչ. ժողովրդական ներկայացուցիչը անուշով է մի-  
այն ընտրեալ. ժողովուրդը չի գիտակցում իր իրաւունքները. նա  
հասկացողութիւն էլ չունի այդ իրաւունքների մասին և ընտրու-  
թիւններ տեղի չեն ունենում, այլ ներկայացուցիչներ նշանակում  
են կառավարութեանը ցանկալի ազաներ ու էֆէնդիներ. պետական  
պաշտօնեան անուշով է միայն կոչւած օրէնքները գործադրելու,  
իսկ հիմնարկութիւնները հանդիսանում են զբոյցի և սուրճ խմելու  
տեղեր: Ճնշւած, հարստահարւած խաղաղ ժողովուրդը գատարան  
չի դիմում, համուզւած լինելով, որ այնտեղ պաշտպանութիւն չի  
գտնելու, իսկ ճնշողն ու հարստահարողը կարիք էլ չունի այն-  
տեղ գրմելու:

Մինչդեռ այդ պարսպ հիմնարկութիւնների կողքին հայոց  
առաջնորդարաններն աչք չեն բացում բողոքաւոր գիւղացիների  
ձեռքից. զանազան ընտանեկան խնդիրներից բացի, այդտեղ գի-  
մում է հայ գիւղացին իր խլւած արտի, յափշտակւած եղան ու  
կողի առիթով, քրդական յարձակումների և ճնշումների բողոքով,  
բողոքներ, որոնց իշխանութիւնից զուրկ առաջնորդները տալիս  
են մեծ մասամբ խուսափողական պատասխաններ:

Այդ պարսպ հիմնարկութիւնների կողքին քաղաքի յայտնի  
սրճարաններում զանազան անգործ, բայց ազգային էֆէնդիների  
մասնակցութեամբ քննուում և վճռուում են կառավարութեան և եր-  
կրին վերաբերող յաճախ շատ կարեւոր հարցեր:

Այդ պարսպ հիմնարկութիւնների կողքին քուրդ ցեղապետ-  
ները իրենց ձեռնառնոց դրեակներում կամ լեռների կատարներին  
խփած սպիտակ չքեղ վրաններում բազմած, լուսւմ են ամեն օր  
հարիւրաւոր բերանացի զանգատներ, արձակում բերանացի հա-  
րիւրաւոր վճիռներ, վճիռներ, որոնք գործադրուում են մի չը լուսւծ  
արագութեամբ <sup>1)</sup>:

Տաճկաստանի ասիական վիլայէթներում կառավարութիւն

1) Այդպիսի լեռներում մենք բախտ ունեցանք ակնատես լինելու Հայ-  
գարանցիների ցեղի Շամսկիների ճիւղի ցեղապետ Մահմադ բէկի գառավարու-  
թեանը, որը տեղի ունէր նրա շքեղ վրանում շարքով նստած բազմաթիւ բո-  
ղոքաւորների ներկայութեամբ:

կայ, կան նաև պետական հիմնարկութիւններ և պաշտօնեաներ,  
բայց երկրի տէրերը փաստօրէն հանդիսանում են քուրդ ցեղապետ-  
ները, որոնք որպէս փոքրիկ պետութիւններ, այս ու այն գաւա-  
ռում և գաւառամասերում վարում են ինքնուրոյն անկախ կեանք:

Կառավարութիւն, այո, գոյութիւն ունի, բայց անուշով մի-  
այն և նա չէ երկիր կառավարողը, այլ նրա հանդիսատեսու-  
թեամբ երկիրը կառավարում են քուրդ ցեղապետներն իրեն կո-  
պիտ ուժի և վայրագութեան ներկայացուցիչներ, իսկ քաղաքնե-  
րում՝ ազգային տաճիկ էֆէնդիները, որոնք կառավարութիւնից  
կապալով վերցնելով պետական եկամուտների ամենախոշորը,  
այսինքն գիւղերի տասանորդի սուրբը, հարստահարում, կեղե-  
քում են ժողովրդին, որքան թիւաղբում է նրանց խիղճը:

Այսպիսով կառավարչական հիմնարկութիւնների ֆունկցիա-  
ները չէզոքանում են և կառավարութիւնը դադարում է գոյու-  
թիւն ունենալուց:

Կառավարութիւն մի դէպքում միայն գոյութիւն ունի. այդ  
այն դէպքում, երբ նա գալիս է մի աւելորդ անգամ ուժ տալու  
կեղեքող և հարստահարող տարրերին: Եւ իսկապէս, տաճիկ կա-  
ռավարութեան իւրաքանչիւր որոշումն ու կարգադրութիւնը այն  
ժամանակ և այն չափով է իրականութիւն գտնում, որ չափով  
նա գալիս է առանց այն էլ ճնշւած ու հարստահարւած խաղաղ  
ժողովրդի բեռը ծանրացնելու և ընդհակառակը, նրա իւրաքան-  
չիւր որոշումն ու կարգադրութիւնը այն չափով է անկատար  
մնում, որ չափով նա գալիս է երկրի մէջ կարգ ու կանոն մա-  
ցնելու և կեղեքող ու հարստահարող տարրերի գործողութիւննե-  
րին չափ ու սահման դնելու:

Այս ստակալի փաստը այնքան ակնեղի է Տաճկաստանի ա-  
սիական վիլայէթներում, այնպէս յայտնի կերպով ցուցադրւած է  
իւր ազգապետ անարդարութիւններով, որ մարդ իւրաքանչիւր  
քայլափոխում նորից ու նորից կանգ է առնում և բացականչում.

— Ինչո՞ւ այս երկրում չը կայ մի երկաթէ կառավարութիւն  
իւր երկաթէ օրէնքներով, որը գար վերջ դնելու այս անարխիա-  
լին, որից սաստապում է խաղաղ աշխատասէր ժողովուրդը:

Սակայն իւրաքանչիւր երեւոյթ ունի իր խորը պատճառները.  
անսեսական յարաբերութիւնները մի կողմից, քրիստոնեայ ժո-  
ղովուրդների քաղաքական հալածանքները միւս՝ գերազանցօրէն

նպաստել են Ֆէօդալական կարգերի պահպանման, որի հետ միա-  
 ժամանակ կազմակերպւած կառավարութիւն գոյութիւն ունենալ  
 չի կարող: Իսկ այնպիսի պայմաններ, որոնք կարողանային նը-  
 պաստել Ֆէօդալական կարգերի շուտափոյթ անկման և կազմա-  
 կերպւած ուժեղ կառավարութեան առաջ գալուն, տարարախտա-  
 բար դեռ ևս չեն ստեղծուել այդ երկրում:

## ՀՈՂԱՏԻՐՈՒԹԵԱՆ ԿԱՐԳԵՐԸ

Հողատիրութիւնը Տաճկաստանում կրում է մի շատ պարզ  
 պատկեր. հողային բարդ յարաբերութիւններ, իրաւական բարդ  
 կարգեր, որոնք գոյութիւն ունին կազմակերպւած, կուլտուրապէս  
 առաջ դնացած երկրներում, այստեղ չը կան:

Այն բոլոր հողերը, որոնք դուրս են պետական, վաւուֆա-  
 կան (մզկիթներին պատկանող) և պետական անձերին ընծայա-  
 բերւած հողաբաժիններից և որոնք գտնուում են երկիրը մշակող  
 զիւղացիութեան ձեռքին և կալւածատէր աղաների ու բէկերի իշ-  
 խանութեան տակ, համարուում են մասնաւոր սեփականութիւններ:  
 Համայնք և համայնական հողատիրութիւն այն ձևով, ինչ ձևով  
 որ գոյութիւն ունի Կովկասում, այդտեղ չը կայ. այն ձևի կալւա-  
 ծատիրութիւն, որ գոյութիւն ունի Կովկասում, ուր կալւածա-  
 տերէրի և նրանց հողերի վրա ընակւող զիւղացիների մէջ օրէն-  
 քով սահմանւած են որոշ յարաբերութիւններ և տուրքեր, այստեղ  
 նոյնպէս գոյութիւն չունի: Իւրաքանչիւր անհատ հանգիստանում է  
 անմիջական տէր իր ձեռքում գտնւող հողերի և այդ հողերի հետ  
 վարւում է նա իր ուզածին պէս, առանց որեւէ միջամտութեան:

Այսպէս է հողատիրութեան կարգը Տաճկաստանում ըստ երե-  
 ւոյթին. սակայն եթէ մնտուենք էութիւնը, կը տեսնենք, որ հողե-  
 րի մասնաւոր սեփականութիւն գոյութիւն չունի, որ բոլոր հողերը  
 պատկանում են պետութեան և որ վերջինը հանգիստանում է մի  
 խոշոր կալւածատէր իր բոլոր ֆունկցիաներով: Այստեղից, Տաճ-  
 կաստանում բոլոր հողերը, լինեն նրանք մշակովի, թէ խոտատե-  
 դիներ, գտնուելիս լինեն մշակող զիւղացու, թէ կալւածատէր բէ-  
 կերի ու աղաների ձեռքում, ենթակայ են տուրքերի. տուրքերից  
 մէկը կալւածահարկն է, որը վերցնւում է հողատիրոջից զրամով,  
 երկրորդը՝ սասանորդի հարկն է, որը վերցնւում բերքերից. երկ-  
 րորդ դէպքում հողը հանգիստանում է այն օրիէկտը, որը, անկախ  
 սեփականատիրոջից, համարւում է հարկատու, ում ձեռքով էլ որ

նա մշակելի: Այդ պատճառով էլ կառավարութեանը հետաքրքիր չէ, թէ ում ձեռքն է անցնում հողը, թէև տասանորդի հարկը աւելի հեշտ է սասանակ գիւղացի դասակարգից, քան կալւածատէր աղաներից ու բէկերից:

Բայց, չը նայած սեփականութեան այս ձևին, հողերը շարունակ վաճառուում և մէկից միւսի ձեռքն են անցնում, մեծ քանակութեամբ գրաւ են դրւում երկրագործական կամ աւելի ճիշտը հողային բանկում, որը գոյութիւն ունի Տաճկաստանում և բանկի միջոցով վաճառքի հանում, երբ պարտքը ժամանակին չի վճարւում:

Հողատիրութիւնը, իբրև իրաւական ձև, կատարւում է երկու ճանապարհով. գրանք են՝ հսկուղրարը և թափուն:

Հսկուղրար կոչւում է այն ձևը, որ հողը մէկի ձեռքով երկար ժամանակ մշակելով, դառնում է նրա սեփականութիւնը և կամ անցնում է մէկին իբրև ժառանգութիւն: Երկու դէպքում էլ սեփականութեան իրաւունքը չի խախտուում և դա համարւում է աւանդական և նոյն իսկ նւիրական կարգ: Հողեր սեփականելու այս ձևը, որ տեղի է ունեցել անցեալում, կատարել է շատ բնական կերպով, հողը շատ է եղել և անարժէք, քուրզը, դեռ ամուր կապւած իր լեռներին ու խաշներին, կարևորութիւն չի աւել հողագործութեանը. հայ երկրագործ գիւղացին մշակել և դրա հետ միաժամանակ սեփականացրել է այնքան հող, որքան նա հնարաւորութիւն է ունեցել մշակելու: Կառավարութիւնը ոչ միայն արգելքներ չի հանել այս բանի դէմ, այլև խրախուսել է, որովհետև որքան շատ հող մշակէր, այնքան աւելի տասանորդի տուրք կը ստացւէր: Եւ այդպիսով հայ երկրագործ ժողովրդի ձեռքն է անցել հողերի մեծ և այն էլ արժէքաւոր մասը:

Թափու կոչւում է այն կալւածագիրը կամ գործողութիւնը, որով մի կալւած կամ հող ճանաչւում է մէկի սեփականութիւն. եթէ ասում են, — թափու ունիս, — այդ նշանակում է, կալւածագիր ունիս. կամ եթէ ասում են, — թափու ունիս արած, — այդ նշանակում է հաստատութիւն ունիս արած:

Թափուն, որը սահմանել է 1858 թւին Սուլթան Աբդուլ-Մէջիդի յատուկ իրազէով և որը համարւում է սեփականութեան ամենամեծ գրաւականը, կատարւում է այս կարգով:

Թափուի հաստատութեան իրաւունքը կազայում գտնւում է

թափու քեաթիպի ձեռքում, սանջակում դաւթար խականի մամուրի (պետական տօմարների հսկիչի) ձեռքում. իսկ վիլայէթում դաւթար խականի մուդիրի (պետական տօմարների վերահսկիչի) ձեռքում:

Եթէ մէկը ցանկանում է պետական հող գնել, խնդրագրով դիմում է գայմագամին կամ մութասարիֆին և կամ վալուն. դրանք խնդրագիրը յանձնում են համապատասխան պաշտօնեային, որն իր հետ վերցնելով մէկ այլ պաշտօնեայ, գնում, հողը չափում, գնահատում է և դրամը վճարելուց յետոյ, յատուկ տօմարի մէջ արձանագրում ու վաւերացնում:

Եթէ մէկը ցանկանում է գնել մասնաւոր մարդուց հող, դարձեալ նոյն ճանապարհով խնդրագիրը հանում է համապատասխան պաշտօնեային, որն առանց երկար ու բարակ ձևականութիւնների, վաճառողի անունից հանում է հողը և արձանագրում գնողի անւան: Ահա թափույով գնահատուած արժէքի համաձայն կառավարութիւնը վերցնում է կալւածական հարկը. այդ նոյն արժէքի համաձայն հողային բանկը վերցնում է գրաւով հողերը, բաց թողնելով արժէքի կէսը 15 տարի ժամանակով և 6<sup>0</sup>/<sub>10</sub>-ով:

Տեսականօրէն այսպէս են հողատիրութեան կարգերը մեղ հետաքրքրող երեք վիլայէթներում, բայց գործնականօրէն միանգամայն այլ բան էք տեսնում այդտեղ:

Գործնականօրէն այդ երկրում իրաւունքը ուժեղինն է. ուժը գալիս է խորտակելու Հսկուղրարի աւանդական սեփականութեան իրաւունքը. ուժը գալիս է խորտակելու նաև թափույով հաստատուած սեփականութեան իրաւունքը: Ինչ խօսք կարող է լինել օրինական իրաւունքի մասին այնտեղ, ուր կոպիտ ուժը, նօմադ քուրզը, ժողովրդին կեղեքող բէկերն ու էֆէնդիները հանդիսանում են երկրի բախտը տնօրինող և միևնոյն ժամանակ երկրի պաշտօնէութիւնը:

Եւ ահա շնորհիւ ուժեղի գերագոյն իրաւունքի, բունի կերպով գրաււում են երկրագործ ժողովրդի սերնդից սերունդ տիրապետած և թափուներով հաստատուած մեծաքանակ հողերը. շնորհիւ ուժեղի այդ գերագոյն իրաւունքի, խաղաղ աշխատասէր գիւղացիութիւնը արագ կերպով և խոշոր չափերով զրկւում է հողից, սպրուստի միջոցներից և դառնում է հողազուրկ: Եւ երբ հողը փաստօրէն անցել է արգէն ուժեղի ձեռքը, փորձիր դու գտա-



բան դիմել, հակուղարարի և թափուի իրաւունքը վերականգնել. այդ ոչ միայն ապարդիւն կանցնի, այլ և նոր շարիքների առիթ կը դառնայ: Անա այս է պատճառը, որ այդ բոլորը լուս տանելը և իրականութեան հետ հաշուելը համարել է տակա, խոհեմութիւն և նոյն իսկ խելացիութիւն:

Իսկ այս բոլորի հետեանքը:

Շնորհիւ այդպիսի կարգերի և ուժեղի գերագոյն իրաւունքի, հողատէր հայ գիւղացիութեան մի սոււար մասը դարձել է հողագուրկ տարր:

Շնորհիւ այն բանի, որ քուրդ ժողովուրդը սկսել է դաշտ իջնել և թողնելով խաշնարածութիւնը, հողագործութեամբ է պարագում, բայց նրա մի մասը միայն գրաւելով հայերից հողեր, դարձել է հողատէր, այդ պատճառով ստեղծել է նաև քրդերից հողագուրկ մի տարր:

Հայ և քուրդ հողագուրկ տարրերը անտեսական և քաղաքական պայմանների ուժով մղւել են կալւածատէր աղաների, գլխաւորապէս քուրդ ցեղապետների գիրկը, մի երևոյթ, որն առանձնապէս ուժ ստացաւ վերջին երեք տասնեակ տարիների հայկական սարսափների միջոցին, մի միջոց, որը եկաւ հակադարձ ազդեցութիւն ունենալու երկրի անտեսական կեանքի վրա, զարբնելու ֆէօդալական կարգերը, որոնք Արևմտեան Եւրոպայում վաղուց արդէն պատմութեան գիրկն են անցել:

Երբեմն կեանքը հակադարձ ուղղութիւն է ստանում. նա գուրս է գալիս իր բնական ընթացքից և զիգզագներ գործում. այսպէս է եղել կեանքը մեզ հետաքրքրող շրջանում վերջին երեք տասնեակ տարիների ընթացքում, երբ դաշտային խողող աշխատանքներին միանգամայն խորթ քուրդ ցեղապետը դարձել է կալւածատէր ֆէօդալ, իսկ նրա ճորտը՝ երկրագործ հայ ժողովուրդը և մասամբ նախկին խաշնարած քուրդ ժողովուրդը:

## Մ Ա Ր Ա Բ Ա

Այն դասակարգը, որը գուրկ է սեփական հողից և մշակում է բէկական հող ու նրանով ապրուստի միջոցներ հայթայթում, կոչւում է մարաբա: Զանազան գաւառներում զանազան կերպ է արտասանւում այդ բառը. օրինակ, մարաբա, մարապա, մըրբպա, միրբպա և այլն: Մարաբայութիւնը, որպէս ինստիտուտ, թէև վաղուց գոյութիւն ունի Տաճկաստանում, բայց նա առանձին ուժ ստացաւ վերջին երեք տասնեակ տարիների ընթացքում տեղի ունեցող հայկական ջարդերի շնորհիւ: Այդ ինստիտուտի ուժեղացմանը դարկ տւեց նաև քուրդ ժողովրդի երկրագործական պարապմունքներին դիմելը, որը թէև սկսւած էր դեռ ևս 50-60 տարի առաջ, բայց թափ ստացաւ դարձեալ հայկական ջարդերի շրջանում, նրա հետ գուրկնթացաբար:

Մասնաւորապէս Էրզրումի գաշտում մարաբայութիւնը ուժեղացաւ 1828 թւի ուսու-տաճկական պատերազմից յետոյ, երբ ահագին թւով հայեր գաղթեցին Ռուսաստան և նրանցից շատերը յետ գալով, իրենց հողերը գտան արդէն գրաւած: Այժմ Էրզրումի գաշտի գիւղերի մեծ մասի հողերը պատկանում են էրզրումում տարող հարուստ և ազդեցիկ տաճիկներին, որոնք կալի ժամանակ գալիս իրենց մասն ստանում են և քաղաք վերադառնալով, վայելում գիւղացու քրտինքի պտուղը:

Մարաբայութիւնը թէև կրում է ճարտական բնոյթ, բայց նա էնպէս տարբերւում է այն ճարտական կարգերից, որոնք գոյութիւն ունէին Ռուսաստանում վաթսուեակն թւականներից առաջ: Ռուսաստանում ճորտը անբաժան կերպով կապւած էր հողի հետ. երբ կալւածը ծախւում էր, կալւածի հետ միասին նոր կալւածատիրոջ ձեռքն էր անցնում նաև նրա վրա բնակւող ճորտը:

Այդպէս չէ մարաբայութիւնը. մարաբան անձնապէս ազատ է և ցանկացած ժամանակ կարող է ձգել աղայի հողը և հեռանալ. բայց մեր գնայ, կամ ինչպէս ձգի իր ձեռքում գտնուող

հողը, քանի որ ուր էլ նա գնայ, պայմանները նոյնն են, թերևս մի այլ տեղ նոյն խի աւելի վատթար: Ուրեմն անձնական ազատութիւնը գործնականապէս մարտաջի համար մի ֆիկցիա է. մինչդեռ ֆիկցիա չէ կալւածատիրոջ համար քէֆն ուզած ժամանակ դուրս վնդդել նրան իր կալւածից և նրա տեղ ուրիշին բերել բնակեցնելը:

Մարտաջութիւնը բաժանուում է երկուսի:

Իրանցից մէկն այն է, որ հողը պատկանում է աղային, իսկ լծկանն ու գործիքները մարտաջին. այս գէպում սերմի կէսը տալիս է աղան, իսկ կէսը մարտաջին և բերքի կէսը հասնում է աղային. իսկ եթէ սերմն ամբողջապէս տալիս է աղան, նախ նա վերցնում է իր սերմը և ապա վերցնում է ֆինացեալ բերքի կէսը:

Այդ ձևի մարտաջութիւնը էրզրումի գաշտում կոչուում է օրթղչութիւն, այսինքն կիրարութիւն: Եւ եթէ Բաթաղէտի, Արաղայի և Մուշի կողմերում մարտաջան պարտաւոր է կալւածատիրոջ համար այլ և այլ աշխատանքներ կատարել, էրզրումի գաշտում մարտաջան կամ օրթղչին պարտաւոր է իր սայլով աղայի բաժինը տանելու քաղաք և իր սայլով աղը կրելու և հողը պարտացնելու:

Աւելի ծանր է երկրորդ տեսակի կամ իսկական մարտաջութիւնը. իսկական մարտաջան նա է, որը զուրկ է ամեն ինչից՝ և հողից, և սերմից, և լծկանից, և գործիքից. նա պրօլետար է բառի բուն նշանակութեամբ. այսպիսի մարտաջան աղայի իսկական ճորան է, որովհետև սա վերցնում է աղայից հողը, սերմը, լծկանը, գործիքները և բերքի երկու երրորդականը տալիս է աղային, իսկ միմիայն մի երրորդականը իրեն վերցնում. այդ նրա գոյութեան միակ միջոցն է: Չը պէտք է մտանալ, որ, ինչպէս օրթղչութեան, այնպէս էլ մարտաջութեան գէպում, նախ քան բերքը կրելը, վճարում է կառավարութեան հասանելիք տասանորդի սուրբը: Մի քանի տեղերում աղան իսկական մարտաջին տալիս է մի կով, նրա կաթով կերակրելու համար և մի տաւարի կաշի տրելունք կարելու համար. իսկ անբերրիութեան գէպում տալիս է սպրուտի համար ցորեն, գարի, գլգիլ և յաջորդ տարին ստանում է կրկնակի չափով կամ վերադրով:

Մարտաջան գէպի աղան ունի մի շարք պարտականութիւններ, որոնք յաճախ աւելի ծանր են նրա համար, քան նոյն իսկ իր աշ-

խատանքի արդիւնքի երկու երրորդական մասի վճարելը: Մարտաջան պարտական է կատարել աղայի անային և դաշտային աշխատանքները. պարտական է վարել, ցանել, հնձել աղայի ազատ ֆինացած հողերը, ձեռնել ու մաքրել ցորենը և գարին. պարտական է իր խոտով և դարմանով կերակրել ու պահել մի քանի հատ աղայի տաւարներից ու ոչխարներից և եթէ աղայի ընտանիքը գիւղումն է գտնուում, մարտաջի կինն ու աղջիկը պարտաւոր են կատարելու աղայի տան կարը, լւացքը, գործւածքները և այլ աշխատանքները: Այս ձևի օլամական աշխատանքները որևէ նորմայի կամ չափի տակ չեն մտնում, այլ այդ աշխատանքների քանակը, որակը և տեսակը կախած է աղայի կամքից, աղան բարի մարդ է, աշխատանքները համեմատաբար թեթեւ են լինում, աղան խիստ մարդ է, պահանջկոտ, անխիղճ՝ աշխատանքները ծանր են լինում ու տաժանելի. մի խօսքով մարտաջան կատարում է աղայի բոլոր հրամանները առանց տրտնջալու:

Մարտաջի կատարած բոլոր աշխատանքները հաշի առնել և արժէքի վեր ածել անկարելի է, որովհետև չը գիտէ թէ երբ և որտեղից կը արձակւի հրամանը և որքան ժամանակով և որպիսի ծանր աշխատանքներով կը զբաղւի մարտաջան:

Սակայն ֆիզիքական ծանր և երկարատե աշխատանքից ծանրագոյն այն բարոյական գրկանքներն են, որ կրում է մարտաջան իրաւագրկութեան այդ երկրում: Աղան նայում է մարտաջի վրա իբրև մի գրաստի, ոտքի տակ տալով նրա մարդկային բոլոր արժանիքները. նա այնքան հոգացողութիւն չունի մարտաջի վրա, որքան իր ձիւն և նոյն իսկ իր գամփոխի վրա. և նման արհամարանքները յաճախ այնպիսի արտասովոր կերպարանք են ընդունում և այն աստիճան ստորացուցիչ, որ մարդ հազար անգամ ղերաղասում է ֆիզիքական ծանր աշխատանքը, հազար ու մի գրկանքները, որ կրում է մարտաջան, քան նրա մարդկային արժանապատուութեանը հասցրած արհամարանքն ու վիրաւորանքները:

Թերևս կարծւի, որ նման ֆիզիքական և բարոյական գրկանքների մարտաբարոյական շրջաններում ենթակայ է միմիայն հայը, իսկ քուրդը ոչ. այսպէս էինք կարծում և մենք, նախ քան մեր ճանապարհորդութիւնը, սակայն երբ անձնական փորձով և մօտիկից ծանօթացանք այդ գասակարդի հետ, տեսանք, որ կեղե-

քողի համար այնքան էլ նշանակութիւն չունի ազգութիւնը և որ քուրդ աղան խղճի նոյն հանգստութեամբ կեղեքում, տանջում է հայի հետ միաժամանակ նաև իրեն ցեղակից ու հաւատակից քրդին:

Ուշքիլիսէի շրջակայ հայ գիւղերում կղած ժամանակ, երբ մենք հետաքրքրուում էինք այդ շրջանի քուրդ մարտարանների վիճակով, Միրզաջան գիւղի մարտարա հայերը մի շատ կօնկրէտ պատասխան տւին:

— Հայից հայը այստեղի քուրդ մարտարան է:

Միմիայն այս մէկ հատիկ նախադասութիւնը, միմիայն այս փոքրիկ ընտրողումը, ընտրողում տանջւած և արհամարուած մարտարա հայի բերանով, բաւական էր գաղափար կազմելու, թէ որ աստիճանի զրկանքների ու արհամարանքի ենթակայ է քուրդ մարտարան այդ երկրում:

Այո, հայից հայը, այսինքն հայից աւելի էլ տանջւածը և արհամարուածը քուրդ մարտարան է: Եւ այս շատ բնական է, որովհետև հայ մարտարան, որպէս աւելի ընդունակ, աշխատասէր երկրագործ, աւելի պիտի գնահատուէր կեղեքող աղայից, քան անընդունակ քուրդ մարտարան: Կայ և տաճիկ մարտարա, նա էլ է տանջւած, նա էլ է կեղեքւած, միթէ՞ կեղեքողի համար նշանակութիւն ունի ազգութիւնը:

Մարտարայութիւնը մեզ հետաքրքրող երեք վիլայէթներում մեծ չափերի է հասել, ճիշտ է, նա ամեն տեղ համահաստար չափով չէ գարգացել, բայց ընդհանուր առմամբ անագին է նրա ծաւալը. այդ ծաւալի մասին մի որոշ գաղափար կազմելու համար բերենք մի օրինակ:

Սրան կից բերում ենք մի ցուցակ Բերկրիի գաւառի Արաղայի գաշտի գիւղերի և գիւղատէրերի վերաբերմամբ. այդ ցուցակով Արաղայի գաշտում կան ընդամենը 77 քրդաբնակ և հայաբնակ գիւղեր, որոնցից 62-ը պատկանում են քուրդ աղաներին, այսինքն գիւղացիները մարտարաներ են, իսկ միմիայն 15-ը ազատ են մարտարայութիւնից: Այդ 62 մարտարա գիւղերը պատկանում են Հայդարանցիների ցեղի ցեղապետներից մէկի՝ Թոռուն կոչւող Ալի աղայի երկու աղաներին, այն է՝ Կոփ Մամադ և Մոտաֆա բէկերին ու նրանց ազգակից և ցեղակից միւս բէկերին ու աղաներին:

Ահա այս ցանկը կարող է նմուշ ծառայել մարտարայութեան այն ծաւալին, որ գոյութիւն ունի մեզ հետաքրքրող շրջանում:

Ցուցակ Բերկրի-Արաղայի գիւղերի և գիւղերը տիրապետող քուրդ աղաների 1)		
№	Գ ի ի Ղ Ե Ր Ը	Տիրապետող աղաները 2)
1	Փէտ վեր.	Ռսպի մանչին է
2	» ներք.	» »
3	Թութունար	» »
4	Աւթանէն	» »
5	Գիւմուշ թափէն	Ռսպի Մհէ Մամոյի լաճ Ալի
6	Գօնդէքրէ	Մահմադ բէյին է
7	Նէճիրվան	» »
8	Կօրական վեր. 3)	Ահմադ բէյին է
9	» ներք.	» »
10	Եկմալ 3)	Դահր բէյին է
11	Սալախանէն 3)	Ահմադ բէյին է
12	Մընէդ-կօնի	Կոփ Աւաղալ բէյին է
13	Ալիքալէն 3)	Ահմադ բէյին է
14	Կալայ	» »
15	Շարարայան	Մոտաֆա բէյին է
16	Գօնդէկանեան	Մահմադ բէյին է
17	Բազրխանէն	» »
18	Շէյթանաւա վեր.	» »
19	» ներք.	» »
20	Դէրօն 3)	Մահմադ աղային է
21	Չրբբիլու 3)	» »
22	Սըմբ 3)	Միրօյին է
23	Սաթիժ խաթուն	» »
24	Կաշմ	» »
25	Տըրշիկ	» »
26	Աղէգեառան 3)	Ռսուֆ բէյին է
27	Սէկօճկան	» »

1) Այս տեղեկութիւնները քաղել ենք պ. Շիրին Յակոբեանի տետրից:

2) Այս աղաները Հայդարանցիների ցեղին պատկանող Թոռուն Ալի աղայի տանից են:

3) Այս գիւղերում ապրում են հայեր:

Յուցակ Բերկրի-Արագայի գիւղերի և գիւղերը տիրապետող քուրդ աղաների		
№	Գ Ի Ի Ղ Ե Ր Ը	Տիրապետող աղաները
28	Աւասոր 1)	Հասան բէյի Մանմաղին է
29	Սաւախաւ . . . .	» » »
30	Բաղիզ աղէն 1)	Օսմանէի Շաւէշին է
31	Խան 1) . . . .	Ալի բէյին է
32	Ղայմաղ 1)	Ամար բէյի Մանմաղին է
33	Խաչան 1)	Մանմաղ բէյին է
34	Սըթէ-գօլան . . . .	» »
35	Գօնթէնայիմ . . . .	» »
36	Գօնդուրմէ 1) . . . .	Մհէի Մամօյի Սագօյին է
37	Կալառաշ . . . .	Ալի բէյին է
38	Դիրայլի . . . .	Ուսուֆ Աւաղալ աղին է
39	Կանէգաւան 1)	Աղօյի Նուր Մանմաղին է
40	Լիխոօմ . . . .	» » »
41	Ջիլէն վեր. . . .	Մատաֆա բէյին է
42	» ներք. . . .	»
43	Թիքմէն վեր. 1)	»
44	» ներք . . . .	»
45	Շէխալօ . . . .	»
46	Շիխսուջու . . . .	»
47	Քօրա . . . .	»
48	Նգարաղէն վեր. . . .	»
49	» ներք. 1) . . . .	»
50	Գօնդէ կաղախան . . . .	»
51	Դոււաւա . . . .	»
52	Ռահմին . . . .	Շաւէսցի աշիրէթի գիւղերն,
53	Կալաջուղ . . . .	ընկած Արագայի Աւառաշ
54	Չրաղ . . . .	զաւառակում:

1) Այս գիւղերում ապրում են հայեր:

Յուցակ Բերկրի-Արագայի գիւղերի և գիւղերը տիրապետող քուրդ աղաների		
№	Գ Ի Ի Ղ Ե Ր Ը	Տիրապետող աղաները
55	Եարմջոց . . . .	
56	Մարիմանմաղ . . . .	
57	Ալլուլաղ . . . .	
58	Մաղրէն . . . .	
59	Քեարարիկ 1) . . . .	
60	Տամբաթ . . . .	
61	Կուշին . . . .	
62	Փիսօղլան . . . .	
63	Շւաքիր . . . .	Վերջին 15 գիւղերը ազատ են
64	Փշիքիւմբէթ . . . .	բէկական տիրապետութիւնից
65	Սուրբ Թաթոս 1) . . . .	և գիւղացիները ազատ հողա-
66	Անգիւղակ 1) . . . .	տէրեր են:
67	Գործութ 1) . . . .	Ինչ վերաբերում է մնացեալ 62
68	Քեօշի 1) . . . .	գիւղերին՝ բոլոր բնակիչները
69	Ուաւա . . . .	թէ հայ և թէ քուրդ՝ մարաբա-
70	Փիրմէյրան . . . .	ներ են:
71	Բնջաւան . . . .	
72	Անձաւ 1) . . . .	
73	Ասեղ 1) . . . .	
74	Պատիկ-գեղ 1) . . . .	
75	Բերկրի 1) . . . .	
76	Մալբաթ . . . .	
77	Թաւա . . . .	

1) Այս գիւղերում ապրում են հայեր:

# ՀԱՐԿԵՐԸ ԵՒ ՆՐԱՆՅ ԳԱՆՁՄԱՆ ՍԻՍՏԵՄ- ՆԵՐԸ 1)

Տաճկաստանում կառավարութիւնը ժողովրդից վերցնում է մի քանի տեսակի հարկեր. այդ հարկերն իրենց բնոյթով և էութեամբ կարելի է բաժանել երկուսի. հարկեր, որոնք վերցւում են բերքով և հարկեր, որոնք վերցւում են հնչիւն գրամով:

Բերքով վերցւող հարկը մէկ հատ է. դա երկրագործական կամ տասանորդի հարկն է, որը կոչւում է աշար:

Հնչիւն գրամով վերցւող հարկերը մի քանիս են. դրանք են՝ 1) գինւորական հարկը կամ բէդէլ-էսկէրիէն, 2) կալածական հարկը, որը բաժանւում է երկուսի, ա) շինութիւնների հարկ կամ էմլակ և բ) հողային հարկ կամ արազին, 3) ոսպական հարկը կամ թէջիգագ էսկէրիէն, 4) կրթական հարկը կամ մուարրէֆ հիսասին, 5) ճանապարհների հարկը, որը բաժանւում է երկուսի, ա) դրամական կամ թէքէլիֆ-սայիրիէ և բ) օլամական կամ մուքէլիֆ-էմալիէ, 6) զբաղմունքի հարկը կամ թէմէթուհաթը և 7) ոչխարի հարկը կամ խամշուուր:

Երկրագործական կամ տասանորդի հարկ և կամ աշար կոչւում է այն հարկը, որը վերցւում է այն բոլոր բերքերից, որոնք այսպէս կամ այնպէս կապ ունին երկրագործական պարապմունքների հետ. դրանք են՝ հացահատիկները, խոտը, աււոյտը, բանջարանոցային և բոստանային բերքերը, ծառապտուղները, խաղողը, ծխախոտը և այլն:

Այս հարկը հին հարկ է և տասանորդ կոչւում է այն պատճառով, որ նա նախ՝ վերցւում էր միմիայն մթերքներով և երկրորդ՝ որ վերցւում էր մի տասանորդականի չափով, այսինքն կառավարութիւնը իւրաքանչիւր բերքի 10 մասից 9 մասը չափում

1) Մենք այստեղ խօսելու ենք միմիայն ուղղակի հարկերի մասին:

տալիս էր գիւղացուն և միմիայն մի մասը չափում վերցնում էր յօգուտ գանձարանի, իբրև պետական հարկ:

Իսկ այժմ այդպէս չէ. նախ՝ կառավարութիւնը վերցնում է ոչ թէ 10 մասից մի մասը, ինչպէս առաջ էր, այլ 8 մասից մի մասը. երկրորդ՝ տասանորդ տուրքը վերցնում է միմիայն հացահատիկներից, իսկ մնացեալ բերքերից, ինչպէս են խոտը, աււոյտը, ծառապտուղները, խաղողը, ծխախոտը և այլն, տասանորդը վերցնում է գրամով:

Իւրաքանչիւր բերքի ժամանակ կառավարութեան ներկայացուցիչը յայտնւում է բերքի տեղում և ստանում տասանորդը. օրինակ, կալի ժամանակ գնում է կալատեղը, չափում է մաքրած ցորենը, գարին, գլգիլը կամ կորեկը և վերցնում է կառավարութեան հասանելիքը. խոտհունձից յետոյ մի առ մի շրջում է խոտանդերը, համրում է խուրձերը, հաշւում կառավարութեան հասանելիքը և գնահատելով ու վերածելով գրամի, պահանջում է գրամը. նախ քան բերք հաւաքելը այցելում է ծխախոտի ցանքերը, բանջարանոցները, բոստանները, պարտէզներն ու այգիները, գնահատում է բերքը և պահանջում է գնահատութեան մի ութերորդական մասը. այս կարգով գնահատւում և պահանջւում է տասանորդի հարկը բոլոր բերքերից:

Ինչպէս տեսնում էք, սա մի բարդ գործողութիւն է, կապւած մի շարք տեխնիքական դժարութիւնների և հնարաւոր զեղծումների հետ: Հարկաւոր են բազմաթիւ պաշտօնեաներ այդ բարդ աշխատանքները կատարելու համար, հարկաւոր է մեծ հսկողութիւն հնարաւոր զեղծումների առաջն առնելու համար և անա այս դժարութիւնները հարկադրել են կառավարութեանը զիմելու մի հեշտ միջոցի, այն է, իւրաքանչիւր գիւղի տասանորդի հարկը աճուրդի հանել, վաճառել և ով շատ առաջարկի, նրան էլ տալ:

Այդպէս էլ լինում է:

Յուլիս ամսում, երբ մօտաւորապէս պարզւում է գիւղատնտեսական բերքերի ինչ լինելը, մաշլիս իդարաներում նշանակւում են գիւղերի աշարի աճուրդով տալու գործողութիւնները, հաւաքւում են այդտեղ այն դասակարգի մարդիկ, որոնք առանձին պարապմունք չունին, բայց իրենց շրջանում յայտնի են իբրև սպիտակ, այսինքն, կեղեքիչ մարդիկ, մարդիկ, որոնք շատ լաւ ճանաչւում են բոլոր գիւղերը, գիտեն այդ գիւղերի գրութիւնը:

բերքի սպասելիք քանակը և ժողովրդի կեղեքելու ընդունակութիւնները: Ահա այս մարդիկ վերցնում են գիւղերը կապարով և շտապում գիւղերը, որպէս հողէտա հրեշտակներ:

Գիւղերի կապարագինը վճարում է կամ զուտ դրամով և կամ մասամբ դրամով և մասամբ հացահատիկներով, նայած գիւղի բերքի տեսակներին և աճուրդի պայմաններին. կառավարութիւնը հացահատիկներ վերցնում է ի նկատի ունենալով զօրքի պաշարը մի կողմից և հացահատիկների հեշտ վաճառելու հնարաւորութիւնը միւս կողմից:

Գիւղերը կապարով վերցնողը կոչւում է մուլթէղիմ, իսկ նրա ձեռքի տակ եղող գործակատարը աշնա: Մուլթէղիմը իր աշնաներով գործ է ունենում գիւղացիների հետ և չափում, համրում, ցնահատում ու ստանում է աշարք: Երբ որեէ գիւղ կապարով վերցնող չի լինում, այդ գէպքում աշարը գանձելու համար կառավարութիւնը ուղարկում է իր պաշտօնեան. սակայն այդ քիչ է պատահում, մանաւանդ հայաբնակ գիւղերի նկատմամբ, որոնց գլխին մուլթէղիմներ տասնեակներով են կանգնած լինում. չէ՞ որ հայ գիւղացին ընդունակ է կեղեքելու, սրբան մուլթէղիմի քէֆն ուզենայ:

Հնչիւն դրամով վերցնող հարկերն, ինչպէս տեսանք, 7 հատ են:

1) Զինւորական հարկը կամ բէգէլ էսկէրիէն այն տուրքն է, որը վերցւում է միայն քրիստոնեայ հպատակներից զինւորական ծառայութեան փոխարէն <sup>1)</sup>: Տաճիկ կառավարութիւնը քրիստոնեայ հպատակներից զինւոր չի վերցնում. սրա պատճառները երկու են. նախ մահմեդականի կարծիքով քրիստոնեան արժանի չէ գէնք կրելու պատւին. նա ըստ է, սարուկ, անպատիւ. հին գարերի այն հասկացողութիւնը, որ գէնք կրելու և զինւոր դասնաւու պատիւն արտօնեալ դասակարգին է պատկանում, իսկ աշխատելու և նրան ապրուստ հայթայթելու պարտականութիւնը ստրուկ ժողովրդին մինչև այժմ էլ գոյութիւն ունի բարբարոս երկրում, ուր ծագումով ազնիւ է համարւում տաճիկը, չէրքէզը:

1) Այս հարկը 1908 թւի սահմանադրութիւնով վերացել է, թէև մէկ ամբողջ տարի անց շատ տեղերում գեւ ևս դանձուում էր նա. այժմ քրիստոնեաները զինւորական հարկի փոխարէն կանչւում են զինւորական ծառայութեան:

կարափափախը, լազը և նոյն իսկ հոմաղ քուրզը, իսկ քրիստոնեան անազնիւ է ու անպատիւ: Երկրորդ՝ քրիստոնեան վաստակի չէ. զէնքը նրա ձեռքում մի օր կարող է դառնալ իրեն, տիրողի գէմ, այն տիրողի, որը քրիստոնեայ հպատակներին ճնշելու և կեղեքելու մէջ սպասել է բոլոր հնարաւոր միջոցները: Եւ ահա այս երկու պատճառներով քրիստոնեայ հպատակներից զինւորական ծառայութեան փոխարէն կառավարութիւնը վերցնում է հարկ:

Զինւորական հարկին ենթակայ են ընտանիքի բոլոր արու անդամները ծնւած օրից սկսած մինչև մահը:

Իւրաքանչիւր քրիստոնեայ արու հպատակ տարեկան վճարում է զինւորական հարկ կէս ոսկի հնչիւն դրամով, որը հաւասար է ուստական 4 մանէթ 20 կոպէկին: Եթէ մի ընտանիքում կնյ 8 արական, այդ ընտանիքը միմիայն զինւորական հարկ տարեկան պիտի վճարի 4 ոսկի կամ 33 մանէթ 60 կոպէկ:

Այսպիսի մեծաքանակ մի հարկ, այն էլ հնչիւն դրամով, Տաճկաստանի պէս մի ազգաս երկրում վճարելը ոչ միայն ծանր ու սուկալի, այլ և միանգամայն անկարելի է եղել և որպէսզի կառավարութիւնը ապահոված լինի այդ մեծ եկամուտի գանձումը, նա զիմել է մի խորամանկ միջոցի. որոշել է ունեւորից շատ վերցնել, ազգասից քիչ. ըստ երեոյթին՝ խզճի, բայց, ըստ էութեան՝ մի խորամանկ սկզբունք, որի տակ թագնւած է եղել «համայնքի երաշխաւորութեան» (кредитная поручка) սկզբունքը, որով կառավարութիւնը ապահովում է իր եկամուտը, թէկուզ համայնքի շատ անգամներ անկարող լինեն վճարել այդ հարկը կամ թէ նոյն իսկ երկրից փախած լինեն, մի երեոյթ, որը շատ ընդհանրացած է այդ երկրում:

Իւրաքանչիւր համայնք ունի իր ձեւակոյտը կամ հիւթը, բաղկացած մուխթարից, քահանայից և մի քանի հասակաւոր մարդկանցից. ձեւակոյտը կազմում է արու անգամների ցուցակը, աւելի ճիշտը, նախորդ տարւայ ցուցակին աւելացնում է նոր ծնւածները անուանները և պակասեցնում մեռածներինը. ամբողջ հարկը բաժանում է համայնքի ընտանիքների վրա ըստ կարողութեան և այդ ցուցակը յանձնում է թախիլդարին գանձելու համար:

2) Կալւածական հարկը բաժանւում է երկուսի. ա) շինութիւնների հարկ կամ էմլակ և բ) հողային հարկ կամ արազին:

Շինութիւնների հարկին ենթարկւում են քաղաքում թէ գիւ-

դում տունը, խանութը, ջրաղացը, ձիթհանքը և այլն, իսկ հողային հարկին՝ այգիները, արտերը, խոտատեղերը, արօտատեղերը, կշլաղիները, կալատեղերը, բամբատեղերը և այլն:

Շինութիւններից հարկ վերցւում է համաձայն նրանց գնահատութեան, որը գնահատում է հարկային տեսուչը կամ մամուր վերգրին մասնակցութեամբ մուխթարի, որն ընտրւում է ժողովրդից, լինի նա քաղաքում թէ գիւղում:

Իսկ հողային հարկը վերցւում է համաձայն այն արժէքների, որոնք սահմանւած են թափուների հիման վրա:

Շինութիւններից հարկ վերցւում է այս նօրմայով.

Եթէ մէկ տուն արժէ 1000 կուռուշ, այդ տնից հարկ վերցւում է 5 կուռուշ, որ ասել է 1000-ին վերցնում են 5: Այս կարգով վերցնում են հարկ նաև ջրաղացից, ձիթհանքից և այլ շինութիւններից:

Սանութի շինութիւնից հարկ վերցւում է կրկնակի չափով, այն է՝ արժէքի 1000-ին 10. խանութը համարւում է եկամուտ բերող շէնք, այդ պատճառով նրա հարկը բարձր է գնահատւում:

Հողերի համար հարկ վերցւում է արտից. նրա արժէքի 1000-ին 4. խոտատեղից նոյնպէս վերցւում է 1000-ին 4. իսկ արօտատեղից կամ կշլաղից 1000-ին 10. արօտատեղի հարկը բարձր է գնահատւում այն պատճառով, որ նա կօնկրէտ բերք չունենալով, ազատ է տասանորդի հարկից:

Այսպիսի մանրամասն հաշիւներ պահելու համար կան յատուկ մատեաններ, ուր մի առ մի արձանագրւում են հարկատուի կայքերն իրենց արժէքներով և համապատասխան տուրքերով:

Այդ մատեաններից վերցրած առաջ ենք բերում մի հաշիւ:

Բայազէտի կազայի Մուսուն գիւղի բնակիչ Չախկալի Հայրապետը, որը գիւղի ունեւորներից է, ունի 12 արտ, 1 չայիր, 1 արօտատեղ, 1 կտոր խամ գետին, 1 քօտանի տեղ, 1 բամբատեղ, 1 կալատեղ, 1 տուն, 6 խանութ. այդ ամբողջ կայքը գնահատւած և հարկի տակ է զրւած հետեւեալ կարգով:

№	ԿԱՅՔԻ ԱՆՈՒՆԸ	Արժէքը կուռուշ	Հարկը 1000-ին որքան է	Հարկի չափը	
				կուռուշ	Փարս
1	Արտ . . . . .	125	4	—	20
2	» . . . . .	125	—	—	20
3	» . . . . .	250	—	1	—
4	» . . . . .	250	—	1	—
5	» . . . . .	250	—	1	—
6	» . . . . .	375	—	1	20
7	» . . . . .	375	—	1	20
8	» . . . . .	375	—	1	20
9	» . . . . .	375	—	1	20
10	» . . . . .	625	—	2	20
11	» . . . . .	875	—	3	20
12	» . . . . .	875	—	3	20
13	Սոտատեղ . . . . .	375	—	1	20
14	Արօտատեղ . . . . .	4000	10	40	—
15	Սամ գետին . . . . .	125	4	—	20
16	Բօտանի տեղ . . . . .	125	—	—	20
17	Բամբատեղ . . . . .	125	—	—	20
18	Կալատեղ . . . . .	125	—	—	20
19	Տուն . . . . .	2000	5	10	—
20	6 խանութ . . . . .	3000	10	30	—
		14750		103	—

Ուրեմն Չախկալի Հայրապետն ունի 14,750 կուռուշի արժողութեան շինութիւններ և հողեր, որոնց համար վճարւում է 103 կուռուշ կալւածահարկ:

3) Ռազմական հարկը կամ թէջիզաթ կսկէրիէն այն հարկն է, որ վերցնում է կոտավարութիւնը զօրքը և նուաւօրմիղը ուժեղացնելու նպատակով: Այս հարկն այժմ կարևոր հարկերից մէկն է համարւում և սրա վրա առանձին ուշադրութիւն է դարձւում:

Այս հարկն անխախտ տարածուում է այն բոլոր հպատակներին վրա, որոնք այսպէս կամ այնպէս ունին կալւած և վճարում են կալւածահարկ: Հարկի չափը որոշուում է համապատասխան վճարելիք կալւածահարկի, որի պատճառով էլ այդ չափը որոշող առանձին մարմինների կարիք չի լինում: Որքան մէկ հարկատու կալւածահարկ է վճարում, զրա համեմատական չափով էլ սազմական հարկ է վճարում:

Ռազմական հարկի չափը իմանալու համար առաջ կը բերենք նոյն Մուսուէն գիւղացի Չախկալի Հայրապետի վճարելիք հարկը:

Համաձայն մատենանի նա վճարում է 21 կուսուշ 10 փարա սազմական հարկ, իսկ նրա կալւածահարկի ամբողջ գումարը, ինչպէս տեսանք, հաւասար է 103 կուսուշի:

Ուրեմն սազմական հարկը վերցուում է կալւածահարկի 20<sup>0</sup>/<sub>0</sub>-ի չափով:

4) Կրթական հարկը կամ մուարըֆ հիսասին սահմանւած է երկրի մէջ կրթական հաստատութիւններ հիմնելու և լուսաւորութիւն տարածելու նպատակով:

Այս հարկը, ինչպէս և սազմականը, տարածուում է անխախտ այն բոլոր հպատակներին վրա, որոնք ունին կալւածներ և վճարում են կալւածահարկ: Կրթական հարկը նոյնպէս վերցուում է համապատասխան կալւածահարկի, բայց անհամեմատ փոքր չափով, քան սազմական հարկն է:

Օրինակ, միևնոյն Չախկալի Հայրապետը վճարում է կրթական հարկ ընդամենը 4 կուսուշ 10 փարա, որը կազմում է նրա կալւածահարկի, 103 կուսուշի 4<sup>0</sup>/<sub>0</sub>-ը. մինչդեռ սազմական հարկը, ինչպէս տեսանք, կազմում է 20<sup>0</sup>/<sub>0</sub>-ը, ուրեմն կրթական հարկը սազմական հարկից հինգ անգամ փոքր է:

Ինչ է դուրս գալիս. զօրքի պահպանութեան համար գանձուում է մի յատուկ հարկ սազմական անուանով, զօրքը և նաւատօրմիզը ուժեղացնելու պատրւակով. գանձուում է բոլոր քրիստոնեայ հպատակներից գինւորական սոսկալի տուրքը և բացի այդ երկուքը, ծախսուում է պետութեան քնդհանուր եկամուտների խոշորագոյն մասը. մինչդեռ կրթական գործի համար գանձուում է մի հարկ, որը կազմում է զօրքերի վրա ծախսող գումարներից միմիայն մէկի, այն էլ մի հինգերորդ մասը:

Սակայն չը պիտի գարմանալ, որովհետև կրթական հաստա-

տութիւններ երկրի մէջ գոյութիւն չունին, որովհետև նոյն իսկ այն քանակութիւնը, որ գանձուում է այդ նպատակով, այդ էլ նպատակին չի ծառայում և որ տաճիկ կառավարութիւնը մեզ հետաքրքրող վիլայէթներում այնքան հեռու է կրթական գործից, որքան խաւարը լոյսից: Ծիշտ է, երեք վիլայէթներում կան Ռուշտի անուանով մի քանի կառավարական դպրոցներ, բայց նրանք շատ հեռու են ժողովրդի շահերին ծառայելուց:

5) Ծանապարհների հարկը, որը սահմանւած է եղած ճանապարհները սարք պահելու և նոր ճանապարհներ անցկացնելու նպատակով, վերցուում է երկու ձևով. ա) գրամով, որը կոչուում է թէքէլիֆ-սայիրէ և բ) օլամով, որը կոչուում է մուքեալիֆ-էմալիէ:

Դրամական հարկի ենթակայ են այն բոլոր հպատակները, որոնք ունին կալւածներ և վճարում են կալւածահարկ. ինչպէս սազմական և կրթական հարկերը, այնպէս էլ այս հարկը վերցուում է համապատասխան կալւածահարկի, թէև աւելի փոքր չափով, քան սազմականը և կրթականը:

Օրինակ, Չախկալի Հայրապետը վճարում է ճանապարհի հարկ 3 կուսուշ 5 փարա, որը կազմում է նրա կալւածահարկի 3<sup>0</sup>/<sub>0</sub>-ը:

Աւելի ծանր է ճանապարհների օլամական հարկը. իւրաքանչիւր արու հպատակ, որ դառնում է 20 տարեկան, պարտական է տարին 3 օր աշխատելու ճանապարհների վրա. այս հարկը, ըստ երեոյթին, այնքան ծանր չը պիտի լինի, որովհետև վճարում է իրը նաւուրայով. բայց քանի որ մեզ հետաքրքրող երեք վիլայէթներում ոչ ճանապարհներ են շինուում և ոչ էլ եղածների վրա է հոգս տարւում, այդ պատճառով կարիք չի լինում օլամ վերցնելու, այլ օլամի փոխարէն կառավարութիւնը վերցնում է դրամ, հաշելով իւրաքանչիւր օրւայ համար 4-5 կուսուշ, որ և իւրաքանչիւր հոգուն գալիս է 12-15 կուսուշ:

Չը գիտէք, հեզմանք անւանէք այս, թէ կատակ. կառավարութիւնը գանձում է ճանապարհների անուանով հարկ՝ գրամով ջոկ և գրամի վերածած՝ օլամով ջոկ, իսկ ճանապարհներ չի շինում և եղածների վրա հոգ չի տանում: Ժողովուրդը՝ դատապարտւած է անդամադուութեան ու՝ անշարժութեան, նա հնարաւորութիւն չունի տեղից շարժելու և տեղից շարժելու իր բերքը, իր միտքը և այդ բաւական չէ, զեռ նրան պարտաւորեցնում են այդ անյար-



մարութիւնների համար հարկ էլ վճարել: Այդպիսի կօմիզմ հնարուր է միմիայն Տաճկաստանի պէս երկրում:

6) Զրադմունքի հարկ կամ թէմէթուհաթ կոչուում է այն հարկը, որ վերցւում է վաճառականներից, արհեստաւորներից և որևէ զրադմունք ունեցողներից: Այս հարկը վերցւում է համապատասխան հարկատուի ստացած վաստակի կամ եկամուտի, շատից շատ և քչից քիչ սկզբունքով: 1000 ոսկի վաստակող վաճառականից վերցւում է հարկ ընդամենը հինգ ոսկի, որ ասել է  $\frac{1}{2}\%$ :

Վաստակը կամ եկամուտը որոշում է յատուկ այդ բանի համար կազմուած մի մարմին, բաղկացած հարկային տեսչից, մուխթարից և ժողովրդից բնութեամբ չորս ներկայացուցիչներից. ընտրուածներն մէջ լինում են նաև քրիստոնէականներ:

Այս հարկը, որն ուրիշ երկրներում սահմանուած է յատուկ գիւղիաներով և յատուկ տուրքերով, այստեղ շատ թեթև է, որի մասին պաղափար կազմելու համար կը բերենք մի օրինակ:

Բայազէտի առաջնակարգ վաճառական Կարապետ Քրմօեանը, որի տարեկան վաստակը հաշուում են մօտաւորապէս 300 ոսկի, վճարում է ընդամենը 170 կուռուշ հարկ, այսինքն  $1\frac{1}{3}\%$  ոսկուց էլ պակաս:

Այս հարկը, համեմատած միւս հարկերի հետ, շատ չափաւոր է ու թեթև:

7) Ոչխարի հարկ կամ խամշուու կոչուում է այն հարկը, որը վերցւում է իւրաքանչիւր ոչխարից ամեն տարի: Այս հարկը մեծ եկամուտ բերող և միևնոյն ժամանակ խիստ հսկողութիւն պահանջող հարկերից մէկն է: Այս հարկի համար կայ յատուկ պաշտօնեայ, որը կոչուում է խամշուու մամուրի: Փետրվար և մարտ ամիսներում, երբ գետ սարերը ծածկուած են ձիւնով և ոչխարի հօտերը գտնուում են ձմեռանոցներում և գիւղերին մօտիկ այրեւում, մի գապտիէյի (սարածնիկ) ուղեկցութեամբ յանկարծ յայտնուում է խամշուու մամուրին, տեղն ու տեղը համրում ու ցուցակագրում է բոլոր ոչխարները և ցուցակները տանում յանձնում շրջանային հաշուապահին կամ մուհասարայի գայրիէին, որը կազմելով իւրաքանչիւր ոչխարատէրից պահանջուելիք խամշուու քանակը, յանձնում է այն հարկահաւաքին:

Ոչխարի հարկը կամ խամշուուր, ըստ երևոյթին, շատ մեծ է ու ծանր. իւրաքանչիւր ոչխարի համար կառավարութիւնը վեր-

ցնում է 4 կուռուշ 10 փարա. կամ ուլասական դրամով 34 կոպէկ, իւրաքանչիւր այծի համար 4 կուռուշ, իսկ իւրաքանչիւր անգօրեան այծի համար 4 կուռուշ 20 փարա. անգօրեան այծը տարածուած է Շատախի և Մօկսի կողմերում, որը տեղացիներից կոչուում է կեծ և որի ազնիւ բրդից պատրաստում են վանի հոշակաւոր շալբ:

Եթէ կայ մի հարկ, որի շուրջը զինուորական ծանր հարկից յետոյ շարունակ աղմուկ են բարձրացրել Տաճկաստանի հայ ժողովրդի անտեսական դրութիւնով հետաքրքրուողները, դա եղել է ոչխարի հարկը: Մեզ թւում է, որ այդ աղմուկը այնքան էլ տեղին չէ և առաջացել է նրանից, որ այդ հարցով հետաքրքրուողները խորը չեն թափանցել խնդրի ներսը:

Նախ պէտք է նկատել, որ ոչխարապահութիւնը մի շահուէտ պարապմունք է, մանաւանդ Տաճկաստանի պէս մի լեռնոտ երկրում, ուր կան ընդարձակ, ծաղկաւէտ և խոտառատ արօտատեղիներ: Երկրորդ՝ այդ արօտատեղիները, որոնք ծառայում են իբրև խաշնարածութեան վայր, ազատ են որևէ հարկից: Օրինակ, այգիները, պարտէզները, բօստանները ենթակայ են տուրքի. արտերը, խոտատեղիները իրենց բերքերով և խոտերով նոյնպէս ենթակայ են տասանորդ հարկին, այն ինչ արօտատեղիները չը հնձելով, չեն ենթարկուում որևէ հարկի, մինչդեռ նրանց սնուցած խաշները կազմում են ժողովրդի ապրուստի լաւ աղբիւրներից մէկը: Եւ եթէ ի նկատի ունենանք այն հանգամանքը, որ այդ անազին արօտատեղիները և նրանցում սնուող ոչխարի բազմաթիւ հօտերը պատկանում են խաշնարած քուրդ ցեղերին, ցեղեր, որոնք իրենց թափառական կենցաղի շնորհիւ մեծ չափով ազատ են հարկերից, այն ժամանակ հասկանալի կը լինի, թէ որչափ իրաւացի է ոչխարի հարկը և որ չափով նա համապատասխանում է այդ երկրի իրականութեանը:

Մեր կարծիքով, մեզ հետաքրքրող յիշեալ երեք վիլայէթներում եթէ կայ մի արդար հարկ, մի շատ տեղին սահմանուած տուրք, այդ խամշուուն է, որը ծանրանում է գլխաւորապէս հարկերից ազատ քուրդ ցեղերի վրա և շատ քիչ չափով միայն ոչխար ունեցող հայերի վրա:

Չը պէտք է մոռանալ, որ հայերը այժմ շատ աննշան չափով են ոչխար պահում, մինչդեռ խամշուուր մեծ եկամուտ բերող հարկերից մէկն է համարւում: Օրինակ, Դիաղինի գաւառում, ուր

կան ընդամենը 6-7 հայտարարակ գիւղեր, իսկ աւելի քան 75 քրդա-  
ընակ գիւղեր, միմիայն խամչուռի հարկը հասնում է 3,500 ոսկու:

Մի ծանր հանդամանք, որ կարելի է իրաւացի կերպով ընդ-  
գծել խամչուռի նկատմամբ, այդ այն է, որ խամչուռի հարկը,  
իբրև դրամական հարկ, չի համապատասխանում երկրի անտեսա-  
կան նոյամաններին, այդ պատճառով նա, նման միւս դրամական  
հարկերի, ծանր է ու քայքայիչ:

Ահա այն օրինական հարկերը, որ տաճիկ կառավարութիւնը  
վերցնում է ժողովրդից:

Տասանորդի հարկը, ինչպէս տեսնք, հաւաքում է մուլթէ-  
զիմն իր աշնաներով բերքերի ժամանակ:

Զինւորական, կալւածական, ուղմական, կրթական, ճանա-  
պարհների և զբաղմունքի հարկերը գանձում է հարկահաւաքը կամ  
թասիլգարը, ստացած գումարների համար սալով ստացագիր  
կամ քօչան:

Ոչխարի հարկը կամ խամչուռը նոյնպէս գանձում է թասիլ-  
գարը, բայց այս հարկը գանձւում է առանձին և առանձին էլ  
քօչան է տրւում:

Թասիլգարը նշանակւում է վտանելի մարդկանցից և ստա-  
նում է ուճիկ ամսական 200-300 կուռուշ, իսկ եթէ նա շրջւում է  
գիւղից դէպ և ստիպւած է ունենալ սեփական ձի, այդ դէպքում  
ստանում է 300-400 կուռուշ:

Հարկերը գանձւում են երկու նւագի, առաջին նւագը սկսւում  
է մարտ ամսից, այսինքն տաճիկների նոր տարուց, իսկ երկրորդ  
նւագը՝ երկրորդ կիսամեակից:

Ուշադրութեամբ հետևելով Տաճկաստանում փրցւող հարկերի  
տեսակներին և այն սկզբունքներին, որոնք ընդունւած են իբրև  
հիմք այդ հարկերի բաշխման, մարդ գալիս է այն եզրակացու-  
թեան, որ այդ երկրում ամեն բան կատարւում է խելացի կեր-  
պով և արդար ակրքունքների վրա: Եւ խելագէտ, այդ հարկերը տե-  
սականօրէն սահմանւած են շատ խելացի կերպով: հարկ տալիս է  
կայք ունեցողը և տալիս է այնքան աւելի, որքան աւելի կայք ունի:

Օրինակ, տասանորդի հարկ վերցւում է բերքից. ով բերք  
չունի նա տասանորդ չի տալիս. կալւածական հարկ տալիս է

առւն, խանութ, ջրաղաց, այգի, արա, խոտատեղ ունեցողը և  
տալիս է շատից շատ, քչից քիչ. ուղմական, կրթական և ճանա-  
պարհների հարկ վճարում են կալւածահարկ վճարողները համա-  
պատասխան այդ հարկի գումարի. զբաղմունքի հարկ վճարում են  
առևտուր, արհեստ և կամ արեւ զբաղմունք ունեցողները համա-  
պատասխան ունեցած վաստակի կամ եկամուտի. խամչուռ վճա-  
րում են ոչխար ունեցողները: Ճանապարհների օլամական հարկն  
է, որ տարածւում է ամենքի վրա անխափր և վինւորական հարկը,  
որը թէև տարածւում է ամեն մի քրիստոնեայ հպատակի վրա  
անխափր, բայց հարկի բաշխման ժամանակ զարձեալ առաջնորդ-  
ւում են ունեւորութեան սկզբունքով:

Այո, այսպէս խելացի և արդար են Տաճկաստանում սահ-  
մանւած հարկերը և նրանց բաշխման սկզբունքները տեսակա-  
նօրէն, բայց երբ խնդրին մօտենում էք զործնականօրէն, երբ  
անձնականօրէն դիտում էք այն սև իրականութիւնը, որի մէջ  
սպրում է մի ամնջւած ժողովուրդ, նոր միայն զգում էք, թէ ինչ  
բան է տաճկական իրականութիւնն առածը իր դաժան և քայքայիչ  
զործօններով:

Երկու տեսակի հարկ է վերցնում տաճիկ կառավարութիւնը.  
մէկը հնչիւն դրամով, իսկ միւսը, տասանորդինը՝ բերքով: Տասա-  
նորդի հարկը վճարում է ժողովուրդը, որովհետև ունի բերք և  
տալիս է քաղած բերքի մի որոշ մասը, բայց որտեղից վճարի նա  
դրամական հարկը, դեղին ոսկիները, երբ դրամ չը կայ:

Վերցնենք հէնց միևնոյն մուսուլմանի Չախկալի Հայրապետին:  
Նա վճարում է համաձայն մատեանների.

№	ՀԱՐԿԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ	Հարկի քա- նակը	
		կուռուշ	Փարա
1	Զինւորական հարկ . . . . .	251	—
2	Կալւածական » . . . . .	103	20
3	Ռաղմական » . . . . .	21	10
4	Կրթական » . . . . .	4	10
5	Ճանապարհների » . . . . .	3	5
6	Թէւքէրէի կամ թղթի փող . . . . .	1	—
		384	5

Այստեղ չի մտել բուստանի ու խոտատեղի տասանորդը և ոչխարի հարկը:

Ենթադրենք, որ Չախկալի Հայրապետի բուստանի բերքը գնահատւած է 120 կուռուշ. Հայիրից ստացւել է, շատ չէ, ընդամենը 8 բարդ.<sup>1)</sup> խոտ, որի խուրձը գնահատւած է 3 կուռուշ և ունի 25 ոչխար: Ուրեմն Հայրապետը պիտի վճարի նորից բուստանի բերքի  $\frac{1}{8}$  մասը, որ կանի 15 կուռուշ. խոտի մի բարդի արժէքը, որ կանի 90 կուռուշ և 25 ոչխարի հարկը, որը հաշուելով իւրաքանչիւրից 4 կուռուշ 10 փարա, կանի 106 կուռուշ 10 փարա, ընդամենը 211 կուռուշ 10 փարա. այդ 211 կուռուշ 10 փարան աւելացնելով միւս հարկերի գումարի, 384 կ. 5 փ.-ի վրա, կը ստանանք 595 կ. 15 փ. ուրեմն Չախկալի Հայրապետը բացի բերքով վճարած տասանորդի հարկից, վճարելու է տարեկան դրամական հարկ 595 կուռուշ 15 փարա, մօտաւորապէս 5 ոսկի կամ 50 մանէթ:

Ընդունենք նոյն իսկ, որ Չախկալի Հայրապետը Մուսուն գիւղի ամենահարուստ մարդն է, ունի տաւար, ոչխար, հաց, խոտ, դարման և այլն. բայց որտեղից կարող է վճարել նա 6 ոսկի, երբ մթերք վաճառելու հնարաւորութիւն չը կայ, երբ դրամ չի ձարում:

Բերենք մի այլ օրինակ, վերցնելով այդ հարկահաւաքի պաշտօնական մատեաններից:

Բայաղէտի կազախի Արծափ գիւղը, որն ունի 120 տուն զուս հայ բնակիչ, վճարում է.

1) Զինուորական հարկ 250 հոգու համար 125 ոսկի:

2) Կալւածական, սագմական, կրթական, ճանապարհների և դրողմունքի հարկ 22,212 կուռուշ կամ 212 ոսկի:

3) Ոչխարի հարկ 250<sup>2)</sup> հատի համար 4 կ. 10 փ. իւրաքանչիւրից՝ 22 ոսկի:

4) Գիւղի տասանորդի հարկը 1909 թւին վաճառւել էր 1,600

1) Տաճկաստանում իրի խուրձական շափ գործ է անում բարդը, որը հաւասար է 30 խուրձին:

2) Պէտք է նկատի ունենալ, որ հարկից մի փոքր ազատ լինելու համար ծածկում են ոչխարների թիւը. ծածկում են նոյնպէս արականների յիւր, զինուորական հարկ քիչ վճարելու նպատակով:

քիլէ<sup>1)</sup> ցորենի և 83 ոսկի հնչիւն դրամի. մի ըսպէ ենթադրենք նոյն իսկ, որ կապալառուն ոչինչ չի վաստակել<sup>2)</sup>, այլ ստացել է գիւղից այնքան, որքան ինքը վճարել է կառավարութեանը, այլ խօսքով, գիւղը վճարել է 1,600 քիլէ հացահատիկ և 83 ոսկի դրամ խոտի, առւոյտի և բուստանների համար:

Ուրեմն Արծափ գիւղը տարեկան վճարում է հարկ հնչիւն դրամով 442 ոսկի կամ 3,750 մանէթ:

Որտեղից կարող է Արծափ գիւղը վճարել իւրաքանչիւր տարի 442 ոսկի դրամ կամ Չախկալի Հայրապետը 6 ոսկի, երբ երկրի մէջ բացակայում են հողորդակցութեան միջոցները, երբ չը կայ կապիտալ ու շահագործութիւն, երբ չը կայ արտահանութիւն, չը կայ շուկայ, չը կայ դրամ: Եւ որովհետեւ ժողովուրդը որտեղից էլ որ լինի պիտի վճարի հարկը, այդ պատճառով կամ նա իր բերքը վաճառում է կէս, նոյն իսկ քառորդ գնով և կամ դիմում է վաշխառուին և վճարում նրան սոսկալի տոկոսներ, մի հանգամանք, որը և դանձում է նրա քայքայման պատճառը:

Մի երկիր, ինչպիսին են Տաճկաստանի ասիական վիլայէթները, ուր արգիւնարբութիւն ու դրամ չը կայ, ժողովուրդը վարում է նահապետական կեանք, առևտուրը կատարւում է մեծ մասամբ ապրանքների փոխանակութեամբ, այդպիսի ժողովուրդից պահանջել հարկը հնչիւն դրամով, այդ միևնոյն է, թէ նրան զնել քայքայման և ոչնչացման ճանապարհի վրա:

Այսպէս է գրութիւնը, եթէ հարկերը գանձւեն օրէնքի սահմաններում և եթէ գանձման մէջ զեղծութիւններ տեղի չունենան: Բայց կարող էք արդեօք մի վայրկեան անգամ երաշխաւորել, որ այդ երկրում գոյութիւն ունին օրէնք և արդարութիւն:

Եթէ կայ մի գերազանց չարիք, մի գերազանց կեղեքիչ երեւոյթ, քան նոյն իսկ հնչիւն դրամով վերցւող քայքայիչ հարկն է, այդ այն զեղծութիւնն են, այն բռնութիւններն ու հարստահարութիւնները, որոնք տեղի են ունենում կայքերն ու եկամուտները գնահատող, հարկերը բաժանող պաշտօնականների, հարկահաւաքների ու թասիղարների և առանձնապէս կապալառուների կամ մուլթէզիմների կողմից ամեն օր, ամէն ժամ:

1) Քիլէն հաւասար է 20 հօխայի կամ  $1\frac{1}{2}$  փթի:

2) Մեզ հաւատացրին արծաթեքիները, որ կապալառուն այդ թւին վաստակել էր բացի դրամից 400 քիլէ ցորեն:

Այստեղ կայքերն ու եկամուտները գնահատուած են և հարկերը բաժանուած միմիայն և միմիայն կաշառքների ուժով և ուժեղների թեւազրուծիւնով: Աս զեղծումների և ապօրինութիւնների կլասիկ երկիրն է. ով ուժեղ է, ով ընդունակ է կաշառք տալու, նա ազատ է հարկից, ով թոյլ է, ով կաշառքի համար դրամ չունի, նրա վրա էլ ծանրանում է հարկը, նա էլ կեղծուած է:

Թասիլարը օրէնքով իբ ստացած դրամների համար ստացազիր քօչան պիտի տայ, բայց նա քօչան չի տալիս և կամ տւած քօչանի մէջ ստացած դրամը պակաս է նշանակում և անա թոյլ, անուժ հարկատուն հարկը վճարում է երկու անգամ:

Մուլթէզիմը օրէնքով իրաւունք ունի իբ հետ վերցնելու զապտիէ, որ պարտազանց դիւզացուց աշարը վերցնի զապտիէի աջակցութեամբ, բայց տեսնւած բան չէ, որ հայաբնակ կամ տաճկաբնակ գիւղերում մուլթէզիմը յայտնւէր զապտիէի հետ միասին մուլթէզիմը ինքն ըստ ինքեան մի զապտիէ է, մի կեղեքիչ, մի բռնաւոր, մի հրէշ, որի ներկայութիւնը միմիայն խաղաղ ժողովրդի վրա սարսափ է ազդում. անա այդ հրէշը իր ձեռքով չափում վերցնում է տասանորդը, համրում է խտր և նշանակում գին խրաբանչիւր խուրճի համար կրկնակի չափով. գնահատում է բօսանը, այգին, պարտէզը ինչպէս իր քէֆն ու խիղճն է թելազրում և վերցնում է գիւզացուց ոչ թէ օրէնքով սահմանւած 8-ից մէկը, կամ 8 արժէքից մի արժէքը, այլ 8-ից 2-ը և 8 արժէքից 2, յաճախ 3 արժէքը: Բողոքել դրա դէմ անմտութիւն է. մուլթէզիմը կը կնքի և կալում կը թողնի օրերով մաքրած ցորենը, թոյլ չի տայ տուն բերելու դաշտում թափւած խտրը, կը կանգնեցնի այգու, պարտիզի և բօստանի բերքի հաւաքումը և զրպարտելով բերքը գողանալու և թագցնելու մէջ, այնպիսի տուգանքների և ճնշումների կը ենթարկի, որ բողոքաւորը յախտեան չի մոռանայ:

Այս բոլորը չէ, կայ մի այլ չարիք. մուլթէզիմը սովորաբար լինում է փողատէր և վաշխատու. նա իր ճանաչած գիւղերի գիւզացիների հարկ վճարելու ժամանակ բաժանում է դրամ, բարդելով նրանց վրա սոսկալի տոկոսներ. կալի ժամանակ առանց պարտատէր մուլթէզիմի չի կարող տեղից շարժել գիւզացու և ոչ մի հատիկ բերքը. հասկանալի է, որ մուլթէզիմը տասանորդն ստանալուց յետոյ, կը վերցնի գիւզացու մնացեալ բերքը իր պարտք

ուած դրամի և բարդւած տոկոսների դէմ, թէկուզ դրանից յետոյ գիւզացուն չը մնայ ոչ մի հատիկ ցորեն, թէկուզ չէնց այդ օրւանից նրա ընտանիքը դատապարտւած լինի սովամահի:

Անա ձեզ երկիր, անա ձեզ կարգեր և վերջապէս սև իրականութիւն, ուր ամեն ինչ գնում է դէպի քայքայումը, դէպի ծայրայեղ թշւառութիւնը:

Շնորհիւ այսպիսի կարգերի և թշւառութեան հասցնող սոսկալի երևոյթների, զանցառութեան և զեղծումների ճանապարհ ընտրել է իրեն համար նաև խաղաղ ժողովուրդը, որովհետև գոյութիւնը պահպանելու միջոց այլևս չի մնացել:

Զեղծումների և ապօրինութիւնների դիմում է կառավարութիւնը, զեղծումների և ապօրինութիւնների դիմում է նաև հպատակ ժողովուրդը. այլպիսով ստեղծւել է զեղծումների և ապօրինութիւնների մի կատարեալ մրցում կառավարութեան և ժողովրդի, հպատակեցնողի և հպատակուողի մէջ:

Բերենք մի քանի օրինակներ:

Իւրաքանչիւր քրիստոնեայ արու հպատակ տարեկան  $\frac{1}{2}$  սակի գինւորական հարկ պիտի վճարի կառավարութեանը. Տաճկաստանի պէս մի երկրում  $\frac{1}{2}$  սակի դրամ վճարելը գիւրին բան չէ և անա ժողովուրդը գտել է միջոցներ ծածկելու արու անդամների թիւը և ծածկում է ոչ միայն փոքր, այլև մեծ չափով, մանաւանդ որ չբաւորութեան և զրկանքների պատճառով հպատակների մի մեծ թիւ շարունակ գտնուում է օտարութեան մէջ: Կան գիւղեր, ուր արունների թիւը ծածկում են մի վեցերորդով, մի հինգերորդով, մի չորրորդով, յաճախ նոյն իսկ մի երրորդով, այդ չափը այնքան մեծ է եղել, որքան աւելի գիւղը ազատ է եղել մահմեդական տարրերից: Մեր ճանապարհորդութեան ժամանակ մեր ականջներին խորթ էր լուծւած հայ գիւղում հայ գիւզացու պարզ խտտովանութիւնը այդ առիթով. միթէ Տաճկաստանում բռնութիւնների տակ ճնշւած հային հնարաւոր է եղել ծածկելու իր արու անդամների թիւը, մտածում էինք մենք: Այո, կաշատակութեան և զեղծումների այդ կլասիկ երկրում հնարաւոր է եղել այդ անձամբ ստուգեցինք մենք, այդ գիտէ տաճիկ կառավարութիւնը, գիտեն և ամենքը, մի հանգամանք, որն իսկապէս արգելք է եղել Տաճկաստանում ապրող հայ ժողովրդի ճիշտ թիւն իմանալու և որի շնորհիւ այդ թիւը պաշտօնական հաղորդագրութիւնների մէջ միշտ էլ պակաս է եղել:

Կառավարութիւնը իր հերթում այդ երեոյթի դէմ կուել է մի շատ գործնական միջոցով. նա շարունակ բարձրացրել է զինուորական հարկի չափը, շնորհիւ որի, այդ չափը յիսնական թւականներէ մինչև այժմ 28 կուուուշից հասել է 54-ի:

Թւերը ծածկելու միևնոյն երևոյթը տեղի ունի նաև ոչխարի հարկի վերաբերմամբ. ոչխարի քանակը ճիշտ իմանալու համար խամչուս մամուրին, յաճախ միևնոյն տեղում յայտնուում է երկու երեք անգամ. ոչխարի թիւը ծածկելու համար սահմանւած է երեք անգամ աւելի տուգանք, քան հարկն է, բայց չը նայած այդ բոլորին, ոչխարի թիւը դարձեալ յամառ կերպով ծածկուում են: Շատ անգամ հօտը քշում են հեռու տեղեր, թագցնում են անյայտ այրերի մէջ և երբեմն 5-ով, 10-ով ոչխարներ իջեցնում են հորերի մէջ և բերանները ծածկում, մինչև որ մամուրը կը գայ ու կանցնի: Եղել են դէպքեր, երբ ոչխարները երկար ժամանակ հորի մէջ մնալով խեղդուել են: Սակայն ամեն անգամ կարիք չի լինում այսպիսի միջոցների դիմելու. մէջտեղ է գալիս կաշառքը, ստանում է պաշտօնեան մի քանի դեղին ոսկիներ և ամեն բան վերջացած է:

Բերենք մի օրինակ ևս:

Ինչպէս գիտենք, խոտի տասանորդը վերցուում է դրամով. խոտատէրը հնձելով խոտը և խուրձեր կապելով, նրանց թողնում է դաշտում փուած այնքան, մինչև որ մուլթէզիմը կը գայ, կը համրի խուրձերը, կը գնահատի և կը ստանայ տասանորդը: Մուլթէզիմը ընդհանրապէս խոտը իսկական արժէքից բարձր է գնահատում, որովհետև 8 խուրձից 1-ը իրեն է պատկանում և այդ 1-ի արժէքը նա ստանում է դրամով. օրինակ, եթէ խոտի խուրձը արժէ մէկ կուուուշ, մուլթէզիմը գնահատում է 1/2, նոյն իսկ 2 կուուուշ. խոտատէրը տեսնում է բացարձակ անարդարութիւն, բայց բողոքել կամ թէ իր գինը առաջարկել չի կարող. այդ պատճառով նա դիմում է մի խորամանկ միջոցի, այն է՝ խոտի խուրձերը մեծ մեծ է կապում. ի հարկէ մուլթէզիմը աչք ունի, տեսնում է այդ և խոտը գնահատելիս աւելի ևս թանկ գնահատում. և այսպիսով կատարում մի տևողական մրցում երկու կողմից էլ. շնորհիւ այդ մրցման ճաճկաստանում խոտի խուրձը հասցրել են այնպիսի մեծութեան, որ մէկը դրանցից մի մարդ հազիւ շալակի, իսկ մուլթէզիմը մի խուրձ խոտի արժէքը հասցրել է 3, 4, նոյնիսկ 5 կուուուշի:

Բերենք մի օրինակ ևս:

Մուշի դաշտի Ջիսուր գաւառակի Աւզուտ գիւղում տպրում են թէ հայեր և թէ քրդեր. յուլիսի վերջն է. այդ գիւղի ունի տան դրսի սագուել վրա նստած ենք տան տիրոջ հետ միասին. տան առջ ձգւած է կալն ու քիլաշը. կամերն արձակել են, կամաց կամաց մթնում է. այդ ժամանակ մօտենում են կալին ունի հարսները, փոում են փալասը և կալի տակի մանրած դարմանախառն ցորենը լցնում մաղն ու մաղում:

— Այդ ի՞նչ են անում հարսները, ուն, — դիմում ենք մենք ունին:

— Ոչինչ, մի քիչ ցորեն և մաքրում խատիկի <sup>1)</sup> համար, — պատասխանում է նա:

— Ձէ՞ որ այդքանը շատ է խատիկի համար, ուն, — դիմում ենք մենք նրան նորից:

— Է՛հ, հէր օրհնած, տուն է, պէտք կը գայ էլի, — պատասխանում է նա մի փոքր ճնշւած:

— Ուրեմն այդպիսի բաներ կարողանում էք անել, — հարցնում ենք մենք հետաքրքրութեամբ, շուգիով գործ ածել գողանալ բառը:

— Եթէ այդպէս չանենք, ինչպէս կարող ենք գերդաստան պահել:

— Ձէ՞ որ քրդերը կիմանան, ուն և մուլթէզիմին կը յայտնեն: — Նրանք իմ մասին կը յայտնեն, ևս էլ նրանց մասին կը յայտնեմ, — պատասխանեց ունը վճռողական կերպով:

Ուրեմն գողանում են և հայերը, և քրդերը, և ամենքը, եթէ բողոքն յարմար է. և այդ բողոքն յարմար էր, որովհետև գիւղը դեռ ևս վերցնող չէր եղել, մուլթէզիմ չը կար գիւղում:

Անա իրողութիւնը, ահա փաստը և ահա այն միջոցները, որոնց դիմում է հարստահարւած և քայքայւած ժողովուրդը, հակադրելու իրեն կեղեքողներին, պահպանելու իր գոյութիւնը:

Այսպէս է դրութիւնը օրինական հարկերի նկատմամբ, բայց կան հարկեր, որոնք ոչ մի օրէնքի տակ չեն մտնում և որոնք ահագին բեռ են դառնում ժողովրդի համար: Գալիս են գիւղ կառավարութեան պաշտօնեաները մի քանի զապտիէներով և մնում

1) խատիկը կամ հատիկը պատրաստում են ջրով խաշած ցորենից և կանեփից:

այդտեղ օրերով. հասարակութիւնը նրանց պիտի կերակրի, պիտի կերակրի նաև նրանց ձիւրերն. հաւ ու փլաւով, գառ ու ձուածեղով են կերակրում այդ անկոչ հիւրերին և կեղեքած գիւղացու հարկերի վրա նոր հարկեր բարդում:

Գալիս է քուրդ ցեղապետը մի քանի խուլամներով. անզի են ունենում միևնոյն ծախքերը, միևնոյն հոգսերը: Մի խօսքով առիթ անառիթ յայտնում են լիտի, անկոչ հիւրերը, պատճառում հոգսեր, ծախքեր և անախորժութիւններ և թողնում ու հեռանում:

Այս էլ ոչինչ. կան հարկեր, որոնք օրինական որևէ հիմք չունենալով հանգրձ, քաղաքացիութիւն են ստացել և ժողովրդի կողմից վճարում են նոյնպիսի ճշտութեամբ, ինչպէս և պետական հարկերը. այս հարկերը սահմանել են իրերի բնական ընթացքով: Որևէ գիւղ կամ գիւղախումբ գտնուում է այս կամ այն քուրդ ցեղապետի ազգացութեան սահմանների մէջ, ապրում է այդ ցեղապետի հովանաւորութեան տակ, հետևապէս այդ գիւղը կամ գիւղախումբը պարտական է որոշ հարկ տալ ցեղապետին և տալիս է:

Այդպիսի հարկերից մէկը, որ գոյութիւն ունի Սասունի հարաւային մասերում, կոչւում է խաֆրութիւն: Թէ ինչ ծագում ունի այդ բառը, չը գիտենք, բայց նա ստացել է քաղաքացիութիւն, պարունակում է իր մէջ հին ճարտական կարգերի ոգին ու իմաստը և գործ է ածւում հարկի մտքով:

Մի խումբ հայաբնակ և քրդաբնակ գիւղեր, որոնք գտնւում են Փսանաց գաւառի սահմաններին մօտ և կոչւում են Հազօյի գիւղեր, իւրաքանչիւր տարի կանոնաւոր կերպով Հազօյի ժառանգներին վճարում են որոշ տուրք:

Հայաբնակ կող գիւղը վճարում է Մստաֆա և Հըզիբ աղաներին.

- 50 քիլէ գըլգիւ.
- 20 լիդր իւղ.
- 10 հատ ոչխար.
- 20 գոյգ գուլպա.

Հայաբնակ Հով գիւղը վճարում է նոյն աղաներին.  
40 քիլէ գըլգիւ.

- 20 լիդր իւղ.
- 15 հատ ոչխար.
- 20 գոյգ գուլպա.

Հայաբնակ Հազօ գիւղը վճարում է Մստաֆա Հըսէին, կիւնձօ Հըսէին և Զաթօ Մստաֆային.

- 300 թոփ կտու, չիթ, ֆիլը և այլ գործւածքներ:

Այս ձևի տուրքեր գոյութիւն ունին ի միջի այլոց նաև Շատախի գաւառում, որոնց մասին գաղափար կազմելու համար բերենք մի օրինակ:

Միծանց գիւղը Գրաւցի Հաջի աղայի աղաներին և Ազկուր աղային տարեկան վճարում է.

- 25 չափ ցորեն.
- 8 մաքի (ոչխար).
- 8 գառ.
- 300 սարակ (բանւոր).

և պարտաւոր է իւրաքանչիւր ձմեռ պահելու 10 ձի և 8 որի, իսկ իւրաքանչիւր տուն պարտաւոր է պահել 3 մաքի:

- Նոյն գիւղը Միրան Պօղէ աղային վճարում է.
- 6 չափ ցորեն.
- 2 մաքի.
- 4 գոյգ գուլպա և
- 2 գառ բարեի գալու ժամանակ:

Նորգուլի գաւառում Շաքիր աղային հայաբնակ և քրդաբնակ գիւղերն անխտիր վճարում են իրբև պարտադիր տուրք հացահատիկներ ու բանւորներ և իրենց խտուով ու գարմանով ձմեռները պահում են նրա ոչխարները:

Նմուշի համար Շատախում հրատարակուող «Ժայռ» խմորատիպ թերթից քաղածօրէն վերցնելով բերում ենք հետևեալ ցուցակը:

Այդ ցուցակում բերած են, թէ որ գիւղը որպիսի պարտականութիւններ է կատարում Շաքիր աղայի վերաբերմամբ:

№	Գիւղերի անունները	Պրամ ոսկի	Ցորեն չափ	Սարակ կամ բանուր	Իրենց խոտ ու զարմանով պահում են	
					Ոչխար	Ձ ի
1	Սքունս—հայ . . .	—	3	30	45	1
2	Հօսթայեան—հայ . . .	—	4	39	20	1
3	Նօրապս . . .	—	2	21	15	—
4	Զլիլըրին . . .	—	5	44	30	—
5	Կօղան . . .	—	2	52	26	—
6	Հէքիան . . .	—	1	6	—	—
7	Պաղտաղի Սքունս—ք.	—	3	24	—	—
8	Վերին Շամաքառ—ք.	—	1 <sup>1/2</sup>	18	10	—
9	Պոռխոսէն—քուրդ . . .	—	1	12	18	1
10	Արդ—քուրդ . . .	5	6	32	32	1
11	Բապանս—քուրդ . . .	—	3	30	30	1
12	Մարվանան . . .	—	5	90	60	—
13	Մաքօշի—հայ . . .	—	20	14	—	—
14	Փիրբաղալան . . .	—	20	200	—	—

Այս պարտադիր տուրքերից բացի, կրօնական այխտիների տօնի առիթով Շաքիր աղային վերը յիշւած գիւղերից ընծայ է բերւում.

- 20 գլուխ շաքար.
- 10 նոխազ.
- 9 խոյ.
- 2000 ձու:

Ահա հարկեր, հարկեր, անվերջ հարկեր, որոնց ոչ օրինաւորութիւնն է յայտնի և ոչ սահմանւած չափը, սակայն, որոնց դէմ գլուխ խոնարհած, լուռ վճարում է կեղեքւած ժողովուրդը շարունակ քայքայելով, շարունակ հիւժուելով ու մաշելով:

### ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՎԻՃԱԿԸ

Մինչև այժմ մենք կանգ առանք իրաւական և տնտեսական այն դաժան պայմանների վրա, որոնք ընդհանուր են Տաճկաստանի մեզ հետաքրքրող երեք վիլայէթներում և որոնք համահաւասար չափով ծանրացած են խաղաղ երկրագործ ժողովուրդների վրա, լինեն նրանք հայ, ասորի, քուրդ, թէ տաճիկ: Թափառական քուրդ ցեղերը, երկրի անկուլտուրականութիւնը, ճանապարհների հազորակացութեան և կապիտալի բացակայութիւնը և հողատիրական ու հարկային անկանոնութիւններն ու ապօրինութիւնները, իրրե հարիքներ, անդրադառնում են աղքատակութեան լայն խաւերի վրա հաւասարապէս. սակայն ընդհանուր բնոյթ կրող այդ հարիքներից բացի, հարիքներ, որոնք հետևանք են տիրապետող աննօրմալ կարգերի, յատկապէս հայ ժողովրդի համար, գոյութիւն ունի մի այլ հարիք, որն իր աւերիչ հետևանքներով գերազանցում է միւս բոլոր հարիքներին: Այդ հարիքը տաճիկ կառավարութեան հայալինջ քաղաքականութիւնն է, որը յամառ կերպով շարունակում է, կանգ չառնելով ոչ մի միջոցի առաջ:

Այդ երկրում չը կայ մի քար, մի անկիւն, որ չը յիշեցնէր արիւնտ մի անցք, բարբարոս մի գործողութիւն հայ ժողովրդի նկատմամբ: Դրանց լոկ նկարագիրները չեն, որ մենք գալիս ենք անելու, ամենավառ նկարագիրներից ապաւորիչը փաստերն են, չոր ու ցամաք, բայց պերճախօս թւերը, որոնց գալիս ենք արձանագրելու իրրե հայալինջ քաղաքականութեան սև փաստեր:

Հայը բայց, հպատակ լինելուց բացի, քրիստոնեայ է. քրիստոնեան Տաճկաստանում այն քաւութեան ուօխազն է, որին պատրակ բռնելով քրիստոնեայ եւրոպան, ամեն անգամ միջամտել է Տաճկաստանի ներքին գործերի մէջ: Քրիստոնեայ ժողովուրդների պատճառով Տաճկաստանը անցեալ դարում ստիպւած եղաւ մի քանի խոշոր պատերազմներ մղել Ռուսաստանի դէմ և պարտութիւն կրել, որոնց հետևանքը եղաւ այն, որ 1828 թւի պա-

տերազմին Յունաստանը ազատեց Տաճկական լծից, 1877 թւի պատերազմին Սերբիան, Չլքնագորեան, Ռումինիան և Բոլղարիան բուլղորովին անջատեցին Տաճկաստանից և անկախութիւն ստացան, իսկ Բօսնիան և Վերցցօզովինան գրաւեցին Աւստրիայից: Բացի այդ, 1877 թւի պատերազմի առիթով գումարւած Բերլինի վեհաժողովում զրեւց ի միջի այլոց հայկական հինգ վիլայէթները հարցը, որը թէև որևէ գրական լուծում չը ստացաւ, բայց տաճիկ կառավարութեան համար դարձաւ մի շարքարատիկ ինչդիր, որը կարող էր ամեն անգամ դիպլոմատիական ծուղակները առիթ գտնուել: Այդ շարքարատիկ ինչդրից ազատելու համար միակ հնարաւոր միջոցը այն էր, որ հայկական հինգ վիլայէթներում հայ ժողովուրդը, իբրև մեծամասնութիւն կազմող ժողովուրդ, գոյութիւն չունենար, որ նա, տաճիկ կառավարութիւնը իրաւական հող ունենար ստեղծելու Եւրոպային, որ հայկական վիլայէթներ միմիայն անունով գոյութիւն ունին և որ հայկական հարց բարձրացնելը արսուրդ է:

Տաճիկ կառավարութեանը բոլորովին հետաքրքիր չէր թէ Եւրոպան ամեն անգամ բարձրացնելով քրիստոնեաների լուծը թեթևացնելու հարցը, որչափ նա անկեղծ էր իր գործողութիւնները մէջ և ոչ էլ այն, թէ որ չափով հայը իբրև քրիստոնեայ ժողովուրդ, իսկապէս, առիթ էր գտնուում Եւրոպական միջամտութեան. փաստը այն է, որ հայ ժողովրդի գոյութիւնն ինքն իրան ինքեան հանդիսանում էր մի շարքարատիկ հարց, որից ազատելու միակ հնարաւոր միջոցը այդ ժողովրդի շարքերը նստացնելն էր:

Այս, այս էր միակ հնարաւոր միջոցը, վիճակը ձգեց և Բերլինի վեհաժողովից յետոյ սկսեց հայ ժողովրդի արհեստական նւագեցման, հայաջինջ քաղաքականութիւնը:

Այսպիսի քաղաքականութիւնը, պիտի սասած, նոր չէր, շատ առաջ, դեռ ևս 1828 և 1855 թւերի սուլտանական պատերազմներից յետոյ, երբ ամեն անգամ սուլտանը զօրքերը յետ էին քաշում և զրանց հետևում էր հայերի մասսային գաղթը, տաճիկ կառավարութիւնը ոչ մի միջոցի չէր դիմում գաղթերի առաջն առնելու համար: Բացի այս, քաղաքագէտ կառավարութիւնը 1876 թւին Վանի վիլայէթին միացրեց Բուրղոստանը կամ Հէքեաբլին, որը մինչև այդ առանձին վիլայէթ էր կազմում և որտեղ

հայ ազգաբնակիւթիւն համարեա չը կար. այս նոր ձևակերպութիւնով ժողովուրդները յարաբերական թիւը փոփոխեց և բազմահայ Վանի վիլայէթը այժմ դարձաւ սակաւահայ: Բայց թէ մէկը և թէ միւսը սեղի էին ունենում առանց սրի ու հրի աջակցութեան, առանց ջարդերի, մինչդեռ յետագայ քաղաքականութիւնը որոշ կերպարանք ստացաւ, կառավարութիւնը որոշակի ընդգծեց իր անելիքը, անցաւ գործի և սկսեց սրի ու հրի սխտեմը առանց տատանումների:

Թերևս շատերին այս մի փոքր անհաւատալի թւայ, բայց բաւական է, որ մարդ ոտք դնի երկրի ներսը, ակնատես ու հանդիսատես լինի սոսկալի ամայացումներին, անձամբ լսի ակնատեսներէից սոսկալի նկարագրութիւններն իրենց մանրամասներով, որ միանգամայն համոզուի, թէ ինչպէս հայ ժողովուրդը և հայաբնակ շրջանները մի որոշ ծրագրով ենթարկուել են աւերիչ գործողութիւններին և ամայացել:

Այդ գործողութիւնները երբեմն թուլացել են, երբեմն սասուկացել. նայած քաղաքական պայմաններին երբեմն երկրի մէջ հաստատուել է առժամանակեայ խաղաղութիւն և երբեմն մէկէն սրախողող եղող հայ ժողովրդի յուսահատ ձիչերը երկինք են բարձրացել, բայց երբեք ընդհանուր ծրագիրը չի մոռացել, հայաջինջ քաղաքականութիւնը չի դադարել օրւայ ինչդիր լինելուց: Ամեն անգամ, երբ միջազգային և քաղաքական պայմանները Տաճկաստանի համար դարձել են նպաստաւոր, ամեն անգամ, երբ նրա քամակին կանգնած է եղել որևէ ուժեղ պետութիւն և նա իրենն զգացել է ապահով, չի յապարել հայկական շրջաններում առիթներ ստեղծել և ջարդեր սարքել:

Եւ իսկապէս, մօտիկից ծանօթանալով այդ երկրի մահմեդական տարրերի, նրանց և հայ ժողովրդի մէջ գոյութիւն ունեցող յարաբերութիւններին հետ, յարաբերութիւնները, որոնք հարստահարման որոշ սահմաններից այն կողմը չեն անցնում, միանգամայն անհաւատալի է թւում, որ նոյն իսկ այդ մահմեդական տարրերը իրենց վայրագութիւններով հանդերձ, առանց կառավարութեան թեւազրութեան ու աջակցութեան ընդունակ լինէին այնպիսի բարբարոսութիւններ գործելու, որոնք գործել են հայկական շրջաններում վերջին երկու տասնեակ տարիների ընթացքում:



Տաճիկ կառավարութեան ակտիւ հայաջինջ քաղաքականութեան գործնական սկիզբը զրւեց 1890 թւին համիրիէական գնդերի կազմակերպութեամբ <sup>1)</sup>: Հարկաւոր է քրդերից կազմակերպել ձիաւոր գնդեր նման ուսական կօզակների և նրանց կրթելով համապատասխան զինւորական կանոնների, ունենալ կազմակերպւած մի ուժեղ բանակ, պատերազմի ղէպքում թշնամու դէմ դուրս բերելու համար. այսպէս էր սուլթան Համիրի ծրագիրը համիրիէական գնդերի նկատմամբ ըստ երևոյթին, բայց ըստ էութեան այդ գնդերը կազմակերպեցին ներքին թշնամիների, այսինքն քրիստոնեաների կամ աւելի ճիշտը հայերի համար:

Ձէնք կրելու ընդունակ բոլոր քրդերը զինւեցին կառավարական զէնքերով, նրանց վրա կարգեցին իբրև իւզըաշիններ, բինբաշիններ, փաշաներ և հրամանատարներ այդ նոյն քրդերի ցեղապետները, որոնց կառավարութիւնը պարզեատրեց փայլուն ուսապանակներով ու սրերով: Քուրդը առանց կառավարչական զէնքի էլ զինւած էր, անզուսպ և խաղաղ հայ ժողովրդին կեղեքող. ինչ կը լինէր նա այժմ, շատ հասկանալի է: Այն քուրդը, որը հանդիսանում էր երկրի անհանգիստ և վայրագ տարրը, նրան յանձնւում էր երկրի խաղաղութեան գործը: Քուրդը կարգապահութեան չը վարժեց, նա զինւոր չը դարձաւ, բայց կառավարչական զէնքը մնաց նրա ձեռքում և նա շուտ շուտ իջնցնում էր ուսից այդ զէնքը, պարպում, երբ նրա քէֆը տալիս էր, երբ նա մէկին ուզում էր կողոպտել և ահա համիրիէական գնդերը դարձան երկրի համար մի չարիք, իսկ մասնաւորապէս հայ ժողովրդի համար՝ մի պատուհաս:

Հալածանքն սկսեց հողերի գրաւումով, կենդանիների յափշտակութեամբ և թեթեակի կողոպուտներով. բողոքները իշխանութիւնների կողմից մնում էին անհետեանք, այս հանգամանքն ինքն ըստ ինքեան դարձաւ խրախուսիչ վայրագ գործողութիւնների. բողոք բարձրացնող հայը ենթարկւում էր հալածանքների և նոյն իսկ զոհ էր գնում վրէժխնդրութեան և այսպիսով հարստահարութիւնները դարձան միանգամայն անպատասխանատու գործողութիւններ: Իէկերն ու ցեղապետները գրաւում ու կողոպտում էին

1) Այժմ համիրիէական գնդերը պաշտօնապէս լուծւած են համարւում, բայց անպաշտօն կերպով նրանք գոյութիւն ունին, սրովհետե կեռ ևս զինութեան չեն եղել:

մեծ չափով, մեծ ծաւալով, իսկ հասարակ մահկանացուները՝ փոքր չափով, փոքր ծաւալով:

Իրլանդացի պրօֆեսոր է. Դիլլօնը, որը 1895 թւին մի ճանապարհորդութիւն կատարեց Տաճկաստանի հայկական վիլայէթներում, հայկական սարսափների հետ անձամբ ծանօթանալու նպատակով, ի միջի այլոց նկարագրում է հետեւեալ զէպքը:

—Ալաշկերտի Մանկասար գիւղացի Գէորգ Վարդանեանը պատմեց ինձ հետեւեալը,—գրում է է. Դիլլօնը <sup>1)</sup>,—1892 թւին Ջալալցիների ցեղին պատկանող Աւգօ անունով մի քուրդ մի քանի այլ քրդերի հետ մի օր յայտնեց իմ տան մէջ և բռնի վերցրեց իմ ունեցած 5 ոսկին, որը ես պահել էի սերմացու գնելու համար: Այս մասին ես բողոք ներկայացրի կառավարութեանը, բայց նա անհետեանք թողեց իմ բողոքը և այս բաւական չէր, Աւգօն իմանալով իմ բողոք տալը, մի քանի քուրդերի հետ մի գիշեր բարձրացաւ մեր տանիքը և հերթիկից կրակ բացելով, տեղն ու տեղը սպանեց իմ հարս Եղեկօյին, նրա երկու երեխաներին և իմ 2 տարեկան տղայիս, Միսակին. ապա ներս խուժելով, հաւաքեց տանս իրերը, տեւց առաջը 4 եղ և 5 կովերս ու հեռացաւ: Ես վազ տւի Կարաքիլիսէ Ռահիմ փաշայի մօտ բողոքով. փաշան ոչ միայն չը լսեց իմ բողոքը, այլ բարկանալով վրաս, որ ես համարձակւում եմ զրպարտել սուլթանի հաւատարիմ քուրդ համիրիէներին, ինձ բանտարկեց և բանտից ազատեց այն ժամանակ միայն, երբ 2 ոսկի փրկանք ստացաւ:

Այս պատմութիւնը մէկն է այն հազարաւոր զէպքերից, որ տեղի էին ունենում հայկական շրջաններում համիրիէական զընդերը կազմակերպելուց յետոյ ամեն օր և անպատիժ մնում:

է. Դիլլօնը արձանագրում է միևնոյն Գէորգ Վարդանեանի հետեւեալ վկայութիւնը.

—Հետեւալ ձեռքը մեր գիւղը եկաւ Ռահիմ փաշան համիրիէի 200 զինւորներով և յայտարարելով, որ քրդերի վրա բողոքելու մենք իրաւունք չունինք, տեղաւորեց մեր գիւղում, պահանջեց բացի իւզը, բրինձն ու ձուն, օրական 8 ոչխար զօրքի համար և 10 կոտ գարի ձիերի համար և այդ ձևով ապրեց մեր գիւղում ամբողջ 40 օր. և երբ մի անգամ մեր գիւղացիներից ֆերի անու-

1) Տես. Положение Армянь въ Турции, стр. 342.

նով մէկը տրտունջ յայտնեց, փաշայի հրամանով նա ենթարկեց ստեղծաբան տանջանքներին:

Այս էլ մէկն է այն հաղարաւոր զէպքերի, երբ համիդիէի իւզրաշինները, բինբաշինները և փաշաները որեէ պատրուակ բռնած, ահագին զինւորներով իջնում էին հայ գիւղերը, ապրում օրերով այգտեղ, պահանջում ուտեստ, կատարում բռնաբարութիւններ հայ կանանց վերաբերմամբ և հեռանում:

Գնալով դրութիւնը վատանում էր. հայաբնակ գիւղերն անխտիր գարձան բռնութիւնների ասպարէզ. այն, ինչ որ առաջ կատարւում էր գիշերով, այժմ սկսեց տեղի ունենալ օրը ցերեկով. այն, ինչ որ առաջ կատարւում էր գաղտագողի, այժմ սկսեց տեղի ունենալ հրապարակով. առեանգման զէպքերը շատացան, շատ ու քիչ ունեւոր հայերն աւելի ենթարկեցին հալածանքի ու բռնութեան, քան չքաւորները:

— Մեկիք տղան Բուլանդի Ապրի գիւղի աղբեցիկ հայերից մէկն էր, — արձանագրում է նոյնպէս է. Դիլլօսը, իբրև ստուգած եղելութիւն, հետեւեալ փաստը, — Աստուած պարգևել էր նրան որդիներ, թոռներ, տաւար, ոչխար, լաւ ապրուստ և ամեն ինչ: Սա իր տեսակի հայկական մի Յովր Երաննիկ էր: Նոյն գիւղացի աղնւական շէյխ Բեամիլը նախանձելով Մեկիք աղայի հարստութեան վրա, աչքը դրեց ձեռք բերել նրա կարողութիւնը և եթէ այդ չը յաջողւի, գոնէ ոչնչացնել նրա ունեցածը. այդ նպատակով նախ նա հրդեհել տեւց Մեկիքի խոտի և ցորենի զէպքերը, ապա նրա մարդիկը դաշտից քշեցին տարան Մեկիքի 8 ձիերը և 150 ոչխարը: Մեկիքը գնաց Կօփ գալմաղամին բողոքելու և մինչդեռ նա գանգատւում էր Կօփում, իսկ նրա մի տղան գրադուած էր դաշտային աշխատանքներով, շէյխի մարդիկ յարձակեցին Մեկիքի տան վրա, սպանեցին նրա մեծ տղայի երկու երեխաներին և առեանգեցին երեխաների յղի մօրը: Մեկիքը առնելով բոթը ուղիղ գնաց էրզրում վաղու մօտ. այս զիմումի հետեւանքն այն եղաւ, որ Մեկիք փաշան անձամբ եկաւ զէպքի տեղը գործը քննելու և առեանգւած կնաջը վերադարձնելու: Երեխաներին վերադարձնել չէր կարելի, որովհետև նրանք կենդանի չէին, իսկ նրանց մօրը երբ շրջապատւած մօլլաներով բերին փաշայի մօտ հարց ու փորձի և երբ Մեկիքը տեսաւ, որ յղի հարսը սարսափից ոտի վրա կանգնել չի կարողանում, խնդրեց փաշային քննութիւնը հետաձգել մինչև

ծնելը, իսկ մինչև այդ, տանել նրան էրզրում և պահել մի պատուաւոր տաճկի ընտանիքում: Փաշան համաձայնելով դրան և կարևոր կարգադրութիւններն անելով, վերադարձաւ էրզրում: Մրանից միմիայն երեք օր անց կնոջ ամուսինը, Մեկիքի մեծ տղան օրը ցերեկով շէյխի մարդկանց ձեռքով սպանեց: Այս զէպքը այնպիսի սարսափ առաջ բերեց, որ նոյն իսկ այն տունը, ուր պահւում էր առեանգւած կինը, հրաժարւեց այլևս պահել կնոջը և առաջարկեց վալուն հեռացնել իրենց մօտից նրան: Ծայրայեղ յուսահատութեան հասած Մեկիքի երկրորդ տղան, Մկրտիչը դաշտում սպանեց շէյխի տղաներից երկուսին և իր փոքր եղբօր հետ փախաւ Մուսա բէկի մօտ և մահմեդականութիւն ընդունելով, պաշտպանութիւն խնդրեց: Վրէժխնդրութիւնից ազատ ֆալու համար առերես մահմեդականութիւն ընդունեց նաև Մեկիքն իր ֆնացեալ ընտանիքով, մինչև որ մի յարմար օր նա ձգեց իր տուն ու տեղը, իր ամբողջ կայքն ու հողերը և աննկատելի կերպով ընտանիքը վերցրեց ու փախաւ Ռուսաստան:

Այս էլ մէկն է այն հաղարաւոր զէպքերից, որ տեղի էին ունենում հայկական շրջաններում և որոնց շնորհիւ քայքայւում, կոտորւում և գաղթում էին շատ ու քիչ ունեւոր ընտանիքներ տասնեակներով և հարիւրներով:

Հալածանքները գնալով համնում են ծայրայեղ չափերի, հայ ժողովրդի յուսահատութիւնը նոյնպէս համնում է ծայրայեղ չափերի. մի քանի շրջաններում յուսահատութեան ճիչերն երկինք են համնում, լուում են մասսայի տրտունջներ ու բողոքներ և ահա կառավարութիւնը համարելով այդ իբրև ապստամբութիւն, համարելով այդ յարմար առիթ իր հայաջինջ քաղաքականութիւնը մէկէն իրագործելու համար, կազմակերպում է այն սիստեմատիկ ջարդերը, որ տեղի ունեցան ամբոխի, համիդիէական բրդերի և նոյն իսկ զօրքերի ձեռքով 1894-96 թւերի ընթացքում Սասունում, Մուշում, էրզրումում, Վանում, Բիթլիսում և նրանց լայնածաւալ գաւառներում:

Գաղափար կազմելու համար, թէ ինչպէս գրգռումներ առաջացնելու նպատակով նախ օր օրի տեղի էին ունենում մասնակի յարձակումներ ու սպանութիւններ և ապա մասսային խուժումներ, թէ որպիսի վայրագութիւններ տեղի էին ունենում այդ ջարդերի ժամանակ, հանդերձ իւրատեսակի գազանութիւններով, մենք ա-

ուսջ ենք բերում մի քանի քաղաքներ Վանի առաջնորդարանում կազմւած արձանագրութիւնից, 1896 թւին Վանի մէջ և նրա մի քանի գաւառներում տեղի ունեցած ջարդերի առիթով:

Ահա այդ քաղաքները բնագրի ոճով:

—1895 թւի աշունը <sup>1)</sup>, երբ Հայաստանի շատ քաղաքները մէջ բնդհանուր կոտորածներ կը լինէին, Վանը համեմատաբար զերծ մնաց, թէև գիւղերում մանաւանդ Արճէշ ու Ալջաւազ գաւառներում մէջ 50-ի մօտ հայեր սպանւեցան, գիւղերից շատերը թալանւեցան և գիւղացիները նաև նստելով փախան Վան:

Բօղազքէսէն, Ազարա, Հակատուն, Շատախի կոճեր, Սուամար և այլ գիւղեր իսպառ աւրւեցան, տներն ու եկեղեցիները վառւեցան ու կողոպտւեցան, իսկ բնակիչները նոյնպէս քաղաք թափւեցան և աղքատախնամ յանձնաժողովի ձեռքով խնամւեցան:

Նահանգիս կուսակալն էր Նազմ փաշան, որ չը գործադրեց կոտորածի հրամանը. այդ ատեն քաղաքս եկաւ Պօլսից ուղարկւած քննիչ յանձնախումբը Սասէղղին փաշայի նախագահութեամբ, որ ամեն ջանք ըրաւ հայերը ապստամբ ցոյց տալու և զանազան տարրերու մէջ ցեղական ատելութիւն արծարծելու: Անկէց յետոյ ամեն օր կրկնւող դէպքերը եկան յանդեցան յունիսի 3-ի մեծ կոտորածին:

1896 թւի մարտի 16-ին համիդիէի հեծելազունդին պաշականող քրդերը յարձակեցան Հաւասասօրիկ ասօրի գիւղին վրա և 9 նեստորականներ խողխողեցին:

Մարտի 18-ին յարձակեցան Գարման գիւղի վրա և խողխողեցին 6 հայեր, որոնց մէջ էր նաև տեղոյն քահանան:

Նոյն օրը յարձակեցան Ոսկերակ գիւղի վրա, սպանեցին 16 հայեր, 4 ալ մահացու կերպով վիրաւորւեցան:

Նոյն օրը Բերդակ գիւղի ճամբուն վրա կսպանւի հայ մը, իսկ նրա ընկերը երկիւղէն կը մեռնի:

Մարտի 20-ին Յանկոյսներու եկեղեցւոյ ջրաղացի ճամբուն վրա ցերեկ ատեն սպանւեցաւ մէկ հայ մշակ:

1) Այս նկարագրութիւնը, որ մենք առջ ենք բերում քաղաքներէն, վերցնելով այդ Վանի առաջնորդարանում գտնուող արձանագրութիւնից, աւելի ընդարձակօրէն տուած է «Արարատ»-ի 1898 թ. 7, 8, 9 և 10 համարներում:

Մարտի 27-ին Արտասէղէն Հայոց Ձոր տանող ճամբուն վրա մորթւեցան երկու քաղաքացի հայեր:

Ապրիլի 2-ին բազմաթիւ զինեալ քուրդեր յարձակեցան Հայոց Ձորի նորգիւղ գիւղին վրա, որի ատեն կը սպանւի մէկ հայ:

Ապրիլի 3-ին Շեղջան գիւղին մէջ գտնւեցաւ շահրազէցի սպանւած Գարեգին Մովսէսեանի դիակը:

Ապրիլի 6-ին քաղաքէն 20 վայրկեան հեռու տեղ մը վիրաւորւեցաւ Հնդստան գիւղացի հայ մը:

Ապրիլի 7-ին քաղաքէն կէս ժամ հեռու վիրաւորւեցաւ Գարման գիւղացի հայ մը:

Ապրիլի 8-ին բազմաթիւ զինեալ քուրդեր յարձակեցան Գըզլէ գիւղին վրա և կրկին անգամ գիւղը կողոպտել է յետոյ վիրաւորեցին գիւղի պահապան ոստիկանը և մէկ գիւղացի:

Այդ միջոցները Գրաւցի կոչւած քիւրդ ցեղի գլխաւոր Շաքիրը գրաւեց Շաթախի և Նորգուզի շատ գիւղերի կենդանիները և բազմաթիւ ժողովուրդ թափւեց եկաւ քաղաք:

Նոյն Շաքիրը անցեալ աշնան յափշտակած և իւրացուցած էր Ս. Հոգոց վանուց 500-էն աւելի ոչխարներ և 100-էն աւելի գոմէշ, եզ, կով ու 3,000 ոսկիի արժողութեամբ արծաթեայ սկիհներ, խաչեր և այլ եկեղեցական սպաններ:

Այսպէս սպանութեան և կողոպուտի դէպքերը տեղի կունենային, երբ մայիսի 7-ին Ս. Հոգոց վանքում բնակուող քիւրդերէն 4-ը կը սպանւին, իսկ մայիսի 13-ին ալ Հայոց Ձորոյ Անգղ գիւղի կամուրջին մօտ երկու քիւրդեր կը սպանւին:

Այս սպանութիւնները վերագրելով հայոց, մտքերը կը դրուին, Հայոց Ձորոյ շատ գիւղերու մէջ խուզարկութիւններ տեղի կունենան և կարգ մը հայեր ալ կը ձերբակալուին:

Սոյն գրգռմանց պատճառով Հայոց Ձորոյ ճամբուն վրա մայիսի 14-ին քաղաքացի հայ մը կը սպանւի. շրջակայ գիւղերէն, ինչպէս նաև Նորգուզէն, Քիզանէն, Սպարկերաէն, Կառկառէն ահազին թւով ժողովուրդ կը թափուի կը գայ քաղաք:

Մայիսի 15-22-ը խուզարկութիւններ կը լլան նաև Այգեստանի հայոց տուներուն մէջ. մարդեր, կիներ և աղջիկներ սաստիկ կը գանակոծւին, կանացի զարդեր և իրեր կը գողացւին. այս խուզարկութիւնները տեղի կունենան Սասէղղին փաշայի կարգադրութեամբ, որը կուզէր Ս. Հոգոց վանքի և Անգղ գիւղի մօտ սպանւած քիւրդերու սպանողները ձերբակալել:

Վերոյիշեալ դէպքերը և քննիչ յանձնախմբի նախագահ Սա-  
աէդդին փաշայի գործ դրած միջոցները արդէն թիւրք ու քիւրդ  
ժողովրդեան մտքերը լարած էին և օրէ օր կը սպառէր մթեր-  
ւած ամպերուն պայթումին: Աշնանէն ի վեր շուկաները արդէն  
կիսով չափ կը բացէին և երբեմն ալ խոստո կը փակէին:

Մայիսի 29 և 30-ին հայ ժողովրդի մէջ լուր կը տարածւի,  
որ մայիսի 31-ին ուրբաթ օր կոտորած պետի լինի. շատ մը թիւր-  
քեր իրենց հայ բարեկամներուն կը զգուշացնեն նոյն օր շուկայ  
չերթալ. գաւառներէն տեղս կը փախչեն բոլոր հայ խանութ-  
պաններն ու շրջիկ մանրավաճառներն և կը պատմեն, որ բոլոր  
քիւրդ աշիրէթներուն պատէր տւած է պատրաստ գանձել քա-  
ղաքին վրա յարձակելու: Փողանի տեղս կը կանչւի Շաքիր ու  
պէտք եղած հրահանգներով նորէն գիւղ կը զրկւի:

Վերոյիշեալ զրոյցներու պատճառաւ մայիսի 31-ին ուրբաթ  
օր շուկան իսպառ կը փակւի: Առաջնորդը կուսակալ Նազմ փա-  
շային թագրիրով տեղեկութիւն կու տայ թիւրքերուն կողմէն  
եղած զգուշացումներուն մասին. կը յայտնէ, որ Շաքիր Շատախի  
և Նորդուզի աշիրէթներուն մէջ խումբեր կը պատրաստի Վանայ  
վրա յարձակելու, բայց կուսակալը կը պատասխանէ, որ յի-  
շեալ կասկածներ անհիմն են:

— Յունիսի 2-ին չուղարկութիւն կը կատարւի Դէրոսանց  
տան մէջ, կը ձերբակալւի Զարուհի Դէրոսան, նրա մայրը և Աղ-  
թամարի երկու սարկաւազներ:

Յունիսի 3-ին կառավարութեան կողմէն լուր կը տարածւի,  
որ Այգեստանէն 20 վայրկեան հեռու Ուրբաթ Առու ըսւած տեղ  
մը զինեալ հայերէն զիշերապահ յիմնապետ և զօրք մը սպանւած  
են: Այս լուրերու պատճառով իսլամ ժողովուրդը կը յուզւի, փո-  
ղոցներու մէջ բազմաթիւ հայեր զօրաց կողմէն կը կողոպուին,  
կը գանակուծւին ու կը վիրաւորւին, ուստի շատ քչերը այդ օրը  
շուկայ կերթան:

Ահա նոյն այդ օր ժամը 4-ին զինուորական հազարապետ և  
Մասնոյ կոտորածի «գիւլցազն» Հաշիմ-պէյ առաջին անգամ կուտայ  
կոտորածի նշանը, Կլոր-գարի և Նորշէնի թրքաբնակ թաղերու մէջ  
յառաջանալով և մի մի անգամ հրացան պարպելով. և ժամադրա-  
կան ճշտութեամբ փամփշտաւոր ու պարզ հրացաններով, տարձա-  
նակներով ու սուրերով և կացիններով ու նման մահացու զոր-

ծիքներով զինւած թիւրք ու քիւրդ պաշարուողները, ոստի-  
կաններէ, զինուորներէ ու գնչուներէ բաղկացեալ խումբանք հա-  
զարաւոր բազմութեամբ յարձակում ըրաւ հայոց թաղերու վրա,  
սկսեալ Հայկավանքէն, Ս. Յակոբէն և Կլոր-գարէն: Առեւտարին կը  
առաջնորդէին շրջուն պահապան զօրաց և ոստիկանաց խումբեր  
և անոնց սպաներ ու փօլխներ:

Յիշեալ կէտերու վրա միաժամանակ լուեցան հրացանաձող-  
թեանց անընդհատ և միշտ սաստկացող ձայներ. հայերու կողմէն  
որեւէ ընդդիմութիւն չը գտնելով, խումբանք յառաջացաւ հայոց  
տուներուն վրա և կացիններով ու քարահատ մուրճերով սկսաւ  
խորտակել դռները և ներս խուժել: Զարկին անխնայ այն ամեն  
սրուները, որոնք իրենց պատահեցան, չը խնայելով նոյն իսկ  
կիներու և մանուկներու. սպանեցին ամեն տեսակ չարաչար մահ-  
ւամբ, կացիններով զլինին փշրեցին, սուրերով մարմիններ յօշո-  
տեցին, թոնիրների մէջ ձգելով խորովեցին կամ քարիւղով (նաւթ)  
այրեցին. գաշոյնով խողխողեցին կամ պարզապէս մորթեցին, իսկ  
փախչողները գնդակահար գետին փռեցին. չը խնայեցին նոյն  
իսկ խնեթերը, կոյրերը, խուլ ու համբերը, անդամալոյծները և  
հարիւրամեայ ծերերը:

Այսպիսի սոսկալի մահւամբ սպանւած զիակները օրերով ու  
ժամերով կիսամեռ արեան մէջ կը գալարէին. մինչև ինքնին հանգ-  
չէին կամ երկրորդ անգամ սպանւէին: Այս մահերը տեղի ունե-  
ցան անոնց կիներու ու տղաներու աչքի առջև, որոնց շատերը  
սրտաճազ եղան և մեռան տեղն ու տեղ:

Մարտափահար ժողովուրդը պատասպարան գտաւ անգլիացոյ,  
ռուսաց և պարսից հիւպատոսարանները և ամերիկեան միսիօնա-  
բաց տունը, իր գոյքը թողնելով խումբանի քմահաճոյքին:

Պատահած մարդեր սպանւէն յետոյ, խումբանք, որուն կը  
հետեւէին մահմեդական և գնչու կիներ ու տղաներ, կողոպտեցին,  
ինչ որ կը գտնւէր տուններուն մէջ՝ անկողին, հանդերձ, կարասիք,  
ուտեստ, դրամ, անասուն և այլն: Այնուհետև քարիւղ սրսկելով  
այրեցին ամեն նշանաւոր երկյարկանի աներ, անգութ տաճիկներ  
շատ մը կիներ ու աղջիկներ գազանաբար լկեցին:

Աւելի վայրագ և աւելի բարբարոս ձևերով Զարգերը տեղի

ունեցան գաւառներում, որոնց մասին նոյն արձանագրութիւններէից բերում ենք հետեւեալ կտորները:

— Երբ յունիսի 3-ին քաղաքի մէջ կոտորածն սկսաւ, պաշտօնական հեռագիրը անմիջապէս ծանուցից զայն գաւառաց գայմագամներուն. այս ազդանշան էր. քաղաքի կոտորածը սկսելէն անմիջապէս յետոյ սկսաւ նաև գիւղերու կոտորածը, աւելի սաստիկ և անխնայ:

Ամեն տեղերու կոտորածն ու աւերումը, գրեթէ, միաօրինակ էին. յարձակում համիդիէի աշիրէթներու, նշանաւոր ոճրագործներու և քիւրդ, թիւրք, գնչու խուժանին կողմէն. կողոպուտ, առևանգութիւն, բռնաբարութիւն, բռնի հաւատափոխութիւն և սպանութիւններ ամենուրեք: Աւելի կամ նւազ չափով բարբարոս գործողութիւններու ենթարկեցին Արճէշ և Ալջաւազ, Բերկրի և Սօշար, Թիմար և Հայոց Ձոր, Գեաւաշ և Կարճկան, Մօկս և Շատախ, Նորգուզ և Աղբակ, Կառկառ և Փեսան գաշտ: Կոտորածն ամենէն սաստիկ եղաւ Արճէշի, Հայոց Ձորի, Գեաւաշի և Կարճկանի գաւառներուն մէջ. Աղսրաֆ, Բանոն, Գանձակ, Արմիզօն և Յարութիւն գիւղերու մէջ գրեթէ արու բնակիչ չը մնաց:

Արճէշի մէջ հայ քահանայ մը ձիու պոչէն կապելով քարշ տւին և մահացուցին: Աջի գիւղացի Նադր օլլի Ալի պէյ անունով մի քիւրդ Արճէշի Գանձակ գիւղին մէջ 20-ի չափ մանուկներ ու պառաւ կիներ լեցրեց հորի մը մէջ և անոնց քարերով ծածկեց. կենդանի թաղւածներու այդ գերեզմանոցէն երեք օր աղէկաւոր ձայներ կը լսւէին և հոգևարքի թառաչներ կելնէին: Դարձեալ նոյն գիւղին մէջ բնակիչներէն տասնեակներով իրարու պարանոցէն կապելով նշանաւոր թեամբ ամենքն ալ մի առ մի սպանեցին: Մանկամարդ կիներ ու աղջիկներ արևու առաջ կը բռնաբարւէին:

Մահմեդական խուժանին և համիդիէին ատելութիւնը ուղղւած էր առաւելապէս արուներու դէմ. գիւղ մը կամ տուն մը մտած ատեն խուժանը կը զատէր կին ու տղաներ ու կը սպանէր արուները: Ղալիպ փաշան հայկափանքիները խժոժարար սպանիլէ յետոյ, այդ սպանութիւններու ականատես կանանց և երեխայոց ջուր կը խմցնէր, որ անոնք չը վախենան:

Արճէշու մէջ բնաւ խորութիւն չեղաւ մարդու կամ կնոջ,

աղայի կամ ծերունու. ամենքն ալ նոյն խժոժական մահերով սպանւեցան, իսկ միւս գաւառաց ու գիւղերու մէջ արուներ սպանւելով գեղեցկադէմ կիներ, հարսներ ու աղջիկներ առևանգեցան: Այս պատճառով շատ մը գեղանի կիներ ու աղջիկներ երեսնին սեցուցին և մագերէ կտրեցին, որպէս զի գեղեցկութիւնն յայտնի չը լինի: Կոտորածների ենթակայ գիւղերը դատարկեցին և խուժանը անխնայ կողոպտեց, աւերեց ու հրդեհեց զանոնք: Ժողովրդի այն մասը, որ ապաստանած էր մահմեդական գիւղերը, մեծ մասամբ մահմեդականութիւն ընդունեց:

Մահմեդական խուժանն իր կատաղութիւնը աւելի թափեց վանօրէից, եկեղեցիներու, զպրօցներու և մատենադարաններու վրա:

Նարեկի վանահայր, հանգուցեալ Սաշատուր կաթողիկոսի եղբօր որդու, Եղիշէ վարդապետի գլուխը կտրելով շնորհն ձգեցին, որոնք քարշ տալով այն կը տանին մինչև Վոկօնիս քիւրդ գիւղը: Վարդապ միաբաններէն սպանւեցան Արիստակէս և Յարութիւն վարդապետները: Վանահայր Դանիէլ վարդապետը կենդանի տիկ հանեցին, իսկ էրէմու Վանուց վանահայր Մարտիրոս քահանային ողջ ողջ վառւած թոնրի մէջ նետելով չարաչար խորովեցին:

Կողոպուցեցան վանօրէից և եկեղեցեաց թանկագին անօթները, սպաններ ու գորգերը: Միմիայն Վարդապ և Նարեկայ վանուց կողոպուած հարստութիւնը կը հասնէր 5-10,000 լիբայի: Կողոպուեցան նաև գիւղական բոլոր եկեղեցիները:

Գիւղերու մէջ սպանւած զիակները շարաթներով անթաղ մնացին, ճամբաներու ու լեռներու վրա ընկած զիակները կեր եղան շներու, գազաններու և թռչուններու. շարաթներ յետոյ միայն, երբ կենդանի մնացած ժողովուրդը գիւղերը դարձաւ, անձանաչելի զիակները կամ կեր եղած ու կրճւած ոսկորները գտան ու թաղեցին:

Վանը առաջին կոտորածէն երկու օր ետքը, յունիսի 5-ին, սոսկալի պատկեր կը ներկայացնէր: Շրջակայ գիւղերէ ու գաւառներէ սկսեցին թափւել գալ նոր այրիացած և սրբացած թշուառներու բազմութիւնը, որի եղբայրը, որի մայրն էր առևանգւած, որի քոյրը. բոլորը սգի մէջ էին, բոլորը սարսափահար. տեսարանը շատ սրտաճմրկ էր: Սրանք ալ քաղաքացի հայ ժողովրդեան նման ապաստանեցին միոթնարաց տան մէջ, մեծ մասն ալ եկեղեցեաց գաւիթները և առաջնորդարանը: Յունիսի 10-էն

յետոյ սկսեցին գալ Արճէշէն և այլ հեռաւոր գիւղերէն, որոց թիւը կը հասնէր 12-15,000-ի: Միսիօնարաց տունը այլևս առողջներին տեղ չի տար, այնտեղ կը ընդունուին միմիայն վիրաւորները. Մանդխտեան վարժարանը նոյնպէս միմիայն վիրաւորներ կը ընդունուին, ուստի գաղթականները կը լեցուին ուղղակի փողոցներու մէջ և փողոցներու փողիին մէջ կը հանգստանան, կը ճաշին ու կը քնանան:

Այսպէս էր պատկերը փոքր չափով, աղօտ գոյներով այն գործողութիւնների, որոնց լայն ասպարէզ դարձաւ Վանը իր բազմաթիւ գաւառներով 1896 թւի յունիսի 3-ից մինչև 10-ը:

Ջարդերի չափն ու ծաւալը աւելի շօշափելի դարձնելու համար, առաջ ենք բերում կողոպուտների, սպանութիւնների և աւերումների այն երկու ցուցակները, որ Վանի առաջնորդարանը և Աղթամարի աթոռը կազմեցին կոտորածներից յետոյ: Համաձայն այդ ցուցակների Վանի մէջ 3-4 օրւայ ընթացքում կողոպուտեցին 1,514 տուն, հրդեհեցին 354 տուն և սպանեցին 546 մարդ, կին և երեխայ<sup>1)</sup>: Այդ միևնոյն օրերի ընթացքում Վան-Տօսպի, Հայոց Չորի, Արճէշի, Շատախի, Թիմարի, Սօշարի, Գեաւաշի, Սիզանի գաւառներում սպանեցին 3,009 մարդ, կին և երեխայ<sup>2)</sup>:

Բացի այդ ցուցակները, առաջ ենք բերում երկու այլ ցուցակներ՝ մէկը Արճէշի<sup>3)</sup> վերաբերեալ, իսկ միւսը Ալջաւազի<sup>4)</sup>, կազմւած տեղացիների ձեռքով, որոնք, թէև կազմւած են շատ ուշ և շատ թերի ու պակասաւոր կերպով, բայց և այնպէս իրբև մօտաւոր չափը որոշող թւեր, շատ բան են պատմում այդ անցեալ արիւնոտ դէպքերի մասին:

Այսքանով չը բաւականացած, տպաւորութիւնը աւելի լրիւ դարձնելու համար, առաջ ենք բերում իրբև նմուշ Արճէշի, Թիմարի, Վան-Տօսպի գաւառների մի քանի գիւղերի սպանւածների ցուցակները<sup>5)</sup>, որը մենք անձամբ կազմել ենք տեղն ու տեղը:

1) Տես վիճակագիր Վանի կոտորածների 1896 թւի յունիսի 3-ի:

2) Տես վիճակագիր Վանի գաւառների կոտորածների 1896 թւի 3-10-ը յունիսի:

3) Տես վիճակագիր Արճէշի գաւառի հայկական սարսափների:

4) Տես վիճակագիր Ալջաւազի գաւառի հայկական սարսափների:

5) Տես սպանւածների ցուցակները Ականցի, Աղսրաֆի, Արմիզօնի, Բաննի, Գանձակի, Ծայծակի, Բլուրմակի, Ջուղգեանի, Ուշքիլիսէի, Կուռուղաշի, Մարմէղի և Ալիւրի:

Թէև այդ ցուցակները կազմել ենք դէպքից շատ տարիներ յետոյ, շատ ու շատ անուններ մոռացւած ու թերի, այնուամենայնիւ այդքանն էլ բաւական է գաղափար կազմելու համար այդ բարբարոս օրերի մասին:

Այդ բարբարոս օրերի տպաւորութիւնը մինչև այսօր էլ գրօջւած է դժբախտ երկրի ճակատին, բարբարոսութիւնների ենթակայ ժողովուրդը մինչև այսօր էլ ստակումով է յիշում այդ բուպէններն իր մանրամասներով: Նրանք այժմ էլ լցւում են մի անգուստ գայրոյթով, մի կատաղի բարկութեամբ, երբ յիշում են Էմին փաշայի, Սէլիմ բէկի, Նազր աղայի և Ալի բէկի, Արճէշի այդ բարբարոսների անունները. նրանք մինչև այժմ էլ մի խորը թառաչ են արձակում, արցունք են կաթեցնում, երբ պատմում են, թէ ինչպէս այդ բարբարոսները փոքրիկ անմեղ մանուկներին ծեփում էին պատերին ու սպանում, թէ ինչպէս Գանձակ գիւղում Քօլօզի Վրդօյի ցորենի հորը լցրեցին պառաւ կլիններ ու երեխաներ և սպա վերայից թափեցին քար ու հող և թէ ինչպէս 3 օր շարունակ այդ հօրից լսւում էին սիրտ կտրատող հոգևարքի ոտնոցներ ու նոցներ: Նրանք մինչև այժմ էլ մի առ մի թւում են չարաչար տանջանքներով սպանւածների անունները, մի առ մի պատմում աւետանգամ հարսների ու աղջիկների տարիքը, գեղեցկութիւնը և որտեղ գտնուելը<sup>1)</sup>:

Բայց մարդկային կորուստն այսքանով չէր սահմանափակւում. այդ կորուստը կրկնապատկեց, եռապատկեց և տեղ տեղ նոյն իսկ տասնապատկեց գաղթականութեան և սարսափներից ու զրկանքներից առաջացած մահացումների շնորհիւ: Ահազին թւով ժողովուրդ միանգամայն ձգեց իր տուն ու տեղը, գաղթեց Կովկաս և այլ կողմեր, ճանապարհին թողնելով վէրքերից ու սարսափներից մեռածներին:

Օրինակ, Արճէշի գաւառի 42 տուն ժողովուրդ ունեցող Գանձակ գիւղից գաղթեցին 40 տունը, 40 տուն ունեցող Ծայծակ գիւղից գաղթեցին 37 տունը, 60 տուն ունեցող Ջուղգեան գիւղից գաղթեցին 56-ը, 130 տուն ունեցող Աղսրաֆ գիւղից հազիւ մնացին 20 տունը, իսկ 43 տուն ունեցող Արմիզօն գիւղից չը մնաց և ոչ մէկ տուն:

1) Տես մի նմուշ ցուցակ առևանգւած հարսների և աղջիկների:

Թէ որչափ զոճեր տւեց գաղթականութիւնը զրկանքներով ու կարիքներով լի պանդխտութեան շնորհիւ, առաջ կը բերենք մի օրինակ:

Գանձակ գիւղացի հարուստ Առաքել աղայի ընտանիքը բազկացած էր 26 հոգուց. կոտորածի ժամանակ այդ ընտանիքից սպանւեցին 4 հոգի, իսկ մնացեալ 22 հոգին գաղթեցին Կովկաս. երբ սահմանադրութիւն յայտարարեց և գաղթականների մի մասը վերադարձաւ հայրենիք, Առաքել աղայի ընտանիքից մնացել էր 5 հոգի. 13 տարւայ պանդխտութեան ընթացքում այդ ընտանիքը հողին էր յանձնել 17 հոգի, ուրեմն չորս անգամ աւելի, քան սպանւածները:

Բայց միայն գաղթականութիւնը չէր, որ կոտորածներից յետոյ այդքան զոճեր էր տալիս. ոչ, զոճեր տւեց նաև տեղում մնացած ժողովուրդը, որը շարաթններով ենթակայ զրկանքների ու քաղցի, թափւած մնաց Վանի փողոցներում և մի քանի վանքերում, մինչև որ երկիրը մի փոքր խաղաղեց և նա կարողացաւ տուն վերադառնալ: Թէ որպիսի չափերի հասաւ տեղում մնացած ժողովրդի կորուստը կոտորածներից յետոյ, դրա մօտաւոր չափը որոշելու համար բերենք մի այլ օրինակ:

Ալիւրը Թիմարի գաւառի ամենահարուստ գիւղերից մէկն է. նրա նիւթական կորուստն անագին էր, միմիայն կողոպուտած կենդանիների թիւը հասնում էր ոչխարն ու տաւարը միասին 7-8,000-ի: Այս գիւղում կոտորածի ժամանակ սպանւեցին ընդամենը 30 հոգի և վիրաւորեցին 20-ը, մինչդեռ կոտորածից յետոյ վեց ամսայ ընթացքում, մի քանի տեղեակ գիւղացիների վկայութեամբ, վախից, անդի պակասութիւնից, մերկ գետնի վրա պարկելուց և արևի տակ քարշ գալուց մեռան մօտ 300 հոգի: Ուրեմն Ալիւր գիւղը 6 ամսայ ընթացքում տասն անգամ աւելի զոճ էր տւել, քան կոտորածի ժամանակ:

Ահա ձեզ փոտաւեր, պերճախօս թւեր այն դժոխք օրերից, որ ապրում էր Վանի և Վանի շրջակայ գաւառների հայ ժողովուրդը կոտորածների և նրան յաջորդող շարաթների ընթացքում:

Այսքանը միայն Վանի և Վանի շրջակայ գաւառների մասին, ապա Մուշը և Մուշի դաշտը, Բիթլիսը և նրա շրջակաները, Մասունն ու Մղերգը, Խլաթն ու Վարդօն, Բուլանըղն ու Մանազկերտը, Խնուսն ու Բասէնը, Ալաշկերտն ու Կարաքիլիսէն, Դիա-

դինն ու Դութաղը, Էրզրումն ու Էրզրումի դաշտը, Դերջանն ու Բայբուրդը, Սպերն ու Կիսկիմը, Թօրթումն ու Քղին և վերջապէս Երզնկան ու Քէմախը: Սրանք բոլորը, բոլորը դարձան խժոժութիւնների ասպարէզ. ամբողջ 1894-96 թւերի ընթացքում երբեմն այս և երբեմն այնտեղ ջարդերն աւելի կամ պակաս չափով, որպէս փոթորիկ գալիս ու անցնում էին, ամեն անգամ առաջ բերելով աւերածութիւններ և ամեն տեղ ստակալի ծրագիրը մանում և դուրս է գալիս իր գործը փառաւոր կերպով կատարած լինելուց յետոյ:

Այո, ստակալի ծրագիր, որ կազմեց սուլթան Համիդի կառավարութեան ձեռքով և ուղարկեց գաւառները ի դորձադրութիւն, ծրագիր, որի անմիջական գործադրողներ հանդիսացան քաղաքներում նստած բարձր պաշտօնեաները, ինչպէս օրինակ, Պօլսից Վան ուղարկւած քննիչ յանձնախումբի նախագահ Մասէղդին փաշան, գաւառներում նստած համիդիէական գնդերի զեկավարները, ինչպէս, օրինակ, Հուսէին փաշան Ալջաւազի գաւառում, Էմին փաշան Արճէշի գաւառում, Կօփ Մամազ բէկը Բերկրիի և Թիմարի գաւառներում, Շաքիր աղան և Միր Մէկն Շատախի և Նորգուզի գաւառներում, ծրագիր, որն ունեցաւ երեք հարիւր հազար զոճ:

Բայց ծրագիրը լիովին դեռ ևս չէր գործադրւած: Դարերի հրի ու սրի միջով անցած հայ ժողովուրդը դեռ խոշոր չափերով ապրեց այդ ստակալի բռնկները, բայց չը ձգեց իր հողն ու տունը, ամիսներ շարունակ սողունի պէս գետնի երեսին սողաց, հացի տեղ աւազ լիզեց, բայց գարձեալ կպած մնաց իր հողին, իր ջրին, այդ պատճառով ծրագրի գործադրութիւնը շարունակեց նաև ջարդերից յետոյ:

Ստակալի ջարդերն իբրև մի հողմ, մի փոթորիկ եկան ու անցան, երկիրը խաղաղեց և խաղաղեց աւելի, քան առաջ էր, բայց դա նախկին օրերի խաղաղութիւնը չէր և ոչ էլ կենդանի մարդկանցով բնակւած մի երկրի խաղաղութիւն. ոչ, դա մի խաղաղութիւն էր, որ իջնում է գիւղներով փուած պատերազմի դաշտի վրա արիւնահեղ ճակատամարտից յետոյ, մի խաղաղութիւն, որը մահ է փչում, դա մի խաղաղութիւն էր, որը յատուկ

է անապատներին, ուր կենդանի շունչ չը կայ: Եւ իսկապէս հայկական շրջաններում 1896 թւի ջարդերից յետոյ տիրեց մի խորին լուռութիւն. լուռ էր ամեն ինչ, կարծէք մեռեալների հովիտ լինէր երկիրը. լուռութեան մէջ դառնում էր կեանքը, եթէ կարելի է կեանք անւանել այդ. լուռութեան մէջ մարդիկ շարժւում էին իրրեւ սաւերներ, ուտում, խմում, իրրեւ անմարմին էակներ և այդ լուռութեան մէջ կրում մի ծանր վիշտ: Ճանջանքն էլ լռեց, բողոքն էլ լռեց, լուռութեան մէջ տեղի էր ունենում և տանջանք և բողոք և ամեն ինչ:

Ահա այդ լուռութեան մէջ եկաւ լրացնելու իր գործը հայաջինջ քաղաքականութեան սոսկալի ծրագիրը, սկսելով մի լուռ գործնէութիւն:

Այդ լուռ գործնէութիւնը տեղի մինչև սահմանադրութեան յայտարարումը, այսինքն, ուղիղ 12 տարի, մի երկար շրջան, որի ընթացքում առանց դիմադրութեան և առանց բողոքի, տեղի ունեցան հողային գրաւումներ, գոյքային յափշտակութիւններ և հարկերի ու ապօրինի տուրքերի ծանրաբեռնումներ այնպիսի չափերով ու ծաւալով, որ միանգամայն մոռացնել տւին նախկին գրաւումները, յափշտակութիւնները և հարկերն ու տուրքերը:

Այդ լուռ շրջանում բազմաթիւ քրդեր եկան հաստատուեցին հայ գիւղերի մէջ, նրանք տիրապետեցին գաղթած հայերի տներն ու հողերը, գրաւեցին տեղում մնացած հայերի լաւ արտերը, խտատակերը և արօտները, նրանք դարձան գիւղերի տէրերն ու սնորհները:

Այդ լուռ շրջանում հայ գիւղերի մէջ հիմնուեցին բէկական դղեակներ. իւրաքանչիւր գիւղ, որը մինչև այդ ազատ էր մնացել ազայից կամ բէկից, եկաւ այս կամ այն աղղեցիկ քուրդը, ձեռքը դրեց գիւղի յարմարաւոր, աչքի ընկնող մէկ տեղի վրա, այդտեղ շինեց երկու յարկանի մի շքեղ տուն, նստեցրեց նրա մէջ իր ազային կամ աղջկան և իրենը յայտարարեց այդ գիւղի աղան կամ բէկը, այնուհետև շարունակելով գրաւել գիւղի լաւ հողերը: Որոշ պարտականութիւններ դնելը, որոշ տուրքեր սահմանելը հայերի վերաբերմամբ ազայի կողմից ոչ միայն դիմադրութեան չէր ենթարկւում, այլ յաճախ նոյն այդ հայը հարեան քրդերի ճնշումներից, բռնութիւններից ազատ մնալու համար ինքնարեւարար դիմում էր այս կամ այն ազային կամ բէկին, նրա պաշտ-

պանութիւնը խնդրում և նրան հարկատուն դառնում: Այսպիսով հայ գիւղն աշխատում, վարում, ցանում էր, իսկ աղան, բէկը հարստանում, նրա դղեակն աւելի ու աւելի ճոխանում ու փարթամանում էր:

Տարրական պարտականութիւն դարձաւ ձրի վարել, ցանել ազայի հողերը, հնձել արտը, ձեռնել ցորենը, դաշտից տուն բերել խոտը: Երբ ձմեռը վրա էր հասնում, իւրաքանչիւր տուն վերցնում էր իր խոտով պահելու ազայի ոչխարներից 5, 10, երբեմն նոյն իսկ 20 հատ և եթէ ոչխարներից մէկը սատկում էր, նա վճարում էր սատկածի փոխարէնը ոչխար կամ դրամ: Շատ անգամ հայ գիւղացու կատարած աշխատանքն անցնում էր ամեն չափ ու սահման:

Օրինակ. Արճէշի դաւառի Սոսկուն գիւղի Գարւիշ աղան ձմեռւայ սառնամանիներին ստիպում էր Սոսկունի հայերին հերթով, խումբ խումբ գնալ երկու ժամ հեռաւորութեան վրա գանւող Գօղէ գիւղը, ուր գտնւում էր Գարւիշ ազայի խոտը և այնտեղից շալակով խոտ բերել Սոսկուն՝ ոչխարը կերակրելու համար. այս աշխատանքը շարունակւում էր ամբողջ ձմեռը: Ազային հող չէր, որ ձմեռւայ սառնամանիներին ձիւնով բռնւած ճանապարհներով անաղին շալակած խոտը երկու ժամ ճանապարհ տանելը նոյն իսկ գրաստի ուժերից վեր էր. չէ՞ որ գրաստից ստորը ազայի համար հայն էր. չէ՞ որ տաճկական իրականութեան մէջ, այդ բարբարոս երկրում վաղուց արդէն մի ձին, մի շունն անգամ աւելի խնամքի ու հոգացողութեան էր արժանանում, քան հայը:

Այդ լուռ շրջանում հայ գիւղերի հարկահանութիւնը և տասանորդ տուրքի գանձումը դարձաւ հարստահարութիւնների և կողոպուտի մի լայն ասպարէզ. կազմակերպւեց թասիլդարների և մուլթեզիմների մի մեծ բանակ, որոնք քաղցած գայլերի պէս թափւում էին գիւղերը, բարձրացնում շարունակ տասանորդի կապալը, խլում միմեանց ձեռքից հայ գիւղերը և իրենց հերթում կեղեքում ու կեղեքում հայ գիւղացուն: Շնորհիւ գրա, հայի տասանորդ տուրքը կրկնապատուեց, մինչդեռ մահմեդական գիւղերի կապալը, գրա հետ միասին տասանորդ տուրքը պակասում էր ու պակասում. շնորհիւ գրա հայի այգու, պարտէզի, բօստանի և բանջարանոցի բերքը գնահատւում էր մի քանի անգամ աւելի,



քան իսկական արժէքը, մինչդեռ մահմեդականի ձեռքում այդ նոյն պարագայումնքը չնչին գնահատութեան էր արժանանում:

Ահա այս երևոյթը մի աւելորդ անգամ եկաւ հարկադրելու հային բոլորովին ձեռք վերցնելու բոստաններ ու բանջարանոցներ մշակելուց, մտնելու մի քուրդ աղայի կամ բէկի պաշտպանութեան տակ, ձգել նոյն իսկ հողերը և դառնալ մարաբա:

Մուշի դաշտով ճանապարհորդելիս մենք կանգ առանք Ծուկէտ գիւղի մի բոստանի մօտ ձմերուկ գնելու համար. բոստան մշակողը քուրդ էր. այդ ժամանակ բոստանին մօտեցաւ մի հայ. երբ մենք հետաքրքրուեցինք այդ հայով, յայտնի դարձաւ, որ բոստանի տեղը պատկանում է նրան, իսկ քուրդը վերցրել է այն կիսով մշակելու համար: Մեր դիմումին հոգատէր գիւղացին տւեց մի շատ համոզեցուցիչ պատասխան:

— Այո, պարոն, ամենալաւ բոստան մշակողը հայն է, բայց վայն եկել է այն հային, որը սխալմամբ մի կտոր հողը բոստան է դարձրել, այդ բոստանից ոչ միայն վաստակ չի վերցնի, այլև ամբողջ բերքը տալով էլ չի ազատւի մուլթէզիմի ձեռքից, իսկ քրդի բանը ուրիշ է, կառավարութիւնը թոյլ չի տայ, որ նրան հարստահարեն, նրա բերքը թանկ գնահատեն, այդ պատճառով բոստան մշակողը դարձել է «սարի քուրդը»:

Եւ իսկապէս, ոչ մի տեղ մենք չը տեսանք հայ բոստան մշակողի, մինչդեռ քուրդ և տաճիկ բոստան մշակողների մենք պատահում էինք Մուշի դաշտում, Բասէնի կողմերում և այլ տեղերում: Այստեղից էլ առաջացել էր այն մեծ տարբերութիւնը, որ գոյութիւն ունէր հայ և մահմեդական գիւղերի տասանորդի հարկի կապալավարձերի մէջ, որին իբրև նմուշ բերում ենք մի օրինակ:

Մուշի դաշտի և Վարդոյի գաւառի սահմանների վրա մենք պատահեցինք երկու գիւղերի. դրանք էին՝ Ախպուարը և Սիկաուն: Ախպուարը չէրբէզաբնակ գիւղ է և ունի մօտաւորապէս 50 տուն բնակիչ, իսկ Սիկաուն հայաբնակ է և ունի մօտաւորապէս 100 տուն բնակիչ: Թէ Սիկաունի հողերը որքանով շատ էին և բերրի Ախպուարի հողերից, այդ ստուգել մենք չը կարողացանք, բայց որ Ախպուարն ունէր բերրի հողեր, այդ բանում մենք համոզեցինք, տեսնելով նրա սիմինգրի հրաշալի արտերը:

1909 թւին Ախպուարի տասանորդը վաճառւել էր 31 ոսկու,

մինչդեռ Սիկաունի տասանորդձ նոյն թւին վաճառւել էր 250 ոսկու և 50 քիլէ գարու <sup>1)</sup>:

Այսքան էր տարբերութիւնը սահմանադրութիւնից մի տարի անց, այսինքն հանգստութեան և արդարութեան օրերում. ինչ վերաբերում է սահմանադրութիւնից առաջւայ տարիներին, այդ ժամանակ տարբերութիւնը աւելի ևս մեծ էր. հայերը՝ վկայում էին, որ նախ քան սահմանադրութիւնը, Ախպուարի տասանորդը 15-20 ոսկուց աւելի չէր վաճառւում, մինչդեռ 1908 թւին Սիկաունի տասանորդը վաճառւել էր 275 ոսկու, 75 քիլէ ցորենի և 50 քիլէ գարու:

Եթէ ի նկատի ունենանք այն հանգամանքը, որ մուլթէզիմները առհասարակ խոյս էին տալիս մահմեդական գիւղերը վերցնելուց, ուր մեծ չափով կողոպուտ անկարելի էր, խոյս էին տալիս մանաւանդ չէրբէզներից, այն չէրբէզներից, որոնք սուլթան Համիդի առանձին ուշադրութեանը արժանանալով, մերժում էին նոյն իսկ օրէնքով սահմանւած հարկը տալ, այն ժամանակ հասկանալի կը դառնայ, թէ ինչպէս հայ ժողովուրդը այդ սև տարիներում միանգամայն քմահաճութիւնների ենթակայ, մի բանի անգամ աւելի էր հարկ վճարում, քան քուրդը կամ չէրբէզը:

Այսպէս էր սև իրականութիւնը սև լուծեան շրջանում հայ ժողովրդի նիւթական գրկանքների նկատմամբ. ապա ինչ էր ներկայացնում այդ շրջանում հայը իր անհատական ազատութիւնով:

Այդ շրջանում ազատ շարժումը, ազատ նիստն ու կացը հայի համար դարձաւ մի անըմբռնելի հասկացողութիւն. իր տան չորս պատերից հայն ստեղծեց մի բանտ և այդ բանտից դուրս նա կեանք չը ճանաչեց. իր չորս պատից դուրս գրօսանք կատարելը, ազատ օդի մէջ ազատ շունչ քաշելը և վերջապէս բնութեան վայելքներ ստանալը նա չիմացաւ ինչ բան է: Տանից դուրս թատեղ և գործատեղից տուն, ահա այն մեծ տարածութիւնը, որը բաժին մնաց ազատ ծնւած մարդուն, գլուխը քարշ, երկիւզը սրտում անց ու դարձ անելու: Լոյս ցերեկ և անհրաժեշտ կարիք, ահա այն երկու պայմանները, որոնք հարկադրում էին

1) Քիլէն Մուշի դաշտում հուասար է 8 փութ ցորենի և 7 1/2 փութ գարու:

հայրն ամենից զուրա զալու: Երբ այդպէս էր գրութիւնը հայի համար իր գիւղում, իր նեղ միջավայրում, հասկանալի է, որ նոյն հայի համար գիւղից գիւղ երթեկեկէր, երկար ճանապարհ գնալը միանգամայն անհնարին ու անկարելի պիտի դառնար, որովհետեւ նրա կեանքն ապահոված չէր, որովհետեւ իւրաքանչիւր քայլափոխում առաջին պատահած քրդից նա կարող էր կտրուպուել և սպանուել:

Երբ մենք ճանապարհորդում էինք հայկական գաւառները և ճանապարհորդում էինք մեծ մասամբ ոտով, չը նայած այն բանին, որ այդ ճանապարհորդութիւնը կատարում էր սահմանադրութիւնից մի ամբողջ տարի անց և համեմատաբար երկիրը խողաղւած ժամանակ, բայց և այնպէս, մեր ճանապարհորդութիւնը համարում էր վտանգաւոր, նոյն իսկ անմիտ ու անհեռատես քայլ և երբ մենք փորձում էինք տեղում գտնել ընկերակցողներ գտնէ մօտիկ գաւառները այցելելիս, այդ բանը մեզ չէր յաջողում:

Օգոստոսի սկզբներին Մուշում ձիեր վարձելով, Բագունի ազգանունով մի երկտասարդի հետ, որը մեզ ընկերակցել էր Վանից, մի տաճիկ ձիապանի ուղեկցութեամբ, ճանապարհ ընկանք դէպի Էրզրում: Մեր ճանապարհը ձգուում էր Խամուրի լեռների, Խնուսի Ազվէրան գեղուկի, Արաքս գետի և Փալան-Թօքէնի վրայով: Երբորդ օրում Խնուսից զուրա զալով, երեկոյեան արեամտին հասանք Արաքսի ափին գտնուող մի գիւղ, որ որոշեցինք գիշերել: Այդ գիւղը 7-8 անից բաղկացած քրդարնակ մի գիւղ էր Կանէմշկան անունով: Մենք կանգ առանք մի տան առաջ, մեր ձիապան Մըստաֆան ձայն տեսց և ներսից զուրա եկաւ միջակ տարիքի յաղթանդամ մի բուրդ. զա այդ պիւղի աղան էր, Ուսուր բէկը, որը տեսնելով մեզ և մեր օտարտաի հագուստները, զիմեց ձիապան Մստաֆային մեր ով լինելը հարցնելով և երբ Մստաֆան յայտնեց, որ մենք հայեր ենք և Էրզրում ենք գնում, բէկը զարմացած նորից մեզ նայեց, գլուխը թափ տեսց և խօսքերն ուղղելով Մստաֆային տաճկերէն սասաց.

— Էյ ժամանակ, տեսէք բանը ինչ տեղն է հասել, որ երկու հայ այս ժամանակ վստահացել են այս տեղերով գալ անցնել:

Պէտք էր այդ բոլորին տեսնել բէկի զարմացք արտայայտող դէմքը, խորհրդաւոր գլխի շարժումը և խորհր-

դաւոր խօսքերը, որ մարդ զազափար կազմէր, թէ որ աստիճանի արտասովոր էր երկու հայ ճամբորդների ներկայութիւնը այդ տեղերում: Եւ իսկապէս, այդ տեղերով ճանապարհորդութիւնը կատարում էր մեծ քարավաններով և այդ քարավանների հետ է, որ Մուշի հայ վաճառականը մինչև այդ, այն էլ տարէն մի անգամ, վստահացել է ճանապարհորդութիւն կատարել, մեծ վտանգ յանձն առնելով:

Հայ ժողովրդի համար այդ ծանր տարիներում լաւ կեանք վարելը, մաքուր հագնելը և շատ ու քիչ վայելուչ, ինքնագոհ երեւալը համարեց խորթ, անցանկալի և նոյն իսկ ատելի. հայի համար ամենաապահով գրութիւնը աղքատութիւնն էր, խեղճութիւնը, արտաքինով չքաւոր ու զգզզած երեւալը. այդ գրութեամբ նա քիչ նախանձողներ կուեննար և քիչ էլ թշնամիներ: Այդպէս չէր ունեւորը, հարուստը, լաւ հագնուողը. նրա վրա գաննում էր վայրազ քրդի, տաճկի նախանձոտ և չարակամ հայեացքը, նրա ունեցածի վրա ուղղում էր հարեածը և շուտ թէ ուշ նա կողոպտուում, ընկնում, ոչնչանում էր: Ահա այս է պատճառը, որ նոյն իսկ ունեւոր հայը այդ երկրում աշխատում է չքաւոր երեւալ, որ նա իր ունեցածը թազցնում, պահում, հողի տակ է թաղում, որ նա իր հագուստով բոլորովին չի տարբերում չքաւորից: Շնորհիւ այս երեւոյթի, Տաճկաստանի հայկական գաւառներում այն բոլորը, ինչ որ կարող էր այսպէս կամ այնպէս ունեւորի, վայելուչի ապաւորութիւն թողնել, արհամարեց, չքացաւ, անհետացաւ, իսկ այն բոլորը, ինչ որ չքաւորութիւն ու խեղճութիւն էր արտայայտում, հրապարակ եկաւ, ցուցադրեց, մարդկանց գութը շարժելու, վրէժխնդրութիւնից ազատ փնալու համար:

Տեսել էք արդեօք փոզոցում կանգնած մուրացկանին, որը մարդկանց գութը շարժելու համար ձեանում է կաղ, կոյր, համր, ձեռքերն ու ոտները գօսացած և յաճախ բերանն ու դէմքը ծամած ու այլայլած. ահա այդ հոգեբանութեամբ ապրում էր հայ ժողովուրդը երկար սե տարիներում:

Այդ ծանր տարիներում հայ ժողովրդի բերանում մշակեց իւրայատուկ ոճ, իւրայատուկ բարբառ և իւրայատուկ խօսելու ձև. խօսելու այն ձևը, որ գոյութիւն ունէր մինչև այդ, այն ոճը, որ գոյութիւն ունէր համեմատաբար նախկին ազատ շրջանում, այլևս անընդունելի գարձան. ժամանակը, գրութիւնը, հանգա-

մանքները փոխել էին, դրա հետ պիտի փոխէր նաև խօսելու և դիմումի ձևը դէպի տիրող տարրը: Օրինակ, եթէ նեղում էին, չը պիտի բողոքէիր, եթէ վիրաւորանք էին հասցնում, չը պիտի տրանջայիր, եթէ դրութիւնդ վատ էր, չը պիտի արտայայտէիր այդ մի խօսքով դու պիտի ձևանայիր քո վիճակից գոհ, քեզ կողոպտողներին պիտի անւանէիր բարեբարներ և այդ դժոխք երկրի միապետին արեշատութիւն պիտի խնդրէիր, գոհունակութեան մաղթանքներ մատուցանէիր, որ բարեխնամ սուլթանի շնորհիւ դու վարում ես հանգիստ ու անդորր կեանք:

Այս էր թելադրում ու պահանջում սև իրականութիւնը. չը կատարէիր այդ, կը համարէիր ըմբոստ, ապստամբ, կը ձգէիր տաճկական դժոխքը, կը մաշէիր կեանքդ այդ դժոխքում և կամ մի ծանր փորձանք կը բերէիր քո ու քո ընտանիքի գլխին: Ահա կեղծելու, շողքորթելու, հաճոյանալու մի ոճ մշակեց հայ ժողովուրդը այդ ծանր տարիներում, իսկ այդ ոճի կենդանի օրինակը այն շնորհակալութիւնների և բարեմաղթութիւնների ուղերձներն էին, որ հայկական գաւառներից, նոյն իսկ կոտորածների օրերում, ուղարկւում էին անընդհատ «հայրախնամ սուլթան Համիդին»:

Որոշ զգուշաւոր ոճ մահմեդականին դիմելու համար, որոշ վայելուչ լեզու այժմ էլ պահանջւում է հայից տաճիկ աշխարհում. դա մի ոճ է, մի լեզու ազատ ապրածներիս համար միանգամայն անըմբռնելի ու անհասկանալի, որին ընտելանալու և վարժելու համար հարկաւոր է ապրել այն մթնոլորտի մէջ, որի մէջ ապրում է տաճկահայը:

Սահմանադրութիւնից յետոյ Կովկասից վերադարձած գաղթականները ոչ մի կերպ չէին կարողանում հաշտել իրենց հայրենիքում ստեղծւած այդ դրութեան հետ. ապրած լինելով Կովկասում և սովորած լինելով ազատ կարգերի, ազատ խօսելու և զգացածը ուղիղ արտայայտելու ձևերին, նրանց միանգամայն խորթ էր թւում այն կեղծ, քսու և շողքորթ ձևերը, որոնք պահանջւում էին այդտեղ:

Կովկասից նոր վերադարձած մի գաղթական Արճէշի Ականց զիւզաբաղաբում ճնշւած սրտով մեզ ասում էր.

— Պարոն, մեզ համար դժւար է այստեղ ապրելը, մեր խօսելու ձևը դուր չի գալիս այստեղի տաճիկներին ու քրդերին, մեր խօսելու եղանակից նրանք վիրաւորում են և մեզ հայհոյում, վախենում ենք կռիւ և անախորժութիւններ ծագեն:

Եւ այս ճիշտ էր, նոյն բանը մենք փորձեցինք ինքներս էլ: Մուշի դաշտում ճանապարհորդելիս Ծոփէտ գիւղում մենք ուղեցիներ մի մարդ վարձել, որը պիտի վերցնէր մեր ծանրոցը և մեզ առաջնորդէր դէպի Սասգիւղ. դաշտային աշխատանքների ժամանակը լինելով, մենք գիւղում ազատ մարդ չը գտանք. մի էլք գտնելու համար ոէսը կանչեց գիւղում գտնուող պօստատար գապտիէին <sup>1)</sup>, որը պահանջեց մեզնից մէկ արծաթ մէջիդ, այսինքն 1 մանէթ 60 կոպէկ, մեր ծանրոցը վերցնելու և մեզ հետ Սասգիւղ գնալու համար, որը կը տևէր 3 ժամ: Չը համաձայնելով այդ բանին, մենք առաջարկեցինք գապտիէին, որ նա ոտով քայլի, իսկ նրա ձին նստի մեզնից մէկը: Մեր առաջարկութիւնը դուր չեկաւ գապտիէին, դուր չեկաւ նաև ոէսին, որը չը յապաղեց նկատելու մեզ:

— Պարոն, դու շատ կոպիտ կը խօսես, մեր երկրում այդպիսի լեզուով չի կարելի խօսել տաճիկի, այն էլ գապտիէի հետ:

Մեր պնդումը, թէ այդպիսի առաջարկութիւն անելը և այդ լեզուով խօսելն իւրաքանչիւրիս իրաւունքն է, ոչ միայն համոզել չը կարողացաւ տաճկական սև իրականութիւնը իր կաշւի վրա փորձած ոէսին, այլ նրա մէջ գժգոհութիւն առաջացրեց, մանաւանդ որ գապտիէն, ըստ երևոյթին, վիրաւորւած թոզեց ու հեռացաւ:

Այո, մենք պնդեցինք, որ այդպիսի առաջարկութիւն անելը և այդ լեզուով խօսելը իւրաքանչիւրիս իրաւունքն է, բայց միևնոյն ժամանակ մի ներքին ձայն մեզ ասում էր, որ ոէսը իրաւացի է, որ սև իրականութեան ծնած կարգերը, հարստահարողի և հարստահարւողի մէջ ստեղծւած յարաբերութիւնները միանգամից փոխելը այնքան էլ դիւրին չէ, որ տաճկահային վստահ և շիտակ խօսելուն վարժեցնելը ժամանակի խնդիր է:

Եւ թէկուզ սահմանադրական Տաճկաստանում տաճիկն, այն էլ գապտիէին ասել.

— Դու քո ձին տուր ևս նստեմ, իսկ դու ոտով արի,— այսինքն մահմեդականը իր ձին տար հային նստելու, իսկ ինքը նրա յետևից ոտքով քայլէր, այս չը լինելու բան էր, չը լինելու

1) Տաճկաստանում պօստը ուղարկւում է ձիերով և այն էլ շարժք մի անգամ. դրա համար որոշ տեղերում պահւում են գապտիէներ (ստրամիկ), որոնք ազատ ժամանակ կողմակի գործով էլ են զբաղւում:

բան այն տանջւած տաճկանայ գիւղացու համար, որը ոչ մի հաւատարմութեան չէր հետևում:

Այս միջնադէպից միմիայն մի օր առաջ, արևը դեռ չէր մտած, մենք այցելեցինք Աւզուա գիւղը, իջեանելու համար երբ մենք մօտենում էինք ուստի տանը, տեսնաք հետեւալ պատկերը: Դրսի մեծ սաքուի շուրջը նստած էին ուստի, ուստի եղբայրը և երկու քրոջեր, իսկ սաքուի մէջտեղում մէկ մէկու վրա դարսած երկու բարձերի վրա բազմած էր բոլորովին երիտասարդ մէկ քուրդայի երիտասարդ քրդի մէջ խօսում էր ինքնահաւանութիւնը և իշխողի գոռոզութիւնը. մեր մօտենալուն ու բարեխն և սաքուի մի կողմում մեր տեղ բռնելուն ոչ մի կարեւորութիւն չէր տալով, ինքնահաւան քուրդը ուստի հետ շարունակեց իր խօսակցութիւնը, իսկ մենք քրդերէն չէր հասկանալով հանդերձ, հետաքրքրութեամբ դիտում ու հետևում էինք երիտասարդ քրդին և նրա բոլոր շարժումներին: Ըստ երևոյթին, այդ երիտասարդ քրդի և մեր հանդիպումը այդ տանը ուստի գրեց մի փոքր անյարժար գրութեան մէջ, որից դուրս գալու համար նա կարգադրեց հաց բերել, բէկի համար: Անմիջապէս երիտասարդ քրդի առաջ գրին սինիով հաց, մածոն, կարագ և պանիր, որը մօտ քաշելով և շարունակելով իր արհամարհական վերաբերմունքը գէպի չորս կողմը նստածները, բէկը սկսեց ազահարար ուտել հայի տան մէջ հայի բարեքը, տան տէրերի և նրանց հիւրերի հանդիսաւորութեամբ, առանց հրաւիրելու նրանց իրեն հետ ճաշելու: Անշուշտ առաջին անգամը չէր, որ ուստի իր տան մէջ ընդունում էր այդպիսի լպիրը հիւրեր. այդ մի կենդանի պատկեր էր հազարաւոր անգամ մեր կարգացածները ու լսածները, կենդանի պատկեր տաճկահայի սև իրականութեան: Երբ բէկը բաւականին մաքրադարեց սեղանը, ձեռքով հրեց սինին երկու քրդերի առաջ, սրանք մի քանի բոպէում, բոլորովին մաքրեցին սինին. այդ ժամանակ բէկը կանգնեց նրստած տեղից, վերցրեց սինից քարը ընկած փամփոշտաւոր հրացանը, վեր թռան տեղերից երկու քրդերը, ուստի և իր եղբայրը, ախոռից դուրս բերին բէկի ձին և բէկը դարձեալ նոյն ինքնահաւանութեամբ հրաժեշտ տեց ուստի ու հեռացաւ. բէկի հեռանալուց յետոյ միայն ուստի և նրա եղբայրը դարձան մեզ, բարի գալուստ մաղթեցին և սկսեց մեր խօսակցութիւնը, որը ամբողջ ժամանակ դառնում էր երիտասարդ քրդի շուրջը: Եւ ինչ պարզեց

մեզ համար. Աւզուաին շատ մօտիկ գտնուում է Թանի անունով մի հայ ու քրդարնակ գիւղ. այդ գիւղումն է ապրում Մուշի դաշտի հռչակաւոր ուստիքը Մուսա բէկը, որը հայկական մեծ ջարդերից առաջ առեւանգեց Թարս գիւղի հայ օրիորդ Գիւլիգարին, այժմ Օսմանեան պարլամենտի Մուշի պատգամաւոր Գեղամի կինը, որի համար իր ժամանակին Մուսա բէկը Պօլիս կանչեց ու այնտեղից աքսորեց Արարիս և որը սահմանադրութիւնից յետոյ ամնիստիայի արժանանալով, տուն վերադարձաւ: Ուստիքը Մուսա բէկն ուստի մի եղբայր Կասում բէկ անունով, որն իր վայրագութիւններով գերազանցել է նոյն իսկ իր եղբորը, գրաւել է շրջակայ գիւղերից, մասնաւորապէս Աւզուաից շատ ընտիր հողեր, հարստահարել ու կողոպտել է պատահած հային և այժմ էլ Մուշի դաշտի համար մի պատուհաս է: Ահա այդ Կասում բէկի տղան էր երիտասարդ, ինքնահաւան, գոռոզ քուրդը, որը սահմանադրութիւնից դեռ մի տարի էլ անց օտարի տան մէջ իրեն գգում էր իրրև իր տանը:

— Ինչո՞ւ էք այդպիսի լպիրը լակոտին ձեր տան մէջ ընդունում և նրա առաջ ձեր սեղանը բացում, ուստի, չէ՞ որ այժմ դրանցից վախենալու ոչինչ չունիք, չէ՞ որ այժմ սահմանադրութիւն է և իւրաքանչիւր հպատակ կարող է կառավարութեան կողմից պաշտպանութիւն գտնել:

— Լաւ կասէք, պարոն, բայց ինչ երաշխաւորութիւն ունիք, որ սահմանադրութիւնը յարատև է լինելու, որ վաղը, միւս օրը սուլթան Համիդը նորից չի բազմելու Օսմանեան գահի վրա և Մուսա ու Կասում բէկերը նորից չեն դառնալու մեր գլխի տէրերը:

Ռէսի այս խօսքերը, որ նա ուղղեց մեզ իրրև պատասխան մեր դիմումի, այնքան խորը համոզմունքով, այնքան ցաւոտ եղանակով արտասանեցին, որ մենք մեզ իրաւունք չէր համարեցինք հակառակը պնդելու. և իսկապէս ինչ գին ու արժէք ունէր մեր լոկ հաւաստիացումը այն սև իրականութեան առաջ, որի մէջ ուստի մաշել էր իր կեանքի ձիգ տարիները:

Ռէսի սեղան-սինին նորից մէջ եկաւ, բայց այս անգամ աւելի ճոխ ու աւելի առատ և ուստի մեծ բաւականութեամբ իր եղբոր հետ մեզ սեղանակից եղաւ. չէր նայած այս բանին, այնուամենայնիւ, ուստի մնաց այն համոզմունքի, որ նոյն սեղանը դեռ շատ անգամ պիտի բացւի Կասում բէկի և նրա «լամուկի» առաջ, որ հայի սև օրը դեռ երկար կը շարունակւի այդ ձեռով:

Այո, սև օր, երբ արգելք էր դրուում եկեղեցիների զանգահարութեանը, երբ հային իրաւունք չէր տրուում ձի նստելու և ձիով ճանապարհ գուրս գալու: Այս բանը գուք կը լսէք ամեն տեղ, այս միանգամայն ճշմարտութիւն է, բայց ճշմարտութիւն չէ այն, որ իբր օրէնքով էր արգելւած այս. զանգահարութիւնը և հային ձի նստելը արգելող օրէնք գոյութիւն չունի, բայց սև իրականութիւնը և իրերի բնական ընթացքը եկան փաստօրէն արգելք դնելու թէ զանգահարութեանը և թէ ձի նստելուն, եթէ ոչ քաղաքներում, յամենայն դէպս գաւառներում:

Գերեզմանային այն լուս շրջանում, երբ հայը չէր վստահանում իր գիւղից, նոյն իսկ իր տանից ոտք գուրս դնելու, երբ նա ամեն կերպ աշխատում էր չերեալ քրդի, պաշտօնեայի աչքին, երբ նա սոււերի տակ էր մտնում, մթութեան մէջ էր քաշւում անտեսանելի դառնալու համար, արդեօք կարող էր այդ նոյն հայի մտքով անցնել զանգահարութիւնը. ի հարկէ ոչ, մանաւանդ, որ զանգի ձայնը, ինքն ըստ ինքեան, ուշադրութիւն գրաւող և մահմեղականի համար գրգռիչ մի երևոյթ էր: Կամացուկ սողալ տանիքների վրա, գլուխը կախ գցել երդիկից ներս և շշջալով արտասանել.

— Օղորմի աստուած, ժամ հրամեցէք,— այս փոխարինել է և փոխարինում է զանգահարութեանը Տաճկաստանի հայաբնակ գաւառներում և հայաբնակ գիւղերում:

Նոյն սև իրականութիւնը և իրերի բնական ընթացքը եկան փաստօրէն արգելք դնելու նաև հայի ձի նստելուն:

— Պարոն, ինչ միտք ունէր ձի նստելը, մինչդեռ ճամբաները լեցուն էին քրդերով ու տաճիկներով, մինչդեռ ճամբայ գնալիս ամեն պատահած քրդի ու տաճիկի առաջ պիտի վար իջնէիր ձիուց, մի կողմ քաշէիր և նրան ճամբայ տայիր անցնելու:

Գուգուս լեռան ստորոտում գտնուող սոսկալի հալածանքի ենթարկւած Զրհօր գիւղի մի տանջւած հայի բերանից հնչող այս խօսքերը գալիս էին համոզելու, որ այդ երկրում մահմեղականի համար վիրաւորանք էր հային ձիու վրա տեսնելը, հայի ոտք գետնից կտրւած լինելը:

Գերեզմանային այդ լուս շրջանում թէև աննկատելի կերպով, թէև փոքրիկ խմբերով, տանջւած թուրքահայը զաղտագողի հեռանում էր երկրից, ձգուում էր իր ընտանիքը, իր տունն ու տեղը,

քաղթում ու գաղթում, փախչում այդ դժոխք աշխարհից, ուր քացի տառապանքից ոչինչ չէր մնացել նրան բաժին:

Գերեզմանային այդ լուս շրջանում տեղի ունէր և մի այլ երևոյթ. մենք շարունակ լսել էինք, որ հայ կիներ, հայ օրիորդք քոնարարում, առևանգւում և կրօնափոխ է լինում մահաւան սարսափի տակ, շողշողուն սրի սպառնալիքների ազդեցութեամբ, բայց չէինք լսել, որ այդ երկրում հայ կիներ, հայ օրիորդք ինքնաբերաբար էլ ընդունում է մահմեղականութիւն, դառնում քրդի կիներ:

Բայազետին մօտիկ գտնուող Արծաի գիւղում մեզ թւեցին իրեր հայ օրիորդների, որոնք, մի քանի տարի առաջ, երբ այդ գիւղում զօրքեր էին դրւած, կապւել էին տաճիկ զինուորականների հետ և ամուսնանալով, նրանց հետ նրանց հայրենիքը զնացել:

Արճէշի Սոսկուն գիւղից մենք ոտով գնում էինք Ականց. այդ ճանապարհը տևում է 3 ժամ. գիւղից մեզ հետ միացան Ականց գնացող մի խումբ հայեր և երկու քրդեր. ուսումնասիրութեան համար այդպիսի ճանապարհորդութիւնները տալիս են առատ նիւթ, ճանապարհը դարձնելով միանգամայն աննկատելի: Ծանապարհին հայ գիւղացիները մեզ ցոյց էին տալիս հին աւերակ գիւղեր, ջրաղացների և եկեղեցիների փլատակներ և պատմում զանազան դէպքեր այդ աւերակների և իրանց դրութեան մասին: Երբեմն զբանցից մէկը, թխողէմ, բայց դուրեկան գէմքով մի երիտասարդ, բարձրացնում էր ձայնը և երգում այդ երկրում ընդունւած քրդական երգեր և ամեն անգամ, երբ վերջացնում էր երգի մի հանգը, ուզում էր ծաղրական և նոյն իսկ հայհոյական խօսքեր մեզ հետ գնացող քրդերին և ծիծաղ առաջացնում բոլորիս մէջ. այդ երիտասարդն իր սուր կատակաբանութիւններով, իր համարձակախօսութեամբ և անընդհատ քրդերին վիրաւորանքների ու ծաղրանքների առարկայ դարձնելով մեր զարմանքն էր շարժել: Այդ իրաւագուրկ երկրում, իրաւագուրկ հայի այդ արտասովոր համարձակութիւնների գաղանիքը գտնելու համար մենք մօտեցանք առաջ առաջ գնացող մէկ հային և հարց տւինք այդ երիտասարդի ով լինելու մասին: Եւ ինչ պարզեց. այդ երիտասարդի մայրը, Սոսկունի գեղեցիկ, բայց այրի հայ կանանցից մէկը Դարբիշ աղայի սիրականն էր. այդ կինը սոսանց կրօնափոխ լինելու ինքնակամ կապւել էր Դարբիշ աղայի հետ. Դարբիշ աղայի հովանին տարածւում էր այդ երի-

առասարգի վրա. անա այդ երիտասարդի համարձակ շարժումները, ազատախօս լեզուի և յանդուգն շարժումները պատճառը, գաղտնիքը:

Արդեօք մենք իրաւունք ունինք իւրաքանչիւր հասարակ մահկանացւից պահանջել անձնագոհութեան հրաշքներ, արդեօք իւրաքանչիւր անհատ ընդունակ է արհամարհելու բնութեան վայելքները, արևի լոյսը, ազատ օդը և լուս տանելու քաղցն: ու զրկանքը. ի հարկէ ոչ և յաճախ, շատ յաճախ այդ նոյն քաղցն ու զրկանքը, անասելի տառապանքները հայ օրիորդին մղում էին դէպի մահմեղականութիւնը, հայ կնոջը նետում քուրդ աղաչի գիրկը:

Ահա իրականութիւնը, անա փաստը, սրտնց դէմ լուում է ամեն ինչ:

Գերեզմանային լուութեան այդ տարիներում հայաբնակ գաւառները մէջ միմիայն մի տեղ հայը ազատ շունչ էր քաշում. զա Սասունն էր, ուր մի բուն ժողովուրդ անմատչելի լեռներին ու ձորերին կպած, մի փոքր ազատ էր զգում իրենք այն սոսկալի կացութիւնից, որի մէջ ապրում էր մնացեալ հայ ժողովուրդը: Բայց տաճիկ կառավարութիւնը խիստ անհանդիստ էր, որ հայաբնակ շրջաններում դեռ ևս ազատ շունչ քաշող հայ կայ. և նա քունը փախցրած, գիշեր ու ցերեկ մտածում էր այդ մի բուն ժողովրդի հետ էլ իր հաշիւը մաքրել:

Եւ անա 1904 թւի գարնան սկիզբներին, երբ Սասունի լեռները դեռ ձիւնով էին ծածկւած, տաճիկ կառավարութիւնը պատրակ բռնելով, որ Սասունում օտար մարդիկ կան և ապստամբութիւն կուզեն բարձրացնել, հաւաքեց Մուշ աւելի քան 10,000 զօրք և համրդիէի հեծելազօրքեր ու արշաւեց Սասունի վրա: Այդ արշաւանքը սարսափ տարածեց ամենքի վրա և ժողովուրդը քաշուեց սարերը. Շէնիկն ու Սէմալը աւերելով զօրքն առաջացաւ դէպի Գէլիէգուզան և Տալօրիկ, չը խնայելով պատահած հային սրի քաշելու. ժողովրդի անագին բազմութիւնը, գլխաւորապէս կանանցից և երեխաներից բաղկացած, որ քաշուել էր Անտօքի և Քէփինի բարձր լանջերը, կնթարկւեց սառնամանիկները ու սովի և ահագին զոհեր տուեց, որից յետոյ ստիպւած եղաւ ցած իջնել և յանձնուել զօրքի քմահաճոյքին: Բազմաթիւ տղամարդիկ այդտեղ սպանուեցին և շատերը բանտ տարւեցին, ուր մի քանիսը տանջանքների տակ մեռան. զբանցից յետոյ կառավարութիւնը Սասունի հինգ

նշանաւոր կենարմներում, այն է՝ Տափըլում, Սէմալում, Գէլիէգուզանում, Տալօրիկում և Իշխնձորում հիմնեց զօրանոցներ, նրա տեղերց այդ տեղերում զօրքեր և ամբողջ շրջանը գրեց զինւորական զրութեան մէջ: Այնուհետեւ էլ ինչ բնութիւններ ասէք, որ տեղի շունեցան առանց այն էլ այդ ազգատ շրջանում. շատերը հալածանքներից ազատելու համար փոխան այլ և այլ գաւառներ և մի քանի գիւղեր բոլորովին աւերակ մնացին. ազատ շունչ քաշելը այստեղ էլ դադարեց, խոր լուութիւնը այստեղ էլ տիրեց: Թէ այստեղ որպիսի բնութիւններ տեղի էին ունեցել, այդ երևում էր այն բանից, որ մեր ճանապարհորդութեան ժամանակ Սասունի մի քանի տեղերում կանայք և երեխաները մեղ տեսնելով ու տաճիկ տեղ ընդունելով, սարսափահար փախչում էին:

Այդ լուս տարիների վերջին շրջանում հանդէս եկաւ տաճիկ կառավարութեան բարբարոսութիւնների մի նոր տեսարան ևս. այդ տեսարանը տեղի ունեցաւ սահմանագրութեան նախօրեակին, հանդիսանալով իրրե բարբարոսութիւնների մի վերջաբան:

1908 թւի մայիսի սկզբներին Գուլիթ անունով վանեցի մի հայ կառավարութեանը յայտնեց, որ Վարազին մօտիկ գտնուող ս. Գրիգորի վանքում գէնքեր կան պահւած. կառավարութիւնը խուզարկելով վանքը, այնտեղից հանեց փամփուշտներ և գէնքեր. այս առիթով Վանի մէջ և Վանի շրջակայ շատ գիւղերում կատարւեցին բազմաթիւ խուզարկութիւններ. Վանում տեղի ունեցաւ զրգում և կոտորած, որի ժամանակ սպանուեցին 20-25 հայեր, իսկ գիւղերում սկուեցին բնատարկութիւններ և տանջանքներ:

Թէ մի քանի շարաթների ընթացքում Վան-Տօսպի, Հայոց Չորի, Արճակի և Արաղայի շատ գիւղերում որպիսի տանջանքներ և տանջանքների որպիսի ձևեր գործ գրւեցին կասկածի տակ գտնուող հայերի վրա, դժւար է նկարագրել:

Մարդկանց ձեծի տակ ուշաթափ էին գարձում, շատերին տանջում էին, թողնելով առանց հացի ու ջրի. շատերին կախում էին զլսի վայր օդի մէջ և այդպէս պահում ժամով. տեղ տեղ մերկացնում էին մարդկանց և երկար ժամանակ սառը ջուր լրցնում վերան. և վերջապէս շատերի մատների եղունգների տակ փայտէ սուր փշեր էին խփում ու տանջում, ստիպելով չեղած բաներ խոստովանել, չեղած բաներ ասել:

Տանջանքների բոլոր տեսակները, որ բարբարոս պաշտօնեա-

ները մտածել էին, սպառնացին, ցաւի ու տանջանքի ոռնոցը երկինք հասաւ, բայց տանջանքը չը դադարեց և գազան մարդիկ հնարեցին տանջանքի մի նոր ձև:

Արագայի գաշաի Սաշան գիւղում Սարայի գայմագամ Թահար փաշայի որդի Ջէվդէդ բէկը առևտրով պարապող վանեցի Պետրոս Փերուճեանին ամեն տեսակի տանջանքներ տալուց յետոյ, հրամայեց բերել երկու կատուներ, նրանց ձգել տւեց Պետրոսի վարտիկի մէջ և ապա փայտերով ծեծեցին կատուներին, որոնք ցաւից կատաղած սկսեցին ծւատել խեղճ մարդու մարմինը. և այդ տանջանքը այնքան շարունակեց, մինչև որ նա մի քանի անգամ ուշաթափ եղաւ. այդ տանջանքից յետոյ Պետրոսն ապրեց միմիայն մի օր:

Ահա այս նոր ձևի տանջանքը գործածութեան մէջ մտաւ, սկսեցին այդ ձևով տանջել նաև կանանց, որից շատերը մահացան. և երբ տաճիկ պաշտօնեայի հնարած բարբարոս նոր գիւտը հրաշքներ էր գործում, տեղի ունեցաւ տաճկական սահմանադրութիւնը և խելակորոյս տանջանքը կանգ առաւ:

1908 թւի յուլիս ամսին Տաճկաստանը յայտարարեց սահմանադրական երկիր. այդ օրւանից տապալոււմ էին հին կարգերը, վերանում էին բռնութիւնները, կեղեքումներն ու հալածանքները. Օսմանեան երկրի բոլոր ժողովուրդներին առանց ազգի և կրօնի խարութեան շնորհւում էր անձի և գոյքի անձեռնմխելիութիւն, խղճի, խօսքի և կրօնի ազատութիւն, գրաւումների և յափշտակութիւնների վերադարձումն և քաղաքական յանցաւորների ներումն: Եւ այս տեղի ունեցաւ այն ժամանակ, երբ հայ ժողովուրդը համբերութեան վերջին ընդունելին էր ապրում, երբ նոր մտածած տանջանքների ձեռքից նա խելակորոյս ճիչեր էր արձակում և այդ տանջանքներից ազատելու համար վերջին ճիգերն էր սպառում:

Այդ հրաշք էր արդեօք, թէ երազ, իրենը հաշիւ տալ տանջւած տաճկահայը չէր կարողանում. տեսնում էր այն, որը մտքով չէր անցել, լսում էր այն, որը երազել չէր կարող, բայց հայի համար անկարելին կարելի դարձաւ:

Տաճկաստանը յայտարարեց սահմանադրական երկիր. մի

րոպէ սուրը դադարեց շողշողալ հայի գլխին, մի րոպէ հայը համարձակութիւն ստացաւ գլուխը դուրս հանել իր բնից, նայեց շուրջը, նայեց բնութեանը և յափշտակեց:

— Միթէ՞ արևը առաջայ պէս կատարում է իր ամենօրեայ շրջանը, տաքացնելով սառած երկիրը. միթէ՞ լուսինն առաջայ պէս գալիս սահում է երկրի վրայից և լուսաւորում խաւարի մտնւած լեռներն ու ձորերը. միթէ՞ դեռ գոյութիւն ունի պճնազարդ գարունը և բնութիւնն ամեն տարի ծաղկում, փթթում է մանուշակներով և օդը լցում թռչունների դայլայլիկներով:

Այս անցաւ մի րոպէ տաճկահայի մտքով, այն տաճկահայի, որի համար վաղուց դադարել էր արևի ծագումը, լուսնի ծնունդը, գարնան փթթումը: Եւ նա յափշտակած չէր կարողանում հաւատալ իր տեսածներին ու լսածներին, հաւատալ, որ այդ բոլորի մէջ ինքն էլ բաժին ունէր:

Տաճկաստանը յայտարարեց սահմանադրական երկիր, մի րոպէ սուրը դադարեց շողշողալ հայի գլխին, մի րոպէ նա դուրս պրծաւ իր բանտից, դէմ առ դէմ հանդիպեց իրեն կեղեքող, կողոպտող, սպանող քրդին, մի րոպէ պատկերացաւ նրան իր խոզխողած հայրը, մայրը, եղբայրը, պատկերացաւ նրան երկար տարիների կրած տառապանքները, պատկերացաւ իր ներկայ մերկութիւնն ու քաղցածութիւնը և առաջին անգամ նա իրենը հարց տւեց, թէ՞ որ իրաւունքով քուրդը այդքան չարիքներ էր պատճառել իրեն:

Մի րոպէ հայը գլուխը վեր բարձրացրեց, իր առաջ ցցած տեսաւ բէկի ապարանք-դղեակը. տասը տարի չէր լինի, որ բէկը զրեց նրա հիմքը բռնի գրաւած հողի վրա:

Ո՞րքան նա մեծացել էր, որքան նոր շինութիւններ աւելացել էին նրա շուրջը, որքան հարստութիւն դիզել էր բէկը այդ կարճ ժամանակամիջոցում և որպիսի փոփոխութիւններ տեղի էին ունեցել. իր տունը քանդակ աւերակ էր, բէկի դղեակը շինուել, ճոխացել. իր ախոռը դատարկել էր, բէկի ախոռը լցուել. իր հօտը սննդացել էր, բէկի հօտը կրկնապատկել, եռապատկել, տասնապատկել էր, իր ոսկիները չքացել էին, բէկի կանանց և աղջիկների ճակատները ոսկիներով զարդարել: Լուսթեան երկար տարիներից յետոյ, առաջին անգամ նա գլուխ էր բարձրացնում, նայում այս բոլորին և տեսնում սոսկալի հակադրութիւնը:

Մի րոպէ սուրը դադարեց շողշողալ հայի գլխին, մի րոպէ

նա ազատութիւն տւեց իր քայլերին, զիմեց զէպի գաշտ և նկատեց, թէ ինչպէս բէկը եկել արեւ էր իր բերրի արտերը, իր գեղեցիկ խոտատեղերը, իր արօտները:

Այս բոլորը կատարուել էր լուսթեան ծանր տարիներում, բայց հարստահարւած հայր չէր նկատել այդ, որովհետև մահառիթ սուրը կախուած էր նրա գլխին և նա տարսափահար ամեն բոպէ սպասում էր, թէ երբ կիջնի սուրը և ամեն բան կը վերջանայ:

Սակայն մի բոպէ սուրը կանգ առաւ, մի բոպէ բացեցին տաճկահայի լեզուի կապանքները, նա խօսել սկսեց, նա մի ձիչ արձակեց և խելագարի պէս վազեց դատարան, ցուցադրելով այնտեղ իր արնաքամ, գզգզւած ու մերկ մարմինը, թափելով այնտեղ կողոպուտների, գրաւումների ցուցակների կոյտերը. սրբան շատ էին նրանք, սրբան երկար էին տառապանքների այդ ցուցակները, արցունքի ու ասնջանքի այդ վկայաթղթերը:

Այդ վկայաթղթերի մասին մի որոշ գաղափար կազմելու համար, զիմենք նրանցից մի քանիսի օդնութեանը: Կը քրքրենք այդ վկայաթղթերի տնօրին կոյտերը, կրնորենք նրանցից շատ չէ, ընդամենը երկու հատ՝ մէկը գոյքերի յափշտակութեան, միւսը հողերի գրաւման մասին:

Նրանցից մէկը վերաբերում է երզրումի վիլայէթի Պերջան գաւառի Սաչ գիւղի գրաւած հողերին. Սաչ գիւղն այժմ ունի 50-55 տուն հայ և մի այգքան էլ քուրդ բնակիչ: Համաձայն այդ ցուցակի <sup>1)</sup> վերջին 36 տարիների ընթացքում քրդերը բռնի գրաւել են 35 հայ ընտանիքներից 25 կտոր տուն, աւելի քան 300 կտոր արտ, նոտատեղ, արօտատեղ, կալատեղ և այլն 3,225 դօնում <sup>2)</sup> տարածութեամբ, որի 1,825 դօնումի գրաւումը տեղի է ունեցել վերջին 10-16 տարիների ընթացքում:

Երկրորդ վկայաթուղթը վերաբերում է Վանի վիլայէթի Ալջաւազի գաւառի 20 հայարնակ գիւղերի կողոպուտներին: Այդ ցուցակն <sup>3)</sup> իր ընդարձակութեամբ և բազմապիսի կողոպուտների

1) Տես վիճակագիր երզրումի վիլայէթի Պերջան գաւառի Սորթնի նահիէի Սաչ գիւղի բռնի գրաւած կալածների, ներկայացրած կուսակալին:

2) Դօնումը հաւասար է մօտաւորապէս սուսական մի նինգերորդ դև:

3) Տես ցուցակ Ալջաւազի 20 հայ գիւղերի բռնի գրաւումներին և խուճների, ներկայացրած Վանի կուսակալին:

քով մի միտք շմեցնող բան է. համաձայն այդ ցուցակի, վերջին 12 տարիների ընթացքում, այսինքն մեծ ջարդերից և կողոպուտներից յետոյ, համիդիէի գլխաւոր Հուսէին փաշան և իր ձեռքի տակի մարդիկ Ալջաւազի 20 հայարնակ գիւղերից բացի հողերը, տները, մեծաքանակ խոտը, ծառերը, սայլերը և հագար ու մի տնայլին իրերը, բռնի աւել են տուրքի ձևով աւելի քան 300 կով, եզ, գումէշ և ձի, 2,700 ոչխար, գառ և ուլ, աւելի քան 5,500 քիւլէ <sup>1)</sup> հացահատիկներ և 2,300 ոսկի դրամ:

Այսքան է մեր բերածները, որքան կը լինին մոռացւածները. այսքան է մի գիւղի, մի գիւղախմբի կողոպուտը, որքան կը լինի ընդհանուր կողոպուտը, այս արդէն երեակայութեան բան է:

Մինչդեռ սահմանադրութիւնից յետոյ հայ ժողովուրդը ուրախութեան մի կտոր ժպիտ դէմքին արևի երես էր դուրս եկել, իր կորուստներն էր ցուցակագրում, իր տառապանքների պատմութիւնն էր շարագրում և գատարանների միջոցով իր իրաւունքներն էր ուզում վերականգնել, կեղեքիչներին, հարստահարողներին բանակում իրարանցում էր ընկել. նրանք էլ չէին հաւատում իրենց լսածին ու տեսածին, նրանք էլ զարմացած կատարածներէց, չը գիտէին երազ համարէին այդ, թէ մի այլ բան: Կեղեքիչ քուրդ բէկերից, սաճիկ էֆէնդիներէց, զապտիէներէց ու պաշտօնեաներից բաղկացած այդ բանակը ծրագրներ էր կազմում, ձիգ էր թափում տապալել սահմանադրութիւնը, որը եկել էր վերջ դնելու նրանց թագաւորութեանը, խաղաղ, մասնաւորապէս հայ ժողովրդին կողոպտելու, նրա քրտինքով սպրկելու արտօնութիւններին:

Կեղեքիչներին այդ բանակը ոչ մի կերպ չէր կարողանում հաշուել այն մտքի հետ, որ հայը կարող է իր հետ հաւասար իրաւունքներ ունենալ, դատարան գիմել, օրէնք ու արդարութիւն պահանջել, իր կալածները յետ ուզել: Սահմանադրութիւնն այդ կեղեքիչ գասակարգի համար կեանքի և մահու խնդիր էր. սահմանադրութիւնով վերջ էր տրւում նրա ձրիակերութեանը, զիւրին սպրկելու միջոցներին. հեշտ չէր մէկէն այդ արտօնութիւններից զրկուելը, հեշտ չէր երեկւայ կծկւած, կուշ եկած հային,

1) Քիւլէն հացահատիկների չափ է, որը տարբեր տեղերում տարբեր ծաւալ ունի. Ալջաւազում քիւլէն 8 փթից աւելի է:



որի սուսերն անգամ նկատելի չէր, տեսնել դատարանի շէմքը բռնած ու կանգնած՝ այո, այդ բոլորը նրա համար կեանքի և մահու խնդիր էր: Նա չուզեց հաշտուել այդ բանի հետ, նա դիմեց միջոցների, դաւադրութիւն ծրագրեց սահմանադրութեան դէմ, բռնութեան նոր ձևեր ներթեւեց հայի դէմ:

Արճէշի գաւառի Իրիշատ գիւղում սահմանադրութիւնից առաջ, հայի սև օրերում քուրդ Մամէյի Փարօն բռնի տիրել էր Հաթամի տունը և հողերը. սահմանադրութիւնը յայտարարելուց յետոյ Հաթամը դիմեց դատարան և յետ պահանջեց իր տունն ու տեղը. դրանից մի փոքր ժամանակ անց, 1909 թւի յունիսի մէջ Հաթամը, իր կիներ և մի երեխան անհետացան գիւղից. շուտով պարզեց, որ նրանց սպանել և դիակները անհետացրել էր հողերը գրաւող Մամէյի Փարօն:

Պատմենք մի այլ դէպք:

Արճէշի Ականց գիւղաքաղաքում հարուստ և ազդեցիկ մարդ է տաճիկ Հաջի Հասան աղան. սա ունի տներ, խանութներ և այգիներ. սա բռնի գրաւել է շատ հայերի հողեր, ի միջի այլոց գրաւել է Հասպըսինակ գիւղի Քօլօղի Միւօյի Հօրկով անունով մի ընդարձակ վարելահող, որը վերցնում է 10 խալար սերմացու. Հաջի Հասան աղան մեծ դեր էր խաղացել նաև 1896 թւի Ականցում տեղի ունեցած հայկական ջարդերի ժամանակ և այժմ յայտնի է իբրև սահմանադրութեան հակառակորդ: Ականցում կար մի յարգւած հայ երիտասարդ. դա Փրօղ Յարութիւնի աղան էր, Տիգրանը, որը երբեմն ընկնում էր բողոքաւոր հայ գիւղացիների առաջ և ցոյց տալիս բողոքելու տեղը. և ահա վերը յիշւած դէպքից մի քանի օր անց Հաջի Հասան աղայի ձեռքով երիտասարդ Տիգրանը դարան մտած մէկի գնդակով սպանւեց:

Այս երկու դէպքերը մի փոքր շրջանում և այն էլ մի կարճ ժամանակամիջոցում, ցոյց են տալիս, որ բռնութիւնները հայերի վերաբերմամբ շարունակուած էին, բայց ոչ առաջւայ ձևով և ակնյայտ կերպով, այլ դարան մտած տեղից և գաղտագողի միջոցներով, սակայն կային տեղեր, առանձնապէս յետ ընկած գաւառներում, ուր ճնշումներն առաջւայ պէս դեռ շարունակուած էին:

Բերենք մի օրինակ:

1909 թւի աշնանը, երբ Վանի կուսակալը հայերի բողոքների հիման վրա մի քանի քուրդ ցեղապետների վերաբերմամբ մի

փոքր խիստ դիւրք բռնեց, Արճէշի և Ալջաւազի բարբարոսներ Հուսէին և Էմին փաշաները առժամանակ փախան Մակու. դրանց հետ Մակու փախաւ նաև Աբաղայի դաշտի բարբարոսը՝ յայտնի Կօփ Մամադ բէկը. ահա այս բէկի հրամանով Սաչան գիւղի հայերը գնում էին Թանդուրէքի լեռների չնգինները և այդտեղից շալակով ցախ էին կրում Մակու՝ Ղարանի գիւղը, ուր ապրում էին յիշեալ բարբարոսները, այդպէս բռնաւորւած կտրելով 40-45 վերստ մի հսկայ տարածութիւն: Տեսէք, թէ ազդեցութիւնը որքան մեծ էր, որ բէկը փախստի տեղից էլ կարողանում էր այդպիսի ծանր, գրատոխն համապատասխան Ֆիդիքական աշխատանք կատարել տալ հային:

Չը նայած այդ բոլորին, տանջանքի նոր ձևերը անհետացել էին և սահմանադրութիւնն իբրև մի լոյս կաթել էր թանձր խաւարի մէջ և ցոլք առաջացրել:

— Այդ մի լոյս էր, պարօն, որ կաթեց երկնքից մեզ վրա, եթէ երկու ամիս էլ սահմանադրութիւն տեղի չունենար, այստեղ այլևս հայ չէր մնայ, բոլորը, բոլորը կը գաղթէին էս երկրից և կը գնային իրենց գլխի ճարը տեսնելու:

Սորը համոզմունքով ասում էր մեզ Վանից երկու ժամ հեռու գտնուող Արտամէդ գիւղում վանեցի Դաւթի մատնութիւնների ժամանակ սոսկալի տանջանքների ենթարկւած մի գիւղացի: Այդ գիւղացին մի յաղթանդամ մարդ էր, բայց կոպացած և հիւանդոտ. այդպէս նա եղել էր մի տարուց ի վեր տանջանքների շնորհիւ, որն անդառնալի կերպով դրօշմել էր նրա կազմւածքի վրա: Սակայն նա մոռացել էր այդ բոլորը. նա ուրախ, անչափ ուրախ էր, որ վերջապէս հնարաւոր էր դարձել տեսնել մի օտարականի հետ, առանց կասկածելու, բանտարկւելու և տանջանքի ենթարկւելու խօսել նրա հետ, ընդունել նրան իր տան մէջ, հիւրասիրել նրան իր յարկի տակ. չէ՞ որ մի տարի առաջ այդ միանգամայն անկարելի և անհնարին մի բան էր:

### ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՆԵՐԿԱՅ ՎԻՃԱԿԸ

Ի՞նչ պատկեր է ներկայացնում Տաճկաստանի ասիական յիշեալ երեք վիլայէթներն հայ ժողովուրդն իր անտեսական գրութիւնով, իր մտաւոր աշխարհով և բարոյական յատկութիւններով. ահա այն խնդիրը, որին նւիրում ենք մի քանի սող կա:

Նախ անտեսական գրութեան մասին:

Տաճկահայ ժողովրդի ներկայ անտեսական գրութիւնը շատերին է հետաքրքրել, նրա անտեսական գրութեան մէջ շատերն են փնտռել մի լուսաւոր կէտ, մի միսթարական երևոյթ, մի բարւօք վիճակ, բայց իզուր: Բարւօք վիճակ այդ ժողովրդի համար վաղուց դադարել է գոյութիւն ունենալ. այն իրաւական պայմանները, որոնք ստեղծել են նրա շուրջը, ոչ միայն զրկել են նրան բարւօք վիճակից, ոչ միայն խլել են նրանից նրա գոյութեան անհրաժեշտ պայմանները, այլև ձեռնամուխ են եղել նրա ոչնչացման, միանգամայն անհնարին դարձնելով նրա գոյութիւնն այդ երկրի մէջ: Այսպիսով անտեսութիւն և անտեսական կեանք այն մտքով, ինչպէս մենք ենք հասկանում, բոլորովին գոյութիւն չունի այդ երկրում. փոքր ի շատէ տանելի ապրուստ նոյնպէս գոյութիւն չունի այդ ժողովրդի համար:

Այսպէս է ընդհանուր պատկերը, ընդհանուր տպաւորութիւնը, որ մարդ ստանում է այդ երկիրը ճանապարհորդելիս. այս էին ասում այն բազմաթիւ փաստերը, որ մենք թւեցինք մինչև այժմ: Սակայն մենք կը բերենք մի քանի թւեր ևս, որոնք աւելի կը հիմնաւորեն մեր ասածները:

Մի երկիր, որպիսին է Տաճկաստանի մեզ հետաքրքրող երեք վիլայէթները, ուր կուլտուրան մուտք չէ գործել, ուր չը կայ կապիտալի և երկրի ընական հարստութիւնների շահագործում, հետևապէս նաև դրամ, ժողովրդի ապրուստի միջոցներ կազմում են կենդանիները, երկրագործական գործիքները և դաշտային բերքերը. հետևապէս այդպիսի երկրի ժողովուրդը այնքան աւելի բա-

րեկեցիկ է, որքան շատ են նրա կենդանիները, երկրագործական գործիքները և դաշտային բերքերը և ընդհակառակն, այնքան աւելի վատ է նրա վիճակը, որքան քիչ են նրա ապրուստի այդ միջոցները: Մենք կարող ենք մի պարզութիւն ևս մտցնել մեր դիտողութիւնների մէջ խնդրի լուսարանութիւնը գիւրացնելու համար:

Իւրաքանչիւր ժողովուրդ, որ ապրում է երկրագործութեամբ և անասնապահութեամբ, նրա անտեսական բարօրութիւնը չափւում է նրա ունեցած աշխատաւոր և կաթնատու կենդանիների քանակով, որովհետև աշխատաւոր կենդանիների քանակից կախւած է երկրագործական գործիքների և մշակող հողերի, հետևապէս ստացւող բերքերի քանակը, իսկ կաթնատու կենդանիների քանակից՝ նրա անտեսութեան միւս մթերքների քանակը: Որպէսզի երկրագործութեամբ և անասնապահութեամբ իր ապրուստի միջոցները հայթհայթող ժողովուրդը շատ թէ քիչ բարեկեցիկ վիճակ ունենայ, իւրաքանչիւր ընտանիքի առնւազը հարկաւոր է ունենալ 3-4 զոյգ լծկան կենդանիներ, մի այդքան կովեր ու մատակներ և մի 3-4 տասնեակ ոչխար ու այծ. գրանից պակաս քանակութիւնն արդէն անբաւարար կը լինի մի ընտանիք ապրեցնելու համար, իսկ աւելի պակաս քանակութիւնը կը գայ ապրուստի բացեր առաջացնելու, որին անխուսափելի կերպով կը հետևի անտեսական քայքայում:

Տաճկաստանի հայ ժողովրդի ապրուստի միջոցներն աննշան բացատրութեամբ կազմում են երկրագործութիւնը և անասնապահութիւնը, հետևապէս նրա անտեսական գրութիւնը չափելու համար մենք կարող ենք դիմել նրա ունեցած աշխատաւոր և կաթնատու կենդանիների քանակին: Այդտեղից էլ մենք կը փորձենք շօշափել խնդիրը:

Թէև մեր ճանապարհորդութեան ընթացքում բազմակողմանի, մանրակրկիտ և լրիւ վիճակագրական տեղեկութիւններ այդ խնդրի շուրջը մեզ չը յաջողւեց ձեռք բերել, վիճակագրական տեղեկութիւններ, որոնց կազմելը ներկայ պայմաններում նոյն իսկ անհնարին է այդ երկրում, բայց այն մի քանի վիճակագրութիւնները, որ մենք ձեռք բերինք տեղում, այդ էլ բաւական է մի որոշ գաղափար կազմելու համար մեզ հետաքրքրող խնդրի նկատմամբ:

Մենք ունինք ձեռքի տակ չորս վիճակագրական ցուցակներ,

կազմած բուն տեղում վատահելի անձնաւորութիւնների ձեռքով, որ և առաջ ենք բերում ստորև:

Իրանցից մէկը վերաբերում է Մօկսին <sup>1)</sup>, որը տափարակներից գուրկ լինոտ մի գաւառ է. այդ ցուցակում բերւած են Տալանից Չորում գտնուող 18 գիւղերն իրենց 256 տուն բնակիչներով. այդ 256 տունը, համաձայն յիշեալ ցուցակի, ունին 201 լծկան, 320 կաթնատու կենդանիներ և 3,450 ոչխար: Այս թւերը բաժանելով ընտանիքների թւի վրա, կը տեսնենք, որ Մօկսում իւրաքանչիւր ընտանիք միջին հաշւով ունի 0,8 լծկան, այսինքն 1-ից պակաս, 1,2 կաթնատու, այսինքն 1-ից աւելի կենդանիներ և 13<sup>1</sup>/<sub>2</sub> ոչխար:

Երկրորդ ցուցակը վերաբերում է Ալշաւազի գաւառի 23 գիւղերին <sup>2)</sup>, որոնք ունին 761 տուն բնակիչ. Ալշաւազն ունի տափարակներ և հացահատիկների համար բաւականին վարելահողեր. այդ գաւառի 23 գիւղերն իրենց 761 տուն բնակիչներով ունին 1,270 լծկան, 688 կաթնատու կենդանիներ և 5,270 ոչխար. այս թւերը բաժանելով ընտանիքների թւի վրա, կը տեսնենք, որ Ալշաւազում իւրաքանչիւր ընտանիք ունի 1,7 լծկան, 0,9 կաթնատու կենդանիներ և 7 ոչխար:

Երրորդ ցուցակը վերաբերում է Մուշի դաշտի 9 գիւղերին <sup>3)</sup>. այդ 9 գիւղերում ապրում են 282 ընտանիք, որոնք ունին 160 լծկան, 700 <sup>4)</sup> կաթնատու կենդանիներ և 620 ոչխար. իւրաքանչիւր ընտանիքի գալիս է 0,6 լծկան, այսինքն կէսից մի փոքր աւելի, 2<sup>1</sup>/<sub>2</sub> կաթնատու կենդանիներ և 2,1 ոչխար:

Չորրորդ ցուցակը վերաբերում է Արճակի գաւառի 4 գիւղերին <sup>5)</sup>. այդ չորս գիւղերում կայ 135 տուն բնակիչ, որոնք ունին 236 լծկան, 453 կաթնատու կենդանիներ, իսկ ոչխար ոչ մի

1) Տես Վիճակագիր Մօկսի Տալանից Չորի 18 գիւղերի անտեսական դրութեան. թէև այս գիւղերի 8-ը քրդաբնակ են, բայց անտեսական դրութիւնը նոյնն է, որով և եղբակացութիւնները մտում են անփոփոխ:

2) Տես Վիճակագիր Ալշաւազի գաւառի հայերի անտեսական դրութեան:

3) Տես Համեմատական ցուցակ Մուշի դաշտի մի քանի գիւղերի անտեսական դրութեան:

4) Ցուցակում բերւած է կաթնատու և ոչ կաթնատու կենդանիները միասին 965, որոնցից միմիայն կովեր մենք վերցնում ենք 700:

5) Տես Տնտեսական կացութիւնը Արճակի գաւառի մի քանի գիւղերում անցեալում և այժմ:

հատ. իւրաքանչիւր ընտանիքին գալիս է 1, 7 լծկան և 3, 3 կաթնատու կենդանիներ:

Միացնելով այս չորս ցուցակներում բերւած թւերը, կը տեսնենք, որ չորս սարրեր գաւառների 54 գիւղերում ապրող 1,434 տուն բնակիչները միասին ունին 1,867 լծկան, 2,161 կաթնատու կենդանիներ և 9,340 ոչխար, որ և իւրաքանչիւր ընտանիքին գալիս է 1,3 լծկան, 1<sup>1</sup>/<sub>2</sub> կաթնատու և 6<sup>1</sup>/<sub>2</sub> ոչխար:

Ուշագրութեամբ կանգ առնելով այս թւերի վրա, ինքն ըստ ինքեան հարց է ծագում. մի երկիր, ուր կապիտալի շահագործում չը կայ, արդիւնաբերութիւն գոյութիւն չունի և որը դեռ ևս գտնուում է բնատնտեսութեան շրջանում, արդեօք այդպիսի երկրում ապրող ժողովուրդն, ունենալով իւրաքանչիւր ընտանիքի գլուխ միջին հաշւով 1,3 լծկան և 1<sup>1</sup>/<sub>2</sub> կաթնատու կենդանիներ և 6<sup>1</sup>/<sub>2</sub> ոչխար, կարո՞ղ է իր անտեսութիւնն ունենալ:

Ով փոքր ի շատէ ծանօթ է գիւղական կեանքին, մանաւանդ այն գիւղական կեանքին, ուր անտեսութիւնը կատարւում է դեռ ևս նահապետական ձևերով, այս հարցի վերաբերեալ նրա մէջ երկու կարծիք լինել չի կարող: Ունենալ ընդամենը 2-3 լծկան և կաթնատու կենդանիներ և 6-7 հատ ոչխար, զբա արդիւնքով վճարել տասանորդ հարկը բերքով, պետական միւս հարկերը զբամով, կատարել հողար ու մի տեսակ ապօրինի պահանջներ այս ու այն բէկի, աղայի կողմից եղած և ապա կերակրել մի ամբողջ ընտանիք, ոչ միայն հնարաւոր չէ, այլև միանգամայն անկարելի է: Եւ իսկապէս, Տաճկաստանում հայ ժողովուրդը ոչ թէ ապրում է, այլ քարշ է տալիս մի թշուա գոյութիւն, ուր չըբաւորութիւնը, քաղցն ու տառապանքն է թագաւորում, ուր մարդիկ ապրում են տանջելու համար. պէտք է տեսնել, պէտք է զգալ, պէտք ապրել այդ կեանքը, գաղափար կազմելու համար, թէ որքան զրկանքներով լի է նա:

Ճանապարհորդելով այդ երկիրը, այցելելով երբեմն լիառատ այդ երկրի գիւղերը, ուղղակի մարդ ապրում է այն չըբաւոր ապրուստի վրա, որ ունի հայ ժողովուրդը:

Այդտեղ հայ գիւղացու մասանում այժմ մի փնտուէք կարասներով պանիր, ամաններով իւղ, տկերով մօթալ, քիլաներով դաւաւորմա և մեծ ու փոքր բղուղներով հազար ու մի բոնւածքներ. մի փնտուէք այդտեղ նոյն իսկ սեր ու կարագ, կաթ ու մածուն.

այժմ հազարավոր են այնպիսի ընտանիքներ, որոնց մօտ կարելի է գտնել ամաններով իւր ու պանիր. անագին մեծամասնութիւնը գուրկ է զբանցից: Այս դեռ ոչինչ, հացը գոնէ առատ լինէր, այդ էլ չը կայ. ոչ թէ ցորենի, ոչ թէ գարու, այլև կորեկի, զլլիի հացն անգամ յաճախ դժարութեամբ է ձեռք բերում անտեսապէս քայքայուած հայ զիւղերում:

Ճիշտ է, մեզ հետաքրքրող վիւայէթների բոլոր գաւառներն իրենց անտեսական զրութիւնով միանման չեն և նրանց մէջ կան այնպիսիները, որոնք ունին համեմատաբար լաւ վիճակ, ինչպէս օրինակ, Էրզրումի դաշար, ուր հարստահարութիւններն այնպիսի չափերի չեն հասել, ինչպէս մեր առաջ բերած չորս գաւառներում, բայց չը պիտի մոռանալ և այն, որ Էրզրումի դաշտը և նրա հետ միասին մի երկու գաւառներ բացառութիւն են կազմում. մինչդեռ կան գաւառներ էլ, որոնք անտեսապէս աւելի էլ յետ են գնացել, քան նոյն իսկ յիշեալ չորս գաւառները: Վերցրէք, օրինակի համար Սասունը, Արճէշը, Նորդուզը և Թօշարը. այս տեղերում ժողովուրդը, շնորհիւ հազար ու մի պայմանների, անտեսապէս աւելի էլ վատ զրութեան մէջ է գտնուում:

Մի կողմ թողնելով այն մի քանի գաւառները, որոնք իրենց անտեսական պայմաններով բացառութիւն են կազմում, մնացեալ գաւառների համար մեր բերած թւերը կարելի է բնագնանուր չափ համարել, որով և բնորոշում է այդ գաւառների հայ ժողովրդի անտեսական քայքայուն վիճակը:

Հայ ժողովրդի այսօրինակ անտեսական քայքայուն վիճակը թափ ստացաւ 1896 թւի ընդհանուր ջարդերի հետ, երբ անագին շրջաններ ենթարկեցին մասսային կողոպուտների. իսկ այդ վիճակը զարգացաւ ու սոսկալի չափերի հասաւ ջարդերին հետեող լուս հարստահարութիւնների տարիներում, երբ կեանքի և գոյքի անապահովութեան շնորհիւ, երկրի մշակութիւնը մեծ չափերով կանգ առաւ: Թէ այս վերջին 15-20 տարիների ընթացքում որպիսի փոփոխութիւններ առաջ եկան հայ ժողովրդի անտեսական զրութեան մէջ, այդ պարզելու համար բերենք մի փոքրիկ համեմատութիւն անցեալի և ներկայի, վերջնելով մի քանի թւեր դարձեալ նոյն վիճակագրական տեղեկութիւններից:

Մուշի դաշտի վերը յիշած 9 զիւղերում այժմ կայ 160 լծկան, 965 կաթնատու և ոչ կաթնատու կենդանիներ և 620 ոչխար, մինչ-

դեռ 20 տարի առաջ, համաձայն այդ ցուցակի, եղել է 844 լծկան, 5,350 կաթնատու և ոչ կաթնատու կենդանիներ և 5,300 ոչխար:

Արճակի գաւառի վերը յիշած 4 զիւղերում այժմ կայ 236 լծկան, 453 կաթնատու կենդանիներ և ոչ մի ոչխար, մինչդեռ 15 տարի առաջ եղել է 1,838 լծկան, 2,340 կաթնատու կենդանիներ և 13,500 ոչխար:

Որքան էլ այս թւերը մենք ենթարկենք կրճատումների, ենթադրելով, որ չափազանցութիւններ նման վիճակագրութիւններում անխուսափելի են, այնուամենայնիւ կը մնայ փաստ այն, որ 15-20 տարի առաջ Տաճկաստանի հայ ժողովրդի անտեսական զրութիւնը 5, 6, նոյն իսկ 7 անգամ աւելի բարւօք էր, քան այժմ:

Մի ժողովուրդ, որն ապրում է սովի ճանկերում, տառապում է իր ստամոքսի կարիքներից, արդեօք կարճ է խօսք լինել այդպիսի ժողովրդի կանոնաւոր բնակարանների, մարդավայել հագուստի և նրա կենցաղի միւս երևոյթների բարօրութեան մասին, ի հարկէ ոչ. և այժմ մերկութիւնը, նիհարութիւնը, գունատութիւնն ու թախճութիւնը, իրեն սովորական պատկերներ, ամեն տեղ ցցում են ձեր առաջ այդ երկրում և ձեզանից կարեկցութիւն աղերսում:

Մտաւորապէս մի աստիճանի վրա է գտնուում հայ ժողովուրդն այդ երկրում. անա այն երկրորդ հարցը, որը կը քննենք երկու կերպ:

Նախ պիտի ասենք, որ հայ ժողովուրդն իր միջավայրում, իրեն շրջապատող տարրերի մէջ մտաւորապէս անհամեմատ բարձր է կանգնած: Մինչդեռ քուրդ ժողովուրդն այժմ էլ գտնուում է նախնական զրութեան մէջ և իր նեղ, ետական շահերից գուրս ոչինչ չի հասկանում. մինչդեռ տաճիկ ժողովուրդը գաւառներում խարխափում է տգիտութեան և անգրագիտութեան մէջ և միմիայն քաղաքներում է, որ ունի մէքթէպէնիւր, ուր ուսումը մեծ մասամբ տարւում է հին խալիֆայական ձևերով. և մինչդեռ մահմեդական տարրերը, արապետող տարր լինելով հանդերձ, միանգամայն անտեղեակ ու անհետաքրքիր են քաղաքական աշխարհում կատարող դէպքերին, հայն իր ծանր պայմանների մէջ այնուամենայնիւ ձիգ է թափում հաղորդակից լինել լուսաւոր աշ-

խարհի հետ, բացում է դպրոցներ քաղաքներում, գիւղաքաղաքներում և կենտրոնական գիւղերում, տարածում է գրագիտութիւն այն չափով, ինչ չափով որ այդ հնարաւոր է, ստանում ու տարածում է թէև փոքր, շատ փոքր չափով զբքեր ու լրագրներ և ամեն կերպ ձգտում է պատուել խաւար միջավայրը, մի քայլ ևս առաջ դնել մտաւորապէս: Բացի այդ, եթէ կայ մի տարր այդ միջավայրում, որը, թէկուզ կեանքի գնով, երբեմն դուրս է նետւում այդ խեղճող միջնորոտից, կատարում է երկար ճանապարհորդութիւններ, տեսնում է նոր լուսաւոր աշխարհներ, փոխ է առնում նոր մտքեր, նոր ձևեր և վերագառնում է հայրենիք նոր տարագով ու նոր հովերով, այդ նոյնպէս հայն է:

Շնորհիւ այս բոլորի, հայը հանդերձ իր իրաւագուրկ դրութիւնով, անազին ազգեցութիւն է թողել մասնեզական տարրերի վրա և այն էլ ոչ միայն գաւառներում, այլև քաղաքներում: Շատ տեղերում քրդերն իրենց նիստ ու կացով աշխատում են նմանւել հայերին. հայերից որոշ օրինակներ վերցնում են նաև քաղաքներում ապրող տաճիկները, մանաւանդ առևտրի և արհեստների մէջ. հայերէն խօսել են ձգտում առանձնապէս պաշտօնեաները. հայերէն անունները պահպանում են նոյնութեամբ. բազմաթիւ գիւղեր, որոնք առաջ հայաբնակ էին, իսկ այժմ որոնցում քրդեր են ապրում, շարունակում են կրել հայ անուններ. երկրագործական պարապմունքներին և գործիքներին վերաբերող շատ տերմիններ քրդերը վերցրել են հայերից և այդպէս էլ գործ են ածում, իսկ հայաբնակ գիւղերում ապրող քրդերը, յաճախ ձեզ պատասխանում են հայերէն, երբ դուք նրանց դիմում էք որևէ հարցով: Հայերի ազգեցութիւնը երևում է մանաւանդ մի բանում. Մուշում և Էրզրումում հայերի կիրակիներին զբօսավայր են գալիս նաև տաճիկները, իսկ մասնաւորապէս Վանում քուրդ հնձուր մշակները հայ մշակների հետ կիրակի օրերը բանթող են լինում, խմբում են Արարոց թաղի հրապարակը և այդտեղ միասին որոշելով գալիք շաբաթւայ օրավարձի չափը, երկուշաբթի միասին գնում են աշխատելու:

Սակայն իր խաւար միջավայրում և մահմեդական տարրերի մէջ մտաւորապէս բարձր կանգնած տաճիկայր շատ ու շատ յետ է մնացել Կովկասի հայութիւնից: Յաճախ մարդ միանգամայն գժւարանում է որևէ համեմատութիւն դնել այդ երկու ժողովուրդ-

ների մէջ, չը նայած որ Կովկասի մի քանի շրջանների հայ ժողովուրդը գաղթել է Տաճկաստանի հայաբնակ գաւառներից: Օրինակ, ինչ համեմատութիւն Հին-Բայազէտի և Նոր-Բայազէտի կամ Ալաշկերտի և Դարաչիչակի ժողովուրդների մէջ, չը նայած որ Դարաչիչակի և ստանձնապէս Նոր-Բայազէտի ժողովուրդի խոշորագոյն մասը գաղթել է Հին-Բայազէտից և Ալաշկերտի գիւղերից 1828 թւի ուսու-տաճկական պատերազմին: Երբ փորձում էք համեմատել այդ նոյն ժողովրդի երկու տարրեր քաղաքական պայմանների տակ գտնուող մասերը իրար հետ, նոր տեսնում էք, թէ տաճիկայր մահմեդական տղէտ տարրերի և վայրագ կարգերի փոխազդեցութիւնների շնորհիւ որքան յետ է մնացել, որքան խաւար է մնացել ուսուսանայից:

Տաճիկահայ ժողովրդի կրթական գործը, նրա հետ միասին նաև մտաւոր աշխարհը շատ անմխիթար դրութեան մէջ է գտնւում. ճիշտ է, մեծ քաղաքներում, ինչպէս, օրինակ, Վանում և Էրզրումում կան օրինաւոր դպրոցներ և թէպէտ շատ ու քիչ տանիլի դպրոցներ կան Մուշում և մի երկու խոշոր վանքերում, բայց գիւղերում գոյութիւն ունեցող սահմանափակ թւով դպրոցները մեծ մասամբ մի-մի տէրթօղիկեան դպրոցներ են, ուր մանուկ սերունդն աւելի ստրկութեան է մարդւում, քան կրթութիւն ստանում: Օրինաւոր դպրոցներ չը կան հրապարակի վրա. Մանասբեան դպրոցի ընթացաւարտները, որոնք, յամենայն դէպս, աւելի պիտանի կը լինէին մատաղ սերնդի համար, դրանց էլ համարեալ էք պատահում Վանի և Մուշի գաւառներում. ուսուցիչների մեծ մասը տղէտ է, թերուս և ձուլւած խալիֆա. վանական դպրոցաւարտներ, ինքնուս դրագէտներ, միսիօներական դպրոցներում սովորածներ և յաճախ նարեկի ու ճաշոցների շկօլայով անցածներ. անա այն շփոթը, որ կազմում է այդ երկրի ուսուցչական դասը: Կարող էք երևակայել, որ գիւղական ուսուցիչները ստանում են ցօրեն, դարի իրրև վարձ և կամ 3-4 արծաթ մէջլիդ ամսական, որ անում է 5-6 մանէթ: Գիւղական դպրոցներից շատերը բոլորովին զուրկ են նստարաններից, աշակերտները նստում են յատակի վրա կամ շատ շատ մի մասը միայն տեղաւորում է երկարուկ դրւած տախտակների վրա, իսկ ուսուցիչը բազմում է մի թախտի վրա: Այսպէս լինելով կարգերը, հասկանալի է, որ նոր ձևի դասագրքեր և կամ միանման դասագրքերի գործածութիւն հազւապէս են այդ դպրոցներում:

Կրթական գործը դաւաններում որոշ չափով կենտրոնացած է վանքերում. վանքերն այդ երկրում դեռ ևս կուրսի մէջ են. տաճկական բռնութիւններէն փոքր ի շատէ ազատ է մնացել այդ միակ հաստատութիւնը, ուր և հնարաւոր է եղել դպրոցի գոյութիւնը և ուսուցչի ներկայութիւնը, բայց թէ ինչ են ներկայացնում իրենցից վանական դպրոցները, այդ Աստուած գիտէ: Ժողովրդից կտրւած, լեռների ու ձորերի մէջ մեկուսացած վանքերը Տաճկաստանում այժմ էլ հանդիսանում են «պահոց և ապաշխարութեան» տեղեր, ուր մարդիկ իրենց տանջում են հանդերձեալ կեանքում յաւիտենական երջանկութիւն գտնելու համար. այդ ոգով մնւած են լինում նաև վանական դպրոցների տիրացու ուսուցիչները, որ առանցի այն էլ տանջւած տաճկահայ մանուկ սերունդն այդ վանքերում ենթարկուած է նոր փորձութիւնների, կրօնական և պահոց նոր մարզանքներէ. պէտք է երեւակայել, թէ որպիսի հրամայողական տօնով և որպիսի կարգադրութիւններով յայտնուած է դասարան մի փոսած, տգէտ վանահայր և թիւադրուած իր մանկավարժական մեթօդները ուսուցչին: Բայց տաճկահայն իրեն երջանիկ կը համարէր, եթէ ամեն անգամ կարողանար իր որդուն տեղաւորել այդ կրօնական մարզարաններում. վանական դպրոցների թիւը շատ սահմանափակ է, սահմանափակ է նաև ընդունուող աշակերտների թիւը, այդ պատճառով շատ քչերին է յաջողում ընդունուել այդ դպրոցներում:

Մի քանի շատ ու քիչ օրինաւոր դպրոցների կողքին մի քանի տասնեակ խալիֆայական և կամ կրօնական մարզարաններու ահա այն «փաբոսը», որտեղից լոյս է տարածուած տաճկահայի խաւար մթնոլորտում:

Սակայն աւելի ծանր է, աւելի հոգեմաշ շօշափել կրորդ խնդիրը, տաճկահայ ժողովրդի բարոյական յատկութիւնները: Մենք ցաւելով պիտի ասենք, որ մի շարք դիտողութիւններից յետոյ եկանք այն եզրակացութեան, որ Տաճկաստանում հայ իրականութեան մէջ ոչ մի երևոյթ այնպիսի այլասեռման չի ենթարկուել, ինչպէս հայ ժողովրդի բարոյական յատկութիւնները: Այդ ժողովուրդը նիւթապէս քայքայել ու մնանկացել է, նա մտաւորապէս յետ է մնացել և տգիտութեան մէջ է խաբխափում, իսկ

քարոյապէս ոչ միայն յետ է մնացել, ոչ միայն քայքայել, այլև այլասեռման է հասել: Մենք միակողմանի դատողներից չենք և չենք զալիս դատապարտելու տաճկահայ ժողովրդին իբրև այդպիսին, ոչ, մենք զալիս ենք դատապարտելու այն կարգերը, որոնք մղիլ են այդ ժողովրդին զէպի բարոյականութեան անդունդը, երկարատև բռնութիւնն ու հալածանքը նրա մէջ ստեղծել են ստրկութիւն և շողոքորդութիւն. շրջապատող աննպաստ պայմանները զէմ կուելու անկարողութիւնն ու անզօրութիւնը ստեպել են նրան զիմել ստախօսութեան և խաբերայութեան միջոցների, շնորհիւ խորթացած ու թշնամացած միջավայրի, նա կորցրել է որևէ վստահութիւն զէպի մարդիկ և դարձել է յոռետես և նոյն իսկ անհաւատ. այդպիսի անվստահութիւնը զէպի ամենքը մի կողմից, արևելեան բարքերը միւս՝ անխուսափելի կերպով անդրադարձել են այդ ժողովրդի ընտանեկան կեանքի վրա և հայ ընտանիքներում մուտք են դրած հարեմական կարգեր:

Տաճկահայը միանգամայն իւրացրել է շողոքորթելու, դուր զալու և ծիծաղաղէմ երևալու արհեստը. նա դարձել է վերին աստիճանի ճկուն, դիւրաթեք. նա գլուխը խոնարհեցնում է այն բոլորի առաջ, որի մէջ փոքր ի շատէ ուժ է զգում. նա մէջքը ծռում է և դապտիէի առաջ, և պաշտօնեայի առաջ, և աղայականութեան առաջ:

Նա ստեղծագործել է խօսակցութեան մի դուրեկան ոճ, հանդերձ վստահութիւն ներշնչող ձևերով. նա խօսակցութեան ժամանակ այնպէս է համոզում ձեզ, այնպիսի տպաւորութիւն է թողնում ձեր վրա, որ դուք երբէք չէք կասկածում նրա ճշմարտախօսութեան վրա, մինչդեռ վստահութիւնը կորցրած զէպի ամենքը, նա և ստախօսում է, և խաբում է:

Տաճկահայի մէջ անվստահութիւնը և արևելեան բարքերը մեծ չափով անդրադառնում են նաև ընտանիքի և առանձնապէս կնոջ վրա. այդ երկրում ոչ միայն ջանիլ, այլև պտուա կանայք խոյս են տալիս աղամարդկանց առաջ դուրս գալ: Վստում երկու շաբաթ մենք ապրեցինք մի հայ ընտանիքում, բայց մեզ ոչ մի կերպ չը յաջողեց համոզել այդ ընտանիքի պտուա մօրը մեզ հետ միասին սեղան նստելու. Մուշում մենք եղանք մի քանի ընտանիքներում, բայց ոչ մի տեղում մենք կանանց երես չը տեսանք. Մուշից 3-4 ժամով հեռու գտնուող Ս. Յովհաննէսի վանքում և ս-

սահեցիցնք երկու երիտասարդ մշեցիների. մէկը զբանցից Մուշի անաջնորդ Սարախանեան եպիսկոպոսի եղբօր որդին էր, որն աւարտած լինելով Գէորգեան ճեմարանը, Մուշի դպրոցներից մէկում տեսչի պաշտօն էր վարում, միւսը Կովկասից նոր վերադարձած մի երիտասարդ մարդ էր, կարծեմ, դարձեալ ուսուցչութեամբ պարապող: Սրանք այցելութեան գալով Ս. Յովհաննէսի վանքը, իրենց հետ բերել էին նաև իրենց երիտասարդ կանանց, որոնք, օտար տեղերից լինելով, իրենց մի փոքր ազատ էին պահում: Երբ մեզ վանքի հիւրասենեակում ընթրիք տէին և մենք այդ երկու պարոնների և նրանց կանանց հետ միասին սեղան նստեցինք, այդ բանը վանքում անազին խօսակցութեան նիւթ դարձաւ և մեզ դիմելով Սարախանեան եպիսկոպոսի եղբօր որդին դառնացած սրտով ասաց.

— Դէ եկէք այսպիսի երկրում ապրէք և կրթութիւն ու կուլտուրա տարածէք:

Մինչև այժմ էլ Մուշի, այդ թշուա քաղաքի եկեղեցիներում կանանց մասը միանգամայն դատուած է տախտակներով և փոքրիկ ծակերի արանքով միայն կարողանում են կանայք նայել պատարալիչ քահանային:

Այս չէ բոլորը. Տաճկաստանում մինչև այժմ էլ հողերականութիւնը անազին դեր է խաղում ժողովրդի մէջ և վանքերը դեռ ևս անազին ազդեցութիւն ունին ժողովրդի վրա: Հասարակական լուրջ խնդիրներում ղեկավարողի դեր ստանձնում է հողերականութիւնը. վանքերը հանդիսանում են այն միակ վայրերը, ուր զիմում է ժողովուրդը տարին մի կամ երկու անգամ, ուր նա շփում է իր նման ուխտի եկած այլ զիւղերի ժողովուրդների հետ, իրենք մի փոքր ազատ է զգում և մի վայրկեան հողեկան միութեան զտնուած: Մինչև այժմ էլ մեկուսացած վանքերի վարդապետները շուտ շուտ իջնում են դաշտ, մտնում են գիւղերը, յայտնում կալատեղերը և առատօրէն հաւաքում վանքի պտղին, այն է՝ գառ, ուլ, իւղ, պանիր, ցորեն, զարի, գլգիլ և այլ մթերքներ: Եւ հալածւած տաճկահայի համար եթէ կայ մի տեղ, որին նա վերաբերում է հաւատով, այդ վանքն է, հանդերձեալ կեանքում նրա համար տեղ պատրաստող այդ հիմնարկութիւնը:

Երբ մենք զիտում էինք այդ բոլորը, ապա մտքով տեղա-

փոխում Կովկաս, ուսանայ ժողովրդի մէջ ու համեմատում այդ երկու ժողովուրդների վիճակը, մեզ պաշարում էր մի թախիժ, մի ծանր մտահոգութիւն. որքան, որքան տաճկահայը յետ էր մնացել ուսանայից, որը, ուսանական կուլտուրայի շնորհիւ, անազին առաջադիմութիւն էր գործել, նիւթական, մտաւոր և բարոյական դիրքեր գրաւել, և մենք խորը համոզմունքով բացականչում էինք.

— Ինչո՞ւ թշուա տաճկահայը վիճակակից չէ եղել ուսանային:

Մակայն տառապանքների, նիւթական, մտաւոր և բարոյական այդ անապատում տեղի էր ունեցել մի միութեարական երեւոյթ. այդ տաճկական սահմանադրութիւնն էր, որը մի փոքր յոյս էր ներշնչել տաճկահայի մէջ և նա, հաւատացած իր ստեղծագործող ուժերին, ճիւղ էր թափում իր քրտինքի գնով վերադարձնելու այն բոլորը, ինչ որ կորցրել էր:

— Տւէք մեզ, պարոն, շատ չէ, հինգ տարի հանգստութիւն և կեանքի ու գոյքի ապահովութիւն և մենք մեր աշխատանքով յետ կը բերենք մեր մալն էլ, մեր կարողութիւնն էլ, մեր հողերն էլ:

Մի խորին համոզմունքով այս ասում էր մեզ Արտամէշ գիւղում մի հայ գիւղացի. մենք հաւատացինք. այդ տոկուն ժողովուրդն ընդունակ է վերածնելու և նիւթապէս, և մտաւորապէս, և բարոյապէս, միայն թէ տային նրան կեանքի և գոյքի ապահովութիւն, միայն թէ զսպէին այդտեղ թագաւորող վայրագութիւնները:

Վիճակագիր Մոսկովի Տալանից-Չորի 18 գիւղերի տնտեսական գրութեան 1)

№	Գ Ի Ի Ղ Ե Ր Ը	Ժողովրդի թիւը				Ունեցած կենդ.		
		Տոն	Արական	Իգական	Բոլորը	Ե գ	Կ ո Վ	Ոչխար
1	Սեպ . . . . .	19	71	52	123	20	28	120
2	Գիւրբիս . . . . .	18	86	68	154	16	23	322
3	Մարականց . . . . .	13	21	32	53	10	18	30
4	Հեր . . . . .	5	21	20	41	6	10	60
5	Վերս 2) . . . . .	14	36	33	69	7	21	280
6	Գոմեր . . . . .	20	52	53	105	15	23	81
7	Հըլլըլի 2) . . . . .	12	39	25	64	12	13	238
8	Սաքըս . . . . .	6	21	18	39	—	—	—
9	Բերդ 2) . . . . .	3	6	8	14	3	4	50
10	Դարենց 2) . . . . .	14	40	37	77	10	22	160
11	Ս. Կարապետի վանք	1	7	4	11	—	—	—
12	Հազլվան . . . . .	11	56	38	94	10	15	300
13	Բրանուա . . . . .	2	8	—	8	3	6	—
14	Ծում 2) . . . . .	20	62	59	121	19	30	500
15	Հառվանց 2) . . . . .	41	109	100	209	21	48	390
16	Հաւսթանց 2) . . . . .	39	121	110	231	27	34	500
17	Վերին-գեղ 2) . . . . .	3	13	16	29	—	—	—
18	Սըպկանց . . . . .	15	44	46	90	22	25	419
		256	813	719	1532	201	320	3450

1) Այս տեղեկութիւնները քաղած են «Ծովակ» թերթից:  
2) Այս գիւղերը քրդաբնակ են:

Վիճակագիր Ալջաւազի գաւառի հայ ժողովրդի տնտեսական գրութեան 1)

№	Գ Ի Ի Ղ Ե Ր Ը	Հայ տոն	Ունեցած կենդանիներ					
			Ե գ	Կ ո Վ	Ոչխար	Ջ Ի	Գոմէշ	Է շ
1	Արծկէ . . . . .	81	30	31	273	—	—	44
2	Առէն . . . . .	102	250	100	550	4	30	40
3	Նորշէն . . . . .	24	20	15	100	2	5	10
4	Էղեձոր . . . . .	18	12	6	120	4	6	—
5	Զիրաքլու . . . . .	36	90	74	320	2	11	—
6	Քաղոխ . . . . .	26	38	60	110	2	—	—
7	Սիփաններ . . . . .	78	27	38	340	4	—	—
8	Փեշնագոմեր . . . . .	18	30	18	100	3	5	5
9	Սոսանց . . . . .	40	130	40	550	2	—	10
10	Ղուզէլ . . . . .	20	24	4	50	—	—	4
11	Անուշ-աղբիւր . . . . .	12	14	3	40	—	—	—
12	Նորշնջուղ . . . . .	37	50	30	600	2	—	10
13	Վիճկացուկ . . . . .	26	50	8	150	4	—	—
14	Բարկաթ . . . . .	12	18	10	120	—	4	9
15	Կոճերեր . . . . .	35	113	45	130	4	24	16
16	Կարաքէշիշ . . . . .	38	20	30	130	7	—	—
17	Արճրա . . . . .	74	190	70	552	6	20	35
18	Առնջկոյս . . . . .	53	100	50	755	6	—	—
19	Ուսու . . . . .	6	2	3	—	—	—	—
20	Գատըքեօյ . . . . .	4	7	8	—	—	—	—
21	Տանձուա . . . . .	8	8	10	70	2	—	—
22	Սորերով . . . . .	3	12	5	50	1	—	—
23	Օրանկաշի . . . . .	10	35	30	160	—	2	—
		761	1270	688	5270	55	107	183

1) Այս տեղեկութիւնները կազմել է պ. Գրիգոր Կեղեանը:



**Համեմատական ցուցակ Մուշի դաշտի մի քանի գիւղերի տնտեսական դրութեան 1)**

№	Գիւղերը	Հայ տուն		Ե զ		Կով և տաւար		Ոչխար		Տուրք ոսկի	
		20 տարի զետեւ	Այժմ	20 տարի զետեւ	Այժմ	20 տարի զետեւ	Այժմ	20 տարի զետեւ	Այժմ	20 տարի զետեւ	Այժմ
		15 տարի զետեւ	Այժմ	15 տարի զետեւ	Այժմ	15 տարի զետեւ	Այժմ	15 տարի զետեւ	Այժմ	15 տարի զետեւ	Այժմ
1	Յարտխօնք	30	22	70	6	200	25	100	—	20	50
2	Փողրկով	60	22	120	20	500	20	500	—	100	90
3	Խորոնք	20	10	80	6	200	100	300	40	15	27
4	Քարձոր	60	10	100	2	500	10	1000	—	50	85
5	Սընձնուտ	20	17	60	14	200	60	300	40	25	38
6	Շէխալան	90	63	120	64	700	250	1500	400	80	170
7	Աւզաղբիւբ	28	21	60	8	350	70	400	70	30	43
8	Ղըզլաղաջ	135	96	150	30	2000	250	—	—	115	180
9	Քիւրդ-մէյդան	72	27	84	10	700	180	1200	70	80	75
		515	282	844	160	5350	965	5300	620	715	758

**Տնտեսական դրութիւնն Արճակի գաւառի մի քանի գիւղերում անցեալում և այժմ 2)**

№	Գիւղերը	Գումէշ		Ե զ		Մատակ		Կ ո Վ		Ոչխար	
		15 տարի զետեւ	Այժմ	15 տարի զետեւ	Այժմ	15 տարի զետեւ	Այժմ	15 տարի զետեւ	Այժմ	15 տարի զետեւ	Այժմ
		15 տարի զետեւ	Այժմ	15 տարի զետեւ	Այժմ	15 տարի զետեւ	Այժմ	15 տարի զետեւ	Այժմ	15 տարի զետեւ	Այժմ
1	Հաղարա	200	15	400	50	300	35	500	150	3000	—
2	Մանդան	68	13	480	42	20	6	520	60	7000	—
3	Բօղաղբեասան	180	4	310	12	220	—	460	37	2100	—
4	Հասպատան	50	10	150	90	60	25	260	140	1400	—
		498	42	1340	194	600	66	1740	387	13500	—

1) Այս տեղեկութիւնը քաղել ենք Մուշի առաջնորդարանի տեղեկագրից։  
 2) Այս տեղեկութիւնները կազմել է պ. Շիրին Յակոբեանը։

## ՔՈՒՐԴ ԲԷԿԵՐԸ ԵՒ ԱՂԱՆԵՐԸ

Տաճկական կարգերը հայկական շրջաններում ստեղծեցին տրամագծօրէն միմեանց հակառակ երկու իրականութիւններ. զրանցից մէկը հետ մենք ծանօթացանք. դրա վառ գոյներէց շացան մեր աչքերը, դրա ժխոր վայնասուններից խլացան մեր ականջները, դրա ճիւղաղային սարսափներից բթացան մեր դգացմունքները. դա հայկական սև իրականութիւնն է իր տառապանքներով։ Այդ սև իրականութեան կողքին նրա հետ միաժամանակ ծնունդ առաւ միւս իրականութիւնը. դա քուրդ բէկական իրականութիւնն էր իր դրեակներով, որը զարգացաւ և իր փառքի գազաթնակէտին հասաւ հայկական սև իրականութեան ուժով, նրա յեղեղով շրջանում։

Ահա այդ իրականութեան հետ է, որ մենք ուզում ենք մի փոքր ծանօթանալ։

Քուրդ բէկերը կամ ցեղապետները, որոնք միևնոյն ժամանակ հանդիսանում էին համիրէի գնդերի ղեկավարներ, որոնք ահաղին հարստութիւններ զիջեցին զլիաւորագէտ հայկական սարսափների ժամանակ, հայ ժողովուրդը հարստահարելու և կեղծելու ձեւերով զրանց կարելի է բաժանել երեք տեսակի։ Առաջին տեսակի բէկերը նրանք են, որոնք կեղծքում, կողոպտում են միմիայն զէնքի ուժով, վայրագութիւններով և ամեն տեսակ բարբարոս ձեւերով և երբ կառավարութիւնը փորձում է շափ դնել նրանց վայրագութիւններին, նրանք ըմբոստանում են և բացարձակ աւազակութեան դիմում. այդպիսիների թւին են պատկանում Շատախը սասպատակող Շաքիր աղան և Միր Մըճէն։

Երկրորդ տեսակի բէկերը նրանք են, որոնք կեղծքում ու կողոպտում են շարունակ, բայց զէնքի դիմում, ջարդեր կազմակերպում և զիւղեր աւերում են այն ժամանակ, երբ բարձրից թելադրութիւն կայ, երբ կառավարութիւնը այդ է պահանջում. սրանք հանդիսանում են կառավարութեան կամակատարները. այսպիսիների թւին պատկանում են Ալջաւազը և Արճէշը աւերող Հուսէին և Էմին փաշաները։

Երբորդ տեսակի բէկերը նրանք են, որոնք զէնքի չեն զիմում, շարդեր չեն կազմակերպում և յաճախ պաշտպանում են իրենց ազդեցութեան սահմաններում գտնուող հայերին արշաւող քրդերից և հային կեղեքում ու կողոպտում են խաղաղ ճանապարհով, որի համար էլ դրանք հայերի կողմից համարւում են բարերարներ. այդպիսիների թւին պատկանում են Մօկսի Մուրթուլա բէկը, Դիադինի Մամազ բէկը և Սոսկունի Գարելշ աղան: Ծանօթանանք սրանց հետ մի փոքր մօտիկից:

### ՇԱՔԻՐ ԱՂԱ ԵՒ ՄԻՐ ՄԸՆԷ

Շատախում ապրում են չորս քրդական աշխրթներ. դրանք են՝ Սալիլանցիները, Սաւշտանցիները, Եզդինանցիները և Գրաւցիները: Սրանք թէև փոքրիկ ցեղեր են, բայց առիթը եկած դէպքում իրենց վայրագութիւններով յետ չեն մնում միւս վայրագ քուրդ ցեղերից: Այս չորս ցեղերի մէջ իր վայրագութիւններով առանձնապէս աչքի է ընկնում Գրաւցիների ցեղը. ահա այս ցեղի ցեղապետն է Շաքիր աղան:

Շաքիր աղան հարկատու է դարձրել Նորդուզի 10-15 հայ և քուրդ գիւղերը և ամեն տարի վերցնում է նրանցից որոշ չափով հացահատիկներ ու մշակներ և նրանց պահ տալիս իր ոչխարի հօտերը: Շարունակ հարստահարել է Շատախի և Նորդուզի ժողովուրդներին իր ապօրինի պահանջներով և բռնի գրաւումներով: 1896 թւի կոտորածների ժամանակ հրապարակ եկաւ մի շարք բարրարոտութիւններով ու սպանութիւններով, կողոպտեց միանգամայն Շատախի և Նորդուզի հայ գիւղերը, յափշտակեց նրանց նախիրներն ու հօտերը և ստիպեց ժողովրդին գաղթելու Վան, որով բոլորովին տէր էր դառնալու հայերին պատկանող հողերին և կալւածներին: Այսպիսով Շաքիր աղան դարձաւ ահագին հարստութեան տէր և ձեռք բերեց մեծ ազդեցութիւն:

Սահմանագրութիւնից յետոյ հայերի բողոքների հիման վրա կառավարութիւնը կանչեց նրան Վան և բանտարկեց, իսկ ազգական և գործակից վայրագ Միր Մընէն պատասխանատուութիւնից խուսափելու համար, իր խուլամիտներից կազմեց մի աւազակախումբ և լեռները դուրս գալով, մինչև այժմ էլ ասպատակում է Շատախն

ու Նորդուզը. կողոպտում և սպանում է ճանապարհորդներին և յաճախ պաշարում է գիւղերը և մեծ փրկանք առնելուց յետոյ վերցնում պաշարումը: Կառավարութեան դուրս բերած խմբերը Միր Մընէի զէմ կամ անընդունակ էին լինում այդ աւազակին ձեռք ձգելու և կամ կաշառք առնելով քաղաք էին վերադառնում:

1909 թւի ամբան, մեր ճանապարհորդութեան ժամանակ, Շատախի գայմագամ նշանակեց Պօլսից ուղարկւած մէկ հայ Նիկողոս Էֆէնդի Աղասեանը. հայ գայմագամը ոչ մի կերպ չէր կարողանում հաշտել այն մտքի հետ, որ իր գաւառում մի քուրդ աւազակ անպատիժ կերպով պիտի շարունակի գաւառը սարսափի մէջ պահել. այդ պատճառով նա դնաց Վան և վալուց պահանջեց կամ միջոցներ ձեռք առնել աւազակին ձերբակալելու համար և կամ ընդունել իր հրաժարականը. վալին, ի հարկէ, նրա հրաժարականը չընդունեց և հրաման տւեց խիստ կերպով հետեւ աւազակին. դուրս եկան զինւորական և զապտիական խմբեր, բայց դարձեալ ապարդին. հայ գայմագամը մնացել էր շարած, վստահել կաշառակեր պաշտօնականներին և զապտիկներին չէր կարողանում, իսկ ինքը միայնակ ոչինչ անել չէր կարող. խեղճ մարդը, միանգամայն երկրին անձանօթ, չը գիտէր ինչ գիւղեր են իրենը ենթակայ և որտեղ են նրանք գտնուում. ոչ կանոնաւոր զբասենակ զոյւթիւն ունէր և ոչ էլ կանոնաւոր տեղեկագրներ ու քարտէզներ, որոնց օգնութեանը դիմէր նա. խեղճ մարդը ընկել էր մի ծիծաղելի դրութեան մէջ: Տեղեկանալով, որ տեղացի մի խումբ երիտասարդներ հրատարակում են «ժայթ» անունով մի փոքրիկ խմորատիպ թերթ և ունին կազմած գաւառի քարտէզը, դիմել էր նրանց և խնդրել այդ քարտէզը, իր խնամքին յանձնուած գաւառի հետ ճանօթանալու համար, մինչդեռ գաւառի իսկական տէր հանդիսանում էր աւազակ Միր Մընէն, որն անպատիժ կերպով շարունակում էր իր ասպատակութիւնները և իր վայրագութիւնները:

### ՀՈՒՍԷՒՆ ՓԱՇԱ

Հուլէին փաշան 60 տարեկանի մօտ մի մարդ է, մի աչքը կոյր, որի պատճառով յաճախ նրան անւանում են քօռ Հուսէին փաշա. սա Հայդարանցիներ կոչուող մեծ քրդական ցեղի ցեղա-

պիտան է. թէև սրա հայրը կոչուում էր Թամր աղա և առաջ էր եկել Մալա-Շառո կոչուող Շաղոյի տանից, բայց նա հարուստ մարդ չէր և նրա որդին, այժմեան Հուսէին փաշան 1877 թւի ուսումնական պատերազմից առաջ Արձէշի Արձօնից վաւերում գտնարած էր: 1890 թւից յետոյ, երբ կազմակերպւեցին համիրիէական գրնդերը, նախկին գառնարած քօռ Հուսէինը նշանակւեց համիրիէի գայմազամ, իսկ երեք տարուց յետոյ նշանակւեց փաշա:

Տեղակիան ու սխտեմատիկ կողոպուտները մի կողմից, 1896 թւի մասապին ջարդերը միւս՝ եկան հարստացնելու Հուսէին փաշային և դարձնելու նրան իսկական փաշա: Նրա ձեռքով կողոպուտեց և աւերեց ամբողջ Ալջաւազը, բարբարոս կերպով սպանւեցին բազմաթիւ հայեր, տուեանդեցին ու բռնարարեցին հայ կանայք և օրիորդներ, հրդեհեցին գիւղեր և տներ և Հուսէին փաշային իբրև կողոպուտ անցան անազին հողեր, բազմաթիւ տաւար ու ոչխար, անազին քանակութեամբ տան իրեր, ոսկեղէն ու արծաթեղէն զարդարանքներ և հորերով ցորեն ու գարի: Նա շարունակեց կողոպտել հայերին նաև ջարդերից յետոյ, այսինքն գերեզմանային լուծիան շրջանում, այդ կողոպուտների ցուցակը<sup>1)</sup>, որ Ալջաւազի հայերը սահմանադրութիւնից յետոյ ներկայացրին կառավարութեանը, որի պատճառով կառավարութիւնը նրան բերեց Վան և գրեց քանա, որտեղից իր դիպլոմատիական ընդունակութիւնների շնորհիւ նա շուտով ազատեց, իր ընդարձակութեամբ միայն շրջանող մի փաստաթուղթ է, փաստաթուղթ բիւրաւոր առաւապանքների և կողոպուտների: Այսպիսով Հուսէին փաշան հարստացաւ ու հարստացաւ, ճիմեց մի դղեակ, ազա ճիմնեց երկրորդը և երրորդը, դարձաւ ամենագօրը Ալջաւազի և Պատնոսի շրջաններում և սկսեց թելադրել երկրին իր կամքը և իր օրէնքները:

Այժմ Հուսէին փաշան ունի մեծ հարստութիւն, մեծ քանակութեամբ ձիեր, տաւարներ, ոչխարներ և անազին տարածութիւն հողեր ու կարւածներ:

Ունի 3 կին և մի քանի դղեակներ. մէկ դղեակ ունի Պաղնոսում, ուր պահում է իր կանանցից մէկին, մէկ դղեակ շինել է

1) Տես ցուցակ Ալջաւազի 20 հայ գիւղերի բռնի զբաւումների և խլումների:

Ալջաւազի Բաղօսի դիւղում, այդտեղ ապրում է երկրորդ կինը: մէկ դղեակ ունի Կաղաներ քուրդ գիւղում, ուր ապրում է երրորդ կինը, մէկ աուն ունի նաև Ալջաւազի կենտրոնավայր Արձիէ աւանում, մէկ ամառանոց էլ շինել էր Ալջաւազի Կոճերեր հայ գիւղում, սակայն որը սահմանադրութիւնից յետոյ հայերը քանդեցին: Բացի այս, հեռատես և դիպլոմատ փաշան իր ազդեցութիւնը ուժի մէջ պահելու համար իր աղաներին նստեցնում է Պաղնոսի դանազան գիւղերում:

Թէ Հուսէին փաշան կողոպուտներով որպիսի հարստութիւն ունէր գիւղած և որպիսի խորամանկ ու դիպլոմատ ձեւերով կարողանում էր պատասխանատուութիւնից ազատ մնալ, պատմենք նրա կեանքից մի դէպք:

Մտադրւած լինելով որևէ կերպ կապ հաստատել Երզնկայում բնակւող չորրորդ գօրաբանակի հրամանատար Աէքիի փաշայի հետ, գիմում է մի խորամանկ միջոցի: Մէկ օր յայտարարում է, որ Մուհամէդը երազ գալով իրենը Աէքիի փաշայի կնոջ հետ քոյր ու եղբայր դարձրեց. մարդաբէի այդ կամքը կատարելու պատրւակով վերցնում է հետք իրեն ընծայ 50 բէշերիլիկ, այսինքն 5 լիրանոց, որ կազմում է աւելի քան 2,000 բուրլի մի դումար և ճանապարհ է ընկնում դէպի Երզնկայ, հասնելով տեղ, ներկայանում է Աէքիի փաշային և նրա կնոջը, պատմում է իր տեսած երազը, ներկայացնում է իր փոքրիկ ընծան և մտերմական կապեր հաստատելով, տուն վերադառնում. խորամանկ ձևով տրւած այդ կլորիկ կաշառքից յետոյ, յայտնի բան է, Աէքիի փաշան դարձաւ Հուսէին փաշայի մտերիմ բարեկամը և նրա ջերմ պաշտպանը:

## ԷՄԻՆ ՓԱՇԱՆ ԵՒ ՆՐԱ ՅԵՂԱԿԻՑՆԵՐԸ

Հուսէին փաշայի հօրեղբօր, Հասան աղայի որդին է Էմին փաշան, 55 տարեկանի մօտ մի մարդ: Համիրիէական գնդերը կազմակերպւելիս Հուսէին փաշայի շնորհիւ սա նշանակւեց համիրիէի բինրաշի, իսկ 1894 թւին նշանակւեց փաշա: Սահմանադրութիւնից առաջ նա վարում էր Ականցի գայմազամի պաշտօնը: Էմին փաշան թէև չունէր Հուսէին փաշայի պօլիտիկայու-

թիւնը, բայց իր գործած գազանութիւններով միանգամայն գերազանցեց նրան: Արճէշի գաւառը, որ գտնուում էր սրա ազդեցութեան սահմաններում, 1896 թւի ջարդերի ժամանակ շնորհիւ նրա, տեսաւ բարբարոսութիւնների ամենաստուկալի տեսակները: Էմին փաշայի կարգադրութեամբ կողոպուեցին Արճէշի բոլոր գիւղերը, միանգամայն աւերեցին Բանոնը, Գանձակը, Աղսրաֆը, Ծայծակը, Ջուզգեհանը, Յարութիւնը, Խաչերովը և Արմիզոնը:

Կոտորածի ժամանակ պաշտպանութիւն գտնելու յոյսով, Գանձակ գիւղը թափեցին եկան Ծայծակի, Արմիզոնի և Կենափոր վանքի ժողովուրդները, բայց նրանք այդտեղ ենթարկեցին ամենաստուկալի բարբարոսութիւնների. մարդկանց ու կանանց շարքով կանգնեցնում էին և նշան առնելով, նրանց մէկ մէկ գնդակահարում. ապա գնդակներին խնայելով, սկսեցին կոտորել նրանց սրերով և բուժ գործիքներով. փոքրիկ երեխաներին ստանդից բռնելով և օդի մէջ ճօճելով ձեւում էին պատերին և սպանում. կանանց և օրիորդներին բռնաբարում էին արեւի տակ ծնողներին և ամուսինների ներկայութեամբ. իսկ այս բոլորից յետոյ կենդանի մնացած մի քանի պառաւ կանանց և մանր երեխաների ձգեցին Քօլօզի Վրդօյի ցորենի հորը, նրանց վրա լցրեցին քար ու հող և կենդանի նրանց թաղեցին այդ հորի մէջ, որտեղից, պատմում են, երեք օր շարունակ լաւում էին սիրտ կտրատող ունոցներ և հոգեարքի նւոցներ:

Այդ բարբարոսութիւնների զլխաւոր հերոսը, տխրահոշակ էմին փաշան, երբ կենդանի մնացած ժողովուրդը փախաւ Կովկաս և այլ տեղեր, սեփականեց անտէր մնացած հողերը, նախիրներն ու հօտերը և անագին հարստութիւն ու զարգարանքներ, որից յետոյ նա դարձաւ անագին հարստութեան տէր, շինեց մի քանի դղեակներ, բերեց մի քանի կիւն և իր ցանցերը փոեց ամեն տեղ:

Այժմ էմին փաշան ունի անագին հարստութիւն, մեծ քանակութեամբ տաւարներ ու ոչխարներ և լայնատարած հողեր ու կաւաճաններ: Ունի 5 կիւն և այդ թւից աւելի դղեակներ:

Մէկ զղեակ ունի Գանձակ գիւղում, ուր ապրում է առաջին կիւնը իր տղայով:

Մէկ զղեակ ունի Արմիզոն գիւղում, ուր ապրում է երկրորդ կիւնը իր տղայով:

Մէկ զղեակ ունի Բանոն գիւղում, շինւած վանքի քարերով եկեղեցու զիմաց, ուր ապրում է ինքն իր երկու կանանցով:

Մէկ տուն և մի քանի խանութներ ունի Ականց գիւղաքաղաքում, ուր ապրում է Վանից բերած հինգերորդ կիւնը. սա Վանում յայտնի թամուր օղու տանից է:

Մէկ տուն էլ ունէր շինած Աղսրաֆ հայ գիւղում, սակայն, որը սահմանադրութիւնից յետոյ հայերը քանդեցին:

Էմին փաշան ունի երկու եղբայր. զբանցից մէկը Ալի բէկն է, համիդիէի դայմագամ, որը կոտորածների ժամանակ իր գործած վայրագութիւններով յետ չը մնաց իր եղբորից. երկրորդը Ատօն է, որը 1896 թւի կոտորածներին Արճէշում, այսինքն այն շրջանում, ուր բարբարոսութիւններ էին գործում նրա երկու եղբայրները, նշանակւած էր կոխսարդար, այսինքն հայերին պաշտպանող և խաղարար գնդի պետ: Սա առաջ ապրում էր Դաղալու գիւղում. կոտորածից յետոյ եկաւ հաստատեց Ծայծակ գիւղում սեփականելով հայերի գիւղերը:

Էմին փաշայի մօտիկ ազգականն է Կասրմ աղան, որը կոտորածների ժամանակ անձամբ սպանեց գանձակեցի Ասլօյին 50 տարեկան, Ասլօյի եղբայր Մանուկին 45 տարեկան, Ասլօյի որդի Սարգսին 25 տարեկան և մանուկի տղայ Սահակին 22 տարեկան:

Էմին փաշայի մօտիկ ազգականն է նոյնպէս Սալիմ բէկի թոռ, Աւդալ աղայի տղա Մամազ աղան, որը նստում էր Հաջի գիւղում. սա մեծ մասնակցութիւն ունեցաւ Աղսրաֆի, Բանոնի, Արմիզոնի և Մոյի կոտորածների մէջ: Մոյի մէջ ամեն բան վերջացնելուց յետոյ, սա գիմում է Մոյի սարը, ուր փախած են լինում մի քանի մոյեցի երիտասարդներ, որոնց թւում նաև տէրտէրի տղա Աւետիսը կափաղու հրացանով զինւած. երբ Մամազ աղան մօտենում է այդ երիտասարդներին, զբանց հետ էլ հաշիւը վերջացնելու համար, Աւետիսն ուղղում է իր կափաղուն և տեղն ու տեղը սպանում է այդ բարբարոսին: Այդ սպանութիւնից յետոյ Աւետիսը փախչում է Մաճառս գիւղն Ազամցիների ցեղապետ Ռաշիդ աղայի մօտ, որը թշնամի էր սպանուող Մամազ աղայի ցեղի հետ և նրա աջակցութեամբ գիշերով փախչում է Կովկասու Անա այս Աւետիսը դարձաւ մեր շնորհալի վիպասան Ա. Ահարոնեանի «Ռաշիդ» վէպի հերոսը:

Մամազ աղայի հօրեղբոր, Նադր աղայի որդին է Ալի բէկը. սա համարւում էր Գանձակ գիւղի Առաքել աղայի բարեկամը: Առաքել աղան կոտորածների ժամանակ իր այդ բարեկամին տեց

իր ոսկիները և խնդրեց նրանից պաշտպանութիւն, բայց նա ոչ միայն ոսկիները իւրացրեց, այլև սպանեց Առաքել աղայի երկու եղբայրներին և առևանգեց նրանց աղջիկներին:

Էմին փառայի ազգականն է նոյնպէս Արաղայի Մամադ բէկը, որը ձեռքի մատները կտրած լինելու պատճառով կոչուում է Կօփ. սա ունի Արաղայի դաշտում բազմաթիւ գիւղեր <sup>1)</sup>: սա կազմակերպեց Չարդեր Թիմարի և Արճակի մի քանի գիւղերում. սա կողոպտեց ու տարաւ հայերի պատկանող անագին քանակութեամբ գոյքը և հարստութիւնը:

### ՄՈՒՐԹՈՒԼԱ ԲԷԿ

Մօկսի Աւզալ բէկի ազան է Մուրթուլա բէկը. սրա հակապատկերն է իր եղբայր Նուրի բէկը, որն ամեն կերպ ճնշում և հարստանարում էր հայերին և որի պատճառով թշնամութիւն էր առաջացել երկու հարագատ եղբայրների մէջ: Ծնորճիւ Մուրթուլա բէկի, Մօկսը հայկական Չարդերի ժամանակ ազատ մնաց մատաչին կոտորածներից և կողոպուտներից, թէև մասնակի կողոպուտներ պնտումինայիս տեղի էին ունենում այստեղ: Պատմում են, որ Մուրթուլա բէկը Վանի մեծ կոտորածի նախօրեակին Վանում էր գտնուում. տեսնելով, որ կոտորած է պատրաստուում քաղաքում, որը տարածելու է նաև գաւառների մէջ, անմիջապէս նստում է ձին և առանց մի բողէ անգամ կանգ առնելու, քշում է մինչև Մօկս, անցնելով լեռնոտ և քարքարոտ անհաղին ճանապարհները մէկ գիշերայ մէջ, որև ժամ առաջ հասնելով տեղ, միջոցներ է ձեռք առնում, որով և ազատ է մնում Մօկսը մատաչին կոտորածներից ու կողոպուտներից:

Այսպիսով մի Մուրթուլա բէկ, որը Մօկսում կալւածատէր է, մէկն այն սովորական բէկերից, որոնք իրենց կալւածների շնորճիւ, ճնշում և կեղեքում են երկրագործ աշխատաւոր ժողովրդին, հայերի կոչմից արժանացել է բարերար անւան, շնորճիւ նրա, որ թոյլ չի աւել հայերին կոտորելու և կողոպտելու: Այս, բարերար կոչւելու արժանի է Մուրթուլա բէկը, որովհետև Տաճկաստանում

1) Տես ցուցակ Բերկրի—Արաղայի գիւղերի և գիւղերը տիրապետող քուրդ աղաների:

տանում միմիայն սովորական կալւածատիրական կեղեքումներով բաւականանալն էլ հաւազդիւտ բացառութիւն է համարել և այդպիսի բացառութիւն կազմում է Մօկսի Մուրթուլա բէկը:

Մօկսում Մուրթուլա բէկի եղբայր Նուրի բէկից բացի կայ և մի այլ կեղեքիչ. դա 1877 թւի ուսուտաճկական պատերազմի ժամանակ իր գործած բարբարոսութիւններով հռչակ ստացած շէյխ Զալալէդդինի յաջորդներից մէկը՝ շէյխ Մադդն է, որն անագին ազդեցութիւն ունի քրդերի վրա և որի հայրը, շէյխ Փանըմը ոչ պակաս բարբարոս անուն է թողել այդ կողմերում, քան իր նախորդ շէյխ Զալալէդդինը:

### ՄԱՄԱԴ ԲԷԿ

Մամադ բէկը Հայգարանցիների ստորարածան Շամսկցիների ցեղապետն է, Օմար աղայի ազան, 50-55 տարեկան, միջակ հասակի, սև ու սպաւորիչ արեւելցու դէմքով, փորձառու և թափանցող աչքերով մի մարդ: Մենք բախա ենք ունեցել մի դիշեր սրա հիւրը լինելու Ալաղաղի հրաշալի լեռներում, ուր Մամադ բէկը չուում է ամառներն իր էլիւթով և այնտեղ խոխում իր սպիտակ մեծ ու շքեղ վրանը, իբրև գատարան և հիւրանոց և ընդարձակ մազեայ սև վրանը, իբրև մթերանոց և կանանոց: Լսել ենք անձամբ նրա կարծիքները սահմանադրութեան բարիքների մասին, կարծիքներ, որոնք չէին կարող նրա ներքին համոզմունքներից բխել: Մամադ բէկը իր գիպլօմատ և զգուշաւոր խօսակցութիւններով, որով ուզում էր մեզ վրա լուսամիտ և մարդասէր մարդու ապաւորութիւն թողնել, բոլորովին չի նամանում այդ երկրին յատուկ վայրագ քուրդ ցեղապետներին: Կեանքի մեծ մասը լեռնեքում անցկացրած, այդ ցեղապետի ուղեղը բաւականին մարդւած է մարդկանց մի հայեացքով չափելու և ըստ այնմ իր կարծիքները յայտնելու, թէև իր նիստ ու կացով և տասը մարդուն միևնոյն ամանի փլաւով կերակրելու մէջ նա մնացել է միևնոյն լեռնցին:

Մամադ բէկը, որը համիդիէի գայմազամ է և սպաւորիչ առանձնապէս իր ուստպանակներով ու փայլուն կոճակներով, որին ենթարկուում են աւելի քան 40-50 քուրդ գիւղեր և որի ազդեցու-

թեան սահմաններում գտնուում են Ուշքիլիսէի շրջանի հայաբնակ 5-6 գիւղերը, հայերի կողմից համարուում է բարերար: Նա գաղա- նութիւնների չի դիմել, բռնի կողոպուտներ չի գործել և շնորհիւ նրա, այդ շրջանի հայերը որոշ չափով ազատ են եղել քրդական վայրագութիւններից:

Սակայն բէկն իր բարերարութեան փոխարէն ստանում էր առատ վարձատրութիւն և նոյն իսկ յաւելեալ վարձատրութիւն: Նախքան սահմանադրութիւնը, հայերն առանց վարձատրութեան վարում, ցանում էին բէկի հողերը, հնձում և կախում էին հասած արտերը, կատարում էին բէկի շատ աշխատանքները և ձմեռները վերցնում ու իրենց խոտով կերակրում էին բէկի ոչխարները, կովերն ու եզները: Բացի այս, շուտ շուտ բէկին պիտի ըն- ծաներ ուղարկւէին գառ, ոչխար, յաճախ նոյն իսկ եղ ու կով: հայերի մօտ գտնուած լաւ ձիերը նոյնպէս բէկին պիտի գնային: Մեզ թւեցին Ջուջան, Կարաբաղար և Սէյդօ գիւղերից մի քանի անուաններ, որոնց ձիերը բէկը ուզել էր և սեփականացրել:

Աւելի վատ պայմանների մէջ գտնուում են նրա մարաբա- ները, այսինքն այն հայերն ու քրդերը, որոնք ապրում են բէկի հողի վրա և մշակում այդ հողերը. բացի այն, որ բերքի կէսը կամ երկու երրորդը, նայած պայմանին, տալիս են բէկին, նրանք անվերջ աշխատում են բէկի համար, ընծաներ են տանում ամեն անգամ, երբ բէկի տանն ուրախութեան կամ սգի հանդէս է տե- ղի ունենում. մի խօսքով բէկի եկամուտները անվերջ էին ու անսպառ:

Այդպիսով Մամադ բէկը, որը 10-15 տարի առաջ մի սոսկ բէկ էր, այժմ ունի ահագին հարստութիւն:

Նա ունի երեք սեփական գիւղ. զրանք են՝ Միրզաջանը, Սէյդօն և Գոււկը:

Միրզաջանում շինւած է նրա երկյարկանի սպիտակ դղեակը. այդտեղ նա ապրում է և զատեր կտրում. այդտեղ գտն- ւում է նրա կնոջ, Սահրնազ խանումի գերեզմանը, որի վրա բէկը քաշել է աւել մարմարեայ գերեզմանաքար, ծախսելով մօտ 50 ոսկի դրամ:

Սէյդօյում շինուած է այժմ երկրորդ դղեակը, ուր նստեցնելու է իր մեծ տղային, Համզա բէկին: Այս գիւղի կէսը պատկանում է բայազէտցի Սարգիս աղային:

Բէկն ունի 2,000 ոչխար, 70-80 հատ եզ, կով, գոմէշ. 20ի- չափ ձիեր. մօտ 10,000 ոսկի կանխիկ դրամ, որը տալիս է ժողո- վրդին տոկոսով: Երբ նա սար է բարձրանում 70 ուղտի բեռ իրեր է վերցնում հետը: Համեմատելով թշուառ միջավայրի հետ, սա մի փոքրիկ կրեսոս է:

Մամադ բէկի եղբայրն է համիդիէի իւզբաշի Սայիդ աղան, որը համիդիէի գնդերը կազմակերպելուց յետոյ, միւնսոյն միջոց- ներով դիզել է ահագին կարողութիւն: Դրա հարստութիւնը հաշ- ւում են 2,000-ի չափ ոչխար, 50-ի չափ ձի, 150-ի չափ եզ, կով, գոմէշ և 4,000-ի չափ ոսկի, որը նա աշնանը բաժանում է ժողո- վրդին, իսկ գարնանը կէս, նոյն իսկ քառորդ գնով անում գառ ու ոչխար և վաճառում թանկ պնով:

## ԴԱՐԻՒՇ ԱՂԱ

Դարւիշ աղան Աղամցիների ցեղապետ Ռաշիդ աղայի ազ- գականն է. սա 20 տարի առաջ ապրում էր Զիլանաձորում և պարագում էր աւազակութեամբ:

Այժմ նա Արճէշի Սոսկուն գիւղի աղան է. այդտեղ ապրում է իր ընտանիքով, այդտեղ ունի տուն, հողեր, ոչխար, տաւար և այլն. Արճւաբեր վանքի գիւղում շինած ունի մի մեծ տուն. բացի այդ, իր տղաներին նստեցրել է այլ և այլ գիւղեր, սկիզբ դնելով նոր աղայութիւնների:

1896 թւի Չարդերի ժամանակ Դարւիշ աղան պաշտպանեց Սոսկունը կոտորածից, այդ պատճառով նա դարձաւ սոսկունցի- ների բարերարը: Այժմ տեսնենք ինչպէս է վարւում իր բարե- բարւածների հետ այդ բարերարը:

Իբրև բարերարւածներ Սոսկունի հայերը առիթ անառիթ վճարում էին բարերարին որոշ տուրք. օրինակ, ամուսնութեան ղէպքում օրիորդի հայրը ընծայ էր բերում մէկ ոսկի, իսկ տղայի հայրը՝ մէկ ոչխար:

Սոսկունում կայ 30 սօմարի չափ խաղողի այգի, իբրև բա- բերարի այդ այգիների բերքի մեծ մասը ուղարկւում էր աղային:

Իբրև պարտականութիւն Սոսկունի հայերը առանց վարձի վարում, ցանում, հնձում և ձեռում էին աղայի հողերն ու հասած

արտերը: Չմեռուայ սառնամանիկներին հերթով նրանք խուճը խուճը գնում էին Գողէ գիւղը, որը գտնուում է Սոսկունից երկու ժամ հեռաւորութեան վրա և ուր դիզւած էր լինում աղայի խոտը, շալակում և բերում էին Սոսկուն՝ աղայի ոչխարները կերակրելու համար և այս շարունակում էր ամբողջ ձմեռը:

Դարւիշ աղայի ոչխարը շատ էր, աւելի շատ, քան նա կարողանում էր կերակրել նրանց և անա բարերարւած սոսկունցիներն իւրաքանչիւրը վերցնում էր ոչխարներից 5-ով, 10-ով, յաճախ 20-30-ով և իր խոտով պահում կերակրում ամբողջ ձմեռը և եթէ այդ ոչխարներից մէկն ու մէկը սաստկէր, նա պարտաւոր էր փոխարէնը ոչխարով կամ փողով վերադարձնել աղային:

Ռէս Պետրոսն ունէր մի ընտիր ձի. այդ ձին մի գեղեցիկ օր ուսի գոմից տեղափոխուեց բարերարի գոմը: Լաւ ձիեր էին դուրս եկել Շիրինի, Մուրադի և Մինասի քուտակները, այդ ձիերը նոյնպէս տեղափոխուեցին բարերարի գոմը:

Աղային հարկաւոր էր այս կամ այն բանը գնել, Սոսկունի հայերն իրրե բարերարւածներ պարտաւոր էին հոգալ այդ ծախքերը:

Այսպէս, օրինակ, մի անգամ Դարւիշ աղան ուզեց արծաթապատ պատեանով մի թուր գնել, այդ թրի համար սոսկունցիները վճարեցին 10 ոսկի:

Երկրորդ անգամ աղան ուզեց գնել երկու հատ նոր դուրս եկած «ինգլիզի» հրացան, հայերը վճարեցին դրա համար 50 ոսկի:

Երրորդ անգամ մի ձի գնելու համար աղան պահանջեց 30 շիշակ (ոչխար), որը արժէր 15 ոսկի, սոսկունցիները այդ էլ տւեցին:

Մի անգամ էլ աղան պահանջեց 40 ոսկի ինչ որ ծախքերի համար. ինչպէս ամեն անգամ, այս անգամ էլ հայերը հաւաքեցին և այդ գումարը բաժանեցին իրենց վրա ըստ կարողութեան և երբ դրամները հաւաքելով աղային տարան, նա չընդունեց, որովհետև 40 ոսկուց 5 թէ 10 դուռուշ պակաս էր, սոսկունցիները ստիպւած եղան այդ պակասն էլ լրացնել:

Հայերն ուզեցին իրենց եկեղեցին նորոգել, պատերի խախտւածութեան պատճառով ժամասացութիւն տեղի չէր ունենում այդտեղ. եկեղեցու նորոգութիւնը թոյլ տալու համար աղան պահանջեց երեք հրացանի արժէք և մեծ թախանձանքներից յետոյ մի-

այն համաձայնեց այդ պահանջն իջեցնել 20 դուրս շաքարի, որև ստացաւ նախ քան եկեղեցու նորոգութեան ձեռնարկելը:

Սակայն Դարւիշ աղայի պահանջներն այսքանով չէին սահմանափակուած, յաճախ նա բերել էր տալիս քուրդ ընտանիքներ և տեղաւորում հայերի տների մէջ, յաճախ նոյն խակ հայերին հանում էր իրենց տներից և նրանց տներում քրդեր բնակեցնում: Այսպէս վարւեց Դարւիշ աղան Մանկէյի Մկոյի, Մուրադի Գեւոյի և Մուքոյի Յարէյի հետ. խեղճ մարդիկ ստիպւած եղան դատարկել իրենց տները, քաշուլ հարեանների գոմերի մէջ, խակ նրանց տեղերը բռնեցին աղայի բերել աւած քրդերը:

Դարւիշ աղան հայերի վրա ունէր դրած և մի այլ տեսակի տուրք. այդ տուրքը կոչւում էր ուջօ. անբերրիութեան տարիներում բերում էր Սոսկուն իր բարեկամ քրդերին և հայերի տներում տեղաւորելուց յետոյ, հայերից հաւաքում էր եղ, կով, ոչխար, ցորեն, գարի և այլն. և տալիս այդ քրդերին իրրե ապրուստի միջոց. այսպիսով Դարւիշ աղան առնում էր քաղցած հայի ձեռքից նրա հացը և տալիս քրդին, անւսնելով այդ ուջօ, այսինքն բարերարութիւն:

Թէ Դարւիշ աղայի սահմանւած տուրքերը քանի տեսակի էին, քանի նւագի և ինչ գումարի, ոչ ոք տեսլ չէր կարող. մեր յիշածները միմիայն նմուշներ են, չնչին նմուշներ աղայից բխող տուրքերի. թէ երբ և որպիսի պատրւակով աղան հրապարակ կը գար և ինչ տեսակի պահանջներ կը դնէր, այդ էլ ոչ ոք չը գիտէր, միայն քաւական էր, որ պահանջը տրւէր և բարերարւած սոսկունցիները պարտաւոր էին անմիջապէս կատարել այն:

Այսպէս էր անա հասկացում բարերարութիւնը տաճկահան կարգերում և այսպիսի բարերարութիւն տեղագործեց այդ կարգերի ուժով առաջացած հայկական իրակախութիւնը:

Վիճակագիր Վանի 1896 թւի յունիսի 3-ի կոտորածները, ըստ Վանի առաջնորդարանից

№	Թ Ա Ղ Ա Մ Ա Ս Ե Ր Ը	Կողմ- ուած աներ	Արեւմ աներ	Սպան- ւածներ	Վարկից մեւած- ներ	Աւանդ- ւածներ
Հայկալանքի եկեղ. երջան						
1	Հայկալանքի թաղ . . .	146	6	180	8	9
2	Տէր-Սարգսեան թաղ . . .	12	2	16	1	2
3	Պողխանէի » . . .	18	—	20	6	2
4	Փաշի » . . .	20	—	15	1	2
5	Թորոմանի » . . .	20	4	23	2	—
6	Շէրիֆ-աղենց » . . .	20	—	10	1	2
		236	12	264	19	17
Ս. Յակոբի եկեղ. երջան						
1	Ս. Յակոբի թաղ . . .	64	12	26	3	2
2	Զէվէրմէի » . . .	15	3	8	2	—
3	Նորշէնի » . . .	23	—	16	1	—
4	Խաչ-փողոցի » . . .	36	—	4	1	—
5	Թուխ-Մանուկի » . . .	40	6	7	—	—
6	Պելօենց » . . .	1	—	1	—	—
7	Կարօյի » . . .	12	1	1	—	—
8	» » . . .	16	13	2	1	—
9	Փոսի » . . .	23	1	5	1	—
		230	36	70	9	2
Յանկոյսների եկեղ. երջան						
1	Շաղօյեան թաղ . . .	62	23	6	2	—
2	Վազըֆի » . . .	104	49	10	1	6
3	Մօկացեանի » . . .	62	46	7	2	—
4	Թէրլէմէզեանի » . . .	56	7	8	2	—
5	Պարօնիկի » . . .	90	26	3	3	—
6	Աղւանեան » . . .	59	17	8	2	—
7	Զրարաշիսի » . . .	17	2	1	—	—
8	Զըթշի Անդրանիկի » . . .	46	14	7	3	—
		496	183	50	15	6

№	Թ Ա Ղ Ա Մ Ա Ս Ե Ր Ը	Կողմ- ուած աներ	Արեւմ աներ	Սպան- ւածներ	Վարկից մեւած- ներ	Աւանդ- ւածներ
Նորաւեկ եկեղ. երջան						
1	Թաղաքեաէզի թաղ . . .	3	—	2	—	—
2	Մեծ քեանդիրշիի » . . .	47	2	4	3	52
3	Սօսօնց » . . .	22	1	3	2	8
4	Սանդենց » . . .	—	—	—	—	16
5	Կօրկօսենց » . . .	—	—	—	—	8
6	Բուռնազի » . . .	—	—	—	—	24
7	Աղէսաձորի » . . .	—	—	—	—	25
8	Նորաշէնի » . . .	—	—	—	14	31
		72	3	9	19	164
Արարոց եկեղ. երջան						
1	Կլորղարի թաղ . . .	115	44	72	10	6
2	Բուն արարոց » . . .	55	8	28	2	—
3	Զօլշիի » . . .	29	11	—	2	—
4	Նալրանդեանի » . . .	74	13	3	3	—
5	Մարութեան » . . .	109	37	18	7	—
6	Զհանդիւլեան » . . .	—	—	1	—	—
7	Ոսպնէպասի » . . .	—	—	6	—	—
8	Խանէկեան » . . .	23	4	3	1	—
9	Կարօեան » . . .	51	3	9	5	—
		456	120	140	30	6
Քաղաքամեջ						
1	Բաղանի թաղ . . .	24	—	5	—	1
2	Խանի տակի » . . .	—	—	5	—	—
3	Զանազան թաղեր . . .	—	—	3	—	12
		24	—	13	—	13
		1514	354	546	92	208



ԳԱԻԱՌՆԵՐ	№	Գ Ի Ի Ղ Ե Ր	Կողմ- ունե ր	Առ- կա ծնե ր	Կրօն- ա- նու թի ւ նե ր	Առ- կա ծնե ր
Հայոց Ձոր	1	Նոր գիւղ . . .	60	30	2	—
	2	Առեղ . . .	13	8	—	—
	3	Հնդաստան . . .	30	47	13	18
	4	Խէք . . .	30	38	—	1
	5	Աստուածաշէն . . .	50	14	—	2
	6	Արաղենց . . .	35	12	—	—
	7	Էրէրմու . . .	60	17	—	—
	8	Անկղտանց . . .	55	30	—	2
	9	Ոչխրանց . . .	8	3	—	—
	10	Պժնկերա վեր . . .	8	—	—	—
	11	Կղզի . . .	28	13	—	—
	12	Խոսպ . . .	38	10	—	—
	13	Հիրճ . . .	38	—	—	—
	14	Կեմ . . .	120	68	64	—
	15	Կըզլղաշ . . .	25	19	—	—
	16	Անգղ . . .	80	52	15	—
	17	Քերծ . . .	70	48	24	—
	18	Մաշտակ . . .	27	8	2	—
	19	Պլլտենց . . .	35	23	12	—
	20	Իշխանի գոմ . . .	40	23	—	—
	21	Մուլք . . .	25	8	—	—
	22	Մարքս . . .	28	26	—	—
	23	Թրքաշէն . . .	13	17	—	—
	24	Քեօշկ . . .	30	20	14	—
	25	Խորգոմ . . .	35	34	5	2
	26	Խարականց . . .	35	5	—	—
	27	Աթանանց . . .	60	37	—	—
	28	Ս. Վարդան . . .	9	4	—	—
	29	Սպիտակ վանք . . .	12	6	—	—
	30	Արտամէդ . . .	80	46	—	—
	31	Ծւտտան . . .	70	81	—	—
	32	Բերդակ . . .	50	30	—	—
			1297	777	151	25

ԳԱԻԱՌՆԵՐ	№	Գ Ի Ի Ղ Ե Ր	Առ- կա ծնե ր	Առ- կա ծնե ր
Ա Ր Ճ Է 2	1	Ականց . . .	60	—
	2	Բանոն . . .	60	—
	3	Գանձակ . . .	100	70
	4	Գենարերի վանք . . .	15	—
	5	Արմիզօն . . .	90	40
	6	Դիլան . . .	20	25
	7	Մոյ . . .	30	—
	8	Բերդաղ . . .	60	—
	9	Ծայծակ . . .	92	—
	10	Ջուզգեան . . .	55	25
	11	Աղսրաֆ . . .	108	—
	12	Բլուրմակ . . .	80	—
	13	Խարկէն . . .	—	—
	14	Օրօրան . . .	20	—
	15	Մատղավանք . . .	5	—
	16	Յարութիւն . . .	20	—
			815	160
Շ ա տ ա խ	1	Թաղ . . .	56	—
	2	Կաճէթ . . .	60	—
	3	Կաղպի . . .	41	—
	4	Ճընուկ . . .	4	—
	5	Յինենց . . .	7	—
	6	Սազ . . .	2	—
	7	Յիզի . . .	7	—
	8	Ոզիս . . .	1	—
	9	Գոմեր . . .	1	—
	10	Վախրով . . .	3	—
	11	Խաչկանց մզրէն . . .	3	—
	12	Ծաղ . . .	2	—
	13	Սևտիկին . . .	2	—
			189	—

ԳԱԻԱՌՆԵՐ	№	Գ Ի Ի Ղ Ե Ր	Ազգան- ւածներ	Կրօնա- փոխե- լիսներ	Աւանդ- ւածներ
Շ ա տ ա խ	1	Կողազիս . . .	26	—	—
	2	Շիղան . . .	36	—	—
	3	Ասեղ . . .	4	—	—
	4	Կայնէմէրան . . .	1	—	—
	5	Տորենց . . .	2	—	—
			69	—	—
Թ Ի մ ա Ր	1	Մխկներ . . .	18	—	—
	2	Քեօջանի . . .	11	6	5
	3	Ամկուրերդ . . .	4	—	—
	4	Նորովանց . . .	2	—	1
	5	Կիւսնենց . . .	56	—	—
	6	Էրէրին . . .	22	—	2
	7	Բայգակ . . .	7	—	—
	8	Խաւենց . . .	16	11	3
	9	Ալիւր . . .	19	—	—
	10	Աննավանք . . .	4	3	—
	11	Ծակտար . . .	9	—	—
	12	Ամենաշատ . . .	8	—	1
	13	Մարմէղ . . .	39	—	—
	14	Տրլաշէն . . .	15	—	—
	15	Աղեր . . .	4	—	4
	16	Գրզլճէ . . .	16	—	—
	17	Պօղանց . . .	15	—	—
			265	20	16
Վանի շրջակայք	1	Կուսուրաշ . . .	23	—	—
	2	Շուշանց . . .	15	—	2
	3	Կողրանց . . .	4	—	—
	4	Ֆառուղ . . .	11	—	—
	5	Վարազի վանք . . .	14	—	—
	6	Կարմրաւորի վանք . . .	1	—	—
	7	Ս. խաչի » . . .	1	—	—
			69	—	2

ԳԱԻԱՌՆԵՐ	№	Գ Ի Ի Ղ Ե Ր	Ազգան- ւածներ	Կրօնա- փոխե- լիսներ	Աւանդ- ւածներ
Խ օ շ ա Ր	1	Լիմ . . .	12	5	—
	2	Չարանց . . .	6	—	—
	3	Հուրթուկ . . .	8	—	—
	4	Քուէլ . . .	50	2	2
	5	Բօղաղքեասան . . .	24	—	—
	6	Նազարա . . .	26	—	—
	7	Հասպատան . . .	16	4	—
	8	Կարթարան . . .	9	4	—
	9	Արճակ գաւառ . . .	210	—	—
	10	Տաղվէրան . . .	7	—	—
	11	Քժպիպիկ . . .	18	—	—
			386	15	2
Գ Ե ա ւ ա Չ	1	Մոխրարերդ . . .	60	—	—
	2	Նոր-գիւղ . . .	57	—	—
	3	Սարէ . . .	7	—	—
	4	Նարեկ . . .	126	—	—
	5	Փայլներ . . .	13	—	—
	6	Տախմանց . . .	3	—	—
	7	Բօղօնիս . . .	1	—	—
	8	Հարրերդ . . .	1	—	—
	9	Հիրիճ . . .	17	—	—
	10	Տրշող . . .	34	—	—
	11	Փշաւանց . . .	44	—	—
	12	Պատականց . . .	57	—	—
	13	Քարաղաշա . . .	6	—	—
	14	Վառենց . . .	9	—	—
	15	Գանձակ . . .	4	—	—
			439	—	—

Վիճակագիր Արճէշի գաւառի 1896 թւի հայկական սար-  
սափների 1)

№	Գ Ի Ի Ղ Ե Ր	Ք ր դ ե ր		Հ ա յ ե ր		Հայերի կորուստն.		
		Բնիկներ տուն	Նորիկ- ներ տուն	Մնացել էին տուն	Յեւ են եկել տուն	Գաղթե- ցին տուն	Սպան- ւեցին	Ասեանդ- ւեցին
1	Բլուրմակ .	115	26	33	5	2	33	1
2	Պարկէն .	—	—	15	8	6	1	—
3	Իրիշաս .	42	24	21	4	27	1	2
4	Օրօբան .	—	—	16	1	32	3	2
5	Փափշկէն .	10	—	6	—	—	—	—
6	Մաճառս .	25	10	10	—	7	1	2
7	Զիրգաշէն .	25	15	6	—	—	—	—
8	Հասպանակ .	2	—	9	5	21	—	—
9	Յարութիւն .	—	—	5	10	17	17	1
10	Սոսկուն .	9	4	61	8	11	2	1
11	Սոջալու .	18	—	—	8	—	3	1
12	Աղսաֆ .	1	7	1	4	—	14	—
13	Արծևարեր վանք .	—	—	10	4	5	1	2
14	Փայ .	15	14	6	2	2	—	3
15	Գեօղ ներք .	2	7	—	10	—	—	—
16	Գեօղ վեր .	1	24	—	9	—	1	1
17	Բալաքիւ .	1	12	—	2	—	1	—
18	Կարած քար .	16	14	21	7	1	2	2
19	Աղսրաֆ .	—	1	16	5	100	178	—
20	Գանձակ .	—	20	2	10	60	—	—

1) Այս տեղեկութիւնները կազմել է պ. Արամ Սաֆրաստեանը:

Վիճակագիր Ալջաւաղի գաւառի 1896 թւի հայկական սար-  
սափների 1)

№	Գ Ի Ի Ղ Ե Ր	Քուրդ	Հայ	Այժմ աւեր են		1896 թ. սարսափն.		
		Տուն	Տուն	Տուն	Զրտակց	Գաղթե- ցին տուն	Սպան- ւեցին	Ասեանդ- ւեցին
1	Արծկէ .	—	81	—	—	—	31	—
2	Աւէն .	—	102	20	—	28	22	—
3	Նորշէն .	3	24	30	—	37	21	3
4	Էղեձոր .	—	18	15	1	19	2	3
5	Զիրաքիւ .	2	36	30	—	30	2	2
6	Բաղոխ .	32	26	45	—	45	2	3
7	Սիփաններ .	—	78	7	3	56	6	—
8	Փեշնազոմեր .	4	18	27	—	27	8	4
9	Պոռանց .	1	40	—	—	10	3	—
10	Ղուղէլ .	—	20	—	—	—	2	—
11	Անուշաղբիւր .	—	12	—	—	4	—	—
12	Նորշնջուղ .	1	37	14	—	23	13	—
13	Վիճկացուկ .	—	26	—	—	10	—	—
14	Բարկաթ .	—	12	—	—	—	—	—
15	Կոճերեր .	1	35	—	2	2	2	—
16	Կարաբէշիշ .	—	38	16	—	17	1	—
17	Արճրա .	—	74	20	—	14	2	—
18	Առնջկուս .	—	53	—	—	13	—	—
19	Ուռու .	15	6	—	—	1	—	—
20	Գաւառքեօյ .	—	4	—	—	—	—	—
21	Տանձուտ .	—	8	—	—	—	—	3
22	Պորկրով .	—	3	—	—	—	—	—
23	Օրանկաշի .	—	10	—	—	—	—	—

1) Այս տեղեկութիւնները կազմել է պ. Գրիգոր Կեղեանը:

1896 թվի կոտորածների ժամանակ Արճէշի դաւառի մի քանի գլխերի սպանւածների անւանացուցակը

	Ականց կեցեցոնավայր	39	Լալօյի հայրը
		40	» եղբայրը
1	Արզրումցի Կարապետ	41	Օհաննէս Ալէքսանեան
2	Մկրտիչ սրա եղբայրը	42	Դարբին Ասլօն
3	Միսակ » հօրեղբոր որդ.	43	Սրա կինը
4	Սաչիկ Թոխմախեան	44	Կօնդօբաչի Ալէքսանը
5	Յարութիւն Մանուկեան	45	Մի վանեցի
6	Մեխանաչի Օխանէս	46	» »
7	Եղիշէ Թորգոմեան		
8	Բախկալ Մինաս		Ա. դ ա ռ ա Ֆ
9	Վարդան Տէր Սաչատրեան	1	Բաղալի տղա Եղազար
10	Տրոս Փանօեան (կոյր)	2	» » Կարապետ
11	Նիկողոս Սարգսեան	3	» » Մխիթար
12	Նալբանդ Մուխսին	4	Օխօյի Վրդօն
13	Սէրոբ սրա որդին	5	Աւագի Սաֆար
14	Արշակ » հօրեղբոր որդին	6	Բաղալի Օխէ
15	Կաղ Մխէն	7	Գէւօյի Եղօ
16	Վանեցի Լալօն	8	Մեխիբի Մարգար
17	Մեխանաչի Բղդէն	9	Եղօյի Մխիթար
18	Տէր Ռափայէլը	10	Բաղդօյի Սարգիս
19	Արբանամը սրա որդին	11	Գրիգորի Սաչօ
20	Տէր Միքայէլը սրա եղբայրը	12	» Սախօ
21	Մինաս Պօլօեան	13	Մանդալի Շահնազար
22	Առաքելի մայրը 100 տ. կին	14	Գասպար վարժապետ
23	Կարնեցի Մոսէս	15	Միրզօյի Մինաս
24	Արճրեցի Մանուկ	16	Գէորգի Դանէլ
25	Մուրադ Գեօգէզեան	17	Շահպապի Եղազար
26	Արամ սրա տղան	18	» Սարգիս
27	Մուխսի Մուքայէլ	19	Տէր Մաթէոս
28	Վարդան սրա որդին	20	Ալանի Վարդան
29	Մուշեղ » քրոջ որդին	21	Եղօյի Արեշաս
30	Պօղոս Մուխսի Արբանամեան	22	Տէր Մաթէոսի Մանակ
31	» Սաչիկեան	23	Գէորգի Օհան
32	Մձօյի հայր Շամբարազը	24	Մայիլի Մեխիբ
33	Կապինաչի Մարտիրոս	25	Վէրդօյի Սարգիս
34	Մեխանաչի Գորիկ	26	Թումասի Օհաննէս
35	Նալբանդ Դարմօն	27	Օհօյի Թումաս
36	» Մէլօն	28	» Սամբօն
37	» Մուրազը	29	Թումասի Սլղաթ
38	» Սիմօնը		

1896 թվի կոտորածների ժամանակ Արճէշի դաւառի մի քանի գլխերի սպանւածների անւանացուցակը

30	Սլղաթի տղայ Մուքայէլը	8	Աւօյի կին Գարան
31	Յակօյի Սարգիս	9	Սրա 4 տարեկան աղջիկը
32	Յակօյի տղայ Ալէքսան	10	» 6 » »
33	Տօնօյի Ասլան	11	Կսօյի Մարգարի Մկօն
34	Վարդօյի Փոխան	12	Չաքօն սրա տղան
35	Ալէքսանի եղբայրը	13	Չաքօյի 6 տ. աղջ. Չարթար
36	Օհօյի Արգար	14	Թումօյի Վարդան
37	» Պապօ	15	» Յօնան
38	Սիմօնի Կարապետ	16	Վարդանի տղայ Նօրսօն
39	Յարթենի Սիմօն	17	Ասպատուրի տղայ Յակօր
40	Սաչօյի Միրզօն	18	» միւս տղան
41	Միրզօյի տղայ Եգոր	19	Թումօյի Գէւօն
42	» » Գէւօ	20	» Տողակն
43	Մանուկի Յակօ	21	» Յովէս
44	» Գասպար	22	Թումօյի Բաղալի Գրիգորը
45	Աւագի Ատոմ	23	Մարումէլի Յուսէփ
46	Սմբուլի Դազար	24	» Մանակ
47	» Յակօ	25	» Մեխիբ
48	Մեխիբի Պուղոս	26	Վարդիկ Մախօն
49	Սհօյի Յարթեն	27	Եթումեհրու Յոլօն
50	» Միրօ	28	» Գիւլգեազ
51	Յարթենի Ասպատուր	29	» Մանուշակ
52	Վարդիկ Մուրադ	30	Գօգէյի հայր Պօղոս
53	Բարխօյի Մանուկ	31	Մարտօյի Գրիգոր
54	Աւգօյի Յովան	32	Տէր Յակօր
55	Տէր Մարգարի Իսրայէլ	33	Տէր Սողոմօն
56	Մարգօյի Բաղդօն	34	Դազար սրա տղան
57	Աւագի Առաքել	35	Մոսէս » »
58	Արեշատի Աւետիս	36	Ասօյի Սաչօն
59	Եղօյի Թումաս	37	Մարկոս սրա տղան
		38	Գլխի Մուրադ
	Ա. ռ մ ի զ օ ն	39	Աւագ սրա եղբայրը
1	Ռէս Սաչօ	40	Նուբար Մուրադի աղջ. 18 տ.
2	Չաքօն սրա եղբայրը	41	Աւգալու Մհէն
3	Պօղոս » »	42	Ամիրի Ռաշօն
4	Չաքօյի տղա Գարրէլ	43	Թաթօն սրա եղբայրը
5	Էլմօն սրա եղբայրը	44	Հասրաթ Թաթօյի տղան
6	Զիչակ » մայրը		
7	Պօղոսի մայր Եղսօն		

1896 թւի կոտորածների ժամանակ Արճէշի գաւառի մի քանի գիւղերի սպանւածներին անւանացուցակը

Բ ա ն ո ն	
1	Միքայէլ Մարտիրոսեան
2	Միսո Ղուկասեան
3	Ղուկաս սրա եղբոր տղան
4	Մելքոն » » »
5	Տէր Յակոբ
6	Մեսրոպ սրա տղան
7	Ասլան Թումասեան
8	Սուքիաս սրա տղան
9	Թորոս » » »
10	Մարգարիտ սրա հարսը
11	Ալմաստ » » »
12	Մելօ » թոռը 8 տ.
13	Վարդան » » 6 տ.
14	Սիմօն Ալէքսանեան
15	Պետրոս սրա եղբայրը
16	Գայեանէ » հօրեղբոր կինը
17	Պետրոսի տղան 3 տարեկան
18	Մելիք Սիրունեան
19	Առաքել սրա տղան
20	Մանուկ » եղբայրը
21	Յարութիւն Այվազեան
22	Իէորդ սրա տղան
23	Մուրադ Աւետիսեան
24	Գիւրջի Մանուկեան
25	Մինաս սրա եղբայրը
26	Յակոբ » տղան
27	Վարդան Ենգօեան
28	Դաւիթ սրա տղան
29	Իէորդ » թոռը
30	Խաչատուր Սիրունեան
31	Սիրուն սրա եղբոր տղան
32	Գրիգոր » » »
33	Օնանէս Բօրբօրեան
34	Ղազար սրա որդին
35	Ժամկոչ Յովհաննէս
36	Մուրադ սրա տղան
37	Ասլանեան Աննա
38	» Ալմօ
39	Զարթար Աննայի աղջիկը
40	Մի երեխայ սրանցից 2 տ.
41	Յովհաննէս Բաղդասարեան
42	Բարսեղ սրա որդին
43	Խաչատուր սրա »
44	Տէր Յովհաննէս
45	Ազրակցի Նազար
46	Յարութիւն սրա եղբայրը
47	Վարդան սրա տղան
48	Կարապետ Մինասեան
49	Իրլբար սրա հարսը
Գ ա ն ձ ա կ	
1	Առաքել աղան
2	Մկրտիչ սրա եղբայրը
3	Կարապետ » »
4	Սրա 1 տ. երեխ. հորը ձգւած
5	Եկուր Մխիթար
6	Հօսէի Դաւիթ
7	Բղդէն սրա եղբայրը
8	Մխիթարի Հօսէն
9	Դաւիթ Սահակը
10	Մելիք սրա եղբայրը
11	Ասլօյի Գրիգորը
12	Ասլօ սրա տղան
13	Տէրտէրի Յովհաննէսը
14	Խաչօն սրա եղբայրը
15	Յամթէյի Գարէն
16	Ջանգրմա Վարդանը
17	Մելիք սրա տղան
18	Մուրադի Շաղօն
19	Մահլամ սրա եղբայրը
20	Մկրտչի Միսօն
21	Յակօյի Խչօն
22	Բօզօյի Նօրսօն
23	Յունան սրա եղբայրը
24	Նազարի Մանուկը
25	Խչօն սրա եղբայրը
26	Դանէլի Մխիթարը

1896 թւի կոտորածների ժամանակ Արճէշի գաւառի մի քանի գիւղերի սպանւածներին անւանացուցակը

27	Գրէյի Բղդօն
28	Ղազար սրա եղբայրը
29	Խչօն » » »
30	Թրմեցի Ալօն
31	Սարգար սրա եղբայրը
32	Վրդօյի Յովանը
33	Գիւրում սրա մայրը կենդանի թաղւած
34	Իոօյի Սրբօն
35	Բղդէյի Պետօն անդամալոյձ
36	Հօթօյի Ալօն
37	Մհակը սրա տղան
38	Մուրադի Հասօն
39	Գսպօն սրա տղան
40	Գարբէլ » » »
41	Յօվէ Հասօյի եղբայրը
42	Ղազօ սրա տղան
43	Մելիք » » »
44	Մեսրօր սրա »
45	Առաքելի Յաթօն
46	Շրօն սրա տղան
47	Մարգարի Նօրսօն
48	Մինաս սրա եղբայրը
49	Գէլօյի Պետօն
50	Ճէլօ Սօսին
51	Դարմօ սրա տղան
52	Սաֆարի Յարօն
53	Պօլօյի Յօվէն
54	Միսակ սրա տղան
55	Ճէլօյի Շահէն
56	Ժամհար Գօրան
57	Միսօյի Դարմօն
58	Ճէլօ Ալօն
59	Քեամալ սրա եղբայրը
60	Գալօ » » »
61	Խաչօյի Չօլօն
62	Ալջաւազցի Բարէն
63	Պետօյի Պօղոս
64	Թաշօ սրա եղբայրը
65	Բուլանըցի Միսօն
66	Գրիգոր սրա եղբայրը
67	(Բուլանըցի Միսօն) Վէրդին
68	Պօլօն սրա եղբայրը
69	Մինա » տղան
Բոլոր սպանւածները 82. են 13-ը չեն յիշում.	
Յ ա յ ձ ա կ	
1	Ամբջօյի Գրիգոր
2	» Միսօ
3	» Ալմօ հասած աղջիկ
4	Եղօյի Սհօ
5	Աւազի Սհօ
6	Գրիգոր սրա եղբայրը
7	Արշակ » եղբոր տղան
8	Ղգօյի Ալօն
9	Սքօյի Վրդօն
10	Սաֆար սրա եղբայրը
11	Սէրօր Սաֆարի տղան
12	Մարգար » » »
13	Կեաթօյի Ալօն
14	Էրօյի Յակօն
15	» Բղդէն
16	» Աւղալը
17	» Սհօն
18	» Սէրօրը
19	» Սահրգիւլ Սէրօրի կինը
20	Վանեցի Մուխսին
21	Խումարի Սրբէն
22	Գիւլիգար սրա աղջիկը 14 տ.
23	Սրբէյի հարսը
24	Սհօյի Յօվէն
25	Տէր Գալուստը
26	Սիմօն սրա տղան
27	Մուրադի Ղազարը
28	Գրիգոր սրա հօրեղբայրը
29	Գասպար Գրիգորի տղան
30	Մշեցու Վարդան

1896 թւի կոտորածներէ ժամանակ Արճէշի գաւառի մի քանի գիւղերի սպանւածներէ անւանացուցակը

		Մ ա Ր Մ Է Պ
31	Ճէլօյի Փոխան	
32	Ղզէյի Հաքօն	
33	Նիկօն սրա եղբայրը	Վախից, կսկիծից և զրկանք- ներից մեռած 2 ամուսմ
34	Ենգօյի Հայրօ	
35	Գոհար սրա աղջիկը	1 Մարկէի Գրիգորը
36	Ալօյի թոռը Մահակ 4 տար.	2 Շատախցի Մանուկի կինը
Մարմեղ Թխարի գաւառ.		
1	Ղամբարի Սաչատուր	3 Ամրջանի Եղօն
2	Կարապետ սրա տղան	4 Զօրօյի Վարդանը
3	Դաւթէ Զաքար	5 Մուխի Վարդանի կինը
4	Իւզ Կարապետ	6 Մուխի Թումասի »
5	Սալէի Մինաս	7 Միրզի փես. Ղազարի մայրը
6	Միւլղեան Յակոբ	8 Շխօյի պոռուր
7	Տէր Մկրտիչ	9 Աշնցու Ղուկասի տղան
8	Ալմանի Աւետ	10 Փոխանի Գէորգը
9	Մկրտիչ սրա տղան	11 Մաքօյի Յակոբի կինը
10	Յովհաննէս սրա եղբոր տղան	12 Արման Օխանի տղան
11	Բուստի Մելքոն	13 Ալկէ Մուսէի »
12	Ալէքսան սրա տղան	14 Տէր Մկրտչի տիրօխնին
13	Գիւլգիւլի Ասպատուր	15 Կուլկէ Մահակ
14	Յովհաննէս սրա եղբայրը	16 Սրա կինը
15	Ուստա Ղազարը	17 Մարտիկ Մարգար
16	Շատախցի Մինասը	18 Մեսրօյի Վարդանի մայրը
17	Մաւին Մարտիրոս	19 Մանօյի Յովհաննէսի տղան
18	Տէր Յոխանի Սաչատուր	20 Փիլկէ Աբրահամը
19	Պատուրի Մելքոն	21 Ժամկոչ Գասպարը
20	Սաչօյի Գէորգ	22 Շահէնի Նինոն
21	Վարժապետի Վարդան	23 Արշէնցու Կարապետի կինը
22	Վանեցի Սաչատուր	24 Այվազի Յարութիւնի կինը
23	Միրզի փեսայ Բաղդիկ	25 Իւզ Կարապետի կինը
24	Ղազարի Ասպատուր	26 Սանչուր Պօղոսի կինը
25	» Յովհաննէս	27 Ղամբարի Սաչօյի կինը
26	Սամսի Յովհաննէս	

Մի նմուշ այն անթիւ առեանգումների, որ տեղի ունեցան 1896 թւին Արճէշի գաւառում

Գ ի ի Ղ	№	Առեանգւածների անուանները և այժմ նրանց ուր գտնուելը
Կենարորի վանք	1	Գէորգի Սարգսի աղջիկ 12 տար. զեղեցկուհի Չիչակը, այժմ գտնուում է սինասանցի Հասօյի եղբոր Փախկիի ձեռքին:
Ամենաշատ	1	Մարօյի Յովհաննէսի աղջիկ 17 տ. Ալմասար, այժմ գտնուում է գաւաղանցի մի քրդի ձեռքի և ունի երեխաներ:
Արմիզօն	1	Ղազարի աղջիկ Չիչօն, այժմ գտնուում է ձանձաղբիւր գիւղում մի քրդի ձեռքի:
	2	Մուրադի Գէլօյի կին Ջէյրօն, այժմ գտնուում է Ղարաղալ գիւղի մի քրդի ձեռքի:
Օրօրան	1	Ղարիպի Ասպատուրի աղջիկ 16 տար. Անթառամը, այժմ էլ համագիւղացի Մահմուդ Չաւուշի տղայի Սալիմի ձեռքին է:
	2	Դարբին Վարդանի աղջիկ 17 տ. Ալմօն, այժմ էլ համագիւղացի Ուզեր տղայի տղայ Հասօյի ձեռքին է:
	3	Միրաքի Այվազի հարս Աննէն, այժմ էլ համագիւղացի նոյն Ուզեր տղայի միւս որդու, Սուրշուղի ձեռքին է:
Ծայծակ	1	Ճէլօյի Փոխանի աղջիկ 18 տ. Մաքէն, տեղն անյայտ է:
	2	Մուրադի Գրիգորի աղջիկ 16 տար. Սարնգիւլը, տեղն անյայտ է:
	3	Մուրադի Գրիգորի աղջիկ 18 տար. Ալմօն, տեղն անյայտ է:
	4	Մրքօյի Յաթօյի հարսն Գիւլիզարը տեղն անյայտ է:
	5	Ենգօյի հարս Ալմաստը, 2 տ. պսակւած, տեղն անյայտ է:
	6	Ամրջօյի Յարօյի աղջիկ 20 տ. Ալմօն, այժմ էլ զարաքեանդցի Ահմադի ձեռքին է:
	7	Եղնօյի հարս 2 տար. պսակւած Սիմէն, այժմ էլ Տամբաթում մի քրդի ձեռքի է:
	8	Եթօյի Աւետիսի 2 տար. պսակւած հարսը, այժմ էլ Դարաքեանդում մի քրդի ձեռքի է:

Մի նմուշ այն անթիւ առեանգումների, որ տեղի ունեցան 1896 թւին Արձէշի գաւառում		
Գ ի Ի Ղ	№	Առեանգումների անունները և այժմ նրանց ուր գտնուելը
Ծայծակ	9	Ճէլօյի Փոխանի տղա Մուրազը քրդացած է (տես № 1):
	10	Ալօյի Ապրէ կրօնափոխ եղած և ամուսնացած քրդուհու վրա, այժմ ունի 3 զաւակներ:
Գանձակ	1	Հաթօյի աղջիկ 18 տար. Օսկօն, այժմ էլ դադարեցի շէյխ Հասօյի ձեռքին է:
	2	Հասօյի աղջիկ 16 տ. Ասլիկը, այժմ Բանոնում թրիմցի սուլթանի ձեռքին է:
	3	Յակօյի Բօզէյի աղջիկը, 12 տ. այժմ էլ շէխարցի Նարօյի ձեռքին է:
	4	Ղուժաշի Պետօյի հարս 2 տարւայ պսակւած Մարանը, այժմ էլ թանդրասցի Սաղօյի Իւսուֆի ձեռքին է:
	5	Ջաղացպան Յովհաննէսի հարս 2 տարւայ պսակւած Սիմէն, որին առեանգեց դադարեցի հաջի Օմարը, այժմ Հուսէին փաշայի սարքեարի ձեռքին է:
	6	Տէր Թաթոսի հարս 2 տարւայ պսակւած Չիչակը, այժմ էլ դադարեցի Իրօյի ձեռքին է:
	7	Այդ նոյն Չիչակի կրճքի տղան, որին տարան մօր հետ միասին, այժմ 15 տարեկան տղայ, նոյն Իրօյի մօտն է:
	8	Ալջաւազցի Բուրէի 8 տար. տղան տարան հաւատափոխ արին, տեղն անյայտ է:

Տնտեսական զրուծիւնը Մանգան գիւղի գիւղացիների մօտ անցեալում և այժմ 1)											
№	ԱՆՈՒՆՆԵՐԸ	Գ ո մ է շ		Ե զ		Մ ա տ ա կ		Կ ո զ		Ո շ խ ա ը	
		15 տարի առաջ	Այժմ	15 տարի առաջ	Այժմ	15 տարի առաջ	Այժմ	15 տարի առաջ	Այժմ	15 տարի առաջ	Այժմ
1	Բնադասի խաչօն	4	1	11	2	4	1	8	3	70	—
2	Օրանի Աւազը	6	1	18	2	1	—	12	2	900	—
3	Սահակի Մանուկը	6	—	12	—	2	—	9	—	80	—
		16	2	41	4	7	1	29	5	1050	—

Այս ցուցակը կազմում է 354 երեսում ղետեղւած ցուցակների շարունակութիւնը:

1) Այս տեղեկութիւնները կազմել է պ. Շիրին Յակոբեանը:

Վիճակագիր էրզրուսի վիլայէթի Գերջանի գա

Կալւածքի բուն տէրը	Կալւածքի տեղը և անունը	Կալւածքի տեսակը
Լազարեան եղբարք	20 վարկ. հետի գոմ	8 տան հող արտ չայիբ
Տէր Անտօն	» » » »	10 » »
Լազարեաններ	Գիւղի մօտ	1 » »
Եկեղեցւոյ կալւածք	Քիլիսէի գոմ	4 » »
Տեփօեանց	Քիլիսէի գոմին կից	1 չայիբ ջրարբի
Տէր Վրթանէս	Գոմերուն կիցը	1 արտ 1 չայիբ ջրարբ.
Բարսեղեաններ	Գիւղին արեւելքը	5 տան հող արտ չայիբ
Տ. Վրթանէս և Յովհան.	Քէլէշին կէօղէն	4 » » »
Տեփօեանց Արուսթ	Պաղ աղբիւրները	1 արտ 1 չայիբ ջրարբի
» »	Կոթերը	1 արտ ջրարբի
» »	Գիւղին առջև	1 արտ »
» »	Տօխսիկ թէփէն	1 արտ 1 չայիբ ջրարբի
» »	Գիւղին մէջ	1 » 1 բօստան »
Երկան Մանուկ	Եօղուն բերդակի մօտ	2 » ջրարբի
Թըմիկեաններ	Ղարաղաղ	1 » »
» »	Եօղուն բերդակ	1 » »
Թըմիկեան Պօղոս և	Գիւղին մէջ	4 աչք տուն
Կարապետ	Ղարակեաղ իւրդը	1 արտ ջրարբի
» »	Հարէմ Տէրէսի	1 » »
» »	Հոտամ կէօլը	1 » »
» »	Խչոյին սինսօը	1 չայիբ »
Թըմիկեաններ	Գամսորի գերեզ. մօտ	1 արտ »
» »	Եօղուն բերդակ	1 » »
Կօնձօեան Կիւրեղ	Քէլէշին կէօղէն	1 արտ 1 չայիբ ջրարբի
Բարսեղեան Մարտիր.	Մարի չայիբը	2 արտ ջրարբի
» »	Քրըրգօյին կէօղէն	1 արտ 1 չայիբ ջրարբի
» »	Ղուռի չայի սարը	1 արտ անջրղի
» »	Արեգին արտը	1 » »
» »	Հոտամ կէօլը	1 » ջրարբի
» »	Կորթերուն առին տակ	1 » »
Չէօկէնդերեան	Գիւղին մէջ	4 աչք տուն
» »	Գիւղին առջև	1 արտ ջրարբի
» »	Հոտամ կէօլը	1 արտ, չայիբ ջրարբի
Չէօկէնդերեան Մարտ.	Եօղուն բերդակ	1 չայիբ 2 արտ »
» »	Գիւղին մէջ	1 բօստան ջրարբի

Լառի Խաչ գիւղի բունի գրաւած կալւածքների

Չափը քօ-նում	ԿԱԼՎԱԾՔ ԳՐԱՆՈՂԸ	Քանի տա-րի է	Կալւածագիր և կալւածատուրք ուրի անունով է
450	Կարիկցի աշիրէթի Հուսէին աղան	36	Գրաւողի
300	Իւսուֆ աղայի աղայքը	»	»
200	Իւսուֆ օղլի աղան	»	»
200	Մէհէմէդ և Գէկօյ	»	»
20	» »	»	»
40	Էգիզ աղան	»	»
290	Հասան և Սուլէյման	»	»
400	Մէհէմէդ էֆէնդին	13	»
8	» »	»	Բուն տիրոջ
10	» »	»	»
4	» »	»	»
9	Հասան աղան	»	»
—	Հիւսէին օղլի Ջէրօ	10	»
32	Հասան աղան	12	»
20	Իւսուֆ աղայի Մէհէմէդ	13	»
20	Հասան աղան	12	»
—	Մէհէմէդ աղա Հիւսէին Աղապաղէ	13	»
10	» » » »	»	»
10	» » » »	»	»
8	» » » »	»	»
8	» » » »	»	»
32	Ղօթցի Հուսէին	10	Գոչան տուրք չունի
12	Քիւչուկ աղայի Հասան	12	Բուն տիրոջ
32	Հուսէին աղայի Մէհէմէդ	13	Գոչան չիկայ
30	Հասան աղան	»	Բուն տիրոջ
16	Քուրդ Ջէրօ	»	»
8	Ալիին Կէրկի աղան	»	Գոչան չիկայ
8	Հէճօյին Ալին	»	»
8	Հասան աղան	»	Բուն տիրոջ
30	Հուսէին Մէհէմէդ	»	Գաղանի գոչան ըրած
—	Հասան աղան	»	Բուն տիրոջ
4	» »	»	»
16	» »	»	»
20	Ղէրօյին Մէմօն	»	»
—	Հիւսէին Մէհէմէդ	»	»



Վիճակագիր Էրզրումի վիլայեթի Դերձանի գա

Կալւածքի բուն տէրը	Կալւածքի տեղը և անունը	Կալւածքի տեսակը
Բարսեղեան Միսաք	Խառխուր	1 արտ ջրաբբի
» »	Գիւղին առջև	1/2 արտ ջրաբբի
Մինասեան Անտօն	Կէօլերը	1 չայիր 6 արտ ջրաբբի
» »	Ղոսպուռին	1 չայիր ջրաբբի
» »	Սուպաթանը	1 չայիր 4 արտ ջրաբբի
» »	Գիւղին մէջ	2 տուն 1 ախոռ
Մանուկեան Զարար	Սուպաթանը	1 չայիր 6 արտ ջրաբբի
Համբոեան Արուսթիւն	Եօղուն բերդակը	1 արտ ջրաբբի
» »	Հէրէմ դէրէսին	1 արտ ջրաբբի
» »	Կորթերը	1 արտ ջրաբբի
» »	Քէլէշին կէօղէն	1 արտ ջրաբբի
» »	Կուպուռը	1 չայիր ջրաբբի
Սէգօեան Արուսթիւն	Սիւրմէքը	1 չայիր ջրաբբի
» »	Ծառուկները	1 արտ ջրաբբի
» »	Եօղուն բերդակը	1 արտ ջրաբբի
Կիրակոսեան Նահապ.	Կէօղէները	1 չայիր ջրաբբի
Վահանեան Դաւիթ	Գիւղին մօտ	6 արտ 2 չայիր ջրաբբի
Թօթօեան Յովհաննէս	» »	2 տուն 8 արտ ջրաբբի
» »	» »	1 չայիր ջրաբբի
» »	» »	Կալ բօստան բամալ
» »	Եօղուն բերդակը	1 չայիր ջրաբբի
» »	Գիւղին մօտ	1 չայիր և 2 տուն
Պուլօեան	» »	5 արտ 1 չայիր ջրաբբի
» »	» »	1 արտ ջրաբբի
» »	Քըղօյին ձորը	1 չայիր ջրաբբի
» »	» »	1 արտ ջրաբբի
Քեհանեց Գրիգոր	» »	4 արտ ջրաբբի
» »	» »	2 արտ ջրաբբի
Մարտիրոսեան Գէօրգ	Ջրին բերանը	1 չայիր ջրաբբի
» »	Սարին չայիրը	4 տուն
» »	Գիւղին մէջ	1 արտ ջրաբբի
» »	Գիւղին վրան	1 արտ ջրաբբի
» »	Չապասուանին խարձը	1 արտ ջրաբբի
» »	Կէս արաը	1/2 արտ ջրաբբի
Քեհեան Մանէ	Գիւղին մօտ	5 արտ 1 չայիր ջրաբբի
» »	Գիւղին վրան	1 արտ ջրաբբի

Լառի Պաշ գիւղի բունի գրաւած կալւածքների

Չայիր քոչ	ԿԱԼԻԱԾՔ ԳՐԱՒՈՂԸ	Քանի տարի է	Կալւածագիր և կալւածատուրը ուրի անունով է
40	Շըխբեօյցի Մէհէմէդ	»	5 ոսկիով գոչան ըրած
8	» »	»	6 ոսկիով գոչան ըրած
46	Իւսուֆ աղայի Մէհէմէդ աղան	16	Գոչան դարձած
20	» » »	6	Բուն տիրոջ
20	Հիճօյի Ալին և Ղէրօն	16	»
—	Կարճ Հուսօն	1	»
66	Պատիկ աղայի Հասան աղան	10	»
16	Հասան աղան	12	»
8	» »	»	»
8	» »	»	»
6	» »	»	»
6	Եուսուֆին Կէրկին	15	»
8	Եուսուֆին Մէհէմէդ	»	»
6	» »	»	»
8	Պատիկ աղային Հասան աղան	13	»
6	Եուսուֆին Մէհէմէդ	»	1 կովի գոչան ըրած
80	Պատիկ աղային Հասան աղան	»	Բուն տիրոջ
100	Հասան աղան	16	»
4	» »	»	»
—	» »	»	»
4	Հիւսէին Մէհէմէդ	18	Գրաւողի
12	Ահմէդին Հասան	4	Բուն տիրոջ
84	Պատիկ աղային Հասան աղան	17	»
8	Պէյման աղային Ալի պէկ	»	Եկեղեցուն կտակած
20	Պէյման աղային Ալի պէկ	17	»
4	» » » »	16	Բուն տիրոջ
80	Պատիկ աղային Հասան աղան	18	»
»	» » » »	»	»
8	Ղարօյի Կէրկին	2	»
—	Մեմօյին աղայքը	18	»
16	Իւսուֆին Վէլօյ	»	»
8	Մսոյին Իբրահիմը	4	»
8	Իւսուֆին Մէհէմէդը	2	»
84	Պատիկ աղային Հասան աղան	18	»
8	Միրզօյին Շիւքրին	7	Գոչան չունի

Վիճակագիր Էրզրումի վիլայեթի Դերջանի գա		
Կալւածքի բուն տէրը	Կալւածքի տեղը և անունը	Կալւածքի տեսակը
Տէմիրչեաններ	Գիւղին քովը	2 շայր 4 արտ ջրարբի
»	»	2 արտ 3 տուն ջրարբի
»	Պառխուռը	1 արտ ջրարբի
»	»	1 արտ ջրարբի
Կիլոյին Ալէքսան	Տափտափը	1 շայր ջրարբի
Թորոսեան Մարտիրոս	Գիւղին մէջ	1 տուն 1 պաս. 1 պախչ.
Տէր Անտոն	Մամէրտին	1 շայր ջրարբի
»	»	2 արտ ջրարբի
»	Ղարատաղ	1 արտ անջրտի
»	Գօղերը	1 արտ ջրարբի
»	»	1 արտ ջրարբի
»	Գիւղին առջև	1 արտ ջրարբի
Տ. Արիստակէսեան	»	2 արտ ջրարբի
»	Սուպաթանը	3 արտ 1 շայր ջրարբի
Տէլի Մանուկ	Գիւղին մէջ	3 աչք տուն
»	»	1 կալ 1 պասմա
»	Սուպաթանը	6 արտ 2 շայր ջրարբի

Լատի Պաշ գիւղի բունի գրաւած կալւածքներ			
Քաղաքի անունը	ԿԱԼԻԱԾՔ ԳՐԱՒՈՂԸ	Քանի տարի է	Կալւածագիր և կալւածատուք որի անունով է
26	Պատիկ աղային Հասան աղան	18	Բուն տիրոջ
4	»	»	»
16	Իւսուֆին Մէհմէդ	9	»
8	Հիւսէինի Մէհմէդ	20	»
8	Պէկզատ աղան	25	»
—	»	10	6 ոսկի տուրք. ծախած
4	Ազիզ աղային աղան	18	Բուն տիրոջ
40	Իսմայիլ աղան	»	»
16	Իւսուֆին Մէհմէդ աղան	»	»
16	Պատիկ աղային Հասան աղան	16	»
8	Ազիզին Իսմայիլ աղան	»	»
16	Հասան աղային Հիւսէին աղան	13	»
16	Հիւսէինին Մէհմէդ աղան	»	»
30	Իւսուֆին Մէհմէդ աղան	15	»
—	Հիւսէինին Մէհմէդ աղան	»	Կեղծութեամբ գոչան
—	»	»	ըրած է. տէրը Ռուսիա
—	»	»	զաղթած է
60	»	»	»
3323			

Բունի գրաւումների այս ցուցակը 1909 թւին ներկայացւել է կրօնական գործակալի կողմից և ընդհանուր առմամբ, որը հաշվարկային և կալուածական Դուրուլման գաւառի Աղային-Շէնլիքը ըստ տեղը կը նստահարուի կողմից գիւղին մէջ. կը տիրէ ամբողջ Շըխքեօյ ու գիւղեր կը հաստատէ, բարձր մարտններ կը դնէ, աչք կը դնէ հայտնաբերուած, բարեկեցիկ ու հարուստ:

Իւսուֆ աղան կունենայ 10 մանչ աղայ, որոնք Տէրէպէկէնիւրէին, Հասան, միւս կնոջմէ 6) Ազա, 7) Մէհմէդ, 8) Հիւսէին, 9) Թէմուր և այս աղաներն ու պէկերը իրենց զաւակներով ու թոռներով բոլորովին

սակալին: ասար է 5 լիտրի—2 փութի: Թւականէս 50 տարի առաջ Կարնոյ կուսատէր Կարիկցի աշխարհապետ Հիւսէին պէկի ազգական Եուսուֆ աղան. Բարդէյի տէրէններուն: Շըխքեօյի ու Բարդէյի մէջ 30-էն աւելի գոմեր ու բնակ Պաշ գիւղին, որ զուտ հայաբնակ էր. 50 տարի առաջ 40 տնէն առաջին կնոջ մէ 1) Շէքիր, 2) Ազիզ, 3) Սուլէյման, 4) Պէկզատ, 5) 10) Կէքեօյ: Վերջին ուսուֆըրական պատերազմէն ի վեր, 33 տարի է, տիրեցին ամբողջ այդ կողմերուն:

Յուցակ բռնի գրառումների և խլումների, որ Ալջաւազի 20 հայ գիւղերի կողմից 1909 թւին ներկայացւեց վանի կուսակալին, պահանջելով հատուցում յափշտակիչներէից

Քա- նակը	Խ Լ Ի Ա Ծ Ի Ր Ե Ր	Յափշտակողները
	1) Նորեցունդ	
30	Հողային կալւածք 12 տ. ի վեր գրաւած, առույտի արտեր քաղած	Հրսէն աղա
8	Հասած արտեր կերցրած	»
7	Տուն քանդած	»
30	Օսմ. ոսկի առած	»
20	»	»
10	Գառ	»
2	Ոչխար	»
2	Մէջիդ	»
3000	Բարդ խոտ 6 տարում	»
150	» » 5 »	»
115	Քիլա ցորեն 5 »	»
120	» » 6 »	»
10	Ոչխար	»
4	Կոտ աղ	»
1	Սայլ	»
8	Կոտ ցորեն	»
6	Քիլա »	»
1	» դարի	»
5	Բարդ խոտ	»
	Գուլթան արօր և աչլն	»
	2) Փեւեազումեր	
	11 տ. ի վեր ճարօյի Մահմուդ 5 տնով ամբողջ գիւղի կալւածներ տիրած է:	Ճարօյի Մահմուդ
		»
		»
	3) Առեկ	
140	Լիրա	Հուսէին փաշա
70	Քիլա ցորեն	Սուլթան պէյ
80	» »	Սօրանլի Ռըշէն
500	Գործաւոր	Հուսէին փաշա
40	Սայլ գազ	»
60	» խոտ	»

Քա- նակը	Խ Լ Ի Ա Ծ Ի Ր Ե Ր	Յափշտակողները
120	Քիլա ցորեն	Հուսէին փաշա
60	Լիրա տուգանք	»
30	» »	Սուլթան պէյ
40	» »	Հուսէին փաշա
150	Գառ	»
60	Ուլ	»
50	Քիլա ցորեն	Սուլթան պէյ
40	» »	Սրա ծառաները
15	» դարի	»
105	» ցորեն	Հուսէին փաշա
150	Գառ	»
50	Ուլ	»
50	Քիլա ցորեն	»
80	» »	»
120	Գառ	»
50	Թոխլու (ոչխար)	»
30	Լիրա	»
200	Քիլա ցորեն	»
140	Գառ	»
60	Թոխլու	»
200	Սայլ խոտ	»
70	Կտոր տուն քանդած	»
	4) Վերին Սիփան	
32	Առույտի արտեր, չայիբներ գրաւած տուրքերը գիւղի վրա մնալով	Հուսէին փաշա
85	Քիլա ցորեն	»
	Աւետիս Դաղարեանի ամբողջ կալւածքը գրաւած-	»
130	Բարդ խոտ	»
60	Ուլի ծառ	»
36	Կտոր տուն քանդած	»
2	Եղ տարած	»
260	Ծառ կտրած	»
60	» »	»
12	Քիլա ցորեն	Սրա ծառաները
	Այս տարի Միսթար անունով մէկը սպանած	Հուսէին փաշա
31	Մէջիդ	»
		Դասըմ աղա

Քա- նակը	Խ Լ Ի Ա Մ Ի Ր Ե Ր	Ցափշտակողները
	5) Գօգե	
1300	Ոչխար քշած	Ապտուլա բէյ
	6) Բաղնու	
200	Չափ ցորեն խլել է 20 տարւայ ընթացքում	Հուսէին փաշա
300	Գործաւոր ձրիապէս ծառայեցրել է	"
3	Եկեղեցի քանդել է	"
1	Գերեզմանոց քանդել է	"
	Գրաւել է նոյնպէս բաւականաչափ կալւածքներ	"
30	Տուն քիւրդեր 20 տարի ի վեր կ'պահան են գիւղի կողմից	"
	7) Արնրա	
500	Ոսկի	Հուսէին փաշա
285	Գառ	"
382	Քիւրացորեն	"
100	Տնից աւելի քանդած	"
10	Քիւրացորեն	"
17	Ոսկի	"
8	Քիւրացորեն	"
7	Լիրա դրամ	"
9	"	"
12	"	"
10	"	"
1	Չի	"
	8) Առնջկուս	
65	Լիրա	Հուսէին փաշա
8	"	"
20	"	"
2	Ոչխար	"
20	Քիւրացորեն	"
25	Լիրա	Սուլթան բէյ
30	"	Մատոն և Միրոն
25	"	Հաջի ալին

Քա- նակը	Խ Լ Ի Ա Մ Ի Ր Ե Ր	Ցափշտակողները
25	Քիւրացորեն հաւաքեց	Հուսէին փաշա
25	Լիրա	Միրոն
15	Մէջիդ	Հուսէին փաշա
90	Քիւրացորեն	"
19	"	Ոչխարին կերցրեց
18	"	"
12	"	"
175	"	"
15	"	Սրա ծառաները
80	Կտոր տուն քանդած	Հուսէին փաշա
16	Քիւրացորեն	"
20	Լիրա	"
30	"	"
8	"	"
	9) Էգեմար	
	10 տարիէն ի վեր 13 տուն քուրդ մեր գիւղ եկած կը տիրապետեն մեր կալւածներին. Թօրթօյի Մըհէն մեր սահմանի մէջ մի գիւղ շինելով տիրապետում է մեր գիւղերին:	
	10) Զիրափու	
5500	Բարդ խոտ (10 տ. ի վեր իւրաքանչիւր տարի 550 բարդ խոտ կը քաղէ): Մեր սահմանի մէջ շինել է մի գիւղ 15 տնից բաղկացած. հողերը բաժանել է 8 գիւղերի վրա, իսկ հողային պետական հարկերը մենք ենք վճարել:	Հուսէին փաշա
2	Եգ	Սրա գործակալը
2	Թաղիք	"
1	Աջմու շալ	"
6	Հատ փուշի	"
2	Թոփ դութնի և անթարի	"
2	Չոյզ արծաթէ բլազուկ	"
50	Մէջիդ	"
5	Լիրա	"

Քա- նակը	Խ Լ Ի Ա Մ Ի Բ Ե Բ	Յափշտակողները
40	Ոչխար	Հուսէին փաշա
30	Քիլա ցորեն	»
35	»	Իբրաիմը
35	Տուն քանդած	»
11) Վարին Սիփան		
10	Քիլա ցորեն 10 տարում	Հուսէին փաշա
40	»	»
1000	Խուրձ խոտ	»
20	Քիլա գարի	»
5	Ոչխար	»
2	Էջ	»
400	Ծառ	»
100	Քիլա ցորեն	»
5000	Խուրձ խոտ 5 տարում	»
5	Քիլա գարի	»
2500	Վառելիք	»
1	Սայլ	»
10	Գոմէջ	»
5	Լիբա	»
40	»	»
31	Քիլա ցորեն	»
20	Լիբա	»
	Մելիք Գարոյին սպանած Վեր. սիփանցի Բղղոյին սպանած. մի մարդ էլ սպանած է փայտա- ծեծով Շեօն:	
12) Խոռանց		
600	Խուրձ խոտ կերցրեց իր տաւար- ներին:	Սօֆի զալին
24	Քիլա ցորեն 4 տարում Արսօլի Համշօն և Չաթօն իրենց ընտանիքով մէկ տեղ 4 տարի սպանեցինք մեր ծախքով:	»
36	Քիլա ցորեն	Հուսէին փաշա
600	Խուրձ խոտ	»
200	Ղօշա »	»
10	Ոչխար	»

Քա- նակը	Խ Լ Ի Ա Մ Ի Բ Ե Բ	Յափշտակողները
70	Լիբա	Հուսէին փաշա
80	Քիլա ցորեն	»
30	Լիբա	»
62	Եզ	»
2	Գոմէջ	»
10	Ոսկի	»
15	»	»
1/2	»	»
2	Սայլ	»
15	Քիլա ցորեն	»
20	Ծնած ոչխար	»
	Իր ոչխարները մացրեց ձթոած ցորենների մէջ և բոլորը արա- ծացրեց:	»
20	Լիբա	»
10	Կտոր շէնքեր քանդած	»
	Նշան անուսով մարդը սպանած	»
150	Լիբա տուգանք	»
11	Եզ	»
1	Գոմէջ	»
200	Քիլա ցորեն	»
150	»	»
8	Եզ	»
20	Լիբա	»
1	Սայլ	»
20	Լիբա	Սօրանցի Կելին
10	Ոսկի	Սուլթան պէյ
5	»	»
	Մելիք Անուշ գիւղը առած էր, կառավարութեան դրամ տալուց յետոյ բռնութեամբ խլեց:	»
160	Ոսկի	»
80	Քիլա ցորեն առեց	Հուսէին փաշա
13) Քազոխ		
280	Քիլա ցորեն 7 տարում	Հուսէին փաշա
420	»	Սրա քրդերը
500	Բարդ խոտ	Հուսէին փաշա
10	Քիլա գարի	»

Քա- նակը	Խ Լ Ի Ա Մ Ծ Ի Ր Ե Ր	Յափշտակողները
200	Սարակ 5 տարի	Հուսէին փաշա
100	Տուն քանդած	"
1	Եկեղեցի քանդած	"
1	Կին առևանգած	"
2	Աղջիկ "	"
3	Գիւղ շինած մեր գիւղի սահմա- նի մէջ	"
14) Բարկաք		
95	Քիլա ցորեն	Հուսէին փաշա
7	" գարի	"
2	" տարեկան	"
19	Լիրա	"
520	Ղուռուշ	"
380	Սուրճ խոտ	"
45	Ծառ	"
1	Ձի	"
5	Տուն քանդած	"
15) Կոնեք		
1200	Բարդ խոտ 12 տարի	Հուսէին փաշա
16	Քիլա ցորեն	"
3	Գոմէշ	"
25	Լիրա	"
21	"	"
15	"	"
1	Ձի	"
4	Քիլա ցորեն	"
7	Լիրա	"
51	Էգ գոմէշ	"
40	Կով	"
7	Էշ	"
7	Եգ	"
15	Քիլա ցորեն	"
20	" "	"
15	" "	"
1	Եկեղեցի աւրած	"
140	Նաւի վարձ կտրած	"
	Մարտիրոս անուանով մարդը սպ.	"

Քա- նակը	Խ Լ Ի Ա Մ Ծ Ի Ր Ե Ր	Յափշտակողները
162	Ոչխար	Հուսէին փաշա
95	Եգ, գոմէշ	"
10	Լիրա	"
50	Սարակ իւրաքանչիւր տարի	"
200	Լիրա	"
10	Քիլա ցորեն	"
300	Ծառ	"
16) Անուռ-Աղբիւր		
300	Ծառ	Հուսէին փաշա
423	"	"
4	Եգ	"
60	Ծառ	"
12	"	"
6	Տուն աւրած	"
360	Բարդ խոտ տարին, 12 տ. շարուն.	"
1200	Սուրճ առևայտ տարին, 12 տ. շար.	"
17) Կարափեփե		
30	Լիրա	Հուսէին փաշա
30	Քիլա տարեկան	"
36	Քիլա ցորեն	"
28	Քիլա ցորեն	"
5	Քիլա ցորեն	"
10	Լիրա	"
5	Լիրա	"
9	Լիրա	"
1760	Ղուռուշ դրամ	"
2000	Սուրճ խոտ	"
20	Քիլա ցորեն	"
	Միս անուանով մարդը սպանած	"
	Մեղիք Նասոյի Ալէքսան սպանած	"
5	Վերմակ	"
3	Մինդար	"
3	Կապիբա	"
2	Թաղիք	"
1	Արա	"
2	Նասաղդ	"
7	Պղնձէ աման	"

Քա- նակը	Խ Լ Ի Ա Ծ Ի Ր Ե Ր	Յափշտակողները
100	Լիրայի մուրճակներ	Հուսէին փաշա
8	Չափ գարի	"
	18) Կուզիկ	
50	Բարդ խոտ	Հուսէին փաշա
39	Լիրա դրամ	"
200	Չափ ցորեն	"
10	Կտոր շէնք աւրած	"
6	Քիլա ցորեն տարեկան 12 տար- ւայ ընթացքում	"
	19) Նորճեկ	
100	Տուն աւրած տարած է	Հուսէին փաշա
100	Քիլա ցորեն 5 տարւայ մէջ ա- ւած է	"
500	Ոչխար 5 տարի պահում ենք մեր խոտով	"
30	Տուն բուրդ մեր գիւղացիների հաշ- ւով կը պահէր մեր սահմանի մէջ:	"
4	Գիւղ շինած է մեր սահմանի մէջ, որսնք:	"
500	Բարդ խոտ կը քաղեն. տարեկան եկեղեցին քանդած և գոմ շինած:	"
	20) Վիճկացուկ	
36	Ոսկի	Հուսէին փաշա
15	Քիլա ցորեն	"
6	Քիլա ցորեն	"
40	Մէջիդ	"
40	Մէջիդ	"
12	Լիրա	"
10	Մէջիդ	"
15	Մէջիդ	"
10	Լիրա	"
4	Մէջիդ	"
12	Քիլա ցորեն	"
50	Մէջիդ	"

Քա- նակը	Խ Լ Ի Ա Ծ Ի Ր Ե Ր	Յափշտակողները
6	Քիլա կաւաւառ	Հուսէին փաշա
10	Քիլա ցորեն	"
4	Լիրա ձէթ	"
50	Մէջիդ	"
10	Ոսկի	"
5	Լիրա	"
5	Քիլա ցորեն	"
3	Քիլա ցորեն	"
56	Մէջիդ	"
4	Եղ	"
4	Քիլա ցորեն	"
16	Չուալ	"
5	Լիրա ձէթ	"
35	Լիրա	"
35	Մէջիդ	"
1	Քիլա ցորեն	"
5	Տուն գրաւած	"
5	Մարագ գրաւած	"
5	Ախոս գրաւած	"



### ԿԱՐԵՒՈՐ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Աբղաղայի դաշտ 4, 33, 279  
 Աթէնք 100  
 Ալանցիներ 68, 254  
 Ալաշկերտի գաւառ 7, 213, 215, 347  
 Ալաղաղի լեռներ 2, 3, 5, 36, 158  
 Ալիանցիներ 253  
 Ալիւր գիւղ 26, 27  
 Ալջաւազի գաւառ 7, 14, 42, 44 336, 342, 353, 390  
 Ախալանք 57  
 Ախանց 36, 41  
 Աղբակ 9, 10  
 Աղէքսանդրիա 100  
 Աղթամար 56  
 Աղսրաֆ 38  
 Ամրտօլու վանք 83  
 Այգեստան 16, 17  
 Անահիտի մեհեան 219  
 Անզղ գիւղ 48  
 Անթապի գաւառ 216  
 Անի ամրոց 224  
 Անտօք լեռ 3, 5, 119  
 Աշար 282  
 Աշնա 284  
 Ապարանից Ս. Պաղ 92  
 Առաջաւոր գիւղեր 120, 122  
 Առաքելոց վանք 113, 115  
 Առնուս լեռ 70  
 Արագած 99  
 Արաղին 285  
 Արածանի 207

Արամազդի մեհեան 224  
 Արարատ 2, 42, 99, 158  
 Արարատեան դաշտ 99  
 Արաքս 3, 158, 181  
 Արաքսի հոգիւտ 99  
 Արզահան 248  
 Արծափ գիւղ 204  
 Արծիւ Վասպ. Աշխարհի 23  
 Արծկէ 41, 44  
 Արծկէի բերդ 37  
 Արծրունի 115  
 Արճակի գաւառ 14, 18, 30, 31, 32, 33, 342, 354  
 Արճակի լիճ 4, 30  
 Արճէշի գաւառ 5, 7, 14, 36, 42  
 Արճէշ քաղաք 13, 14, 20  
 Արմիզօն գիւղ 38  
 Արշակունիներ 224  
 Արտամէզ գիւղ 21, 45  
 Արտէր կղզի 56  
 Արտուս լեռ 2, 51, 61  
 Աւանց գիւղ 14, 19, 20, 21  
 Աւուրուս գիւղ 328  
 Բագառիճ 186  
 Բագաւան 209  
 Բագրատունիներ 205  
 Բագրեանդ 209  
 Բաղըքանցիներ 253  
 Բաթման-սու 80  
 Բալաքցիներ 140, 253  
 Բալլ-գեօլ 4, 202  
 Բաղէշ 79, 81

Բայազէտ 204, 347  
 Բայազէտի սանջակ և գաւառ 7, 160, 202  
 Բայազէտ նոր 206, 347  
 Բայրուրդ 194  
 Բայրուրդի գաւառ 6, 160, 193, 195  
 Բանոն գիւղ 37  
 Բաշկալէ աւան 9  
 Բասէն 3, 4, 6, 160, 175, 179  
 Բարթոլոմէոսի վանք 10  
 Բարձր Հայք 158  
 Բարշամ կուռքի մեհեան 223  
 Բարվարի գաւառ 8, 153, 155  
 Բերդակ գիւղ 21  
 Բերկրիի գաւառ 14, 33, 36, 279  
 Բերլինի վեհաժողով 246, 304  
 Բղնունեաց ծով 10  
 Բղնունիք 87  
 Բէլկ գիւանական 14  
 Բըղըցիներ 141, 253  
 Բըլքցիներ 252  
 Բիթլիս 3, 8, 20, 41, 81  
 Բիթլիսի վիլայէթ 1, 2, 3, 4, 6, 8, 10, 59, 79, 98, 157, 243  
 Բիթլիսի սանջակ, գաւառ 8, 80, 81, 84  
 Բիթլիս-սու 3, 80, 82  
 Բինգեօլիան լեռներ 2, 3, 79, 98, 151, 158  
 Բիւրակնեան լեռներ 2  
 Բիւզանդիօն 100  
 Բլէջան լեռ 144  
 Բլուրմակ գիւղ 37  
 Բնական կամուրջ 207  
 Բուլանըղի գաւառ 8, 42, 98, 144, 146  
 Բուլամա լիճ 144  
 Բրանտ գիւանական 14  
 Բքրանցիներ 253  
 Բօթան սու 3  
 Բօլգարիա 304  
 Բօնիա-Հերցոգօվինա 304

Գագիկ Արծրունի 57  
 Գայլաուա լիճ 4, 202  
 Գանձակի նահանգ 1  
 Գանձակ գիւղ 37  
 Գեղիկեղուան 20, 124, 126, 332  
 Գեղամի լեռներ 12, 99  
 Գեղաշէն գիւղ 121  
 Գերմաւր 208  
 Գեաւաշի գաւառ 7, 14, 18, 51, 56, 57, 59, 70  
 Գեաւառի գաւառ 7  
 Գէնջի սանջակ և գաւառ 8, 80 156  
 Գիւղէլ-դէրէ 84, 85  
 Գիւլիկար 329  
 Գիւմդիւմ 151  
 Գլակ վանք 100, 113  
 Գործուս գիւղ 34  
 Գուրու լեռ 81, 88, 98  
 Գրաւցիներ 63, 68, 254  
 Գրիգոր Լուսաւորիչ 223  
 Գուգիջանի գաւառ 7, 218  
 Գուրուչայի գաւառ 7, 218, 225  
 Դալի-չայ 36  
 Դամասկոս 182  
 Դանիէլ վարդապետ 315  
 Դաուան 20, 37, 41, 84, 86, 87  
 Դարանաղեաց գաւառ 223  
 Դարաչիակ 347  
 Դարիօշ պապաթ 79  
 Դարոյնք ամրոց 205  
 Դարիշ աղա 321, 331, 365  
 Դաւարօյին 2, 158  
 Դաւիթ Անյաղթ 100, 116  
 Դերջանի գաւառ 6, 160, 186, 187  
 Դիաղին աւան 207  
 Դիաղինի գաւառ 7, 202, 210  
 Դիարբէքիթի վիլայէթ 1, 2, 3, 79, 83, 246  
 Դութաղի գաւառ 7, 216, 217



Դումբուլ-դաղ 2, 3, 158  
 Դոմինիկեան կղերներ 18  
 Եզդինանցիներ 63, 254  
 Եզնիկ կողբացի 100  
 Եղերով լեռ 2, 51, 70  
 Եղէկիս գիւղ 60  
 Եղիշէ պատմագիր 100  
 Եղիշէ վարդապետ 315  
 Երզնկա քաղաք 219  
 Երզնկայի սանջակ և գաւառ 6, 160, 218, 222  
 Երևանի նահանգ 1, 243  
 Եփրատ Արևելեան 3, 79, 98, 158, 207  
 Եփրատ Արևմտեան 3, 158  
 Եօնջալու գիւղ 145, 211  
 Զարիկցիներ 253  
 Զաւ գետ 9  
 Զբաղմունքի հարկ 290  
 Զենոբ-գրակ 101  
 Զըռքցիներ 253  
 Զիարէթ 103  
 Զիլանաձոր 37  
 Զիլանցիներ 183, 251  
 Զինուորական հարկ 284  
 Էմիլ Դիլլօն 307  
 Էմին փաշա 38, 319, 359  
 Էմլակ 285  
 Էջմիածին 100  
 Էրզրում 3, 5, 6, 160  
 Էրզրումի վիլայէթ 1, 2, 3, 4, 6, 10, 79, 158, 226, 243  
 Էրզրումի սանջակ 6, 160  
 Էրզրումի գաւառ 6, 160, 168  
 Էրզրումի դաշտ 3, 4, 5, 173  
 Էրկիզան 90  
 Էրոնի գաւառ 8, 154  
 Էփրիկեան 33  
 Ընկուզնակ 135

Թաղ աւան 62, 63, 66  
 Թանդուրէքի լեռներ 2, 33  
 Թաջրոցիներ 252  
 Թասիլդար 292  
 Թափու 272  
 Թեղուտ գիւղ 88  
 Թէմէթուհաթ 290  
 Թիմարի գաւառ 14, 25, 26, 27, 28, 30, 33, 56  
 Թիֆլիսի նահանգ 1  
 Թիլ աւան 223  
 Թոնդրակ գիւղ 148  
 Թորդան աւան 223  
 Թուխ գետ 3  
 Թորթումի գաւառ 5, 160, 200, 201  
 Թորթումի լիճ, գետ, ջրվէժ 200  
 Թօփրալ-կալէ աւան 214  
 Ժօրեի գիտնական 13  
 Իննակնեան վանք 113  
 Իշինձոր գիւղ 135  
 Իրիշատ գետ 36  
 Լազեր 248  
 Լաթար 145  
 Լէզկ գիւղ 21  
 Լիմ անտապատ 28, 56  
 Լինչ գիտնական 11, 13, 14, 17, 88  
 Լօֆտուս գիտնական 14  
 Սաղղը Շէրիֆ 265  
 Սաղղը Հիւմայուն 265  
 Սալիլանցիներ 63, 141, 254  
 Սալիլենք 253  
 Սամչուռ 290  
 Սամուր գաղ 2, 144, 158  
 Սաչան գիւղ 34, 334, 339  
 Սաչ գիւղ 336, 384  
 Սաչատուր կաթողիկոս 58  
 Սառակօնիս գիւղ 31

Սասգիւղ 101, 102  
 Սաստուր 214  
 Սարաբա շահար 90  
 Սարբերդի վիլայէթ 1, 3, 246  
 Սարդանցիներ 254  
 Սարդանի գաւառ 8, 128, 153  
 Սաւշտանցիներ 63, 254  
 Սիանցիներ 253  
 Սիանքի գաւառ 5, 80, 120, 128, 135, 136  
 Սիդանցիներ 254  
 Սիզանի գաւառ 8, 57, 91, 93  
 Սլաթ բերդաքաղաք 37, 41, 90  
 Սլաթի գաւառ 8, 42, 87, 89  
 Սնուս բերդաքաղաք 184  
 Սնուսի գաւառ 6, 160, 181, 185  
 Սոյթիցիներ 252  
 Սոսխոտունիք 42  
 Սոտրջուր գիւղ 198  
 Սորոնք Սորենացու ծննդավայրը 101  
 Սրիմեան Հայրիկ 23, 115  
 Սութի լեռներ 3, 128, 140  
 Սութ-Բոնաշէն գաւառ 120, 140, 142  
 Սուլի գաւառ 5, 8, 80, 120, 138, 139  
 Սուշուշ թաղուհի 24  
 Սօշարի բերդ 49  
 Սօշարի գաւառ, գետ 14, 45, 48  
 Սօջալու գիւղ 38  
 Ծայծակ գիւղ 38  
 Ծաղկոտն գաւառ 207  
 Ծիրնկատար գաղաթ 108, 115, 119  
 Ծովասար 120, 128, 137  
 Ծոկէտ 327  
 Ծւատան գիւղ 22  
 Ծօրկօնք գիւղ 20  
 Կալաւածական հարկ 285  
 Կամախ 218


Կանէմշկան գիւղ 324  
 Կառկառի գաւառ 14, 51, 57, 76  
 Կասրմ բէկ 103, 329  
 Կարասու աւան 92  
 Կարափափախներ 216, 248  
 Կարաքիլիսէ աւան 211  
 Կարաքիլիսէի գաւառ 7, 202, 211, 212  
 Կարին 6, 160  
 Կարճկանի գաւառ 7, 218, 224  
 Կարմիր վանք 171  
 Կարսի շրջան 1, 248  
 Կարտեան 79, 147  
 Կենարորի վանք 38  
 Կըզլաղաջ 103  
 Կըզլաղ 46  
 Կըզլկարէթ 141  
 Կիսկիմի գաւառ 6, 160, 198, 199  
 Կլիճ աւետարան 116  
 Կոկովիտ գաւառ 203  
 Կոճեր 44  
 Կովկաս 1  
 Կորդուք գաղաթ 108, 141  
 Կորդուց լեռներ 9, 79  
 Կուռուքաջ գիւղ 2  
 Կտուց անապատ 13, 14, 20, 28, 29, 30, 56  
 Կրթական հարկ 288  
 Կւարս 101  
 Կօփ աւան 145  
 Հազրյի գաւառ 154, 156  
 Հալէպ 182  
 Հակուզրար 272  
 Համիդիէ գաւառ 7  
 Համիդիէի գնդեր 306  
 Հայդարանցիներ 38, 44, 183, 208, 216, 251  
 Հայկա-բերդ 48  
 Հայկական վիլայէթներ 1  
 Հայկական բարձրաւանգակ 2  
 Հայկական պար 2

Հայոց Չորի գաւառ 4, 14, 45, 48, 51, 57  
 Հաշիմ բէյ 312  
 Հաջի Հասան աղա 338  
 Հասան կալա բերդաքաղաք 176  
 Հասանանցիներ 147, 252  
 Հարկերը 282  
 Հացեկաց Ս. Մեսրոբի ծննդա-  
 վայրը 100  
 Հաւատամքի վերելք 98  
 Հէքեարիի սանջակ 7, 9, 10  
 Հէքեարիի գաւառ 7  
 Հուսէին փաշա 216 319, 357  
  
 Ջիթոզ գիւղ 170  
 Ջիւնակիրա պատմական քաղաք  
 100  
  
 Ղազար փարպեցի 100, 116  
 Ղազըկցիներ 252  
 Ղուլթիկ գիւղ 84  
  
 Ճապաղճուրի գաւառ 8  
 Ճանապարհների հարկ 289  
 Ճելիլենք 141, 253  
 Ճորձիս գետ 3, 158, 193  
  
 Մալանցիներ 31  
 Մակի խանութիւն 2, 9, 10,  
 33, 49  
 Մահմուդիի գաւառ 7  
 Մամազ բէկ 208, 363  
 Մամազ բէկ կօփ 34  
 Մամախախտն աւան 186  
 Մամէյի Ֆարօ 338  
 Մամըկանցիներ 252  
 Մամիկոնեաններ 108, 114  
 Մամուրիէզի գաւառ 7  
 Մամուտանքի գաւառ 91, 95  
 Մանազկերա քաղաք 148  
 Մանազկերտի գաւառ 8, 42, 98,  
 147, 149  
 Մանազկերտի գետ 79

Մասիս լեռ 118  
 Մարարա 275  
 Մարաթուքի լեռներ 128  
 Մարմէզ գիւղ և գետ 26, 27  
 Մար-Շիմօն 10  
 Մեղզի պատմական գիւղ 101  
 Մեղրագետ 79, 98  
 Միացեալ ընկերութիւն 112  
 Միջագետք 83  
 Միր-Մըհէ 63, 254, 319, 356  
 Մոյ գիւղ 37  
 Մոխէն Պորենացի 100, 116  
 Մուլթէզլիմ 284  
 Մուշ քաղաք 5, 108, 119  
 Մուշի սանջակ 8, 80, 98, 108  
 Մուշի գաշա 3, 4, 5, 79, 98,  
 104, 342, 354  
 Մուշեղաշէն գիւղ 102,  
 Մուսա բէկ 252, 329  
 Մուսուն գիւղ 204  
 Մուրազ գետ 3, 207  
 Մուրթուլա բէկ 362  
 Մուքայէլցիներ 252  
 Մստաֆա բէկ 34  
 Մօկսի գաւառ 70, 74, 342, 352  
 Մօկսի լեռներ 2, 3, 14  
 Մօտանցիներ 253  
 Մօտկանի գաւառ 8, 96, 97  
 Մօտկանի լեռներ 3  
 Մօտուլ 83  
  
 Նազիր լիճ 4, 88  
 Նանէ զիցուհու մեհեան 221  
 Նարեկ գիւղ 52, 55  
 Նարեկի վանք 55  
 Նարմանի գաւառ 6  
 Նէմրութ 2, 15, 81, 88, 98  
 Նէմրութի լիճք 4, 88  
 Նորդուզի գաւառ 14, 51, 57, 63,  
 68, 69  
 Նորշէն գիւղ 102  
 Նպատ լեռ 207, 209

Նարագործութիւն 66  
 Նահազի լեռներ 12  
 Նամիրամակերա 15  
 Նամիրամի բերդ 16  
 Նամիրամի առուն 17, 21, 45  
 Նամսկցիներ 31, 208, 252  
 Նատախի գաւառ 7, 14, 18, 51,  
 57, 61, 64, 68, 70, 120  
 Նատախի լեռներ 2, 3, 15  
 Նատիանցիներ 254  
 Նաւէսցիներ 31  
 Նաքիր 63, 254, 311, 319, 356  
 Նէնիկ գիւղ 122, 332  
 Նէմզինանի գաւառ 7  
 Նէյի Ջալալէզզին 73, 254  
 Նէյի Ֆանիմ 73  
 Նէռեան գետ 207, 213  
 Նիդանցիներ 68, 252  
 Նիրվանի գաւառ 8, 153, 154  
 Նիրվանցիներ 254  
 Նիքօնք 140, 253  
 Նուշնամէրկ 121  
 Նորեկեր գիտնական 14  
  
 Ոչխարի հարկ 290  
 Ոստանի գաւառ 52  
 Ոստան աւան 52, 54  
 Ոստան ամրոց 37  
 Ուլու Ջամի մզկիթ 162  
 Ուչքիլիսէյի վանք 209  
 Ուրմիի լիճ 10, 11, 12  
  
 Չարբախուր գիւղ 151  
 Չարբախուրի գետ 79  
 Չաղար սուրբ Նշանի վանք 55  
 Չերնագորիա 304  
 Չէրքէզներ 248  
 Չըխուրցիներ 252  
 Չիֆթլիկ գիւղ 171  
 Չիֆտէ մինարէ 162  
 Չուխի լեռներ 9, 48, 51  
  
 Պաղնու աւան 216

Պարխարեան լեռներ 2, 158  
 Պարսկաստան 1, 9  
 Պեանրուրգի եկեղեցական խոր-  
 հուրդ 24, 115  
 Պետրոս Գետաղարձ 24  
 Պօնդացիներ 254  
 Պօնտօսի լեռնաշղթայ 2, 158  
  
 Ջէվզէզ բէկ 334  
 Ջիրբանցիք 183, 252  
 Ջուզգեան գիւղ 38  
 Ջուլամէրիկ աւան 10  
 Ջուլամէրիկի գաւառ 7, 10  
 Ջրհոր գիւղ 330  
  
 Ռազմական հարկ 287  
 Ռաշիդ աղա 361  
 Ռաֆֆի 56, 117, 205, 254  
 Ռշկօթանցիներ 253  
 Ռշտունեաց իշխան 54  
 Ռուսաստան 1  
  
 Սաաէզզին փաշա 310, 319  
 Սալնապատի վանք 24  
 Սալտանցիներ 252  
 Սանասարեան դպրոց 164, 166  
 Սասուն 8, 80, 98, 119, 332  
 Սասունի լեռներ 3, 5  
 Սասունցիներ աշիրէթ 141, 253  
 Սենեքերիմ թագաւոր 24, 87  
 Սերբիա 304  
 Սեմալ գիւղ 122, 123  
 Սըվազի վիլայէթ 1, 159, 246  
 Սինակ լեռ 4, 202  
 Սիպկանցիներ կամ Սիպրէզի-  
 ներ 147, 216, 252  
 Սիփան լեռ 2, 15, 42, 79, 81,  
 88, 147  
 Սլէվանի գաւառ 183  
 Սլէվանցիներ 253  
 Սղերդ քաղաք 3, 20, 153  
 Սղերգի սանջակ 8, 80, 153  
 Սղերգի գաւառ 8, 153



Սոսկուն գիւղ 331  
 Ս. Ախպրիկի վանք 140  
 Ս. Գրիգորի վանք 24, 25  
 Ս. Մաչի վանք 56  
 Ս. Կարապետի վանք 100, 113  
 Ս. Յովհաննէսի վանք 113, 117  
 Սպարկերտի գաւառ 91, 94  
 Սպեր աւան 196  
 Սպերի գաւառ 6, 160, 196, 197  
 Սևանի լիճ 10, 11, 12, 13, 20  
 Սևանի կղզի 29  
 Սօրբ գիւղ 60

Վան 13, 15, 17, 18, 20, 21, 22,  
 25, 41, 42, 368  
 Վանի վիլայէթ 1, 2, 4, 6, 7, 8,  
 9, 78, 79, 243, 304  
 Վանի սանջակ 7, 9, 10  
 Վան-Տօսպ գաւառ 7, 14, 15, 19,  
 22, 23, 25, 30, 45, 48  
 Վանի բերդ 37  
 Վանի լիճ 2—5, 10—14, 20, 23,  
 30, 33, 36, 42, 51, 54, 70, 79  
 Վանի նաւահանգիստ 14  
 Վասպուրական 14, 26, 42, 45, 56  
 Վարազի վանք 23—25  
 Վարազի լեռ 2, 15, 23, 24  
 Վարաժնունիք 147  
 Վարդոյի գաւառ 8, 98, 151  
 Վիշապ պատմական քաղաք 100  
 Վոկոնիս 52

Տաղերանցիներ 141, 253  
 Տաթևի վանք 116, 208  
 Տալօրիկ 120, 124, 127, 134, 332  
 Տաճկաստան 5  
 Տասնորդի հարկ 282  
 Տատիկ գաւառակ 84, 85  
 Տարօն 98, 118  
 Տարօսի լեռներ 2, 3, 79, 96,  
 98, 108, 119  
 Տիգրիս արևելեան 3, 61, 68, 72,  
 79, 153

Տիգրիս արևմտեան 3, 79, 153  
 Տրապիզոնի վիլայէթ 1, 2  
 Տուկնուկ գիւղ 148

Րէնդվանի գաւառ 154  
 Րումինիա 304

Յրօնք գիւղ 102

Փալան Թօքէն լեռ 2, 155  
 Փարխանդի գաւառ 84, 86  
 Փեսանդաշտ 63  
 Փիրբաղալան գիւղ 68  
 Փնճընարցիներ 253  
 Փութկու Ս. Գէորգ 70  
 Փսանաց գաւառ 143  
 Փսիանցիներ 253

Քաջբերունիք 36  
 Քարբէ լեռ 98, 113  
 Քեմախ աւան 223  
 Քեմախի գաւառ 7, 218, 223, 225  
 Քեօրփի քեօյ գիւղ 176  
 Քէփին գազաթ 3, 127  
 Քինէ գիտնական 236  
 Քիւրէկ լեռ 66  
 Քղի աւան 189  
 Քղիի գաւառ 6, 160, 188, 191  
 Քուրդ բէկեր 335  
 Քուրդիստան 2  
 Քուրդիստանի լեռնաշղթան 2,  
 51, 91

Քրդեր 251  
 Քօչանիս Մար-Շիմօնի բնակա-  
 տեղին 10

Քօսաղաղ լեռ 2  
 Քօրուն գիւղ 204  
 Քօփ-դաղ լեռ 2, 3, 158

Ֆոֆո-քար 129

Օձ պատմական քաղաք 100  
 Օմեր-դը-էլլ գիտնական 14  
 Օսվալդ գիտնական 14  
 Օրօրան գիւղ և գետ 36, 37

4369

1972  
110

### ՎՐԻՊԱԿՆԵՐ

Երես	Տող	Տպւած է	Պէտք է լինի
9	14	ցածից	Մակւի
43	5	ցածից	Տանձուտ
61	1	վերից	Շատախի
64	13	վերից	Սաղկանց-մզրէն
79	9	ցածից	Չարբախուր
91	1	վերից	Սիգանի գաւառ
96	8	վերից	Փայտոտ
202	12	վերից	Թօփրազ-կալէյի
202	8	ցածից	Սինակի

0003524

*Handwritten signature*

2013 2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0003524

